

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>6</u>
Նպատակը և խնդիրները	6
Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները	8
ՀՀ 2012 – 2014 թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը.....	9
Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները.....	10
<u>ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....</u>	<u>11</u>
<u>ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....</u>	<u>12</u>
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	12
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ	13
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	13
Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ	13
Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները.....	13
<u>ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....</u>	<u>15</u>
<u>ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ.....</u>	<u>47</u>
<u>ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ.....</u>	<u>55</u>
4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ.....	55
4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2012-2014 ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	57
4.3 2012-2014 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....	59
4.4 ՀՀ 2012-2014 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ.....	63
4.5 ՀՀ 2012-2014 ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ.....	64
<u>ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....</u>	<u>67</u>
<u>ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2012-2014 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....</u>	<u>68</u>
<u>ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....</u>	<u>70</u>
6.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	70
6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.....	73
6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	75

<u>ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>79</u>
7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	79
7.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	106
<u>ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>119</u>
8.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	119
8.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ	133
<u>ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>147</u>
9.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	147
9.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ.....	171
9.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	176
<u>ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ.....</u>	<u>199</u>
10.1. ՄՇԱԿՈՒՅԹ	199
10.2. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ.....	232
10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ.....	251
10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	258
<u>ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>266</u>
11.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	266
11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 268	
11.3. ՈԼՈՐՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	270
<u>ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....</u>	<u>277</u>
12.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները	277
12.2. Վերջին երկու տարիներին ոլորտի (համակարգի) զարգացման միտումները	279
12.3. Հիմնական խնդիրները.....	283
12.4. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում.....	284
12.5. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները).....	285
<u>ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ.....</u>	<u>291</u>
13.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	291
13.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ	297
13.3.ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	303

<u>ԳԼՈՒԽ 14. ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</u>	306
14.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	306
14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ	312
14.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	313
<u>ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ</u>	318
15.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	318
15.2. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	326
<u>ԳԼՈՒԽ 16. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ</u>	332
16.1. ՓՈՔԸ ԵՎ ՄԻԶԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	332
16.2. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	358
<u>ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ</u>	365
17.1. Ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները	365
17. 2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները	371
17.3. Կանխատեսավող վերջնական արդյունքներ	373
<u>ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ</u>	376
18.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	376
18.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ	376
<u>ԳԼՈՒԽ 19. 2012-2014ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ</u> 395	
19.1. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման հիմնադրույթները	395
19.2. 2008-2011 թթ հիմնական զարգացումները	398
19.3. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը	400
19.4 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները	401
19.5. 2012-2014 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը	402
<u>ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ</u>	404
<u>Հավելված N 1</u>	420
<u>Հավելված N 2</u>	428
<u>Հավելված N 3</u>	430

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում արձանագրված դրական տեղաշարժերը պայմանավորված են հիմնականում ՀՀ կառավարության տնտեսական գործառույթների իրականացմամբ:

Ինչպես և նախկինում առաջիկա տարիներին նույնպես կառավարությունը կշարունակի տնտեսական միջոցառումների իրականացումը՝ պետական միջամտությունն ուղղելով ինչպես շուկայի «բացերի» մեղմմանը, այնպես էլ՝ եկամուտների և այլ ռեսուրսների վերաբաշխմանն ու տնտեսության կայունացմանը: Կառավարության այսպիսի ծավալուն սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության և ամբողջականության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք միջնաժամկետ (նաև երկարաժամկետ) ռազմավարական ծրագրերի հենքի վրա լուծելն է: Մասնավորապես, ներկայումս ՀՀ իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում բնակչության բարեկեցության աճն և աղքատության հաղթահարումն է: Դեռևս 2003 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է իշխանության տարբեր մակարդակների, մի շարք հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ մշակված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որը 2008 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ վերանայվեց և ընդունվեց Կայուն զարգացման ծրագրի տեսքով: Խնդրի համակողմանի լուծման առումով իր ուրույն դերն ունի պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը, որը կանոնավոր կերպով սկսել է իրականացվել 2003 թվականից:

Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն օրենքով ճանաչվել է ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս և իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգով: ՀՀ բյուջետային գործընթացում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման փուլի առանձնացումը պայմանավորված է այդ փաստաթղթի քաղաքական կարևորությամբ: Հարկ է նշել նաև, որ համապարփակ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն այն ռազմավարական հենքն է, որի շրջանակներում վարվում են նաև միջազգային ֆինանսական օժանդակության ներգրավման հիմնահարցերին առնչվող բանակցությունները:

Նպատակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի պրակտիկայում պետական բյուջեի նախագիծը մշակվում է մեկ տարվա կտրվածքով: Պետական ծախսերի կառավարման առումով մեկ տարվա կտրվածքով մշակվող և իրականացվող պետական բյուջեներն ունեն որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, տարեկան ծրագրերի հիմքում դրվում են կարճաժամկետ մակրոտն-

տեսական կանխատեսումներ, իրականացվող քաղաքականությունների և տարեկան բյուջետային ծախսերի միջև կապը ժամանակային անհամապատասխանության պատճառով հստակ չէ: Այդ պատճառով, որպես կանոն, վերահսկման առարկա է հանդիսանում ծախսերի չափը և ոչ թե ակնկալվող արդյունքը (նաև մատուցվող ծառայության որակը): Պետական ծախսերի քաղաքականությունը հստակ ձևակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պետական ծախսերի ծրագրային պահանջները միջնաժամկետ (հնարավորության դեպքում՝ նաև երկարաժամկետ) հեռանկարում, որն իր հերթին ենթադրում է մակրոտնտեսական միջավայրի ակնկալվող զարգացումների և հասանելի բյուջետային միջոցների ծավալի կանխատեսելիություն:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական նպատակը պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է:

Ըստ էության, պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը գնահատվում է հետևյալ երեք հայտանիշների հիման վրա՝

(i) Համընդհանուր հարկաբյուջետային կարգապահություն. բյուջետային ռեսուրսների փաթեթը պետք է լինի հստակ և համապարփակ ձևակերպված, ձևավորվի նախքան ըստ առանձին ուղղությունների ծախսերի բաշխումը և հիմնավորված լինի միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներով: Ծախսերի բաշխումը հստակորեն պետք է իրականացվի վերը նշված բյուջետային ռեսուրսների շրջանակներում, իսկ դրանց հետագա կատարումը՝ սահմանված ծախսային գերակայություններին համապատասխան ընտրված ծրագրերի գծով նախատեսված բյուջետային հատկացումների սահմանաքանակների շրջանակներում:

(ii) Տեղաբաշխման արդյունավետություն. պետական ծախսերը պետք է համահունչ լինեն պետական քաղաքականության գերակայություններին, և համակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնել միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերը:

(iii) Տեխնիկական (արտադրական) արդյունավետություն. ճյուղային նախարարությունները (գերատեսչությունները) պետք է ապահովեն արդյունավետության առավելագույն հասանելի մակարդակ, որը պետք է համադրելի լինի մասնավոր հատվածի համապատասխան ցուցանիշների հետ:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման համակարգի ներդրումը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ խնդիրները՝

(i) բարելավել մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը՝ ի հաշիվ ռեսուրսների իրատեսական և համապարփակ փաթեթի ձևավորման,

(ii) նպաստել պետական ֆինանսական միջոցների հաշվին կատարվող բյուջետային հատկացումների միջոլորտային և ներոլորտային արդյունավետ վերաբաշխմանը՝ ըստ գերակա ուղղությունների,

(iii) հնարավորինս նվազեցնել քաղաքականությունների և դրանց ֆինանսավորման միջև առկա անորոշությունները՝ նպաստելով ծրագրերի մշակման որակի բարձրացմանը,

(iv) ըստ ոլորտների սահմանել կոշտ բյուջետային սահմանափակումներ՝ ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) համար պայմաններ և խթաններ ստեղծելով հասանելի միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար,

(v) բարելավել բյուջետային ծրագրերի գնահատման համակարգը և մեծացնել պետական ֆինանսների կառավարման թափանցիկության աստիճանը:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում - բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա: Այն հնարավորություն է ընձեռում մեղմել հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի միջև հնարավոր անհամապատասխանությունը, ինչպես նաև պետական ծախսերում կատարել առանձին բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության փոփոխություններին համարժեք փոփոխություններ: Այս առումով արդարացված է, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ նաև ՄԺԾԾ) մշակումը (և/կամ վերանայումը), ըստ ժամանակի, նախորդում է տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ դառնալով տարեկան պետական բյուջեների կազմման ուղեցույց:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ենթադրում է՝

(i) մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատում,

(ii) քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատում,

(iii) հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

Հարկ է նշել, որ նախորդ տարիների համեմատությամբ 2012-2014թթ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ներառում է նաև ծրագրավորման հիմքում դրված կանխատեսումների իրականացման հետ կապված ռիսկերի բացահայտման և ներկայացման գործընթացը: Վերը նշված ռիսկերը հանգամանալի ձևով ներկայացված են սույն ծրագրի մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներին, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ռազմավարությանը վերա-

բերող գլուխներում (համապատասխանաբար 2-րդ, 4-րդ և 20-րդ գլուխների համապատասխան մասերում), իսկ ռիսկերի համառոտագիրը ներկայացված է սույն ծրագրի N 1 հավելվածում:

ՀՀ 2012 – 2014 թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը

ՀՀ 2012 – 2014թթ ՄԺԾԾ-ի մշակման գործընթացը կանոնակարգվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ վարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1144-Ն որոշմամբ և այդ որոշման հանձնարարականների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներով:

Ըստ էության, նման մոտեցումը խնդրին վկայում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը որպես բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս դիտելով, կարևորում է նաև վերջինիս քաղաքական նշանակությունը:

Ընթացիկ տարում, ինչպես և նախորդ տարիներին ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացը կառավարվել, վերահսկվել և համակարգվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ստորև նշված երկու մարմինների կողմից.

(i) ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի՝ մշտապես գործող բարձրագույն խորհուրդ (խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ), որն ապահովվել է ռազմավարական որոշումների կայացումը և մշակման գործընթացի վերահսկողությունը,

(ii) ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող՝ մշտապես գործող խումբ (խմբի ղեկավար՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ), որը ապահովել է պետական միջնաժամկետ ծրագրի մշակման աշխատանքների համակարգումը:

Նման մոտեցումը ընդգծում է բյուջետային գործընթացում ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) մասնակցության դերը, որը նպաստել է ճյուղային մակարդակում բյուջետային ծրագրման բարելավմանը և ռազմավարական հիմնավոր որոշումների կայացմանը՝ հնարավորինս ապահովելով նախանշված քաղաքականությունների և հասանելի ֆինանսական միջոցների համապատասխանությունը: Այս համատեքստում կարևորվում է ՀՀ ֆինանսների նախարարության ու ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) գործողությունների փոխհամաձայնեցումը, որից մեծապես կախված է ոչ միայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և պետական բյուջեի նախագծերի մշակման որակը, այլ նաև դրանց կատարումը:

Դրա հետ մեկտեղ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհրդի աշխատանքներին ՀՀ վարչապետի առաջարկությամբ և իշխող քաղաքական կոալիցիայի մեջ մտնող քաղաքական կուսակցությունների ներկայացմամբ ներգրավված են այդ կուսակցությունները ՀՀ Ազգային ժողովում ներկայացնող մի շարք պատգամավորներ: Նման

մոտեցումը ապահովում է քաղաքական ուժերի մասնակցությունը բյուջետային գործընթացին արդեն իսկ ՄԺԾԾ-ի մշակման նախնական փուլում, որը հնարավորություն է ընձեռում հենց սկզբից համադրել ՀՀ կառավարության և կոալիցիոն քաղաքական ուժերի մոտեցումները և կողմնորոշումները ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսվելիք առանձին ռազմավարությունների և ծախսային գերակայությունների ընտրության հարցերում:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները

Ծրագրի նպատակների իրագործումն ապահովելու համար ՀՀ կառավարությունն իրականացնում է բարեփոխումներ նաև ծրագրային բյուջետավորումը հանրապետությունում ներդնելու ուղղությամբ: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման գերակա նպատակը պետական ծախսերի տնտեսական արդյունավետության բարձրացումն է՝ ռեսուրսներն առաջնահերթ ծախսային ծրագրերին ուղղելու համար ՀՀ կառավարությանն աջակցելու միջոցով: Ծրագրային բյուջետավորման շրջանակներում այդ աջակցությունն իրականացվում է ՀՀ կառավարությանը (և հանրությանը) պետական ֆինանսավորման դիմաց տրամադրվող ծառայությունների կամ անմիջական արդյունքների վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Հետևաբար, ծրագրային բյուջետավորումը հանդիսանում է գործիք սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձին օղակները շաղկապելու համար: Նշվածը կօգնի հասկանալ ծախսերի վերաբերյալ կայացված որոշումների նպատակաուղղվածությունը և ծախսային քաղաքականությունն ամբողջությամբ ուղղել կառավարության ընդհանուր նպատակների իրագործմանը:

Ներկայումս ծրագրային բյուջետավորման բարեփոխումների փորձնական աշխատանքներն իրականացվում են բոլոր պետական կառավարման մարմիններում:

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են 2008 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Կայուն Զարգացման ռազմավարական ծրագրով: Վերը նշված փաստաթղթերի համաձայն ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ):

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվի վերը նշված գերակայությունների համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջը այլ՝ հիմնականում արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհների և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Վերը նշվածը, հաշվի առնելով նաև պետական պարտքի ցուցանիշները խելամիտ սահմաններում պահելու խնդիրը, էականորեն սահմանափակում է ՀՀ կառավարության հնարավորությունները:

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ՀՀ կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներկայացնող այս փաստաթուղթը, ոլորտների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ միասին, կազմում է ՀՀ կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական բովանդակությունը:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը ներկայացնում է ՀՀ կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ-ի մշակման ընթացքում առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության և ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ին որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրերով ամրագրված հարկաբյուջետային սկզբունքներով: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ելքերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, ՀՀ կառավարությունը մտադիր է կիրառել այդ սկզբունքները երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կձառայեն ընթացիկ քաղաքականությունների և ՀՀ կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

ՀՀ կառավարությունը առկա ծախսային գերկայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսային մակարդակը որոշելու համար:

Համախառն ներքին արդյունքի (այսուհետև՝ ՀՆԱ-ի) նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2012-2014թթ կտատանվի 21.17-21.72 % սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 20.85- 21.64 % սահմաններում:

Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2012-2014թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 24.3-24.1% սահմաններում:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2.1 ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն

Ներածություն

Միջանաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2012-2014 թվականների մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի միջինժամկետ կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Մյուս կողմից կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական ասպեկտներով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),

- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ)
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը, և գնաճ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսով (ՍԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ Փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 1. ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	Փաստ	Փաստ	Փաստ	Փաստ	Ծրագր	Պլան	Պլան	Պլան
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2	4.5	4.8
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	81.8	81.8	93.7	94.0	93.3	92.4	91.3	90.3
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	37.8	40.9	34.7	33.4	31.0	31.0	30.8	30.3
ՀՆԱ դեֆլատոր	104.2	105.9	102.6	109.2	105.7	104.6	103.8	103.7
Գնաճ միջին	4.4	9.0	3.4	8.2	8.2	5.5	4.3	3.9
Բանկային համակարգի ներգրվածություն (փողի գանգված/ՀՆԱ %)	22	19.8	26.3	26.3	26.8	27.2	27.4	27.5
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ %	-6.4	-11.8	-15.8	-13.9	-11.1	-10.2	-8.9	-7.5

Համախառն առաջարկ

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով,

որի փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի¹ միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Մինչճգնաժամային տարիներին Հայաստանի տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես՝ 2006-2008 թվականներին միջինում գրանցվել է 11.3 տոկոս ՀՆԱ իրական աճ: Այդ տարիների տնտեսական աճին հիմնականում նպաստել են շինարարությունը՝ միջինում 4.8 և ծառայությունները՝ միջինում 3.5 տոկոսային կետերով:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով 2008 թվականի չորրորդ եռամսյակից նկատելի դարձավ տնտեսական աճի տեմպերի նվազում, իսկ 2009 թվականին արձանագրվեց 14.1 տոկոս տնտեսական անկում:

2010 թվականին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճեց 2.1 տոկոսով, հստակ է, որ նշված ցուցանիշը սպասվածից բարձր էր արձանագրվել, քանի որ կրել է կառավարության հակաճգնաժամային փաթեթի ազդեցությունը: Ընդ որում, 2010 թվականին աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության²: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.8 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 4.5 տոկոս, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.4 տոկոսը՝ 10.5 տոկոս իրական աճի պայմաններում: Շինարարությունը ևս աճել է 3 տոկոսով, 0.6 տոկոսային կետով դրական նպաստում ունենալով տնտեսական աճին: Պայմանավորված անբարենպաստ բնակլիմայական պայմաններով՝ գյուղատնտեսությունը նվազել է 15.7 տոկոսով՝ 2.7 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

2011 թվականի հունվար-ապրիլին գրանցվել է տնտեսական ակտիվության (ՏԱՑ)³ աճ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշը իրական արտահայտությամբ աճել է 3.7 տոկոսով: Ընդ որում տնտեսական ակտիվությանն ամենամեծ նպաստումն են ունեցել ծառայություն-

¹ ՀՆԱ-ի իրական աճ ասելով հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:

² Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

³ 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում: Ընդ որում ներկայացված են ընթացիկ տարվա միայն հունվար-ապրիլի ցուցանիշները, քանի որ հունվար-մայիսի համար տվյալները դեռևս հասանելի չեն:

ների ճյուղի (2.6 տոկոսային կետ⁴) և արդյունաբերության ճյուղի (1.1 տոկոսային կետ) համախառն թողարկումների իրական աճերը, իսկ շինարարությունը և գյուղատնտեսությունը աննշան ազդեցություն են ունեցել ՏԱՑ-ի աճին:

Կանխատեսում: 2011 թվականի առաջին ամիսների դրական զարգացումները և համաշխարհային տնտեսությունում աճի կանխատեսումները (տես Ներդիրը) հիմք են հանդիսացել 2011 թվականի տնտեսական աճի տեմպի կանխատեսման համար: 2011 թվականի համար ծրագրված է 4.6 տոկոս տնտեսական աճ, իսկ 2012-2014 թվականների իրական ՀՆԱ-ի տարեկան աճը կանխատեսվել է համապատասխանաբար՝ 4.2, 4.5 և 4.8 տոկոսի չափով, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերը (նպաստումը 2012-2014թթ. ՀՆԱ-ի միջին 4.5 տոկոս աճին կկազմի համապատասխանաբար 1.7 և 1.1 տոկոսային կետ): Միջնաժամկետ կանխատեսումների համար հիմք են հանդիսացել միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված համաշխարհային տնտեսության վերականգնման վերաբերյալ սպասումներն ու վերլուծությունները: Այս առումով ակնկալվում է, որ այլ հավասար պայմաններում համաշխարհային տնտեսությունում կգրանցվի շարունակական աճ և գլոբալ պահանջարկի մեծացում: Մետաղների միջազգային գների միջավայրը միջնաժամկետում չի վատթարանա, մյուս կողմից կշարունակեն վերականգնվել արտերկից եկող դրամական փոխանցումները՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի տնտեսության ակնկալվող դրական զարգացումներով:

⁴ ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները

Համաշխարհային տնտեսական աճի վերաբերյալ դրական սպասումներն ընդհանուր առմամբ պահպանվում են և այդ է վկայում ԱՄՀ կողմից նոր կանխատեսումների անփոփոխությունը: Ընդ որում, գլոբալ տնտեսությունը թե 2011, և թե 2012 թվականներին աճելու է 4.5 տոկոս տեմպերով: Զարգացած երկրներում աճի տեմպերը կկազմեն միայն 2.5 տոկոս, իսկ զարգացող երկրներում շատ ավելի բարձր՝ 6.5 տոկոս: Հատկանշական է, որ Հայաստանի գործընկեր երկրների տնտեսական աճերի վերաբերյալ սպասումները դարձել են լավատեսական:

Չնայած համաշխարհային տնտեսական բարենպաստ զարգացումներին, այնուամենայնիվ, այն չի ուղեկցվում զբաղվածության կլանմամբ, իսկ զարգացող երկրների համար ի հայտ են գալիս որոշակի գնաճային ռիսկեր: Այսպես, զարգացող երկրներում, որտեղ սննդամթերքը և վառելիքը կազմում են սպառման ավելի մեծ կշիռ, գնաճը որոշ ժամանակ կմնա բարձր մակարդակի վրա, սակայն զգալի բացասական ազդեցություն տնտեսական աճի վրա չի լինի:

Աղյուսակ: Համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարները

Տոկոսային փոփոխություն	Փաստացի				Կանխատեսում			
					2011թ. հունվարին		2011թ. հունվար-ապրիլին	
	2007	2008	2009	2010	2011	2012	2011	2012
Համաշխարհային թողարկում	5.2	2.8	-0.5	5.0	4.4	4.5	4.4	4.5
Զարգացած երկրներ	2.7	0.2	-3.4	3.0	2.5	2.5	2.4	2.6
ԵՄ	2.7	0.5	-4.1	1.7	1.5	1.7	1.6	1.8
Գերմանիա	2.5	1.0	-4.7	3.5	2.2	2.0	2.5	2.1
Մեծ Բրիտանիա	2.6	-0.1	-4.9	1.3	2.0	2.3	1.7	2.3
ԱՄՆ	2.1	0	-2.6	2.8	3.0	2.7	2.8	2.9
Զարգացող երկրներ	8.3	6.0	2.7	7.3	6.5	6.5	6.5	6.5
Չինաստան	13.0	9.6	9.2	10.3	9.6	9.5	9.6	9.5
ԱՊՀ երկրներ	8.6	5.3	-6.4	4.6	4.7	4.6	5.0	4.7
Ռուսաստան	8.1	5.2	-7.8	4.0	4.5	4.4	4.8	4.5
Սպառողական գներ								
Զարգացած երկրներ	-	3.4	0.1	1.5	1.6	1.6	2.2	1.7
ԵՄ	-	-	0.3	1.6	-	-	2.3	1.7
Գերմանիա	-	-	0.2	1.2	-	-	2.2	1.5
Մեծ Բրիտանիա	-	-	2.1	3.3	-	-	4.2	2.0
ԱՄՆ	-	-	-0.3	1.6	-	-	2.2	1.6
Զարգացող երկրներ	-	9.2	5.2	6.3	6.0	4.8	6.9	5.3
Չինաստան	-	-	-0.7	3.3	-	-	5.0	2.5
ԱՊՀ երկրներ	-	-	11.2	7.2	-	-	9.6	8.1
Ռուսաստան	-	-	11.7	6.9	-	-	9.3	8.0
Հումքի գներ								
Նավթի գներ ¹	-	36.4	-36.3	27.8	13.4	0.3	35.6	0.8
Ոչ նավթային գներ	-	7.5	-18.7	23	11.0	-5.6	25.1	-4.3


Աղբյուրը՝ World Economic Outlook

¹UK Brent, Dubai, WTI տիպի նավթի գների միջին թվաբանականը

Աղյուսակ 2. ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի իրական աճը

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	փաստացի				կանխատեսում				
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-6.9	10.5	4.4	7.7	6.7	6.9
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	6.0	-15.7	9.8	4.0	3.2	3.1
Շինարարություն	37.7	18.2	11.3	-41.6	3.0	1.8	3.2	4.0	4.7
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-3.3	4.5	3.8	3.5	4.5	4.6
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	14.9	35.9	17.1	-22.5	9.2	3.9	4.0	4.1	5.1
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2	4.5	4.8

Գծապատկեր 2. Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող իրական աճին նպաստման չափերը



Արդյունաբերություն

Աղյուսակ 2-ից կարելի է նկատել, որ 2006-2008 թվականների արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի իրական աճի ցուցանիշն ամենացածրն է եղել և ճյուղում միջին հաշվով գրանցվել է 0.8 տոկոս աճ, ինչը բացատրվում է հիմնականում այդ տարիներին արդյունաբերության որոշ ենթաճյուղերի համար (բացառությամբ մետալուրգիայի) անբարենպաստ գնային դաշտի ձևավորմամբ՝ ի դեմս արժևորվող իրական փոխարժեքի: 2009 թվականի տարեսկզբին ճյուղը զգալի անկում ունեցավ համաշխարհային պահանջարկի, մետաղների գների և ներքին պահանջարկի անկմամբ պայմանավորված, իսկ տարվա երկրորդ կեսին արդյունաբերությունն աստիճանաբար վերականգնվեց համաշխարհային տնտեսությունում մետաղների գների աճի և կառավարության իրականացրած համակարգված հակացիկլիկ քաղաքականության արդյունքում: 2010 թվականին աճի միտումը պահպանվեց և ճյուղում արձանագրվեց ավելացված արժեքի 10.5 տոկոս իրական աճ:

2011 թվականի առաջին չորս ամիսներին մշտապես արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների ամսական ցուցանիշների իրական աճ: Կուտակային ցուցանիշն իրական արտահայտությամբ աճել է 6.4%-ով, որին հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերությունը ի դեմս սննդամթերքի (իրական աճը 5.3%) և հիմնային մետաղների արտադրության (իրական աճը 17.8%): Հաջորդ խոշոր նպաստումներն են ունեցել էլեկտրաէներգիայի արտադրությունը (իրական աճը 14.1%) և հանքագործական արդյունաբերությունը (իրական աճը 9.0%): Արդյունաբերական արտադրանքի իրական աճին բացասական նպաստում են ունեցել ծխախոտային արտադրատեսակների (իրական անկումը 44.2%), այլ ոչ մետաղական հան-

քային արտադրատեսակների (իրական անկումը 14.2%), ինչպես նաև քիմիական նյութերի և արտադրատեսակների արտադրությունը (իրական անկումը 45.0%):

Կանխատեսում: Արդյունաբերության ճյուղում ավելացված արժեքը ակնկալվում է, որ մինչև տարեվերջ իրական արտահայտությամբ կաճի 4.4 տոկոսով, իսկ 2012-2014 թվականներին կդրսևորի միջինում 7.1 տոկոս աճ, պայմանավորված հանքարդյունաբերության ոլորտում և մշակող արդյունաբերության մի շարք ենթաճյուղերում ներդրումների աճով⁵, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամուտների կանխատեսվող աճի պայմաններում ներքին պահանջարկի աճով:

Գյուղատնտեսություն

2006-2008 թվականներին գյուղատնտեսության ավելացված արժեքի իրական աճը կազմել է միջինում 4.7 տոկոս: 2009 թվականին գյուղատնտեսությունն իրական աճ արձանագրած միակ ճյուղն է եղել (6 տոկոս): 2010 թվականին տնտեսության այս ճյուղը խոշոր՝ 15.7 տոկոս անկում է ունեցել, պայմանավորված գերազանցապես անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցության արդյունքում բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշի 20.3 տոկոս նվազմամբ:

2011 թվականի հունվար-ապրիլին գյուղատնտեսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ նվազել է՝ 0.7 տոկոսով⁶, որը սակայն զուգակցվել է բուսաբուծության 2.5 տոկոս աճով: Տարվա առաջին ամիսներին գյուղատնտեսության մեջ գերակշռող է անասնաբուծական արտադրանքի տեսակարար կշիռը, որտեղ աճի ցուցանիշներ են գրանցվել մսի և կաթի արտադրության ենթաճյուղերում, իսկ ձվի արտադրությունը միակն էր, որ արձանագրել է նվազման ցուցանիշ (բնեղեն արտահայտությամբ): Ձկնորսությունն իրական արտահայտությամբ աճել է 4.9 տոկոսով:

Կանխատեսում: Ընթացիկ տարվա առաջին չորս ամիսների զարգացումների համատեքստում տարեվերջին ակնկալվում է գյուղատնտեսության իրական աճ շուրջ 9 տոկոսի շրջանակներում՝ հիմնականում բուսաբուծության հաշվին: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել ընթացիկ տարվա չորս ամիսների զարգացումները, տարվա հաջորդ ամիսներին գյուղատնտեսության ենթաճյուղերի կշիռների փոփոխությունը, ինչպես նաև հաշվարկման փոքր բազան⁷, որի հետևանքով հետագա ամիսներին ճյուղում աստիճանաբար կարձանագրվի աճի տեմպերի արագացում:

2012-2014 թվականներին ճյուղի միջին աճը կկազմի 3.4 տոկոս, որի համար հիմք են հանդիսացել ճյուղի զարգացմանն ուղղված պետական կարգավորման քաղաքականությունն ու նախորդ տարիներին դրսևորած զարգացման միտումները:

⁵ Հիմնականում դա պայմանավորված է կառավարության կողմից իրականացվող ներդրումների խրախուսման քաղաքականությամբ՝ ներդրումային բնույթի ծրագրերի համար ԱԱՀ-ի արտոնյալ պայմանների տրամադրմամբ:)

⁶ Ճյուղերի և ենթաճյուղերի համախառն թողարկումների իրական աճերի և նպաստումների կուտակային ցուցանիշները այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:

⁷ 2010 թվականին բուսաբուծության ամենախորը անկումն արձանագրվել է հուլիս ամսին՝ 41.2%:

Շինարարություն:

Շինարարության ճյուղը 2006-2008 թվականների ՀՆԱ-ի նկատմամբ ունեցել է առաջանցիկ աճի տեմպեր՝ միջին հաշվով ապահովելով շուրջ 22 տոկոս իրական աճ: Այսինքն, հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: 2009 թվականին շատ մեծ արագությամբ տնտեսության այս ճյուղը գահավիժեց՝ արձանագրելով 41.6 տոկոս իրական անկում: 2010 թվականին շինարարությունը իրական աճի ցուցանիշ է արձանագրել, որը կազմել է 3 տոկոս: Նշված աճին հիմնականում նպաստել է կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը, որոնք առավելապես ուղղվել են արտադրական շինարարությանը:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին շինարարության ծավալները իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել են շուրջ 0.6 տոկոսով: Շինարարության ծավալների անկմանը հիմնականում նպաստել է 28.8 տոկոսային կետ միջազգային վարկերի հաշվին իրականացված շինարարության ծավալների կրճատումը: Մարդասիրական օգնության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները աճել են նպաստելով համապատասխանաբար՝ 8.2 և 14.1 տոկոսային կետով:

Շինարարությունում միջոցներն ըստ տնտեսության ճյուղերի հիմնականում ուղղվել են անշարժ գույքի հետ կապված գործունեությանը՝ 29 տոկոս, տեղեկատվությունը և կապին՝ 12 տոկոս և գյուղատնտեսությանը՝ 13 տոկոս: Հաջորդ մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերն են էլեկտրականության, գազի, գույրշու և լավորակ օդի մատակարարումը (10.0 տոկոս), մշակող արդյունաբերությունը (8 տոկոս), ինչպես նաև կրթությունը (6 տոկոս):

Կանխատեսում: Շինարարության ճյուղի ավելացված արժեքի աճը 2011 թվականին կկազմի շուրջ 1.8 տոկոս, իսկ միջնաժամկետում՝ շուրջ 4.0 տոկոս: Ճյուղի վերականգնումը կլինի աստիճանական, սակայն դրա աճի տեմպերը ՀՆԱ-ի աճից առաջանցիկ չեն լինի, որը կնախանջի տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններին նպատակաուղղված տնտեսական նոր քաղաքականության ուղղությունը:

Ծառայություններ և առևտուր

2006-2008 թվականներին ծառայությունների ոլորտի ավելացված արժեքի միջին իրական աճը կազմել է 11.1 տոկոս: 2009 թվականի ճգնաժամի պայմաններում տնտեսության այս ճյուղը անկում ունեցավ՝ 3.3 տոկոս: 2010 թվականին ճյուղը վերականգնվեց գրանցելով 4.5 տոկոս իրական աճ՝ պայմանավորված հիմնականում առևտրի և տրանսպորտի ու կապի ճյուղերի աճերով՝ համապատասխանաբար՝ 4.8 և 4.9 տոկոս:


2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին մատուցված ծառայությունների ծավալը 2010 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 7.0 տոկոսով, որին հիմնականում նպաստել են ֆինանսական գործունեության (6.6 տոկոսային

կետ) և տրանսպորտի (1.4 տոկոսային կետ) ծառայությունները: Իսկ տեղեկատվության և կապի ծառայությունների նպաստումը բացասական է (1.3 տոկոսային կետ):

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին առևտրի շրջանառությունը 2010 թվականի համապատասխան ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ, իրական արտահայտությամբ աճել է 1.4 տոկոսով, որին հիմնականում նպաստել է մանրածախ առևտրի աճը (1.5 տոկոսային կետ):

Կանխատեսում: Հաշվի առնելով ճյուղի ճգնաժամային ժամանակահատվածում ցուցաբերած բարձր դիմադրողականությունը, կանխատեսվում է ՀՆԱ-ի կայուն աճի միտումներին համահունչ զարգացումներ՝ 2011 թվականին մինչև տարեվերջ սպասվում է, որ ճյուղի ավելացված արժեքի աճը կկազմի շուրջ 3.8 տոկոս, իսկ 2012-2014 թվականներին տնտեսության աշխուժացմանը համամասնորեն ճյուղի աճը կկազմի միջինում 4.2 տոկոս:

Գծապատկեր 3 Ոլորտների տեսակարար կշիռները 2006 -2014 թվականներին



Աշխատանքի շուկա: 2006-2008 թվականներին գործազրկության մակարդակը՝ տնտեսական բարձր աճով պայմանավորված, անկման միտում է դրսևորել, որը սակայն, 2009 թվականից աճել է, պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով: 2010 թվականին գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում կազմել է 7.0 տոկոս՝ մնալով նախորդ տարվա մակարդակին, սակայն տարվա ընթացքում ըստ ամիսների ունեցել է նվազման միտում՝ 2010 թվականի հունվար ամսվա 7.3 տոկոսից հունվար-դեկտեմբերին կազմելով 7.0 տոկոս:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին գրանցված գործազրկության միջին ամսական մակարդակը հանրապետությունում կազմել է 6.6⁷ տոկոս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 0.7 տոկոսային կետով:

⁷Հավարկվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:

2006-2008 թվականներին միջին ամսական անվանական աշխատավարձը հանրապետությունում միջինում աճել է շուրջ 19 տոկոսով: 2009 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը աճել է 9.9 տոկոսով, իսկ 2010 թվականին՝ 13.4 տոկոսով:

2011 թվականի հունվար-ապրիլին միջին ամսական անվանական աշխատավարձը 2010 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 5.4 տոկոսով, ընդ որում՝ բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 5.0 տոկոսով, իսկ ոչ պետական հատվածինը՝ 10.5 տոկոսով: 2011 թվականի հունվար-ապրիլին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է՝ 88124 և 133881 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 108839 դրամ: Իսկ իրական աշխատավարձը 2010 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 4.6 տոկոսով:

Կանխատեսում: Տնտեսության զարգացումներին համահունչ, ինչպես նաև հաշվի առնելով ընթացիկ տարվա միտումները 2011 թվականին կանխատեսվում է գործազրկության մակարդակի նվազում մինչև 6.5 տոկոս: Միջնաժամկետում տնտեսական ակտիվության աճին զուգընթաց գործազրկության մակարդակի աստիճանական նվազման միտումը կպահպանվի: Տնտեսության զարգացումները կկլանվեն բնակչության զբաղվածության կողմից այնպես, որ ապահովվի տնտեսության արտադրողականության աստիճանական բարելավում՝ աշխատանքի արտադրողականության աճը միջնաժամկետ հատվածում միջին հաշվով կկազմի 3.4 տոկոս:

Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառման են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Համախառն սպառում: 2006-2008 թվականների ընթացքում սպառումը միջին հաշվով աճել է 8.6 տոկոսով, իսկ իրական ՀՆԱ-ն՝ 11.3 տոկոսով: Ընդ որում, պետական սպառումը միջին հաշվով աճել է 5.8 տոկոսով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.0 տոկոսով: 2009 թվականին՝ տնտեսական ճգնաժամի (ինչպես նաև դրան հաջորդող տարում) սպառման անկումը բարձր չի եղել, մասնավորապես իրական արտահայտությամբ նվազել է 4 տոկոսով՝ 14.1 տոկոս տնտեսական անկման

պայմաններում, ինչը պայմանավորված է հարստության էֆֆեկտով⁸: Միաժամանակ, վերջնական սպառման կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություն: 2006-2008 թվականներին պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները միջինում կազմել են համապատասխանաբար՝ 12.4 եւ 87.6 տոկոս, իսկ 2009 թվականին կազմել են՝ 14.2 և 85.8 տոկոս:

2010 թվականին վերջնական սպառումը իրական արտահայտությամբ աճել է 4 տոկոսով՝ ՀՆԱ-ի 2.1 տոկոս աճի պայմաններում: Ընդ որում, սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները մնացել են 2009 թվականի մակարդակին (համապատասխանաբար՝ շուրջ 14 եւ 86 տոկոս):

Կանխատեսում: Մինչև տարեվերջ ՀՆԱ-ի կանխատեսված 4.6 տոկոս աճի պարագայում կունենանք սպառման աճ ընդամենը 1.0 տոկոսի չափով, որը 3 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից, վերջինս պայմանավորված է սպառողական գների բարձր մակարդակով: 2012-2014 թվականներին, կապված տնտեսության վերականգնման և արտաքին աշխարհից ներհոսող մասնավոր տրանսֆերտների ակնկալվող աճի հետ կանխատեսվում է սպառման աճ միջինում 3.2 տոկոսի չափով:

Համախառն ներդրումներ: Կապիտալ ներդրումների մասով նշենք, որ 2006-2008 թվականների ընթացքում կապիտալ ներդրումները միջին հաշվով աճել են 21.5 տոկոսով: Սակայն, 2009 թվականին իրական կապիտալ ներդրումները կրճատվել են 30.9 տոկոսով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 37.4 տոկոս իրական նվազման, որը մեծամասամբ պայմանավորված էր շինարարության ճյուղի աճի տեմպերի զգալի նվազմամբ, իսկ վերջինիս վրա մեծ է եղել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Պետական կապիտալ ներդրումները նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 11.5 տոկոսով, պայմանավորված պետության ընդլայնող տնտեսական քաղաքականությամբ: 2010 թվականին իրական կապիտալ ներդրումները աճել են 2.9 տոկոսով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 8.3 տոկոս աճի, սակայն պետական ներդրումները նվազել են 16.8 տոկոսով:

Կանխատեսում: 2011 թվականին կանխատեսվում է կապիտալ ներդրումների 0.6 տոկոս աննշան նվազում՝ պայմանավորված պետական ներդրումների 16.7 տոկոս կրճատմամբ: Սակայն, միջնաժամկետում ներդրումները կդրսևորեն աճի միտում՝ միջինում 4.3 տոկոս, որը հիմնականում կպայմանավորվի արտադրողական բնույթի ներդրումներով, որն էլ հիմքեր կստեղծի ապագա կայուն աճի համար:

Չուտ արտահանում: Արտաքին առևտրի ցուցանիշների մասով նշենք, որ 2006-2008 թվականներին ներմուծումը միջին հաշվով աճել է 8 տոկոսով, իսկ արտահանումը կրճատվել է 8 տոկոսով, սա պայմանավորված է այդ ժամանակահատվածում դրամի իրական արտահայտությամբ

⁸ Տնօրինվող եկամտի նվազման դեպքում սպառման վարքագիծը եկամուտներին համարժեք չի փոխվում, այլ շարունակվում է իրականացվել սպառման նույն մակարդակը՝ ի հաշիվ խնայողությունների:

արժեվորմամբ և բնակչության եկամուտների շարունակական աճով: 2009 թվականին արտահանման իրական ծավալները կրճատվել են 10.4 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 19.5 տոկոսով: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, այս ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ: 2010 թվականին արտահանման իրական ծավալները ավելացել են 21.7 տոկոսով, իսկ ներմուծմանը 13.8 տոկոսով, որը պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, ինչպես նաև նախորդ տարիներին կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերված օժանդակությամբ:

Կանխատեսում: 2011 թվականի վերջին իրական արտահայտությամբ կունենանք ներմուծման 6.1 և արտահանման 9.0 տոկոս աճ: 2012-2014 թվականներին՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության վերականգնմամբ, որը կարտահայտվի մեր տնտեսության արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկի մեծացմամբ, կանխատեսվում է արտահանման ծավալների միջին աճ 6.5 տոկոսի չափով և ներմուծման ծավալների աճ 1.6 տոկոսի չափով:

Աղյուսակ 3. ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, %

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Սպառում	9.0	12.3	4.5	-4	4.0	1.0	2.9	3.0	3.6
Ներդրում	32.2	19.7	12.6	-30.9	2.9	-0.6	5.0	4.7	3.2
Արտահանում	-7.3	-3.5	-13.1	-10.4	21.7	9.0	7.9	6.5	5.1
Ներմուծում	3.8	13.0	7.3	-19.5	13.8	6.1	0.8	2.3	1.5
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2	4.5	4.8

Աղյուսակ 4. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Սպառում	82.3	81.8	81.8	93.7	94.0	93.3	92.4	91.3	90.3
Ներդրումներ	35.9	37.8	40.9	34.7	33.4	31.0	31.0	30.8	30.3
Զուտ արտահանում, այդ թվում	-15.9	-20.0	-25.6	-27.5	-25.4	-24.1	-22.7	-21.1	-19.5
Արտահանում	23.4	19.2	15.0	15.5	19.8	22.3	24.1	24.5	24.4
Ներմուծում	39.3	39.2	40.7	43.0	45.2	46.4	46.9	45.6	43.9
Վիճ. շեղում	-2.4	0.4	2.9	-0.8	-2.1	-0.2	-0.7	-1.0	-1.1
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100	100	100	100

Ընդ որում, ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում ներդրումների կշիռը շարունակական անկում է ապրելու՝ պայմանավորված կապիտալ շինարարության ծավալների նվազմամբ, ընդ որում բնակարանային շինարարությունը նվազելու է, իսկ արտադրական ոլորտում իրականացվող շինարարությունը աճելու է: Միաժամանակ, արտահանման կշիռը ունենալու է շարունակական աճի միտում:

Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները


ՍԳԻ. Վերջին տարիների ընթացքում սպառողական գները հիմնականում կայուն են եղել՝ չգերազանցելով 4+/-1.5 տոկոս նպատակային միջակայքը: Բացառություն են կազմել 2007 և 2009 թվականները, երբ 2007 թվականին սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.6 տոկոս՝ պայմանավորված արտաքին շոկերով, մասնավորապես, նավթի և ցորենի միջազգային գների բարձրացմամբ: 2009 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 6.5 տոկոս, որին հիմնականում նպաստել են որոշ ներմուծվող սպառողական ապրանքների համաշխարհային գների աճը, մարտի սկզբին դրամի կտրուկ արժեզրկմամբ պայմանավորված ներմուծված ապրանքների գների ճշգրտումը և ապրիլից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների բարձրացումը: Սակայն նշենք, որ 2009 թվականի 12-ամսյա գնաճը մինչև նոյեմբեր պահպանվել է նպատակային թիրախի սահմաններում և գնաճի տեմպի կտրուկ ավելացում է արձանագրվել դեկտեմբերին՝ պայմանավորված գյուղատնտեսական ապրանքների գների առավել ցայտուն սեզոնային աճով: 2010 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 9.4%: Բարձր գնաճային միջավայրը հիմնականում պայմանավորվել է առաջարկի գործոններով՝ առավելապես գյուղատնտեսության ճյուղի խորը անկմամբ, ինչի հետևանքով արձանագրվեց գյուղատնտեսական ապրանքների աննախադեպ բարձր գնաճ: Բարձր գնաճին նպաստել են նաև որոշ պարենային և հումքային ապրանքների (ցորեն, շաքար, նավթ) միջազգային գների զգալի բարձրացումը (ցորեն, շաքար, նավթ) և 2010 թվականի ապրիլի 1-ից գազի և ջրի սակագների բարձրացումը: Ընդ որում հատկանշական է, որ 9.4% տոկոս գնաճի միայն 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է պարենային ապրանքների գների աճով, որից 2 տոկոսային կետը նպաստել է հացամթերքը, 5 տոկոսային կետը՝ գյուղատնտեսական պարենային ապրանքների գների աճը:

2011 թվականի ապրիլին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 5 տոկոս գնաճ, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 7.3 տոկոս, ոչ պարենային ապրանքների գների 1.5 տոկոս և ծառայությունների սակագների 2.4 տոկոս աճով:

Կանխատեսում: 2011 թվականի առաջին կեսում դեռևս կպահպանվի նախորդ տարվա վերջից ձևավորված բարձր գնաճային ֆոնը, սակայն տարվա երկրորդ կեսից գնաճային ճնշումները

աստիճանաբար կթուլանան՝ պայմանավորված գյուղատնտեսության ճյուղի վերականգնմամբ և տարեսկզբից ԿԲ-ի դրամավարկային պայմանների խստացմամբ: Որոշակի ռիսկեր կարող են առաջանալ միջազգային շուկաներում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճի պարագայում: 2011 թվականին ակնկալվում է, որ 12-ամսյա գնաճը կկազմի շուրջ 5.4 տոկոս: 2012-2014 թվականներին կանխատեսվող 12-ամսյա գնաճը կվերականգնի նպատակային թիրախի 4 (+/- 1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքով մակարդակը:

Գծապատկեր 4. 2000-2014 թվականների գնաճի (ՍԳԻ) դինամիկան



Դեֆլյատոր: ՀՆԱ դեֆլյատորը 2006-2008 թվականների ընթացքում եղել է կայուն և կանխատեսելի՝ միջին հաշվով կազմելով 104.9 տոկոս: 2009 թվականի տնտեսական զարգացումներով պայմանավորված դեֆլյատորի մեծությունը վերջին տարիներին արձանագրված ցուցանիշի միջինից զգալիորեն ցածր էր՝ 102.6 տոկոս: 2010 թվականին միտումը կտրուկ փոխվել է. դեֆլյատորը կազմել է 109.2 տոկոս՝ պայմանավորված գյուղատնտեսության բարձր գների ինդեքսով, որը կրում է գյուղատնտեսության տեղական արտադրության խոշոր կրճատման, ինչպես նաև պարենի միջազգային շուկայում գյուղմթերքների առաջարկի կրճատման կնիքը: Հաջորդ խոշոր նպաստումն ունեցել է արդյունաբերության գների ինդեքսը. որը նույնպես կրում է միջազգային շուկաների ազդեցությունը (պղնձի և մոլիբդենի մասով):

Կանխատեսում: Մինչև տարեվերջ կանխատեսում ենք ՀՆԱ-ի դեֆլյատորի աճի տեմպի նվազում՝ նախորդ տարվա համեմատությամբ այն կկազմի 105.7 տոկոս, իսկ 2012-2014 թվականներին միջին դեֆլյատորը կկայունանա 104 տոկոսի շուրջ:

Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Գնաճի տրված մակարդակի պայմաններում եթե տոկոսադրույքները բարձր են, ապա ռիսկայնության աստիճանը բարձր է, կամ հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման տեսանկյունից ունի կարևոր նշանակություն:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերով պայմանավորված փողի զանգվածը շարունակական աճել է. 2006 և 2007 թվականներին աճերը կազմել են համապատասխանաբար 32.9 տոկոս և 42.5 տոկոս: Սակայն, 2008 թվականի վերջին եռամսյակում, տնտեսության աճի տեմպերի դանդաղման և 2009 թվականին արձանագրված 14.1 տոկոս տնտեսական անկման պարագայում, նկատելի եղավ նաև փողի նկատմամբ պահանջարկի նվազումը: Արդյունքում փողի զանգվածի աճը 2008 և 2009 թվականներին կազմել է համապատասխանաբար 2.3 և 15.1 տոկոս: 2010 թվականին փողի զանգվածի աճը կազմել է 11.8 տոկոս: Արդեն, 2011 թվականի ապրիլին փողի զանգվածն աճել է 16 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի և դրամային ավանդների նպաստումը եղել է 4.1 և 8.2 տոկոսային կետ, իսկ արտարժույթային ավանդներինը՝ ընդամենը 3.7 տոկոսային կետ:

2006 և 2007 թվականներին փողի բազան ևս աճել էր և կազմել՝ համապատասխանաբար 41.1 և 50.9 տոկոս: 2008 և 2009 թվականների տարեկան արդյունքներով փողի բազայի առավել զուսպ աճի տեմպեր են արձանագրվել համապատասխանաբար 5.3 և 13.8 տոկոս: 2010 թվականին փողի

բազան նվազել է 0.8 տոկոսով պայմանավորված գնաճի զսպան նպատակով ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային պայմանների խստացմամբ ու պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությամբ:

2011 թվականի ապրիլին փողի բազան աճել է 5.9 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ընդ որում ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի նպաստումը եղել է դրական՝ 8.4 տոկոսային կետ, իսկ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվներում ավելցուկային միջոցների և պարտադիր պահուստների նպաստումը բացասական՝ 4.4 տոկոսային կետ: Կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում աճել է 4.7 տոկոսային կետով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ կազմելով 64.0 տոկոս:

Վերջին 5 տարիների ընթացքում առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ զգալի ավելացել է: Հատկանշական է, որ նույնիսկ ճգնաժամի ժամանակ նշված ցուցանիշի նվազում չի արձանագրվել, ինչում կարևոր դերակատարություն է ունեցել կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում համակարգաստեղծ ձեռնարկություններին, ինչպես նաև արտահանման և ներմուծման փոխարինման ուղղվածություն ունեցող ՓՄՁ սուբյեկտներին կառավարության կողմից տրամադրված ֆինանսական օժանդակությունը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2010 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 214.6 մլրդ դրամով կամ 29.2%-ով⁹ և ՀՆԱ-ի մեջ կազմել 27.1 տոկոս, ինչը 3.7 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Արդեն 2011 թվականի ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ վարկերը ավելացել են 299.1 մլրդ դրամով (38.9%-ով):

Նշենք նաև, որ 2006 թվականից զգալի ոլորտային փոփոխություններ են արձանագրվել առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռներում: 2010 թվականի վերջի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրված վարկերի կշիռն ընդհանուր վարկերի մեջ կազմել է 23.01 տոկոս և 2006 թվականի համեմատ աճել է 5.8 տոկոսային կետով, սպառողական վարկերի կշիռը 2006 թվականի նկատմամբ նվազել է 11.5 տոկոսային կետով կազմելով՝ 18.5 տոկոս, շինարարության ոլորտին տրված վարկերի կշիռը 2006 թվականի նկատմամբ աճել է 3.4 տոկոսով՝ կազմելով 8.44 տոկոս (մյուս ոլորտներում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել):

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 191.1 մլրդ

⁹ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

դրամով և ՀՆԱ-ի մեջ կազմել 20.9 տոկոս: Հատկանշական է նաև, որ ճգնաժամի պայմաններում ֆինանսական շուկաների նկատմամբ վստահության անկում՝ ի դեմս բանկերից ավանդների փախուստի և ֆինանսական շուկաների անկայություն չի նկատվել: Նշվածը պայմանավորվել է ճգնաժամի ժամանակ կառավարության և կենտրոնական բանկի միջև քաղաքականությունների արդյունավետ կոորդինացմամբ, ինչպես նաև նախորդ տարիներից եկող ֆինանսական համակարգի բարձր կապիտալացմամբ: 2010 թվականի վերջի դրությամբ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդները նախորդ տարվա համեմատ ավելացել են 45.3 մլրդ դրամով կամ 6.9 տոկոսով¹⁰ և ՀՆԱ-ի մեջ կազմել 20.1 տոկոս: Նշենք, որ 2010 թվականի ընթացքում նկատվել է դոլարայնացման մակարդակի նվազում ներգրավված ավանդների 69.0 տոկոսն են կազմել արտար- ժույթով ավանդները՝ նախորդ տարվա 73.4 տոկոսի փոխարեն: Նշվածը պայմանավորվել է ԿԲ-ի և Կառավարության կողմից ապադոլարայնացման միջոցառումների իրականացմամբ: Արդեն 2011 թվականի ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավանդները ավելացել են 84.7 մլրդ դրամով (12.8%-ով), իսկ դոլարայնացման մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 4.7 տոկոսային կետով կազմելով 70.8 տոկոս:

Աղյուսակ 5. Բանկային ակտիվներ/ՀՆԱ 2006 թվականից 2011 թվականի ապրիլ ամիսը (մլրդ դրամով)

	2006	2007	2008	2009	2010	2011			
						հունվար	փետր- վար	մարտ	ապրիլ
ՀՆԱ անվանական	2656.2	3149.3	3568.2	3141.7	3501.6				
Վարկեր	243.6	426.2	634.5	735.2	949.8	960.8	996.2	1039.3	1067.4
Վարկերի կշիռ ՀՆԱ-ում % ¹¹	9.2	13.5	17.8	23.4	27.1	-	-	-	-
Ավանդների կշիռ ՀՆԱ	306.8	413.2	465.9	657	702.3	697.6	718.9	754.9	746.7
Ավանդների կշիռ ՀՆԱ	11.6	13.1	13.1	20.9	20.1	-	-	-	-

Առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2006-2008 թվականներին միջինում ավելի ցածր են եղել (համապատասխանաբար 17.3 և 6.21 տոկոս) քան 2009, 2010 թվականներին (համապատաս- խանաբար 18.98 և 8.8 տոկոս): Արդեն 2011 թվականի ապրիլին առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները կազմել են 17.01 տոկոս՝ 2010 թվականի ապրիլի 19.94 տոկոսի համեմատ: Նույն ժամանակահատվածում առևտրային բանկերի դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ է գրանցվել: Այսպես, եթե 2010 թվականի ապրիլին ավանդների

¹⁰ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

¹¹ Ցուցանիշների համադրելիությունը ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

տոկոսադրույքը կազմել է 9.08 տոկոս, ապա 2011 ապրիլին այն աճել է 0.29 տոկոսային կետով (9.37 տոկոս): Նշենք նաև, որ 2011 թվականի ապրիլին առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սարեդը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 3.22 տոկոսային կետով կազմելով 7.64 տոկոսային կետ:

Աղյուսակ 6. Ֆինանսական շուկայի 2008-2011թթ առանձին ամիսների միջին տոկոսադրույքները

%	2008		2009		2010		2011			
	ապրիլ	դեկտեմբեր	ապրիլ	դեկտեմբեր	ապրիլ	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ
Վարկեր ¹²	17.29	16.5	18.77	18.79	19.94	18.9	18.25	18.66	18.29	17.01
Ավանդներ	6.14	7.71	8.18	8.10	9.08	8.76	8.74	9.23	9.05	9.37

Կանխատեսում: Հաշվի առնելով, որ 2011 թվականի տարեսկզբից իրականացվում է կոշտ դրամավարկային քաղաքականություն ակնկալվում է, որ դրամավարկային ցուցանիշներն կունենան առավել զուսպ աճի տեմպեր քան արձանագրվում էր մինչ ճգնաժամը: 2011 թվականին փողի բազայի աճը կկազմի մոտ 12.3 տոկոս, իսկ փողի զանգվածի աճը՝ 15.3 տոկոս: Միջնաժամկետ հատվածում, արդեն տնտեսական զարգացումներին համահունչ, 2012-2014 թվականների համար փողի բազայի և փողի զանգվածի միջին աճերը կկազմեն համապատասխանաբար 8.8 և 9.7 տոկոս:

Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը),
- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

¹² Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

Ընթացիկ հաշիվ: Վերջին տարիներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականությունների արդյունքում ընթացիկ հաշվի հիմնական ցուցանիշների մասով տեղի է ունեցել զգալի բարելավում, եթե 2000 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել էր ՀՆԱ-ի 14.6 տոկոսը, ապա 2007 թվականին այն հասել է 6.4 տոկոսի: Սակայն, սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից, տնտեսությունը կրեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվեցին Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները, ինչպես նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: Արդյունքում, 2009 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց ՀՆԱ-ի 15.8 տոկոսը՝ գերազանցելով 2000 թվականի առավելագույն մակարդակը: Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում ՀՀ կառավարության քաղաքականությունը արտահանման խթանման ուղղությամբ 2010 թվականին տվեց իր դրական արդյունքները՝ տնտեսության արտաքին հատվածի բարելավումը ձևավորվել է ավելի արագ, քան սպասվում էր: Արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ տարվա ընթացքում ավելացել են նաև Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 13.9 տոկոսը: Աղյուսակ 8-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տես Գծապատկեր 7-ը):

Արտաքին առևտուր: ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 2010 թվականին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 18.9 տոկոսով, ընդ որում տեղի է ունեցել ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների աճ. արտահանումն աճել է 42.4 տոկոսով՝ կազմելով 1011.4 մլն դոլար, իսկ ներմուծումը կազմել է 3782.9 մլն դոլար՝ աճելով 13.9 տոկոսով:

2011 թվականի առաջին չորս ամիսներին տնտեսության արտաքին հատվածում շարունակվել են նախորդ տարվա ընթացքում ձևավորված դրական զարգացումները: 2011 թվականի հունվար-ապրիլին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 14.6 տոկոսով: Արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ տարվա առաջին չորս ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ բանկային համակարգի միջոցով Հայաստան ներհոսող փոխանցումները ավելացել են մոտ 24 տոկոսով՝ դրական նպաստում ցուցաբերելով ընթացիկ հաշվի զարգացումներին:

Ներմուծում: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների աճով և տնտեսության վերականգնմամբ: Ներմուծման աճ է արձանագրվել կառուցվածքում մեծ կշիռ ունեցող գրեթե բոլոր, այդ թվում նաև ներդրումային բնույթի ապրանքների գծով. ընդհանուր ներմուծման մեջ «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի տեսակարար կշիռը

կազմել է 21.0 տոկոս, որոնց աճը 1.5 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին: Ներմուծման ամենաբարձր՝ 4.2 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», 2.0 տոկոսային կետը՝ «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», 1.6 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 1.4 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման աճով, որոնք համապատասխանաբար կազմել են 25.6, 28.1, 48.0 և 17.0 տոկոս: 2011 թվականի հունվար-ապրիլին ՀՀ ներմուծումն աճել է 10.9 տոկոսով՝ կազմելով 1209.6 մլն դոլար:

Կանխադրեամ: 2011 թվականին կանխատեսվում է 6.1 տոկոս ապրանքների ներմուծման աճ, որը բավականին պահպանողական է հաշվի առնելով բնակչության կողմից արտերկրներից ստացվող փոխանցումների և վերջնական սպառման աճի համանման կանխատեսման մոտեցումը: 2012-2014 թվականներին ներմուծման աճի միտումները կպահպանվեն, միջին տարեկան աճը (դոլարային արտահայտությամբ) կկազմի 5.4 տոկոս՝ պայմանավորված հիմնականում ներքին տնտեսության եկամուտների աճով, իսկ ապրանքների և ծառայությունների համար՝ 4.9 տոկոս:

Արտահանում: Տնտեսության արտահանման ոլորտում ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների արդյունքները՝ զուգորդվելով հումքային բնույթի ապրանքատեսակների արտահանման շուկաների վիճակի բարելավման հետ, արդեն իսկ 2009 թվականի երրորդ եռամսյակից արտահայտվեցին արտահանման որոշակի աշխուժացման և ծավալների աստիճանական վերականգնման տեսքով, իսկ 2010 թվականին ամրապնդեցին արտահանման նշված ձեռքբերումները: 2010 թվականի արդյունքներով արտահանման աճի ամենաբարձր՝ 18.4 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 89.9 տոկոս ավելացմամբ: Արտահանման աճի 14.3 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 4.5 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 4.1 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 43.8, 31.7 և 27.6 տոկոս: 2011 թվականի հունվար-ապրիլին ՀՀ արտահանումն աճել է 28.3 տոկոսով՝ կազմելով 373.4 մլն դոլար:

Կանխադրեամ: 2011 թվականին կանխատեսվում է առնվազն 20 տոկոս արտահանման աճ, քանի որ պահպանվում է գործընկեր երկրների տնտեսական ակտիվությունը և բարենպաստ է մետաղների գների միջավայրը: Սակայն առկա են որոշ ռիսկեր՝ հատկապես կապված նավթի առաջարկով պայմանավորված տնտեսական աճի տեմպերի հետ (նշված ռիսկը նկարագրված է ռիսկերի մասում): Միջնաժամկետ հատվածում համաշխարհային տնտեսական աճին և կառավարության կողմից տնտեսության արտահանելի ոլորտում տարվող քաղաքականության ուղղությանը համահունչ ակնկալվում է, որ արտահանման աճը կշարունակվի և ապրանքների արտահանման

ծավալները կկազմեն շուրջ 1673 մլն ԱՄՆ դոլարի (ՖՕԲ) միջին տարեկան մակարդակ և միջին տարեկան 11.0 տոկոս աճ (դոլարային արտահայտությամբ): Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար կկազմի շուրջ 10.1 տոկոս (2657 մլն ԱՄՆ դոլար):

Գործընկեր երկրներ: Հայաստանը լինելով փոքր և բաց տնտեսություն արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: 2006-2008 թվականներին հիմնական գործընկեր երկրների տնտեսական բարձր աճը նպաստեց այդ տարիներին դրամական փոխանցումների ներհոսքի կրկնապատկմանը՝ նպաստելով նաև տնօրինվող եկամուտների և ՀՀ տնտեսական աճին: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով 2009 թվականին Հայաստանի արտաքին անհավասարակշռության և արտարժույթի ներհոսքի կրճատման հիմնական պատճառ դարձան տրանսֆերտների, գործոնային եկամուտների և արտահանման ծավալների նվազումը, ինչն էլ հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկի անկման հետևանք էր: 2010 թվականին համաշխարհային տնտեսության և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական վերելքով պայմանավորված կապիտալի ներհոսքը դեպի հանրապետություն վերականգնվեց:

Արտաքին առևտուր: 2010 թվականին արտարժույթի ներհոսքը արտահանման հաշվին վերջինիս սպասվածից բարձր աճով պայմանավորված արագ վերականգնվեց. արտահանման դոլարային ծավալները նույնիսկ գերազանցեցին 2008 թվականի մակարդակը՝ 0.1 տոկոսային կետով: Հայաստանյան ապրանքների նկատմամբ ներկայացնելով հիմնական պահանջարկը, 2010 թվականի ՀՀ արտահանման 42.4 տոկոս աճի 39.4 տոկոսային կետը ապահովել են հետևյալ 7 երկրները. Բուլղարիան՝ 13.8, Ռուսաստանը՝ 7.7, Նիդերլանդները՝ 6.6, Բելգիան՝ 3.7, Իրանը՝ 2.8, Գերմանիան՝ 2.5 և ԱՄՆ-ն՝ 2.3 տոկոսային կետերով: Տարվա ընթացքում նշված երկրներ արտահանվող հիմնական ապրանքատեսակներն էին. ոչ թանկարժեք քարերը և մետաղները (հանքաքար, պղինձ, խարամ), ոգելից խմիչքները (կոնյակ), ադամանդը և այլ ապրանքներ (տես ստորև ներկայացված աղյուսակը):

Աղյուսակ 7. Գործընկեր երկրների նպաստումը ընդհանուր արտահանման աճին և ընդհանուր արտահանման մեջ հիմնական գործընկեր երկրների կշիռները, %

Նպաստումը ընդհանուր արտահանման աճին, %	2006	2007	2008	2009	2010	Պահանջարկ ունեցող հայաստանյան հիմնական ապրանքատեսակները (2010թվականի փաստացի տվյալներով)
Ընդամենը արտահանման աճ	1.1	17.0	-8.3	-32.8	42.4	
Բուլղարիա	0.1	4.6	1.1	0.0	13.8	Պղնձի հանքաքար
կշիռը, %	0.1	4.1	5.6	8.6	15.5	
Ռուսաստան	0.2	8.2	0.6	-9.5	7.7	Ալկոհոլ, ադամանդ
կշիռը, %	12.3	17.5	19.7	15.4	15.9	

Նիդերլանդներ	-0.6	3.0	-2.2	-7.4	6.6	Ոչ թանկարժեք մետաղներ
կշիռը, %	12.9	13.5	12.4	7.5	9.7	
Բելգիա	-1.6	-0.9	-0.9	-4.0	3.7	Ադամանդ
կշիռը, %	11.0	8.7	8.5	6.7	7.2	
Իրան	0.1	0.9	-1.2	0.8	2.8	Կենդանիներ, էլ.էներգիա
կշիռը, %	3.0	3.3	2.4	4.7	5.2	
Գերմանիա	-0.4	2.2	1.2	-6.5	2.5	Մետաղներ, պղինձ
կշիռը, %	15.0	14.7	17.4	16.5	11.4	
ԱՄՆ	0.3	-1.4	0.1	1.3	2.3	Ալյումին
կշիռը, %	6.6	4.5	5.0	9.6	8.2	
Չինաստան	-0.9	0.7	-0.5	1.5	1.9	Պղինձ, խարամ
կշիռը, %	0.1	0.7	0.2	2.6	3.1	
Վրաստան	0.8	3.4	-0.5	-2.7	-0.3	Շշեր, գազ, սուրճ, ցեմենտ
կշիռը, %	5.5	7.6	7.7	7.6	5.0	

Հարկ է նշել, որ ՀՀ արտահանման մեջ համեմատաբար մեծ կշիռ ունեցող Վրաստան արտահանման ծավալները վերջին տարիներին բացասական են նպաստում արտահանման ընդհանուր աճին, իսկ կշիռն ընդհանուր արտահանման մեջ վերջին տարիներին նվազում է: Գործընկեր երկրներից ամենաարագը վերջին տարիներին աճել է արտահանումը դեպի Բուլղարիա, որի կշիռը ընդհանուր արտահանման մեջ 2008 թվականի 5.6 տոկոսից հասել է մինչև 15.5 տոկոս 2010 թվականին և պայմանավորված է մետաղների միջազգային գների բարենպաստ զարգացումներով:

Երկրի ավելցուկային սպառողական պահանջարկը 2010 թվականին բավարարվել է հիմնականում հետևյալ գործընկեր երկրներից ներմուծման հաշվին՝ Չինաստան (նպաստումը՝ 3.6 տոկոսային կետ, հիմնականում ներմուծվում են էլեկտրոնային և էլեկտրական սարքավորումներ), Ռուսաստան (1.3, ներմուծվում է՝ նավթ, գազ, հացահատիկ), Իրանը (1.6, նավթամթերք), Գերմանիա (1.1, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ), Թուրքիա (1.0, սև մետաղներից ապրանքներ, պլաստմասսա), Բուլղարիա (0.8, նավթամթերք) և Ուկրաինա (0.8, ոչ թանկարժեք մետաղներից արտադրանք), որոնք ապահովել են 2010 թվականի ընդհանուր ներմուծման 13.9 տոկոս աճի 9.4 տոկոսային կետը:

Արդյունքում 2010 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 28.0 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 32.0 տոկոսը՝ ԵՄ երկրներին (2009 թվականին ԱՊՀ-ն՝ 29.3 և ԵՄ՝ 30.0 տոկոս): ԵՄ երկրների ՀՀ ապրանքաշրջանառության աճը ԱՊՀ երկրների համեմատ առաջանցիկ էր և նախորդ տարվա համեմատ կազմել է 27 տոկոս (ԱՊՀ երկրների աճը՝ 13.7 տոկոս): ՀՀ խոշոր առևտրային գործընկեր երկրների շրջանակում ընդգրկված են Չինաստանը (առևտրաշրջանառության 9.1%), Գերմանիան (7.2%), Բուլղարիան (5.6%), Իրանը (5.6%), Թուրքիան (4.4%), ԱՄՆ-ն (4.1%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից Ռուսաստանը (20.8%) և Ուկրաինան (5%):

2011 թվականի հունվար-ապրիլին ՀՀ ապրանքների արտահանման 28.3 տոկոս աճին հիմնականում նպաստել են Ռուսաստանը՝ 5.6, Նիդերլանդները՝ 5.6, Իրանը՝ 5.5, Գերմանիան՝ 3.7, Բուլղարիան՝ 3.6 տոկոսային կետերով: Նույն ժամանակահատվածում արտասահմանյան

ապրանքների ներմուծման 10.9 տոկոս աճին հիմնականում նպաստել են Գերմանիան՝ 2.3, Ռուսաստանը՝ 2.1, Իսրայելը՝ 1.0, Իտալիան՝ 1.0, և Ուկրաինան՝ 0.9 տոկոսային կետերով:

Դրամական փոխանցումներ: 2006-2008 թվականներին դրամական փոխանցումների հիմնական աղբյուր հանդիսացող գործընկեր երկրների տնտեսական բարձր աճը (Ռուսաստանի միջին աճը կազմել է 7.3, ԱՄՆ՝ 1.6 տոկոս) նպաստեց մասնավոր տրանսֆերտների ու զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների դրամական փոխանցումների զգալի աճի, որոնց ընդհանուր ծավալը այդ տարիներին միջին հաշվով կազմել են 1437 մլն. դոլար և կրկնապատկվել 2005 թվականի նկատմամբ՝ նպաստելով բնակչության տնօրինվող եկամուտների և սպառման աճի, տնտեսական ակտիվության և տնտեսական աճի հիմնական շարժիչի՝ շինարարության աշխուժացմանը: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով այդ երկրներում եկամուտների նվազմամբ (Ռուսաստանում 7.8, ԱՄՆ-ում՝ 2.6 տոկոս տնտեսական անկում) պայմանավորված 2009 թվականին զուտ մասնավոր տրանսֆերտներն ու աշխատողների դրամական փոխանցումները 30 տոկոսով կրճատվեցին: 2010 թվականին 2009 թվականի համեմատ դրամական փոխանցումների զուտ ներհոսքը աճել է ավելի քան 12.0 տոկոսով (1437 մլն. դոլար), ընդ որում, մասնավոր տրանսֆերտները տարվա ընթացքում ավելացել են 15.1, իսկ զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների դրամական փոխանցումները՝ 8.3 տոկոսով:

« ներհոսող մասնավոր տրանսֆերտների և աշխատողների դրամական փոխանցումների հիմնական աղբյուր են հանդիսանում Ռուսաստանը և ԱՄՆ: 2010 թվականին այդ երկրների կշիռը բանկային համակարգով ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների կառուցվածքում համապատասխանաբար կազմել են 82.1 և 5.2 տոկոս՝ վկայելով հատկապես Ռուսաստանի տնտեսության զարգացումներից Հայաստանի մեծ կախվածության մասին: 2011 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ բանկային համակարգով ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների ներհոսքը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 23.8 տոկոսով, կազմելով 357 մլն. դոլար, Ռուսաստանից փոխանցումների կշիռը կազմել է 79 տոկոս, իսկ ԱՄՆ-ից՝ 6.4 տոկոս:

Փոխարժեք: 2009 թվականին և 2010 թվականի տարեսկզբի ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ « դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2010 թվականի երկրորդ եռամսյակից փոփոխվել են և դրսևորվել է ամսական միջին փոխարժեքների դանդաղ արժևորման միտում: 2010 թվականի ընթացքում արժեզրկման առավելագույն ցուցանիշը տեղի է ունեցել փետրվար ամսին, երբ ամսական միջին փոխարժեքը կազմել է 380.49 (2009-ին՝ 305.47) « դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց և նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատ արժեզրկվել է 19.7 տոկոսով, իսկ դեկտեմբերի միջին փոխարժեքը կազմել է 360.5 դրամ (2009-ին՝ 380.47)՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով դրամի անվանական փոխարժեքի 5.5 տոկոս արժևորում: Ինչ

վերաբերում է դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ տարեկան միջին փոխարժեքին, ապա վերջինս 2010 թվականին կազմել է 373.66 դրամ նախորդ տարվա 363.28 դրամի փոխարեն՝ արժեզրկվելով 2.8 տոկոսով:


2011 թվականի հունվար-ապրիլ ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 368.02 դրամ, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինից 5.1 տոկոսով (2010-ին՝ 386.69): Նշված իրավիճակին նպաստել են նաև դեռևս նախորդ տարվա երկրորդ եռամսյակից սկսված դրամի ամրապնդման միտումը կապիտալի ներհոսքի աճը (հիմնականում տրանսֆերտների և գործոնային եկամուտների տեսքով), ինչպես նաև 2011 թվականի տարեսկզբից իրականացվող կոշտ դրամավարկային քաղաքականության հետևանքով ավելի բարձր տոկոսադրույքների հաստատման:

Կանխատեսում: Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում տեղի ունեցող դրական փոփոխությունները 2011 թվականին կշարունակվեն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի Հայաստանի հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությամբ, համաշխարհային տնտեսության վերականգնմամբ և կառավարության կողմից տնտեսության արտահանելի հատվածին ցուցաբերված օժանդակությամբ: 2011 թվականին ակնկալվում է ՀՆԱ-ի նկատմամբ առանց պաշտոնական տրանսֆերտների ընթացիկ հաշվի պակասուրդի 12.5 տոկոս մակարդակ, իսկ 2012-2014 թվականներին այն կկազմի միջինը 9.1 տոկոս (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները համապատասխանաբար՝ 11.1 և 8.9 տոկոս): Ընթացիկ հաշվի բարելավմանը էապես կնպաստի նաև կառավարության հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացումը՝ ի դեմս պետական հատվածի պակասուրդի աստիճանական կրճատման:

Աղյուսակ 8. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Ընթացիկ հաշիվ /ՀՆԱ	-1.8	-6.4	-11.8	-15.8	-13.9	-11.1	-10.2	-8.9	-7.5
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտ. տրանսֆերտ)/ ՀՆԱ	-3.1	-7.4	-12.5	-16.8	-14.7	-12.5	-10.6	-9.1	-7.6
Այդ թվում՝ եկամուտներ ուղղակի ներդրումներից/ ՀՆԱ	-3.8	-3.6	-2.4	-3.9	-3.9	-2.4	-2.4	-2.4	-2.4
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	7.0	7.6	7.9	8.5	6.1	6.2	6.3	6.1	5.8

Գծապատկեր 7. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, %



Պետական հատված

2006-2008 թվականներին պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են միջինում 20.4 տոկոսը՝ դրսևորելով շարունակական աճի միտումներ: 2009 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22 տոկոսը, պահպանվելով նախորդ տարվա նույն մակարդակի վրա, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 19.9 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 20.3 տոկոսի դիմաց:

2010 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.3 տոկոսը, նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.3 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 20 տոկոսը, նախորդ տարվա համեմատ բարելավվելով 0.1 տոկոսային կետով: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 13.1 տոկոս, իսկ հարկային եկամուտներինը՝ ներառյալ սոցիալական ապահովության վճարները՝ 11.9 տոկոս:


ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2010 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ դրսևորել է նվազման միտում՝ 2.3 տոկոսային կետի չափով և կազմել 27.3 տոկոս: ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2010 թվականին կազմել է ՀՆԱ-ի 5 տոկոսը, նախորդ տարվա 7.6 տոկոսի դիմաց:

2011 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 9 տոկոս, իսկ հարկային եկամուտների մասով (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները)՝ 10.5 տոկոս աճ:

« Կետական բյուջեի ծախսերը 2011 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 5.8 տոկոսով, իսկ կապիտալ ծախսերը՝ 8.3 տոկոսով:

2010 թվականին Կետական հատվածի քաղաքականության հիմնական ուղղությունը եղել է արդյունավետ պարտքի կառավարման և Կետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման ապահովումը: 2009 թվականին իրականացված հնարավորինս ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության դիմաց 2010 թվականին իրականացվել է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն:

Գծապատկեր 8. Հարկաբյուջետային ազդակը¹³ 2008-2014 թվականներին



Կանխատեսում: 2011 և հետագա տարիների համար, հաշվի առնելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի բարձր մակարդակը և Կետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման անհրաժեշտությունը, հարկաբյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված կլինի ամբողջական պահանջարկի վրա ազդեցության տեսանկյունից չեզոքության ապահովմանը, որի պայմաններում տնտեսությանը հնարավորություն կտրվի սահուն վերադառնալ հավասարակշռված մակարդակի: Միջնաժամկետ հատվածում վերոհիշյալ նպատակադրումների ապահովման նպատակով 2011 թվականի համար նախատեսվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները) 20 տոկոս և Կետական բյուջեի պակասուրդի 3.8 տոկոս ցուցանիշների ապահովում: Իսկ 2012-2014 թվականներն ընդգրկող հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները)

¹³ Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է:

տարեկան բարելավում 0.4 տոկոսային կետով՝ ժամանակահատվածի վերջում ապահովելով 21.3 տոկոս մակարդակ և 2013-2014 թվականներին պետական բյուջեի պակասուղի մակարդակի կայունացում 2.4 տոկոսի սահմաններում:

2.2 ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում

- Հայաստանը, համարվելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ արձագանքեց համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ համաշխարհային տնտեսական զարգացումներին համապատասխան (ԱՄՀ-ի Համաշխարհային Տնտեսական Հեռանկարներ պարբերականով Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում՝ Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպա, միջնաժամկետ հատվածում գրանցվելու է տնտեսությունների հետագա զարգացում) 2011 թվականին կշարունակվի տնտեսության գլոբալ աճը, և տնտեսական զարգացումները կպահպանվեն միջնաժամկետ հատվածում:
- Գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերի աստիճանական վերականգնումը, հետևաբար և եկամուտների աճը, կուղեկցվի դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների վերականգնմամբ, որն էլ մեր տնտեսությունում կբարձրացնի հասարակության գնողունակությունը և կընդլայնի պահանջարկը: Մյուս կողմից ակնկալվում է տրանսֆերտների աճի տեմպի որոշակի նվազում՝ հիմնականում պայմանավորված ընդունող երկրներում (հիմնականում՝ Ռուսաստան) սեզոնային աշխատանքների պայմանների խստացմամբ և զարգացած երկրներում տնտեսական աճի տեմպերի դեպի նվազում վերանայմամբ (հիմնականում՝ ԱՄՆ):
- Համաշխարհային շուկաներում ակնկալվում է, որ հումքային ապրանքների գները կշարունակեն ունենալ աճի միտումներ:
- Ներքին տնտեսությունում, կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ներքո տնտեսություն ներարկված մեծածավալ միջոցները և տնտեսական դաշտում տնտեսվարող սուբյեկտների գործունեության հեշտացմանն ու պարզեցմանն ուղղված բազմաթիվ հետճգնաժամային միջոցառումները լազավորված (որոշ ժամանակ հետո) դրական ազդեցություն կունենան տնտեսական դաշտի աշխուժացման վրա: Ակնկալվում է, որ 2012-2014 թվականներին տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:

- Արտաքին միջավայրով, մասնավորապես՝ Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության տեմպերով և ներքին պահանջարկի ցածր մակարդակով պայմանավորված արտահանումը կլինի առաջանցիկ ներմուծման նկատմամբ, որով էլ կպայմանավորվի 2012-2014 թվականների արտաքին առևտրի զարգացումները՝ բարելավելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը:
- Հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու առանց հարկային բեռի բարձրացման հարկային մուտքերի ավելացմանը (վարչարարության հաշվին), իսկ ծախսային մասով՝ նախորդ տարիների ծախսային գերակայությունների պահպանմանը:

Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են ուղղված լինել ինչպես տնտեսական աճի բարձրացմանը, այնպես էլ՝ անկմանը:

Միաժամանակ, Հայաստանը լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: Այդ կապակցությամբ հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես պայմանավորված կլինեն համաշխարհային տնտեսության մակրոտնտեսական փոփոխություններով:

ՀՆԱ-ի աճի ուղղությամբ նպաստող ռիսկեր.

Արտաքին միջավայր

- Եթե համաշխարհային տնտեսության վերականգնումը լինի ավելի արագ, քան կանխատեսումներում դրված ենթադրություններն են, ապա կանխատեսված աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, եթե Ռուսաստանի տնտեսությունը վերականգնվի ավելի արագ տեմպերով, քան ակնկալվում է:
- Միջազգային գների՝ ակնկալվածից ավելի արագ աճի դրսևորման պարագայում այն մեր երկրի ՀՆԱ-ի աճի՝ կանխատեսվածից ավելի բարձր ցուցանիշի գրանցմանը կնպաստի հիմնականում հետևյալ երկու ճանապարհներով. ուղղակի՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով (մետաղների գների աճի դեպքում) և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով (վառելիքի գների աճի դեպքում):

Ներքին միջավայր.

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարությունը իրականացնելու է տնտեսական բարեփոխումներ՝ հատկապես գործարար միջավայրի և հարկային

վարչարարության բարելավման ուղղությամբ, սակայն եթե կառավարության բարեփոխումների ազդեցությունը լինի ավելի արագ, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

ՀՆԱ-ի աճի կանխատեսումը նվազեցնող ռիսկեր

Արտաքին միջավայր

- Եթե իրականանա առաջարկի գործոններով պայմանավորված նավթի միջազգային գների աճի նախանշված միտումը¹⁴ և արդարացվի դրա հետ կապված միջազգային կառույցների գլոբալ տնտեսական աճի նվազման ուղղությամբ կանխատեսումների հնարավոր սցենարի զարգացման անհանգստությունը, ապա գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:
- Եթե Եվրոպական որոշ երկրներում ցածր տնտեսական աճի, բյուջետային դժվարությունների և ֆինանսական ճնշումների հետ կապված խնդիրները խորանան, այն կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության եվրոպական շուկաներում, ինչը կարող է նորից վարակի էֆեկտով անդրադառնալ այլ տարածաշրջանների շուկաների վրա, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի արտաքին պահանջարկի վրա:
- Միջազգային կառույցներում տնտեսագետներին անհանգստացնում են նաև համաշխարհային տնտեսության առկա խնդիրները՝ կապված գործազրկության բարձր մակարդակի հետ: Միջնաժամկետում, եթե գործազրկության բարձր մակարդակի հետագա նվազեցում տեղի չունենա, կապված վերոնշյալ ռիսկերի դրսևորման հետ, ապա վերականգնման համար անհրաժեշտ տնտեսական աճի տեմպի պակասը բացասաբար կանդրադառնա գլոբալ տնտեսության հետագա աշխուժացման վրա: Արդյունքում, գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:
- Արտաքին ցնցումներով պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների բարձր գնային միջավայրի պահպանումը կարող է խոչընդոտել տեղական արտադրության աճին՝ արտադրության բարձր ծախսերի առաջացման պատճառով: Բացի դրանից, բարձր գնաճային միջավայրը կարող է էականորեն կլանել սպառմանն ուղղված մասնավոր հատվածի դրամական եկամուտները, կրճատելով ներդրումային ծախսերը, ինչը բազմարկիչի արդյունք կունենա հետագա տնտեսական աճի դանդաղեցման ուղղությամբ:

Ներքին միջավայր.

¹⁴ ԱՄՀ-ի գնահատականներով հնարավոր է, որ նավթի միջազգային շուկան մուտք է գործել բարձր դեֆիցիտի փուլ:

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարության կողմից գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված միջոցառումները դրական ազդեցություն են ունենալու 2011 թվականի գյուղատնտեսության վերականգնման վրա, սակայն եթե բնակլիմայական անբարենպաստ պայմանների դրսևորումները շարունակական լինեն, ինչը կդանդաղեցնի կառավարության բարեփոխումները¹⁵, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի ցածր:

¹⁵ Սա հիմնականում աշխատում է այն տրամաբանությամբ, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում սոցիալական և տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար, կառավարությունը պարտադրված է լինելու ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում այլ ծրագրից միջոցները վերաուղղել վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում կարտամղվեն բարեփոխումների ծրագրերի համար հատկացված միջոցները:

Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	փաստ	փաստ	փաստ	փաստ	փաստ	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	2656	3149	3568	3142	3502	3870	4218	4573	4967
իրական ՀՆԱ ինդեքս	113.2	113.7	106.9	85.9	102.1	104.6	104.2	104.5	104.8
ՀՆԱ դեֆլյատոր	104.6	104.2	105.9	102.6	109.2	105.7	104.6	103.8	103.7
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	105.2	106.6	105.2	106.5	109.4	105.4	105	104.5	104
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ) %	5.2	6.6	5.2	6.5	9.4	5.4	5	4.5	4.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	2.9	4.4	9.0	3.4	8.2	8.2	5.6	4.3	3.9
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների՝									
ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2	4.5	4.8
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-6.9	10.5	4.4	7.7	6.7	6.9
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	6.0	-15.7	9.8	4.0	3.2	3.1
Շինարարություն	37.7	18.2	11.3	-41.6	3.0	1.8	3.2	4.0	4.7
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-3.3	4.5	3.8	3.5	4.5	4.6
Զուտ հարկեր	14.9	35.9	17.1	-22.5	9.2	3.9	4.0	4.1	5.1
ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը									
Վերջնական սպառում	9.0	12.3	4.5	-4.0	4.0	1.0	2.9	3.0	3.6
Մասնավոր	8.2	13.2	5.4	-4.4	3.7	2.0	3.5	3.5	3.5
Պետական	14.0	5.2	-1.9	-1.2	5.3	-4.9	-0.6	-0.4	5.4
Կապիտալի համախառն կուտակում	32.2	19.7	12.6	-30.9	2.9	-0.6	5.0	4.7	3.2
Մասնավոր	33.7	11.8	19.1	-37.4	8.3	2.8	4.8	4.0	4.8
Պետական	22.2	77.1	-16.9	11.5	-16.8	-16.7	6.2	9.0	-5.9
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-7.3	-3.5	-13.1	-10.4	21.7	9.0	7.9	6.5	5.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	3.8	13.0	7.3	-19.5	13.8	6.1	0.8	2.3	1.5
Արտաքին հատված									
Մլն. ԱՄՆ դոլար									
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1510.2	1776.7	1757.0	1338.4	1862.7	2160.3	2423.1	2663.9	2883.9
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-	-	-4747.6	-3687.8	-4245.5	-4491.1	-4708.6	-4963.4	-5191.3
Ապրանքների արտահանում	2536.4	3589.5	1112.0	748.9	1113.2	1335.9	1516.2	1675.4	1826.2
Ապրանքների ներմուծում	-1921.3	-	-3775.5	-2830.1	-3255.0	-3453.6	-3633.2	-3851.2	-4043.7
Ապրանքների արտահանման աճ, %	2.0	16.7	-7.1	-32.7	48.7	20.0	13.5	10.5	9.0
Ապրանքների ներմուծման աճ, %	20.6	45.6	35.0	-25.0	15.0	6.1	5.2	6.0	5.0
Ընթացիկ հաշիվ	-117.1	-589.3	-1381.8	-1369.5	-1300.1	-1070.1	-1028.9	-973.1	-893.0
Կապիտալի և ֆինանսական	520.6	1142.5	1147.0	1550.6	1110.3	953.8	962.2	915.1	937.3

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	փաստ	փաստ	փաստ	փաստ	փաստ	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
հաշիվ									
Արտաքին պարտք	1205.6	1448.9	1577.1	2966.7	3299.0	3754.6	4039.8	4158.4	4300.9
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս									
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-16.1	-19.7	-25.6	-27.5	-25.4	-24.1	-22.7	-21.1	-19.5
Ապրանքների և ծառայությունների արտահանում	23.7	19.3	15.1	15.7	19.9	22.3	24.1	24.5	24.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	39.7	39.0	40.7	43.0	45.3	46.4	46.9	45.6	43.9
Առևտրային հաշիվ	-14.0	-17.4	-22.8	-24.5	-22.9	-21.9	-21.1	-20.0	-18.7
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-1.8	-6.4	-11.8	-15.7	-13.9	-11.1	-10.2	-8.9	-7.5
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-3.1	-7.4	-12.5	-16.6	-14.7	-12.5	-10.6	-9.1	-7.6
Արտաքին պարտք	18.9	15.7	13.5	34.3	35.2	38.8	40.2	38.2	36.3
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	5.1	5.5	3.6	6.5	5.3	4.8	4.5	3.9	3.6
Դրամավարկային հատված*									
Փողի զանգվածի աճ % (M2X ժամ. վերջ)	32.9	42.5	2.3	15.1	11.8	12.6	10.5	9.5	9
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2X միջին)	6.2	5.3	5.2	4.0	4.0	4.0	3.9	3.8	3.8
Փողի բազմարկիչ (M2X)	1.8	1.7	1.6	1.6	1.6**	1.8	1.8	1.8	1.8
Դրամային զանգվածի աճ % (M2 ժամ. վերջ)	52.3	64.1	-4.2	-16.2	15.7	15.3	12.9	11.8	10.9
Դրամային զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2 միջին)	9.4	7.0	6.6	7.2	6.9	6.9	6.6	6.4	6.2
Դրամային բազմարկիչ (M2)	1.2	1.3	1.3	1.2	1.3	1.3	1.3	1.3	1.3
Փողի բազա, % (ժամ. վերջ)	41.1	50.9	5.3	13.8	-0.8	12.3	7.7	10.3	8.5

* Փողի զանգվածի և բազայի միջինները հաշվարկված են տարեկան տվյալների հիման վրա և այդ իսկ պատճառով կարող են տարբերվել ՀՀ ԿԲ-ի տվյալներից (ՀՀ ԿԲ-ը միջինները հաշվարկում է եռամսյակային տվյալների հիման վրա):

** Փողի բազմակիչը 2010 թվականին կազմել է 1.8:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2012–2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԺԾԾ առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղվածությունը և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու պահանջը, ինչպես և նախորդ տարիներին, պետական եկամուտների քաղաքականության հիմնական խնդիրն է, որի լուծումը հնարավորություն է ընձեռում կառավարությանը ի հաշիվ սեփական ռեսուրսների իրականացնել արդյունավետ, խթանող ծախսային քաղաքականություն: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը, քանի որ պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են հարկային եկամուտներն ու պետական տուրքերը:

2012-2014թթ պետական եկամուտների քաղաքականությունը կիրականացվի ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես.

- առաջիկա տարիներին հարկային եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացումը, հիմնականում ի հաշիվ հարկային (այդ թվում՝ մաքսային) վարչարարության բարելավման, կլինի հարկաբյուջետային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը, ինչի շնորհիվ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությունը կավելացվի տարեկան միջին հաշվով 0.3-0.4 տոկոսային կետով,

- պետական բյուջեի ծախսերն առավելապես ապահովված կլինեն ներքին ռեսուրսներով և կնվազի պետական ծախսերի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից,

- հարկային և մաքսային օրենսդրության կատարելագործումը, որը կհանգեցնի հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը, հարկային և մաքսային օրենսդրության պահանջների համահավասար և անվերապահ կիրառմանը,

- կառավարությունը հարկային եկամուտների ավելացման իր հիմնական նպատակին կհասնի հատկապես տնտեսության սովորային հատվածի կրճատման հաշվին՝ բացառելով տնտեսվարող սուբյեկտների հանդեպ օրենքի պահանջներով չպայմանավորված վարչարարական ճնշումները,

- կիրականացվեն միջոցառումներ կուտակված գերավճարների և ապառքների մարման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք կառնվեն միջոցառումներ նոր գերավճարների և ապառքների առաջացումը թույլ չտալու համար,

- հարկման հարաբերություններում կրնդլայնվեն ինքնագնահատման համակարգի կիրառման մոտեցումներն ի հաշիվ հարկ վճարողների շահերի պաշտպանության և նրանց սպասարկման որակի բարձրացման և այլն:

2012-2014թթ հարկային օրենսդրության հնարավոր փոփոխությունները, հարկային և մաքսային մարմինների կողմից 2012-2014թթ ստորև ներկայացվող՝ իրականացվելիք վարչարարական միջոցառումները միտված կլինեն այս և ՀՀ կառավարության 2008-2012թթ գործունեության ծրագրով ամրագրված՝ հարկային և մաքսային բնագավառներին առնչվող մյուս սկզբունքներն արտացոլող նպատակների հասանելիության, ինչպես նաև 2012-2014թթ համար սույն փաստաթղթով նախատեսված հարկային եկամուտների ծրագրային մակարդակի ապահովմանը:

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող միջոցառումների 2012-2014թթ ծրագիր

	Միջոցառում	Բովանդակություն
I	Հարկերի կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքի արմատավորում, հարկ վճարողների սպասարկման որակի բարելավում	<p>1. Հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի կատարելագործում, էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակի ավելացում,</p> <p>2. Հաշվետվական համակարգի կատարելագործում, այդ թվում՝ հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում, հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ձևավորում, ամբողջական կիրառում՝ նպատակ ունենալով բարձրացնել հարկ վճարողների կողմից հաշվետվությունների ներկայացման առումով հարկային կարգապահությունը,</p> <p>3. Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ամբողջական գործարկում, այդ թվում՝ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների համար միասնական ստանդարտների սահմանում, համապատասխան ուսումնական ծրագրերի իրականացում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվական ձեռնարկների հրապարակում, սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնում,</p> <p>4. Հարկ վճարողների հարցերին արագ արձագանքի և հետադարձ - կապի ապահովման նպատակով հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի ամբողջական գործարկում, մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում և կատարելագործում,</p> <p>5. Հարկ վճարողներին պարզաբանումների տրամադրման ընթացակարգի ամբողջական կիրառում,</p> <p>6. Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում անձնավորված հաշվառման համակարգի ներդրում:</p>
II	Հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացում	<p>1. Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կատարելագործում,</p> <p>2. Հարկային գերավճարների (ներառյալ ԱԱՀ-ի գծով) վերադարձի ավտոմատացված համակարգի ներդրում և կատարելագործում,</p> <p>3. Ստուգումների իրականացման ուղեցույցերի մշակում և հրապարակում՝ ոլորտային առանձնահատկություններից ելնելով,</p> <p>4. ՀՀ-ում պիտակավորման ենթակա ապրանքների պիտակավորման համակարգի ներդրում,</p> <p>5. Հարկային մարմնի վերլուծական կարողությունների կատարելագործում, այդ թվում՝ երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրման և կիրառման</p>

	Միջոցառում	Բովանդակություն
		<p>ընթացակարգերի հիման վրա,</p> <p>6. Հարկային մարմնում ստուգումների արդյունավետության մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրում,</p> <p>7. Ընթացիկ հարկերի և այլ պարտադիր վճարների մասով չկատարված հարկային պարտավորությունների աճի սահմանափակմանը, հարկերի և այլ պարտադիր վճարների գծով առկա ապառքների կրճատմանն ուղղված միջոցառումների մշակում, իրականացում,</p> <p>8. Չհիմնավորված հարկային վնասների կուտակման բացառմանն ուղղված անհրաժեշտ ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացում և համապատասխան միջոցառումների իրականացում:</p>
III	<p>ՀՀ ԿԱ ՊԵԿ կառավարման արդյունավետության բարձրացում</p>	<p>1. «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրում և նոր ենթահամակարգերով (մոդուլներով) համալրում, այդ թվում՝ կամերալ ուսումնասիրությունների համակարգի ներդրում,</p> <p>2. Մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ձևավորում, հարկային և մաքսային ծառայողների առաջխաղացման և խրախուսման համակարգի ներդրումը,</p> <p>3. ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի գործարկում՝ նպատակ ունենալով ապահովել հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործում,</p> <p>4. Հարկային և մաքսային մարմիններում վերլուծական կարողությունների ուժեղացում,</p> <p>5. Կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործում, այդ թվում՝ հարկային մարմնի ներքին աուդիտի նոր, ամբողջական համակարգի ներդրում և կատարելագործում, որը կնպաստի հարկային մարմնի ներքին կարգապահության բարձրացմանը, կայուն և հետևողական գործելակերպին,</p> <p>6. Հարկային մարմնի ՏՏ ենթակառուցվածքների կատարելագործում և տեղեկատվական հոսքերի որակի բարձրացում,</p> <p>7. Միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպման և ավտոմատացման ծրագրի նախագծում և իրականացում:</p>
IV	<p>Մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում</p>	<p>Ռիսկերի կառավարման հիման վրա մաքսային հսկողության և հետբացթողումային հսկողության իրականացում</p>
V	<p>ՀՀ մաքսային մարմիններում ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացում</p>	<p>Մաքսային ձևակերպումների նպատակով օգտագործվող «ԹԻ ՎԻ ԷՄ» ավտոմատ համակարգչային ծրագրում նոր մոդուլների ներդրում, մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> - մաքսային հայտարարագրերի էլեկտրոնային ձևով ներկայացում, - էլեկտրոնային ստորագրության համակարգի ներդրում և կիրառում, - պետական բյուջե գանձվող մաքսային վճարների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով բանկերից տեղեկատվության ստացում:

3.2. ՀՀ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2012-2014 թվականների պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 892.9 մլրդ դրամի, 979.8 մլրդ դրամի և 1,079.0 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների և պետական տուրքերի:

Աղյուսակ 3.1. 2012-2014 թվականների համար ծրագրված բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	2012թ	2013թ	2014թ
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	892.9	979.8	1079.0
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	21.17%	21.43%	21.72%
1. Հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	858.4	951.1	1055.7
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	20.35%	20.80%	21.25%
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	96.13%	97.07%	97.84%
1.1. Հարկային եկամուտներ և պետական տուրք	716.3	951.1	1055.7
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	16.98%	20.80%	21.25%
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	80.22%	97.07%	97.84%
1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	142.1	x	x
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	3.37%	x	x
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	15.91%	x	x
2. Պաշտոնական դրամաշնորհներ	13.5	8.8	4.2
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	0.32%	0.2%	0.08%
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	1.52%	0.90%	0.39%
3. Այլ եկամուտներ	21.0	19.9	19.1
<i>հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)</i>	0.50%	0.43%	0.38%
<i>տոկոսով ընդհանուրի նկատմամբ</i>	2.35%	2.03%	1.77%

ՀՀ 2012-2014 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս, մասնավորապես պարտադիր վճարների դեպքում, հաշվի է առնվել 2013թ հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որի 28-րդ հոդվածի համաձայն՝ օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվելու «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: Ըստ գնահատականների օրենսդրական այս փոփոխությունների ազդեցությունը բյուջետային եկամուտների վրա չեզոք է. նոր հարկատեսակից՝ եկամտային հարկից կապահովվեն եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերի հանրագումարին համարժեք ծավալով մուտքեր: Սա նշանակում է, որ չնայած պարտադիր վճարների կազմի փոփոխության, դրանց գծով պետական բյուջեի եկամուտների

ընդհանուր ծավալը չի փոխվի: Ուստի, 2013, 2014թթ համար հարկերից և պետական տուրքերից մուտքերը ծրագրվել են որպես այլ հավասար պայմաններում հարկերի և պետական տուրքերի, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերի համար նախորդ տարիներին կիրառված մոտեցումներին համապատասխան ծրագրված գումարների հանրագումար: Այս մեթոդաբանությանը համապատասխան սույն բաժնում ստորև ներկայացվող՝ 2012-2014թթ համար առանձին եկամտատեսակների ծրագրմանը վերաբերվող հատվածներում հարկերը և պետական տուրքերը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները դիտարկվել են որպես առանձին խումբ եկամուտներ:

« 2012-2014 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2012-2014 թվականների բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի տարեկան աճը 0.3-0.4% ապահովելու սկզբունքի հիման վրա:

Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկերի գծով 2011 թվականի համար ծրագրված հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ծրագրային մակարդակը իրատեսական է և առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները բավարար հիմքեր կստեղծեն այն ոչ միայն ապահովելու, այլև՝ գերակատարելու համար:

2012-2014 թվականների հարկերի հավաքագրման առաջարկվող մակարդակների իրատեսական լինելը գնահատելու համար հարկ է դիտարկվել այն բնութագրող մի քանի ցուցանիշներ:

Աղյուսակ 3.2. « 2010-2014 թվականների հարկերին առնչվող առանձին ցուցանիշներ

Ցուցանիշներ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ
	փաստացի ¹⁶	կանխատեսում			
Հարկեր (մլրդ դրամ)	591.1	650.0	716.3	794.6	880.1
աճը նախորդ տարվա նկատմամբ (%-ով)	x	10.0	10.2	10.9	10.8
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	x	16.8	17.0	17.4	17.7
Հարկային սահունության գործակից	x	x	1.14	1.30	1.25

2012-2014 թվականներին հարկային սահունության գործակիցը կգերազանցի 1-ը, ինչը ենթադրում է հարկային և մաքսային մարմինների կողմից վարչարարական միջոցառումների իրականացման անհրաժեշտություն՝ հարկերի ծրագրային մակարդակն ապահովելու համար: Այս առումով նշված տարիների հարկերի գծով ծրագրված ցուցանիշները կատարման առումով պարունակում են

¹⁶ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2010 թվականի փաստացի ցուցանիշների կազմում ներառված չեն « 2010 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված, ինչպես նաև « պետական կառավարման մարմինների 2010 թվականի արտաբյուջետային հաշիվների հարկերի գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

որոշակի ռիսկ: Մյուս կողմից 2012-2014 թվականների հարկերի ծրագրային մակարդակի ապահովման որոշակի ռեզերվներ է պարունակում տնտեսության զարգացման կանխատեսվող սցենարը: 2006-2014 թվականների մակրոտնտեսական ցուցանիշների փաստացի և կանխատեսումային մեծությունների համեմատությունից կարելի է եզրակացնել, որ միջնաժամկետ հեռանկարում կանխատեսված մակրոտնտեսական շրջանակը ռիսկային չէ և ծրագրայինի նկատմամբ փաստացի բարենպաստ արդյունքներ արձանագրելու դեպքում հնարավոր է ակնկալել լրացուցիչ հարկային եկամուտներ:

Աղյուսակ 3.3. Մակրոտնտեսական ցուցանիշների 2006-2014թթ փաստացի և կանխատեսումային մեծությունները

Ցուցանիշը	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	փաստ					կանխատեսում			
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2,656.2	3,149.3	3,568.2	3,142.0	3,501.6	3,870.4	4,217.6	4,572.9	4967.5
ՀՆԱ-ի իրական աճ	13.2%	13.7%	6.9%	-14.1%	2.1%	4.6%	4.2%	4.5%	4.80%
ՀՆԱ-ի դեֆլյատոր	4.6%	4.2%	5.9%	2.6%	9.2%	5.7%	4.6%	3.8%	3.70%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով	416.0	342.08	305.97	363.3	373.66	357.98	369.93	369.93	369.93
1 եվրոյի միջին տարեկան փոխարժեքը դրամով	521.2	467.81	450.24	507.4	496.03	499.99	524.01	524.01	524.01

Պարտադիր սոցիալական ապահովության վճարները 2012-2014թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 142.1 մլրդ դրամ, 156.5 մլրդ դրամ, 175.6 մլրդ դրամ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012-2014 թվականների բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հիմք ընդունելով ՀՆԱ-ի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների հարաբերության ցուցանիշի տարեկան աճը մոտ 0.1 տոկոսային կետի չափով ապահովելու մոտեցման կիրառմամբ:

Ինչպես հարկերի և պետական տուրքերի դեպքում, պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012-2014թթ մուտքերի կանխատեսումներում լրացուցիչ ենթադրվել է, որ 2011 թվականի համար ծրագրված պարտադիր սոցիալական ապահովության վճար/ՀՆԱ ցուցանիշի ծրագրային մակարդակը իրատեսական է և առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները բավարար հիմքեր կստեղծեն այն ոչ միայն ապահովելու, այլև՝ գերակատարելու համար:

Աղյուսակ 3.4. Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2011-2014թթ ծրագրային/կանխատեսումային ցուցանիշները

Ցուցանիշները	2011	2012թ	2013թ	2014թ
	ծրագիր	կանխատեսում		
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (մլրդ դրամ)	123.4	142.1	156.5	175.6
Տոկոսով ՀՆԱ-ի նկատմամբ	3.19%	3.37%	3.42%	3.53%

Աղյուսակը քննարկելիս հարկ է հաշվի առնել պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կատարված կանխատեսումներում կիրառված՝ վերը նշված մոտեցումը, պայմանավորված 2013 թվականի հունավրի 1-ից ուժի մեջ մտնող օրենսդրական փոփոխություններից և բյուջետային եկամուտների վրա դրանց չեզոք ազդեցությունից: 2013, 2014թթ համար այս եկամտատեսակի գծով 3.4 աղյուսակի ծրագրային ցուցանիշները ներառված են 3.1 աղյուսակի 1.1 տողում այդ տարիների համար բերված հարկերի և պետական տուրքերի կազմում:

Պաշտոնական դրամաշնորհները 2011-2014թթ համար ծրագրվել են՝ հաշվի առնելով դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները:

Աղյուսակ 3.5. 2011-2014թթ ծրագրված պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)

Դոնորը	2011թ	2012թ	2013թ	2014թ
	ծրագիր	<i>կանխադեսում</i>		
Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ, որից՝	56.0	13.5	8.8	4.2
ԵՄ (Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր)	8.5	9.4	6.8	3.7
ԵՄ («Մակրոֆինանսական աջակցություն» դրամաշնորհ)	17.5			
«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամից դրամաշնորհ	20.6			
Դրամաշնորհներ այլ աղբյուրներից	9.4	4.1	2.0	0.5

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի և պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), բռնագրավված, տիրազուրկ, նվիրատվության կամ ժառանգության իրավունքով պետությանն անցած հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի իրացումից մուտքերը, իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտները 2012-2014թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 21.0 մլրդ դրամի, 19.9 մլրդ դրամի և 19.1 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2012 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված հավաքագրման միտումները:

Այլ եկամուտների ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 3.6. Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2012-2014թթ ՄԺԾՑ շրջանակներում կատարված կանխատեսումները (մլրդ դրամներով)

Ցուցանիշը	2012	2013	2014
Այլ եկամուտներ՝ ընդամենը	21.0	19.9	19.1
այդ թվում՝			
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	0.8	0.7	0.7
Տոկոսավճարներ և շահաբաժիններ	2.1	1.8	1.6
Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարներ (տոկոսներ)	5.1	4.4	3.6
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	2.6	2.6	2.7
Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ մուտքեր	10.4	10.4	10.5
որից՝			
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճար	3,9	3,8	3,9
Ռադիոհաճախականության օգտագործման վճար	4.6	4.6	4.6

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար ներգրավվող միջոցների գերակշիռ մասը կազմելու են փոխառու միջոցները, ընդ որում՝ արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների հիմնական մասը կունենա նպատակային բնույթ և կուղղվի սոցիալական ոլորտներում և հասարակական ենթակառուցվածքներում ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը:

Ստորև ներկայացվում է ՀՀ 2011-2014 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տե՛ս Աղյուսակ 4.1):


Աղյուսակ 4.1. ՀՀ 2011-2014 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014
	հաստատված	ծրագիր		
Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ՝ ընդամենը	148,614.0	132,539.0	108,000.0	118,000.0
այդ թվում՝				
1. Ներքին աղբյուրներ	82,193.9	72,013.7	61,940.6	69,653.5
որից՝				
Փոխառու միջոցներ	28,375.9	28,504.9	28,518.3	35,520.3
Ֆինանսական ակտիվներ	53,818.0	43,508.8	33,422.3	34,133.2
2. Արտաքին աղբյուրներ	66,420.1	60,525.3	46,059.4	48,346.5
որից՝				
Փոխառու միջոցներ	102,431.7	96,961.5	84,447.8	90,535.2
Ֆինանսական ակտիվներ	(36,011.6)	(36,436.2)	(38,388.4)	(42,188.7)

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2011 թվականի համար ծրագրավորված 3.9 %-ի դիմաց 2012-2014 թվականին աստիճանաբար կնվազի ՀՆԱ-ի 3.1 % -ից մինչև 2.4 %, ընդ որում պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշիռը դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների ընդհանուր ծավալում 2012-2014 թվականներին կտատանվի 54.3 %-ից 59.0 % միջակայքում՝ 2011 թվականի ծրագրային 55.3 %-ի դիմաց:

ՀՀ պետական բյուջեին բնորոշ առանձնահատկություններից մեկը դա նրա որոշակի կախվածությունն է արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից), որը կպահպանվի նաև առաջիկա տարիներին (տե՛ս Գծանկար 4.1):

Գծանկար 4.1 ՀՀ 2011-2014թթ. պետական բյուջեների ֆինանսավորումը արտաքին աղբյուրների հաշվին



Տարբեր մեթոդներով հաշվարկված դեֆիցիտների համեմատական վերլուծությունները նույնպես հաստատում են այդ փաստը (տե՛ս Աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. Ընդհանուր, ընթացիկ և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2011-2014 թթ

Ցուցանիշներ	2011 հաստատված պետական բյուջե	2012 ծրագիր	2013 ծրագիր	2014 ծրագիր
Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	3.9%	3.1%	2.4%	2.4%
Ընթացիկ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ընթացիկ ծախսերի տարբերությունը	-0.4%	-1.1%	-2.0%	-1.5%
Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների (առանց դրամաշնորհների) և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	4.3%	2.4%	1.5%	1.4%

Քանի որ պետական բյուջեի դեֆիցիտի զգալի մասը ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշվին, ապա դրա մեծությունը և կառուցվածքը էապես առնչվում է պետական ներքին և արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշների հետ:

Պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում առկա ռիսկը.

Անկախ 2012-2014թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների առկայության հանգամանքից պետական բյուջեի դեֆիցիտի մեծության վրա կարող է

բացասական ազդեցություն ունենալ 2011-2013թթ ժամանակահատվածում փաստացի ձևավորված պետական պարտք/ անվանական ՀՆԱ հարաբերության մեծությունը: Խոսքը գնում է մակրոկանխատեսումներում պարունակված ռիսկերով պայմանավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծության 2012-2014թթ ժամանակահատվածում 50% սահմանաչափը անցնելու ռիսկի մասին, որի առկայությամբ գործողության մեջ է դրվում «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ այն է.

«Եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3%-ը:»:

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2012-2014 ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ 2011-2014 թվականների պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2011 թվականի մակարդակի համեմատ, 2012 թվականի անվանական ՀՆԱ-ի շուրջ 12.1 % աճի պայմաններում, ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մուտքերի ծավալը ծրագրավորվում է շուրջ 2.4 % կամ 24.0 մլրդ դրամ ավելացումով (հիմնականում հարկային եկամուտների հավելածի հաշվին): Միաժամանակ 2012 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 6.1 % աճ է կանխատեսվում 2013 թվականին (անվանական ՀՆԱ-ի 8.4 % կանխատեսվող աճի պայմաններում) և 2013 թվականի մակարդակի համեմատ՝ 2014 թվականին՝ 10.0 %-ով (անվանական ՀՆԱ-ի 8.6 % կանխատեսվող աճի պայմաններում):

Աղյուսակ 4.3. Բյուջետային ռեսուրսների փաթեթում 2012-2014թթ կանխատեսվող փոփոխությունները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014թ. ծրագիր
1. Եկամուտներ	892,896.4	979,754.4	1,078,976.0
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	21.17	21.43	21.7
2. Դեֆիցիտի ֆինանսավորման զուտ աղբյուրներ	132,539.0	108,000.0	118,000.0
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.1	2.4	2.4
ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	1,025,435.4	1,087,754.4	1,196,976.0
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.3	23.8	24.1
3. ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՎԵԼԱԾ (նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ մլն դրամ)	23,999.2	62,319.0	109,221.6
նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ %	2.4	6.1	10.0
4. Ոլորտային կտրվածքով նախորդ տարվա մակարդակի նկատմամբ ազատված զուտ միջոցներ (մլն դրամ)	59,990.9	28,765.0	34,132.9
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (նախորդ տարվա ռեսուրսների մակարդակի նկատմամբ՝ մլն դրամ)	83,990.1	91,084.0	143,354.5

Ցուցանիշներ	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014թ. ծրագիր
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.0	2.0	2.9
Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2012-2014 թթ՝ ըստ ոլորտների (մլն դրամ)	83,990.1	91,084.0	143,354.5
այդ թվում՝			
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	7,687.0	29,808.6	85,257.0
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգեր	4,902.9	14,626.9	13,927.7
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	14,485.6	11,129.4	0.0
4. Պետական կառավարում	2,955.5	-	5,772.40
5. Պետական պարտքի սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	4,088.5	1,157.5	2,899.2
6. Այլ ոլորտներ	49,870.6	34,361.6	35,498.2

Ինչպես երևում է աղյուսակից՝ 2012-2014 թվականներին, նախորդ տարվա համեմատ ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը՝ 148.4 մլրդ դրամը կամ ընդհանուրի 46.59%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 38.55 %-ը, որը վկայում է այն մասին, որ 2012-2014 թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 8.16 %-ը կտրամադրվի կրթության բնագավառին, շուրջ 82.52 %-ը՝ սոցիալական պաշտպանության բնագավառին և 6.74 %-ը՝ առողջապահությանը:

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության համակարգերի պահպանման և փրկարար ծառայության համակարգի ծախսերին կուղղվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի շուրջ 10.51 %-ը, որը պայմանավորված է վերոհիշյալ համակարգի մարմինների կենսագործունեության ապահովման համար համապատասխան միջոցների հատկացման անհրաժեշտությամբ:

Տնտեսության ճյուղերին 2012-2014 թվականներին կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 8.04%-ը: Բացի այդ ՀՀ 2012-2014թթ. ՄԺԾԾ ծրագրով ներառված են շուրջ 226.0 մլրդ դրամի չբաշխված նպատակային վարկային ծրագրեր, որոնք վարկատու կազմակերպությունների հետ համապատասխան վարկային պայմանագրերի կնքմամբ հետագայում կուղղվեն համապատասխան ոլորտներ:

Պետական պարտքի սպասարկմանը (տոկոսավճարների) նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 2.56 %-ը:

4.3 2012-2014 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

« 2012-2014 թվականների պետական բյուջեների ծախսերի կանխատեսումները՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով¹⁷ :

Աղյուսակ 4.4. « 2011-2014 թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011 թ. հաստատված պետական բյուջե	2012 թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014թ. ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,001,436.2	1,025,435.4	1,087,754.4	1,196,976.0
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	465,482.6	468,161.1	488,786.3	574,043.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12.37%	11.10%	10.69%	11.56%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	46.48%	45.65%	44.94%	47.96%
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	192,313.1	197,216.0	211,843.0	225,770.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.11%	4.68%	4.63%	4.54%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	19.20%	19.23%	19.48%	18.86%
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	153,195.4	112,698.6	115,018.3	80,885.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.07%	2.67%	2.52%	1.63%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	15.30%	10.99%	10.57%	6.76%
4. Պետական կառավարում	62,010.8	64,966.3	63,140.1	68,912.5
- տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	1.65%	1.54%	1.38%	1.39%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.19%	6.34%	5.80%	5.76%
5. Պետական պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)	42,593.7	46,682.1	47,839.7	50,738.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.13%	1.11%	1.05%	1.02%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.25%	4.55%	4.40%	4.24%
6. Այլ ոլորտներ	85,840.7	135,711.3	161,127.0	196,625.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.28%	3.22%	3.52%	3.96%
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.57%	13.23%	14.81%	16.43%

¹⁷ Այսուհետև սույն գլխում «Սոցիալ-մշակութային ճյուղեր», «Տնտեսության ճյուղեր» և «Այլ ոլորտներ» խմբերը ներկայացվում են առանց պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների ապարատների պահպանման ծախսերի, որոնք միավորված են «Պետական կառավարում» խմբում

Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության խմբում 2012-2014 թվականներին ևս կարևորվելու է հատկապես կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 4.5. Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության ոլորտի 2011-2014 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011 թ. հաստատված պետական բյուջե	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014 թ. ծրագիր
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	465,482.6	468,161.1	488,786.3	574,043.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12.37	11.10	10.69	11.56
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	46.48	45.65	44.94	47.96
այդ թվում՝				
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	108,817.6	107,570.2	111,871.8	117,588.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.89	2.55	2.45	2.37
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	10.87	10.49	10.28	9.82
2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	268,433.2	265,813.8	289,756.0	367,110.4
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.13	6.30	6.34	7.39
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	26.80	25.92	26.64	30.67
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	61,416.3	68,655.5	59,472.2	60,507.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.63	1.63	1.30	1.22
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.13	6.70	5.47	5.06
4. ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ	17,382.4	16,240.8	16,844.3	16,897.4
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.46	0.39	0.37	0.34
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.74	1.58	1.55	1.41
5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	9,433.1	9,880.8	10,841.9	11,939.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.25	0.23	0.24	0.24
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.94	0.96	1.00	1.00

2012-2014 թվականների ժամանակահատվածում կրթության ոլորտում՝ համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական: Հանրակրթության ոլորտում ծրագրային ժամանակահատվածում կշարունակվեն բարեփոխումները, որոնք նպատակ են հետապնդում լրիվ միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ լրիվ միջնակարգ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր, հատկապես՝ ավագ դպրոցի մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Առողջապահության բնագավառում 2012-2014 թվականներին բյուջետային միջոցները կնպատակաուղղվեն առաջնային բուժօգնության ամրապնդման և զարգացման ծրագրերին:

Սոցիալական պաշտպանության բնագավառում առաջիկա տարիներին շեշտը կդրվի ընտանեկան նպաստների համակարգի կատարելագործման, սոցիալական ապահովության ծրագրերի իրականացման, ինչպես նաև կենսաթոշակների բարձրացման վրա: 2014թ. նախատեսվում է ներդնել «Կենսաթոշակային ապահովություն (պարտադիր կուտակային համակարգ)» ծրագիրը, որի

ծախսը կազմում է շուրջ 18,6 մլրդ դրամ: Սույն ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից զատ կենսաթոշակային եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված կենսաթոշակային վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը: Կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց հնարավորություն կընձեռնվի ազդել կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը:

Տնտեսության ճյուղերի 2012-2014 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Աղյուսակ 4.6. Տնտեսության ճյուղերի 2011-2014 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011թ. հաստատված պետական բյուջե	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014 թ. ծրագիր
1. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	153,195.4	112,698.6	115,018.3	80,885.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.07	2.67	2.52	1.63
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	15.30	10.99	10.57	6.76
այդ թվում՝				
1. Բնապահպանություն, էներգետիկա և բնական պաշարներ	10,120.8	22,154.3	20,190.1	17,910.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.27	0.53	0.44	0.36
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.01	2.16	1.86	1.50
2. Գյուղատնտեսություն	25,162.3	8,778.2	9,141.9	7,988.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.67	0.21	0.20	0.16
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.51	0.86	0.84	0.67
3. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	50,959.2	40,704.0	51,469.7	30,853.4
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.35	0.97	1.13	0.62
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	5.09	3.97	4.73	2.58
4. Բնակարանային-կոմունալ տնտեսություն	30,906.1	9,513.8	5,664.1	3,933.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.82	0.23	0.12	0.08
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.09	0.93	0.52	0.33
5. Զրային տնտեսություն	29,076.0	22,125.3	19,522.2	12,898.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.77	0.52	0.43	0.26
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.90	2.16	1.79	1.08
6. Տնտեսության այլ ճյուղեր	6,970.9	9,422.9	9,030.3	7,301.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.19	0.22	0.20	0.15
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.70	0.92	0.83	0.61

Պետության կողմից հատկապես կկարևորվեն գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի, ճանապարհային, ջրային և բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացմանն ուղղված

ծախսերը, որոնց զգալի մասը նախատեսվում է իրականացնել արտաքին ֆինանսական աջակցությամբ (տնտեսության ֆինանսավորման գծով ծրագրով նախատեսված են մոտ 226.0 մլրդ դրամի չբաշխված նպատակային վարկային ծրագրեր, որոնք վարկատու կազմակերպությունների հետ համապատասխան վարկային պայմանագրերի կնքմամբ հետագայում կուղղվեն համապատասխան ոլորտներ):

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգերի պահպանման ծախսերի աճը պայմանավորված է լինելու նշված կառույցների կենսագործունեության ապահովման համար բավարար պայմանների ստեղծման և դրա շնորհիվ այդ կառույցների պատրաստականության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ:

Պետական կառավարման բնագավառում ծախսերը, 2011 թվականի համեմատությամբ, 2012-2014 թվականներին կունենան որոշակի աճ՝ պայմանավորված պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովման անհրաժեշտությամբ:

Այլ ոլորտներ խմբի համար 2012-2014 թվականներին նախատեսվող ծախսերի գերակշիռ մասը բաժին կընկնի պետական պարտքի սպասարկման և վերը չնշված այլ բնագավառներին:

Աղյուսակ 4.7. Այլ ոլորտների 2011-2014 թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2011 թ. հաստատված պետական բյուջե	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014թ. ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ	128,434.3	182,393.4	208,966.7	247,364.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.41	4.32	4.57	4.98
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%) այդ թվում՝	12.83	17.79	19.21	20.67
1. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ (տոկոսավճարներ)	42,593.7	46,682.1	47,839.7	50,738.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.13	1.11	1.05	1.02
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.25	4.55	4.40	4.24
2. Այլ	85,840.7	135,711.3	161,127.0	196,625.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.28	3.22	3.52	3.96
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.57	13.23	14.81	16.43

Ինչպես արդեն նշվեց, 2011-2014թթ ժամանակահատվածում ևս պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալն որոշ կախվածության մեջ կլինի արտաքին հոսքերից:

Աղյուսակ 4.8. Արտաքին աղբյուրներից 2011-2014 թթ ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհների) հաշվին ֆինանսավորվող ծախսերը

Ցուցանիշներ	2011 թ. հաստատված պետական բյուջե	2012թ. ծրագիր	2013 թ. ծրագիր	2014թ. ծրագիր
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլրդ դրամ)	168,674.0	136,871.9	157,463.7	147,422.7

Ցուցանիշներ	2011 թ. հաստատված պետական բյուջե	2012թ. ծրագիր	2013 թ. ծրագիր	2014թ. ծրագիր
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.48	3.25	3.44	2.97
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	16.84	13.35	14.48	12.32

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին կանխատեսվող 2012-2014 թվականների ծախսերի միջին տարեկան տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 13.3% և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 3.2%:

4.4 ՀՀ 2012-2014 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՎՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Դիտարկվող 2011-2014 թվականների ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 22.3 %-ից 20.2 %-ի միջակայքում: Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի համապատասխանաբար 4.31 % - ից 3.91 % միջակայքում, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը՝ 0.21-0.19 միջակայքում:

Աղյուսակ 4.9. 2011-2014 թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները

Ցուցանիշներ	2011 թ. հաստատված պետական բյուջե	2012թ. ծրագիր	2013թ. ծրագիր	2014թ. ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ)	1,001,436.2	1,025,435.4	1,087,754.4	1,196,976.0
այդ թվում՝				
- ընթացիկ ծախսեր, (մլն դրամ)	839,308.9	846,082.3	886,212.3	1,002,549.1
- %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	22.3	20.1	19.4	20.2
- ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսեր, (մլն դրամ)	162,127.3	179,353.2	201,542.1	194,426.9
- %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	4.31	4.25	4.41	3.91
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի և ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը	0.19	0.21	0.23	0.19

2012-2014 թվականների ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 82.6 %-ը կկազմեն ընթացիկ ծախսերը (2011 թվականին այդ ցուցանիշը ծրագրվել է 83.8 %):

Դիտարկվող ժամանակահատվածում **ընթացիկ ծախսերի** մեծ մասի կատարումը ուղղված կլինի պետական կարիքների համար ապրանքների և ծառայությունների գնումներին, բնակչությանը տարբեր տեսակի նպաստների և կենսաթոշակների վճարմանը, ՀՀ պետական ներքին և արտաքին

պարտքի սպասարկմանը (տոկոսավճար), տնտեսության որոշ ճյուղերում բնակչությանը ջրամատակարարման, ոռոգման և փոխադրումների բնագավառում ծառայություններ մատուցող առանձին ընկերությունների սուբսիդավորմանը, պետական ավտոճանապարհների պահպանությանը և շահագործմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության տրամադրմանը և պետական կառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը:

2012-2014 թվականների ընթացքում կանխատեսվող 575.3 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ընդհանուր ծավալի 31.8 %-ը (182.7 մլրդ դրամ) նախատեսվում է ֆինանսավորվել ներքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները լինելու են ճանապարհային, տրանսպորտային, ջրային տնտեսության, գյուղատնտեսության և բնակչինարարության, գյուղատնտեսության, առողջապահության ու դպրոցաշինության ոլորտները:

4.5 ՀՀ 2012-2014 ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

ՀՀ 2012-2014 ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ իրատեսության տեսանկյունից հարկ է առանձնացնել այն գործոնները, որոնք կարող են ազդել հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարի: Այդ գործոնները կազմում առավել կարևորվում են նրանք, որոնք կարող են հանգեցնել ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ կատարելու անհրաժեշտության: Այդ իմաստով ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր:

Ռիսկերի աղբյուրները

ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից շեղումների.

- (i) ներքին ռեսուրսների գծով,
- (ii) արտաքին օժանդակության գծով:

Ներքին ռեսուրսների մասով. 2012-2014թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի հիմնականում համալրվելու է հարկային եկամուտների և պետական տուրքերի (2012 թվականին՝ նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների) հաշվին, որոնց գծով ծրագրային մուտքերը 2012-2014թթ կկազմեն ընդհանուր մուտքերի միջինում 97.02%-ը: Նշված եկամտատեսակների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխա-

տեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ դրանց հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր ունի նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները:

Մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանություն. Մակրոտնտեսական շրջանակում կատարված կանխատեսումների մասով առկա ռիսկերի մասին նշվել է սույն փաստաթղթի 2-րդ գլխի համապատասխան մասում:

Վարչարարական միջոցառումների իրականացում. 2012-2014թթ, երբ բյուջետային միջոցների սղությունը դեռևս լուծում պահանջող խնդիրներից մեկն է լինելու, առաջադրելով հարկային եկամուտների և պետական տուրքերի հնարավոր հասանելի մակարդակի ապահովում, ՀՀ կառավարությունը սկզբունքայնորեն շարունակելու է իրականացնել իր կողմից որդեգրված՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականությունը, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս դեպքում տնտեսության ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է:

Արտաքին գործոնների ազդեցություններ. Ռիսկը հնարավոր է արտաքին գործոնների (արտաքին տնտեսական շուկաներում, ինչպես նաև ՀՀ արտաքին սահմաններում իրավիճակի սրում) ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և այն գնահատել հնարավոր չէ:

Արտաքին օժանդակության մասով 2012-2014թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ վարկերի հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհների մասով. Այդ միջոցների հատկացման հարցը կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու ՀՀ կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների բնագավառում որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով:

Վարկերի մասով ռիսկերը հիմնականում պայմանավորված են ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը ենթադրում է ծախսերի վերանայում կրճատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական եկա-

մուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, այս դեպքում ծախսերի վերանայումն իրականացվելու է՝ հիմք ընդունելով դրանց գերակայությունները. առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված ծախսերը, որոնք կրճատման պահին կունենան գերակայության ավելի ցածր աստիճան (հաշվի առնելով նաև ծախսերի կրճատման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների առաջացումը):

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը:

Աղյուսակ 4.10. Արտաքին օժանդակությունը՝ ըստ նշանակության (մլն դրամ)

Ցուցանիշներ	2012	2013	2014
Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	9,432.18	6,812.13	3,668.07
Պաշտոնական դրամաշնորհներ	9,432.18	6,812.13	3,668.07
Վարկեր	0	0	0
Ծրագրային (նպատակային) օժանդակություն	127,439.76	150,651.57	143,754.60
Պաշտոնական դրամաշնորհներ	4,105.22	1,982.42	524.01
Վարկեր	123,334.54	148,669.15	143,230.59
Ընդամենը արտաքին օժանդակություն	136,871.94	157,463.70	147,422.67

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը որպես կանոն հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին, թեև առանձին դեպքերում հնարավոր է այդ ծրագրերի գծով արտաքին աղբյուրներից ստացվող միջոցների փոխարինումը ներքին ռեսուրսներով:

Փոխհատուցման հնարավորությունները

2012-2014թթ ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի վրա դրական հետևանքներ կարելի է ակնկալել բարենպաստ մակրոտնտեսական զարգացումներից, որոնք կարող են որոշ չափով փոխհատուցել արտաքին օժանդակության գծով հնարավոր «կորուստները»: Նախատեսվածի դիմաց մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ հարկային եկամուտների և պետական տուրքերի հավաքագրման համար: Այս դեպքում ՀՀ կառավարությունը քննարկման առարկա կդարձնի լրացուցիչ եկամուտների՝ ըստ ծախսային գերակայությունների ծախսերի ավելացմանը և (կամ) պետական բյուջեի դեֆիցիտի չափը կրճատելուն ուղղելու հարցը:

ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2012-2014 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են 2011-2014 թթ ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ ոլորտների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (ՀՀ կառավարության ծրագիր, Կայուն զարգացման ծրագիր, տարբեր ոլորտներում ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել էր ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Աղյուսակ 5.1. ՀՀ պետական բյուջեի ծախսերի փաթեթում 2012-2014 թթ կանխատեսվող փոփոխությունները նախորդ տարվա համեմատությամբ՝ ըստ խոշորացված ոլորտների (մլն դրամ)

Ցուցանիշներ	2012	2013	2014
Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2012-2014 թթ՝ ըստ ոլորտների (մլն դրամ)	83,990.1	91,084.0	143,354.5
այդ թվում՝			
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	7,687.0	29,808.6	85,257.0
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգեր	4,902.9	14,626.9	13,927.7
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի	14,485.6	11,129.4	0.0

պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ			
4. Պետական կառավարում	2,955.5	-	5,772.40
5. Պետական պարտքի սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	4,088.5	1,157.5	2,899.2
6. Այլ ոլորտներ	49,870.6	34,361.6	35,498.2

Ինչպես երևում է աղյուսակից՝ 2012-2014 թվականներին, նախորդ տարվա համեմատ, ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը՝ 148.4 մլրդ դրամը կամ ընդհանուրի 46.59%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 38.55 %-ը, որը վկայում է այն մասին, որ 2012-2014 թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 8.16 %-ը կտրամադրվի կրթության բնագավառին, շուրջ 82.52 %-ը՝ սոցիալական պաշտպանության բնագավառին և 6.74 %-ը՝ առողջապահությանը:

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջին տարիներին իրականացնում է պետական կառավարման համակարգի բարեփոխումների լայնածավալ ծրագիր՝ համակարգի արդյունավետության, ծառայությունների որակի և մատչելիության, թափանցիկության և հաշվետվելիության, վերահսկելիության բարձրացման ուղղությունների ընդգրկմամբ, որն իրականացվում է հիմնականում պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառույթային փոփոխությունների և քաղաքացիական ծառայության ներդրման ճանապարհով:

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառույթային բարեփոխումներ

Պետական կառավարման համակարգի բնագավառում իրականացվող բարեփոխումների շնորհիվ վերջին տարիներին ձեռք բերվեցին որոշակի արդյունքներ, որոնք ապահովեցին նշանակալից առաջընթաց, հատկապես պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացներում և քաղաքացիական (պետական, դատական) ծառայության ներդրման բնագավառում: Նշվածի համար հիմք հանդիսացան «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները և այլ իրավական ակտերը: Նախարարությունները ներկայումս իրականացնում են իրենց բնագավառի քաղաքականության ձևավորման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները, իսկ ծառայությունների մատուցման, կանոնակարգման և վերահսկողական ու տեսչական գործառույթների իրականացման իրավասությունները հիմնականում փոխանցվեցին նախարարություններում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով ստեղծված գործակալություններին և տեսչություններին: Նշված փոփոխությունները հանգեցրին կրկնվող գործառույթների որոշակի հատվածի վերացմանը:

Բացի այդ, առանձին մարմիններ վերակազմակերպվեցին պետական ոչ առևտրային կազմակերպությունների, որի հետևանքով կառավարչական գործառույթներ իրականացնող մարմինները տարանջատվեցին պետական գործառույթներ իրականացնող մարմիններից:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքում հստակեցվել են նախարարությունների կանոնադրական խնդիրները և միասնականացվել նրանց աշխատակազմերի կառուցվածքները՝ ձևավորվեցին վարչություններ, քարտուղարություններ և բաժիններ:

ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը՝ նախարարություններին

վերապահված լիազորություններն ու գործառույթները հստակեցնելու նպատակով ստեղծվեցին նոր նախարարություններ, որով և ամբողջացավ նախարարությունների կազմը:

Առանձին բնագավառներում քաղաքականության մշակման ու իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծվեցին մշտական գործող նախարարական կոմիտեներ՝ ֆինանսատնտեսական, սոցիալական, տարածքային զարգացման և բնապահպանական, պետաիրավական:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումներում կարևորվեց նաև դատաիրավական համակարգի բարեփոխումների իրականացումը: Դատական օրենսգրքի պահանջներին համապատասխան իրականացվեցին դատական համակարգի կառուցվածքային փոփոխություններ՝ գործող առանձին դատարանների վերակազմակերպում, ինչպես նաև դատական համակարգի ամրապնդման, դատական գործավարության գործընթացների բարելավման, դատավորների ու արդարադատության իրականացմանը մասնակցող անձանց մասնագիտական գիտելիքների և օրենսդրական դաշտի կատարելագործում:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացվել են դատախազության համակարգի կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում՝ ելնելով գործառույթների բնույթից տեղի ունեցավ ՀՀ դատախազության օպերատիվ քննչական հաստիքների համապատասխան բաշխում այլ քննչական մարմինների՝ ՀՀ ոստիկանության քննչական վարչության, ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի միջև:

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն ստեղծվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, որն իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ, հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

Քաղաքացիական ծառայության ներդրում

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական իրավական ակտերի հիման վրա իրականացվեց քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման գործընթացը: Իրականացված բարեփոխումների շնորհիվ քաղաքացիական ծառայողները տարանջատվել են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանցից և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներից, սահմանվել են քաղաքացիական ծառայության մուտքի և ծառայությունից ազատվելու հավասար պայմաններ, ապահովվել են մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ: Այդ ընթացքում հստակեցվել են քաղա-

քացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պատասխանատվության սահմանները և քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը:

2010 թվականին օրենսդրորեն սկզբունքային փոփոխությունների ենթարկվեց քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթներում հաղթող ճանաչելու կարգը, սահմանվեց արդյունքների գնահատման նոր ընթացակարգ՝ ըստ որի մրցութային հանձնաժողովները ոչ թե քվեարկության միջոցով են մրցույթում հաղթող ճանաչելու, այլ մասնակիցներին տրված միավորների հանրագումարով: Սահմանվեց նաև քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը:

Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով կանոնակարգվել են նաև՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահմանյան երկրներ ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերը և վճարման կարգը,

- պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձանց սպասարկման համար անհրաժեշտ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակները,

- պետական կառավարման մարմինների պաշտոնատար անձանց սպասարկելու նպատակով հատկացվող ծառայողական ավտոմեքենաների առանձին չափորոշիչները, որը մասնավորապես ներառում է ավտոմեքենայի ձեռք բերման առավելագույն գինը՝ ըստ պաշտոնատար անձանց զբաղեցրած պաշտոնների,

- կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի կանոնները,

- կոմունալ ծախսերի՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռք բերման ծավալները,

ինչպես նաև ջրի օգտագործման նորմաները:

Հիմնական խնդիրներ

Պետական կառավարման համակարգի բնագավառում իրականացվող հիմնական խնդիրներն են՝

- պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը,

- պետական կառավարման մարմիններում աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով աշխատանքային ծրագրերի կազմումը և կատարողականների գնահատման կարգի կիրառումը,

- պետական կառավարման մարմինների տեխնիկական վերազինման և աշխատանքային պայմանների բարելավման նպատակով կարողությունների զարգացման և կապիտալ ակտիվների ձեռքբերման համար համապատասխան միջոցների նախատեսումը:

6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

6.2.1. Գերակայությունները

ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական կառավարման հիմնական գերակայություններից են.

1) Պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացումը: Այդ առումով կարևորվում են՝

- պետական կառավարման համակարգի բարելավման նպատակով հանրային ծառայողների վարձատրության ռազմավարության մշակումը,

- հանրային ծառայությունների ոլորտում ընդգրկված աշխատողների աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործման և աշխատանքի վարձատրության չափերի միջև ստեղծված հարաբերակցության անհամամասնությունների կարգավորման նպատակով հանրային ծառայության միասնական վարձատրության համակարգի մշակումն ու համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը,

- պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման կարգի կիրառումը,

- պետական կառավարման մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը և այդ համակարգով աշխատանքային ծրագրերի կազմման ու աշխատողների կատարողականների գնահատման գործընթացի իրականացման ապահովումը,

- պետական կառավարման մարմինների աշխատողների կատարողականների հիման վրա պարգևատրման կարգի ներդրումը և այդ նպատակով նյութական խրախուսման ֆոնդի ստեղծումը:

2) Աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կառավարման մարմինների և նրանցում յուրաքանչյուր աշխատատեղի վերազինումը ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով:

3) Պետական կառավարման բնագավառում բարեփոխումների և համակարգի կատարելագործման իրականացումը, որոնք պետք է հանգեցնեն միջազգային լավագույն փորձին համապատասխանող համակարգի ձևավորմանը: Պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով անհրաժեշտ է ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը, աշխատանքի որակը և աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով

մասնավոր հատվածին՝ միջնաժամկետ հատվածում ձեռնպահ մնալով աշխատողների թվի ավելացումից:

4) Քաղաքացիական ծառայության համակարգում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավմանն ու աշխատանքային առաջխաղացման շարունակական ընթացակարգերի կիրառումն ապահովող համապատասխան համակարգի և կարողությունների զարգացումը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում կարևորվում է նաև պետական կառույցների աշխատողների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների շարունակական կատարելագործումը: Մասնավորապես, կառավարությունը շարունակելու է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքները, աստիճանաբար ներդրվում է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների առցանց եղանակը:

6.2.2. Նպատակները

«Վ պետական կառավարման համակարգին ուղղվող ծախսերի հիմնական նպատակը պետական ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է արմատավորել պետական ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող հուսալի երաշխիքները, ինչպես նաև պետական ծառայողների տեսական և մասնագիտական գիտելիքների բարձրացումն ապահովելու համար կատարելագործել պարբերաբար անցկացվող պարտադիր վերապատրաստման և ատեստավորման ընթացակարգերը, նվազեցնել համակարգում կոռուպցիոն ռիսկերը:

6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Պետական կառավարման համակարգում 2012-2014 թթ. իրականացվելիք ծախսերի կառուցվածքի և ծավալների վրա հիմնականում ազդեցություն ունեն հետևյալ գործոնները.

(i) «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Դատական ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան քաղաքացիական ծառայողների (պետական և դատական ծառայողների), հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձի բնականոն աճի, ՀՀ դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչա-

կան ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճի ապահովումն ու այդ նպատակով անհրաժեշտ միջոցների նախատեսումը:

(ii) ՄԺԾԾ Ժամանակահատվածում նախատեսվող կատարելագործումը և կանոնակարգումը պետական կառավարման համակարգում ներգրավված աշխատողների աշխատանքի վարձատրության գործող համակարգի՝ հանրային ծառայության միասնական վարձատրության համակարգի ներդրման նպատակով:

(iii) ՀՀ դատական օրենսգրքի, «Սահմանադրական դատարանի մասին», «Դատախազության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով պահուստային ֆոնդերի նախատեսումը:

(iv) Պետական կառավարման մարմինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ միջոցների նախատեսումը՝ հիմքում ունենալով բազային բյուջեով այդ նպատակի համար ծրագրավորված ծախսերը:

Առաջիկա տարիներին անհրաժեշտությունից ելնելով հնարավոր է նաև որոշակի միջոցառումների իրականացում, որոնք իրենց ազդեցությունը կունենան յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծախսերը ծրագրավորելիս, մասնավորապես՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված կապի և կոմունալ (էլեկտրաէներգիայի, գազի և ջրի) ծախսերի նորմաներին համապատասխան նախատեսված ծախսերի վերանայում՝ կապված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված սակագների, ինչպես նաև սպառողների կողմից օգտագործվող ծավալների փոփոխության հետ:

Բացի այդ, 2012-2014 թվականների ընթացքում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի վրա ազդեցություն կարող են ունենալ նաև.


- ա) օրենսդրական փոփոխությունները,
- բ) պետական կառավարման համակարգի կառուցվածքային փոփոխությունները,
- գ) պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը:

6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կառավարման համակարգի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման ծավալների պահպանումը առաջնահերթ խնդիր է: Պետական կառավարման մարմինների 2012-2014 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի

բաշխումն ըստ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ներկայացված է ստորև բերված գծանկարում:

Գծանկար 6.1 Պետական կառավարման մարմինների 2012-2014 թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի* բաշխումը՝ ըստ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների (%-ով)



*Ներառված չեն վարչական օբյեկտների հիմնանորոգման և շենքերի ձեռքբերման, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով այս ոլորտում նախատեսված ծախսերը:

Ընթացիկ ծախսերը, 2011 թվականի համեմատությամբ, 2012 թվականին կաճեն 0.2 մլրդ դրամով, 2013 թվականին, 2012 թվականի համեմատությամբ՝ 4.3 մլրդ դրամով և 2014 թվականին, 2013 թվականի համեմատությամբ՝ 7.9 մլրդ դրամով:

Ծախսերի (անվանական արտահայտությամբ) աճը կգուգակցվի նաև ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության փոփոխությամբ: Այսպես, 2011 թվականի համար ծրագրված մակարդակի դիմաց (ՀՆԱ-ի 1.47%) պետական կառավարման համակարգի համար պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2012-2014 թթ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար կկազմեն համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 1.31, 1.31 և 1.36%-ը:

Նշված ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում կփոփոխվի հետևյալ կերպ՝ 2011 թվականի համար ծրագրավորված մակարդակի փոխարեն (5.51%) պետական կառավարման համակարգի ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում 2012 թվականին կկազմի 5.41%, 2013 թվականին՝ 5.49% և 2014 թվականին՝ 5.65%:

Նշված մարմինների 2012 թվականի պահպանման ընթացիկ ծախսերը 2011 թվականի մակարդակը գերազանցում են 0.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է.

- աշխատավարձի ֆոնդի (վրաեկով) աճով՝ շուրջ 0.5 մլրդ դրամ: Այն պայմանավորված է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական (պետական, դատական) ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձի բնականոն աճով, ՀՀ դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով,

- ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված կապի ծառայությունների վճարների կանոնակարգմամբ:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման մյուս հոդվածների գծով հիմնականում տեղի է ունեցել ծախսերի նվազում՝ պայմանավորված այդ ծախսերի կանոնակարգմամբ:

2013 թվականի պահպանման ընթացիկ ծախսերը 2012 թվականի մակարդակը գերազանցում են 4.3 մլրդ դրամով, որը հիմնականում աշխատավարձի ֆոնդի (վրաեկով) աճն է՝ 4.1 մլրդ դրամ, պայմանավորված վերոնշյալ օրենքների պահանջներից բխող բնականոն աճով, դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով, ինչպես նաև պետական կառավարման մարմինների աշխատողների աշխատավարձերի 10% աճով:

2014 թվականի պահպանման ընթացիկ ծախսերը 2013 թվականի մակարդակը գերազանցում են 7.9 մլրդ դրամով, որը հիմնականում աշխատավարձի ֆոնդի (վրաեկով) աճն է՝ 8.3 մլրդ դրամ, պայմանավորված վերոնշյալ օրենքների պահանջներից բխող բնականոն աճով, դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով, ինչպես նաև պետական կառավարման մարմինների աշխատողների աշխատավարձերի 20% աճով:

Հաշվի առնելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջի (այն է՝ քաղաքապետարանի գծով «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացիկ ծախսերի ֆինանսավորման այն ուղղությունները, որոնք օրենքով վերաբերվում են քաղաքապետին վերապահված պարտադիր լիազորություններին նախատեսվում են նաև 2010-2013 թվականների ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծում) գործողության ժամկետը, ՄԺԾԾ-ով 2014

թվականի համար Երևանի քաղաքապետարանի պահպանման գծով սուբվենցիայի հատկացումների գծով ծախսեր չեն նախատեսվել:

2011 թվականին անցկացվելիք մարդահամարի նյութերի մշակման աշխատանքների համար 2012-2013 թվականներին նախատեսվել է համապատասխանաբար՝ 71.0 և 37.6 մլն դրամ:

2012 թվականին ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է համապատասխանաբար 1105.3 մլն դրամ և 1124.0 մլն դրամ:

2013 թվականին ՀՀ Նախագահի և Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է համապատասխանաբար 1105.9 մլն դրամ և 330.0 մլն դրամ:

Պետական կառավարման մարմինների 2012-2014 թթ. նախատեսված ընդհանուր ծախսերը՝ ներառյալ վարչական շենքերի ձեռքբերման և վարկային ու դրամաշնորհային ծրագրերի գծով ծախսերը, ամփոփված են հետևյալ աղյուսակում:

մլն դրամ

	2012 թ.	2013 թ.	2014 թ.
Ընդամենը	64,966.3	63,140.1	68,912.5
այդ թվում՝			
Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսեր	55,439.5	59,757.1	67,635.2
Վարչական շենքերի ձեռքբերում	34.0	34.0	34.0
Վարկային և դրամաշնորհային ծրագրեր	9,492.8	3,349.0	1,243.3

ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կրթությունը հանդիսանում է պետական քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը: Այն կարևորվում է որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների լուծման՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահենք տնտեսության կայացման առանցքային գործոններից մեկը:

Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որ յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն՝ հասարակության և հանրապետության տնտեսության արդի կարիքներին ու պահանջներին համապատասխան:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնական հանրակրթական ծրագրերի շրջանակում կրթական և կրթաօժանդակ ծառայությունների մատուցման, ինչպես նաև հանրակրթության համակարգի զարգացման ծրագրերի իրականացման եղանակով: Այս բնագավառում շահառուներ են հանդիսանում 6-18 տարեկան երեխաները:

2011 թվականին հանրապետությունում գործում են 1402 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ (այդ թվում՝ 24 հատուկ հանրակրթական հաստատություն), որոնցում ընդգրկված կլինեն 378.2 հազար աշակերտ (2011 թվականի հունվարին հանրապետությունում գործող 24 հատուկ հանրակրթական հաստատություններում ընդգրկված են եղել 2603 սաներ: Ներկայումս դպրոցների թիվը և երեխաների թվաքանակը պակասել է, համապատասխանաբար՝ 1-ով և 80-ով, քանի որ Երևանի թիվ 18 հատուկ դպրոցը վերակազմակերպվել է՝ միանալով «Փոքր Միեր» կրթահամալիրին): Երեխաների վերոնշված թվաքանակում՝ 378.2 հազարում, ներառված են հանրապետության 62 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկվածները՝ 1651 աշակերտներ, ինչպես նաև նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածները՝ Լոռու մարզում՝ 125, Շիրակի մարզում՝ 375 երեխաներ, 2011 թվականի սեպտեմբերից էլ

Արագածոտնի և Արարատի մարզերում նշված ծրագրում ընդգրկվողները՝ համապատասխանաբար 620 և 630 երեխաներ:

2011 թվականին հանրակրթական ծրագրերի իրականացման գծով պետական բյուջեից կհատկացվի 89723.6 մլն դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի 2.38 %-ը կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 82.4 %-ը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 50 պետական ուսումնական հաստատություններում (29 ՆՄՈՒՀ, 17 ՄՄՈՒՀ, 4 կրթահամալիր): Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից 29-ը արհեստագործական ուսումնարաններ են (որից 15-ը՝ ՀՀ ԿԳ նախարարության համակարգում): 50 պետական ուսումնական հաստատություններում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրերով սովորում է 6487 ուսանող (որոնցից՝ 5846ը անվճար հիմունքներով) և աշխատում է 495 դասախոս և արտադրական ուսուցման վարպետ:

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 81 պետական ուսումնական հաստատություններում (3 ԲՈՒՀ, 77 ՄՄՈՒՀ, մեկ կրթահամալիր): Հանրապետությունում գործում է 77 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն (որից 50-ը՝ ՀՀ ԿԳ նախարարության համակարգում): 81 պետական ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորում է 29933 ուսանող (որոնցից՝ 7458-ը անվճար հիմունքներով) և աշխատում է 3435 դասախոս և արտադրական ուսուցման վարպետ:

2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի, տևողության և որակավորումների, որոնք ներառում են արհեստագործական կրթության 102 մասնագիտություն՝ շուրջ 350 որակավորմամբ, որոնցից ներկայումս ուսուցանվում է 54 մասնագիտություն, միջին մասնագիտական կրթության 352 մասնագիտություն, որից ներկայումս ուսուցանվում է 102 մասնագիտություն:

Պետական բյուջեի միջոցների հաշվին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծառայություններ մատուցվում են միայն պետական ուսումնական հաստատություններում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրերի գծով 2011 թվականին պետական բյուջեից կհատկացվի 7098.1 մլն դրամ, որից 1600.0 մլն դրամը՝ գույքի և

սարքավորումների ձեռքբերման գծով (ՀՀ կառավարության և Եվրոպական Հանձնաժողովի միջև ստորագրված բյուջետային աջակցության ծրագրին համապատասխան՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում մրցութային կարգով ընտրվել են 12 մասնագիտական կրթական ուսումնական հաստատություններ, որոնք դարձել են տարածաշրջանային քոլեջներ: Նշված հաստատություններում իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ, վերագինվում է դրանց նյութատեխնիկական բազան):

Հայաստանի Հանրապետությունում *բարձրագույն և հետբուհական մասնագիտական* կրթությունն իրականացվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի ծրագրերով: Ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով:

2011 թվականին բուհերում պետության կողմից նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կսովորեն 17.1 հազար ուսանողներ, որից 12.6 հազարը՝ բակալավրի, 2.6 հազարը՝ մագիստրոսի ծրագրով:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրերի գծով 2011 թվականին պետական բյուջեից կհատկացվի 8102.2 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, 2011 թվականին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման գծով պետական բյուջեից կհատկացվի 15200.3 մլն դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի 0.4 %-ը կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 14.0 %-ը :

ԱՐՏԱՌԻՍՏԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում գործող 364 պետական և համայնքային հաստատություններում ընդգրկված են մոտ 78.0 հազար երեխաներ, ընդ որում, ՀՀ պետական բյուջեից ներկայումս ֆինանսավորվող 54 արտաուսումնական դաստիարակության հիմնարկներում՝ մարզադպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական, տեխնիկական, բնապահպանական, գեղագիտական կենտրոններ, ընդգրկված են շուրջ 28.8 հազար դպրոցականներ: Նշված թվաքանակում ներառված են նաև հանրապետության 144 երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման մեջ ընդգրկված 2.4 հազար աշակերտները:

Արտադպրոցական դաստիարակության, ինչպես նաև դրա իրականացմանն օժանդակող ծրագրերի գծով 2011 թվականին պետական բյուջեից կհատկացվի 2739.5 մլն դրամ:

1.2. ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 2010 թվականին կազմել են ՀՆԱ-ի 2.78 %-ը՝ 2008 թվականի 2.83 %-ի դիմաց (Տես՝ աղյուսակ 7.1-ը):

Աղյուսակ 7.1. Հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի 2008-2010 թվականների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում

	2008թ.	2009թ.	2010թ.
Ընդամենը կրթություն	2.83	3.38	2.78
այդ թվում՝			
Հանրակրթական ծրագրեր	2.38	2.86	2.28
Մասնագիտական կրթական ծրագրեր	0.37	0.41	0.39

Ծանոթություն. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը (հանրակրթական ուսուցում, նախադպրոցական կրթություն, ներառական կրթություն, հատուկ կրթություն, մասնագիտացված հանրակրթական ուսուցում և այլն), ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հեղուկակալական մասնագիտական կրթության ծրագրերը, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր:

Կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 82.3 %-ը, 2010 թվականին ուղղվել է հանրակրթության ոլորտի ֆինանսավորմանը, իսկ 14.2 %-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը՝ 2009 թվականի համապատասխանաբար 84.7 և 12.2 %-ի դիմաց (2008 թվականին նշված ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար՝ 84.1 և 13.1 %) :

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2010 թվականին հանրապետությունում գործել են 1405 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցում սովորել են շուրջ 376.9 հազար աշակերտներ:

Չնայած հանրակրթության ոլորտին հատկացումների զգալի աճին՝ համախառն ընդգրկվածության առումով, ըստ միջնակարգ կրթության աստիճանների, կան որոշ տարբերություններ.

2009 թվականին համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում 2008 թվականի համեմատությամբ իջել է 0.6 %-ով՝ 90.8%-ից դառնալով 90.2%, իսկ հիմնական դպրոցում իջել է 1,4%-ով՝ 93,5%-ից դառնալով 92,1%: Սակայն նույն ժամանակահատվածում տարրական և ավագ դպրոցներում նկատվում է ընդգրկվածության որոշ աճ՝ տարրականում այն փոխվել է 0,2 %-ով

(95,9%-ից դառնալով 96,1%), ավագ դպրոցում այդ ցուցանիշն աճել է 2%-ով (81,9%-ից դառնալով 83,9%):

Հանրակրթական դպրոցներում 2009-2010 ուսումնական տարում դասավանդել է 41512 ուսուցիչ: Նախորդ տարիների համեմատությամբ հանրակրթության ոլորտում աշխատող ուսուցիչների թիվը նվազել է, ինչը պայմանավորված է ինչպես սովորողների թվի նվազմամբ, այնպես էլ համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերով:

Վերջին տարիներին շարունակվել են ոլորտում իրականացվող լայնածավալ բարեփոխումները՝ ուղղված կրթության արդիականացմանը, որակի բարելավմանն ու մատչելիության մեծացմանը, կառավարման համակարգի ապակենտրոնացմանն ու արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝

- ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման համաձայն՝ 2007 թվականի հունվարի 1-ից ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է ըստ աշակերտների թվի՝ բանաձևով: Միաժամանակ, նկատի ունենալով ըստ կրթական մակարդակների (տարրական, միջին, ավագ) ուսումնական պլանով նախատեսված դասաժամերի տարբերակումները, փոփոխություն է կատարվել նշված որոշման մեջ, համաձայն որի՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի արժեքների նկատմամբ կկիրառվեն համապատասխան գործակիցներ՝ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակներում: Ընդ որում, բանաձևի կիրառման արդյունքում, հանրակրթական հաստատություններին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, թույլատրվում է պետական կառավարման մարմիններին, ՀՀ կառավարության սահմանած կարգով, սահմանափակ գումարի չափով իրենց ենթակայության հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ :

- Ավարտին է հասցվել 12-ամյա կրթակարգի բովանդակային ապահովման գործընթացը: Մշակվել են նոր առարկայական չափորոշիչներ ու ուսումնական ծրագրեր, վերանայվել է ուսումնական պլանը: Նոր ծրագրերի հիման վրա հրատարկվել են հիմնական և ավագ դպրոցների բոլոր առարկաների (այդ թվում՝ ըստ հոսքերի) նոր չափորոշիչները և ծրագրերը: Մշակվել ու տպագրվել են մեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար: Նշված ծառայություններն իրականացվել են ՀՀ պետական բյուջեից այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին, որը կազմել է տարեկան շուրջ 364.5 մլն դրամ:

- Հանրակրթության ոլորտում որպես կրթության որակի բարձրացման գրավական է դիտվում ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը, որով պայմանավորված, ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2009 թվականին բարձրացվել է՝ 29.5 տոկոսով՝ հասցվելով շուրջ 116.3 հազար դրամի (2009 թվականին ուսուցիչների տարեկան աշխատավարձը մեկ շնչին

բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի մակարդակը գերազանցել է 45 %-ով, պայմանավորված ՀՆԱ-ի անկմամբ և ուսուցիչների աշխատավարձի մակարդակի պահպանմամբ): 2010-2011 թվականներին պահպանվել է 2009 թվականի մակարդակը, միաժամանակ, հաշվի առնելով նաև ավագ դպրոցներում մանկավարժական անձնակազմի աշխատավարձի 20% հավելումը, 2011 թվականին ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը հասցվել է 117.5 հազար դրամի կամ ուսուցիչների տարեկան աշխատավարձը մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի մակարդակը գերազանցել է 24 %-ով (ՀՆԱ-ի նկատմամբ մակարդակների անկումը պայմանավորված է 2011 թվականին՝ 2009 թվականի համեմատ, ՀՆԱ-ի աճով): 2011 թվականից ուսուցիչների ատեստավորման նոր կարգի ներդրումը հնարավորություն կտա իրականացնել տարբերակված ֆինանսավորում և ստեղծել խթաններ՝ մասնագիտական հետագա կատարելագործման համար: Նախատեսվում է առաջիկա 5 տարիների ընթացքում ատեստավորել հանրակրթական դպրոցների բոլոր ուսուցիչներին, իսկ որակավորում ստացած ուսուցիչներին կտրամադրվեն հավելավճարներ (2011 թվականին նշված նպատակով նախատեսվել է 716.8 մլն դրամ):

- Շարունակվել են աշխատանքներն առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման ուղղությամբ: 2008-2010 թվականներին առանձին գործող ավագ դպրոցների ցանցում ընդգրկվել են 91 դպրոցներ (ծրագրի առաջին փուլում՝ 2008 թվականին ստեղծվել է 10 ավագ դպրոց, 2009 թվականին՝ 38, իսկ 2010 թվականին՝ 43 ավագ դպրոց): Ավագ դպրոցներն ապահովվել են անհրաժեշտ դպրոցական գույքով, համակարգչային սարքավորումներով, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներով, գրականությամբ համալրված ժամանակակից գրադարաններով: 2011 թվականից կսկսի գործել ևս 16 ավագ դպրոց կամ՝ ցանցում ընդգրկված դպրոցների թիվը կհասցվի 107-ի՝ դրանով ամբողջացնելով ավագ դպրոցների ցանցը: « Ավագ դպրոցների համակարգի ներդնում» ծրագրի շրջանակներում պետական բյուջեից 2008-2010 թվականներին հատկացվել է, ընդամենը՝ 638.2 մլն դրամ, ևս 99.8 մլն դրամ կհատկացվի 2011 թվականին: Բարելավվել են ավագ դպրոցների շենքային պայմանները, շենքերի հիմնանորոգման նպատակով 2008-2010 թվականներին հատկացվել է, ընդամենը՝ 3715.6 մլն դրամ, 1196.4 մլն դրամ էլ կհատկացվի 2011 թվականին: 2008-2010 թվականներին իրականացվել են ավագ դպրոցների շուրջ 1815 ուսուցիչների առարկայական բուհական վերապատրաստումներ՝ ուղղված նրանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը: Փորձաքննություն են անցել և գործաձուլության երաշխավորվել ավագ դպրոցի 37 անուն դասագրքեր և 12 անուն ուսուցչի ձեռնարկներ: Փոխվել է նորաստեղծ ավագ դպրոցների իրավական կարգավիճակը՝ հանրապետության ողջ տարածքում ստեղծված ավագ դպրոցներն անցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը:

- Հանրապետության բոլոր մարզերում ձևավորված Կրթության ազգային ինստիտուտի մասնաճյուղերում և ընտրված 52 դպրոց- կենտրոններում իրականացվում են մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստումներ՝ այն հաշվով, որ ապահովվի ուսուցչական ողջ համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը: Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման գծով պետական բյուջեից 2008-2010 թվականներին հատկացվել է, ընդամենը՝ 1439.2 մլն դրամ, 491.5 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2011 թվականին (նշված գումարի շրջանակներում 2011 թվականին կվերապատրաստվի 6000 ուսուցիչ):

- Շարունակվել են աշխատանքները սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգի ներդրման ուղղությամբ: 2009 թվականից բոլոր առարկաների գծով անցկացվում են ավարտական և բուհի ընդունելության միասնական քննություններ: Պետական բյուջեից համապատասխան միջոցներ են նախատեսվել թեստերի և ուղեցույցերի մշակման և տպագրության, միջազգային ստուգատեսին մասնակցության, 2009-2010 թվականներին ավարտական քննությունների անցկացման գծով (12-ամյա ուսուցման անցնելու հետ կապված՝ 2011 թվականին հանրակրթական դպրոցներում շրջանավարտներ չեն լինի): Վերոնշված աշխատանքների իրականացման նպատակով գնահատման և թեստավորման ծառայությունների գծով պետական բյուջեից 2009-2010 թվականներին հատկացվել է, ընդամենը՝ 920.3 մլն դրամ, 374.3 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2011 թվականին :

- Բարելավվել է դպրոցների համակարգչային հագեցվածությունը: 2010 թվականի դրությամբ Հայաստանի դպրոցներում առկա են 14061 համակարգիչներ, իսկ 2009 թվականին այդ ցուցանիշը կազմել է 13027: Մեկ դպրոցին բաժին է ընկնում միջինը 9,7 համակարգիչ, 2009 թվականին այն կազմել է 8,9: Մեկ համակարգչին համապատասխանող աշակերտների միջին քանակը 2010 թվականին կազմել է 26.4՝ 2009-ի 30.2-ի դիմաց: Արդյունքում գրանցվել է S<S-ն ուսումնական գործընթացում օգտագործողների դինամիկ աճ: 2010 թվականին ավագ դպրոցում այդ ցուցանիշը կազմել է 20, որը համադրելի է եվրոպական երկրների ցուցանիշներին: 2010 թվականին Հայաստանի շուրջ 1413 դպրոցներում գործել են համակարգչային ուսումնական կենտրոններ (համակարգչային դասարաններ):

- Ընդլայնվել է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցը (<ԴԻՏ), 2010 թվականին ընդհանուր ցանցում ընդգրկված դպրոցների թիվը կազմել է 944, իսկ 2011 թվականին արդեն ցանցում ընդգրկված կլինի շուրջ 1200 դպրոց՝ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N878-Ն որոշման : Հայաստանի հեռավոր բնակավայրերի աշակերտների և ուսուցիչների համար համակարգչային դասընթացներ

կիրականացնի Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը : Համակարգչային սարքավորումներով համալրմանը զուգընթաց իրականացվել են աշխատանքներ էլեկտրոնային բովանդակության (ռեսուրսներ, համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր, դասագրքեր, ուսուցողական նյութեր և այլն) ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, Հայաստանի հանրակրթության ոլորտում համակարգչային գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում աշխատանքներ են իրականացվել «Լոգո» համակարգչային միջավայրի ներդրման ծրագրի ուղղությամբ: Հաստատվել է «Տարրական դպրոցում համակարգչային հմտությունների ուսուցման հայեցակարգը» և դրանից բխող ծրագիրը, մշակվել են փորձնական ձեռնարկ ուսուցչի համար և էլեկտրոնային ինտերակտիվ ուսուցանող նյութեր: Ծրագրի իրականացման նպատակով ընտրվել են 7 դպրոցներ:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների գծով պետական բյուջեից 2009-2010 թվականներին հատկացվել է, համապատասխանաբար՝ 547.0 և 698.0 մլն դրամ:

- Շարունակվել են տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման աշխատանքները: Նշված նպատակով պետական բյուջեից 2009-2010 թվականներին հատկացվել է, յուրաքանչյուր տարի 764.6 մլն դրամ :

- Անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 15 առարկաներից, որին մասնակցել են մոտ 1250 աշակերտ, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ինֆորմատիկա, աստղագիտություն և կենսաբանություն առարկաներից: 2010 թվականին անցկացվել է օլիմպիադա նաև «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից: Դպրոցականների օլիմպիադաների անցկացման գծով 2009 և 2010 թվականներին պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 41.2 և 33.2 մլն դրամ, 51.6 մլն դրամ էլ կհատկացվի 2011 թվականին:

- Դպրոցների ջեռուցման համակարգերի և շենքային բարենպաստ պայմանների ապահովման նպատակով զգալի միջոցներ են նախատեսվել կրթական օբյեկտների հիմնանորոգման և կապիտալ շինարարության ուղղությամբ, ինչպես նաև վառելիքի և ջեռուցման գծով՝ կապված նոր կաթսայատների շահագործման հետ: Կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով 2009 և 2010 թվականներին պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 11389.1 և 5621.8 մլն դրամ, 7405.2 մլն դրամ էլ կհատկացվի 2011 թվականին:

Բովանդակային բարեփոխումների հետ մեկտեղ շարունակվել են հանրակրթության համակարգի գործունեության արդյունավետության ուղղությամբ տարվող աշխատանքները: Վերջին տարիներին համակարգի արդյունավետությունը բարձրացել է և դրանք բնութագրող ցուցանիշներում արձանագրվել են որոշ դրական միտումներ: Մասնավորապես. հանրակրթական դպրոցներում

աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունների մակարդակը 2008-2011 թվականներին հասցվել էր՝ համապատասխանաբար, 14.5-ի և 24.3-ի՝ 2007 թվականի համապատասխանաբար 14.0 և 23.2-ի դիմաց:

Առաջընթաց է նկատվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդհանուր դպրոցներում ներգրավելու գործում: Ներկայումս ներառական կրթություն իրականացվում է հանրապետության 62 հանրակրթական դպրոցներում, որտեղ ընդգրկված են 1651 երեխաներ (2008 թվականին ներառական կրթություն իրականացվել է 14 հանրակրթական դպրոցներում, ընդգրկված սովորողների թիվը՝ 453): Ներառական դպրոցների ցանցի զարգացման համար բավարար հիմքեր ստեղծելու նպատակով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում փորձարկվում է հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը: Ներառական կրթության գծով 2009 և 2010 թվականներին պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 347.5 և 628.2 մլն դրամ, 897.7 մլն դրամ էլ կհատկացվի 2011 թվականին:

Նախադպրոցական կրթության ոլորտում, սկսած 2004 թվականից, նկատվում է երեխաների ընդգրկվածության որոշակի աճ, սակայն դա հիմնականում բնորոշ է խոշոր բնակավայրերին: 2003-2008 թվականների ընթացքում ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում 19,1%-ից աճել է մինչև 29,8%, իսկ 2009 թվականին այն կազմել է 24.6%: Այնուհանդերձ, նախադպրոցական ծրագրերում համախառն ընդգրկվածության ցուցանիշներն զգալիորեն ցածր են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Անկախ պետությունների համագործակցության երկրների միջինների համեմատ (նշված երկրների միջինը դեռևս 2005 թվականին կազմել է 50.1%) :

Նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի հիման վրա էլ ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի նոյեմբերի 4-ին հաստատվել է «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» N1427-Ն որոշումը: Նշված իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, որդեգրել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համընդհանուր կրթության ապահովման պետական քաղաքականությունը: Նախատեսվում է այդ խմբի երեխաների ընդգրկվածությունը 2015 թվականին հասցնել 90 տոկոսի, որին հասնելու համար անհրաժեշտ է տարեկան մոտավորապես 7 տոկոսի չափով ընդգրկվածության մակարդակի աճ:

Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչ 2011 թվականը Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

Ոլորտին աջակցելու և ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձնական ծրագիր իրականացնելու համար: Այս ծրագրի շրջանակներում 2009 թվականին Լոռու և Շիրակի մարզերում գործարկվել են 22 նախադպրոցական խմբեր, որոնցում ընդգրկվել է 538 երեխա: 2010 թվականին այդպիսի ծառայություններից օգտվել է 328 երեխա: Միաժամանակ 2010 թվականին ներդրվել են նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ ՀՀ Արարատի և Արագածոտնի մարզերում, որի արդյունքում դպրոցին նախապատրաստման խմբերում ընդգրկվել է 1084 երեխա:

Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2011 թվականին պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: 2011 թվականին պետական բյուջեից 97,0 մլն դրամ կհատկացվի Լոռու մարզի 125, Շիրակի մարզի 375, ինչպես նաև 2011 թվականի սեպտեմբերից ՀՀ Արագածոտնի և Արարատի մարզերում՝ համապատասխանաբար 620 և 630 երեխաների նախադպրոցական կրթության գծով:

Սփյուռքի հետ կապերի ոլորտում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը սփյուռքում բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում հայոց լեզու և գրականություն ու հայագիտական այլ առարկաներ դասավանդող ուսուցիչների համար Հայաստանում կազմակերպում է մանկավարժական կադրերի որակավորման բարձրացման ուղղությամբ վերապատրաստման մեկամյա դասընթացներ:

Ներկա դրությամբ ծրագրի ծավալները աճել են թե՛ ուսուցիչների մասնակցության թվով, թե՛ ուսումնական ծրագրերի բազմազանության մասով: 2011 թվականին վերապատրաստում կկազմակերպվի Վրաստանի տարածքում՝ Վրաստանում հայերեն ուսուցմամբ դպրոցների ուսուցիչների համար: 2009-2010 թվականներին, համապատասխանաբար, 74 և 76 ուսուցչի վերապատրաստման համար պետական բյուջեից հատկացվել է, ըստ տարիների՝ 17.9 և 27.1 մլն դրամ, ևս 36.1 մլն դրամ կհատկացվի 2011 թվականին:

Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոնների համաձայն իրականացվում է սփյուռքահայ դիմորդների ընդունելությունը ՀՀ բուհեր: Անվճար հիմունքներով ընդունելությունը կատարվում է ՀՀ կառավարության որոշմամբ տարեկան հաստատվող բուհական պետական պատվերի տեղերի շրջանակներում: Սփյուռքի

համար մասնագիտական կադրերի պատրաստում ծրագրով 2009/2010 ուստարվա համար կտրուկ իջել էր դիմորդների թիվը, հասնելով շուրջ 226-ի՝ նախորդ տարիների 450-ի դիմաց, պայմանավորված Վրաստանի հայկական դպրոցներում 2008/2009 ուսումնական տարում շրջանավարտ չլինելով: Այնուհետ դիմորդների թիվը վերականգնվել է և կազմել 400 հոգի: Ըստ բուհերի և մասնագիտությունների դիմորդների թվի համամասնությունը կարելի է համարել անփոփոխ:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում ծրագրով գրականություն ստանալու դիմումների թիվն անընդհատ աճում է: Բացի նյութերի տրամադրումից՝ 2010 թվականին ստեղծվեցին պայմաններ էլեկտրոնային նյութերի հասանելիությունն ապահովելու համար: Այս գործընթացը շարունակական դարձնելու և զարգացնելու նպատակով 2011 թվականին կհատկացվի 80 մլն դրամ՝ 2009-2010 թվականների, համապատասխանաբար՝ 69.9 և 68.6 մլն դրամի դիմաց: 2009-2010 թվականների Վրաստանի և Աբխազիայի դպրոցներին է մատակարարվել, համապատասխանաբար՝ 39,8 և 12,6 հազար դասագիրք, իսկ սփյուռքի մնացած վայրերի դպրոցներին՝ 32,8 և 39,4 հազար դասագիրք:

Շարունակվում են Ջավախքի հայկական դպրոցներին դպրոցական գույքի տրամադրման աշխատանքները, իսկ 2004 թվականից սկսած՝ երկու տարին մեկ անգամ անցկացվում են Հայոց լեզվի և գրականության համահայկական օլիմպիադա և Համահայկական կրթական խորհրդաժողով:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ***նախնական և միջին մասնագիտական կրթության*** զարգացումները պայմանավորված են «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով: Ոլորտի բարեփոխումների գծով ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը և Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը, Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը: Հայեցակարգում սահմանվել է ՀՀ կառավարության և սոցիալական գործընկերների՝ գործատուների և արհեստակցական միությունների միջև համագործակցությունը, որի արդյունքում նախատեսվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի հեղինակության, ուսումնական հաստատությունների շրջանավարտների մրցունակության բարձրացում և շահերի պաշտպանվածություն աշխատաշուկայում, որն իր հերթին կհանգեցնի աղքատության հաղթահարմանն ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ոլորտում իրականացվող բարեփոխումներին զգալի աջակցություն է ցուցաբերվել ինչպես պետական բյուջեից (նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրերի գծով 2010 թվականին պետական բյուջեից հատկացվել է 6146.8 մլն դրամ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով անվճար հիմունքներով սովորող՝ համապատասխանաբար 5.5 և 7.4 հազ. ուսանողի ուսուցման գծով), այնպես էլ ներքոհիշյալ միջազգային կազմակերպությունների կողմից.

- 2006 թվականից գործում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Կրթություն ուղղված Հայաստանի ապագային» ծրագիրը, որի հիմնական նպատակն է աջակցել նախնական և միջին մասնագիտական կրթական ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին: Այդ ծրագրի օժանդակությամբ 2010 թվականի ընթացքում 12 փորձարարական քոլեջներին տրամադրվել են 9 տեսակի 20 մասնագիտական ուսումնական լաբորատորիաներ: Նշված քոլեջներին և հավելյալ ևս 4 ուսումնական հաստատությունների տրամադրվել են նաև թվով 352 սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝ համակարգչային տեխնիկա, տպագրական և պատճենահանման սարքեր: Համագործակցությունը ՄԱԶԾ-ի հետ շարունակվելու է նաև առաջիկա տարիներին:

- 2007 թվականից Հայաստանում Բրիթիշ Քաունսիլի գրասենյակի կողմից իրականացվում է «Աշխատանք և հմտություններ» ծրագիրը, որի նպատակն է Հարավարևելյան Եվրոպայի երկրներում՝ Մեծ Բրիտանիայի հետ կապեր հաստատելու միջոցով, կրթությունը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին, դրանով իսկ նպաստելով արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի շուկայում աշխատուժի ազատ տեղաշարժմանը: Այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են նաև առաջիկա տարիներին:

Հայաստանի Հանրապետությունում **բարձրագույն մասնագիտական կրթության** զարգացումները պայմանավորված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացին ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ինտեգրվելով: «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են փոփոխություններ, որոնք պայմանավորված են ՀՀ-ում պետական և ոչ պետական բուհերի մրցակցային դաշտի և միասնական քաղաքականության ստեղծմամբ, որը հնարավորություն կտա հավասար պայմաններ ստեղծել բոլոր դիմորդների և ուսանողների համար: 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը:

Մշակվել են ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության սկզբունքները՝ պայմանավորված բարձրագույն կրթության կառավարման ու ֆինանսավորման բնագավառներում բարեփոխումների անհրաժեշտությամբ:

2010 թվականին հանրապետությունում գործել են 23 պետական (որից 16-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության) և 54 ոչ պետական բուհեր: Պետական բուհերում բակալավրի կրթական ծրագրով սովորողների թիվը կազմել է 91.9 հազար (որից 15.1 հազարը՝ անվճար), ոչ պետականում՝ 22.7 հազար: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների թիվը կազմել է 9.1 հազար, որից 2.7 հազարը՝ անվճար: Ընդհանուր առմամբ, 2010 թվականին բուհերում պետության կողմից նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորել են 19.9 հազար ուսանող, իսկ պետական բյուջեից բարձրագույն կրթության և վերջինիս օժանդակության ծրագրերի գծով հատկացվել է 7652.4 մլն դրամ:

2010/2011 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում (հետազոտողի կրթական ծրագրով) ներդրվել է կրեդիտային համակարգ: Ներկայումս եռամյա ծրագրով նախատեսված է 180 կրեդիտ:

Մանկավարժական մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի շրջանակներում, մանկավարժական բուհերում կատարվել է 181 ուսանողների նպատակային ընդունելություն: 2008-2009 թվականներին այդ ցուցանիշը կազմել է՝ համապատասխանաբար, 421 և 422 տեղ:

2010 թվականին նախորդ տարվա համեմատ 27%-ով աճել է «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից տրամադրվող խորհրդատվության ծավալը և 200%-ով աճել է որակավորումների ճանաչման դիմումների քանակը:

ԱՐՏԱՌԻՍՏԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ոլորտում իրականացված ծրագրերը միտված են եղել շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանը և խթանմանը, մատաղ սերնդի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ընտրած մարզաձևերում մարզական հերթափոխի պատրաստմանը, պարապոզների մարզական ունակությունների կատարելագործմանը, ՀՀ հավաքական թիմերի համալրմանը, միջազգային ասպարեզում վերջիններիս արդունավետ մրցունակության ապահովմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններին մեթոդական օգնության տրամադրմանը, ուսումնական նոր դասագրքերի և ձեռնարկների մշակմանը:

Առաջնորդվելով «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներով՝ ֆիզիկական դաստիարակության իրականացման համար մանուկների ու պատանիների շրջանում կազմակերպվում են ուսումնամարզական միջոցառումներ,

ապահովվում է նրանց մասնակցությունը տեղական, հանրապետական և միջազգային մրցաշարերին:

Մարզադպրոցների ընդլայնված ու բարելավված պայմանները, մարզագույքով և մարզասարքերով մարզակառույցների կահավորումը հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ դարձնել մարզման գործընթացը: Մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով 2009 և 2010 թվականներին պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 235.1 և 264.6 մլն դրամ, 250.0 մլն դրամ էլ կհատկացվի 2011 թվականին, իսկ ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման գծով 2009-2010 թվականներին հատկացվել է՝ յուրաքանչյուր տարի 50.0 մլն դրամ, ևս 50 մլն դրամ էլ կհատկացվի 2011 թվականին:

1.3 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կրթության ոլորտի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներն են՝

1) փոքր է նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը, շատ համայնքներում չկան նախադպրոցական կրթական ծառայություններ,

2) թերի է դպրոցից դուրս մնացած երեխաների հաշվառման և նրանց կրթության մեջ ընդգրկման համակարգը,

3) հանրակրթական դպրոցները սահմանափակ կարողություններ ունեն ապահովելու բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը,

4) մասնագիտական, հատկապես բարձրագույն կրթությունը մատչելի չէ սոցիալապես խոցելի որոշ խմբերի համար,

5) ձևավորված չեն մասնագիտական կրթության որակի ներքին և արտաքին գնահատման համակարգերն ու մեխանիզմները,

6) դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, ցածր է մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման արդյունավետությունը, ներդրված չէ մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգ,

7) թույլ է կրթության տարբեր մակարդակների, ինչպես նաև կրթության և տնտեսության միջև երկխոսությունը, բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները,

8) դեռևս ապահովված չէ կրթական ծրագրերի ամբողջական համադրելիությունը միջազգային չափանիշներին, կրթության համակարգը չի կարողանում արագ և արդյունավետ արձագանքել հասարակության և տնտեսության արագընթաց զարգացումներին,

9) անբավարար է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, կա էլեկտրոնային ուսումնական նյութերի պակաս,

10) շատ ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազան չի համապատասխանում ժամանակակից պահանջներին,

11) բարելավման կարիք ունեն կրթության ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմները:

7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն և հանրապետության տնտեսությունը ապահովվի մրցունակ մասնագետներով:

«Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի համաձայն՝ կրթության բնագավառում առաջիկա տարիներին ակնկալվող հիմնական արդյունքներն են.

- բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրն ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան,

- բարելավել կրթության որակը, այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին, ապահովելով հասարակության և գործարար միջավայրի բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից,

- ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ:

Հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել հիմնական հանրակրթական ծրագրերի մատչելիությունը նախադպրոցահասակ և դպրոցահասակ երեխաների համար և բարելավել կրթության որակը: Մասնավորապես՝ միջնաժամկետ հատվածում նախատեսվում է.

- մեծացնել նախադպրոցական կրթության մեջ 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը,

- բարելավել հանրակրթական ուսումնական հաստատությունների կադրային, ուսումնամեթոդական և ուսումնանյութական ապահովվածությունը,

- արդիականացնել կրթության բովանդակությունը՝ համապատասխանեցնելով այն հասարակության ժամանակակից պահանջներին,

- շարունակել սոցիալապես խոցելի խմբերի սովորողներին մատուցվող ծառայությունները:

Սփյուռքի հետ կապերի ընդլայնումը և համատեղ ծրագրերի իրագործումը նպատակ ունեն ճշտել այդ ոլորտում համագործակցության բնույթը, ուղիներն ու միջոցները, քննել նրանց հուզող կրթական հարցերը և ցուցաբերել մեթոդաբանական, մեթոդական և ուսումնադաստիարակչական բնույթի այլ աջակցություն:

Մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստումը, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովումը: Մասնավորապես՝ միջնաժամկետ հատվածում նախատեսվում է.

- Ապահովել մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումները Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխան,

- ներդնել մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման ժամանակակից մեխանիզմներ,

- բարելավել մասնագիտական կրթության ֆինանսավորման մեխանիզմները,

- խթանել կրթության որակի բարելավման ուղղությամբ մրցակցությունը ուսումնական հաստատությունների միջև:

Արտաուսումնական դաստիարակության բնագավառի միջնաժամկետ նպատակներն են՝

- նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, մարդասիրական, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը :

- նպաստել արտաուսումնական կրթական ոլորտի աստիճանական զարգացմանը, նորացմանն ու կատարելագործմանը, մշակել արտադպրոցական կրթական նոր ծրագրեր,

- օժտված և շնորհալի երեխաների բացահայտում,

- գեղարվեստական խմբակներում ընդգրկված սաների գեղարվեստական ստեղծագործության ունակությունների, հակումների, հետաքրքրությունների ոլորտի զարգացում:

2.2 ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթության բնագավառը դիտվում է որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն, որով պայմանավորված՝ կապահպանվի կրթության ոլորտի գերակա վիճակը 2012-2014 թվականների միջնաժամկետ հատվածում :

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտի գերակայություն է համարվում հանրակրթությունը, որին էլ առաջիկա տարիներին կուղղվի կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը :

Ստորև ներկայացված են հանրակրթության ոլորտի գերակայություններն ըստ առաջնահերթության աստիճանի.

- կրթության բովանդակային բարեփոխումը և որակի վերահսկումը,
- առանձին գործող ավագ դպրոցների ցանցի կայացումը, 12-ամյա կրթության անցումն ապահովող նյութերի և նորմատիվային փաստաթղթերի մշակումն ու ներդրումը,
- տարրական դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացումը և հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծումը՝ նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության մեծացման միջոցով,
- կրթության մատչելիության ապահովումը հատկապես խոցելի խմբերի երեխաների համար
- աշխատավարձերի բարձրացումը, մանկավարժական կադրերի ատեստավորման համակարգի գործարկման միջոցով նրանց մասնագիտական առաջընթացի հնարավորությունների ստեղծումը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը հանրապետության դպրոցներում, ինտերնետի հասանելիության ապահովումը,
- կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը :

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության բնագավառի գերակայություն են համակարգի բարեփոխումները՝ Լիսաբոնի կոնվենցիայի պահանջներին, Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին և եվրոպական ինտեգրման քաղաքականությանը համապատասխան:

Ստորև ներկայացված են մասնագիտական կրթության համակարգի գերակայություններն ըստ առաջնահերթության աստիճանի.

- որակավորումների եվրոպական համակարգին համադրելի ազգային համակարգի ներդրումը,
- կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գնահատման արդյունավետ մեխանիզմների ձևավորումը,
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում ընդունելության անվճար տեղերի ավելացումը՝ ելնելով աշխատաշուկայի պահանջներից,
- կրթական ծրագրերի բովանդակային համապատասխանեցումն արդի պահանջներին,
- ֆինանսավորման համակարգի վերակառուցումը, որը կխթանի ուսումնական հաստատությունների զարգացման միտումները և կնպաստի կրթության մատչելիությանը,
- ՀՀ կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովումը բոլոր շահառուների համար:


ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կրթության բնագավառի պետական ֆինանսավորման ծավալների աճը և վիճակի բարելավումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր նաև ՀՀ 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ողջ ժամանակահատվածում:


2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտի գծով (ներառյալ հիմնանորոգման, վարկային ծրագրի գծով ծախսերը, առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել են ծախսեր՝ 2012 թվականին՝ 107,570.2 մլն, 2013 թվականին՝ 111,871.8 մլն և 2014 թվականին՝ 117,588.0 մլն դրամի չափով (ՀՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 106,706.5 մլն, 2013 թվականին՝ 111,765.5 մլն դրամի չափով):

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2012 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 2.55 %-ը, 2013 թվականին՝ 2.45 %-ը և 2014 թվականին՝ 2.37 %-ը:

Գծանկար 7. 1. Պետական բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները կրթության բնագավառում 2010-2014 թվականներին (%-ը ՀՆԱ-ում)



Գծանկար 7.2. Կրթության բնագավառում պետական ծախսերը 2010-2014 թվականներին՝ գործառական դասակարգմամբ (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)



- Հանրակրթական ծրագրեր
- Մասնագիտական կրթական ծրագրեր
- Այլ ծրագրեր

Ծանոթություն. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը (հանրակրթական ուսուցում, նախադպրոցական կրթություն, ներառական կրթություն, հատուկ կրթություն և այլն), ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերը, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր:


Աղյուսակ 7. 2. Կրթության ոլորտի պետական ծախսերը 2010-2014 թվականներին՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

Խմբերի անվանումը	<< 2010 թվականի պետական բյուջե (փաստ)	<< 2011 թվականի հաստատված պետական բյուջե	ըստ << 2012-2014 թվականների ՄԺԾԾի		
			2012	2013	2014
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	97203.6	108817.6	107570.2	111871.8	117588.0
01,02 Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, Միջնակարգ ընդհանուր կրթություն	69100.6	71348.1	74695.7	79365.3	82288.7
03. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	4688.4	5039.8	5317.8	6285.6	7224.9

04. Բարձրագույն կրթություն	7400.4	7716.4	7382.2	7419.9	8296.8
05. Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	3138.5	3643.7	3650.2	3863.1	3960.8
06. Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	12875.7	21069.6	16524.3	14937.9	15816.8

Ծրագրային ժամանակահատվածի վերջում, կրթության ոլորտի ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերին բաժին կրնկնի ընդհանուր մասհանումների 94.0 %-ը, իսկ կապիտալ ծախսերին՝ 6.0 %-ը: Ընթացիկ ծախսերում գերակշռող մասը կազմում են աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

Գծանկար 7.3. Կրթության ոլորտի 2011-2014 թվականների պետական ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)



- այլ ծախսեր
- աշխատավարձ և պարտադիր սոցիալ վճարներ
- կապիտալ ծախսեր

Աղյուսակ 7. 3 Կրթության ոլորտի պետական ծախսերը 2012-2014 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող և նոր ծրագրերի

	(մլն դրամով)		
	2012թ.	2013թ.	2014թ.
Գոյություն ունեցող պարտավորությունների ընդհանուր ծախսերը	107499.8	111731.0	117588.0
Նոր նախաձեռնությունների ընդհանուր ծախսերը	70.4	140.8	
ԸՆԴԱՄԵՆԸ	107570.2	111871.8	117588.0

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը

Հանրակրթական ծրագրեր

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն

կտա ապահովելու համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների շարունակումը:

2012 թվականին նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության, միջնակարգ ընդհանուր կրթության, ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրերի գծով ծախսերը 2011 թվականի նկատմամբ կաճեն 0.7 %-ով և կկազմեն 90348.1 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 84.0 %-ը: 2013 թվականին նշված ծրագրերի գծով ծախսերը 2012 թվականի նկատմամբ կաճեն 3.3 %-ով և կկազմեն 93347.9 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 83.5 %-ը, իսկ 2014 թվականին՝ 2013 թվականի նկատմամբ ծախսերը կաճեն 4.2 %-ով՝ կազմելով 97274.9 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 82.7 %-ը:

Հանրակրթության ոլորտում պետական ծախսերի ծրագրվող աճի պարագայում՝ 2014 թվականին մեկ աշակերտի հաշվով ծախսերը 2011 թվականի համապատասխան ցուցանիշի համեմատ կաճեն ընդամենը 0,4 տոկոսով (հանրապետությունում ծնելիության անկման հետևանքով դպրոցահասակ երեխաների թիվը նվազել է, սակայն, սկսած 2011 թվականից, ինչպես 12-ամյա ուսուցման անցնելու, այնպես էլ ծնելիության որոշակի աճի հետ կապված, հանրակրթության մեջ ընդգրկված դպրոցահասակների համակազմը կաճի և 2012-2014 թվականներին այն կհասցվի, ըստ տարիների, համապատասխանաբար՝ 398.6: 400.4 և 408.4 հազարի):

Աղյուսակ 7.4. Մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը հանրակրթության ոլորտում

	2011	2012	2013	2014
Ինդեքս (2011թ. = 100)	100.0	95,5	98,3	100,4
Հուշագրային հոդվածներ				
Աշակերտների թվաքանակը (2011թ. = 100)	100.0	105,4	105,9	108.0
Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում (2011թ. = 100)	100.0	100,7	104,0	108,4

Հանրակրթության բնագավառում կշարունակվեն բարեփոխումները, որի գլխավոր ուղղություններից է կրթության բովանդակության արդիականացումը: Մասնավորապես, 2011 թվականին պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում կիրականացվի «Շախմատ» առարկայի դասավանդումը: Այն կրելու է շարունակական բնույթ և 2012-2014 թվականներին համապատասխան միջոցներ են նախատեսվել՝ ինչպես նշված առարկան դասավանդող ուսուցիչների աշխատավարձերի վճարման, այնպես էլ շախմատի դասավանդման դասագրքերի և խնդրագրքերի, ուսուցչի ձեռնարկների տպագրման նպատակով (վերջինիս գծով ըստ տարիների՝ համապատասխանաբար 94,7: 87,2 և 95,5 մլն դրամ է նախատեսվել «Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ

ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակում» ծրագրում, 2012-2013 թվականներին յուրաքանչյուր տարի 37.2 հազ. դասագրքի և խնդրագրքի, ինչպես նաև 1811 ուսուցչի ձեռնարկների, իսկ 2014 թվականին՝ 41.5 հազ. դասագրքի և խնդրագրքի տպագրման համար) :

Ավագ դպրոցների ցանցում 2011 թվականին կրնդգրկվի ևս 16 ավագ դպրոց կամ՝ ցանցում ընդգրկված դպրոցների թիվը կհասցվի 107-ի՝ դրանով ամբողջացնելով ավագ դպրոցների ցանցը: Նախատեսվում է համախառն ընդգրկվածության գործակիցն ավագ դպրոցում (ներառյալ նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը) 2013 թվականին հասցնել 89%-ի:

Հանրակրթության բնագավառում կրթության որակի բարձրացման համատեքստում կշարունակվի աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը: Մասնավորապես, 2012-2014 թվականներին նախատեսվում է՝

- Ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին կբարձրացվի 7.3 տոկոսով, միաժամանակ, հաշվի առնելով ավագ դպրոցներում մանկավարժական անձնակազմի աշխատավարձի 20% հավելումը, ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կհասցվի. 2012 թվականին՝ 118,5 հազ. դրամի, 2013 թվականին՝ 127,4 հազ. դրամի, 2014 թվականին՝ 127,5 հազ.դրամի (ուսուցիչների տարեկան աշխատավարձի չափը 2012-2013 թվականներին մեկ շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ի մակարդակը կգերազանցի 1.1 անգամ, իսկ 2014 թվականին՝ 1.02 անգամ) :

- Վարչական անձնակազմի և հաշվապահների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի բարձրացումը նույնպես կիրականացվի 2013 թվականին՝ 7.3 տոկոսով: 2012 թվականին վարչական անձնակազմի և հաշվապահների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կպահպանվի 2011 թվականի մակարդակին, այն է՝ 176.1 և 87.7 հազ.դրամ, իսկ 2013-2014 թվականներին այն կհասցվի՝ վարչական անձնակազմի գծով՝ 188.9 հազ. դրամի, հաշվապահների գծով՝ 94.1 հազ. դրամի :

- Ուսումնասիրական և տնտեսական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2013 թվականին նախատեսվում է բարձրացնել 7,7 %-ով, իսկ 2014 թվականին՝ 28,6%-ով, պայմանավորված 2013 և 2014 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի, համապատասխանաբար՝ 35,0 և 45,0 հազ. դրամի չափով սահմանմամբ :

Ծրագրային ժամանակահատվածում աշխատավարձին ուղղվող միջոցները կկազմեն հանրակրթության ոլորտում ընթացիկ ծախսերի մոտ 83.0 %-ը :

- Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է 5-6 տարեկանների ընդգրկվածության ցուցանիշը հասցնել 77,4%ի, որով պայմանավորված՝ միջոցներ կնախատեսվեն բոլոր մարզերում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության գծով: Այդ համատեքստում՝ «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն

ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը, մասնավորապես՝ 2011 թվականին 70 միկրոծրագիր կիրականացվի Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում, 2012 թվականին՝ 60 միկրոծրագիր Տավուշի, Շիրակի և Լոռու մարզերում, 2013 թվականին՝ 30 միկրոծրագիր Կոտայքի մարզում և Երևանում: Նշված ծրագրերի (բացառությամբ Երևանում իրականացվելիք ծրագրերի) շարունակականության ապահովման համար հետագա տարիներին ընթացիկ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից, որով պայմանավորված, 2012-2014 թվականների հանրակրթության ծախսերում «Նախադպրոցական կրթություն» ծրագրի գծով նախատեսվել է՝ ըստ տարիների 246,9; 423,2 և 546,5 մլն դրամ՝ ավագ նախադպրոցական տարիքի, համապատասխանաբար, 2334 ; 4001 և 5167 երեխաների կրթության գծով :

- 2011 թվականից կսկսվի ուսուցիչների ատեստավորման գործընթացը: Ատեստավորման արդյունքում որակավորման տարակարգ ստացած ուսուցիչներին նախատեսվում է աշխատավարձի հավելավճար: Նկատի ունենալով, որ տարեկան պետք է ատեստավորվի ուսուցիչների 20 տոկոսը, որոնց զգալի մասը, ակնկալվում է, կստանան որակավորման տարակարգ, միջնաժամկետ հատվածում, ըստ տարիների՝ 710,1: 1352,5 և 2057,3 մլն դրամ է նախատեսվել «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» ծրագրով:

- Կշարունակվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացը, կրթության բովանդակային և մեթոդական սպասարկումը, որի նպատակով պետական բյուջեից միջնաժամկետ հատվածում նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 491.5 մլն դրամ (նշված գումարի շրջանակներում յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի շուրջ 6.0 հազ. ուսուցիչ):

- Նախատեսվել են միջոցներ հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման, Մայքրոսոֆթի համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով (2012 թվականին արդեն Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում ընդգրկված կլինի շուրջ 1200 դպրոց): Նշված աշխատանքների իրականացման համար ըստ տարիների նախատեսվում է հատկացնել՝ համապատասխանաբար 910,5: 916,9 և 916,9 մլն դրամ :

- «Ուսում-2» համակարգի ներդրման գծով 2012 թվականին պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 51.0 մլն դրամ (մինչ այդ 67.5 մլն դրամ կհատկացվի 2011 թվականին): Այդ միջոցներով կապահովվի 1400 դպրոցներում նշված համակարգի շահագործումը:

- Զգալի միջոցներ են նախատեսվել քննությունների թեստերի, ուղեցույցերի մշակման, ավարտական քննությունների անցկացման, TIMSS-2015 միջազգային ստուգատես-հետազո-

տությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցության գծով՝ ըստ տարիների 445,9: 443,8 և 473,3 մլն դրամի չափով:

- Պետությունը շարունակելու է տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը: Տարրական դասարանների աշակերտներին դասագրքերով (ներառյալ շախմատի դասագրքերն ու խնդրագրքերը) ապահովելու նպատակով 2012-2014 թվականներին նախատեսվել է, համապատասխանաբար՝ 589,1; 581,6 և 589,8 մլն դրամ, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով՝ յուրաքանչյուր տարի՝ 120.0 մլն դրամ :

- ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով կշարունակվեն ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները, որի նպատակով յուրաքանչյուր տարի նախատեսվել է 63.2 մլն դրամ :

- Կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով նախատեսվել է՝ 2012 թվականին՝ 7500,0 մլն դրամ; իսկ 2013-2014 թվականներին՝ յուրաքանչյուր տարի 6400,0 մլն դրամ:

Միջնաժամկետ հատվածում ներառական կրթություն կիրականացվի հանրապետության 64 հանրակրթական դպրոցներում, որոնցում ընդգրկված կլինեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ըստ տարիների՝ 1856; 1899 և 1904 երեխաներ, որոնցից յուրաքանչյուր տարվա համար 347 երեխաները՝ Տավուշի մարզի 14 դպրոցներում:

Մասնագիտական կրթական ծրագրեր.

Մասնագիտական կրթական ծրագրերի (նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրեր, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր) գծով ծախսերը 2012 թվականին 2011 թվականի նկատմամբ նվազել են 12.8 %-ով՝ կազմելով 13251.5 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 12.3 %-ը (2012 թվականի ծախսերի նվազումը 2011 թվականի նկատմամբ 1.9 մլրդ դրամով պայմանավորված է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում գույքի և սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի գծով 2012 թվականին միջոցների չնախատեսմամբ): 2013 թվականին ծախսերը 2012 թվականի նկատմամբ կաճեն 7.7 %-ով՝ կազմելով 14270.0 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 12.8 %-ը, իսկ 2014 թվականին ծախսերը 2013 թվականի նկատմամբ կաճեն 12.8 %-ով՝ կազմելով 16102.2 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 13.7 %-ը:

Միջնաժամկետ հատվածում միջոցների ավելացումը հիմնականում պայմանավորված է 2011 թվականի համեմատ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության գծով ընդունելության անվճար տեղերի 50 %-ով ավելացմամբ (համաձայն Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրված ֆինանսավորման համաձայնագրով սահմանված նախապայմանների), ինչպես նաև աշխատավարձերի բարձրացման գծով միջոցների նախատեսմամբ: Մասնավորապես.

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը հաշվարկվել են 2013 թվականին՝ 7.3 % աճով, իսկ ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի գծով աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2013 և 2014 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի, համապատասխանաբար՝ 35.0 և 45.0 հազ. դրամի չափով սահմանումը :

- Բարձրագույն և հետբուհական կրթական հաստատություններում աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2013 և 2014 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 35.0 և 45.0 հազ. դրամի չափով սահմանումը: Օրդինատորների կրթաթոշակի չափը նախատեսվել է 2013-2014 թվականներին հանրապետությունում սահմանվող նվազագույն աշխատավարձի չափով :

- Մնացած հիմնարկների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 2013 թվականին հաշվարկվել են 10 % աճով :

Այլ ծրագրեր

2012 թվականին այլ ծրագրերի (Արտադպրոցական դաստիարակություն, Լրացուցիչ կրթություն, կրթական այլ ընթացիկ ծրագրեր) գծով ծախսերը 2011 թվականի նկատմամբ կաճեն 0.2 %-ով և կկազմեն 3900.2 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 3.6 %-ը, 2013 թվականին ծախսերը 2012 թվականի նկատմամբ կաճեն 5.5 %-ով՝ կազմելով 4113.1 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 3.7 %-ը, իսկ 2014 թվականին ծախսերը 2013 թվականի նկատմամբ կաճեն 2.4 %-ով՝ կազմելով 4210.9 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 3.6 %-ը:

Արտադպրոցական հաստատությունների մանկավարժական և վարչական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձերի բարձրացումը 2013 թվականին նախատեսվել է 7.3 %-ի չափով: Ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 2013 թվականին բարձրացվել են 10 տոկոսով: Ընդ որում, աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով նաև 2013 և 2014 թվականներին հանրապե-

տությամբ նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 35.0 և 45.0 հազ. դրամի չափով սահմանումը :

Կշարունակվեն աշխատանքները Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման գծով՝ յուրաքանչյուր տարի 50.0 մլն դրամի, ինչպես նաև մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով՝ յուրաքանչյուր տարի 250.0 մլն դրամի շրջանակներում :

Միջնաժամկետ հատվածում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը կիրականացվի շուրջ 28.8 հազար դպրոցականների արտաուսումնական դաստիարակության համար (երեխաների թվաքանակի գծով կապահովվի 2011 թվականի մակարդակը):

Լրացուցիչ կրթական հաստատությունների գծով ծախսերի հաշվարկում հաշվի է առնվել ինչպես աշխատավարձերի բարձրացումը, այնպես էլ վերապատրաստման, վերաորակավորման ինստիտուտներում և մասնագիտական դասընթացներում վերապատրաստվողների թվաքանակի փոփոխությունը: Աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 2013 թվականին բարձրացվել են 10 տոկոսով, ընդ որում՝ աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով նաև 2013 և 2014 թվականներին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի համապատասխանաբար՝ 35.0 և 45.0 հազ. դրամի չափով սահմանումը: Միաժամանակ, դասախոսական 1 ժամի արժեքը 2013-2014 թվականներին հաշվարկվել է 2575 դրամի չափով՝ 2011-2012 թվականների 2400 դրամի դիմաց:

Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ 2010 թվականի հոկտեմբերի 1-ից սկսել է «Դպրոցական սնունդ» եռամյա ծրագիրը: Ծրագրով նպատակադրված է.

- աջակցել ՀՀ 6 մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ տարրական դպրոցում սովորող շուրջ 50.0 հազար երեխաների համար կազմակերպելու մեկանգամյա սնունդ ուսումնական տարվա ընթացքում,
- աջակցել ՀՀ կառավարությանը՝ մշակելու դպրոցական սննդի կազմակերպման ազգային հայեցակարգ՝ այն հեռանկարով, որ ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարությունն ապահովի ծրագրի շարունակականությունը:

Ծրագրով նախատեսվում է, որ սննդամթերքի ցամաքային փոխադրման, պահեստավորման, պահպանման և բեռնման-բեռնաթափման ծախսերը 2012 թվականին 50%-ով և 2013 թվականին 100%-ով կհոգա ՀՀ կառավարությունը, որի նպատակով նշված տարիներին նախատեսվել է, համապատասխանաբար՝ 70,4 և 140,8 մլն դրամ:

7.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7.2.1 Գիտության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1. Գիտության ոլորտի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետությունում գիտությունը՝ երկրի անվտանգության ապահովման, տնտեսության զարգացման, կրթության, մշակույթի և հասարակության առաջընթացի կարևորագույն գործոն է: Չնայած գիտական կադրերի որոշ կորստի, անկախության տարիներին բավարար չափով պահպանվել է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժը, ներդրվել է պետական բյուջեից գիտական ծրագրերի և թեմաների մրցութային ու ծրագրային ֆինանսավորման համակարգը, ստեղծվել են ոչ պետական գիտական կազմակերպություններ և գիտական հիմնադրամներ, որոշ չափով ընդլայնվել է գիտական կազմակերպությունների ինքնուրույնությունը և ինքնավարությունը, ինչպես նաև միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը: Որոշակիորեն ձևավորվել է օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտը:

Գիտության զարգացման արդի համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ երիտասարդ կադրերի պատրաստման գործընթացը հետզհետե կենտրոնանում է գիտական խոշոր կենտրոնների շուրջը, որոնցում առկա է գիտատեխնիկական մեծ ներուժ, գործում են ժամանակակից գիտության, տեխնիկայի առաջավոր դիրքերում և ներառում են բնագավառի վերջին նվաճումները: Երևանի Ֆիզիկայի ինստիտուտը այդպիսի գիտական կենտրոններից է, որտեղ ձևավորվել է հարուստ ավանդույթներ և մեծ ներուժ ունեցող տարրական մասնիկների, միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների ֆիզիկայի, ճառագայթային տեխնոլոգիաների բազմաթիվ շնորհաշատ մասնագետներ, որոնք պատրաստ են իրենց գիտելիքներն ու փորձը հաղորդելու երիտասարդ կադրերին, ուսանողներին:

Ինստիտուտում լայն թափով ընթանում են միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման աշխատանքները, որոնք ներառում են բժշկական նպատակների համար ռադիոիզոտոպների լայն տեսականու արտադրության կազմակերպման գործընթացները:

2012-2014թթ ՄԺԾԾ ով բազային ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է. շարունակել Ա.Ի. Ալիսանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի գիտական գործունեության ֆինանսավորումը՝ ուղղված տարրական մասնիկների, միջուկային և տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բնագավառում տեսական և փորձարարական հետազոտություններին, արագացուցչային և կիրառական ֆիզիկայի խնդիրների զարգացմանը, որոնք հանդիսանում են ինստիտուտի հիմնական ուսումնասիրության ասպարեզները, ինչպես նաև՝ ենթակառուցվածքների պահպանմանն ու զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գիտության մեջ ներգրավված է ավելի քան 7000 մարդ: ՀՀ պետական բյուջեից բազային ծրագրերով գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական ստորաբաժանումներում ֆինանսավորվում է 3899 հաստիք (գիտական և վարչասպասարկող), պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաներով՝ 2345.5 հաստիք:

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

Հ/հ	<u>Ծառայությունների շրջանակի նկարագրություն</u>	<u>Շահառուների շրջանակի նկարագրություն</u>	<u>Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը</u>
1.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացում	Պետական գիտական և գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ու հետբուհական կրթական հաստատություններ	Ամբողջությամբ
2.	Ենթակառուցվածքների՝ գիտական կազմակերպությունների, կենտրոնների, լաբորատորիաների ստեղծում, պահպանում և զարգացում	Պետական գիտական և գիտահետազոտական կազմակերպություններ, բարձրագույն ու հետբուհական կրթական հաստատություններ	Ամբողջությամբ, մրցութային կարգով ընտրված կազմակերպություններ
3.	Հին ձեռագրերի և գիտակրթական, մշակութային այլ արժեքների պահպանում	Մատենադարան, ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ ցեղասպանության թանգարանին ստիտուտ	Ամբողջությամբ
4.	Ասպիրանտական և դոկտորանտական հետազոտությունների և կրթության իրականացում	Հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպություններում սովորողներ	Ամբողջությամբ, մրցութային կարգով ընտրված կազմակերպություններ
5.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների իրականացում	Ֆիզիկական անձինք և հետազոտական խմբեր	Ամբողջությամբ, մրցութային կարգով ընտրված կազմակերպություններ
6.	Գիտնականներին հավելավճարի տրամադրում	Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտնականներ	Ամբողջությամբ

1.2. Վերջին երկու տարիներին ոլորտի զարգացման միտումները

ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 1-ի նիստում հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները» և գիտության ոլորտի բարեփոխումների ծրագիրն ու ժամանակացույցը: Բարեփոխումների ծրագրի շրջանակներում ՀՀ Նախագահի 2007թ. հոկտեմբերի 1-ի N- Ն Հ231-Ն հրամանագրով ստեղծվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող Գիտության պետական կոմիտեն: ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային

որոշմամբ հավանության է արժանացել «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը», որտեղ ամրագրվել է 2011-2020թթ. գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականության նպատակները և ուղղությունները:

Սկսած 2011թ. իրականացվում է գիտական կազմակերպությունների ծրագրային ֆինանսավորում, այն է՝ ֆինանսավորվում է կոնկրետ ծրագիրը, իսկ հաստիքների թվաքանակի ընտրությունը պայմանավորվում է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կատարողների կազմով:

2005թ. գործողության մեջ մտած բազային ֆինանսավորմամբ ՀՀ 2009թ. պետական բյուջեից ֆինանսավորվել է հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների 85, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման 86 և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման 3 ծրագրեր: Սկսած 2010 թվականից բազային ֆինանսավորմամբ իրականացվող ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերում ընդգրկվել են նաև հիմնարար հետազոտությունների ծրագրերը: Այդպիսի միավորումը հնարավորություն է տալիս ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրին ունենալու գիտական բովանդակություն, երբ կազմակերպության ենթակառուցվածքի և նյութատեխնիկական բազայի պահպանումն, արդիականացումն ու զարգացումը պայմանավորված են բացառապես իրականացվող գիտական հետազոտություններով և մշակումներով: Իսկ կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության մեջ գործածելի արդյունքների ձեռքբերմանը և ընտրվեն մրցութային եղանակով: ՀՀ 2010թ. պետական բյուջեով ֆինանսավորվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման 141 ծրագիր: 2011թ. նախատեսվում է նաև իրականացնել կիրառական հետազոտությունների ծրագրերի մրցույթ. տնտեսության մասնավոր հատվածի կամ այլ աղբյուրների հետ համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվելու են 3 ծրագիր, յուրաքանչյուրին հատկացնելով շուրջ 60.0 մլն դրամ: Բազային ֆինանսավորմամբ 2009, 2010թթ. իրականացվել են ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման 3ական ծրագիր:

2009-10թթ. բազային ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերում գիտական աշխատողների միջին ամսական աշխատավարձը կազմել է 55.0 հազ. դրամ: Սկսած 2009-թից շուրջ երկու անգամ ավելացել են բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում տնտեսական և այլ ծախսեր հոդվածով նախատեսված ֆինանսական ծավալները: Եթե 2008թ. աշխատավարձի ֆոնդին հատկացվել էր ընդհանուրի 87%, իսկ տնտեսական ծախսերին՝ 13%, ապա 2009, 2010թթ. աշխատավարձի ֆոնդը կազմել է 75%, տնտեսական ծախսերը՝ 25%: Տնտեսական և այլ ծախսերի ավելացման արդյունքում գիտական կազմակերպությունները հնարավորություն են ստացել միջոցներ հատկացնել ենթակառուցվածքների արդիականացմանը, գիտական սարքերի,

սարքավորումների ու փորձարարական նյութերի ձեռքբերմանը, բարելավել աշխատանքային պայմանները, մասնավորապես՝ ջեռուցումով ապահովել շենքերն ու շինությունները: Առավել ակնառու է Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի բազային ֆինանսավորման ծավալները ըստ առանձին տարիների, որոնք աճման դրական միտում են ունեցել: 2005 թվականին այն կազմել է 133,2 մլն դրամ, իսկ 2010-թին՝ 2005թ.-ի նկատմամբ ավելացել է 116,7 մլն դրամով կամ 87,6%-ով: Սկսած 1995 թվականից՝ ինստիտուտը ստանում է բազային ֆինանսավորում երկու խոշորագույն փորձարարական բաժանմունքները՝ էլեկտրոնային օդակաձև արագացուցիչը և տիեզերական ճառագայթների հետազոտման «ԱՐԱԳԱԾ» և «ՆՈՐԱՄԲԵՐԴ» կայանները սարքին վիճակում պահելու համար: Դա ստեղծեց լուրջ նախադրյալներ 1998 և 2005 թվականներին երկարատև կանգառից հետո արագացուցչի վերաթողարկման և գիտափորձերի հաջող կատարման համար:

Վերջին տարիներին շարունակական ձևով կատարվել են արագացուցչի արդիականացման և նորացման լուրջ աշխատանքներ, հաջողությամբ փորձարկվել են արագացման նոր ռեժիմներ ֆիզիկական գիտափորձերի համար, ինչը թույլ է տվել ինստիտուտին պահպանել արագացուցչային առաջատար կենտրոնի իր վարկանիշը և զարգացնել գիտատեխնիկական համագործակցությունները աշխարհի խոշոր միջազգային կենտրոնների հետ:

Հաշվի առնելով «Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ուղղությունների վերաբերյալ միջազգային փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունները, Հայաստանի Հանրապետությունում միջազգային մակարդակի գիտական դպրոցների զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովման համար, ՀՀ Կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի համար 758-Ն որոշման համաձայն «Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվեց որպես «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն և նախատեսվեց 2011թ.-ին և հաջորդ տարիներին ՀՀ պետական բյուջեով ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համար առանձին տողով հատկացնել առնվազն 575.6 մլն դրամ գումար՝ կազմակերպությունում հիմնարար և կարևորագույն նշանակության կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, միջազգային գիտական համագործակցության իրականացման համար:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը դրամաշնորհայինի վերածելու, ինչպես նաև ընդհանրապես գիտության ոլորտում ծրագրերի ֆինանսավորման իրական մրցութային պայմանների ապահովման հիմնական նախապայմանը գիտական անկախ փորձագիտական համակարգի ձևավորումն ու ներդրումն է: Այդ համակարգի ձևավորման աշխատանքները ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն հիմնականում ավարտել է 2009թ.: Ներկայում անկախ փորձագիտական համակարգում ընդգրկված են ՀՀ-ից և օտարերկրյա պետություններից շուրջ 1350 գիտնական:

Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային ծրագրային ֆինանսավորման նոր կարգերը, ինչպես նաև գիտական փորձաքննության և գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձևավորման, գիտական ծրագրերի ու թեմաների հայտերի երաշխավորման և հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձևավորման ու աշխատանքի կազմակերպման կարգերը:

2008թ. պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում են ստացել 708 գիտական թեմա՝ առավելագույնը 3 տարի ժամկետով: 2009թ. ֆինանսավորվել է 708 թեմա, 2010թ.՝ 705 թեմա: 2011թ-ից սկսած պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածվել է դրամաշնորհայինի և նախատեսվում է տարեկան ֆինանսավորել շուրջ 100-120 գիտական թեմա՝ սահմանելով կատարման ժամկետը մինչև 2 տարի, կատարողների կազմը 25 հոգի, ֆինանսական ծավալները՝ տարեկան առավելագույնը 6.5 մլն դրամ: Թեմաների ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ անկախ գիտական փորձաքննության հիման վրա:

Սկսած 2009թ. ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվել են տարեկան 6ական պետական նպատակային ծրագրեր: Դրանց շարքում առանձնանում է տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում իրականացվող նոր նախաձեռնությունը՝ հայկական ազգային ԳՐԻԴ միջավայրի ստեղծման պետականնպատակային ծրագիրը (ֆինանսավորման ծավալները՝ տարեկան 25.0 մլն դրամ): Ծրագիրը սկսվել է 2009թ. և նախատեսված է միավորելու գիտական կազմակերպություններում և բուհերում առկա բարձր արտադրողականությամբ հաշվողական, ծրագրային, ցանցային և մասնագիտական ռեսուրսներն ազգային ԳՐԻԴ ենթակառուցվածքի ստեղծման համար: ԳՐԻԴի մեջ ընդգրկվելու են ոչ միայն գիտական կազմակերպությունները և բուհերը, այլև ազգային սեյսմիկ ու օդերևութաբանական ծառայությունների կազմակերպությունները:

Սկսած 2009թ.-ից՝ էականորեն ընդլայնվել է տարածաշրջանային ծրագրերի մասնակցության աստիճանը: Մասնավորապես՝ ֆինանսավորվել է ՀՀ-ի մասնակցությունը Սևծովյան միջկապի (Bleak Sea Interconnection, BSI) նախագծին, որը իրականացվում է Եվրոպական 7-րդ շրջանակային ծրագրի (FP7) կողմից և ուղղված է հարավկովկասյան երկրների ազգային գիտահետազոտական ու կրթական ցանցերի (NREN) միջև գերարագ մայրուղային ցանց և համաեվրոպական հետազոտական ու կրթական GEANT2 ցանցի հետ կապ ստեղծելուն: Այդ նպատակի համար հատկացվել է տարեկան 50.0 մլն դրամ:

2009թ. ֆինանսական աջակցություն են ստացել 23 գիտաժողով (20041.8 հազ. դրամ), երիտասարդ գիտնականների 4 ամառային դպրոց (6.6 մլն դրամ), 41 գիտական գործուղում (20.0 մլն դրամ), այդ թվում՝ 11 գործուղման են մեկնել երիտասարդ գիտնականներ: 2010թ. ֆինանսավորվել են 28 գիտաժողով (20.0 մլն դրամ), երիտասարդ գիտնականների 3 ամառային դպրոց (4.5 մլն

դրամ), 68 գիտական գործուղում (23.3 մլն դրամ), այդ թվում՝ 9 գործուղման են մեկնել երիտասարդ գիտնականներ:

2009թ. ներդրվել է գիտական ծրագրերի և թեմաների համաֆինանսավորման սկզբունքը, երբ առաջնահերթությունը տրվում է տնտեսության մասնավոր հատվածի, օտարերկրյա պետությունների կամ տարբեր միջազգային կազմակերպությունների հետ համատեղ կատարվող ծրագրերին: Համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող ծրագրերին նպաստելը պետության որդեգրած քաղաքականության կարևորագույն մասն է. այն ավելացնում է գիտությանն ուղղված ֆինանսական միջոցների ծավալները և, հետևաբար, էապես բարձրացնում է գիտական արդյունքների քանակն ու որակը: Բացի այդ, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերը նպաստում են ՀՀ գիտնականների ինտեգրմանը միջազգային գիտական և գիտակրթական տարածք, ստեղծում բարենպաստ պայմաններ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու գործում, ինչի արդյունքում զգալիորեն ավելանում են միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանն ուղղված ֆինանսական միջոցները:

2009թ. կազմակերպվել է համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվող երկամյա ծրագրերի երկու մրցույթ: Առաջինը Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) հետ համատեղ մրցույթն էր, որի արդյունքում ֆինանսավորվել են համատեղ հետազոտությունների 9, համատեղ լաբորատորիաների 2 և 1 համատեղ խմբի երկամյա ծրագրեր (ընդամենը՝ տարեկան 30.2 մլն դրամ): Երկրորդը՝ երիտասարդ գիտնականների հետազոտությունների աջակցության «պիլոտային» ծրագիրն էր, որը իրականացվում էր Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի և ԱՄՆի քաղաքացիական հետազոտությունների հիմնադրամի հետ միասին և ֆինանսավորվել են 11 անհատական (ասպիրանտական) և երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) 10 խմբային հետազոտությունների երկամյա ծրագրեր (ընդամենը՝ տարեկան 36.4 մլն դրամ):

Սկսած 2008թ-ից կրճատվել է պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների ընդհանուր ֆինանսական ծավալները: Այդ կրճատումը պայմանավորված է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից իրականացված մոնիթորինգով, որի արդյունքում բացառվել է կրկնակի հավելավճարների տրամադրումը: 2008թ. այդ խնայումը կազմել է 29.2 մլն դրամ, որը հատկացվելիք ընդհանուր գումարի 5.3%-ն է: Սկսած 2008թ-ից՝ հավելավճարների հատկացումը կատարվում է եռամսյակային տվյալների ճշգրտման հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս արագ արձագանքել բոլոր փոփոխություններին:

2010թ. իրականացվել է ՀՀ-ում գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ընդգրկված կազմակերպությունների երկրորդ անձնագրավորումը՝ ոլորտում ներգրավված մարդկային և

նյութական ռեսուրսների, ինչպես նաև գիտական «արտադրանքի» տվյալների 2009թ. ստեղծված շտեմարանի լրամշակման նպատակով: Տվյալների այդպիսի շտեմարանը հնարավորություն է տալիս համապարփակ տեղեկատվություն ունենալու գիտության ոլորտի օբյեկտիվ իրավիճակի մասին, իրականացնելու գիտական կազմակերպությունների գործունեության մոնիթորինգ, ռեյտինգավորելու գիտական կազմակերպությունները՝ ըստ գործունեության արդյունավետության և այլն:

2009-2010թթ. ստեղծվել և պարբերաբար լրամշակվում է օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների տվյալների շտեմարան, որը 2010թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ պարունակում է 556 գիտնականի մասին տեղեկատվություն (գործունեության բնագավառ, հրապարակումներ, հեղինակային իրավունքներ, տեխնիկական մշակումներ և այլն): Դրանց մեծ մասը ներգրավվել է 2011-2012թթ. պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հայտերի փորձաքննության մեջ: Բացի դա, 2010թ. ստեղծվել է հանրապետության գիտական կազմակերպությունների և բուհերի ու օտարերկրյա պետություններում ապրող հայազգի գիտնականների համագործակցության ծրագրերի տվյալների շտեմարան: Անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ շտեմարանները ստեղծվել են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից՝ առանց լրացուցիչ ֆինանսական հատկացումների:

2009-2010թթ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային ծրագրային հետազոտությունների ֆինանսավորումների ծավալները ներկայացված են ստորև:

Հ/հ	Ոլորտի ֆինանսավորման ծավալները 2009-2010թթ. ընթացքում Ծրագրի անվանումը	Ֆինանսական ծավալները (մլն. դրամ)	
		2009թ.	2010թ.
1.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ	2495.5	10.8
2.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում	2390.2	4896.0
3.	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	241.6	241.6
4.	Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	1546.8	1546.8
5.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային ծրագրային հետազոտություններ	1071.8	1073.6
6.	Գիտական կադրերի պատրաստում	96.8	96.8
7.	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	529.9	529.9

1.3. Հիմնական խնդիրները

Գիտության ոլորտում միասնական քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման գործում առաջնային լուծում պահանջող հիմնական խնդիրներն են՝

- գիտության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման նպատակով գիտության ոլորտի պետական կառավարման միասնական մարմին՝ համապատասխան լիազորությունների տրամադրման հարցը,

- գիտության զարգացման առաջիկա 10-15 տարիների ռազմավարական ծրագրի ընդունման հարցը,

- գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացումը,

- գիտական ներուժի նպատակային վերարտադրության ապահովումը,

- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման, ծրագրային ֆինանսավորման ձևերի հստակեցման, ծրագրերի ընտրությունն իրապես մրցութով ապահովելը,

- գիտության և տեխնիկական առաջընթացին մասնավոր կապիտալի մասնակցության ապահովումը,

- գիտական արդյունքի ապրանքայնացման և այն արտաքին ու ներքին շուկաներ դուրսբերման համար ռիսկային կապիտալի ստեղծումը,

- գիտատեխնիկական գործունեության ասպարեզում միջազգային համագործակցության ընդլայնումը:

7.2.2 Գիտության ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1.Նպատակները

Գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումն է: Այդ գործընթացում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը:

Բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպման, գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման, նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղություններով:

2.2. Գերակայությունները

Հ/հ	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2012թ.	2013թ.	2014թ.	
1.	Գիտության ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում			Առաջնահերթ քայլերից է գիտության ոլորտի կառավարման համակարգի արդիականացումը, պետական պատվերի ձևավորման ու տեղադրման, գիտական հետազոտությունների կազմակերպման, գիտական արդյունքի ստացման ու ներդրման մեխանիզմների հստակեցումը:
2.	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, ֆինանսավորման ծավալների ավելացում			Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հիմնական մեխանիզմը գիտական ծրագրերի և թեմաների ընտրության և ֆինանսավորման իրական մրցութային պայմանների ապահովումն է: Պահպանելով գիտության ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով՝ ծրագրային ֆինանսավորման սկզբունքով և հասցեագրված: Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերում պետք է ընդգրկվեն նաև հիմնարար հետազոտությունների ծրագրերը, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպության նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի պահպանումը, արդիականացումն ու զարգացումը պայմանավորվելու բացառապես իրականացվող գիտական հետազոտություններով և մշակումներով: Այդ ծրագրերը պետք է մշակվեն համապատասխան գերատեսչությունների, ՀՀ ԳԱԱԻ հետ միասին՝ ըստ գիտական կազմակերպության պատկանելության: Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության մեջ գործածելի արդյունքների ձեռքբերմանը և ընտրվեն մրցութային եղանակով: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը հատկացվելու է որպես դրամաշնորհ՝ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններից բխող և իրենց կարևորությամբ ու բովանդակային օրիգինալությամբ առանձնացող խնդիրների լուծման համար, իսկ թեմաների ընտրությունն իրականացվելու է մրցութային կարգով՝ անկախ գիտական փորձաքննության արդյունքների հիման վրա: Պետական նպատակային ծրագրերը պետք է ուղղված լինեն առավելապես կիրառական բնույթի խնդիրների լուծմանը՝ համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում: ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտի ֆինանսական հատկացումների ներքին կառուցվածքը պետք է լինի այնպիսին, որ ապագայում բազային ֆինանսավորման համար հատկացվի, միջինում, ընդհանուրի 50%, նպատակային ֆինանսավորմանը՝ 35% և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը՝ 15%: Ծրագրային ֆինանսավորման մեջ անհրաժեշտ է ապահովել, միջինում, 55% աշխատավարձի մասնաբաժին, իսկ տնտեսական և այլ ծախսերի համար՝ 45%: 2012-2014թթ. նախատեսվում է իրականացնել պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ տարեկան շուրջ 100-150 գիտական թեմա՝ ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի N 640-Ն որոշմամբ սահմանված ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների շրջանակներում:
3.	Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ (կառուցվածքային) բարեփոխումների իրականացման նպատակով պետք է միավորել միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպություններն անկախ գերատեսչական պատկանելությունից՝ ներդնելով գիտության կառավարման ժամանակակից մեթոդներ: Անհրաժեշտ է գիտական կազմակերպություններում հստակեցնել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները՝ դրանցում մի կողմից արմատավորելով ժամանակակից մենեջմենթ, մյուս կողմից՝ վարչական ազդեցությունից հանելով գիտական քննարկումների ու որոշումների ընդունման գործառույթները՝ գիտական ղեկավարումն իրականացնելով տվյալ ուղղության գիտական ղեկավարի միջոցով: Գիտական			

Հ/հ	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2012թ.	2013թ.	2014թ.	
				<p>կենտրոնների ստեղծման համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի N 1555-Ն «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» որոշումը: 2009-2010թթ. մշակվել են 4 գիտական կենտրոնների ձևավորման ծրագրեր, 2010թ. ստեղծվել է 1 գիտական կենտրոն («Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 1051-Ն որոշում):</p> <p>ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 24-ի N 878-Ն «ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշումով նախատեսվում է 2011թ. ձևավորել 2 նոր գիտական կենտրոններ, 2012թ.՝ իրականացնել 4 երկամյա ծրագրերի կատարման մոնիթորինգ և հաստատել ևս 2 նոր երկամյա ծրագիր: ՀՀ կառավարության նշված որոշումով նախատեսվում է 2012թ. իրականացնել ՀՀ ԳԱԱ-ի գիտական կազմակերպությունների զարգացման հինգ ծրագրերի արդյունքների գնահատում և ամփոփում, գիտահետազոտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում համագործակցության և ինտեգրման 5 ծրագրերի արդյունքների գնահատում:</p>
4.	Գիտական ներուժի վերարտադրության և երիտասարդացման ապահովում			<p>Գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը: Պետական գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների միջին տարիքը 2010թ. դրությամբ կազմում է 56տ.՝ գիտությունների թեկնածուներինը՝ 52տ., դոկտորներինը՝ 66տ.: Ընդ որում, զգալի է միջին սերնդի պակասը՝ 3650 տարեկանները կազմում են ընդհանուրի 16%: Գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝</p> <p>ա) ասպիրանտական կրթության բարեփոխումների իրականացում՝ ձևի, բովանդակության հստակեցումով և արդյունավետության գնահատման ժամանակակից մեխանիզմների կիրառումով,</p> <p>բ) գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների իրականացում՝ ժամանակակից գիտության պահանջներին համապատասխան և օտարերկրյա պետություններում գործող համակարգերի հետ համադրելի գիտական աստիճանաշնորհման համակարգի ձևավորման նպատակով,</p> <p>գ) երիտասարդ գիտնականներին (մինչև 35 տարեկան՝ գիտության թեկնածուների համար և մինչև 40 տարեկան՝ գիտության դոկտորների համար) հատկացվող հավելավճարի կրկնապատկում 2013թ.,</p> <p>դ) երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության դրամաշնորհային մրցույթների կազմակերպում՝ 2012թ, 2013թ. և 2014թ. համապատասխանաբար 20, 25 և 30 դրամաշնորհ:</p>

7.2.3 ՄԺԾԾ Ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գիտության ոլորտի պետական կառավարման միասնական համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է կառավարման բոլոր մակարդակներում իրականացնել գործառույթների ճշգրտում ու հստակեցում, այնուհետև այդ գործառույթները վերապահել համապատասխան կառավարման մարմիններին և կազմակերպություններին:

«Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը ենթադրում է պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում՝ 2010թ. գիտության բյուջեն եղել է 8395.6 մլն դրամ՝ ՀՆԱ-ի մոտ 0.24%ը: Գիտությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ «Կ-ում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու և դրա առաջընթաց զարգացման համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման անհրաժեշտությամբ: Բացի այդ, գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը (ինչպես պետական բյուջեից, այնպես էլ տնտեսության մասնավոր հատվածից) զգալիորեն կավելացնի գիտական արդյունքների առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի այդ արդյունքների ներդրմանը տնտեսության մեջ, հնարավորություն կտա զարգացնելու ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

«Կ 2011թ. պետական բյուջեով գիտության ոլորտի համար նախատեսվել է 9433.1 մլն դրամ:

Համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» «Կ օրենքի՝ նախատեսվում է գիտությանն ուղղված միջոցների ծավալները ավելացնել պետական բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարի չափով (2012թ. այն կկազմի 9880.8 մլն դրամ, 2013թ. 10842.0 մլն դրամ և 2014թ. 11940.0 մլն դրամ):

2012-2014թթ. շարունակվելու են «Կ պետական բյուջեից ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ) և պետական նպատակային ծրագրային ֆինանսավորումները: Գիտության ոլորտի ֆինանսավորումը իրականացվելու է ծրագրային սկզբունքով և բացառապես մրցութային կարգով՝ գիտական ծրագրերով և թեմաներով: Ընդ որում, գիտական գործունեության բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում կմտցվի որոշակի հստակեցում: Այն է՝ գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերում միավորել հիմնարար հետազոտությունների ծրագրերը: Այդպիսի միավորումը հնարավորություն կտա ապահովելու:

- գիտական կազմակերպության նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի արդիականացումը, պայմանավորելու իրականացվող գիտական հետազոտությունների և մշակումների զարգացումը,

- գիտական կազմակերպությունում բացառելու իրականացվող ծրագրերում և թեմաներում գիտական թեմատիկաների կրկնությունները,

- բարձրացնելու գիտության ոլորտին հատկացվող պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Հիմնարար հետազոտությունների ծրագրերի ընտրությունը իրականացվելու է ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ: Կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերը ուղղված են լինելու տնտեսության մեջ օգտագործվելիք գիտելիքների ձեռքբերմանը, իսկ դրանց նախագծերի ընտրությունը կատարվելու է անկախ փորձաքննության հիման վրա: Ինչ վերաբերում է պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը, ապա, 2011թ. սկսած, այն վերածվելու է դրամաշնորհայինի, և թեմաների ընտրությունը կատարվելու է բացառապես մրցութային կարգով՝ անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա:

Նպատակային-ծրագրային ֆինանսավորումը ուղղվելու է գերատեսչությունների կողմից մշակված հիմնախնդիրների լուծմանը, իսկ ՀՀ կառավարություն ներկայացվելիք հիմնախնդիրների ցանկի ընտրությունը իրականացվելու է համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովի կողմից: ՀՀ կառավարության կողմից հաստատված հիմնախնդիրների լուծմանն ուղղված նպատակային ծրագրերի նախագծերի ընտրությունն իրականացվելու է բացառապես մրցութային կարգով՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ ծրագրերին միջոցները հատկացվելու են որպես դրամաշնորհ, իսկ թեմաների ընտրությունը կատարվելու է բացառապես մրցութային կարգով՝ անկախ գիտական փորձաքննության արդյունքների հիման վրա: Յուրաքանչյուր թեմայի իրականացման ժամկետը կազմելու է մինչև 2 տարի, իսկ կատարման գումարը՝ տարեկան առավելագույնը 6.5 մլն դրամ: 2012թ. նախատեսվում է իրականացնել նաև լրացուցիչ շուրջ 20 թեմայի ֆինանսավորում՝ հայագիտության բնագավառում: Հետևաբար պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող թեմաների համար 2012թ. անհրաժեշտ է նախատեսել 933.3 մլն դրամ, 2013թ.ին՝ 1026.6 մլն դրամ և 2014թ.՝ 1026.6 մլն դրամ: Նախատեսվում է շարունակել գիտության երիտասարդացմանն ուղղված քաղաքականությունը, մասնավորապես՝ 2009թ.-ից սկսված երիտասարդ գիտնականներին մրցութային կարգով գիտական դրամաշնորհների հատկացման նախաձեռնությունը: Ընդ որում, անկախ գիտական փորձաքննության արդյունքում կշարունակվի աջակցությունը ինչպես անհատ ասպիրանտ-երիտասարդներին, այնպես էլ երիտասարդ գիտնականների խմբերին: Այդ նպատակով ՀՀ 2011թ. պետական բյուջում նախատեսվել է 91.0 մլն դրամ: 2012թ.

նախատեսվում է պահպանել այդ ծավալը, 2013-14թթ. համար 105.0 մլնդրամ՝ յուրաքանչյուր տարվա համար:

7.2.4 Ոլորտի գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2011-2014թթ. ժամանակահատվածի համար

Աղյուսակ . Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2011-2014թթ. ծախսերի կանխատեսում (ամփոփ)

(մլն դրամներով)

		2011թ.	փոփոխությունը %ով	2012թ.	փոփոխությունը %ով	2013թ.	փոփոխությունը %ով	2014թ.
	Գիտություն /առանց կապիտալ ծախսերի/, ընդամենը	9433.1	4.7	9880.8	9.7	10842.0	10.1	11940.0
	այդ թվում՝							
1	Պայմանագրային (թեմատիկ)	820.4	13.8	933.3	10.0	1026.6	0.0	1026.6
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	8.7		9.4		9.5		8.6
2	Բազային	6833.7	0.4	6808.5	13.4	7721.1	12.3	8668.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	72.4		68.9		71.2		72.6
3	Նպատակային ծրագրային	1249.1	10.0	1374.0	10.0	1511.4	10.0	1662.5
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	13.2		13.9		13.9		13.9
4	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	529.9	0.0	529.9	10.0	582.9	0.0	582.9
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	5.6		5.4		5.4		4.9

ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

8.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8.1.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետությունում առողջապահության ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, ախտորոշումը և բուժումը, բուժօգնության մատչելիության բարձրացումը և որակի ապահովումը:

Բնակչության առողջության պահպանման և բարելավման նպատակով առողջապահության ոլորտում իրականացվում են բնակչության առողջության առաջնային պահպանման, հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովման, մոր և մանկան առողջության պահպանման, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, ինչպես նաև տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելմանը և այլ ծառայությունների մատուցմանն ուղղված ծրագրեր:

Մատուցվող հիմնական ծառայությունների շրջանակը ամփոփվում է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 8.1 Առողջապահության ոլորտում մատուցվող հիմնական ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1	Բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովում	ՀՀ ամբողջ բնակչություն	Պետության կողմից անվճար արտահիվանդանոցային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության և ծառայությունների մատուցում
2	Բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովում	ՀՀ ամբողջ բնակչություն	Ամբողջությամբ
3	Մոր և մանկան առողջության պահպանման ապահովում	ՀՀ տարածքում բնակվող կանայք և երեխաներ	Վերարտադրողական տարիքի կանանց հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում, ինչպես նաև մինչև 18 տարեկան երեխաներին ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության և մինչև 7 տարեկան երեխաներին հիվանդանոցային բուժօգնության տրամադրում՝ ծառայությունների ողջ ծավալով, իսկ

			մնացած ծառայությունների մասով՝ մասնակի
4	Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովում	ՀՀ տարածքում բնակվող բոլոր քաղաքացիները	Ըստ սահմանված ծառայությունների մասով ամբողջությամբ
5	Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բժշկական օգնության ապահովում	Պետական պատվերի շրջանակներում անվճար հիվանդանոցային բուժօգնությունից օգտվում են միայն ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշմամբ և հետագա փոփոխություններով հաստատված բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձինք	Ըստ սահմանված ծառայությունների մասով ամբողջությամբ
6	Բնակչությանը արտոնյալ և անվճար պայմաններով դեղերի ապահովում (Հիմք՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի հոդված 18)	ՀՀ բնակչության խմբեր (Հիմք՝ ՀՀ կառավարության 23.11.2006թ. N 1717-Ն որոշմամբ հաստատված ցանկեր)	Անվճար հատկացվող դեղերի մասով՝ ամբողջությամբ, արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի մասով՝ մասնակի

8.1.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

8.1.2.1. Բնակչության առողջության առաջնային պահպանում

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը դիտարկում է որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք, քանզի այն հանդիսանում է բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության հիմնական օղակը և ազգային առողջապահության համակարգի զարգացման ու բարեփոխումների ամենաօպտիմալ ճանապարհը: Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի վերջին տարիների դրական փորձը ցույց է տվել, որ առաջնային օղակի զարգացումը հնարավորություն է ընձեռել ապահովել բնակչության համար բուժօգնության մատչելիությունը և այդ հարցում սոցիալական արդարության ու հավասարության սկզբունքների պահպանումը: Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների միջին տարեկան թիվը մեկ բնակչի հաշվով 2006 թվականի 2,8-ի համեմատ՝ 2009 թվականին կազմել է 3,5:

Հանրապետությունում առաջնային օղակի բարեփոխումների հիմնական մասն ուղղված է եղել ընտանեկան բժշկության՝ որպես կառուցվածքային առավել արդյունավետ և նպատակահարմար

մողելի, ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Վարկային ծրագրերի շրջանակներում արդեն մասնագիտացել են 1548 ընտանեկան բժշկներ և 1617 ընտանեկան բուժքույրեր:

Հանրապետության 255 գյուղական առողջության առաջնային պահպանման հաստատություններում ամբողջությամբ ներդրվել է ընտանեկան բժշկության համակարգը և այդ բոլոր հաստատություններն ապահովված են բուժսարքավորումներով, համակարգչով և համակարգչային ծրագրերի փաթեթով:

Սակայն, եթե գյուղական վայրերում ընտանեկան բժշկության ինստիտուտը կարելի է համարել կայացած, ապա քաղաքներում /հատկապես Երևանում/ այն դեռևս որոշակի բարելավման անհրաժեշտություն ունի: Որպես հիմնական թերություն հանդիսանում է անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և շենքային պայմանների բացակայությունը: Քաղաքային պոլիկլինիկաներում ընտանեկան բժշկության համակարգի կայացման տեսանկյունից կարևորվում է ընտանեկան բժշկության խմբային պրակտիկաները, որոնք աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված սպասարկվող (գրանցված) բնակչության թվի ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա:

8.1.2.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման բնագավառում: 2010 թվականին շարունակվել է հանրային առողջության և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության հետագա ձևավորումը և մշակումը, իրավական դաշտի լրամշակումը: Այդ նպատակով մշակվել են բնակչության առողջության պահպանման, վարակիչ, մասնագիտական, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառման հարցերը կանոնակարգող մի շարք իրավական ակտեր, սանիտարական նորմեր և կանոններ, մեթոդական ցուցումներ, հրահանգներ, կազմակերպվել են տարբեր թեմաներով սեմինար դասընթացներ:

Վերջին տարիներին հանրապետությունում կանխարգելման համալիր միջոցառումների իրականացման շնորհիվ որոշ վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը

բարելավվել է: 2010 թվականին չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են դիֆթերիան, սուր պոլիոմիելիտը, կարմրախտը, մալարիան, կատաղությունը, սիբիրյան խոցը, խոլերան, ռիկետցիոզները (այդ թվում բժավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն: Հայաստանը՝ ի թիվս եվրոպական այլ երկրների, ՄԱԿ-ի Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից դեռևս 2002 թվականից հավաստագրվել և շարունակում է մնալ որպես պոլիոմիելիտից ազատ գոտի: Մի շարք վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ համաճարակային պարոտիտի, լեպտոսպիրոզի, մենինգակոկային վարակներով հիվանդացությունը 2010 թվականին 2009 թվականի համեմատ եղել է նույն մակարդակի վրա:

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակը պայմանավորված է ազգաբնակչության նպատակային խմբերի պատվաստումների գործընթացում բարձր ընդգրկումով: Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է կարմրուկի և կարմրախտի լրացուցիչ պատվաստումների միջոցառում, որի ընթացքում պատվաստվել է ենթակա ազգաբնակչության 96%-ը: Միջոցառման հաջող իրականացումը առաջին կարևոր ձեռքբերումն է ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության՝ ուղղված Հայաստանում առաջիկա տարիների ընթացքում կարմրուկի և կարմրախտի տեղական դեպքերի վերացմանը: «Հայաստանի Հանրապետությունում տեղական մալարիայի վերացման 2006-2010 թվականների նպատակային ծրագրի» համաձայն իրականացված համալիր կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների արդյունքում 2006 թվականից հանրապետությունում տեղական մալարիայի դեպքեր չեն արձանագրվել: Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ Հայաստանի Հանրապետությունը որպես մալարիայից ազատ գոտի վկայագրման գործընթաց իրականացնելու համար:

Յուրաքանչյուր տարի իրականացվում է գրիպի և սուր շնչառական վարակների մոնիտորինգ, որի համաձայն 2010 թվականի ընթացքում նշված հիվանդությունների աճ չի գրանցվել և 2009 թվականի հետ համեմատ՝ գրիպով և սուր շնչառական վարակներով հիվանդացությունը նվազել է գրեթե 1,7 անգամ:

Բնակչության իրազեկման և բժշկահիգիենիկ գիտելիքների բարձրացման նպատակով իրականացվել են լայն քարոզչական աշխատանքներ զանգվածային լրատվամիջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, մամուլ և այլն) տարբեր վարակիչ հիվանդությունների (գրիպ, թոչնի գրիպ, կարմրուկ, աղիքային վարակիչ հիվանդություններ և այլն), համաճարակային իրավիճակի և բնակչության շրջանում կանխարգելիչ աշխատանքների, սննդային գործոնով պայմանավորված թունավորումների (բոտուլիզմ, սնկերով թունավորում) և աղիքային վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերի շուրջ:

8.1.2.3. Մոր և մանկան առողջության ապահովումը


2008 թվականին ներդրվել և հաջողորոջ տարիներին շարունակվել է հաջողությամբ իրականացվել «Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման ծրագիրը»: Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման ծրագրի շրջանակներում լրացուցիչ ֆինանսական ներդրումները հնարավորություն տվեցին շուրջ 2 անգամ բարձրացնել ծննդաբերությունների հետ կապված գները, պետության կողմից այդ ծառայությունների դիմաց բուժհաստատություններին փոխհատուցվող գումարները մոտեցնել իրական ծախսերին և 3-4 անգամ բարձրացնել բուժաշխատողների աշխատավարձը, ինչը զգալիորեն նպաստեց ծրագրի շրջանակներում դրված նպատակների իրագործմանը՝ ծննդատներում ստվերի առավելագույնս կրճատմանը և բնակչության համար ծննդօգնության իրապես անվճար ու մատչելի ծառայությունների մատուցմանը:

Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով 2011 թվականի հունվարի 1-ից ներդրվեց մինչև 7 տարեկան երեխաների պետական հավաստագրի համակարգը, որի համար երաշխիք հանդիսացավ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով առողջապահության ոլորտին նախատեսված լրացուցիչ 3 մլրդ դրամը: Հավաստագրի համակարգի ներդրմամբ, երեխաներին մատուցվող հիվանդանոցային ծառայությունների իրականին մոտ արժեքի փոխհատուցման և հետևաբար բուժանձնակազմի աշխատավարձերի շուրջ 2 անգամ բարձրացման միջոցով հնարավոր կլինի բարելավել երեխաների հիվանդանոցային օգնության մատչելիությունը և որակը, կրճատել մանկական հիվանդանոցային մահացությունը և նվազեցնել համակարգում տեղ գտած ոչ պաշտոնական վճարումների գործելակերպը:

Ծննդօգնության հավաստագրի ներդրման շնորհիվ հանրապետությունում զգալի բարձրացել է նախածննդյան հսկողության վերցրված հղիների և ծնելիության ցուցանիշների աճը: Վերջին տարիներին հանրապետությունում շուրջ 35%-ով բարձրացել է հղիների վաղ հաշվառման (նախածննդյան հսկողություն մինչև հղիության 12 շաբաթական ժամկետը) ցուցանիշը: Բարելավվել են բժշկադեմոգրաֆիկ հիմնական ցուցանիշները, մասնավորապես նկատվել է ծնելիության որոշակի աճ, իսկ մանկական մահացության ցուցանիշը նվազել է:

Այսպես՝ ծնելիության ցուցանիշը 1000 բնակչի հաշվով 2010 թվականին՝ 1990 թվականի համեմատ նվազել է 22.5-ից մինչև 13.8-ի: Նույն ժամանակաշրջանում ընդհանուր մահացությունը աճել է՝ 1990 թվականի 1000 բնակչի հաշվով 6.2-ից 2010 թվականին հասնելով մինչև 8,6-ի, իսկ բնակչության բնական աճի ցուցանիշը նվազել է 3 անգամ՝ համապատասխանաբար 16.3-ից նվազելով մինչև 5.2-ի: Միննույն ժամանակ 2002 թվականից սկսած նկատվում է ծնելիության ցուցանիշի աճ:

Գծանկար 8.1 Կենդանի ծնվածների թվաքանակը 1000 բնակչի հաշվով




Շնորհիվ վերարտադրողական առողջության բարելավման ոլորտում ձեռնարկված կանխարգելիչ ծրագրերի, մասնավորապես՝ 15 տարեկան աղջիկների համալիր հետազոտման, հղիության արհեստական ընդհատումների և սեռավարակների կանխարգելման, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմանը, հաջողվել է անպտուղ ամուսնության հաճախականությունը 1999 թվականի 31.8%-ից նվազեցնել շուրջ 2 անգամ, 2010 թվականին իրականացված հետազոտության տվյալներով այն կազմում է 16.8%:

Հայաստանի Հանրապետությունը բնակչության առողջական վիճակը բնութագրող ցուցանիշների առումով, մասնավորապես մանկական և մայրական մահացության ցուցանիշների, բարենպաստ է ԱՊՀ շատ երկրների համեմատությամբ, սակայն որոշակիորեն գերազանցում է միջին եվրոպական մակարդակը: Հայաստանի Հանրապետությունը դասվում է (ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության դասակարգման) երեխաների մահացության միջին ցուցանիշ ունեցող երկրների շարքին:


1990-2009 թվականների ժամանակահատվածում դրսևորվել է մանկական մահացության ցուցանիշների անկման ակնհայտ միտում: Այսպես, պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն 2009 թվականին մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը 1000 կենդանի ծնվածի հաշվով (որը վերջին տարիներին մինչև հինգ տարեկան երեխաների մահվան դեպքերի շուրջ 88% էր) կազմել է 10.4 1990 թվականի համանման ցուցանիշի՝ 18.3-ի համեմատ (կամ նվազել է 43%-ով), իսկ մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը համապատասխանաբար 11.9 և 23.8 (կամ նվազել է 50%-ով): Սակայն, վերջին տարիներին մինչև մեկ տարեկան երեխաների մահացության ցուցանիշի անկման տեմպերը ավելի նվազ է արտահայտված, իսկ 2006 թվականին նույնիսկ գրանցվել է ցուցանիշի բարձրացում: Նման պարագայում 2015 թվականի համար ՀՀ-ում (Հազարամյակի զարգացման նպատակներ) սահմանված նպատակային ցուցանիշը դժվար հասանելի է:

Ստորև ներկայացվում են մանկական և մայրական մահացության ցուցանիշների փոփոխությունները.

Գծանկար 8.2 Մանկական մահացությունը (մինչև մեկ տարեկան), 1000 կենդանի ծնվածի հաշվով




Գծանկար 8.3 Մայրական մահացության Հայաստանի Հանրապետության ցուցանիշների միջազգային համեմատականը



Մայրական մահացության (100000 կենդանի ծնվածի հաշվով) միջին եռամյա ցուցանիշների միտումները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում 1999-2001 թվականների համեմատությամբ մայրական մահացության եռամյա ցուցանիշը կրճատվել է շուրջ 41%-ով, սակայն վերջին տարիների ընթացքում չի արձանագրվել նվազեցման միտում: 2008-2010 թվականների միջին եռամյա ցուցանիշը որոշակիորեն ցածր է ԱՊՀ երկրների միջին մակարդակից, սակայն 5 անգամ գերազանցում է Եվրոմիության երկրների համանուն ցուցանիշի միջին մակարդակը:


Ստորև ներկայացված է բնակչության բնական աճի ցուցանիշները, որը վերջին տարիներին դրսևորում է դրական աճի միտում:

Գծանկար 8.4 Բնակչության բնական աճը



Կյանքի սպասվելիք տևողության փոփոխությունը ներկայացված է ստորև:

Գծանկար 8.5 Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, (տարի)



8.1.2.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը

Բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների դինամիկայի վերաբերյալ առավել ճշգրիտ պատկերացում կազմելու նպատակով վերլուծությունը կատարվել է հիմնվելով գրանցված հիվանդությունների բացարձակ թվերի վրա: Ստորև ներկայացվում է ընդհանուր հիվանդացության փոփոխությունը:

Աղյուսակ 8.2 Բնակչության ընդհանուր հիվանդացությունը բացարձակ թվերով

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
Գրանցված հիվանդությունների թիվը					
ընդամենը	1 075 215	1 208 427	1 235 295	1 322 230	1 444 770
կյանքում առաջին անգամ գրանցված	637 534	729 101	735 316	799 724	897 928
որից՝					
Ինֆեկցիոն և մակարուծական հիվանդություններ					
ընդամենը	73 534	97 261	82 221	83 104	85 976
կյանքում առաջին անգամ գրանցված	57 786	79 182	67 051	69 343	72 707
այդ թվում Տուբերկուլոզ					
ընդամենը	6 455	5 673	3 867	3 489	3 446
կյանքում առաջին անգամ գրանցված	2 006	1 579	1 518	1 486	1 431
Չարորակ նորագոյացություններ					
ընդամենը	26 512	33 771	36 124	35 920	37 585
կյանքում առաջին անգամ գրանցված	6 396	7 670	8 092	8 309	9 074
Շաքարային դիաբետ					
ընդամենը	40 202	41 601	45 774	49 170	50 751
կյանքում առաջին անգամ գրանցված	5 522	5 912	5 319	5 783	6 331
Հոգեկան խանգարումներ					
ընդամենը	48 139	47 841	48 764	53 538	58 511
կյանքում առաջին անգամ գրանցված	2 501	6 655	6 080	6 462	6 772
Հիպերտոնիկ հիվանդություն					
ընդամենը	48 010	53 191	59 180	68 177	73 827
կյանքում առաջին անգամ գրանցված	15 938	16 124	17 681	20 871	21 048

Սրտի իշեմիկ հիվանդություն					
ընդամենը	37 663	40 345	43 683	48 620	52 042
կյանքում առաջին անգամ գրանցված	11 303	6 330	13 113	14 017	14 591
Վնասվածքներ և թունավորումներ					
ընդամենը	50 630	55 578	55 773	56 809	56 794
կյանքում առաջին անգամ գրանցված	47 287	51 717	51 943	55 031	56 721

Ինչպես երևում է աղյուսակից, 2009 թվականին ավելացել են ընդհանուր գրանցված և կյանքում առաջին անգամ հայտնաբերված հիվանդությունների ընդհանուր դեպքերը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության անվճար դառնալու հետևանքով աճել է հիվանդների բժշկի դիմելու թիվը, ուստի և հիվանդությունների ախտորոշումն ու գրանցումը:

Ստորև ներկայացված են տվյալներ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով գրանցված հիվանդությունների և մահվան դեպքերի վերաբերյալ:

Աղյուսակ 8.3 Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիմնական հիվանդությունների հիվանդացության և մահացության մակարդակների համեմատականը

Հիվանդության անվանումը	Հիվանդության դեպքերը (բացարձակ թվեր)		2009 թվականի համեմատակա նը 1988 թվականի նկատմամբ	Մահացության դեպքեր (բացարձակ թվեր)		2009 թվականի համեմատակա նը 1988 թվականի նկատմամբ
	1988թ	2009թ		1988թ	2009թ	
Տուբերկուլոզ	3 250	3 446	1,1	63	278	4,4
Չարորակ նորագոյացություններ	21 228	37 585	1,8	3 013	5 413	1,8
Շաքարային դիաբետ	29 575	50 751	1,7	405	2 140	5,3
Հիպերտոնիկ հիվանդություն	42 062	73 827	1,8	1 869	1 003	նվազել է շուրջ 1,9 անգամ
Սրտի իշեմիկ հիվանդություն	76 607	52 042	նվազել է շուրջ 1,5 անգամ	6 405	8 025	1,3

Ինչպես երևում է աղյուսակից, 2009 թվականին բոլոր ներկայացված հիվանդությունների գրանցված դեպքերի թվերը 21 տարվա ընթացքում աճել են ոչ այդքան բարձր տեմպերով, և կազմում են 1,1-1,8 անգամ, նկատվում է նույնիսկ նվազեցում սրտի իշեմիկ հիվանդությունների գծով, որը պայմանավորված է ժամանակին ախտորոշման հանգամանքով՝ պետպատվերի շրջանակներում

անվճար կորոնարուանգիոգրաֆիա հետազոտության լայն կիրառմամբ և կատարվող սրտի վիրահատությունների թվի տարեցտարի աճի տեմպերով:

Սակայն նույնը չի կարելի ասել մահվան դեպքերի մասին, քանի որ դրանց աճը գերազանցում է գրանցված հիվանդությունների տեմպերը, հատկապես շաքարային դիաբետի դեպքում, բացառությամբ հիպերտոնիկ հիվանդությունից մահվան դեպքերի, որի նվազումը բացատրվում է նրանով, որ այս հիվանդության դեպքում մահը վրա է հասնում հիմնականում ելնելով հիվանդության բարդություններից (ինսուլտ և ինֆարկտ):

Ամփոփելով ներկայացված վերլուծական տվյալները, կարելի է գալ այն եզրակացության, որ ՀՀ առողջապահության ոլորտի բուժկազմակերպությունները՝ հատկապես առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակը, դեռևս ոչ պատշաճ մակարդակով են կազմակերպում առաջնային և երկրորդային պրոֆիլակտիկայի աշխատանքները, ակտիվ ձևով ու ժամանակին չեն հայտնաբերվում հիվանդությունները և իրականացվում բուժականխարգելիչ օգնությունը: Բնակչության շրջանում ցածր է մնում առողջության պահպանման վերաբերյալ բժշկահիգիենիկ գիտելիքները, հիվանդները ժամանակին չեն դիմում բժիշկներին, զբաղվում են ինքնաբուժությամբ կամ ընդհանրապես չեն բուժվում:

8.1.2.5. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը

Հիվանդանոցային ծառայությունում պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության տեսակների գների և այդ նույն ծառայությունների իրական գների միջև եղած զգալի տարբերությունը դժվարություններ է առաջացնում բնակչության հատկապես սոցանապահով խմբերում ընդգրկվածների մոտ՝ ժամանակին հիվանդանոցային մասնագիտական բուժօգնություն ստանալու համար, որը և նպաստում է վերոնշյալ ցուցանիշների աճին: Այդ բոլորի հետևանքով գրանցվում են հիվանդությունների բարդացած ձևեր, ավելանում մահվան դեպքերի թվերը՝ հատկապես սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով տառապող հիվանդների մոտ:

Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց համարժեք փոխհատուցում ապահովելու, ինչպես նաև առողջապահության հաստատություններում առկա սովերային դրսևորումները բացառելու նպատակով, 2010 թվականի հուլիսի 1-ից «Արաբկիր ԲՀ» ԵԴԱԻ-ում, իսկ 2010 թվականի դեկտեմբերի 1-ից «Նաիրի բժշկական կենտրոն» և «Վ. Մալայանի անվան ակնաբուժական կլինիկա» փակ բաժնետիրական ընկերություններում ներդրվեց պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայություն-

ների դիմաց փոխհատուցման համավճարային նոր եղանակի փորձարարական կիրառումը: Դրա հետ մեկտեղ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1762-Ն որոշմամբ հաստատվեց «Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների փոխհատուցման» կարգը, համաձայն որի համավճարը տարածվում է «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» և «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում փոխհատուցման ենթակա և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հաստատված հիվանդությունների և վիճակների վրա: Այն չի տարածվում բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, ինչպես նաև վերակենդանացման միջոցառումներ պահանջող հիվանդությունների և վիճակների վրա՝ վերակենդանացման ծառայությունների մատուցման ժամանակահատվածի ընթացքում:


Համավճարի ներդրմամբ նախատեսվում է բուժանձնակազմի աշխատավարձի բարձրացում: ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված է, որ համավճարի գումարներից աշխատավարձին պետք է ուղղվի ոչ պակաս 50 %-ը, իսկ մնացած գումարները՝ այլ ծախսերի բարելավմանը: Համավճարի ներդրմամբ ակնկալվում է նաև բարձրացնել մատուցվող բժշկական ծառայությունների որակը, բնակչության համար կանխատեսելի ու թափանցիկ դարձնել բուժօգնության և սպասարկման նպատակով իրականացվող ծախսերը, բարելավել ֆինանսական հոսքերի կառավարումը բուժհաստատություններում, ինչպես նաև ստեղծել տեխնոլոգիաների արդիականացման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

Հիվանդանոցային բուժօգնության համակարգի զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման, ավելորդ հզորությունների կրճատման և բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներով:

Առաջիկա տարիներին կշարունակվի առողջապահության համակարգի օպտիմալացման գործընթացի խորացումը, որի հիմնական նպատակն է ՀՀ մարզերում հիվանդանոցային, դիսպանսերային, ծննդատնային և ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունները միաձուլման ձևով վերակազմակերպելը և նոր խոշոր բժշկական կենտրոններ ստեղծելը: Ժամանակի ընթացքում այդ կենտրոններում միանման կրկնվող ծառայությունները պետք է միավորվեն՝ որոշ չափով կատարելով ներքին օպտիմալացման աշխատանքներ, ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների նեղ մասնագիտական ծառայությունները՝ ինտեգրվեն հիվանդանոցային ծառայություններում, իսկ առաջնային օղակի ընդհանուր պրակտիկայի մասնագետների ծառայությունները աստիճանաբար առանձնանալով՝ վերածվեն ընտանեկան բժիշկների գրասենյակների:

Արդյունքում կբարձրանա համակարգի արդյունավետությունը, որն ենթադրում է հիվանդանոցային մահճակալային ֆոնդի կրճատում, մահճակալների տարեկան միջին զբաղվածության ավելացում և այլն:

Գծանկար 8.6 Մահճակալի միջին տարեկան զբաղվածությունը



Տարիների ընթացքում առողջապահական համակարգի օպտիմալացման, առողջապահական ծրագրերի իրականացման, ոլորտի կայուն ֆինանսավորման, ֆինանսական ծավալների զգալիորեն ավելացման շնորհիվ բարձրացել է բուժօգնություն ստանալու մատչելիությունը և դիտվում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարելավման միտում:

Համաշխարային բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում նախատեսվում է ավարտին հասցնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի նոր բժշկական կենտրոնի կառուցման և ՀՀ Գեղարքունիկի մարզի Գավառի բժշկական կենտրոնի վերանորոգման աշխատանքները:

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ):

Հիմնական դեղերի ցանկում դեռևս առկա են ցածր պահանջարկ ունեցող դեղեր: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է նորոպի նայել կենտրոնացված ճանապարհով գնվող դեղերի տեսականուն, ընտրելով նոր սերնդի և առավել արդյունավետ դեղեր (օրինակ՝ դիաբետի, հոգեկան և հակաուռուցքային հիվանդությունների համար):

Միաժամանակ կարևոր է դեղերի որակի ապահովման պետական վերահսկողությունը դեղերի շրջանառության բոլոր փուլերում (արտադրություն, պատրաստում, պահպանում, իրացում, կիրառում), որն այսօր իրականացվում է միայն ներմուծման պահին:

8.1.2.6. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականին դիսպանսեր հսկողության է վերցվել 694 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդ, դեպքերի ավելի քան կեսը գրանցվել են վերջին չորս տարիներին: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքերի վերջին տարիներին արձանագրված աճը մասամբ պայմանավորված է լաբորատորիաների ցանցի ընդլայնմամբ, հետազոտությունների անցկացման մատչելիության բարձրացմամբ և այլ միջոցառումների իրականացմամբ: Թեև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով տարածվածությունը ներկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում բավականի ցածր է, սակայն վատթարացման իրական վտանգ կա, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ վերջին տարիներին գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կտրուկ աճ: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետագա տարածումը կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ, բնակչության շրջանում բարձրացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին գիտելիքների մակարդակը և այլն:

Պետական մակարդակով իրականացվում են ՀՀ տուբերկուլյոզի դեմ պայքարի 2007-2015 թվականների ազգային ծրագիրը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիրը և այլն:

8.1.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Չնայած բնակչության առողջության առաջնային պահպանման ոլորտի բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, քաղաքներում ընտանեկան բժշկության համակարգի կայացման տեսանկյունից՝ առկա խնդիր է դիտարկվում տեխնիկական հագեցվածության և շենքային պայմանների բացակայությունը:

- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության կայուն իրավիճակի շարունակական ապահովումը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, քանի որ ժամանակին անհրաժեշտ միջոցառումների չիրականացումը կարող է բերել համաճարակների ռիսկերի բարձրացմանը:

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման խնդիրներից է նաև բնակչության իրազեկումը և բժշկահիգիենիկ գիտելիքների մակարդակի բարձրացումը:

- Մոր և մանկան առողջության ապահովման տեսանկյունից առաջնային խնդիր է հանդիսանում դեռևս բարձր մակարդակ ունեցող մայրական և մանկական մահացության ցուցանիշները:

- Որպես խնդիր է դիտարկվում սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների մահվան դեպքերի աճը՝ կապված ՀՀ առողջապահության ոլորտի բուժկազմակերպություններում առաջնային և երկրորդային պրոֆիլակտիկայի աշխատանքների ոչ պատշաճ

մակարդակով կազմակերպմամբ, հիվանդությունների ոչ ժամանակին հայտնաբերմամբ և բուժականխարգելիչ օգնության իրականացմամբ:

- Հիվանդանոցային բուժօգնության գծով առկա խնդիր է հանդիսանում պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության տեսակների գների և այդ նույն ծառայությունների իրական գների միջև եղած զգալի տարբերությունները, մատուցվող բժշկական ծառայությունների ցածր որակը, իրականացվող ծախսերի անբավարար թափանցիկությունը, բուժհաստատություններում ֆինանսական հոսքերի կառավարումը և տեխնոլոգիաների արդիականացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ստեղծումն ու ներգրավումը:

- Առկա խնդիր է նաև օպտիլացման գործընթացի շարունակականության ապահովումը և մահճակալների զբաղվածության մակարդակի բարձրացումը:

- Որպես խնդիր է դիտարկվում հիմնական դեղերի ցանկում առկա ցածր պահանջարկ ունեցող դեղերը և դեղերի որակի ապահովման պետական վերահսկողության ցածր մակարդակը դեղերի շրջանառության բոլոր փուլերում:

- Վերջին տարիներին գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի աճի միտում:

8.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

8.2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող ծրագրերի նպատակներն են.

8.2.1.1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ոլորտում

Առողջության առաջնային պահպանման ոլորտի հետագա զարգացման ապահովումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, բժշկական օգնության և ծառայությունների ստանալու մատչելիության ընդլայնումը, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և բնակչության գրանցման գործընթացի կանոնակարգման, բարելավման և դրա շարունակականության ապահովման միջոցով բնակչության ՀՀ օրենսդրությամբ ամրագրված իրավունքի իրացումը, բուժանձնակազմի պատասխանատվության աստիճանի բարձրացումը:

Ընտանեկան բժշկության անկախ պրակտիկաների ձևավորման միջոցով պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործումը, այդ միջոցների հասցեականության ապահովումը:

Առաջնային օղակի կողմից հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով հիվանդանոցային բուժօգնության բեռի թեթևացումը, շտապօգնության անհարկի՝ քրոնիկ հիվանդների համար տրվող կանչերի թվի նվազումը:

Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում աշխատող բուժանձնակազմի հմտության ու գործունեության որակի բարձրացումը՝ առավել ուշադրություն դարձնելով գյուղական բնակավայրերի աշխատողներին, ինչպես նաև առողջության առաջնային պահպանման մակարդակում բուժօգնության որակի բարելավումը:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով հանրապետության բնակչության շրջանում այդ հիվանդությունների հետևանքով առաջացած հաշմանդամության և մահացության ցուցանիշների իջեցումը:

8.2.1.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը: Վարակիչ հիվանդությունների առաջացման ու դրանց տարածման պատճառների և պայմանների բացահայտման, քննման և հետազոտության ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

8.2.1.3. Մոր և մանկան առողջության ապահովումը

Ծրագրի նպատակն է կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը: Երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումն ուղղված կլինի մանկական մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը:

Ծրագրի նպատակն է նաև մայրության հովանավորումը, ծննդօգնության որակյալ ծառայությունների մատչելիության ապահովումն՝ ուղղված մայրական և շուրջծննդյան (պերինատալ) հիվանդացության ու մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև վերարտադրողական առողջության բարելավմանը:

Ծրագրի իրականացումը թույլ կտա 2012-2014թթ. ընթացքում երեխաների առողջության պահպանման ոլորտում նվազեցնել մանկական 0-1 տարեկան և մինչև 5 տարեկան մահացության մակարդակը 10 %-ով, ցածր քաշով և անհաս նորածինների թիվը կրճատել 5%-ով, ապահովել երեխաների պատվաստումներով լրիվ ընդգրկվածության ցուցանիշի 90% մակարդակ, ապահովել մինչև 6 ամսական երեխաների 45%-ի բացառապես կրծքով սնուցման ցուցանիշը, կրճատել

նորաձևային հիվանդացությունը և մահացությունը՝ նորաձևային սկրինինգային համակարգի կատարելագործման, նորաձինների վերակենդանացման ծառայությունների հզորացման միջոցով: Ապահովել զարգացման շեղումների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության համակարգի մշակումը և ներդրումը: Զարգացնել երեխաների գնահատման և վերականգնողական բուժօգնության համակարգը, ստեղծելով ինստիտուցիոնալ կառույցներ մարզային մակարդակում:

Բարձրացնել ծննդօգնության ծառայությունների մատչելիությունը՝ կրճատելով մայրական մահացության մակարդակը նվազագույնը 20%-ով:

Ապահովել հղիների նվազագույնը 80%-ի ընդգրկվածությունը մարդու իմունաանբավարարության վիրուսի նկատմամբ սկրինինգի իրականացման գործընթացում:

Ապահովել նախաձննդյան առնվազն 4 այց կատարած հղիների առնվազն 10 %-ով ընդգրկվածությունը:

Ապահովել վերարտադրողական օրգանների (արգանդի վզիկի) քաղցքեղային հիվանդությունների նվազեցումը 20 %-ով:

Նվազեցնել հղիության արիեստական ընդհատման ցուցանիշը:

8.2.1.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը

Ծրագրի նպատակն է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցումը, նշված հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, բուժումը և վերականգնողական միջոցառումների իրականացումը հատկապես առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակի կողմից՝ հիվանդությունների զարգացման սկզբնական փուլում:

8.2.1.5. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովում

Ծրագրի նպատակն է մեծացնել սոցիալապես անապահով և (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության առավել հասանելիությունը, բուժօգնության որակի ապահովումը: Ապահովել բնակչության նշյալ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության իրականացումն ընդհանուր և մասնագիտացված պրոֆիլի հիվանդանոցներում՝ անկախ ախտորոշումից:

Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց համարժեք փոխհատուցում ապահովելու, ինչպես նաև առողջապահության հաստատություններում առկա սովերային դրսևորումները բացառելու և բժշկական ծառայությունների ֆինանսական հատուցումները բնակչության համար կանխատեսելի դարձնելու նպատակով համավճարային համակարգի ներդրման գործըն-

թացի հետագա կանոնակարգումը, արդյունավետության, նպատակահարմարության և արդյունքների գնահատումը: Կառավարության մտադրությունն է ժամանակի ընթացքում ծառայությունների դիմաց փախհատուցման չափը մոտեցնել իրական ինքնարժեքին: Նման մոտեցումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ինչպես նաև սոցիալապես անապահով անձանց համար ֆինանսական բեռի նվազմանը (որը ձևավորվում է ծառայությունների դիմաց ոչ ֆորմալ վճարումների արդյունքում), դրանով իսկ մեծացնելով ծառայության մատչելիության աստիճանը:

8.2.1.6. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

Ծրագրի նպատակն է տարափոխիկ հիվանդությունների բուժմանն ուղղված բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը, ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում՝ տուբերկուլյոզի, սեռավարակների և ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ հայտնաբերման և լիարժեք բուժման արդյունավետության բարձրացումը, հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազումը:

8.2.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ինչպես ՀՀ Կառավարության «Կայուն Ջարգացման Ծրագրի», այնպես էլ 2012-2014 թվականների Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի ֆինանսավորման միջին ժամկետ ծրագրի համատեքստում պետական քաղաքականության գերակայություն են շարունակելու մնալ առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումն ու որակի շարունակական բարելավումը, հատուկ շեշտադրելով տարածքային կտրվածքով առանցքային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումն ու բնակչության՝ ըստ կենսամակարդակի տարբեր խմբերի կողմից, առողջապահական ծառայությունների օգտագործման հաճախականությունների միջև առկա տարբերությունների աստիճանական վերացումը: Ինչպես հիվանդանոցային, այնպես էլ առաջնային բուժօգնության կառուցվածքում (այդ թվում ընտանեկան բժշկության) գերեկա են շարունակվելու համարվել մոր և մանկան առողջության պահպանումը և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարը:

2012-2014 թվականների ՄԺԾՇ շրջանակներում առողջապահության ոլորտի գերակայություններն են (ըստ առաջնահերթության).

- Բնակչության առողջության առաջնային պահպանումը,
- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,

- Մոր և մանկան առողջության ապահովումը,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը,
- Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը,
- Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը:

8.2.2.1. Բնակչության առողջության առաջնային պահպանումը

Բուժօգնության առաջնային օղակի հետագա զարգացումը շարունակելու է մնալ առողջապահության ոլորտում պետության գործողությունների հիմնական թիրախը:

Միջնաժամկետ հատվածում բնակչության առողջության առաջնային պահպանման գերակա ուղղություններն են. առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումը, բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության սկզբունքով ծառայությունների մատուցումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, հիվանդությունների վաղ հայտնաբերումն ու կանխարգելումը (առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի շեշտադրմամբ), առաջնային բուժօգնության ոլորտում որակի ապահովման ուղիների ու մեթոդների բարելավումը, ինչպես նաև ընտանեկան բժշկության անկախ խմբային և անհատական պրակտիկաների ներդրումը:

8.2.2.2. Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը, կայուն համաճարակային իրավիճակի ապահովումն ու ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը պետական կարևորագույն խնդիրներից է:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման ծրագիրը նախատեսում է երկրում ապահովել հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը, բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինֆեկցիոն և զանգվածային ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը, հանրային առողջապահության համակարգի զարգացումը:

Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և հիգիենայի վերաբերյալ գիտելիքների քարոզչությունը սկզբունքային նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման հարցում:

8.2.2.3. Մոր և մանկան առողջության ապահովումը

Կանանց և երեխաների առողջության պահպանման, այդ թվում՝ վերարտադրողական առողջության խնդիրներին համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի

առողջ սերունդ ունենալու և բնակչության առողջական վիճակի բարելավման առումով: Այդ նպատակով վերահաստատվել է կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը: Կարևորվում է կանանց և երեխաներին մատուցվող բժշկական որակյալ ծառայությունների մատչելիության ապահովումն՝ ուղղված մայրական և մանկական մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը:

Երեխաների բուժօգնության բնագավառում հատուկ ուշադրություն է դարձվելու հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների իրականացմանը: Վերարտադրողական առողջության պահպանման ու մայրության հովանավորության հարցերը ևս եղել և մնում են պետության հոգածության առարկա:

8.2.2.4. Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության ծրագրային առաջնահերթությունների շարքում են սոցիալական հատուկ նշանակություն ունեցող ինչպես վարակիչ, այնպես էլ ոչ վարակիչ առանձին հիվանդությունների տարածման կանխարգելումը, դրանց վաղ հայտնաբերումն ու բուժման արդյունավետության բարձրացումը:

8.2.2.5. Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը

Ծրագրի գերակայությունն է՝ միջնաժամկետ հատվածում բնակչության աղքատ խավերի, սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման առավել հասանելիության և բուժօգնության որակի բարձրացումը, հիվանդանոցային մասնագիտացված բժշկական օգնության ապահովումը:

8.2.2.6. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին և տարափոխիկ հիվանդություններին վերաբերող խնդիրները գերակայություններ են մնում ՀՀ կառավարության համար:


Ինֆեկցիոն հիվանդությունների, այդ թվում՝ տուբերկուլյոզի, սեռավարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը, վարակի տարածման կանխարգելումը և առկա դեպքերի բուժման արդյունավետության բարձրացումը պետական կարևորագույն խնդիրներից է:

8.3 2012-2014 ԹԹ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտի գծով (ներառյալ հիմնանորոգման, վարկային և դրամաշնորհային ծրագրերի, առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել են՝ 2012 թվականին 68,655.5 մլն դրամ (2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով՝ 57,339.8 մլն դրամ), 2013 թվականին՝ 59,472.2 մլն դրամ (2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով՝ 56,028.0 մլն դրամ) և 2014 թվականին՝ 60,507.7 մլն դրամ: 2013 թվականին ծախսերի նվազումը 2012 թվականի նկատմամբ 9,183.3 մլն դրամով պայմանավորված է վարկային ծրագրերի ավարտման հետ կապված ծախսերի 9,291.7 մլն դրամով նվազմամբ, որից կապիտալ ծախսերի՝ 7,691.0 մլն դրամով և ընթացիկ ծախսերի՝ 1,600.7 մլն դրամով: Միաժամանակ, առանց հաշվի առնելու վարկային ծրագրերը, առողջապահության ոլորտի ընթացիկ ծախսերի աճը 2013 թվականին 2012 թվականի նկատմամբ կկազմի 108.4 մլն դրամ, իսկ 2014 թվականին 2013 թվականի նկատմամբ՝ 1,317.7 մլն դրամ:

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2012 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 1.63 %ը, 2013 թվականին՝ 1.30 %-ը և 2014 թվականին՝ 1.22 %-ը:

Գծանկար 8.7 Առողջապահության ոլորտի պետական ծախսերի մակարդակը (% ՀՆԱ-ի նկատմամբ)




Միջնաժամկետ ժամանակահատվածում ՀՆԱ-ի նկատմամբ բյուջետային ծախսերի նվազումը պայմանավորված է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտման հետ կապված ծախսերի նվազմամբ: Սակայն բանակցային գործընթացը շարունակվում է նոր ծրագրեր սկսելու շուրջ, որոնք ընդգրկված չեն ՄԺԾԾ-ում, ուստի ՀՆԱ-ի նկատմամբ առողջապահական ծախսերի վարքագիծը այս փուլում վերջնական չէ և հետագայում կվերանայվի:

Ստորև ներկայացված են առողջապահական ծախսերը ըստ գործառական դասակարգման:

Աղյուսակ 8.4 Առողջապահության բնագավառի պետական ծախսերը (մլն դրամ)


	ՀՀ 2010 թվականի փաստացի	ՀՀ 2011 թվականի հաստատված բյուջե	ՄԺԾԾ		
			2012 թ.	2013 թ.	2014 թ.
Առողջապահություն ընդամենը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի)	53,824.2	61,416.3	68,655.5	59,472.2	60,507.7
1. Արտահիվանդանոցային ծառայություններ (առողջության առաջնային պահպանում)	20,167.4	23,889.4	23,586.3	23,602.0	23,887.8
<i>տեսակարար կշիռը ընդամենը առողջապահության ծախսերում</i>	<i>37.5</i>	<i>38.9</i>	<i>34.4</i>	<i>39.7</i>	<i>39.5</i>
2. Հիվանդանոցային ծառայություններ	21,441.4	27,370.9	27,370.9	27,411.8	28,392.2
<i>տեսակարար կշիռը ընդամենը առողջապահության ծախսերում</i>	<i>39.8</i>	<i>44.6</i>	<i>39.9</i>	<i>46.1</i>	<i>46.9</i>
3. Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	3,637.7	3,687.5	3,687.5	3,687.5	3,687.5
4. Հանրային առողջապահական ծառայություններ	2,776.4	2,961.1	3,013.5	3,065.3	3,116.8
5. Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	1,152.3	1219.1	1219.1	1219.1	1219.1
6. ՀԲ վարկային և դրամաշնորհային ծրագրեր – ընդամենը, այդ թվում	4,649.0	2,288.3	9,778.2	486.5	204.3
կապիտալ ծախսերի գծով	4,261.3	1,999.8	7,695.4	4.4	

Գծանկար 8.8 Առողջապահության ոլորտի պետական ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման



2011 թվականին ընթացիկ ծախսերը կազմելու են ընդամենը առողջապահական ծախսերի 96.7 տոկոսը, իսկ կապիտալ ծախսերը՝ 3.3 տոկոսը, 2012 թվականին՝ համապատասխանաբար 88.8 տոկոս և 11.2 տոկոս: 2013-2014 թվականներին նախատեսվում է ՀԲ վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով ծախսերի նվազեցում, իսկ նոր ծրագրերը դեռևս բանակցային փուլում են:

Գծանկար 8.9 2012 թվականի առողջապահության ոլորտի ծախսերի կառուցվածքը (%)



8.3.1 Բնակչության առողջության առաջնային պահպանումը

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով (Արտահիվանդանոցային ծառայություններ խումբ) պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 2012 թվականին՝ 23,586.3 մլն դրամ, 2013 թվականին՝ 23,602.0 մլն դրամ և 2014 թվականին՝ 23,887.8 մլն դրամի չափով:

2012 թվականին առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) համակարգում տեղամասային բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 84,700.0 դրամ, իսկ բուժքույրերինը՝ 54,250.0 դրամ 2011 թվականի մակարդակի չափով: Նույն մակարդակը կպահպանվի հաջորդ 2013-2014 թվականներին: Մինևույն ժամանակ աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35,000.0 դրամ, իսկ 2014 թվականին՝ 45,000.0 դրամ սահմանելու հետ կապված ծախսերի աճը 2013 թվականին նախատեսվում է 13.7 մլն դրամ, իսկ 2014 թվականին՝ 276.0 մլն դրամի չափով:

Առաջնային բուժօգնության օղակում պետական քաղաքականությունն ուղղված է լինելու ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման ուղղությամբ ներկայումս իրականացվող վերափոխումների ավարտմանն ու ձևավորվող կառուցվածքների հետագա ամրապնդմանը:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է ավարտին հասցնել 13 համայնքային ամբուլատորիաների կառուցման աշխատանքները, իրականացնել 40 ընտանեկան բժիշկների մասնագիտացում 12-ամսյա և 300 ընտանեկան բուժքույրերի

մասնագիտացում 6-ամսյա ծրագրերով, ինչպես նաև ընտանեկան բժիշկների կարճաժամկետ վերապատրաստումներ տեղերում:

Միջնաժամկետ հեռանկարում գյուղական բնակավայրերում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացմանը վերաբերող հարցերը դեռևս շարունակելու են մնալ պետական քաղաքականության օրակարգում: Միևնույն ժամանակ, շեշտադրվելու են քաղաքային բնակավայրերում (ներառյալ՝ Երևանը) առաջնային բուժօգնության ծառայությունների (պոլիկլինիկաների) արդիականացման հարցերը: Այդուհանդերձ, տվյալ դեպքում (և հատկապես Երևանի պարագայում) պետական միջամտության լծակների կիրառումը մեծապես պայմանավորված է լինելու համակարգում ներկայումս իրականացվող բարեփոխումների արդյունքներով:

8.3.2 Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրային առողջապահական ծառայություններին պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 2012 թվականին՝ 3,013.5 մլն դրամ, 2013 թվականին՝ 3,065.3 մլն դրամ և 2014 թվականին՝ 3,116.8 մլն դրամի չափով:

ԳԱՎԻ (Global Alliance for Vaccines and Immunization) միջազգային դոնոր կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն, հնգավալենտ պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում, պետական մասնակցությունը 2012-2015 թվականների ընթացքում աճելու է յուրաքանչյուր տարի 20 տոկոսով, իսկ ծրագրի ավարտից հետո 2016 թվականից սկսած ծախսերը ամբողջությամբ նախատեսվելու են պետական բյուջեից: Հաշվի առնելով ԳԱՎԻ միջազգային դոնոր կազմակերպության առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունը բյուջետային ծախսերի աճը 2012 թվականին նախատեսվում է 52.5 մլն դրամ, 2013 թվականին՝ 46.9 մլն դրամ և 2014 թվականին՝ 32.3 մլն դրամի չափով:

Աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35,000.0 դրամ, իսկ 2014 թվականին՝ 45,000.0 դրամ սահմանելու հետ կապված ծախսերի աճը 2013 թվականին նախատեսվում է 4.9 մլն դրամ, իսկ 2014 թվականին՝ 19.2 մլն դրամի չափով:

Իսմբում ընդգրկված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ: Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը իրականացվում է հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) կողմից սանիտարահամաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև բնակչության առողջության վրա արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելման միջոցով:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է համաճարակաբանական հետազոտություններ անցկացնել վարակային հիվանդությունների օջախներում, իրականացնել ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն, մանրէաբանական, սանիտարա-քիմիական հետազոտություններ, նախազգուշական սանիտարական հսկողություն, նախագծերի հիգիենիկ փորձաքննություն, կառուցվող և վերակառուցվող օբյեկտների շահագործման ընդունում, հատուկ վտանգավոր վարակների՝ աղիքային, կաթիլային վարակիչ հիվանդությունների, խոլերայի, բրուցելյոզի, կատաղության, սիբիրախտի և այլ հատուկ վտանգավոր ինֆեկցիաների օջախներում հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ կազմլուսավորչական աշխատանքներ, ռիսկի խմբի անձանց հսկողություն և հետազոտությունների անցկացում: Վերոնշյալ ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա ապահովել ՀՀ բնակչության համաճարակային անվտանգությունը, նվազեցնել բնակչության հիվանդացությունը տարափոխիկ հիվանդություններից:

8.3.3 Մոր և մանկան առողջության ապահովումը

Ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում շարունակվելու են հատուկ շեշտադրվել մոր և մանկան առողջության պահպանումը ու վերարտադրողական առողջության բարելավումը: Իրականացվելիք գործողությունների արդյունքում (որոնք մասնավորապես, ուղղված են լինելու հղիներին նախածննդյան և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրմանը, երեխաների՝ բացառապես կրծքով կերակրման խրախուսմանը, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերմանն ու տարածման կանխարգելմանը, երեխաների՝ պատվաստումներով ընդգրկվածության մեծացմանն ու տարածքային կտրվածքով առկա տարբերությունների վերացմանը) ակնկալվում է նշանակալիորեն կրճատել մանկական և մայրական մահացության աստիճանը, ինչը համահունչ է ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին:

Հիվանդանոցային բուժօգնության համակարգում հաշվի է առնվել 2012 թվականին նախատեսվող ծննդօգնության 4.4 տոկոս աճը: Նախորդ տարվա համեմատ նախատեսվում է ծննդօգնության 528 դեպքի գումարով 68.0 մլն դրամի չափով ավելացում՝ ի հաշիվ առանձին ծրագրերի գծով դեպքերի թվաքանակի ճշգրտման:

8.3.4 Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման, Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերը

Ըստ վիճակագրական տվյալների բնակչության 81%-ը կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295.0 հազ դեպք), որից պետական պատվերի շրջանակներում

2011 թվականին հաստատված բյուջեով նախատեսվել է ընդգրկել 241.4 հազար դեպք կամ կարիք ունեցողների 81.8 տոկոսը: 2012 թվականին նախատեսվում է 241.8 հազար դեպք:

Հիվանդանոցային բուժօգնության դեպքերի ավելացումը պայմանավորված է ծննդօգնության դեպքերի թվաքանակի ավելացմամբ:

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հիվանդանոցային բուժօգնության գծով պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 2012 թվականին՝ 27,370.9 մլն դրամ, 2013 թվականին՝ 27,411.8 մլն դրամ և 2014 թվականին՝ 28,392.2 մլն դրամի չափով:

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում մեկ հիվանդի բուժման միջին արժեքը 2012 թվականին նախատեսվում է սահմանել 13,650.0 դրամ՝ 2011 թվականի մակարդակի չափով, իսկ 2013 թվականին՝ 13,670.0 դրամ և 2014 թվականին՝ 14,150.0 դրամ:

Հիվանդանոցային համակարգում բժիշկների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը 2011 թվականին նախատեսվում է 71,300.0 դրամ, իսկ բուժքույրերինը՝ 56,400.0 դրամ 2011 թվականի մակարդակի չափով: Նույն մակարդակը կպահպանվի հաջորդ 2013-2014 թվականներին: Միևնույն ժամանակ աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափը 2013 թվականին 35,000.0 դրամ, իսկ 2014 թվականին՝ 45,000.0 դրամ սահմանելու հետ կապված ծախսերի աճը 2013 թվականին նախատեսվում է 40.9 մլն դրամ, իսկ 2014 թվականին՝ 980.4 մլն դրամի չափով:

Մասնագիտացված/հիվանդանոցային բուժօգնության բնագավառի հետագա զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ճանապարհով: Շարունակվելու է համավճարային համակարգի ներդրման գործընթացի հետագա կանոնակարգումը:

Շարունակվելու է նաև ավելորդ հզորությունների կրճատման գործընթացը, իրականացվելու են բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներ:

Հիվանդանոցային բուժօգնության ոլորտում համակարգի օպտիմալացմանն ուղղված քայլերին զուգընթաց, առաջիկա տարիներին պետական ծախսային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը լինելու է մարզերում տեղակայված հիվանդանոցային հաստատությունների արդիականացումը, ինչը զգալիորեն կմեծացնի հիվանդանոցային ծառայությունների մատչելիությունը և որակը: Դա մասամբ, ապահովվելու է Համաշխարային բանկի կողմից ֆինանսավորվող «Առողջապահական համակարգի արդիականացում» ծրագրի երկրորդ փուլի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում, ըստ որի նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի նոր բժշկական կենտրոնի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի բժշկական կենտրոնի բժշկական սարքավորումներով ու գույքով հագեցման աշխատանքները: Կանխատեսվում է նաև իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի բժշկական կենտրոնի, ՀՀ Տավուշի մարզի Բերդի բժշկական

կենտրոնի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հիվանդանոցային համալիրի և ՀՀ Սյունիքի մարզի Կապանի բժշկական կենտրոնի հիմնանորոգման, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու բժշկական կենտրոնի կառուցման, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի բժշկական կենտրոնների դիախերձարանների կառուցման, ինչպես նաև նշյալ հաստատությունները բժշկական սարքավորումներով և գույքով հագեցման աշխատանքները: Բժշկական սարքավորումներ նախատեսվում է ձեռք բերել նաև ՀՀ Լոռու մարզի Ալավերդու բժշկական կենտրոնի համար:

Մարզերում տեղակայված հիվանդանոցների շենքային պայմանների և տեխնիկական հենքի բարելավմանը զուգընթաց, աշխատանքներ կտարվեն մարզային հիվանդանոցները որակյալ մասնագետներով համալրելու ուղղությամբ:

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության ծրագրային առաջնահերթությունների շարքում են լինելու սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ առանձին հիվանդությունների տարածման կանխարգելմանը, դրանց վաղ հայտնաբերմանն ու բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցերը:

Ոչ տարափոխիկ հիվանդությունների, մասնավորապես սիրտանոթային, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների և քրոնիկական շնչառական հիվանդությունների տարածվածությունը դրսևորում է աճի միտում, այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը: Ոչ տարափոխիկ հիվանդությունների տարածումը կանխարգելելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջին ժամկետ և երկարաժամկետ հատվածներում մտադիր է հատուկ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ, մասնավորապես՝

- շարունակաբար բարելավել ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման և հսկողության ազգային քաղաքականությունը,
- ինտեգրել ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը ՀՀ կառավարության հարակից այլ ոլորտային քաղաքականություններում,
- աջակցել ոչ տարափոխիկ հիվանդությունների ռիսկի գործոնները նվազեցնող միջոցառումների իրականացմանը (ծխախոտի և ալկոհոլի օգտագործման դեմ պայքար, առողջ սնուցման քարոզում, ֆիզիկական ակտիվության խթանում),
- նպատակաուղղված քայլեր ձեռնարկել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում համակարգի այնպիսի ենթակառուցվածքի ձևավորման ու զարգացման ուղղությամբ, որը կներառի քրոնիկական հիվանդությունների արդյունավետ վարմանը և բուժման կազմակերպմանը,
- օժանդակել ոչ տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման և հսկողության նպատակով հետազոտությունների անցկացմանն ու առաջընթացի մոնիտորինգի և գնահատման գործուն համակարգի ներդրմանը:

Շարունակվելու է կարևորվել նաև սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող, անապահով բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, ինչպիսիք են մալարիան, տուբերկուլյոզը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, կանխարգելելով տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետագա տարածումը ու կտրուկ կրճատելով դրանցից մահացությունը՝ դրանով իսկ վերահաստատելով ՀՁՆ-ին համապատասխան թիրախի ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման պատրաստակամությունը և նպատակաուղղվածությունը:

ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը¹⁸:

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն: Ստորև ներկայացված է ոլորտում առկա իրավիճակը և պետական միջամտության հիմնական ուղղություններն ըստ սոցիալական պաշտպանության առանձին բնագավառների:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տարեցներին շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման ծառայությունների, ցերեկային խնամքի, տնային պայմաններում կենսաթոշակատուներին կենցաղային սպասարկման, սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների տրամադրման եղանակով:

Այս բնագավառի շահառուներ են համարվում միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց ու հաշմանդամ անձինք, ինչպես նաև սոցիալական պատճառներով անօթևան դարձած անձինք:

Տարեցներին շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները տրամադրվում են 7 (4 պետական և 3 ոչ պետական) տուն-ինտերնատների միջոցով: 2010 թ. այդ հաստատություններում սպասարկվել են ընդհանուր թվով 1128 միայնակ ծեր և հաշմանդամ, որից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 4 տուն-ինտերնատներում խնամվել են 1034 շահառու: Վերջիններս գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո և ապահովվում են կենսապահովման համար անհրաժեշտ բոլոր միջոցներով ու պայմաններով: Ոչ պետական

¹⁸Տես ՀՀ Կառավարության ծրագիրը (ՀՀ կառավարության 28.04.2008թ. N 380-Ա որոշում), ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը (ՀՀ կառավարության 24.07.2008թ. N 878-Ն որոշում) և Կայուն զարգացման ծրագիրը (ՀՀ Կառավարության 30.10.2008թ. N1207-Ն որոշում), ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը:

տուն-ինտերնատներում սպասարկվել են 94 շահառուներ, որից 51-ը Վանաձորի, 32-ը՝ Աբովյանի և 11-ը՝ Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղի տուն-ինտերնատներում:

Տնային պայմաններում միայնակ տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրումն իրականացնում է «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով (2010 թ-ին Երևան քաղաքում՝ տնային պայմաններում սպասարկվել է շուրջ 1497 կենսաթոշակառու):

2010 թ. Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից գործող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի ցերեկային կենտրոնում սպասարկվել են շուրջ 42 անձ: Հաճախորդները ցերեկային կենտրոնի համապատասխան մասնագետների կողմից ստանում են սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնություն, արհեստագործության և արվեստի միջոցով վերականգնում են իրենց առողջությունը: Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվական ծառայություններ մատուցվում են նաև նրանց ընտանիքների անդամներին:

2010 թ. Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևանների ժամանակավոր կացարանում ժամանակավոր (մինչև 60 օր) կացարանով են ապահովվել 60 անօթևան մարդ, այդ ընթացքում հնարավորինս լուծվել են նրանց սոցիալական խնդիրները:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մանկատներում և ընտանիքներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքի և դաստիարակության անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներին, մանկատների շրջանավարտներին սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական, խնամքի և դաստիարակության ծառայությունների մատուցման եղանակով:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են 7 պետական և 3 բարեգործական մանկատներ: Դրանցից 2 պետական և 1 բարեգործական հաստատությունները նախատեսված են մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար: Ուսումնասիրությունները փաստում են, որ երեխաները այնտեղ հայտնվում են հիմնականում սոցիալական պատճառներով, ծնողների հմտությունների պակասի, երեխաների խնամքի ծառայությունների անհրաժեշտ թվի բացակայության համալիր ազդեցությամբ: 2010 թ. մանկատներում խնամվել է 816 երեխա, այդ թվում 400-ը՝ մասնագիտացված մանկատներում:

Մանկատներում երեխաների թվի կրճատման և մուտքի կանխարգելման նպատակով պետության միջամտությամբ իրականացվում են մանկատների բեռնաթափման՝ երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու ծրագրեր, ինչպես նաև երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների ու երեխաների խնամքի և պաշտպանության

գիշերօթիկ հաստատությունների ցանցի ընդլայնում, որոնք այլընտրանք են հանդիսանում մանկատներում և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում խնամվող երեխաների համար: Այժմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատություն և 2 սոցիալական հոգաձույթյան կենտրոն: 2010 թ. գիշերօթիկ հաստատություններում խնամվել են 800 երեխա, իսկ երեխաների խնամքի սոցիալական հոգաձույթյան կենտրոններում՝ միջին թվով 165 երեխա:

Զբաղվածության բնագավառ

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին զբաղվածության բնագավառում մատուցվող հիմնական ծառայություններն են գործազուրկների, աշխատանք փնտրող չզբաղված անձանց և երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և ուսուցման կազմակերպումը, խորհրդատվությունը, աշխատանքի տեղավորման աջակցության և ժամանակավոր զբաղվածության ապահովումը, աշխատանքի ընտրության հարցում աշխատանք փնտրող անձանց օժանդակության տրամադումը, իսկ գործատուին անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող աշխատուժով ապահովումը:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին զբաղվածության բնագավառում բնակչությանը տրամադրվող հիմնական տրանսֆերտներն են գործազրկության նպաստները, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուին և այլն:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում զբաղվածության գործակալությունում հաշվառված գործազուրկները, աշխատանք փնտրող և աշխատաշուկայում անմրցունակ անձինք (այդ թվում նաև երիտասարդ): 2010 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է 93230 մարդ, իսկ գործազուրկների թիվը՝ 78804 մարդ: Ընդ որում, այդ ժամանակահատվածի համար հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմել է 6,9%:

Զբաղվածության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և նրա տարածքային մարմինների՝ 10 մարզային և 41 զբաղվածության տարածքային կենտրոնների, ինչպես նաև Երևանում գործող «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿի և Գյումրի քաղաքում գործող «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառ

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հաշմանդամ համարվող անձանց առանձին խմբերին տարբեր ծառայությունների մատուցման եղանակով:

Հաշմանդամներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող հիմնական ծառայություններն են հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց պրոթեզավորումը, վերականգնողական պարագաներով ապահովումը և դրանց վերանորոգումը, այդ թվում նաև աչքի պրոթեզավորում և ձայնաստեղծ սարքերի ձեռքբերում, հաշմանդամներին սայլակներով ապահովում, հաշմանդամներին, մինչև 18 տարեկան երեխաներին ու տարիքային կենսաթոշակառուներին լսողական սարքերով ապահովում, մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքերի ներդիրներով ապահովում, տեսողությունից հաշմանդամ անձանց համար հատուկ տեղեկատվական միջոցների ստեղծումը (հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, «Խոսող գրքերի» ձայնագրություն և այլն), հաշմանդամների հոգեկան առողջության վերականգնումը, հաշմանդամների բուժումը և բժշկասոցիալական վերականգնումը, տեսողությունից հաշմանդամ անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովումը, պետական աջակցություն «Փրկություն» հասարակական կազմակերպության մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային խնամքի կենտրոնին:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում ՀՀ քաղաքացի հաշմանդամները:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է հիմնականում «ԱՐԹՄԵԴ» բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի (2010 թ. փաստացի անվճար բուժօգնություն ստացողների թիվը կազմել է 687 մարդ), «Սթրես կենտրոն» ՓԲԸ-ի (2010 թ. փաստացի անվճար բուժօգնություն ստացողների թիվը կազմել է 391 մարդ) և այլ պետական ու սահմանված կարգով ընտրված մասնավոր կազմակերպությունների միջոցով:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման և աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության ծառայությունների եղանակով:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառ

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառի պետական մի-

ջամտությունը իրականացվում է աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման եղանակով: Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականին 802 անձինք աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցում են ստացել պետական բյուջեի միջոցներից:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երեխայի ծննդյան միանվագ նպաստների և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման եղանակով:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում նորածին երեխայի ծնողները և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձը, որը խնամում է մինչև 2 տարեկան երեխա:

2010 թ. 2009 թ. համեմատ արձանագրվել է ծնունդների թվի շուրջ 0.9 տոկոսով աճ, որի արդյունքում 2010 թ. ծնունդների թիվը հանրապետությունում կազմել է 44810 երեխա՝ 2009 թ. 44413 երեխայի փոխարեն:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում պետական միջամտությունը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման եղանակներով:

Այս բնագավառում շահառուներ են համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքները, ինչպես նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացող հանրապետությունում բնակչության առավել անապահով խմբերին դասված քաղաքացիները:

2010 թ. ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 138000 ընտանիքներից ընտանեկան նպաստ ստացել են միջինում 105005-ը՝ ընդհանուր հաշվառված ընտանիքների շուրջ 76,1%-ը, իսկ հրատապ օգնություն, միջինում 7743 ընտանիք կամ

ընդհանուր հաշվառվածների 5,6%-ը, ընտանեկան նպաստի իրավունք տվող սահմանային միավոր է սահմանվել 30.00:

2010 թ. շարունակվել է նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդ ներդրած անձանց (շուրջ 62000 մարդ) փոխհատուցման վճարումները: 2010 թ. փոխհատուցում են ստացել մինչև 34124 հերթական համարում ներառված անձը: Բացի այդ, 2010 թ. հունիսից սկսվել են Հայրենեկան մեծ պատերազմի վետերաններին՝ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարումները: Ավանդի փոխհատուցում ստանալու համար հաշվառված 2569 վետերանից փաստացի փոխհատուցում են ստացել 2416 վետերան:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառ

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՄ պատերազմի վետերանների, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության կամ հատուկ վճարների տրամադրման եղանակով:

2010 թ. 2009 թ. համեմատ «Վետերանների պատվովճարներ» և «ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրերի գծով արձանագրվել է շահառուների թվի նվազում համապատասխանաբար 15.9 տոկոսով (2009թ. 4202 մարդ) և 0.2 տոկոսով (2009թ. 26264 մարդ), որը պայմանավորված է ՀՄ պատերազմի վետերանների թվի նվազմամբ:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններում սպասարկման ծառայությունների մատուցման եղանակով:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցող օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք ու նրանց ընտանիքի անդամները:

Նշված ծառայությունները հիմնականում մատուցվում են «Հանրակացարաններ» ՓԲԸ-ը միջոցով, որը սպասարկում է հինգ տարբեր վայրերում գտնվող փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարանները: Վերոգրյալից բացի, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նմանատիպ սպասարկման ծառայություններ են մատուցվում նաև 3 այլ կազմակերպությունների ենթակայության տակ գտնվող փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններում:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառը ներառում է կենսաթոշակային ապահովության և սոցիալական ապահովագրության համակարգերը:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կենսաթոշակային տարիքի անձանց ապահովագրական և սոցիալական կենսաթոշակների, ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների, սպայական անձնակազմին և շարքային զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակության և հղիության ու ծննդաբերության նպաստների տրամադրման եղանակով:

2010 թ. փաստացի ապահովագրական կենսաթոշակ ստացողների թիվը կազմել է 465855 մարդ կամ 2009 թ. նկատմամբ 0.36 տոկոսով պակաս, սոցիալական կենսաթոշակ ստացողների թիվը՝ 50980 մարդ կամ 2009 թ. նկատմամբ 1.01 տոկոսով ավելի, սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամներին տրվող կենսաթոշակ ստացողների թիվը՝ 36484 մարդ կամ 2009 թ. նկատմամբ 0.3 տոկոսով պակաս, շարքային զինծառայողների՝ 8578 մարդ կամ 2009 թ. նկատմամբ 6.5 տոկոսով պակաս:

2010 թ. ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվը կազմել է 875525 օր կամ 2009 թ. նկատմամբ 12.8 տոկոսով պակաս, իսկ հղիության ու ծննդաբերության օրերի թիվը 2009 թ. նկատմամբ աճել են 11.3 տոկոսով:

9.1.2 Վերջին տարիների զարգացման միտումները ոլորտում

Վերջին տարիներին արձանագրվել է ՀՀ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի (առանց գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի) մակարդակի կայուն աճի միտում (միայն 2009-2010թթ. այդ ոլորտին ուղղված ընդհանուր ծախսերի մակարդակը 240.5 մլրդ. դրամից աճել է 240.9 մլրդ. դրամի): Ոլորտում ծախսերի մակարդակի նման

աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների ու պետական նպաստների չափերի շարունակական աճի ապահովմամբ:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Բարելավվել է տարեցների տուն-ինտերնատներում մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ մեկ խնամվողի մեկ օրվա սննդի գումարի չափը 2009 թ. բարձրացվել է 20%-ով (2008 թ. 1036.6 դրամի դիմաց դառնալով 1243.9 դրամ), իսկ 2010 թ. 2009 թ. նկատմամբ մնացել է անփոփոխ: 2009 թվականին 15 հաստիքային միավորով ավելացել է տարեցների տուն-ինտերնատների սպասարկող անձնակազմի թվաքանակը (2008 թ. 610.5 հաստիքային միավորի դիմաց հասնելով 625.5-ի), անփոփոխ թողնելով շահառուների թիվը: 2010 թ. ընթացքում նախատեսվել էր (Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում) շահառուների թվի ավելացում 40 մարդով 2009 թ. 1010 շահառուի դիմաց, արդյունքում փաստացի խնամք է կազմակերպվել 2010 թ. 1034 շահառուի համար 2009 թ. 1004 շահառուի դիմաց:

Վերջին տարիներին բարելավվել են նաև տարեցների տուն-ինտերնատների կոմունալ-կենցաղային պայմանները: Մասնավորապես, 2008-2010թթ. իրականացվել է մասնակի վերանորոգում Երևանի թիվ 1 և Նորքի տուն-ինտերնատներում:

2009 թ. 20-50%-ով բարձրացել է նաև տարեցների տուն-ինտերնատների, տնային պայմաններում միայնակ տարեցների, հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի և անօթևանների ժամանակավոր կացարանի աշխատակիցների աշխատավարձը:

2008 թ. 25%-ով ավելացել է տնային պայմաններում սպասարկվող միայնակ ծերերի թիվը 1200-ից դառնալով 1500, որի արդյունքում համամասնորեն աճել են նաև բյուջետային հատկացումները: 2009-2010 թթ. 2008թ. համեմատությամբ նախատեսված տնային պայմաններում սպասարկվող միայնակ ծերերի և հաշմանդամների թիվը չի փոխվել, իսկ փաստացի խնամք է կազմակերպվել 2010 թ. 1497 շահառուի համար 2009 թ. 1488 շահառուի դիմաց:

2009-2010 թթ. ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Երևան քաղաքում և Հանրապետության մարզերում միայնակ ծեր և հաշմանդամ քաղաքացիների սպասարկման նպատակով, առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին (աշխատակիցների աշխատավարձի և սոցիալական ապահովության վճարի մասով)՝ 2009 թ. 6611 շահառուի և 2010 թ. 4771 շահառուի համար:

Վերջին տարիներին ավելացվել է անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանի տեղերը (2009թ. 10-ով 2008թ.՝ 50 մարդ մինչև 60 օր տևողությամբ): Արդյունքում, 2009-2010թթ. անօթևանների ժամանակավոր կացարանում սպասարկվել է շուրջ 559 մարդ, որոնցից 94-ի կամ 16.8%-ի

հիմնահարցերը լուծվել են (պատրաստվել են փաստաթղթերը և ընդունվել տուն-ինտերնատ, ձեռք են բերել հաշմանդամի կարգավիճակ, վերադարձել են ընտանիք, տեղավորվել աշխատանքի և այլն): Վերը նշվածը կատարվել է բյուջետային հատկացումների 2.0 % աճի պայմաններում (2009 թ. փաստացի հատկացվել է 53.1 մլն. դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տուն-ինտերնատներում, տնային պայմաններում սպասարկման կենտրոնում, Վարդենիսի ցերեկային կենտրոնում և անօթևանների ժամանակավոր կացարանում սպասարկվող անձնաց թվաքանակը կմնա անփոփոխ՝ պահպանելով 2011 թվականի մակարդակը: Կաճեն բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները և կպահպանվեն ՀՀ պետական բյուջեից առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին պետական աջակցության մակարդակը:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

2009 թ. մանկատներում նախատեսված 935 երեխայի փոխարեն փաստացի խնամք են ստացել շուրջ 835 երեխա: 2010 թ. տարվա ընթացքում մեկ մանկատուն վերակազմակերպվել է գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատության, արդյունքում նախատեսված 860 երեխայի դիմաց փաստացի ծառայություն է մատուցվել 816 երեխայի: Մանկատներում խնամվող շահառուների թվաքանակի նվազումը հիմնականում պայմանավորված է բնագավառում այլընտրանքային ծառայությունների առկայության հանգամանքով: Չնայած դրան, նույն ժամանակահատվածում մասնագիտացված մանկատներում նկատվել է սպասարկվող երեխաների թվի աճ (2009 թվականին 378, իսկ 2010 թվականին 400 երեխա): Սակայն, հաշվի առնելով մասնագիտացված մանկատների համար հաշվառված երեխաների պահանջը, այդ տարիներին շահառուների ընդհանուր թիվը մնացել է անփոփոխ, իսկ բյուջետային հատկացումները նվազել են 1.1 % (2009 թ. ամբողջ ծրագրին փաստացի հատկացվել է 1 593.4 մլն. դրամ):

Բարելավվել է երեխաների խնամքով զբաղվող հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ մեկ խնամվողի մեկ օրվա սննդի գումարի չափը 2009 թ. 2008 թ. համեմատ բարձրացվել է 20%-ով և դարձել 1161.2 դրամ, ինչպես նաև 20-30%-ի սահմաններում բարձրացվել է այդ հաստատությունների աշխատակիցների աշխատավարձը: 2009 թվականին 45 հաստիքային միավորով ավելացել է նաև մանկատների աշխատողների թիվը (2008 թ. 809 հաստիքային միավորի դիմաց), շահառուների թիվը թողնելով անփոփոխ: 2010 թ. ծառայությունների ծավալը պահպանվել է 2009 թ. չափով:

Բեռնաթափման ծրագրի շրջանակներում 2009 և 2010 թվականներին Լոռու մարզի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից յուրաքանչյուր տարի 40 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք և կանխարգելվել է 10 երեխայի մուտք

հաստատություններ: 2009 թ. բեռնաթափման ընտանիքին տրվող օժադակության փաթեթի ծախսը ավելացել է կապված սննդամթերքի գումարի աճով 20 % չափով, իսկ 2010 թ. 2009 թ. համեմատ մնացել է անփոփոխ:

2003 թ. իրականացվում է «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը: Նախարարության և «Հայ Օգնության Միություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ սոցիալական գործընկերության շրջանակներում կնքված պայմանագրի համաձայն 2009-2010թթ. 40 շահառուի ցուցաբերվել է բազմակողմանի աջակցություն՝ կրթական, առողջապահական, իրավական, սոցիալ-հոգեբանական: Նախորդ տարիներին բնակարանների գնման գործընթացում բացահայտված բազմաթիվ թերություններով պայմանավորված, 2009 թ. և 2010 թ. չեն գնվել ծրագրով շահառուների համար նախատեսված բնակարանները, արդյունքում այդ նպատակով նախատեսված բյուջետային հատկացումներ չեն կատարվել:

2009-2010 թթ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մանկատներից 23 երեխա տեղավորվեցին խնամատար ընտանիքներում: Բյուջետային հատկացումները 2009-2010 թթ. ինչպես մեկ շահառուի, այնպես էլ խնամատար ծնողին տրվող վարձատրության մասով մնացել են անփոփոխ՝ կապված երեխաների տուն-ինտերնատներում մեկ երեխայի (հաշմանդամ երեխայի) ապրուստի համար նախատեսված գումարի չափի և ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի պահպանմամբ:

Երեխաների ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականության շրջանակներում ՀՀ Կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների գերակա խնդիր է համարվում մանկատների բեռնաթափումը, ինչը պայմանավորված է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրականացմամբ: Արդյունքում 2011 թ. կստեղծվի երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների նոր տիպ՝ «Ձատիկ» մանկատունը կվերակազմակերպվի երեխաների աջակցության կենտրոնի:

2009-2010 թթ. ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Երևան քաղաքում և Հանրապետության մարզերում երեխաների և հաշմանդամների սպասարկման նպատակով, առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին (աշխատակիցների աշխատավարձի և սոցիալական ապահովության վճարի մասով)՝ 2009թ. 515 շահառուի և 2010թ.՝ 600 շահառուի համար՝ բյուջետային հատկացումները մնացել են անփոփոխ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մանկատներում, գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններում, ցերեկային կենտրոններում սպասարկվող անձնաց թվաքանակը կմնա անփոփոխ՝ պահպանելով 2011 թվականի մակարդակը: Կպահպանվեն նաև

բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին պետական աջակցության մակարդակը:

Զբաղվածության բնագավառ

2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, նկատվել է գործազրկության մակարդակի 0.4 %-ով աճ: 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 6.9 % (այն հանրապետության միջինից բարձր է Լոռու՝ 11.1%, Սյունիքի՝ 10.1 %, Շիրակի՝ 9.6 %, Կոտայքի՝ 9.3%, Տավուշի՝ 8.7%, մարզերում և Երևան քաղաքում 8.1%), 2010 թ.-ի տարեսկզբի 7.1%-ի փոխարեն:

Նույն ժամանակահատվածում համանման միտումներ նկատվել են նաև աշխատանք փնտրողների և գործազուրկների թվաքանակում: Մասնավորապես՝ 2008-2010 թթ. նկատվել է աշխատանք փնտրողների թվի աճ (աճի տեմպը կազմել է 0.8): 2008-2009 թթ. գործազուրկների թիվը աճել է (աճի տեմպը կազմել է 0.23), իսկ 2010 թ. 2009 թ. նկատմամբ՝ նվազել է (նվազման տեմպը կազմել է 0.07):

2011 թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային և մարզային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 93.2 հազար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 5.7 %-ով (99.3 հազ. մարդ): Գործազուրկների թվաքանակը կազմել է 78.8 հազ մարդ կամ աշխատանք փնտրողների 84.5%-ը: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.9 %-ով:

2010 թ. ընթացքում աշխատանքի է տեղավորվել 11315 աշխատանք փնտրող, այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 20.4 %-ով:

2010 թ. Երևանի «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» (այսուհետ՝ կենտրոն) ՊՈԱԿ-ի մասնագետները Երևանում և ՀՀ մարզերում ծառայություն է մատուցել ավելի քան 5000 շահառուի: 2009 թ. համեմատ ընդլայնվեցին մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունները, մշակվեցին նոր մեթոդներ: Մասնավորապես, ոչ ֆորմալ ուսուցման ծրագրերն ավելացան մինչև 12 թեմա, տեղայնացվեցին աշակերտների անհատական սպասարկման համար նախատեսված անձնային որակները բացահայտող թեստերը: Կենտրոնում իրենց ուսումնական պրակտիկան անցավ շուրջ 80 ուսանող, կամավորական աշխատանքներում ներգրավվեց 19 երիտասարդ:

Կարևոր ձեռքբերումներից մեկն էլ այն էր, որ ստեղծվեց գործընկերների կայուն համացանց բոլոր մարզերում, աճեց մարզային շահառուների թիվը մինչև 2050-ի: Երևանում ևս կենտրոնը ստեղծեց գործընկերների լայն շրջանակ: Այս ամենին զուգահեռ էականորեն բարձրացավ

ծառայությունների որակը՝ 2010 թ. նախորդ տարվա համեմատ բյուջետային հատկացումները ավելացել են 0.3 %, (2009 թ. փաստացի հատկացումը կազմել է 17.7 մլն. դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես կաճեն բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները՝ զբաղվածության բնագավառի շահառուների թիվը թողնելով անփոփոխ՝ պահպանելով 2011 թվականակի մակարդակը:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

2009-2010 թվականներին շեշտադրում է կատարվել պրոթեզների և վերականգնողական պարագաների տեսականու ընդլայման և որակի բարձրացման վրա:

2010 թվականին փաստացի հատկացվել և վերանորոգվել է 15705 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, այդ թվում՝ 100 ծայնաստեղծ սարք, 70 աչքի պրոթեզավորում կամ 18.4% ավելի 2009 թվականի համեմատ (2009 թվականին փաստացի հատկացվել և վերանորոգվել է 13265 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, այդ թվում՝ 120 ծայնաստեղծ սարք, 97 աչքի պրոթեզավորում), իսկ բյուջետային հատկացումները աճել են 8.3% (2009 թ. փաստացի հատկացումները կազմել են 883.9 մլն. դրամ):

2010 թվականին հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով և լսողական սարքերի ներդիրներով ապահովման նպատակով փաստացի բաշխվել է 1487 լսողական սարք, այդ թվում 277-ը՝ եվրոպական արտադրության, 200 լսողական սարքի ներդիր և 497 հաշմանդամի սայլակ 2009 թվականի 1348 լսողական սարքի, այդ թվում 298-ը՝ եվրոպական արտադրության, 396 հաշմանդամի սայլակի, 200 լսողական սարքի ներդիրների դիմաց՝ բյուջետային հատկացումների 9.4 % աճի պայմաններում (2009 թ. փաստացի հատկացումները կազմել են 103.7 մլն. դրամ):

«Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնի տեխնիկական հագեցվածության բարելավմամբ, սպասարկման տեսականու ընդլայնմամբ և բուժման որակի բարձրացմամբ պայմանավորված, վերջին տարիների ընթացքում աստիճանաբար ավելացել է այդ կենտրոնում փաստացի բուժված հիվանդների թիվը (2008թ.՝ 631 հիվանդ, 2009թ.՝ 723 հիվանդ, 2010թ.՝ 687 հիվանդ): Ընդ որում, միայն 2009 թ. բյուջեից կենտրոնին հատկացված գումարների շրջանակներում հնարավոր է եղել բուժել նախատեսվածից մոտ 22 տոկոսով ավելի շատ հիվանդներ (723 հիվանդ՝ նախատեսված 591 հիվանդի փոխարեն), ինչը պայմանավորված է 2009թ. մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին գնի իջեցմամբ (11.5 հազ. դրամ նախատեսված 13.0 հազ. դրամի դիմաց):

«Սթրես կենտրոն» ՓԲԸ-ում, որտեղ կատարվում է հաշմանդամների հոգեկան առողջության վերականգնում և ստացիոնար բուժում 2008-2010թթ. փաստացի բուժում են ստացել համապատասխանաբար 413 հիվանդ, 459 հիվանդ և 391 հիվանդ: Ընդ որում, միայն 2009 թ. բյուջեից

կենտրոնին հատկացված գումարների շրջանակներում հնարավոր է եղել բուժել նախատեսվածից մոտ 11.5 տոկոսով ավելի շատ հիվանդներ (459 հիվանդ՝ նախատեսված 392 հիվանդի փոխարեն), ինչը պայմանավորված է 2009թ. մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջին գնի իջեցմամբ (11.5 հազ. դրամ նախատեսված 13.0 հազ. դրամի դիմաց):

2006 թ. սկսած գործում է «Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» ծրագիրը: 2009-2010 թթ. ծրագրի շրջանակներում կազմակերպվել և կատարվել են հետևյալ աշխատանքներ՝ բրայլյան գրքեր՝ 42336 թերթեր, բրայլյան տետրեր՝ 1000 հատ, Հայաստանի Կույրերի միավորման օրգան ամենամսյա «Բյուլետեն»՝ 74400 թերթեր, «խոսող գիրք» 1500 ժամ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնացել են անփոփոխ:

2008 թ. սկսած գործում է «Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցում» և «Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովում» ծրագրերը: 2008-2010թթ. նրանցում ընդգրկվել են տեսողության խնդիրներ ունեցող 20 հաշմանդամներ: Բյուջետային հատկացումները աճել են 0.9% (2009 թ. փաստացի հատկացումները կազմել են 16.1 մլն. դրամ):

2009-2010 թթ. ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Երևան քաղաքում և Հանրապետության մարզերում հաշմանդամ քաղաքացիների սպասարկման նպատակով, առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին (աշխատակիցների աշխատավարձի և սոցիալական ապահովության վճարի մասով)՝ 2009թ. 52 շահառուի և 2010թ.՝ 50 շահառուի համար:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կպահպանվեն ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի մակարդակը դրսևորել է կայուն աճի միտում, մասնավորապես, 2008 և 2009 թթ. այն աճել է համապատասխանաբար 25 %-ով և 20 %-ով (2007 թ.՝ 20000 դրամ):

2007-2009 թվականներին նվազագույն աշխատավարձի բարձրացման միջոցառումները ուղղված էին նվազագույն աշխատավարձի արդյունավետ չափի սահմանման պետական երաշխիքի ապահովման պահանջի, ինչպես նաև ԱՄԿ N 131 կոնվենցիայով և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով՝ ՀՀ ստանձնած պարտավորությունների իրացմանը:

Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի չափը (որը աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների միջին գումարն է մեկ աշխատողի

հաշվով) 2008 թվականին հանրապետությունում կազմել է 87406 դրամ, որը 2007 թվականի նկատմամբ աճել է 17.8%-ով, 2009 թվականին՝ 96019 դրամ, որը 2008 թվականի նկատմամբ աճել է 9.9%-ով, իսկ 2010 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 108852 դրամ, որը 2009 թվականի նկատմամբ աճել է 13.4%-ով (2010 թ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, «Բնակչության կենսամակարդակը և սոցիալական ոլորտը» բաժին):

Արդյունքում, 2008 թվականին նվազագույն ամսական աշխատավարձը կազմել է միջին ամսական աշխատավարձի 28.1%-ը, 2009 թվականին՝ 29.4%-ը, իսկ 2010 թվականին՝ 27.6%-ը:

Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը 2008 թվականի հունվարի 1-ից այն դարձել է 40000 դրամ՝ աճելով 2007 թվականի նկատմամբ 12.7%-ով: 2009-2010 թվականներին պահպանվել է 2008 թվականի ցուցանիշը:

Աշխատանքային պարտավորությունների հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում ստացող անձանց թիվը 2010թ. նվազել է 4.6 %-ով 2009թ. 841 անձի դիմաց:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող առանձին հաստատություններում հաշվարկային միջին ամսական աշխատավարձի չափի շարունակական աճը:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

2010 թ. մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թիվը կազմել է 11884 մարդ 2009 թ. 7114 մարդու դիմաց, որը պայմանավորված էր նպաստի ամսական չափի փոփոխմամբ, այն կազմել է տվյալ տարվա ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի 60%-ը: Բյուջետային հատկացումները աճել են շուրջ 38.0 %-ով (2009 թ. փաստացի հատկացումները կազմել են 1 860.1 մլն. դրամ):

2010 թ. երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թիվը կազմել է 43652 մարդ 2009 թ. 45823 մարդու դիմաց: 2010 թ. պահպանվել է 2009 թ. երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը և ներդրված երեխայի ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգը: Բյուջետային հատկացումները նվազել են 6.8%-ով (2009 թ. փաստացի հատկացումները կազմել են 5 065.9 մլն. դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թվի աճ՝ բյուջետային հատկացումների ավելացման պայմաններում: Բացի այդ, 2014 թ. կներդրվի 3-րդ և ավելի երեխայի ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման նոր համակարգ:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 3 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը հիմնվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների վրա, ընտանեկան նպաստի չափի փոփոխություն՝ տարբերակելով այն պայմանավորված ընտանիքի անապահովության մակարդակով, ընտանիքի բնակության վայրով (սահմանամերձ և բարձր լեռնային) և ընտանիքում երեխաների թվով:

Ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ մտնում են ընտանիքի անդամների աշխատանքի վարձատրությանն ուղղված հաշվարկված, վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները, կենսաթոշակը, գործազրկության նպաստը, ինչպես նաև անասնապահությունից և հողագործությունից ստացվող եկամուտը: Ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխությունները դիտարկվել են սոցիալական պաշտպանության քաղաքականության ամբողջության մեջ, այն առումով, որ դրանք համահունչ լինեն տարեցտարի առաջնային եկամուտների՝ աշխատավարձ, կենսաթոշակ բարձրացմանը:

2008 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվեց «30.00», նախորդ տարվա «33.0» անապահովության միավորի դիմաց: Այս մեծությունը պահպանվել է նույնությամբ մինչև 2011 թվականը ներառյալ:

2008 թվականին սահմանային միավորի «կտրուկ» իջեցումը պայմանավորված էր կենսաթոշակի չափի աննախադեպ բարձրացմամբ:

Այս միջոցառմամբ հնարավորություն ընձեռվեց կենսաթոշակի բարձրացման պայմաններում համակարգում պահել կենսաթոշակառու ունեցող ընտանիքներին, ընդ որում միայնակ անժառանգ կենսաթոշակառուների համար սահմանվեց ընտանեկան նպաստի ձեռք բերման արտոնյալ պայման՝ մինչև 30 հազար դրամ եկամուտ (կենսաթոշակ) ունեցող միայնակ անժառանգ կենսաթոշակառու ձեռք է բերում ընտանեկան նպաստի իրավունք: Նշված մոտեցումը շարունակվեց հաջորդող տարիներին նույնպես՝ 2009 թվականի հունվարի 1-ից գործող կարգով մեղմացվեց եկամտի ազդեցությունը, եկամտի վերոհիշյալ շեմը հավասարեցվեց 36300 դրամի, իսկ 2011 թվականի համար այն դարձավ շուրջ 42000 դրամ: Այսպիսով 2010 թվականի նոյեմբերին կենսաթոշակի չափի բարձրացման ազդեցությունն սոցիալապես անապահով կենսաթոշակառուների համար՝ ընտանեկան նպաստի իրավունքի որոշման հարցում, հնարավորինս մեղմացվեց, իսկ միայնակ անժառանգ կենսաթոշակառուների համար՝ չեզոքացվեց:

Այս տարիների ընթացքում ընտանեկան նպաստի ծրագրում արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

Աղյուսակ 9.1 «Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագիրը ՀՀում 2006-2010թթ.

	2006	2007	2008	2009	2010
հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	23.81	22.14	21.54	19.16	18.0
նպաստառու ընտանիքներ(% հաշվառված ընտանիքների թվից)	72.25	72.29	73.25	73,4	76.1
նպաստառու ընտանիքներ	130190	124689	121160	107492	105005
երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	72.20	75.90	76.34	81.33	80.5
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	24.0	26.407	29.38	29.2	31.022
Նպաստի միջին ամսական չափ	15000	17500	21100	23560	26850

Ինչպես երևում է աղյուսակից տարեց տարի նվազում է համակարգում հաշվառված, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը, չնայած որ համակարգում հաշվառումը կամավոր է, իսկ նպաստի միջին ամսական չափը բարձրանում է: Իսկ եթե հարցը դիտարկվի 2008-2010 թթ. աղքատության մակարդակի բարձրացման համատեքստում (համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության 2009 թվականի տվյալների 2009 թվականին աղքատության մակարդակը կազմել է 34.1 % 2008 թվականի 27.6 %-ի դիմաց), ապա նպաստառու ընտանիքների թվի նվազումը պետք է գնահատել խնդրահարույց:

Պահպանվում է նպաստառու ընտանիքների կազմում երեխա ունեցող ընտանիքների բարձր տեսակարար կշիռը, ինչը համահունչ է պետության որդեգրած քաղաքականությանը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաների առաջնահերթության սկզբունքին:

Իսկ 2010 թվականին երեխա ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը նպաստառու ընտանիքների մեջ 0.83 տոկոսային կետով նվազելու հանգամանքը կարելի է բացատրել ծրագրի հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումներով, մասնավորապես ծրագրում ընդգրկված աշխատելու հանգամանքը կամ աշխատավարձի իրական չափը թաքցնող անձանց հայտնաբերմամբ: Քանի որ համակարգում ընդգրկված նպաստառու ընտանիքներում աշխատունակ անձինք առավելապես երեխա ունեցող ընտանիքներում են, հետևաբար նշված պատճառով նպաստառու-

թյան ոչ ենթակա ճանաչված ընտանիքներն այդ կազմով ընտանիքների շարքում ավելի մեծ տոկոս են կազմել:

Դեռևս մեծ է ընտանեկան նպաստի ազդեցությունը աղքատության, առավելապես ծայրահեղ աղքատության կրճատման հարցում:

Ըստ ՀՀ ԱՎԾ 2009 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների ընտանեկան նպաստի ծրագրի ազդեցության գնահատականը հետևյալն է.

Եթե հանրապետությունում չիրականացվեր ընտանեկան նպաստի ծրագիրը ապա, 2008 թվականին ծայրահեղ աղքատության մակարդկը կլիներ 4.6 % 1.6 %-ի դիմաց, աղքատությունը՝ 30.0 %, 27.1 %-ի դիմաց, իսկ 2009 թվականին՝ ծայրահեղ աղքատությունը՝ 6.4 %, 3.6 %-ի դիմաց և աղքատության մակարդակը՝ 36.5 % 34.1 %-ի դիմաց:

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է նպաստառուների թիվը պակասեցնել՝ նպաստի միջին ամսական չափի աճի պայմաններում:

2006 թվականի ընթացքում հաշվառված ավելի քան 62 հազար անձանցից՝ 132 հազար ավանդային գրքույկներով, 2010 թ. շարունակվել է նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդ ներդրած անձանց փոխհատուցման վճարումները և փաստացի փոխհատուցում են ստացել մինչև 34124 հերթական համարում ներառված անձը:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները:

Սոցիալական արդարության բնագավառ

Բռնադատված քաղաքացիներին նրանց կրած վնասի դիմաց տրամադրվում է միանվագ դրամական փոխհատուցում հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի տասներկուապատիկի չափով:

2010 թվականին նախատեսվել է փոխհատուցում հատկացնել 83 շահառուի, իսկ փաստացի փոխհատուցում է ստացել 32 շահառու, քանի որ դիմումների փաստացի թիվը քիչ է եղել: Այս ցուցանիշը 2009 թվականի նույն ցուցանիշի (70 շահառու) նկատմամբ նվազել է 45.7%-ով:

Վերը նշվածով պայմանավորված ՀՀ 2010 թ. փաստացի ֆինանսավորումը 2009 թ. (0.8 մլն. դրամ) նկատմամբ նվազել է 50.8%-ով:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառ

«Վետերանների պատվովճարներ» և «ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրերի շրջանակներում շահառուներին տրվող վետերանների համար նախատեսված պատվովճար և առանձին հանրային ծառայությունների գծով տրվող դրամական օգնություն ստացող շահառուների թիվը 2009 թ. նախորդ տարա համեմատ փոփոխվել է՝ նվազել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների թվաքանակը 15.5% (2008 թ. 4646 մարդ), իսկ դրամական օգնություն ստացող զինծառայողների ընտանիքների թիվը աճել է 3.9% (2008 թ. 16864 մարդ): 2009 թ. հունվարի 1-ից, որը պահպանվել է նաև 2010 թ., Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին տրամադրվող դրամական օգնության չափը դարձել է 4500 դրամ (2008 թ.՝ 3800), հաշմանդամ վետերաններին՝ 6800 դրամ (2008 թ.՝ 5700), հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին՝ 9100 դրամ (2008 թ.՝ 7500), զոհված զինծառայողի ընտանիքում 5 և ավելի անդամ ունեցող ընտանիքի հինգից ավելի յուրաքանչյուր անդամի համար լրացուցիչ տրամադրվող դրամական օգնության չափը դարձել է 3000 դրամ (2008 թ.՝ 2500 դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն՝ շահառուների թվի փոփոխության պայմաններում:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններ սպասարկվող շահառուների ընդհանուր թվաքանակը 2008-2009 թթ. կազմել է 855 մարդ:

2009 թ. նախորդ տարվա համեմատ բարելավվել է ժամանակավոր կացարաններում մատուցվող ծառայությունների որակը, մասնավորապես՝ կատարվել է աշխատողների աշխատավարձի չափի աճ 20%-ի չափով, «Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրի շրջանակներում «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում կատարվել է նաև ժամանակավորապես բնակվող շահառուների համար սննդի ծախսերի 20%-ի չափով բարձրացում: Արդյունքում բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճել են 15%-ով:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կպահպանվեն բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման միտումները:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

2008-2009 թթ. աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների վճարմանն ուղղված փաստացի միջոցները աճել են 14.9 %-ով (2008 թ.՝ 128 207.2 մլն.դրամ), արդյունքում միջին ամսական աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի չափը 2008 թ. կազմել է 21842 դրամ, 2009 թ.՝ 25686 դրամ կամ աճը շուրջ 17.6 տոկոս, իսկ 2010 թվականի նոյեմբերի 1-ից միջին ամսական աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակը բարձրացել է դառնալով 28623 դրամ (աճը շուրջ 11 տոկոս):

2009-2010 թթ. արձանագրված միջին ամսական կենսաթոշակի աճը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի բարձրացմամբ (2010 թ. նոյեմբերի 1-ից այն կազմել է 10500 դրամ), իսկ 2008-2009 թթ. աճը՝ հիմնական կենսաթոշակի (2009 թ.՝ 8000 դրամ, 2008 թ.՝ 6800 դրամ) և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ (2009 թ.՝ 450 դրամ, 2008 թ.՝ 395 դրամ):

2008-2009 թթ. աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցների աճը ուղեկցվել է կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ՝ 2009 թ.՝ 467555 կենսաթոշակառու 2008 թ.՝ 469107 կենսաթոշակառուի փոխարեն, իսկ 2010 թ.՝ 465855 անձ կամ նախորդ տարվա համեմատ 0.36 տոկոսով պակաս:

Աճել են նաև սոցիալական կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները 2008-2009 թթ.՝ շուրջ 25 %-ով (2008 թ.՝ 5 260.1 մլն. դրամ):

2008-2009 թթ. սոցիալական կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցների աճը արդյունք է միջին ամսական սոցիալական կենսաթոշակի աճի՝ պայմանավորված հիմնական կենսաթոշակի չափը 6800 դրամի փոխարեն 2009 թվականի հունվարի 1-ից 8000 դրամ սահմանելով և սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակի աճով: 2010 թ. նոյեմբերի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվեց 10500 դրամ, արդյունքում միջին ամսական սոցիալական կենսաթոշակի չափը կազմել է 13197 դրամ, կամ 2009 թ. համեմատությամբ (10073 դրամ) շուրջ 31 տոկոսով ավելի:

Սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 2008 թ.՝ 48632 մարդ (աճը 3.1 %), 2009 թ.՝ 50470 մարդ (աճը 3.8 %), 2010 թ.՝ 50980 մարդ (աճը 1.01 %):

2010 թ. 2009 թ. համեմատ աճել են նաև սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները շուրջ 2.0 %-ով 2009 թ.՝ 19 738.4 մլն. դրամի դիմաց:

Աճի միտումները արդյունք են և կենսաթոշակառուների թվաքանակի և միջին ամսական կենսաթոշակի չափի փոփոխությունների:

Կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 2009 թ.՝ 35377 կենսաթոշակառու (նվազել է 0.3 %), 2010 թ.՝ 36484 կենսաթոշակառու (աճը 3.1 %):

Միջին ամսական կենսաթոշակի չափը կազմել է 2009 թ.՝ 45355 դրամ (աճը 6.6%), 2010 թ.՝ 46055 դրամ (աճը 1.5%), որը պայմանավորված է սպայական անձնակազմի պաշտոնական դրույքաչափի բարձրացմամբ, որից հաշվարկվում է կենսաթոշակը:

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում իրականացված փոփոխությունների համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ 2010 թ. սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության համար ծախսված միջոցների շուրջ 15 տոկոսը կամ շուրջ 3 000.0 մլն. դրամը կազմել է նախկին օրենսդրությամբ սահմանված՝ զինվորական կենսաթոշակին տրվող հավելումների գումարը:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակներին ուղղված միջոցների նվազումը 2010 թ. կազմել են շուրջ 13 % պակաս (2009 թ. 2 531.1 մլն. դրամ):

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակներին ուղղված միջոցների դինամիկան ուղեկցվել է կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ՝ 2009 թ.՝ 9176 անձ (նվազումը՝ 11.9 %), 2010 թ.՝ 8578 անձ (նվազումը՝ 6.5 %), իսկ կենսաթոշակի միջին ամսական չափը աճել է 2008 թ. կազմելով 17784 դրամ, 2009 և 2010 թթ.՝ 19728 դրամ, որը պայմանավորված է բազային կենսաթոշակի չափի աճով (2008 թ.՝ 5000 դրամ, 2009 թ. հունվարի 1-ից՝ 5800 դրամ):

Կենսաթոշակառուների թվաքանակի նվազման միտումները արդյունք են այն հանգամանքի, որ կենսաթոշակի իրավունք ունեցողների շարքում են ՀՊՄ մասնակից շարքային հաշմանդամները, ինչպես նաև արցախյան ազատամարտի նահատակների անչափահաս խնամարկյալները, ում թիվը բնականաբար նվազում է:

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում իրականացված փոփոխությունների համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ 2010 թ. շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության համար ծախսված միջոցների շուրջ 59 տոկոսը կամ շուրջ 1 292.7 մլն. դրամը կազմել է նախկին օրենսդրությամբ սահմանված՝ զինվորական կենսաթոշակին տրվող հավելումների գումարը:

ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների փաստացի ծախսը 2010 թ. 2009 թ. համեմատ կազմել է շուրջ 2.2%-ով ավելի (2009 թ.՝ 218.9 մլն. դրամ):

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի փաստացի ծախսը 2010 թ. կազմել է 7.3 %-ով ավելի 2009 թ. համեմատությամբ (1 910.6 մլն. դրամ), որը պայմանավորված է միջին օրական

նպաստի չափով (2009 թ.՝ 2452 դրամ (աճը՝ 3.2 %), 2010 թ.՝ 2699 դրամ (աճը՝ 10.1 %)) և ժամանակավոր անաշխատունակության օրերի թվով՝ 2009 թ.՝ 1003676 օր (աճը՝ 1.2 %), 2010 թ.՝ 875525 օր (նվազել է 12.8 %):

Հղիության և ծննդաբերության նպաստի փաստացի ծախսը 2010 թ. կազմել է 1 %-ով ավելի 2009 թ. համեմատությամբ (2 564.5 մլն. դրամ), որը պայմանավորված է հղիության և ծննդաբերության նպաստի օրերի թվի աճով (2008-2009 թթ.՝ 2.5%-ով, 2009-2010 թթ.՝ 11.3%-ով) և բնակչության աշխատանքային եկամուտների աճով (որից կախված է նպաստի չափը):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կանխատեսվում է կենսաթոշակառուների թվի փոփոխություն և կենսաթոշակի միջին ամսական չափի աճ, ինչպես նաև հղիության և ծննդաբերության ու ժամանակավոր անաշխատունակության նպաստների օրերի թվի և մեկ օրվա նպաստների չափերի աճ:

9.1.3 Ոլորտի հիմնական խնդիրները

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

տուն-ինտերնատների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ պահանջարկի մեծացմամբ պայմանավորված, տարեցների շուրջօրյա խնամքի առանձին հաստատությունների (Գյումրիի տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատ ու Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ) առկա կարողությունները չեն բավարարում անհրաժեշտ ծավալներով ծառայություններ մատուցելու համար,

տարեց և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ տրամադրող աշխատակիցների աշխատավարձի չափի ցածր մակարդակով պայմանավորված,

տարեցների և հաշմանդամների շուրջօրյա խնամքի առանձին հաստատություններում որակյալ ծառայությունների տրամադրման համար չկան պատշաճ պայմաններ (որոշ տուն-ինտերնատների առանձին մասնաշենքեր կապիտալ վերանորոգման կարիք ունեն),

անօթևան մնացած անձանց համար հանրապետությունում՝ հատկապես Գյումրի քաղաքում ժամանակավոր կացարանների բացակայությունը,

տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող հայեցակարգային փաստաթղթի բացակայությունը,

տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների նոր անհրաժեշտ մոդելների բացակայությունը (համայնքային կենտրոններ, հոսպիսներ, անօթևան մնացած մարդկանց սոցիալական օգնության շարժական կայաններ, սոցիալական տներ, անկողնային հիվանդների համար առանձնացված բաժանմունքներ և այլն):

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

Չնայած, որ մանկատներում խնամվող երեխաների ընդհանուր թիվը նախորդ տարիների համեմատ պակասել է, այնուամենայնիվ, մասնագիտացված մանկատներում տարեց տարի նկատվում է խնամվող երեխաների թվի աճ, ինչը խնդիրներ է առաջացնում նրանց տեղավորման հարցում: Նման տենդենցը պայմանավորված է հանրապետությունում համապատասխան մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների (ցերեկային կենտրոններ, վերականգնողական կենտրոններ և այլն) պակասով, ինչպես նաև պետական հոգաձության կարիք ունեցող հիվանդ երեխաների թվի աճով:

2008-2010 թթ. պետական քաղաքականության վերանայման պատճառով, մանկատների շրջանավարտների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց համար չեն գնվել բնակարաններ: Արդյունքում այդ երեք տարիների ընթացքում ավելացել է առանց այդ էլ նախորդ տարիներից գոյացած մեծ հերթը և բնակարանային հերթում հաշվառված մանկատների շրջանավարտների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց թիվը հասել է շուրջ 300-ի:

Ազգային և տարածաշրջանային մակարդակներում հասարակականքաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում քաղաքականության մշակման մեջ և քաղաքական պրակտիկայում գենդերային բաղադրիչի ներառումը, զարգացման ազգային երկարաժամկետ, միջնաժամկետ և նպատակային ծրագրերի մշակման մեջ գենդերային չափման ներդրումը, գենդերային հավասարության հասնելու ազգային մեխանիզմի ստեղծումը, իրավական ակտերի գենդերային փորձաքննության անցկացումը, հատուկ միջոցառումների իրականացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային անհավասարակշռության հաղթահարման համար:

Զբաղվածության բնագավառ

Զբաղվածության բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

աշխատաշուկայում առկա է առաջարկի և պահանջարկի խոշոր անհամապատասխանություն, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին աշխատուժի մասնագիտական որակավորման զգալի անհամապատասխանություն,

բարձր է գործազրկությունը երիտասարդների և աշխատաշուկայում անմրցունակ անձանց շրջանում, հանրապետության առանձին տարածաշրջանների միջև առկա է գործազրկության մակարդակի էական տարբերություն,

մեծ է սովերային զբաղվածությունը և քողարկված գործազրկությունը,

անկատար է աշխատուժի տեղաշարժի իրավական կարգավորումը,

գյուղական շրջաններում բնակչությունը թերզբաղված է, իսկ ոչ գյուղատնտեսական զբաղվածությունն ունի անբավարար մակարդակ,

տնտեսության մեջ կատարվող կառուցվածքային փոփոխություններով և անվերջ նորացող տեխնոլոգիաների ներդրումով պայմանավորված՝ որոշ մասնագիտություններ դառնում են ոչ կիրառելի, առաջանում է նոր մասնագիտությունների պահանջարկ:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

Հաշմանդամներին աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

հաշմանդամների համար դեռևս մատչելի չեն շատ ծառայություններ, ինչպես նաև ապահովված չեն վերջիններիս հավասար հնարավորությունները,

հաշմանդամների վերականգնողական որոշ պարագաներն որակապես չեն բավարարում: Վերականգնողական ծրագրերում հիմնականում ընդգրկված են հաշմանդամներ (երիտասարդ հաշմանդամների մոտ վերականգնողական ծրագրերում ընդգրկվածության աստիճանը ցածր է),

հաշմանդամների վերականգնողական համայնքային ցերեկային կենտրոնների բացակայությունը,

հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը դեռևս գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառի հիմնական խնդիրներն են՝

«Որչ անտեսությունում նվազագույն և միջին ամսական աշխատավարձը գտնվում է ցածր մակարդակի վրա, որը չի ապահովում աշխատողների նվազագույն կենսապայմանները,

հանրային ծառայության համակարգի առանձին ծառայություններում համանման պաշտոնների համար սահմանված պաշտոնային դրույքաչափերը զգալիորեն տարբերվում են միմյանցից, որը հիմնականում այդ ծառայություններում բազային աշխատավարձերի չափերի տարբերվածության հետևանք է: Քաղաքացիական ծառայողների միջին աշխատավարձը ցածր է նաև ոչ պետական հատվածում համանման աշխատանք կատարող կամ մասնագիտություն ունեցող աշխատողների աշխատավարձից,

հանրային որոշ ծառայություններում դեռևս գոյություն չունի վարձատրության արդյունավետ համակարգ, որը կիրախուսի աշխատողներին բարձրացնելու իրենց որակավորումը, աշխատելու կարողությունների ամբողջ չափով՝ իրացնելով սեփական հնարավորությունները:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝ Շարունակվում է հրատապ մնալ բնակչության ծնելիության բարձրացման և ժողովրդագրական վիճակի բարելավման հարցը:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝ շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների, մասնավորապես ընտանեկան նպաստի հասցեականության բարձրացման հարցը, շարունակվում է փոքր մնալ շատ աղքատ բնակչության ներկայացվածությունը համակարգում, որը կարելի է բացատրել ինչպես շատ աղքատ բնակչության պասիվության դրսևորման արդյունք, այնպես էլ պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի կամ հանրային իրազեկման աշխատանքների բաց թողումների արդյունք:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառ

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառի հիմնական խնդիրներն են՝ Շարունակվում է հրատապ մնալ պատերազմի մասնակիցների, զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցության բարելավման հարցը:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառի հիմնական խնդիրներն են՝ Շարունակվում է հրատապ մնալ փախստականների և նրանց ընտանիքների բարեկեցության բարելավման հարցը:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառի հիմնական խնդիրներն են՝ Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ կառավարության քաղաքականության շրջանակներում անընդհատ բարձրացել են կենսաթոշակները, դրանց չափերը ոչ միայն

հիմնականում չեն ապահովում բավարար կենսամակարդակ, այլև կենսաթոշակառուների մի ստվար զանգված շարունակում է ստանալ աղքատության գծից (նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից) ցածր կենսաթոշակ: Ըստ այդմ, կենսաթոշակառուների մոտ շարունակում է մեծ մնալ աղքատության ռիսկը,

միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի հարաբերակցությունը, որի արդյունքում էապես տարբերվում է կենսաթոշակառուների և աշխատող բնակչության կենսամակարդակները, ինչը հանգեցնում է անցանկալի սոցիալական հետևանքների,

կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը ապահովելը և անձի եկամուտների և կենսաթոշակի չափի միջև կապի բացակայությունը:

9.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

9.2.1 Նպատակները

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ՀՀ ժողովրդագրական վիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

2012-2014 թթ. ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում որպես հիմնական խնդիր է դիտարկվում ոլորտում պետական միջամտությամբ իրականացվող հիմնական ծառայությունների և տրանսֆերտների մակարդակի աճի և դրանց շարունակականության ապահովումը:

Ստորև ներկայացված է ՄԺԾԾ ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակներն ու խնդիրներն ըստ առանձին բնագավառների:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

պետական միջամտությամբ միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեցներին, հաշմանդամներին և անօթևաններին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

խնամքի կարիք ունեցող տարեցների, հաշմանդամների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում միայնակ տարեցների, ցերեկային կենտրոնում շահառուների, անօթևանների սոցիալական սպասարկման ծառայությունների որակի բարելավումը,

տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության և գործողությունների ծրագրից բխող միջոցառումների իրականացումը,

տարեցների ու հաշմանդամների խնամքի և սպասարկման ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը և սոցիալական պաշտպանվածության ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

պետական միջամտությամբ ընտանիքի, կանանց և երեխաների գծով մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

երեխաների շուրջօրյա խնամքի, ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության, ինչպես նաև երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայությունների որակի բարելավումը,

մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների ցանցի ընդլայնումը (ներառյալ գործող մանկատների վերակազմակերպման եղանակով):

Ջբաղվածության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, աշխատանք փնտրողների մրցունակությունը բարձրացնելուն, գործող աշխատատեղերը պահպանելուն, գործատուների կողմից նոր աշխատատեղերի ստեղծմանը խթանելուն և դրանք որակյալ մասնագետներով համալրելուն:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում զբաղվածության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

զբաղվածության բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների որակի բարելավումը,

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների տրամադրվող ֆինանսական աջակցության հասցեականության և արդյունավետության բարձրացումը,

մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների մրցունակության բարձրացումը,

հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացումը:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հաշմանդամների առավել ինտեգրումը հասարակությանը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում հաշմանդամներին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

հաշմանդամների բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը, դրանց որակի բարձրացումը ու տեսականի ընդլայնում,

հաշմանդամության սահմանման եվրոպական մոդելի անցումը, որը հնարավորություն կընձեռի խթանելու հաշմանդամների աշխատանքային ինտեգրման գործընթացն ու կընդլայնի սոցիալական ներառման հնարավորությունները:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդումը և աշխատանքային պայմանների բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների որակի և տրամադրվող տրանսֆերտների չափերի աճի և շարունակականության ապահովումը:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության ծնելիության բարձրացումը, ժողովրդագրական վիճակի բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների տրամադրվող նպաստների չափերի աճի և շարունակականության ապահովումը:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումը և աղքատության նվազեցումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող նպաստի չափի աճի և շարունակականության ապահովումը:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառ

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառի նպատակն է բարձրացնել առանձին կատեգորիաների անձանց սոցիալական պաշտպանվածության մակարդակը: Ըստ այդմ, նախատեսվում է մեկ միասնական համակարգի ձևավորման միջոցով առավել հասցեական և արդյունավետ դարձնել համապատասխան կատեգորիաների անձանց պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցությունը՝ այն հստակ տարանջատելով կենսաթոշակային քաղաքականությունից և տրամադրվող կենսաթոշակներից:

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է Հայրենական մեծ պատերազմի վետերանների և հաշմանդամ դարձած զինծառայողների, զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է փախստականների սոցիալական վիճակի և կենսապայմանների բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող նպաստների շարունակականության ապահովումը,

փախստականների կեցության և սոցիալական խնդիրների լուծման միջոցառումների շրջանակներում մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է կենսաթոշակի տարիքի անձանց կենսամակարդակի բարձրացումը, ինչպես նաև հիվանդության, հղիության և ծննդաբերության և օրենքով սահմանված այլ դեպքերում առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ, փոխհատուցումը:

Այդ նպատակին հասնելու համար 2012-2014 թթ. միջնաժամկետ հատվածում սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը,

սոցիալական և աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների գծով հիմնական կենսաթոշակի չափի և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացումը,

շարունակաբար նվազեցնել աղքատությունը կենսաթոշակառուների շրջանում, մեղմել աշխատող բնակչության և կենսաթոշակառուների կենսամակարդակների միջև առկա տարբերությունը,

իրականացնել կենսաթոշակային բարեփոխումներ միջազգային լավագույն փորձին համապատասխան, 2014 թվականից գործարկելով պարտադիր կուտակային բաղադրիչը:

9.2.2 Գերակայությունները

Միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության գերակա ուղղությունները հետևյալն են՝ ըստ գերակայությունների նվազման հաջորդականության.

Միջնաժամկետ հատվածում պետական միջամտության գերակա ուղղությունները	Հիմնավորում
Պետական նպաստների՝ ընտանեկան նպաստի, երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի չափերի բարձրացում	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ ԱԺ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր»
Սոցիալական և աշխատանքային կենսաթոշակների գծով հիմնական կենսաթոշակի չափի և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացում	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, ՀՀ կառավարության 30.10.2008 թ. N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 590 կետ:
Նվազագույն ամսական աշխատավարձի չափի աստիճանական բարձրացում	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, ՀՀ կառավարության 30.10.2008թ. N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագիր
Պարտադիր կուտակային համակարգի ներդրում	ՀՀ կառավարության 30.10.2008թ. N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագիր, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք
Սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավում (տուն-ինտերնատների, մանկատների, գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատությունների, ցերեկային կենտրոնների աշխատողների, և սոցիալական պաշտպանության ոլորտի այլ աշխատողների աշխատավարձի մակարդակի բարձրացում)	

Վերոհիշյալ գերակայությունները սահմանվել են ելնելով միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության ուղղություններում կատարված փոփոխություններից:

9.3 ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

9.3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները (ստորև ներկայացված են այն ծրագրերն ծախսերի (առանց գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրերի), որոնց գծով միջնաժամկետ կտրվածքով տեղի կունենան ծախսային սահմանաչափերի փոփոխություններ, ընդ-

որում 2012-2014 թթ. ՄԺԾԾ-ի համեմատությունը 2012 թ. կտրվածքով կատարվել է 2011 թ. պետական բյուջեով, իսկ 2013-2014թթ. կտրվածքով՝ 2011-2013 թթ. ՄԺԾԾ-ով 2013 թ. համար ընդունված քաղաքականության և հաստատված ցուցանիշների գծով):

2012-2014 թթ. ՄԺԾԾ-ով 2013 թ. ընդունված քաղաքականությունը 2011-2013 թթ. ՄԺԾԾ-ի 2013 թ. հաստատվածի համեմատ մնում է անփոփոխ (մասնավորապես՝ կանխատեսվում է հաշվարկային միջին ամսական աշխատավարձի աճ 10%-ի չափով, նվազագույն ամսական աշխատավարձի աճ 2.5 հազ. դրամով 2012 թ.՝ 32.5 հազ. դրամի դիմաց), բացառությամբ առանձին («Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն», «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ», «Հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Գործազրկության նպաստ», «Զինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ») ծրագրերի, որոնք կբացատրվեն ստորև):

խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

1. «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2012 թ. նվազում է 0.4 մլն. դրամի չափով (2011թ. 1 483.1 մլն. դրամ), իսկ 2013-2014թթ. աճում է 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ համապատասխանաբար 123.2 մլն. դրամի չափով, 128.9 մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 1 413.9 մլն. դրամ):

ա) 2012 թ. ծախսերի նվազումը պայմանավորված է լիցենզավորման գծով ծախսի պակասեցմամբ (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը):

բ) 2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013թ.՝ 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 68.1 հազ. դրամ (2011թ. պետբյուջեով՝ 61.3 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 67.7 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի չորս տուն-ինտերնատներում կխնամվեն տարեկան 1050 միայնակ ծեր և հաշմանդամ կենսաթոշակառու: Մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կմնան անփոփոխ, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 4.6 % և 5.0 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի աճի պայմաններում:

2. «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում»

ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2012 թ. նվազում է 0.1 մլն. դրամի չափով (2011թ. 91.5 մլն. դրամ), իսկ 2014 թ. աճում է 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ 0.7 մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 98.2 մլն. դրամ):

ա) 2012 թ. ծախսերի նվազումը պայմանավորված է լիցենզավորման գծով ծախսի պակասեցմամբ (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը):

բ) 2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013թ.' 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 47.2 հազ. դրամ (2011թ. պետբյուջեով՝ 42.5 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 46.9 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում կսպասարկվի տարեկան 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառու: Մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կմնան անփոփոխ, իսկ 2014 թ. կաճեն 0.8 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

3. «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2013-2014 թթ. կազմում է համապատասխանաբար 0.2 մլն. դրամ, 0.3 մլն. դրամ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 16.3 մլն. դրամ):

2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013թ.' 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 78.7 հազ. դրամ (2011թ. պետբյուջեով՝ 70.8 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 78.3 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կսպասարկվի տարեկան 50 մարդ: Մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կմնան անփոփոխ, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 1.3 % և 1.9 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

4. «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2013-2014 թթ. կազմում է համապատասխանաբար 3.8 մլն. դրամ, շուրջ 4.0 մլն. դրամ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 56.4 մլն. դրամ):

2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013թ.' 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 47.4 հազ. դրամ (2011թ. պետբյուջեով՝ 42.7 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 47.2 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևանների ժամանակավոր կացարանում կսասարկվի տարեկան 60 անօթևան մարդ մինչև 60 օր տևողությամբ: Մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կմնան անփոփոխ, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 6.8 % և 7.0 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

1.«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2012 թ. նվազում է 0.8 մլն. դրամի չափով (2011թ. 1 802.3 մլն.դրամ), իսկ իսկ 2013-2014 թթ. 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ աճում է համապատասխանաբար 148.9 մլն. դրամի չափով, 354.1 մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 1 747.4 մլն. դրամ):

ա) 2012 թ. ծախսերի նվազումը պայմանավորված է լիցենզավորման գծով ծախսի պակասեցմամբ (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը):

բ) 2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013թ.' 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 128.7 հազ. դրամ, իսկ հատուկ տիպի մանկատների մասով՝ 202.5 հազ. դրամ (2011թ. պետբյուջեով՝ 100.6 հազ. դրամ, իսկ հատուկ տիպի մանկատների մասով՝ 146.3 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 107.2 հազ. դրամ, իսկ հատուկ տիպի մանկատների մասով՝ 157.5 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է 7 մանկատներում խնամել 860 երեխա: Մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կմնան անփոփոխ, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 8.5 % և 20.3 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

3. «ՀՀ մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի գծով ծախսերը պահպանվել են 2011 թ. պետական բյուջեով նախատեսված չափով՝ 3.8 մլն. դրամ 2011-2013 թթ. ՄԺԾԾ-ով 2013 թ.' 3.2 մլն. դրամի դիմաց (նախատեսվում է մանկատան շրջանավարտներին միանվագ դրամական օգնություն և կրթաթոշակ

հատկացնել 55 շահառուներին): Բյուջետային հատկացումները աճում են 18.8 %, իսկ մեկ շահառուի հաշվով՝ մնացել են անփոփոխ:

4. «ՀՀ մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն»

ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 0.4-ական մլն. դրամի չափով (2011թ. պետբյուջեով, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 36.1-ական մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում առանձին բաղադրիչի գծով (պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին՝ 2010 թ. ծրագրի շահառուների հետագա կյանքի պայմանների վերահսկողության գծով) շահառուների թվի 5 մարդով նվազմամբ (2011 թ. պետբյուջեով, 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ.՝ 45 շահառու): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով նվազում են համամասնորեն:

5. «Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ»

ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2012 թ. նվազում է 0.2 մլն. դրամի չափով (2011թ. 144.7 մլն. դրամ), իսկ 2013-2014թթ. աճում է 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ համապատասխանաբար 5.5 մլն. դրամի չափով, 6.3 մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 146.5 մլն. դրամ):

ա) 2012 թ. ծախսերի նվազումը պայմանավորված է լիցենզավորման գծով ծախսի պակասեցմամբ (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը):

բ) 2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013թ.՝ 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 67.9 հազ. դրամ (2011թ. պետբյուջեով՝ 61.2 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 67.5 մլն. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է 2 հոգածության կենտրոնների ծառայություններից օգտվողների թիվը՝ 200 երեխա, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կնվազեն 0.1 %, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 3.8 % և 4.3 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

5. «Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ»

ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2012 թ. նվազում է 0.8 մլն. դրամի չափով (2011թ. 1 009.7 մլն. դրամ), իսկ 2013-2014 թթ. աճում է 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ համապատասխանաբար 39.7 մլն. դրամի չափով, 45.6 մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 1025.3 մլն. դրամ):

ա) 2012 թ. ծախսերի նվազումը պայմանավորված է լիցենզավորման գծով ծախսի պակասեցմամբ (հիմք՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը):

բ) 2014 թ. ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ 10.0 հազ. դրամի չափով 2013 թ.՝ 35.0 հազ. դրամի դիմաց, արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 70.0 հազ. դրամ (2011 թ. պետբյուջեով՝ 63.0 հազ. դրամ, 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 69.5 մլն. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է 8 գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամել 800 երեխա, իսկ մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կնվազեն 0.1 %, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 3.9 % և 4.4 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

10. «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2013-2014 թթ. համապատասխանաբար կազմում է 2.2 մլն. դրամ, 5.4 մլն. դրամ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 26.8 մլն. դրամ): Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է 2014 թ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 10.0 հազ. դրամով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 35.0 հազ. դրամ):

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է խնամատար ընտանիքների և ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը պահպանել 2011 թվականի պետբյուջեով և 2011-2013 թթ. ՄԺԾԾ-ի մակարդակով (23 ընտանիք և 25 երեխա) և 2011 թվականի պետբյուջեով նախատեսված յուրաքանչ-յուր երեխային տրվող օժանդակության փաթեթի գումարը՝ 671.5 հազ. դրամ: Մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումները 2012 թ. կմնան անփոփոխ, իսկ 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 8.1 % և 20.0 %՝ խնամատար ընտանիքներին տրվող նվազագույն ամսական աշխատավարձի չափի և օժանդակության փաթեթի գումարի աճի՝ ընտանիքների և ընտանիքներ տեղափոխվող երեխաների թվի պահպանման պայմաններում:

11. «Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2012-2014 թթ. կազմում է 26.3 մլն. դրամ (2011թ. 32.9 մլն. դրամ) և 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ 27.9-ական մլն. դրամ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 34.5 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել 2011 թ. համար ծրագրի գծով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՍՀՆ) և ԱՄՆ-ի «Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե» հասարակական կազմակերպության Հյաստանյան մասնաճյուղի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման 16.02.2011թ. N ՍՏՊ 10.09.02.26/2011 պայմանագիրը, որում նշված է, որ ՀՀ

ԱՍՀՆ, որպես Պատվիրատուի կողմից մատուցվող ծառայության տարեկան գինը (կազմակերպության տարածքի վարձակալության դիմաց փոխհատուցման ենթակա վարձավճարի գումարը) կազմում է 6.6 մլն. դրամ:

Զբաղվածության բնագավառ

1.«Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ» ծրագրի գծով 2012-2014 թթ. նախատեսվում է ծախսերի աճ 2012 թ. 3.3 մլն. դրամի չափով (2011թ. 20.7 մլն. դրամ), իսկ 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ. նկատմամբ 3.6ական մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 21.8 մլն. դրամ), որը պայմանավորված է Վայոց Ձորում կենտրոնի հարավային ներկայացուցչության աշխատանքների իրականացման նպատակով 3 հաստիքային միավորի (2011թ. պետբյուջեով և 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 13 հաստիքային միավոր) և դրա հետ կապված ուղեկցող ծախսերի ավելացմամբ: Արդյունքում բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով աճում են 2012 թ. 16.1 %, իսկ 2013-2014 թթ. 16.5 %՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի պահպանման պայմաններում:

2. «Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2013-2014 թթ. կազմում է 6.0-ական մլն. դրամ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 10.6 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է 2011 թ. պետբյուջեով առանձին ծախսերի գծով հաշվարկների ճշտմամբ, հաշվի առնելով նաև միջին ամսական հաշվարկային աշխատավարձի աճը 10% չափով: Արդյունքում աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը 2013-2014թթ. կկազմի 63.6 հազ. դրամ 2011 թ. 57.8 հազ. դրամի դիմաց: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով 2013-2014 թթ. կաճեն 56.9%՝ մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և շահառուների թվաքանակի (720 շահառու) պահպանման պայմաններում:

3. «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինասական աջակցություն» ծրագրով 2012 թ. նախատեսվում է ծախսերի աճ 0.6 մլն. դրամի չափով (2011թ. 1.86 մլն. դրամ), որը պայմանավորված է անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար միջին ծախսի ավելացմամբ 2.9 հազ.դրամով (2011թ.' 14.3 հազ.դրամ): 2013 թ. նախատեսվում է ծրագրի գծով ծախսերի աճ (2013թ-ին 0.9 մլն.դրամով, իսկ 2014 թ. այն կպահպանվի 2013 թ. մակարդակով), որը պայմանավորված է տարեկան շահառուների թվաքանակի 10-ական մարդով ավելացմամբ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնում են անփոփոխ:

«ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012 թ.' 2.5 մլն.դրամ, 2013 թ.' 2.68 մլն.դրամ:

4. «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրի գծով նախատեսվում է 2012 թ. ծախսերը կնվազեն 19.6 մլն.դրամով (2011թ.՝ 89.8 մլն. դրամ), որը պայմանավորված հաշվարկների ճշտմամբ, իսկ 2013 թ. ծախսերը կաճեն շուրջ 5.4 մլն. դրամով, 2014 թ.՝ 21.6 մլն. դրամով: Ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ: Բյուջետային հատկացումները 2013-2014 թթ. մեկ շահառուի հաշվով աճում են, իսկ շահառուների թիվը մնում է անփոփոխ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012թ.՝ 89.8 մլն.դրամ, 2013թ.՝ 106.5 մլն.դրամ:

5. «Գործազրկության նպաստ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 375.2 մլն. դրամով (2011թ. 4878.8 մլն. դրամ), իսկ 2013-2014թթ. կպահպանվի 2012 թ. մակարդակը, որը պայմանավորված է գործազրկության նպաստի չափի պահպանմամբ (18000.0 դրամ), թվաքանակը պահպանվել է 2011 թ. մակարդակով (2011-2014թթ. գործազուրկների թիվը 20850-ական մարդ):

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012թ.՝ 4837.0 մլն.դրամ, 2013թ.՝ 5167.6 մլն.դրամ:

6. «Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում» ծրագրի գծով 2012 թ. ծախսերը կնվազեն 0.3 մլն.դրամով, որը պայմանավորված մեկ անձի համար նախատեսված միջին ծախսի 20.0 հազ. դրամով նվազմամբ, շահառուների թվաքանակը կպահպանվի 2011 թ. մակարդակով (2011թ.՝ 2.55 մլն. դրամ և շահառուների թվաքանակը՝ 15 մարդ, մեկ անձի համար նախատեսված միջին ծախսը՝ 170.0 հազ. դրամ):

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012թ.՝ 2.55 մլն.դրամ, 2013թ.՝ 2.55 մլն.դրամ:

7. «Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցում» ծրագրի գծով ծախսերը 2012-2014թթ նախատեսվում է պահպանել 2011 թ. մակարդակով (2011թ.՝ 228.9 մլն. դրամ և շահառուների թվաքանակը՝ 1346 մարդ): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով մնում է անփոփոխ՝ մասնագիտական ուսուցման համար մեկ շահառուի միջին ծախսը՝ 170. 0 հազ.դրամ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012թ.՝ 228.9 մլն.դրամ, 2013թ.՝ 221.9 մլն.դրամ

8. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (25.05.2005թ. ՀՕ-206-Ն) 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարում» ծրագրի գծով ծախսերը 2012 թ. կնվազեն 0.2 մլն. դրամի չափով (2011թ. 7.02 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է գործազրկության նպաստի չափի պահպանմամբ (2012թ.՝ 18.0 հազ.դրամ), թվաքանակի 6 մարդով աճի (2011թ.՝ 120 մարդ) պայմաններում: 2013-2014 թթ. այն կպահպանվի 2012 թ. մակարդակով):

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012 թ.՝ 7.02 մլն.դրամ, 2013 թ.՝ 7.02 մլն.դրամ:

9. «Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում» ծրագիր: Ծրագիրը առաջին անգամ ՀՀ պետական բյուջեում ներառվել է 2011 թվականին:

Զբաղվածության տարածքային կենտրոններում տարեկան հաշվառվում են շուրջ 4000 շրջանավարտ, որոնք աշխատանքային ստաժ չունենալու պատճառով դժվարությամբ են տեղավորվում աշխատանքի, քանի որ գործատուն աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալիս է փորձառու մասնագետին (գործազրկության մակարդակը երտասարդների շրջանում ըստ ԱՎԾ-ի կազմում է 1.3%, ԶՊԾ-ում հաշվառված երիտասարդների թվաքանակը կազմում է շուրջ 16000 մարդ): Նախատեսվում է գործազուրկ երիտասարդների 1.3%-ին ընդգրկել այս ծրագրում (մեկ անձի համար մասնագիտական փորձի ձեռք բերման միջին տևողությունը հաշվարկվում է 3 ամիս, իսկ գումարը 195.0 հազ. դրամ: Միաժամանակ նախատեսվում է ծրագրում ընդգրկվածին տրամադրել աշխատավարձ՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով, ուսուցանող անձին՝ փոխհատուցում միջին ամսական աշխատավարձի 20%-ի չափով, իսկ գործատուին տրամադրվում է գումար՝ սոցվճարի չափով): 2012-2014թթ. ծրագրի ծախսը համապատասխանաբար կկազմեն 58.5 մլն.դրամ, 105.0 մլն. դրամ և 105.0 մլն. դրամ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012 թ.՝ 78.0 մլն.դրամ, 2013 թ.՝ 126 մլն.դրամ:

10. «Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրի գծով ծախսերը նախատեսվում է կատարել՝ 2012 թ.՝ 13.4 մլն.դրամի (2011թ. 15.9 մլն. դրամ և շահառուների թվաքանակը՝ 25 մարդ), 2013-2014 թթ.՝ 15.4-ական մլն.դրամի չափով:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2012 թ.՝ 15.9 մլն.դրամ, 2013 թ.՝ 15.9 մլն.դրամ:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

1. «Հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012-2014 թթ. կազմում է 2.9-ական մլն. դրամ (2011թ. պետբյուջեով և 2011-2013թթ. ՄԺԾԾ՝ 18.1-ական մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է ԲՍՓՀ գործակալության, նրա տարածքային ստորաբաժանումների և «Նորք» տեղեկատվական կենտրոնի միջև միասնական ինտրանետ համակարգի շահագործման համար լրացուցիչ ծախսերի ներառմամբ:

Սոցիալական ապահովության քարտերի և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայությունների բնագավառ

1. «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով 2014 թ. նախատեսվում է ծախսերի աճ 3.8 մլն. դրամի չափով (2011 թ. պետբյուջեով և 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013 թ.' շուրջ 148.0 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով, այն 2014 թ. կկազմի 45.0 հազ. դրամ (2011 թ. պետբյուջեով 32.5 հազ. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013 թ.' 35.0 հազ. դրամ):

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

1.«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012-2014 թթ. համապատասխանաբար կազմում է 36.0 մլն. դրամ, 388.6 մլն. դրամ, 431.8 մլն. դրամ (2011թ.' 2 340.0 մլն. դրամ, 2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 2 030.6 մլն. դրամ), որը պայմանավորված է նպաստառուների թվաքանակի աճով 2012 թ.' 167 մարդով (2011 թ. պետբյուջեով՝ 10833 մարդ), 2013 թ. համար նպաստառուների թիվը կկազմի 11200 մարդ, 2014 թ.' 11400 մարդ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 8 058 մարդ):

Միջնաժամկետ հատվածում կպահպանվի 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված նպաստի ամսական չափը՝ 18.0 հազ. դրամ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.' 21.0 հազ. դրամ, նպաստի ամսական չափը հարաբերակցվում է տվյալ տարվա համար սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 60 %): Արդյունքում բյուջետային հատկացումները 2012 թ. կաճեն համամասնորեն, իսկ մեկ շահառուի հաշվով կմնան անփոփոխ՝ շահառուների թվի աճի և նպաստի ամսական չափի պահպանման պայմաններում, իսկ 2013-2014 թթ. բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կնվազեն 14.3%՝ շահառուների թվի աճի և նպաստի ամսական չափի նվազման պայմաններում:

2.«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012-2014 թթ. համապատասխանաբար կկազմի 187.3 մլն. դրամ, 297.5 մլն. դրամ, 4 856.3 մլն. դրամ (2011թ.' 4 675.0 մլն. դրամի դիմաց, 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013 թ.' 4 776.9 մլն. դրամ):

Ծախսերի աճը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ ԱՎԾ վերջին 2 տարվա ծնելիության աճի տեմպը՝ 4.37% (3 և ավելի երեխաների թիվը ընդհանուրի նկատմամբ կազմում է 14.2%), որի արդյունքում երեխաների թիվը կաճի 2012 թ.՝ 2 508 մարդով (2011թ. 44 260 մարդ), իսկ 3 և ավելի երեխայի թիվը կկազմի 6 642 մարդ (2011թ. 6 479 մարդ), 2013 թ. համար նպաստառուների թիվը կկազմի 48 812 մարդ, որից 3 և ավելի երեխաների թիվը՝ 6 931 մարդ, 2014թ.՝ 50 946 մարդ, որից 3 և ավելի երեխաների թիվը՝ 7 234 մարդ (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 47 696 մարդ, այդ թվում 3 և ավելի երեխաների թիվը՝ 6 295 մարդ):

2012-2013 թթ. նպաստի չափը կպահպանվի 2011 թ. պետական բյուջեով և 2011-2013 թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված մակարդակով (1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 50.0 հազ. դրամ, իսկ 3րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 430.0 հազ. դրամ), իսկ 2014 թ. նախատեսվում է կիրառել երրորդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում տարբերակման նոր մոտեցում (նպաստի չափը կազմում է ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրով 2012 թ. համար նշված չափով)։

ա) երրորդ և չորրորդ երեխայի դեպքում (6807 երեխա) նպաստի չափը սահմանել 1.0 մլն. դրամ,

բ) հինգ և ավելի երեխայի դեպքում (427 երեխա)՝ 1.5 մլն. դրամ:

Բյուջետային հատկացումները 2012 թ.-ին կաճեն 4.0%-ով, 2013 թ. 6.2%-ով, իսկ մեկ շահառուի հաշվով կմնան անփոփոխ՝ շահառուների թվի աճի (նաև տեսակարար կշիռների փոփոխության 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան ու 3 և ավելի երեխայի ծննդյան դեպքերում) և նպաստի չափի պահպանման պայմաններում, իսկ 2014 թ. բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 88.8%՝ շահառուների թվի և նպաստի չափի աճի (3 և ավելի երեխայի ծննդյան դեպքում) պայմաններում:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

1.«Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագրի գծով 2012-2014 թթ. համար նախատեսվում է ծախսերի փոփոխություն 2012 թ. նվազում 1 727.4 մլն. դրամի չափով (2011թ.՝ 35 497.1 մլն. դրամի դիմաց), իսկ 2013-2014 թթ. աճ համապատասխանաբար 4 121.4 մլն. դրամի չափով, շուրջ 6 333.0 մլն. դրամի չափով (2011-2013թթ. ՄԺԾԾ 2013թ.՝ 35 670.9 մլն. դրամի դիմաց): Ծախսերի նվազումը 2012 թ. պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել նշված ծրագրի շրջանակներում ՀՀ սահմանների պաշտանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների տեղափոխումը «ՀՄ պատերազմի վետերաններին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության տրամադրում» ծրագրին, արդյունքում նպաստառուների թիվը միջնաժամկետ կտրվածքով կանխատեսվում է 104 800-ական ընտանիք (2011թ. պետական բյուջեով՝ 110159 ընտանիք, 2011-2013 թթ.

ՄԺԾԾ 2013թ.' 110700 ընտանիք), իսկ նպաստի միջին ամսական չափը համապատասխանաբար կկազմի 26853 դրամ, 31641.4 դրամ, 33400 դրամ (2011 թ. պետական բյուջեով և 2011-2013 թթ. ՄԺԾԾ 2013թ.' 26853 դրամ): 2014 թ. նախատեսված նպաստի միջին ամսական չափը կազմում է ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրով 2012 թ. համար նշված չափով: 2012-2014 թթ. անփոփոխ կմնա նպաստի միջին ամսական չափի տարբերական սկզբունքը: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով 2013-2014 թթ. կաճեն համապատասխանաբար 17.8% և 24.4%' շահառուների թվաքանակի նվազման և նպաստի ամսական չափի բարձրացման պայմաններում:

2. «Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012-2013 թթ. կազմում է 13.4-ական մլն. դրամ (2011թ. պետբյուջեով և 2011-2013թթ. ՄԺԾԾ' 31.3-ական մլն. դրամ), 2014 թ.' 13.9 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների և «Նորք» տեղեկատվական կենտրոնի միջև միասնական ինտրանետ համակարգի շահագործման հետ կապված լրացուցիչ ծախսերի ներառմամբ, իսկ 2014 թ. նաև նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 10.0 հազ. դրամի չափով 2013 թ.' 35.0 հազ. դրամի դիմաց:

Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ

2012-2014թթ. համար ներդրվող 1-ից 5 կետերով նշված ծրագրերում հաշվարկները կատարվել են առանց զինծառայողների կենսաթոշակին տրվող հավելումների, թաղման նպաստի և վճարման ծառայության:

1.«Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրի գծով 2012 թ. նախատեսվում է 18 435.3 մլն.դրամի ծախս (2011թ.' 20163.3 մլն. դրամ՝ հավելումների և թաղման նպաստի հետ միասին), 2013 թ.' 19 449.8 մլն. դրամ, իսկ 2014 թ.' 20 069.6 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա) 2012-2014 թթ. համար բազային ցուցանիշների ճշգրտմամբ (առանձին ուժային կառույցներում տեղի է ունեցել զինծառայողների թվաքանակի աճ կամ նվազում), արդյունքում ընդհանուր թվաքանակը աճում է համապատասխանաբար՝ 842, 841 և 557 մարդով: Կենսաթոշակառուների նախորդ տարիների դինամիկայից ելնելով (կենսաթոշակառուների թվի աճի տեմպը կազմում է շուրջ 2.4%) հաշվարկվել է, որ կենսաթոշակառուների թիվը ըստ տարիների կկազմի 2012 թ.' 38043 մարդ, 2013 թ.' 38884 մարդ, իսկ 2014 թ.' 39441 մարդ (2011թ.' 37201 մարդու դիմաց),

բ) բազային կենսաթոշակի չափի փոփոխությամբ:

Միջնաժամկետ կտրվածքով բազային կենսաթոշակի չափը հավասարեցվել է հիմնական կենսաթոշակի չափին՝ ըստ տարիների կկազմի 2011-2012թթ.՝ 10500 դրամ, 2013թ.՝ 13000 դրամ, իսկ 2014թ.՝ 15500 դրամ (2011թ. պետական բյուջեով՝ 10500 դրամ): Արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը 2012 թ. կկազմի 40383 դրամ (2011թ.՝ 46182 դրամ, իսկ առանց հավելման՝ 39904.0 դրամի դիմաց), 2013 թ.՝ 41683.4 դրամ և 2014 թ.՝ 42404.1 դրամ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2011 թ. համար՝ 20 319.8 մլն. դրամ, 2012 թ. համար 20 590.2 մլն. դրամ, 2013 թ. համար 21 091.1 մլն.դրամ (ներառյալ՝ զինվորական կենսաթոշակին տրվող հավելումների և կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի գումարները):

Միաժամանակ անհրաժեշտ միջոցները հաշվարկելիս հաշվի են առնվել՝

1) 2011 թվականին ուժի մեջ մտած՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-23-րդ հոդվածների, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերությունների, 3-րդ մասի, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները,

2) այն հանգամանքը, որ կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի գումարները, անկախ կենսաթոշակի տեսակից, խմբավորվելու են նոր ծախսային հոդվածում:

Ըստ այդմ, անհրաժեշտ միջոցները հաշվարկվել են առանց նախկին օրենսդրությամբ սահմանված զինվորական կենսաթոշակին տրվող հավելումների և կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի գումարների:

2. «Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրի 2012 թ. գծով նախատեսվում է 1 648.1 մլն.դրամի ծախս (2011թ.՝ 2 363.2. մլն. դրամ՝ հավելումների և թաղման նպաստի հետ միասին), 2013 թ.՝ 1 467.40 մլն.դրամ և 2014 թ.՝ 2 052.5 մլն. դրամ: Ծախսերի փոփոխությունները պայմանավորված են.

ա) նախորդ տարիների շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների թվաքանակի նվազման դինամիկայից ելնելով, 2012-2014 թթ. համար իրականացվել է տվյալ խմբի կենսաթոշակառուների թվաքանակի նվազումներ 2012 թ.՝ 7018 մարդ, 2013 թ.՝ 6018 մարդ և 2014 թ.՝ 5031 մարդ:

բ) բազային կենսաթոշակի չափը հավասարեցվել է հիմնական կենսաթոշակի չափին և ըստ տարիների կկազմի 2011-2012թթ.՝ 10500 դրամ (2011թ. 10500 դրամ), 2013թ.՝ 13000 դրամ, 2014թ.՝ 15500, արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը, առանց թաղման նպաստի, կենսաթոշակին տրվող հավելումների և վճարման ծառայության ծախսերի, ըստ տարիների կկազմի՝ 2012 թ.՝

19570.0 դրամ (2011թ.՝ 25961.3 դրամ, իսկ առանց հավելման՝ 20378), 2013 թ.՝ 20319.5 դրամ, 2014 թ.՝ 33997.1 դրամ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է. 2011թ՝ 3,061,2 մլն. դրամ, 2012թ.՝ 2,884,3 մլն. դրամ, 2013թ.՝ 3,101,6 մլն. դրամ (ներառյալ՝ զինվորական կենսաթոշակին տրվող հավելումների և կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի գումարները):

3. «Սոցիալական կենսաթոշակներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012 թ. կազմում է 207.1 մլն. դրամ, (2011թ.՝ 8075.6 մլն. դրամ՝ 2013թ.՝ 2339.2 մլն. դրամ, 2014թ.՝ 1480.5 մլն.դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է.

ա) հիմք է ընդունվել 2010 թ. պետական բյուջեի հաշվարկներով նախատեսված սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը (50995 մարդ) և կանխատեսվող միջին տարեկան թվաքանակի աճը՝ 5.3% (2550 մարդ), 2011-2013թթ. ՄԺԾ-ով թվաքանակը աճել է համապատասխանաբար 2805 և 5482 մարդով,

բ) գազի սակագնի բարձրացմամբ պայմանավորված, 01.11.2010 թ-ից հիմնական կենսաթոշակի չափը աճեց և կազմեց 10500 դրամ, որը կպահպանվի 2012 թ-ին (2011թ.՝ 10500 դրամ), իսկ 2013 թ. կկազմի՝ 13000 դրամ, 2014 թ.՝ 15500 դրամ:

Նշված ծրագրի գծով նախատեսված ծախսերի աճը 2011-2013թթ. ՄԺԾ նկատմամբ կազմում է՝ 2012թ.՝ 186.3 մլն.դրամ, 2013 թ.՝ 598.4 մլն.դրամ, 2014թ-ին՝ 2013 թ. նկատմամբ՝ 2 079.0 մլն.դրամ, որը պայմանավորված է թվաքանակի և հինական կենսաթոշակի չափի փոփոխությամբ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013 թթ. ծրագրով հաստատվել է. 2012թ.՝ 8 600.4 մլն.դրամ, 2013թ.՝ 10 647.4 մլն.դրամ (ներառյալ՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի գումարները):

Միաժամանակ անհրաժեշտ միջոցները հաշվարկելիս հաշվի են առնվել՝

1) 2011 թվականին ուժի մեջ մտած՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-23-րդ հոդվածների, 55-րդ հոդվածի 1ին մասի 2-րդ և 3-րդ պարբերությունների, 3րդ մասի, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները,

2) այն հանգամանքը, որ կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի գումարները, անկախ կենսաթոշակի տեսակից, խմբավորվելու են նոր ծախսային ծրագրում:

Ըստ այդմ, անհրաժեշտ միջոցները հաշվարկվել են առանց նախկին օրենսդրությամբ սահմանված զինվորական կենսաթոշակին տրվող հավելումների և կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի գումարների:

4. «ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ և կենսաթոշակին տրվող հավելում»

ծրագրի գծով ծախսերը կնվազեն, որը 2012 թ. կազմում է 90.4 մլն. դրամ (2011թ.'432.9 մլն. դրամ), որը պայմանավորված է դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող ամենամսյա հավելվածար հաշվարկելու, (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու հետ կապված ՀՀ կառավարության 24.02.2011թ N 166-Ն որոշման ընդունմամբ կատարված հաշվարկների ճշտմամբ: 2013 թ. այն կաճի 15.5 մլն. դրամ, 2014 թ.' 20.4 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է դատավորների թվաքանակի ավելացմամբ 2013 թ. 6 մարդով, իսկ 2014 թ. ևս 3 մարդով:

Ծրագիրը բխում է «Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, կառավարության անդամների, սահմանադրական դատարանի անդամների, վերահսկիչ պալատի նախագահի եւ դատավորների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ զոհվելու կամ աշխատունակությունը լրիվ կորցնելու դեպքում նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին», «ՀՀ Նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին», «ՀՀ սահմանադրական դատարանի մասին» և «ՀՀ Դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքներից:

Ծրագրի շրջանակում.

- կենսաթոշակ է վճարվում պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ զոհված պաշտոնատար անձանց ընտանիքների անդամներին,
 - հատուկ կենսաթոշակ է վճարվում ՀՀ նախկին նախագահներին,
 - տրվում է հավելվածար կենսաթոշակառու դատավորների և Սահմանադրական դատարանի անդամների կենսաթոշակներին:

5. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2012 թ. կազմում է 259.6 մլն. դրամ, (2011 թ.' 158 614.1 մլն. դրամ', առանց թաղման նպաստի), 2013 թ. այն կաճի և կկազմի 13 857.2 մլն.դրամ, 2014 թ.' 48 152.1 մլն.դրամ: 2012 թ. ծախսերի նվազումը պայմանավորված է թվաքանակի նվազմամբ՝ 583 մարդ:

2013-2014թթ.աճը պայմանավորված է՝

ա) հաշվարկների համար հիմք է ընդունվել 01.01.2011 թ. դրությամբ շահառուների առկա թվաքանակը՝ 464926 մարդ,

բ) գազի սակագնի բարձրացմամբ պայմանավորված՝ 01.11.2010 թից հիմնական կենսաթոշակի չափը բարձրացվել է 2500 դրամով (2011թ.' 10500 դրամ), իսկ 2013 թ. այն կկազմի 13000 դրամ, իսկ 2014 թ.' 15500 դրամ:

գ) ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը 2012-2013 թթ. կպահպանվի 2011 թ. մակարդակով (450 դրամ), իսկ 2014 թ. այն կկազմի 600 դրամ:

Արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափերը կկազմեն՝ 2012 թ.՝ 28383.5 դրամ (2011թ.՝ 28396.6 դրամ), 2013 թ.՝ 30867.2 դրամ, իսկ 2014 թ.՝ 39498.0 դրամ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013 թթ. ծրագրով հաստատվել է. 2012թ.՝ 164 101.2 մլն. դրամ, 2013թ.՝ 180 038.5 մլն. դրամ (ներառյալ՝ կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի գումարները):

Նշված ծրագրի գծով նախատեսված ծախսերի նվազումը 2011-2013 թթ. ՄԺԾ նկատմամբ առանց թաղման նպաստի, կազմում է՝ 2012 թ.՝ 391.7 մլն. դրամ 2013 թ.՝ 1 197.0 մլն. դրամ, իսկ 2014 թ-ին այն կաճի 46 955.4 մլն. դրամով: Ծախսերի նվազումը պայմանավորված է թվաքանակի նվազմամբ, իսկ աճը՝ հիմնական կենսաթոշակի չափի և ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացմամբ:

6. «Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» ծրագիր

Սկսած 2012 թվականից, նախատեսվում է կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի գումարները, անկախ կենսաթոշակի տեսակից, խմբավորել մեկ ծախսային ծրագրում, կապված 2011 թվականից ուժի մեջ մտած «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հետ (համաձայն որի կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի չափը միասնական է՝ անկախ կենսաթոշակի տեսակից): Նախկինում կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի գումարները ներառված էին «Աշխատանքային կենսաթոշակներ», «Սոցիալական կենսաթոշակներ», «Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ», «Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծախսային ծրագրերում:

Շահառուները սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, իսկ չափը՝ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշմամբ (200.0 հազ. դրամ):

ՄԺԾ 2012-2014թթ. ծրագրով նախատեսվում է 2012 թ.՝ 5 014.2 մլն. դրամ, 2013 թ.՝ 5 014.6 մլն. դրամ, 2014 թ.՝ 5 015.0 մլն. դրամ:

2012-2014 թթ. ՄԺԾ ծրագրի ժամանակահատվածում նախատեսվում է թաղման նպաստ վճարել. 2012 թ.՝ 25201 շահառուի, 2013 թ.՝ 25215 շահառուի, 2014 թ.՝ 25232 շահառուի:

7. «Հղիության և ծննդաբերության նպաստի վճարում» ծրագրի գծով նախատեսվում է. ծախսերի աճ, որը 2012 թ. կազմում է 854.5 մլն. դրամ (2011թ.՝ 2 247.2 մլն. դրամ), 2013 թ. 309.7 մլն. դրամ, 2014 թ.՝ 333.8: Ծախսերի աճը պայմանավորված է միջին օրական նպաստի չափի

բարձրացմամբ (798.6 դրամ), հղիության և ծննդաբերության օրերի թվի ավելացմամբ (96394 օր) կապված ծնելիության աճով: Ծախսերի հաշվարկներում պահպանվել է հղիության և ծննդաբերության փաստացի օրերի ու հղիության և ծննդաբերության միջին օրական նպաստի չափի աճի տեմպերը, արդյունքում միջին օրական նպաստի չափը 2012 թ. կկազմի 2911.3 դրամ (2011թ.՝ 2112.7 դրամ): 2013 թ. նախատեսվում է միջին աշխատավարձի չափի 10 %-ով բարձրացում, որով պայմանավորված հղիության և ծննդաբերության միջին օրական նպաստի չափը կաճի 2013-2014 թթ.՝ 130.7 դրամով: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

«ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է՝ 2012թ.՝ տարեկան 2 247.2 մլն. դրամ, 2013թ.՝ 2 447.2 մլն. դրամ:

Անհրաժեշտ միջոցները հաշվարկելիս հաշվի է առնվել.

1) «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները (նախատեսվում է վերացնել վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն շեմը),

2) ժամանակավոր անաշխատունակության (հղիության և ծննդաբերության արձակուրդի) օրերի թվի աճը (2012 թ.՝ 1065414 օր, 2013 թ.՝ 1121455 օր, 2014 թ.՝ 1180444 օր),

3) հղիության և ծննդաբերության նպաստի միջին օրական չափի աճը (2012 թ.՝ 2911.3 դրամ, 2013 թ.՝ 3042.0 դրամ, 2014 թ.՝ 3172.8 դրամ)՝ պայմանավորված միջին ամսական անվանական աշխատավարձի աճով:

8. «Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012 թ. կազմում է 36.6 մլն. դրամ (2011թ.՝ 2 562.8 մլն. դրամ): Ծխասերի աճը պայմանավորված է ժամանակավոր անաշխատունակության միջին օրական նպաստի չափի բարձրացմամբ՝ 184.2 դրամ (2011թ.՝ 2 722.2 դրամ), ժամանակավոր անաշխատունակության օրերի թվի՝ 46527 նվազման պայմաններում (2011թ.՝ 941468 օր): 2013 թին ծախսերը կաճեն 174.2 մլն.դրամով, 2014 թ.՝ 185.8 մլն.դրամով Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

«ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է՝ 2012 թ.՝ 2 562.9 մլն.դրամ, 2013 թ.՝ 2 762.8 մլն.դրամ:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառ

1. «Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը

2012 թ. կազմում է շուրջ 4.4 մլն. դրամ (2011թ.' 89.9 մլն. դրամ), 2013 թ.' 11.8 մլն. դրամ, իսկ 2014 թ. աճում է 13.6 մլն. դրամ: Ծախսերի փոփոխությունները պայմանավորված են նրանով, որ 2012-2014 թթ. հաշվարկների համար հիմք է ընդունվել 2011թ. հունվարի 1-ի դրությամբ առկա շահառուների թվաքանակը (724 մարդ), որը 2011թ. հաստատվածի նկատմամբ նվազել է 39 մարդով: Միաժամանակ հաշվի է առնվել 2013-2014 թթ. ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի կանխատեսվող բարձրացումները:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին դրամական օգնության և պատվովճար տրամադրման բնագավառ

1. «Վետերանների պատվովճարներ» ծրագրի գծով 2012 թ. նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2011 թ. նկատմամբ կկազմի 89.5 մլն. դրամ (2011թ.' 707.8 մլն. դրամ), պայմանավորված վետերանների թվաքանակի նվազմամբ 373 մարդով, 2013 թ. նվազումը կկազմի 120.4 մլն. դրամ, պայմանավորված թվաքանակի 502 մարդով նվազմամբ, 2014 թ.' կնվազի 112.8 մլն. դրամով, պայմանավորված թվաքանակի 470 մարդով նվազմամբ: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կմնան անփոփոխ:

Համաձայն «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի, 2008 թ. հուլիսի 1-ից ՀՄՊ վետերանների ամենամսյա պատվովճարի չափը սահմանվել է 20000 դրամ:

ՀՀ ՄԺԾ 2011-2013թթ. ծրագրով հաստատվել է՝ 2012 թ.' 611,28 մլն. դրամ, 2013 թ.' 490,8 մլն.դրամ:

ՀՀ ՄԺԾ 2012-2014թ.թ. ծրագրով նախատեսվում է. 2012 թ.' 611.3 մլն. դրամ, 2013 թ.' 490.8 մլն. դրամ, 2014 թ.' 378.0 մլն. դրամ:

Անհրաժեշտ միջոցները հաշվարկելիս հաշվի են առնվել.

1) վետերանների պատվովճարի ամսական չափը 2012-2014թթ. կկազմի 20000 դրամ (պահպանվել է 2011թ. մակարդակը):

2) շահառուների թվաքանակի նվազման միտումները (2012 թ.' 2547 շահառու, 2013 թ.' 2045 շահառու, 2014 թ.' 1575 շահառու):

2. «ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012թ. կկազմի 4987.0 մլն. դրամ (2011թ.' 2973.0 մլն. դրամ):

Ծրագիրը բխում է «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքից, 1994 թվականի ապրիլի 15-ի ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների միջև կնքված՝ «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների եւ զոհվածների ընտանիքների արտոնությունների եւ

սոցիալական երաշխիքների փոխադարձ ճանաչման մասին» միջպետական համաձայնագրից և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34.1-րդ հոդվածից:

Ծրագրի ծախսերում ներառվել են նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներին տրվող հավելումների համար սահմանված միջոցները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշման հիման վրա զոհված զինծառայողների ընտանիքներին նշանակվող ընտանեկան նպաստի միջոցները, նախատեսվում է սահմանել հատուցում ստացողների միասնական համակարգ՝ ըստ առանձին կատեգորիաների համար ամսական հատուցման նոր չափեր: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

ՀՀ ՄԺԾ 2011-2013 թթ. ծրագրով հաստատվել է՝ 2012 թ.՝ 2 954.7 մլն. դրամ, 2013 թ.՝ 2 908.5 մլն.դրամ:

ՀՀ ՄԺԾ 20122014 թթ. ծրագրով նախատեսվում է յուրաքանչյուր տարի 7 959.8 մլն. դրամ:

Աշխատանքի վերահսկման բնագավառ

1. «ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012-2014 թթ. կազմում է 1.2-ական մլն. դրամ (2011 թ. պետբյուջեով, 2011-2013 թթ. ՄԺԾ-ով 2013 թ՝ 5.7 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ աշխատանքի պետական տեսչության 11 տարածքային ստորաբաժանումների և «Նորք» տեղեկատվական կենտրոնի միջև միասնական ինտրանետ համակարգի շահագործման հետ կապված լրացուցիչ ծախսերի ներառմամբ:

Սոցիալական արդարության բնագավառ

1. «Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2012 թ. կազմում է 0.4 մլն. դրամ (2011 թ. 0.5 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է միանվագ դրամական փոխհատուցում ստացող անձանց թվաքանակի 30 մարդով նվազմամբ (2011 թ.՝ 40 մարդ):

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման բնագավառ

1. «Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2013-2014թթ. համապատասխանաբար կազմում է 0.9 մլն. դրամ, 0.3 մլն. դրամ (2011-2013թթ. ՄԺԾ 2013թ.՝ 91.3 մլն. դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված

է առանձին ծախսերի գծով հաշվարկների ճշտմամբ: Միաժամանակ հաշվարկներում հաշվի է առնվել նաև 2014 թ. նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճը 10.0 հազ. դրամով (2011-2013թթ. ՄԺԾՄ 2013թ.' 35.0 հազ. դրամ), արդյունքում հաստիքային աշխատողների գծով միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 80.2 հազ. դրամ 2011 թ. 73.1 հազ. դրամի դիմաց:

Միջնաժամկետ ժամանակաշրջանում նախատեսվում է ծրագրի շրջանակներում վերապատրաստել համակարգի 700 աշխատողների և իրականացնել 6 թեմատիկ աշխատանքներ (4 հետազոտական ու 2 ձեռնարկների մշակման աշխատանքներ):

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

1. «**Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ**» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012 թ. կազմում է 2.6 մլն. դրամ (2011թ.' 17.1 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ: 2014 թ. նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ և հանրակացարաններում աշխատողների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված ծախսերը կաճեն 4.3 մլն.դրամով:

2. «**Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ**» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2012 թ. կազմում է 3.0 մլն. դրամ (2011թ.' 11.6 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ: 2014 թ. նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ և հանրակացարաններում աշխատողների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված ծախսերը կաճեն 0.4 մլն.դրամով: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն:

3. «**Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում**» ծրագրի գծով ծախսերը 2012-2013 թթ. կմնան անփոփոխ, իսկ 2014 թ. կաճեն 2.0 մլն. դրամ (2011 թ.' 44.0 մլն. դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում ընգրկված այլ ծրագրեր

1. «**Կենսաթոշակային ապահովության ծրագրերի, դրամական օգնությունների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերում**» ծրագրի

Ծրագիրը ապահովում է կենսաթոշակների, դրամական օգնությունների, պատվովճարների և այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների վճարումը:

ՄԺԾ 2011-2013 թթ. ծրագրով հաստատվել է՝ 2012 թ.' 2 577.8 մլն. դրամ, 2013 թ.' 2 836.1 մլն. դրամ:

« 2011 թվականի պետական բյուջեով հատկացվել է 2 574.2 մլն. դրամ:

ՄԺԾ 2012-2014 թթ. ծրագրով կենսաթոշակային նախատեսվում է. 2012 թ.' 1 887.9 մլն. դրամ, 2013 թ.' 2 052.0 մլն. դրամ, 2014 թ.' 2 644.0 մլն դրամ:

2. «Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն 2012 թ. նվազումը կազմում է 23.0 մլն. դրամ (2011թ. 595.5 մլն. դրամ), իսկ 2013-2014թթ. աճը 2011-2013թթ. ՄԺԾ 2013 թ. նկատմամբ համապատասխանաբար 49.0 մլն. դրամ, 130.7 մլն. դրամ (20112013թթ. ՄԺԾ 2013թ.' 598.9 մլն. դրամ): Ծախսերի փոփոխությունները պայմանավորված են առնաձին նպաստների վճարմանը ուղղված ընդհանուր ծախսերի 2012 թ. նվազմամբ, իսկ 2013-2014 թթ. ավելացմամբ:

3. «ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 073832 գործով 03.11.2007թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, 2013 թ. կազմում է շուրջ 0.3 մլն. դրամ (2011թ. 1.8 մլն. դրամ), իսկ 2014 թ.' 0.7 մլն. դրամ: Ծախսերի աճը պայմանավորված ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմամբ:

Նոր նախաձեռնություններ

1. 2014թ. նախատեսվում է ներդնել «**Կենսաթոշակային ապահովություն (պարտադիր կուտակային համակարգ)**» ծրագիրը, որի ծախսը կազմում է 18 577.0 մլն. դրամ: Սույն ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից զատ կենսաթոշակային եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված կենսաթոշակային վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը: Կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց հնարավորություն կընձեռնվի ազդել կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը (հիմք՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք):

Աղյուսակ 9.2 Նոր նախաձեռնությունների ֆինանսավորումը 2012-2014թթ. (մլն. դրամ)

	2012 թ.	2013 թ.	2014 թ.
Սոցիալական պաշտպանություն	265,813.8	289,756.0	367,109.8
Նոր ծրագրեր, այդ թվում	0.0	0.0	18,577.0
1. «Կենսաթոշակային ապահովություն (պարտադիր կուտակային համակարգ)»	0.0	0.0	18,577.0
% ոլորտի նկատմամբ	0.0	0.0	5.1
գոյություն ունեցող ծրագրեր	265,813.8	289,756.0	348,532.8
% ոլորտի նկատմամբ	100.0	100.0	94.9

Աղյուսակ 9.3 Պետական բյուջեից սոցիալական պաշտպանության գծով ծախսերը 2010-2014 թթ. (առանց գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի)

(մլն. դրամ)

Բաժնի/խմբի անվանումը	2010թ.	2011թ.	% փոփ.	2012թ.	% փոփ.	2013թ.	% փոփ.	2014թ.	% փոփ.
Ոլորտի %ը ՀՆԱի նկատմամբ	6.9	7.1	x	6.3	x	6.3	x	7.4	
Սոցիալական պաշտպանություն, այդ թվում	240,855.5	268,433.2	11.4	265,813.8	-1.0	289,756.0	9.0	367,109.8	26.7
Վատառողջություն և անաշխատունակություն	1,378.7	1,261.6	-8.5	1,257.1	-0.4	1,258.9	0.1	1,272.5	1.1
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.6	0.5	-17.9	0.5	0.6	0.4	-8.1	0.3	-20.2
Ծերություն	178,456.0	191,921.2	7.5	188,864.3	-1.6	205,972.1	9.1	275,413.1	33.7
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	74.1	71.5	-3.5	71.1	-0.6	71.1	0.0	75.0	5.5
Հարազատին կորցրած անձինք	138.7	6,934.4	4,899.6	5,175.8	-25.4	5,176.2	0.0	5,176.6	0.0
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.1	2.6	4,389.1	1.9	-24.6	1.8	-8.3	1.4	-21.1
Ընտանիքի անդամներ և զավակներ	43,962.3	48,673.6	10.7	48,078.5	-1.2	54,942.4	14.3	62,421.6	13.6
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	18.3	18.1	-0.7	18.1	-0.2	19.0	4.8	17.0	-10.3
Գործազրկություն	5,634.9	6,005.7	6.6	4,952.3	-17.5	5,010.5	1.2	5,032.1	0.4
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	2.3	2.2	-4.4	1.8	-16.7	1.7	-7.2	1.4	-20.7
Բնակարանային ապահովում	967.6	720.0	-25.6	750.0	4.2	750.0	-	752.0	0.3
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.4	0.3	-33.2	0.3	5.2	0.3	-8.3	0.2	-20.9
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	5,083.9	5,429.5	6.8	10,329.8	90.3	10,210.6	-1.2	10,102.5	-1.1

տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	2.1	2.0	-4.2	3.9	92.1	3.5	-9.3	2.8	-21.9
Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	5,233.4	7,487.2	43.1	6,406.0	-14.4	6,435.3	0.5	6,939.4	7.8
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	2.2	2.8	28.4	2.4	-13.6	2.2	-7.8	1.9	-14.9
վարկային ծրագիր, այդ թվում	142.6	1,124.6	688.6	752.4	-33.1	362.6	-51.8	-	-100.0
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.1	0.4	607.6	0.3	-32.4	0.1	-55.8	-	-100.0
ընթացիկ ծախսեր, այդ թվում	240,387.6	268,213.2	11.6	265,563.8	-1.0	289,506.0	9.0	366,857.8	26.7
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	99.8	99.9	0.1	99.9	0.0	99.9	0.0	99.9	0.0
կապիտալ ծախսեր, այդ թվում	467.9	220.0	-53.0	250.0	13.6	250.0	-	252.0	0.8
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.2	0.1	-57.8	0.1	14.8	0.1	-8.3	0.1	-20.4

ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

10.1. ՄՇԱԿՈՒՅԹ

10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.1.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Մշակույթի ոլորտում ընդգրկված պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան՝ իրականացնում են մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման, մշակութային միջոցառումների իրականացման, ստեղծագործական ներուժի վերարտադրման պայմանների ապահովման և այլ ծառայություններ:

ՀՀ կառավարության մշակութային քաղաքականությունը մշակվում է ոլորտի պետական լիազոր (գլխադասային) մարմնի՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից և իրականացվում է 74 պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 7 գերատեսչությունների, 10 մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի կողմից և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կիրականացվի 29 մշակութային ծրագիր:

Պետական մշակութային քաղաքականության ուղղություններն են՝

- **մշակութային ժառանգության պահպանություն**

- *մշակութային շարժական ժառանգության* հաշվառման, գիտական ուսումնասիրության, համալրման, հանրահռչակման, թանգարանների ցուցադրությունների և պահպանության պայմանները ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանեցման գործառույթներն իրականացվում են 66 թանգարանների (9-ը՝ մարզպետարանների, 15 համայնքային, 11-ը այլ կազմակերպությունների ենթակայության), 16 գրադարանների (այդ թվում՝ 10-ը՝ մարզային), Հայաստանի ազգային արխիվի միջոցով.

- *մշակութային անշարժ ժառանգության* պահպանության, ուսումնասիրության, հաշվառման, վերականգնման, հանրահռչակման գործառույթներն իրականացվում են ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, նախարարության ենթակայությամբ գործող 2 ՊՈԱԿ-երի, 1 ՓԲԸ-ի, 1 Հ/Կ-ի և 4 ՍՊԸ-երի միջոցով.

- **Ժամանակակից արվեստի զարգացում և փարածում**

Ժամանակակից արվեստի զարգացման, մշակութային արտադրանքի ու մրցակցային դաշտի ձևավորման, մշակութային ազգային նկարագրով անհատների և երևույթների արժևորման, միջազգային ասպարեզում ներկայացման գործառույթներն իրականացվում են 40 թատերահամերգային կազմակերպությունների (12-ը՝ մարզային), ինչպես նաև այլ մշակութային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով.

- **մշակույթի համաչափ զարգացում**

միջմարզային համագործակցության զարգացման, մշակույթի ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովման, մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, միջմարզային կապերի ամրապնդման, մշակութային գործունեության իրականացման ապահովման գործառույթներն իրականացվում են նախարարության համակարգի 66 ՊՈԱԿ-երի, ինչպես նաև այլ մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով.

- **միջազգային համագործակցության ընդլայնում**

արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնման ու խորացման միջոցով մշակութային ժառանգության պահպանության և ժամանակակից արվեստի մատչելիության ապահովման, արտերկրում հայ մշակույթի հանրահռչակման գործառույթներն իրականացվում են Հայաստանում հավատարմագրված՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող 40 դեսպանությունների, արտերկրում գործող ՀՀ 32 դեսպանությունների և 5 գլխավոր հյուպատոսությունների, 9 միջազգային կառույցների և 12 միջազգային կազմակերպությունների միջոցով.

- **ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացում**

ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացների ներգրավվածության ապահովման գործառույթներն իրականացվում են 11 ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջոցով:

Ոլորտը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հետևյալ օրենքներով՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին», «Արխիվային գործի մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին»:

10.1.1.2. Ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները

Մշակութային շարժական ժառանգություն

Թանգարանների ոլորտում պետության հիմնական գործառույթներն են՝ առկա մշակութային արժեքների և հավաքածուների *հաշվառումը, գիտական ուսումնասիրությունը, համալրումը, պահպանությունը և պաշտպանությունը*:

2010թ.-ին նախարարության համակարգի 24 թանգարաններում իրականացվել է 900.000 միավոր թանգարանային արժեքների *վերահաշվառում*:

Թանգարանային գործունեության կարևորագույն ուղղություններից է *թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունները*, որոնց արդյունքում իրականացվում է նոր ցուցադրությունների կազմակերպումը և եղած ցուցահանդեսների ընդլայնումը: Թանգարանների կողմից կազմակերպվող ցուցադրությունների և ցուցահանդեսների միջոցով 2010թ. հանրությանը ներկայացվել է 52882 ցուցանմուշ՝ 2009 թվականի 50794-ի և 2008 թվականի 48067-ի համեմատ: Մինևույն ժամանակ, գիտական ուսումնասիրությունները հրատարակվել են բուկլետներով, կատալոգներով՝ 2010թ. հրատարակվել է 49 բուկլետ, 30 ալբոմ, 73 հոդված:

Մշակութային ժառանգության պահպանության կարևոր երաշխիքներից է մշակութային արժեքների ձեռքբերմամբ *թանգարանային ֆոնդերի համալրումը*, ինչն իրականացվում է տարբեր եղանակներով՝ գնման, նվիրատվության, ինչպես նաև հնագիտական պեղումներից ձեռքբերված գտածոների թանգարաններին հանձնման միջոցով: 2009-2010թթ. ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարանները համալրվել են համապատասխանաբար՝ 9347 և 34797 թանգարանային առարկաներով: Ձեռք բերված մշակութային արժեքները ենթարկվում են փորձաքննության, գիտական նկարագրության և մեկնաբանման:

Ժամանակակից մշակութային կյանքում նոր մոտեցում է ոչ թանգարանային տարածքներում թանգարանային ցուցադրության կազմակերպումը: 2009թ. նորություն էր Հ.Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում բացված թանգարանի ցուցադրությունը, ինչի արդյունքում թատրոնի արխիվային նյութերը ամբողջապես դարձան շրջանառվող:

Մշակութային ժառանգության *պահպանման* և սերունդներին փոխանցման նպատակով ոլորտում նոր մոտեցում է նաև պետական մարմինների և մասնավոր հատվածի համագործակցությունը: 2008թ. սկսվեց համագործակցությունը «Սիվա Կապուտիկյան», 2010թ.՝ «Կալենց» հիմնադրամների հետ, ինչը ենթադրում է մշակութային ժառանգության պահպանման գործում մասնավոր հատվածի և պետության կողմից համալիր միջոցների միասնական ներդրում՝ հուշ-թանգարանների ստեղծմամբ:

Մշակութային արժեքների պահպանությանը և հանրությանը ներկայացնելուն մեծապես նպաստում է թանգարանների շենքային պայմանների և ցուցադրությունների արդիականացումը:

2008-2009թթ. հիմնանորոգված թանգարաններում 2009թ. բացվել են նոր ցուցադրություններ՝ Ռուսական արվեստի (պրոֆ. Ա.Աբրահամյանի հավաքածու), Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ Մինաս Ավետիսյանի (Ջաջուռ) թանգարաններում, Ա.Խաչատրյանի, Պ.Պոռչյանի, Խ.Աբովյանի, Ավ.Իսակայանի, իսկ 2010թ. Խ.Աբովյանի և Օրբելի եղբայրների տուն-թանգարաններում:

2009-2010թթ. շարունակվել են թանգարանային առարկաների վերականգնման և ամրակայման աշխատանքները, որոնց քանակը 2009 թվականի (4331) համեմատությամբ 2010թ. (5605) ավելացել է 1274-ով:

Թանգարաններում ցուցադրության ընդլայնման հնարավորություն է տալիս տեղեկատվական սենսորային կրպակը, որը լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրում այցելուներին թանգարանի ֆոնդերում պահվող և չցուցադրվող մշակութային ժառանգության վերաբերյալ: Վերհրական ցուցադրության կազմակերպման առաջին փորձը իրականացվել է Հայաստանի պատմության թանգարանում: Այստեղ 2009թ. տեղադրվել է տեղեկատվական սենսորային 2 կրպակ, որոնց միջոցով հանրությանը ներկայացվեց շուրջ 4200 հնագիտական ցուցանմուշներ: 2010թ. ձեռք է բերվել ևս 5 սենսորային կրպակ:

Թանգարաններում պահվող ժառանգությունը հասանելի է դառնում հանրությանը ոչ միայն ցուցահանդեսների, այլև ժամանակակից տեխնիկական միջոցներով, որոնցից ամենաարդյունավետը թանգարանների կայքերն են: Նախարարության բոլոր թանգարանները 2010 թ. ընթացքում ստեղծել են իրենց համացանցային կայք էջերը կամ լրամշակել ունեցածները:

Թանգարանների գործունեության զարգացման կարևոր ցուցանիշներից է *այցելուների թվաքանակը*, որը տարեցտարի ավելանում է՝ 2010թ. այցելուների թվաքանակը կազմել է 399427, որը 25943-ով ավելի է 2009 թվականի ցուցանիշից:

Այցելուների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացրել արդեն ավանդական դարձած «Թանգարանային գիշեր» միջոցառումը, որին մասնակցում են հանրապետության թանգարանների մեծ մասը. 2010թ. մասնակցել է 34 թանգարան, 29824 այցելու, 2009թ.՝ 33 թանգարանի և 24335 այցելուի համեմատ:

Մշակութային ժառանգության հանրահռչակմանն են նպատակաուղղված եղել արտերկրում կազմակերպված 2009թ. 2 ցուցահանդեսներ՝ Իտալիայում ու Հունաստանում և 2010թ. 6 խոշոր ցուցահանդեսներ՝ Սլովենիայում, ՌԴ-ում, Լիբանանում, Սիրիայում, Հոլանդիայում:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում թանգարանային առարկաների *պահպանությանը*, ինչի համար 2010թ. ահազանգման և հակահրդեհային համակարգերի տեղադրման համար ֆինանսական միջոցներ են ուղղվել Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղերում՝ Ա.Սարգսյանի ու Հ. Կոչոյանի և Մ.Աբեղյանի տուն-թանգարաններին, ջեռուցման համակար-

գերի տեղադրման համար՝ Հ.Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանին, Մ. Սարյանի տուն-թանգարանին, Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղերում՝ Ա.Սարգսյանի ու Հ.Կոչոյանի և Մ.Աբեղյանի տուն-թանգարաններին:

Թանգարանների մասնագետները ակտիվորեն մասնակցում են միջազգային դասընթաց-վարժանքներին: ՀՀ կառավարության կողմից հաստատված «Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման համալիր ծրագրի» շրջանակներում 2010թ. վերապատրաստվել են 50 ֆոնդապահներ, 25 էքսկուրսավարներ, համաժողովներին և միջազգային խորհրդակցություններին մասնակցել են շուրջ 25 թանգարանի աշխատողներ:

Թանգարանային ոլորտին 2009-2010թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 1493.3 և 1575.8 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 1923.3 մլն դրամ, որից թանգարանների վերանորոգման համար՝ 278.8 մլն դրամ:

Գրադարաններ ոլորտում հիմնական գործառույթներն են՝ գրադարանային հավաքածուների պահպանության, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացի՝ մշակութային ժառանգության թվայնիզացումը, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացումը, համալրման անընդհատության ու օգտագործման մատչելիության ապահովումը, տպագիր նյութերի, ազգային անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ մատչելիության, կենսամատչելիության, վիճակագրական տվյալների, տեղեկատվական ցանկերի կազմումն ու հրատարակումը:

Գրադարանային գործի զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ գրադարանների շենքերի հիմնանորոգման համալիր ծրագրի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են 2009թ. Սյունիքի մարզային գրադարանում, 2010թ.՝ Խնկո-Ապր անվան ազգային մանկական գրադարանում: 2011թ. կշարունակվեն Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքում ընթացող աշխատանքները, ինչպես նաև կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ ևս 6 մարզային գրադարաններում:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում գրադարանային առարկաների պահպանությանը, ինչի համար 2010թ. հակահրդեհային և ազդանշանային համակարգերի տեղադրման համար ֆինանսական միջոցներ են ուղղվել 4 մարզային գրադարաններին, իսկ 2011թ.՝ Երաժշտագիտական և ևս 6 մարզային գրադարաններին:

Մշակութային նշանակության գրքերի պահպանվածության ապահովման ուղղությամբ՝ 2009թ. Հայաստանի ազգային գրադարանի կողմից շարունակվել են գրադարանային հավաքածուների կազմում ընդգրկված հնատիպ գրքերի հավաքածուից 77 և մշակութային նշանակության հավաքածուից 59 գրքերի վերականգնումը, ինչպես նաև 21600 միավորի ախտահանումն ու մանրէազերծումը: Կազմակերպվել են նաև գրադարանային հավաքածուից մշակութային նշանա-

կության պարբերական մամուլի 2120 թերթ միավորի նորոգման գործընթացները: 2010թ. վերականգնվել է 80 միավոր, 2011թ. նախատեսվում է իրականացնել հնատիպ գրքերի հավաքածուից 5 գրքի և մշակութային նշանակության հավաքածուից 70 գրքի կազմի և էջերի վերականգնում, մամուլի կազմում, երկարակեցության ապահովում:

Զարգացման միտում է արձանագրվել պետական համակարգի գրադարաններում *ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և մատուցվող ծառայությունների* արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2010թ. ՀՀ մշակույթի նախարարության համակարգի գրադարանների էլեկտրոնային սպասարկումների թիվը կազմել է 181043 միավոր, որը 2009 թվականի համեմատությամբ աճել է 10305-ով (6 %-ով): Ցուցանիշների աճը պայմանավորված է հանրության կողմից էլեկտրոնային տեղեկատվության ստացման հետաքրքրության բարձրացմամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» -ի կողմից «Ազգային գիտատեխնիկական տեղեկատվական ցանց» վեբ պորտալից 2007-2008թթ. օգտվող կազմակերպությունների համար կատարվել է 12500 փաստաթղթի էլեկտրոնային առաքում, իսկ 2009-2010թթ.՝ 16089 առաքում, ցուցանիշը աճել է 3589-ով (28.7 %):

ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական գիտաբժշկական գրադարանի կողմից մատուցած էլեկտրոնային սպասարկումների թիվը 2010թ. կազմել է 70829 միավոր, ինչը 2009 թվականի համեմատությամբ աճել է 15399-ով (27.8 %):

ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանը 2010թ. իրականացրել է էլեկտրոնային փաստաթղթերի՝ գիտական հոդվածների մոտ 350 սպասարկում, որը 2009թ. համեմատությամբ աճել է 26-ով (0.8 %):

Գրադարանային հավաքածուների համալրման ցուցանիշներում արձանագրվել է թվաքանակի աճ, ինչը պայմանավորված է գրադարաններին նվիրաբերված գրականությամբ:

ՀՀ մշակույթի նախարարության համակարգի գրադարանների գրադարանային հավաքածուների թիվը 2010թ. կազմել է 8674822 միավոր, ինչը 2009թ. համեմատ աճել է 61325-ով, սպասարկված միավորների թիվը 2010թ. կազմել է 3659387, ինչը 2009թ. համեմատ աճել է 216765-ով, ընթերցողների թիվը 2010թ. կազմել է 109872, ինչը 2009թ. համեմատ աճել է 2863-ով:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գրադարանում սպասարկված միավորների թիվը 2010թ. կազմել է 760000, ինչը 2009թ. համեմատ աճել է 10000-ով, իսկ ընթերցողների թիվը 2010թ. կազմել է 18810, ինչը 2009թ. համեմատ աճել է 850-ով:

ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական գիտաբժշկական գրադարանում՝ սպասարկված միավորների թիվը 2010թ. կազմել է 90011, ինչը 2009թ. համեմատ աճել է 4361-ով, իսկ ընթերցողների թիվը 2010թ. կազմել է 6003, ինչը 2009թ. համեմատ աճել է 293-ով:

«Առողջապահության նախարարության հանրապետական գիտաբժշկական գրադարանի կողմից 2010թ. ձեռք է բերվել՝ 419 միավոր նյութական կրիչ, ինչը 2009թ. համեմատ նվազել է 51-ով, «ԳԱԱ հիմնարար գրադարանի կողմից 2010թ. ձեռք է բերվել՝ 11162 միավոր, որը 2009թ. համեմատ աճել է 3193-ով, «Էկոնոմիկայի նախարարության հանրապետական գիտատեխնիկական գրադարանի կողմից 2010թ. ձեռք է բերվել 548 միավոր, որը 2009թ. համեմատությամբ նվազել է 375-ով (ցուցանիշների նվազումը պայմանավորված է տպագիր արտադրանքի գների բարձրացմամբ):

Վերջին տարիներին զարգացման միտում է արձանագրվել *գրադարանային հավաքածուների ավտոմատացման* գործընթացում: Հայաստանի ազգային գրապալատի կողմից համահավաք տվյալների շտեմարան մուտքագրված միավորների թիվը կազմում է 3.000.000 (778700 անուն), որից 2010թ.՝ 91521 անուն, ինչը 8696-ով ավելի է 2009թ. ցուցանիշից: 2011թ. նախատեսվում է մուտքագրել 98500 անուն:

2008-2009թթ. իրականացվեցին «Գրանշան» տառատեսակների երկու միջազգային մրցույթներ, որոնց մասնակցել են մոտ 50 տառատեղծներ Հայաստանից և արտերկրից: Վերոնշյալ մրցույթներում մրցանակ ստացած աշխատանքները 2009թ. ցուցադրվեցին Սանկտ Պետերբուրգում կայացած АТурі-ի (Տառատեղծների համաշխարհային ասոցիացիա) տարեկան համաժողովի շրջանակներում կազմակերպված տառարվեստի միջազգային ցուցահանդեսում: Մշակվել և «Էկոնոմիկայի նախարարի 2009 թ. հուլիսի 6-ի N 652-Ա հրամանով հաստատվել է ՀՍ 311-2009 «Հայկական համակարգչային տառատեսակների» ՀՍ 311-2009 ստանդարտը: Ստանդարտի ընդունումը նպաստել է Յունիկոդ (Unicode) կոդավորման համակարգին համապատասխան համակարգչային տառատեսակների անհրաժեշտ լրակազմի, կիրառման ոլորտների, հեղինակային իրավունքների հետ կապված խնդիրների կանոնակարգմանը, ինչպես նաև գրահրատարակչության և պետական պաշտոնական պարտադիր կիրառման ոլորտներում համակարգչային տառատեսակների վերաբերյալ ազգային ստանդարտների հետագա մշակմանը և կիրառմանը: 2009-2010թթ. Հայաստանի ազգային գրապալատի կողմից մշակվեցին 3 նոր հայկական համակարգչային տառատեսակների լրակազմեր:

Գրադարանային ոլորտին 2009-2010թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 1321.6 և 1413.3 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 1440.2 մլն դրամ, որից գրադարանների հիմնանորոգման նպատակով 274.1 մլն դրամ:

Արխիվային գործի ոլորտի բոլոր ծառայությունների մատուցումն իրականացվում է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից, որն ուղղված է արխիվային փաստաթղթերի *պահպանության ապահովմանը, համալրմանը, օգտագործմանը և տեղեկատու-որոնողական ինքնաշխարհ համակարգի ստեղծմանը:*

2008թ. ձեռք բերվեց և շահագործման հանձնվեց կինոփաստաթղթերի թվայնացման սարքավորում, որով 2009-2010թթ. թվայնացվեց շուրջ 400 փաստավավերագրական ֆիլմ (2000 պահպանման միավոր): Աճեցին << ազգային հավաքածուի թվայնացմանը նպատակաուղղված ծախսերը՝ ապահովելով մինչ վերջին տարիները հանրության օգտագործման համար խիստ սահմանափակ համարվող արխիվային փաստաթղթերի մատչելիությունը: 2010թ. վերականգնվել-վերանորոգվել է 323.2 հազար թերթ փաստաթուղթ, կարվել-կազմապատվել մոտ 30.5 հազար գործ, արկղավորվել՝ 140.2 հազար գործ: Արխիվը համալրվել է 41.7 հազար գործավարական և 32.1 հազար անձնակազմի վերաբերյալ գործերով: 2010 թվականի ընթացքում արխիվ է դիմել 25186 ֆիզիկական և իրավաբանական անձ, արխիվի ընթերցասրահներում աշխատել է 418 հետազոտող, պատրաստվել է 42 ռադիոհեռուստատեսային հաղորդում և փաստաթղթերի 7 ցուցադրություն: Տեղեկատու որոնողական համակարգի ստեղծման նպատակով էլեկտրոնային շտեմարան է մուտքագրվել ավելի քան 65.5 հազար արխիվային տեղեկություն:

2009թ. ընթացքում կազմակերպության գլխավոր մասնաշենքին կից առաջին և երկրորդ արխիվապահոցային մասնաշենքերում անցկացվել է ժամանակակից օդափոխության, օդորակման, ջեռուցման և սառնամատակարարման համակարգ: Ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել արխիվի N 2 մասնաշենքում, կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում: Առկա օգտագործվող շինություններից որպես արխիվապահոց վերակառուցվել է նաև նախկին տնտեսական մասնաշենքը: Նշված տարածքների վերակառուցման արդյունքում կահավորվել է 550 քմ ընդհանուր տարածքով արխիվապահոցներ, որտեղ հնարավոր է պահպանել 430 հազար գործ (1քմ 780 պահպանման միավոր հաշվարկով), որը հնարավորություն կտա լուծել արխիվի համալրման խնդիրները, առաջիկա 10-15 տարիների ընթացքում:

Արխիվային հավաքածուների պահպանության համար պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար 308.1 և 333.1 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 380.9 մլն դրամ:

Պատմության և մշակույթի անշարժ ժառանգություն

Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղվում են պատմամշակութային հուշարձանների *հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման* գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը:

Հանրապետության տարածքում ներկայումս հաշվառված են ավելի քան 24250 հուշարձան՝ խմբավորված մոտ 7327 տարածքային պահպանական միավորներում: Դրանցից 1809-ը հնագույն, հին և միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ ու ամրապաշտպանական կառույցներ են, 2339-ը՝

վանական համալիրներ, եկեղեցիներ և մատուռներ: Կան հարյուրավոր դամբարանադաշտեր, պատմական գերեզմանոցներ, տարաբնույթ աշխարհիկ կառույցներ, հուշային և մոնումենտալ արվեստի նմուշներ:

Շարունակվում է ուսումնասիրման արդյունքում նորահայտ հուշարձանների հայտնաբերման և սահմանված կարգով դրանք հուշարձանների ցանկում ընդգրկման գործընթացը. 2010թ. կազմվել է 534 պատմամշակութային նորահայտ օբյեկտի անվանացանկ:

2009-2010թթ. պեղումներ իրականացվեցին հրատապ ուսումնասիրման կարիք ունեցող 5 և 7 հուշարձաններում, ընդ որում 2009թ. պեղված հուշարձաններից 2-ում, իսկ 2010թ.՝ 3-ում կատարված աշխատանքներն արդեն իրականացվեցին որպես վերականգնման համար պարտադիր նախնական փուլ:

Ելնելով վերականգնման կարիք ունեցող հուշարձանների մեծ քանակից՝ առաջնահերթ վերականգնվող հուշարձանների ճիշտ ընտրության համար 2009թ. մեկնարկեց առավել վտանգված հուշարձանների տեխնիկական վիճակի դիտանցման ծրագիրը, որի արդյունքում կազմվեց 26 հուշարձանի ամբողջական փաթեթ, 2010թ.՝ ևս 26:

2010թ. որպես նոր նախաձեռնություն մեկնարկել է «Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարության պատվերով իրականացվել են նաև արտերկրում գտնվող հայկական ծագում ունեցող հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, վավերագրման, վկայագրման աշխատանքները. հաշվառվել, ուսումնասիրվել, վավերագրվել ու վկայագրվել է թվով 450 հուշարձան, որոնք ներկայացված են 2010 թ. ընթացքում տպագրված 9 պրակներում:

Մեծ ծավալի աշխատանքներ են տարվել և այժմ էլ շարունակվում են հուշարձանների պահպանական գոտիների կազմման ուղղությամբ՝ նոր ձևաչափով կազմվել և թողարկվել են ավելի քան 2462 պահպանական գոտու նախագծեր, որոնցից սահմանված կարգով հաստատվել է 1387-ը:

Հուշարձանների վերականգնման ծրագրով 2008թ. իրականացվել են 12 նախագծային և 15 վերականգնման (որից 3-ը՝ ավարտական) աշխատանքներ, 2009թ.՝ համապատասխանաբար՝ 2 նախագծային և 13 վերականգնման (որից 1-ը՝ ավարտական): 2010թ. համապատասխանաբար՝ 5 նախագծային և 11 վերականգնման (որից 4-ը՝ ավարտական): Նախորդ տարիների համեմատ ընդլայնվել է վերականգնվող հուշարձանների աշխարհագրությունը, վերականգնողական աշխատանքներում գերիշխող է դարձել մարզային համաչափության սկզբունքը (9 մարզ) և ավելացել աշխարհիկ կառույցների (7 հուշարձան) ընդգրկվածությունը:

Այս բնագավառում 2009թ. կարևոր իրադարձություն էր իտալացի մասնագետների օժանդակությամբ Մինաս Ավետիսյանի «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարի տեղափոխումը Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ՝ Մինաս Ավետիսյանի թանգարան (Ջաջուռ) և դրա վերա-

կանգնումը: 2010թ. Գյումրի քաղաքից ՀՀ կառավարության շենք տեղափոխվեցին և վերականգնվեցին նաև Մինաս Ավետիսյանի «*Խաչքարի մոտ*» և «*Հանդիպում*» որմնանկարները: Կարևորելով հուշարձանների այս տեսակի պահպանության և վերականգնման առանձնահատկությունները 2010թ. սկսվել և 2011թ. իրականացվում է նաև «*Թեղ են մանում*» և «*Երկանք*» որմնանկարների տեղափոխման աշխատանքները:

2009թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրի վարման կարգ»-ի համաձայն ներկայումս շարունակվում են հայկական հուշարձանների համահավաք տեղեկատվական շտեմարանում ներառված 24250 գիտական քարտերի տվյալների համալրման աշխատանքները:

Հուշարձանների պահպանության ոլորտին 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 399.9 և 335.1 մլն դրամ, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման համար՝ 331.1, 206.2 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 351.2 մլն դրամ, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման համար՝ 215.0 մլն դրամ:

Ոչ նյութական մշակութային ժառանգություն

Ոչ նյութական (հոգևոր) մշակութային ժառանգության պահպանությունը մշակութային պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է, որն ազգային դիմագծի, ինքնության կարևոր բաղկացուցիչ է: Վերջին տարիներին իրականացված միջոցառումները միտված են եղել ոչ միայն ոլորտի վերազարթոնքին, այլև մեծ արձագանք ունեցան հասարակության մեջ՝ ձևավորելով ազգային ոչ նյութական մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքի ու արժևորման մթնոլորտ:

Ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվում են *պահպանության* (գիտարշավների կազմակերպում, ուսումնասիրում, նույնականացում, փաստաթղթավորում, արխիվների թվայնացում, գիտական անտիպ նյութերի տպագրում), *պաշտպանության* (ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացում, կրողներից սերունդներին փոխանցման համար նպաստավոր պայմանների ստեղծում), *հանրահոշակման* (գիտաճանաչողական ֆիլմերի, հեռուստառադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում, կայքերի ստեղծում, փառատոների, համերգների, ծիսակարգերի, գիտաժողովների, հանդիսությունների, մրցույթների կազմակերպում) խնդիրների լուծմանը:

Վերջին երկու տարիներին աշխատանքներ են տարվել ոլորտի իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ, մասնավորապես. 2009թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին» ՀՀ օրենքը: Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2010 թվականի հունվարի 15-ի N 8-Ա որոշմամբ հաստատվել է «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը»:

2010թ. ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ կատարվեցին գիտական ուսումնասիրություններ, մասնավորապես՝ հրատարակվել են Ս.Մկրտչյանի «Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն)» գիրքը, «Գորելեն, գեղանկար, խճանկար» ալբոմը, Լուսիկ Ագուլեցու «Անցյալի մասունքները» աշխատությունը:

2009-2010թթ. մեկնարկեցին ՀՀ ԳԱԱ արվեստի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտների արխիվներում առկա բանահյուսական նյութերի թվայնացման աշխատանքները: 2009թ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը կազմակերպեց երթուղային գիտարշավ Գեղարքունիքի մարզում՝ երաժշտաբանաստեղծական բանահյուսական նյութերի հավաքման նպատակով: 2011թ. նախատեսվում է կազմակերպել նմանատիպ գիտարշավ ՀՀ Արագածոտնի մարզում:

Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահոշակմանն ուղղված միջոցառումների շրջանակներում՝

✓ 2010թ. նկարահանվել է 2 ֆիլմ («Դաշտադեմի ամրոցը», «Գորգի սիմվոլիկան և աղի պաշտամունքը Հայաստանում») և պատրաստվել են 12 հեռուստահաղորդաշար («Հայաստանի ճամփեքով»)՝ 2009թ. նկարահանված 3 ֆիլմի, 1 տեսահոլովակի, 1 ռադիոհաղորդաշարի և 1 հեռուստահաղորդման փոխարեն:

✓ 2010թ. իրականացվել է «Երկնքից երեք խնձոր ընկավ...» հեքիաթասացության փառատոնը, որը նոր ձեռքբերում էր ոլորտում՝ ուղղված ժողովրդական բանահյուսության, մասնավորապես, հեքիաթասացության և բարբառների պաշտպանությանը ու հանրահոշակմանը:

✓ 2010թ. կազմակերպվել է «Ազգային տարրերով ժամանակակից պարային հագուստների էսքիզներ» մրցույթը:

✓ 2009թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում՝ «Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում» ներառելու նպատակով ներկայացվել էր «Խաչքարի արվեստը. խաչքարի խորհուրդն ու խաչքարագործությունը» ազգային հայտը, որն ընդունվեց 2010թ. նոյեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջկառավարական կոմիտեի որոշմամբ:

✓ 2011թ. կիրատարակվի երկլեզու (անգլերեն-հայերեն) «Խաչքար» պատկերագիրքը, Փարիզում կկազմակերպվի «Խաչքարի արվեստ» ցուցահանդեսը:

Ոլորտին 2009-2010թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 27.1 և 38.5 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 38.5 մլն դրամ:

Ժամանակակից արվեստի (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ) զարգացում

Ժամանակակից արվեստի ոլորտում պետական բյուջեի միջոցներն առաջին հերթին ուղղվում են ստեղծագործական ՊՈԱԿ-ների սուբսիդիաների տրամադրմանը, մշակութային արտադրանքի

ձևավորմանը և դրա ձեռքբերմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը, միջազգային ասպարեզում ներկայացմանը, միջմարզային համագործակցության զարգացմանը, մշակութային ազգային նկարագրով անհատների և երևույթների արժեքավորմանը և հանրայնացմանը:

Ժամանակակից արվեստի զարգացման գործում ներկա փուլում առաջնահերթ է երիտասարդ ստեղծագործական ներուժի և սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ:

Կարևոր ձեռքբերումներից է *դեբյուտային ծրագրերի իրականացումը*, որի շարունակականությունը հնարավորություն է տալիս ոլորտը համալրել նոր ստեղծագործական ուժերով, ինչպես նաև ապահովել ոլորտի սահուն սերնդափոխության իրականացումը: 2009-2010թթ. արվեստի տարբեր ոլորտներում իրականացվել են դեբյուտային և երիտասարդական ծրագրեր, այդ թվում՝

թատերարվեստի ոլորտում՝ աջակցություն է ցուցաբերվել, համապատասխանաբար, թատերական 4 և 7 երիտասարդ բեմադրիչների և ռեժիսորների ծրագրերին, իրենց դեբյուտն են նշել 40 երիտասարդ դերասաններ:

երաժշտարվեստի ոլորտում՝ դեբյուտային ծրագրերով ձեռք է բերվել 1, կատարվել են 18 երիտասարդ կոմպոզիտորների լավագույն դասական ստեղծագործություններ, միջազգային մրցույթներին մասնակցության աջակցություն են ստացել 22 երիտասարդ կատարողներ, անց է կացվել 5 երիտասարդական, այդ թվում՝ 2-ը միջազգային մրցույթ-փառատոներ, ստեղծագործական գործունեության խթանման նպատակով աջակցություն է ցուցաբերվել հանրապետությունում գործող երիտասարդական 7 կոլեկտիվներին:

կինոարվեստի ոլորտում՝ շուրջ 15 միջազգային կինոփառատոներում Հայաստանը ներկայացվել է, համապատասխանաբար, 8 և 10 դեբյուտային ֆիլմերով:

Թատերարվեստի ոլորտում ստեղծագործական պատվերների միջոցով ավելացել է հայ և համաշխարհային դասական ու ժամանակակից դրամատուրգների պիեսների բեմադրությունների քանակը: Վերջին երկու տարիներին բեմադրվել է, համապատասխանաբար, 55 և 53 նոր ներկայացումներ՝ նախատեսված 50-ի և 51-ի փոխարեն, որոնցից 12 և 17՝ պետական աջակցությամբ:

2009թ. համեմատ 2010թ. թատրոններում խաղացած ներկայացումների քանակը ավելացել է 3.1 %-ով, կամ աճել է 54-ով (2009թ.՝ 1680, 2010թ.՝ 1734), հանդիսատեսի թվաքանակը նվազել է 0.3 %-ով, կամ 903-ով (2009 թ.՝ 279019, 2010 թ.՝ 278116), ինչը պայմանավորված է որոշ թատրոններում ընթացող վերանորոգման աշխատանքներով, ինչպես նաև ծավալուն բեմադրական աշխատանքների իրականացմամբ:

2009-2010թթ. իրենց որակով առանձնացան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում բեմադրված *«Սպարտակ» բալետը* և *«Աիդա» օպերան*, որոնք

վերջին տարիներին դրսևորված ազգային օպերայի և բալետի լավագույն ավանդույթների նոր վերելքի վկայությունն են:

2010թ. պետական աջակցությամբ իրականացվել են 5 հանրապետական թատերական փառատոներ («Թատրոն X», «Թատերական Լոռի» համայնքային, «Նռան հատիկ» մանկապատանեկան, Երիտասարդ ռեժիսուրայի, «Հայ հայր» այվազյանական, հանրապետական թատերական փառատոներ), 6 միջազգային փառատոներ («Արմմոնո» , «Հայֆեստ», «Թումանյանական հեքիաթի օր» , Վ. Փափազյանի անվան շեքսպիրյան, Մնջախաղի թատրոնների և «Ներկայի վերականգնումը» (Reading Fest) դրամատուրգիական) և Թատերական քննադատների միջազգային ասոցիացիայի համաշխարհային համաժողով (ՅՈՒՆԵՍԿՕ):

2010թ. 1-ին անգամ իրականացվեց նաև «Հայ հայր» այվազյանական թատերական փառատոնը, որի արդյունքում թատրոնների ու թատերախմբերի խաղացանկերը համալրվեցին ևս 11 նոր ներկայացումներով:

Միջազգային ասպարեզում ժամանակակից թատերարվեստի ձեռքբերումների հանրահռչակման նպատակով 2009թ. հայաստանյան թվով 9 թատերախումբ և 18 գործիչ մասնակցել են միջազգային տարբեր ծրագրերի, իսկ 2010թ. 5 թատերախումբ և 19 թատերական գործիչ Հայաստանը ներկայացրել են 15 միջազգային փառատոներում, գիտաժողովներում ու թատերական այլ ծրագրերում՝ շուրջ 15 երկրներում:

Թատերարվեստի ոլորտին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 2240.9 և 1810.7 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 2068.5 մլն դրամ:

Ժամանակակից երաժշտարվեստի ոլորտին վերջին երկու տարիներին ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների ավելացումները նպաստեցին համերգային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովմանը, ժանրային տարբեր ոլորտների համաչափ զարգացմանը, ստեղծագործական նոր ծրագրերի իրականացմանը, երաժշտարվեստի ասպարեզի ստեղծագործական ներուժի բացահայտմանը, մշակութային բարձրարժեք արտադրանքի ստեղծմանը և այն համաշխարհային հանրությանը ներկայացնելուն:

Ազգային երաժշտարվեստի՝ ժողովրդական և կամերային ժանրերի զարգացման, ստեղծագործական խմբերի բնականոն գործունեության ապահովման և պետական ներդրումների առավել արդյունավետ օգտագործման նպատակով 2010թ. ստեղծվեցին կամերային և ժողովրդական երաժշտության ազգային կենտրոններ, ինչի շնորհիվ 2011թ. արձանագրվեցին շոշափելի հաջողություններ:

Երգչախմբային արվեստի զարգացմանն ուղղված ֆինանսական հատկացումները նպաստեցին ոլորտի զգալի զարգացմանը: Ավանդույթ դարձած «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթը տարեցտարի համալրվում է նոր մասնակիցներով՝ միևնույն ժամանակ կատարելագործելով որակական ցուցանիշները: Երգչախմբային արվեստի

զարգացմանը զուգընթաց զգալի վերելք ապրեց նաև հայ կոմպոզիտորական դպրոցը, գրվեցին և կատարվեցին հայ ժամանակակից կոմպոզիտորների շուրջ 100-ից ավելի խմբերգային ստեղծագործություններ:

Հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների շարունակականությունը ապահովելու նպատակով վերջին 2 տարիներին ձեռք է բերվել և կատարվել 27 հայ ժամանակակից կոմպոզիտորի 37 ստեղծագործություններ: Ծրագրային զգալի փոփոխություններ են կատարվել պետական երաժշտական կոլեկտիվների երկացանկերում՝ 2 տարիների ընթացքում կատարվել է շուրջ 80 հայ կոմպոզիտորի (որից 13 երիտասարդ, 15 սփյուռքահայ) 200 ստեղծագործություն:

«Երաժշտարվեստի աջակցում և խթանում՝ ստեղծագործական պատվերների միջոցով» ենթաձրագրով 2009-2010թթ. իրականացվել է 6 նախագիծ և շուրջ 40 նոր համերգային ծրագիր:

Առավել կարևոր է ժանրային բոլոր ուղղություններով իրականացված միջազգային և հանրապետական մրցույթ-փառատոները, որոնք նպատակային միտված են ոլորտի բոլոր ժանրերի համաչափ զարգացմանը (*փառատոներ*՝ 11 դասական, այդ թվում՝ 5-ը միջազգային, 1 ազգագրական-ժողովրդական, 1 հոգևոր, 1 ոռք-երաժշտության, 1 ռազմահայրենասիրական երգի, *մրցույթներ*՝ գործիքային ժանրում՝ դաշնամուրային (1 միջազգային, 3 հանրապետական), լարային (1 միջազգային, 1 հանրապետական), փողային (1 հանրապետական), ժողովրդական (1 հանրապետական), երգչախմբային (1 հանրապետական), ստեղծագործողների (2 հանրապետական), այդ թվում 7 մանկապատանեկան (2 միջազգային), 5 երիտասարդական (2 միջազգային):

Պետական աջակցությամբ 38 միջազգային և հանրապետական փառատոներից ու մրցույթներից 13-ը (8 փառատոն և 5 մրցույթ) իրականացվել են առաջին անգամ, որոնցից 7-ը՝ սկզբնավորվել են 2009թ., 6-ը՝ 2010թ.:

Ամենամյա մի շարք մրցույթ-փառատոներ ընդլայնվեցին և ստացան նոր նպատակային ուղղվածություն, մասնավորապես.

- Լարային գործիքների կիրառման և զարգացման կենսունակությունը ապահովելու նպատակով Գ.Թալալյանի անվան հանրապետական փառատոնում ընդգրկվեց «ալտ» նվագարանը և փառատոնը վերանվանվեց «Հենրիկ և Գերոնտի Թալալյան եղբայրների անվան ալտի և թավջութակի փառատոն»:
- Իր գործունեության շրջանակներն ընդլայնեց նաև ռազմահայրենասիրական երգերի ուսուցման ծրագիրը, որն առաջին անգամ անցկացվեց Ազգային բանակի զորամասերում՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ:
- Գյումրու «Վերածնունդ» երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոնը հանրապետականից դարձավ միջազգային:

2009-2010թթ. թողարկվել է 33 խտասալիկ, 2 վավերագրական, 1 երաժշտական տեսաֆիլմ և 1 էլեկտրոնային գիրք (մուլտիմեդիա ձայնասկավառակ):

Փառատոներով և տարաբնույթ միջոցառումներով նշանավորվեցին հիշարժան տարեթվերը ու հորեյանները: 2009թ. նշանավորվեց Կոմիտասի 140-ամյակին նվիրված միջոցառումներով, որի շրջանակներում իրականացվել է 3 մրցույթ-փառատոն, 2 տասյակից ավելի կոմիտասյան համերգային ծրագիր, այդ թվում՝ հյուրախաղեր Ֆրանսիայում, Գերմանիայում, Սան-Ֆրանցիսկոյում:

Ժամանակակից արվեստի, համերգային դահլիճների և շենքերի հիմնանորոգման և նյութատեխնիկական բազայի ապահովման ծրագրով 2009թ. շարունակվել է մշակութային օբյեկտների հիմնանորոգման, սարքավորումներով հագեցման գործընթացը, որը հնարավորություն ընձեռեց լուծել մի շարք խնդիրներ և նպաստեց համերգային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովման բարելավմանը: Պետական ենթակայության 3 համերգասրահների և Երգի պետական թատրոնի համար սահմանվեց երաժշտական ժանրային հստակ ուղղվածություններ, որի արդյունքում՝

✓ «Արամ Խաչատրյան» համերգասրահում լիարժեք համերգային գործունեություն ապահովվեց Հայաստանի պետական ֆիլիարմոնիկ և երիտասարդական նվագախմբերի կոլեկտիվների համար՝ խթանելով սիմֆոնիկ ժանրի զարգացումը.

✓ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան բազայի հիման վրա 2011թ. մեկ միասնական կառույցում սկսեց գործել «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը ներառում է կամերային ժանրի 6 ստեղծագործական կոլեկտիվներ (3 նվագախումբ և 3 երգչախումբ):

✓ «Առնո Բաբաջանյան» համերգասրահը 2009թ. մշտական բազայով ապահովեց «Դպրոցականի ֆիլիարմոնիա» ծրագիրը և նույն բազայի վրա 2011թ. 2 ժողովրդական կոլեկտիվներով (Հայաստանի ժողովրդական նվագարանների նվագախումբ, Հայաստանի գուսանական և ժողովրդական երգի պետական համույթ) միավորված սկսեց գործել «Ժողովրդական երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը,

✓ Երգի պետական թատրոնն իր բազայի վրա 2010թ. վերսկսեց իր աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբը ապահովվեց ստացիոնար բեմով և փորձասենյակով:

Երաժարվեստի ոլորտին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 906,1 և 754.7 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 847.0 մլն դրամ:

Կինոարվեստի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղվել է երիտասարդ կինոգործիչների կողմից իրականացվող կինոնախագծերի իրականացման և արվեստի, մշակույթի գործիչների հորեյաններին նվիրված ֆիլմերի նկարահանման, միջազգային ասպարեզներում հայկա-

կան կինոարտադրության ներկայացման ապահովմանը, մարզերում կինոցուցադրությունների կազմակերպման ընդլայնմանը:

2009-2010թթ. պետական աջակցությամբ նկարահանվել է, համապատասխանաբար, 22 և 20 խաղարկային, 5 և 6 մուլտիպլիկացիոն, 15 և 17 վավերագրական (որից 2 և 3-ը՝ շարունակվող) ֆիլմ:

2009թ. ձևավորված նոր ավանդույթը՝ «Մոսկվա» կինոթատրոնում հայրենական արտադրության ֆիլմերի պարբերական ցուցադրությունը, հնարավորություն ընձեռեց հայ հանդիսատեսին անմիջականորեն հաղորդակցվելու ազգային կինոարվեստին: 2010թ. կայացավ «Սասունցի Դավիթ» լիամետրաժ մուլտիպլիկացիոն ֆիլմի շնորհանդեսը, իսկ տարվա ընթացքում՝ բազմաթիվ ցուցադրություններ: Կինոարվեստի տարածման, մասնավորապես՝ հանրապետության *մարզերի բնակչությանը կինոարվեստին հաղորդակից դարձնելու* նպատակով, արտադրական պրոցեսներին զուգընթաց՝ վերջին տարիներին իրականացվում են կինոցուցադրումներ հանրապետության տարբեր մարզերում, ԼՂՀ-ում և Ջավախքում, որոնք ուղեկցվում են անվանի կինոգործիչների հետ հանդիպումներով:

Հայաստանում իրենց բնականոն գործունեությունն են շարունակում արդեն ավանդական դարձած «Ոսկե ծիրան», «Ես եմ», «Կին», *Մանկապատանեկան ֆիլմերի*, «Մեկ կադր» միջազգային կինոփառատոնները: Այդ շարքում իր ուրույն տեղն է հաստատում 2009թ. հաջողությամբ մեկնարկած «ՌեԱնիմանիա» անիմացիոն ֆիլմերի երևանյան միջազգային կինոփառատոնը: 2010թ. Հայաստանի ազգային կինոկենտրոնը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ. իրականացվեց «Կինոաշուն» *ազգային կինոյի ամիս* ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվեցին կինոցուցադրություններ մայրաքաղաքի տարբեր վայրերում, հանրապետության մի շարք մարզերում, ինչպես նաև կլորսեղաններ, գրախոսականների մրցույթ, հոբելյանների նշում:

Կինոարվեստի ասպարեզում 2007-2008թթ. համեմատությամբ 2009-2010թթ. ընդլայնվել է հայկական կինոարտադրության մասնակցությունը *միջազգային փառատոններին և կինոշուկաներին*: 2009թ. Հայաստանի ազգային կինոկենտրոնը Կաննի միջազգային հեղինակավոր կինոփառատոնում ներկայացավ առանձին տաղավարով, կազմակերպվեցին հանդիպումներ և արդյունավետ բանակցություններ իրականացան տարբեր երկրների կինոընկերությունների հետ: 2009-2010թթ. ապահովվել է հայրենական արտադրության ֆիլմերի մասնակցությունը միջազգային շուրջ 50 կինոփառատոններին՝ 2007-2008թթ. 40 փառատոնների համեմատությամբ: Միջազգային կինոփառատոններում առավել թվով մրցանակներ ստացած ֆիլմերի շարքում են «Սահման» և «Խճճված զուգահեռներ» ֆիլմերը:

Կինոարվեստի ոլորտին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 706.6 և 699.4 մլն դրամ, իսկ 2011թ. նախատեսվում է հատկացնել 718.4 մլն դրամ:

Կերպարվեստի ոլորտում վերջին երկու տարիներին աջակցություն է ցուցաբերվել փառատոնային ծրագրերի և ցուցահանդեսների կազմակերպմանը՝ Գյումրու միջազգային բիենալե, հոբեյա-նական և այլ բնույթի տասնյակ ցուցահանդեսներ (2009թ.՝ 10, 2010թ.՝ 12): Ապահովվել է կերպարվեստի գործիչների մասնակցությունը միջազգային բիենալեներին (Հայ կերպարվեստի ներկայացուցիչ Վենետիկի բիենալեում), որն անշուշտ նպաստել է արտերկրում հայկական կերպարվեստի հանրահռչակմանը, ոլորտի զարգացմանը ու ժամանակակից մշակութային արտադրանքի ձևավորմանը: Աջակցություն է ցուցաբերվել երիտասարդական 8 ծրագրերի՝ Իտալիայի Բողիո Լոմնագո, Ֆլորենցիա քաղաքներում, Մոսկվայում, Փարիզում, Վիենայում, Երևանում: Կերպարվեստի բնագավառում պետական մշակութային քաղաքականության լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են կերպարվեստի գործիչների ստեղծագործական գործունեության զարգացմանը խթանող նոր միջոցառումներ:

Կերպարվեստի ոլորտին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 6.6 և 10.5 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 17.5 մլն դրամ:

Պարարվեստի ոլորտում 2009-2010թթ. պետական աջակցությունը հիմնականում նպատակաուղղվել է 3 պետական համույթների 10 ստեղծագործական ծրագրերի իրականացմանը, 9 պարային բեմադրությունների վերականգնմանը: Դրամաշնորհների հատկացման միջոցով 3 ազգագրական համույթներ՝ «Կարին», «Մարաթուկ» և Վարդենիսի քաղաքային մշակույթի պալատում գործող պարային համույթը իրականացրել են ազգագրական, ժողովրդական պարերի նոր բեմադրություններ և ձայնագրություններ, ձեռք են բերել նոր ազգագրական տարազներ և անցկացրել պարերի ուսուցման դասընթացներ:

Պարի միջազգային փառատոններին մասնակցության համար պետական աջակցություն է ցուցաբերվել «Բերդ» և «Գեղարդ» պարային անսամբլներին՝ Իտալիայում և Ֆրանսիայում պարի փառատոններին նրանց մասնակցությունն ապահովելու համար, ինչպես նաև ՌԴ-ում կայացած Յու. Գրիգորովիչի անվան «Աշխարհի երիտասարդ բալետ» 3-րդ միջազգային մրցույթին մենապարողների մասնակցության ապահովման համար:

2011թ. արդեն իսկ աջակցություն է ցուցաբերվել «Պոլովեցյան պարեր» խորեոգրաֆիկ պատկերի բեմադրությանը, ազգագրական երգի-պարի թատերականացված «Հայրենյաց ակունք» խորագրով համերգի իրականացմանը: Պարի միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցության համար պետական աջակցություն է ցուցաբերվել Իսպանիայում կայացած ժողովրդական պարի 14-րդ միջազգային մրցույթ-փառատոնին «Կարին» ազգագրական երգի-պարի համույթի մասնակցության ապահովմանը:

Պարարվեստի ոլորտին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 150.8 և 138.1 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 162.4 մլն դրամ:

Հոբելյանական ծրագրերի և միջոցառումների շրջանակներում 2009-2010թթ. նշվել է մշակույթի, կրթության, քաղաքական-հասարակական գործիչների և իրադարձությունների 7 տասնյակից ավելի հոբելյան, որոնցից 40-ի վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել են պետական հոբելյանական հանձնաժողովներ, մշակվել և ամբողջ տարվա ընթացքում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ գիտաժողովներ, գրքերի, ավլումների հրատարակում, ծայնա և տեսասկավառակների թողարկում, ասմունքի, երաժշտական և թատերական փառատոներ (թվով 10), ցուցահանդեսներ, բաց դասեր հանրակրթական դպրոցներում, նամականիշերի և փոստային բացիկների թողարկում, 14 հոբելյանական հանդիսություն, հոբելյարների կյանքի և ստեղծագործական գործունեության լուսաբանում լրատվամիջոցներով՝ 12 և այլն: Հոբելյանների առիթներով բեմադրվել է շուրջ 16 ներկայացում, իրականացվել է 30 համերգային ծրագիր, տպագրվել է 53 անուն գիրք և ավլում (միայն 2010թ.՝ 31 անուն գիրք և ավլում, որը 2009թ. համեմատ ավելի է 9-ով), 1 էլեկտրոնային գիրք (մուլտիմեդիա լազերային սկավառակ) և 19 լազերային ծայնասկավառակ, որոնք ներառված են թատերահամերգային կազմակերպությունների երկացանկերում և խաղացանկերում: 2009-2010թթ. նշված հոբելյանների կապակցությամբ ստեղծվել է 2 կայք-էջ, ինչպես նաև նկարահանվել է 10 վավերագրական ֆիլմ և 9 DVD սկավառակ, կազմակերպվել շուրջ 12 ցուցահանդես:

2009թ. սկսված հայ մշակույթի և արվեստի գործիչների հոբելյանների կապակցությամբ Հանրային ռադիոյում պահպանվող նրանց ստեղծագործությունների ծայնագրությունների ծայնասկավառակների թողարկման ծրագիրը շարունակվեց 2010թ., որի արդյունքում ընդհանուր առմամբ թողարկվեց 25 ծայնագրությունների ծայնասկավառակ (2009թ. թողարկվեց 15 ծայնասկավառակ, իսկ 2010թ.՝ 10): 2011թ. ևս նախատեսված է ծրագրի շրջանակներում թողարկել 12 հոբելյանական ծայնասկավառակ:

Հոբելյանական միջոցառումներին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 75.3 և 74.5 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 54.1 մլն դրամ:

Մշակույթի համաչափ զարգացում

ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման իրականացման հիմք են հանդիսանում ՀՀ Կառավարության «ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» 2007 թ. ապրիլի 5-ի N 589-Ն, «ՀՀ Կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2008 թ. հուլիսի 24-ի 878-Ն որոշումները, ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը:

Մշակույթի ոլորտում ազգային անվտանգության ռազմավարության հիմնական նպատակներից է մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովումը, որը նախատեսում է.

- հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի մշակում և ներդրում.
- միջմարզային մշակութային փոխադարձ ճանաչողության ապահովման ծրագրերի իրականացում.
- մշակութային խոշոր միջոցառումների ապակենտրոնացման (դեպի մարզեր) քաղաքականության շարունակականության ապահովում:

«Վարձերում մշակույթի համաչափ զարգացման, մշակութային կյանքի աշխուժացման, միջմարզային մշակութային համագործակցության խթանման, մշակույթի (դեպի մարզերը) ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովման ուղղությամբ 2009-2010թթ. իրականացվել է «Մշակութային մարզ» ծրագիրը, որն իրականացվում է 2007 թվականից: Ծրագրի շրջանակներում մարզերում կազմակերպվել են թատերական և համերգային կազմակերպությունների հյուրախաղեր, հայկական արտադրության ֆիլմերի ցուցադրություններ, ինչպես նաև մարզերում գործող ստեղծագործական խմբերի ելույթներ Երևանում (2009թ.՝ 40-ից ավել միջոցառումներ, 2010թ.՝ 80 միջոցառում, իսկ 2011թ. նախատեսվում է 58 միջոցառում):

Գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման մատչելիությունը կույր և թույլ տեսնող անձանց համար ապահովվել է «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի միջոցով: Ծրագիրը տեղակայվել է «Վ մշակույթի նախարարության համակարգի 11 գրադարաններում:

Սահմանամերձ և հեռավոր մարզերի բնակավայրերում գրադարանային ծառայությունների մատչելիության ապահովման և «Վ համայնքային գրադարանների հավաքածուները համալրելու նպատակով Հայաստանի ազգային գրադարանի «Շարժական գրադարանի» (բիբլիոբուս) միջոցով 2010թ. «Վ Լոռու, Արագածոտնի, Արմավիրի մարզերում Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուից նվիրատվության կարգով տրամադրվել է ավելի քան 2509, իսկ ԼՂՀ-ի 6 գրադարաններին՝ 210 միավոր գրականություն: 2011թ. նախատեսվում է ուղևորվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, «Վ Կոտայքի, Վայոց ձորի, Արարատի մարզերի և տարածաշրջանների համայնքային գրադարաններ:

Սակավ շարժունակ դարձած անձանց գրադարանային սպասարկման նպատակով Լոռու և Շիրակի մարզերում սկսել է իրականացվել «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը, որի արդյունքում 2009թ. տրամադրվել է 1365 միավոր տեղեկատվություն, 2010թ.՝ 5115 միավոր տեղեկատվություն: Ծրագրի իրականացումը կրում է շարունակական բնույթ:

Հանրապետության հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի բնակչությանը թանգարանային հավաքածուների մատչելիությունն ապահովելու նպատակով իրականացվում է «Թանգարան

անիվների վրա» ծրագիրը, որի շրջանակներում 2009-2010թթ. հանրապետության 25 բնակավայրերում կազմակերպվել է 20 թանգարանային ցուցահանդես:

Իր գործունեությունն է շարունակել «Դպրոցականի ֆիլիարմոնիան», որի կողմից կազմակերպվել է 156 դաս-համերգ, դրանցից 60-ը՝ մարզերում:

2009-2010թթ. հաջողությամբ իրականացվել է «Հեքիաթին հյուր» գյուղական մանկական բնակչության համար ծրագիրը ՀՀ Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Ծրագրի շրջանակներում 2009թ. սպասարկվել են ՀՀ Լոռու մարզի 7 համայնքների 2200 երեխաներ, 2010թ.՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի 15 համայնքների 4000 երեխաներ, ներգրավելով մանկատների ու հատուկ դպրոցների սաներին: 2011թ. ծրագրի իրականացումը նախատեսված է ՀՀ Շիրակի մարզում:

Ամառային հանգիստը բազմաբովանդակ կազմակերպելու նպատակով ՀՀ 10 մարզերի, Երևանի, Արցախի և Զավախքի շնորհալի երեխաների համար իրականացվում է «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարը, և տարեցտարի ավելանում է շնորհալի երեխաների մասնակցության թիվը (2009-2010թթ.՝ 70 երեխա):

«Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթին մասնակցել են Հայաստանի բոլոր մարզերի, Արցախի և Զավախքի հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցների շուրջ 120 մանկապատանեկան երգչախմբեր:

Կարևորելով ՀՀ մարզերում միջազգային մրցույթ-փառատոների անցկացումը՝ 2010թ. կազմակերպվեց «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին: Մրցույթ-փառատոնին մասնակցեցին 1100 երաժիշտ-կատարողներ 14 երկրներից: Մարզային փառատոների շարքում իր ուրույն տեղն ունի «Նռան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնը, որն այս տարի անցկացվում էր 10-րդ անգամ և կարևոր է նոր, երիտասարդ ստեղծագործական ուժերի բացահայտման համար: Այս անգամ փառատոնին մասնակցել է 31 թատերախումբ (34 ներկայացում), որից 11-ը՝ ՀՀ մարզերից, 16-ը՝ Երևանից, 1-ը՝ Իրանի Թեհրան քաղաքից, 2-ը՝ ԼՂՀ-ից, 1-ը՝ Վրաստանի Ախալքալաք քաղաքից:

2009-2010թթ. մշակութային տների, ակումբների, կենտրոնների վերանորոգման, դրանց նյութատեխնիկական բազայի մասնակի կամ ամբողջական վերազինման ուղղությամբ վերանորոգվել է 22 մշակույթի տուն, որոնց առաջնային խնդիրներից է՝ նյութատեխնիկական բազայի համալրումը, գործիքների և սարքավորումների ձեռքբերումը:

ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման նպատակով պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 79.2 և 82.6 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 112.9 մլն դրամ:

Միջազգային մշակութային համագործակցություն

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, արտերկրում մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործմանը:

2009-2010թթ. ընթացքում ստորագրվել է 6 միջկառավարական և 7 միջգերատեսչական համաձայնագիր և ծրագիր: Գործող և ստորագրված միջազգային պայմանագրերի շրջանակներում Հայաստանում և արտերկրում իրականացվել է 55 ծրագրային միջոցառում:

Հատուկ ուշադրություն է դարձվել նեղլուրտային (կինո, գրահրատարակչություն, հուշարձանների պահպանություն), ինչպես նաև ընդհանրական (հումանիտար դաշտ) փաստաթղթերի ստորագրմանն ու վավերացմանը: Այսպես՝ 2009-2010 թթ. ընթացքում ապահովվել է «ԱՊՀ մասնակից պետությունների համատեղ ֆիլմարտադրության մասին» համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրելու, ապա նաև հաստատելու գործընթացը:

Շարունակվել են աշխատանքները միջազգային կառույցներին և կազմակերպություններին ինտեգրվելու ուղղությամբ: Ակտիվ համագործակցություն է ծավալվել Եվրամիության, Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԱՊՀ և ՀՀՄՀ-ի, ՄԾՏՀ կազմակերպության հետ, նախադրյալներ են ստեղծվել ոլորտի մասնագիտական և հասարակական կառույցների, այդ թվում ԻԿՌՕՄ-ի հետ համագործակցությունը ակտիվացնելու ուղղությամբ:

Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում առանցքային է Հայաստանը տարածաշրջանային մշակութային կենտրոնի վերածելու խնդիրը: Այս ուղղությամբ արդեն իսկ որոշակի քայլեր են ձեռնարկվել: Մասնավորապես.

- 2009թ. «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի կինոդպրոցը վերածվեց տարածաշրջանային կենտրոնի (դպրոցում աշխարհահռչակ կինոգործիչների դասավանդմամբ վարպետության դասընթացներ են անցնում Թուրքիայից, Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից):

- Հայաստան-Եվրամիություն մշակութային համագործակցության շրջանակներում 2009թ. մեկնարկեց «Արևելյան գործընկերության» ծրագիրը, որի գործնական կիրառումը առավել կընդլայնվի 2011-2013թթ. ընթացքում: Ծրագրի բաղկացուցիչ մասն է կազմում «Մարդկանց միջև շփումներ» պլատֆորմը, որի շրջանակներում Հայաստանը ծրագրում է իրականացնել երկու նախագիծ. «Մշակութային բազմազանությունը որպես ազգային հարստություն և համաեվրոպական ժառանգություն» պանելային քննարկումը և «Գրական տապան. 10 տարի անց» Հայաստան-Եվրամիություն գրական նախագիծը:

Շարունակվում է համագործակցությունը Եվրախորհրդի հետ, որը հիմնված է «Սպիտակ գիրք» և «Կիկյան նախաձեռնություն» ծրագրերի վրա:

Մշտական մասնակցություն է ապահովվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում իրականացվող միջոցառումներին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպվող ամենամյա միջազգային սեմինարներին ու գիտաժողովներին: Մասնավորապես՝ 2009-2010թթ. մասնակցություն է ապահովվել դուդուկին նվիրված «Ոչ նյութական մշակութային ժառանգության հաշվառման» թեմայով Կենտրոնական Ասիայի և ԱՊՀ ենթատարածաշրջանային դասընթացներին (Բիշկեկ), ԱՊՀ երկրների թանգարանային ոլորտի մասնագետների վերապատրաստման դասընթացներին և այլն:

2009թ. նախարարությունը նախաձեռնել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակներում հայկական ավանդական մշակույթի տարրերի ներկայացման գործընթացը: Արդյունքում՝ 2010թ. նոյեմբերին Նայրոբիում «Հայկական խաչքարի արվեստը և խաչքարագործությունը» ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակներում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում արդեն երրորդ տարին է ինչ իրականացվում են համաֆինանսավորվող ծրագրեր. եթե 2008թ. անցկացվել է միայն Վ.Սարոյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովը, ապա 2009թ. իրականացվել է 3-ը՝ «Դուդուկի երաժշտության կայքի բացում», «Թանգարանային ոլորտի մասնագետների սեմինար-վերապատրաստում», «Մշակութային քաղաքականություն. քաղաքականություն մշակույթի համար. մշակութային քաղաքականության նոր ուղիները» ԱՊՀ երկրների տարածաշրջանային կոնֆերանսը՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ: 2010թ. իրականացվել են ևս 3 ծրագիր («Գեղարվեստական կրթությունը Հայաստանում. Ստեղծագործական ներուժի զարգացման հեռանկարները 21-րդ դարում» նախագիծը, «Թատերական գործիչների համաշխարհային համաժողովը», ՀՀՄՀ ծրագրային միջոցառումների շրջանակներում իրականացվող «ԱՊՀ երկրների գրողների, թարգմանիչների և գրահրատարակիչների» հայաստանյան ամենամյա համաժողովը):

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը ԱՊՀ կառույցների հետ: ԱՊՀ երկրների հետ հումանիտար համագործակցության շրջանակներում առանձնանում են *ԱՊՀ երկրների սպեղծագործական և գիտական մրավորականության համաժողովները և ԱՊՀ երկրների կողմից կազմակերպվող Դելփյան խաղերը*: 2010թ. ԱՊՀ երկրների երիտասարդական Դելփյան խաղերը անցկացվեցին Հայաստանում՝ բաց ձևաչափով, ինչը հնարավորություն ընձեռեց, որպեսզի խաղերին մասնակցեն նաև բալթյան երկրները, Վրաստանը, ինչպես նաև Բուլղարիայի, Ֆրանսիայի ներկայացուցիչները: Մասնակիցների ընդհանուր թիվը կազմեց շուրջ 650 մարդ: ՀՀՄՀ շրջանակներում Հայաստանի մասնակցությամբ և նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերի թիվը տարեց տարի ավելանում է: Եթե 2009թ. ՀՀՄՀ-ի հետ իրականացվել է 19 ծրագիր, ապա 2010թ.՝ 39, որից 9-ը՝ Հայաստանում:

2009թ. Հայաստանը, իբրև Ֆրանկոֆոնիայի կազմակերպության ասոցիացված անդամ, առաջին անգամ մասնակցեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ

Լիբանանում կազմակերպված Ֆրանկոֆոնիայի 6-րդ միջազգային մշակութային խաղերին: Միաժամանակ, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ համատեղ Հայաստանում ամեն տարի կազմակերպվում են միջոցառումներ, որոնք անցկացվում են «Ֆրանկոֆոնիայի օրեր» խորագրի ներքո:

Շարունակվել է համագործակցությունը ICROM-ի, ICOM-ի, Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի, APBDA պատկերապատումի միջազգային կազմակերպության և Բրիտանական խորհրդի հետ: Վերջինս իրականացնում է ոլորտի մասնագետների վերապատրաստմանն ուղղված դասընթացներ, կոնֆերանսներ, հանդիպումներ:

Վերջին երկու տարիներին Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող միջազգային ակցիաներին: Մասնավորապես մեծ հաջողությամբ իրականացվում են «Երաժշտության տոնը», «Թանգարանային գիշերը», «Գրքի և հեղինակային իրավունքի օրը», «Եվրոպական ժառանգության օրերը»:

2009-2010թթ. միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ իրականացվել է 30 համաֆինանսավորվող և համատեղ ծրագրեր, որոնք ունենք շարունակական բնույթ և զարգացման միտում:

Երկկողմ համագործակցությունը խթանելու նպատակով ստորագրված միջազգային պայմանագրերի շրջանակներում Հայաստանում և արտերկրում 2009թ. իրականացվել է 30, իսկ 2010թ.՝ 40 ծրագրային միջոցառում, կազմակերպվել են թվով 12 փոխադարձ մշակույթի տարիներ, սեզոններ, օրեր՝ 2009թ. 10-ի փոխարեն: Կայացել է ծրագրով նախատեսված պաշտոնական պատվիրակությունների 25 փոխայցելություն՝ 2009թ. 15-ի փոխարեն: Միջազգային մշակութային համագործակցությունը խթանելու նպատակով կազմակերպվել են ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ շուրջ 60 հանդիպում՝ 2009թ. 50-ի փոխարեն: Միջազգային մշակութային համագործակցության նշանակալի իրադարձություններից էին Հայ մշակույթի օրեր Եգիպտոսում, Սիրիայում և Սերբիայում, Հայ-իտալական մշակութային, «Շոպեն 200» հայ-լեհական ծրագրերը, հայ-ավստրիական համատեղ երաժշտական նախագիծը:

Նախարարությունը շարունակել է աջակցություն ցուցաբերել հայ արվեստագետների մասնակցությանը միջազգային մրցույթներին, ցուցահանդեսներին, տոնավաճառներին, փառատոներին: 2010թ. մասնակցություն է ապահովվել 20 երկրում կայացած 58 միջազգային մրցույթների, ցուցահանդեսների, տոնավաճառների, փառատոների:

Սկիյուքահայ արվեստագետներին հայաստանյան մշակութային դաշտ ներգրավելու նպատակով 2009թ. ընթացքում պետական պատվերի շրջանակում կայացավ բելգիահայ դրամատուրգ Կ.Սաֆարյանի «Առանց վերադարձի հնարավորության» պիեսի բեմադրությունը, նախապատրաստվեց «Արդի հայ քնարերգությունը» երկհատորյակը, արտերկրի հայազգի կինոգործիչների հետ համատեղ մշակվեցին մեկական խաղարկային և մեկ վավերագրական ֆիլմերի նախագծեր:

Սփյուռքահայ համայնքներում գործող մշակութային կենտրոններին մշտապես տրամադրվել է հայ մշակույթը ներկայացնող հայալեզու և ռուսալեզու գրականություն, ֆիլմեր, ալբոմներ, դիդակտիկ նյութեր: 2010թ. տրամադրվել է 2000 միավոր՝ 2009թ. 500-ի համեմատ: Այս գործընթացը շարունակական է:

Միջազգային մշակութային համագործակցության ապահովման նպատակով պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար՝ 214.3 և 158.3 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 153.0 մլն դրամ:

Ազգային փոքրամասնությունների ինքնության պաշտպանություն

Վերջին տարիներին պետական ծրագրերում կարևոր տեղ են զբաղեցնում ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանումն ու զարգացումը: Այդ նպատակով կազմակերպվում են նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոներ: Մասնավորապես՝ 2009-2010թթ. կազմակերպված «Հայաստանն իմ տունն է» խորագրով երթը և երաժշտական փառատոնի մասին նկարահանված տեսաֆիլմի անգլերեն թարգմանությունը, «Ատրիները Հայաստանում» ֆիլմի նկարահանումը, Հայոց ցեղասպանությանը և Հրեական հոլոքոստին նվիրված միջոցառումը: Մեծ հանդիսավորությամբ նշվեց ՀՀ ազգային փոքրամասնությունների մշակութային միությունների գործունեությունը համակարգող խորհրդի 10-ամյակին նվիրված հոբելյանը: 2009-2010թթ. աջակցություն է ցուցաբերվել ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների՝ 12-ական անուն թերթերի և ամսագրերի հրատարակմանը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվել է 2-ական անուն գիրք:

Ոլորտին պետական բյուջեից 2009-2010թթ. հատկացվել է համապատասխանաբար 15.0 և 16.0 մլն դրամ, 2011թ. նախատեսվում է հատկացնել 17.0 մլն դրամ:

10.1.1.2. Հիմնական խնդիրները

Մշակութային ժառանգության պահպանություն

Թանգարաններ.

- Դեռևս լիարժեք լուծված չէ թանգարանային ցուցադրական տարածքների հարցը.
- Կարևոր խնդիր է թանգարանների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը՝ շենքերի հիմնանորոգումն ու վերանորոգումը, անվտանգության, ջերմախոնավային համակարգերի ձեռքբերումը և տեղակայումը, ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինումը.
- Թանգարանները դեռևս ապահովված չեն թանգարանային գործունեության արդի պահանջներին համահունչ մասնագիտական գիտելիքներ ունեցող կադրերով.

- Շարունակվում է հրատապ մնալ վերականգնման և ամրակայման միջոցով թանգարաններում պահվող մշակութային ժառանգության պահպանության հարցը:

Գրադարաններ.

- Անհետաձգելի է հանրության գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման մատչելիության ապահովումը, Հայաստանի ողջ տարածքում հասարակության բոլոր խավերի ընդգրկումը.
- Դեռևս կարևորվում է գրադարանային հավաքածուների պահպանումը և օգտագործումը, դրանց վերականգնումը, նպատակային համալրումը, հնատիպ գրքերի, հին մամուլի և եզակի գրքանմուշների թվայնացումը.
- Շարունակվում է կարևորվել գրադարանային ծառայությունների որակի բարձրացման հարցը՝ ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխան.
- Կարևոր խնդիր է գրադարանների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը՝ շենքերի հիմնանորոգումն ու վերանորոգումը, անվտանգության, ջերմախոնավային համակարգերի ձեռքբերումը և տեղակայումը, ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինումը.
- Դեռևս խնդիր է գրադարանների հավաքածուների մատչելիության ապահովումը՝ հավաքածուների թվայնացված տարբերակի ստեղծումը, սպասարկվող միավորների ծավալների ավելացումը:

Արխիվային գործ.

- Վերջին տարին հանրապետությունում արխիվային գործի ոլորտում ձեռքբերած ակնառու հաջողությունների, արխիվային հավաքածուների պահպանման, համալրման, հաշվառման աշխատանքներում առկա զարգացման միտումներին զուգընթաց դեռևս շարունակում է հրատապ մնալ արխիվային փաստաթղթերի թվայնացման խնդիրը, որի իրականացման արդյունքում էլ ավելի կբարձրանա արխիվային փաստաթղթերի մատչելիությունը և կլուծվի ապահովագրական պատճենների պատրաստման հիմնահարցը:
- Արդիական է նաև արխիվի համակարգչային սարքավորումների նորացման խնդիրը:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ.

- Դեռևս խնդիր է պատմամշակութային հուշարձանների պահպանության ապահովումը.
- Շարունակում է հրատապ մնալ պատմամշակութային հուշարձանների վերականգնման հարցը.
- Հրատապ է պատմամշակութային հուշարձանների օգտագործման ու հանրահռչակման խնդիրը, որի լուծման հնարավոր եղանակները ներկայացված են առանձին հուշարձանների

թանգարանացմանը նվիրված, պատմամշակութային ժառանգության հենքի վրա կազմված գիտակրթական, զբոսաշրջային ծրագրերում.

- Դեռևս ապահովված չէ Հայ Առաքելական եկեղեցու հետ համագործակցության ընդլայնումը:

Ոչ նյութական մշակութային ժառանգություն.

- Շարունակում է հրատապ մնալ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության և օգտագործման գործընթացների ապահովման խնդիրը.
- Արդիական է ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակման խնդիրը, միջազգային փոխանակումների ապահովումը:

Ժամանակակից արվեստի զարգացում.

- Դեռևս լուծված չեն մշակութային կազմակերպությունների՝ թատրոնների, համերգասրահների բնականոն գործունեության պատշաճ ապահովման խնդիրները. շենքերի և շինությունների հիմնավերանորոգումը, սեփական տարածքներ չունեցող և անբավարար պայմաններում գործող թատերահամերգային կազմակերպություններին անհրաժեշտ տարածքների տրամադրումը, արդիական նյութատեխնիկական միջոցների համալրումը,

- Բարելավման կարիք ունի մատուցվող ծառայությունների որակի ապահովումը՝ պետական պատվերների և ստեղծագործությունների գնման համակարգի կատարելագործումը, խաղացանկի համալրումը նոր ստեղծագործություններով, փառատոների ու մրցույթների կազմակերպումը նոր որակական չափանիշներով, երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտումը, ստեղծագործական խմբերի գործունեությունը խթանող դրամաշնորհային ծրագրերի իրականացումը,

- Շարունակում է հրատապ մնալ ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավումը, արվեստի կայուն զարգացման ապահովումը.

- Դեռևս կարևոր խնդիր է դեբյուտային ծրագրերի իրականացմամբ փառատոների ու մրցույթների իրականացման, հյուրախաղային գործունեության ապահովումը.

ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացում.

- Դեռևս առկա են ՀՀ մարզերում և համայնքներում մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովման և մշակութային կյանքի աշխուժացման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման հարցեր.

- Անբավարար է ՀՀ մարզերում բնակչության գեղագիտական զարգացումն ու հանգստի կազմակերպումը, ինչը կապված է մշակույթի տների և կենտրոնների ոչ լիարժեք կենսագոր-

ծունեությամբ, ժողովրդական վարպետներին տրամադրվող պետական աջակցության չափով և ՀՀ մարզերում ու համայնքներում արհեստագործական կենտրոնների սակավությամբ:

Ազգային փոքրամասնությունների հետ համագործակցություն.

Դեռևս վերջնական լուծված չէ Հայաստանի մշակութային կյանքում ոչ հայազգի բնակչության լիարժեք ինտեգրման խնդիրը:

10.1.2. ՈԼՈՐՏԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻ) ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.1.2.1. Նպատակները

**** Մշակութային ժառանգության պահպանություն***

Ակնկալվող արդյունքը՝ մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանումը, հանրության համար դրանց մատչելիության ապահովումը, մշակութային զբոսաշրջության խթանումը և դրան հետևող տնտեսական զարգացումը:

**** Ժամանակակից արվեստի զարգացում***

Ակնկալվող արդյունքը՝ երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտումը, դրա զարգացման համար պայմանների ստեղծումը և ներգրավումը ժամանակակից ստեղծագործական գործընթացներում, խաղացանկերի և երկացանկերի ժանրային ու ոճական բազմազանության և որակի ապահովումը, մշակութային արտադրանքի մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում:

**** Մշակույթի համաչափ զարգացում***

Ակնկալվող արդյունքը՝ մշակութային ենթակառուցվածքների համաչափ բաշխվածության, մարզերում գործող մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության, Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացման գործընթացի ձեռնարկումը և միասնական մշակութային քաղաքականության իրականացման ապահովումը, մշակութային արժեքներից, մշակութային-կրթական և տեղեկատվական ծառայություններից օգտվելու, մշակութային գործունեություն իրականացնելու մատչելիության ապահովումը:

**** Միջազգային համագործակցության զարգացում***

Ակնկալվող արդյունքը՝ արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնումը և խորացումը, հայ մշակույթի հանրահռչակումը, միջազգային կազ-

մակերպություններին, այդ թվում՝ Եվրամիությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից մասնագիտական կառույցներին անդամակցումը և ակտիվ մասնակցությունը, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների մասնակցության աճի ապահովումը, հայաստանյան հասարակությանը աշխարհի ժողովուրդների մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովումը:

10.1.2.2. Գերակայությունները

Մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակա ուղղություններն են.

- Հայկական ծագում ունեցող մշակութային ժառանգության (նյութական, ոչ նյութական) միավորների հաշվառում և վերահաշվառում, ընդհանուր տեղեկատվական շտեմարանի ձևավորում, դրա մատչելիության ապահովում և հանրայնացում: Հիմք՝ ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագիր՝ 4.4.4. «Մշակույթ» բաժին:
- Առավել վտանգված մշակութային ժառանգության միավորների վիճակի ուսումնասիրությանը, պահպանությանն ուղղված ծրագրերի կազմում: Հիմք՝ ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագիր՝ 4.4.4. «Մշակույթ բաժին», ՀՀ Կառավարության 2008թ. հոկտեմբերի 10-ի «Կայուն զարգացման ծրագիր» N 1207-Ն որոշում:
- Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում՝ միջին ամսական աշխատավարձի բարձրացման պայմանների ապահովմամբ: Հիմք՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիր» N 1207-Ն որոշում:
- Մշակույթի բոլոր ոլորտներում կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման, վերաորակավորման նպատակային ծրագրերի իրականացում: Հիմք՝ ՀՀ Կառավարության 2010թ. հունվարի 14-ի «Մշակույթի բոլոր ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման, վերաորակավորման համալիր ծրագիրը հաստատելու մասին» N73-Ն որոշում:
- Մարզերում մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում: Հիմք՝ ՀՀ Կառավարության 2007թ. ապրիլի 5-ի «ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 589-Ն որոշում:
- Ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծում: Հիմք՝ ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագիր՝ 4.4.4. «Մշակույթ» բաժին:
- Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանություն: Հիմք՝ ՀՀ Կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագիր՝ 4.4.4. «Մշակույթ» բաժին:

10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2012-2014թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ՝ կտատանվի 0.23-0.20% սահմաններում:

2012-2014թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտին (ներառյալ կապիտալ շինարարության ծախսերը) նախատեսվում է ուղղել՝ 2012թ.՝ 9744.2 մլն դրամ, 2013թ.՝ 10105.1 մլն դրամ և 2014թ.՝ 10256.8 մլն դրամ (2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թ. նախատեսվել էր 10220.0 մլն դրամ, 2013թ.՝ 10611.5 մլն դրամ):

Ծախսերը 2012թ. նվազել են 10.1%-ով՝ 2011 թվականի նկատմամբ, 2013թ. աճել են 3.70 %-ով՝ 2012 թվականի նկատմամբ, 2014թ. աճել են 1.50 %-ով՝ 2013 թվականի նկատմամբ:

Մշակույթի ոլորտի 2010-2014 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների ներկայացված են 10.1. աղյուսակում:

Աղյուսակ 10.1. Մշակույթի ոլորտի պետական ծախսերը 2010-2014թթ.՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս	Խմբերի անվանումները	Փաստացի	Հաստատված բյուջե	2012-2014թթ. ՄԺԾԾ		
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
08	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը, այդ թվում	9 533.0	10 834.2	9 744.2	10 105.1	10 256.8
08.02.01.	Գրադարաններ	1 036.1	1 166.1	1 157.0	1 248.8	1 248.8
08.02.02.	Թանգարաններ և ցուցասրահներ	1 469.1	1 644.7	1 679.4	1 799.4	1 799.4
08.02.03.	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	29.3	34.5	34.5	37.0	37.0
08.02.04.	Այլ մշակութային հիմնարկներ	624.9	742.1	640.4	679.6	683.7
08.02.05.	Արվեստ	4 066.5	4 902.1	4 467.6	4 556.8	4 699.4
08.02.06.	Կինեմատոգրաֆիա	612.8	630.4	630.4	644.0	644.0
08.02.07.	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	132.9	140.3	140.3	144.9	144.9
08.04.02.	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	179.6	179.6	179.6	179.6	179.6
	Հուշարձանների վերանորոգում և վերականգնում	206.2	215.0	215.0	215.0	215.0
	Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիր	1 175.5	1 179.4	600.0	600.0	605.0


2012-2014թթ. մշակույթի ոլորտի բյուջետային հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է. 2013թ. աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 10 %-ով, 2014թ. նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամ սահմանմամբ:

Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագիրը, ինչպես նաև հուշարձանների վերականգնման ծախսերը նախատեսվել են, նկատի ունենալով մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարական շարունակական բնույթի ապահովումը և համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերով ապահովվածությունը:

Հիմնանորոգման և շինարարության ընթացքում է գտնվում թվով 14 մշակութային օբյեկտներ, որոնց աշխատանքների նախահաշվային արժեքների ընդամենը մնացորդը 2011 թվականի տարեվերջի դրությամբ կկազմի շուրջ 1.8 մլրդ դրամ: Միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվում է ավարտին հասցնել նշված 14 օբյեկտների գծով աշխատանքները՝ ուրաքանչյուր տարվա համար նախատեսելով 600.0 մլն դրամ:

Ըստ ուղղությունների 2012թ. ծախսերի տեսակարար կշիռը մշակույթի ոլորտին ուղղված հատկացումներում կունենա հետևյալ պատկերը:

Գծանկար 10.1. 2012 թվականի մշակույթի ոլորտում ծախսերի կառուցվածքը՝ ըստ ենթախմբերի (%)



10.1.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Մշակույթի ոլորտում, պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ, ծախսերի իրականացմանն են ուղղվում նաև սեփական եկամուտները:

Սեփական եկամուտները գոյանում են հիմնականում վճարովի ծառայությունների մատուցումից, տոմսերի վաճառքից, դահլիճների և տարածքների վարձավճարից, կինոնկարների իրացումից, ինչպես նաև ստացվող նվիրատվություններից:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն ուղղվում են աշխատավարձի լրավճարներին, ապրանքների ձեռքբերմանը, գրքային և թանգարանային հավաքածուների համալրմանը:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են 2010թ.՝ 896.9 մլն դրամ, 2011թ.՝ 1096.6 մլն դրամ, 2012թ.՝ 1118.2 մլն դրամ, 2013թ.՝ 1140.6 մլն դրամ, 2014թ.՝ 1159.8 մլն դրամ :

Ստացվող նվիրատվություններից եկամուտները կազմում են 2010թ.՝ 23.6 մլն դրամ, 2011-2014թթ.՝ յուրաքանչյուր տարի՝ 2.4 մլն դրամ :

Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը ներկայացված են 10.2.աղյուսակում :

Աղյուսակ 10.2. ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը 2010-2014թթ.՝ ըստ առանձին կազմակերպությունների (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս	Պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.	
		վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	
		փաստացի		ծրագիր		կանխատեսում					
	ԸՆԴԱՄԵՆԸ	5492.6	920.5	6252.9	1099.0	6265.7	1120.6	6740.4	1143.0	6745.8	1162.2
	այդ թվում՝										
08	1.Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից, որից	5492.6	896.9	6252.9	1096.6	6265.7	1118.2	6740.4	1140.6	6745.8	1159.8
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	<i>86.0</i>	<i>14.0</i>	<i>85.1</i>	<i>14.9</i>	<i>84.9</i>	<i>15.1</i>	<i>85.5</i>	<i>14.5</i>	<i>85.3</i>	<i>14.7</i>
08.02.01.	ՀՀ ՄՆ ենթակայության գրադարաններ	731.6	8.8	821.0	22.4	822.8	23.0	888.3	23.7	888.3	24.5
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	<i>98.8</i>	<i>1.2</i>	<i>97.3</i>	<i>2.7</i>	<i>97.3</i>	<i>2.7</i>	<i>97.4</i>	<i>2.6</i>	<i>97.3</i>	<i>2.7</i>
08.02.01.	«Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ	52.7	4.2	58.5	4.2	58.5	4.4	62.9	4.6	62.9	4.8
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	<i>92.6</i>	<i>7.4</i>	<i>93.3</i>	<i>6.7</i>	<i>93.0</i>	<i>7.0</i>	<i>93.2</i>	<i>6.8</i>	<i>92.9</i>	<i>7.1</i>
08.02.02	ՀՀ ՄՆ ենթակայության թանգարաններ	1092.6	115.2	1158.4	219.6	1169.4	230.6	1249.6	242.2	1249.6	254.3
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	<i>90.5</i>	<i>9.5</i>	<i>84.1</i>	<i>15.9</i>	<i>83.5</i>	<i>16.5</i>	<i>83.8</i>	<i>16.2</i>	<i>83.1</i>	<i>16.9</i>
08.02.02	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններ	121.9	26.5	193.7	28.8	193.7	30.9	208.2	32.9	208.2	35.0
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	<i>82.1</i>	<i>17.9</i>	<i>87.1</i>	<i>12.9</i>	<i>86.2</i>	<i>13.8</i>	<i>86.4</i>	<i>13.6</i>	<i>85.6</i>	<i>14.4</i>
08.02.02	«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ	107.8	9.0	120.5	9.0	120.5	9.0	129.6	9.0	129.6	9.0
	<i>տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %</i>	<i>92.3</i>	<i>7.7</i>	<i>93.1</i>	<i>6.9</i>	<i>93.1</i>	<i>6.9</i>	<i>93.5</i>	<i>6.5</i>	<i>93.5</i>	<i>6.5</i>

Բաժին, խումբ, դաս	Պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.	
		վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	
		փաստացի		ծրագիր		կանխատեսում					
		%									
08.02.02	«Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	8.3	1.5	9.3	2.0	9.3	2.0	10.0	2.0	10.0	2.0
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	84.7	15.3	82.2	17.8	82.2	17.8	83.3	16.7	83.3	16.7
08.02.03.	«Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» ՊՈԱԿ	25.4	0.2	28.1	0.1	28.1	0.1	30.1	0.1	30.1	0.1
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	99.3	0.7	99.6	0.4	99.6	0.4	99.7	0.3	99.7	0.3
08.02.04.	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	333.1	111.3	380.9	93.2	380.9	93.2	410.6	93.2	410.6	93.2
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	75.0	25.0	80.3	19.7	80.3	19.7	81.5	18.5	81.5	18.5
08.02.04.	«Երևանի կենդանաբանական այգի» ՊՈԱԿ	188.4	43.3	194.6	50.0	194.6	55.0	199.5	60.0	203.6	62.6
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	81.3	18.7	79.6	20.4	78.0	22.0	76.9	23.1	76.5	23.5
08.02.04.	«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ	29.3	11.5	32.7	15.0	32.7	15.0	35.4	15.0	35.4	15.0
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	71.8	28.2	68.6	31.4	68.6	31.4	70.2	29.8	70.2	29.8
08.02.05.	«Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	560.6	111.2	673.2	135.1	673.2	135.1	723.8	135.1	723.8	135.1
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	83.4	16.6	83.3	16.7	83.3	16.7	84.3	15.7	84.3	15.7
08.02.05.	«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	240.7	40.6	269.6	50.1	269.6	50.1	287.1	50.1	287.1	50.1
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	85.6	14.4	84.3	15.7	84.3	15.7	85.1	14.9	85.1	14.9
08.02.05.	ՀՀ ՄՆ ենթակայության թատրոններ	839.1	221.8	962.4	230.6	962.4	233.1	1038.6	235.8	1038.6	237.1
	Կրթությանը և գիտությանը տրամադրված միջոցների ծախսերում, %	79.1	20.9	80.7	19.3	80.5	19.5	81.5	18.5	81.4	18.6

Բաժին, խումբ, դաս	Պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.											
		փաստացի	վճարովի ծառայությունների հաշվին	ծրագիր	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին	վճարովի ծառայությունների հաշվին										
												կանխատեսում									
												%									
08.02.05.	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններ	205.7	59.8	236.0	60.6	236.0	60.6	257.2	60.7	257.2	60.9										
	Կրթության նախարարության կողմից ընդհանուր ծախսերում, %	77.5	22.5	79.6	20.4	79.6	20.4	80.9	19.1	80.9	19.1										
08.02.05.	Գեղարքունիքի մարզի «Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	33.0	0.7	37.3	1.0	37.3	1.0	40.5	1.3	40.5	1.3										
	Կրթության նախարարության կողմից ընդհանուր ծախսերում, %	98.1	1.9	97.5	2.5	97.4	2.6	96.9	3.1	96.9	3.1										
08.02.05.	Սյունիքի մարզի «Ա.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ			34.7	0.8	34.7	0.8	37.7	0.8	38.9	0.8										
	Կրթության նախարարության կողմից ընդհանուր ծախսերում, %			97.7	2.3	97.7	2.3	97.9	2.1	98.0	2.0										
08.02.05.	ՀՀ ՄԼ ենթակայության հանրապետական կազմակերպություններ	805.1	130.2	910.4	173.1	910.4	173.1	989.0	173.1	989.0	173.1										
	Կրթության նախարարության կողմից ընդհանուր ծախսերում, %	86.1	13.9	84.0	16.0	84.0	16.0	85.1	14.9	85.1	14.9										
08.02.06.	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ	117.4	1.3	131.7	1.0	131.7	1.0	142.7	1.0	142.7	1.0										
	Կրթության նախարարության կողմից ընդհանուր ծախսերում, %	98.9	1.1	99.3	0.7	99.3	0.7	99.3	0.7	99.3	0.7										
	2.Ստացվող նվիրատվություններից, որից	0.0	23.6	0.0	2.4	0.0	2.4	0.0	2.4	0.0	2.4										
08.02.03.	ՀՀ ՄԼ ենթակայության թատրոններ		2.4		2.4		2.4		2.4		2.4										
08.02.05.	ՀՀ ՄԼ ենթակայության թատրոններ		18.3																		
08.02.05.	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններ		2.9																		

10.2. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.2.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտում 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն թվով 28 ծրագրերի իրականացմանը՝ պետական կառավարման 11 մարմինների միջոցով:

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտում պետության միջամտության հիմնական ուղղություններն են.

Հեռուստառադիոհաղորդումներ

Հրատարակչություններ, խմբագրություններ

Հեռուստառադիոհաղորդումների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները հիմնականում ուղղվում են հանրային հեռուստահաղորդումների և հանրային ռադիոհաղորդումների, Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը, ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակմանը, տնտեսական վերլուծությունների ծառայությունների իրականացմանը:

Հանրային հեռուստահաղորդումների պատրաստումն ու հեռարձակումը իրականացնում է Հանրային հեռուստաընկերությունը, հանրային ռադիոհաղորդումների պատրաստումն ու հեռարձակումը՝ Հանրային ռադիոընկերությունը, իսկ Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների պատրաստումն ու հեռարձակումը՝ Շիրակի հանրային հեռուստառադիոն :

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության գործունեության հիմքում դրված են ՀՀ Ասհմանադրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջները, վերջինով պայմանավորված՝ լիազորությունների իրականացումը և սահմանված թեմատիկ ուղղություններով հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստումն ու հեռարձակումը :

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակումն իրականացնում է «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության հայաստանյան մասնաճյուղը:

Համաձայն «հաշվարկային բանալու» սկզբունքի՝ «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժինը կազմում է 1.6 տոկոս:

Տնտեսական վերլուծությունների ծառայությունների շրջանակներում իրականացվում են հետևյալ ծառայությունները՝ ՀՀ կառավարության քաղաքականության և գործունեության լուսաբանում հեռուստահաղորդումների միջոցով և ՋԼՄ-ներում, ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետ կայքէջի սպասարկում և ՀՀ կառավարության քաղաքականությունն արտացոլող տպագիր նյութերի հրատարակում:

Հեռուստառադիոհաղորդումների բնագավառի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի և աշխարհի բնակչությունը (բացառությամբ՝ Լատինական Ամերիկայի և Ավստրալիայի):

Հրատարակչությունների, խմբագրությունների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները հիմնականում ուղղվում են գրականության հրատարակմանը, պետական և ոչ պետական մամուլին աջակցմանը, հրատարակչական, տեղեկատվական, տպագրական ծառայությունների (ՀՀ պաշտոնական տեղեկագրերի, այլ պոլիգրաֆիական արտադրանքի, միջազգային պայմանագրերի հրատարակում և մուտքի վիզաների տպագրում), թարգմանչական ծառայությունների (Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության իրավական ակտերի թարգմանությունների կատարում), Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը նպաստող հրատարակչական ծրագրերի իրականացմանը:

Գրականության հրատարակման համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները տրվում են հետևյալ ուղղություններով՝ գրականության պետական պատվերի և աջակցության իրականացում:

2011 թվականին առավել նպատակային են դարձել 2009-2010 թվականներին իրականացվող ծրագրերը, որոնք, պահպանելով հիմնական ուղղությունները, ձեռք են բերել թեմատիկ և որակական նոր բովանդակություն, ներգրավել ավելի մեծ թվով մասնավոր և հասարակական կազմակերպություններ՝ հաղորդելով նոր ձևաչափեր պետություն-հրատարակչություն-հեղինակ-ընթերցող հարաբերություններին:

Բնագավառի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի բնակչությունը և Սփյուռքը:

10.2.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

Հեռուստառադիոհաղորդումներ

2009-2010 թվականներին Հանրային հեռուստաընկերությունը պատրաստել է հեռուստահաղորդումներ երեք հեռուստաալիքներով՝ «Հ1» առաջին ալիքով՝ օրական 24 ժամ հեռուստահաղորդումներ հանրապետության ողջ տարածքում, «Արարատ» մշակութային հեռուստաալիքով՝ օրական 24 ժամ հեռուստահաղորդումներ հանրապետության տարածքի խոշոր բնակավայրերում (Երևանում, Վանաձորում, Չարենցավանում, Սևանում, Գավառում, Եղեգնաձորում, Ջերմուկում, Ծաղկաձորում և Շիրակի մարզում) և «Հ1» միջազգային ալիքով (արբանյակային հեռարձակմամբ՝

օրական 24 ժամ հաղորդումներ ԱՊՀ տարածքում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում):

Հեռուստալսարանի չափումներ իրականացնող «Եվրոդատա» միջազգային ընկերության տվյալների համաձայն ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում 2009 և 2010 թվականներին համապատասխանաբար կազմել է 18.3 և 20.2 տոկոս:

Նախորդ տարվա համեմատ 2010 թվականին ցուցանիշը որոշակիորեն աճել է և Հանրային հեռուստաընկերությունը հանրապետության ամբողջ տարածքում հեռուստադիտողների մասնաբաժնի ցուցանիշով եղել է առաջատարը, իսկ Հանրայինի բազմաթիվ հաղորդումներ տարվա ընթացքում ունեցել են ամենամեծ հեռուստալսարանը:

Հանրային հեռուստաընկերությունը, 2009-2010 թվականներին պահպանելով բարձր վարկանիշ ունեցող հաղորդումները, եթերը համալրել է նաև մի շարք նոր հաղորդաշարերով, որոնցից շատերը նույնպես տարվա ընթացքում ունեցել են բարձր վարկանիշ և նպաստել են եթերի բազմազանության ապահովմանը:

2009-2010 թվականներին Հանրային հեռուստաընկերությունը, պահպանելով առաջատարի իր դիրքը հայաստանյան հեռուստաշուկայում, պատրաստել է ինը թեմատիկ ուղղություններով հաղորդումներ, որոնց ծավալները ներկայացված են **10.3 աղյուսակում**:

Աղյուսակ 10.3. 2009-2010 թվականներին պատրաստված հեռուստահաղորդումների ծավալները ըստ թեմատիկ ուղղությունների (հաշվի են առնված նաև պրոֆիլակտիկ ժամերի ծավալները)

Հանրային հեռուստաընկերության «Հ1 առաջին» ալիքի հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդումների պատրաստման ծավալները (ժամ)	
	2009 թվական	2010 թվական
Լրատվական, լրատվական-վերլուծական	741.8	724.7
Քաղաքական, տնտեսական, հասարակական	629.1	943.9
Ջվարճալի	594.8	185.9
Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	639.3	400.9
Մշակութային (այդ թվում՝ ֆիլմեր)	4,194.3	3,300.7
Կրթական, մանկապատանեկան	320.3	1,105.7
Մարզական	146.6	566.8
Երաժշտական	732.7	939.9
Հոլովակներ, այլ հաղորդումներ	709.8	569.6
Ընդամենը	8708.7	8738.1

Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ մեծ տեղ են գրավել մշակույթին, մասնավորապես՝ հայկական մշակույթին նվիրված հաղորդումները: Դրանք բազմաբնույթ են իրենց ընդգրկումներով և հեռուստադիտողին հնարավորություն են տալիս շփվելու արվեստին և մշակույթին նվիրյալ մարդկանց, մտավորականների հետ, լսելու մշակութային նորություններ, իմանալու

այս ոլորտի նոր ձեռքբերումների մասին: Մշակութային հաղորդումների գերակշիռ մասը հեռարձակվել է «Արարատ» մշակութային հեռուստաալիքով, վերջինիս գործունեությունն ամբողջությամբ ուղղված էր ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը:

Հանրային հեռուստառադիոընկերությունն իր որդեգրած քաղաքականության շրջանակներում շարունակել է հայ և օտարազգի դասականների գործերի էկրանավորումը: 2010 թվականին նկարահանվել և հայ հեռուստադիտողին է ներկայացվել Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի հիման վրա համանուն վերնագրով հինգ մասից բաղկացած հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմը: Այն աննախադեպ էր իր հետաքրքրությամբ ու հանդիսատեսի թվով: Հանրայինն իր մասնակցությունն է ունեցել նաև Շիրվանզադեի «Արտիստը» վեպի հիման վրա համանուն հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմի նկարահանման աշխատանքներին և ձեռք է բերել այդ ֆիլմի հեռարձակման իրավունքները: Ֆիլմը հայ հեռուստադիտողին կներկայացվի 2011 թվականին:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է բազմաթիվ գեղարվեստական, փաստագրական, գիտահանրամատչելի կինոնկարների, մուլտիպլիկացիոն ֆիլմերի, հեռուստասերիալների կրկնօրինակման աշխատանքները:

Մշակութային բազմաթիվ հաղորդումների հետ մեկտեղ «Արարատ» հեռուստաալիքը հեռուստադիտողին ներկայացրել է նաև «Հայֆիլմ» կինոստուդիայի, «Երևան» ստուդիայի կողմից նկարահանված գեղարվեստական և վավերագրական ֆիլմերը:

Շարունակվել են հեռարձակվել կրթական, մանկապատանեկան հաղորդումներ, որոնց շարքում է «Հայ ասպետ» հեռուստամրցախաղը: Այն նպատակ ունի հասարակության և իրավասու պետական մարմինների ուշադրությունը հրավիրել ապագա սերնդի հայեցի դաստիարակության խնդիրներին, խթանել դպրոցականների ձգտումը գիտելիքների ձեռքբերման և խորացման մեջ:

Բազմազան էր նաև Հանրային հեռուստաընկերության մարզական եթերը: Հեռարձակվել են բազմաթիվ խոշոր միջազգային մրցաշարեր և միջոցառումներ (հունա-հռոմեական ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղերը, ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, հոկեյի աշխարհի առաջնությունը՝ Հայաստանի հավաքականի մասնակցությամբ, ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերը և այլն):

Հատկանշական է, որ «Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների համաձայն 2010 թվականի ընթացքում հեռարձակված բոլոր 10 լավագույն սպորտային հաղորդումները ցուցադրվել են Հանրային հեռուստաընկերությամբ, որոնցից ամենաբարձր վարկանիշը ունեցել է ֆուտբոլի աշխարհի առաջնության Գերմանիա-Իսպանիա հանդիպումը (հաղորդումը դիտել է 271900 մարդ):

Հայաստանյան լրատվական ծրագրերի շարքում «Հայլուր» լրատվական ծրագիրը շարունակել է պահպանել իր առաջատար դիրքը: Ըստ «Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների՝ «Հայլուրը» հայկական հեռուստաթերթում շարունակել է մնալ ամենամեծ հեռուստալսարան ունեցող լրատվական ծրագիր, որի հեռուստադիտողների մասնաբաժինը կազմել է 26.1 % :

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է նաև «Տեսանկյուն» վերլուծական հեղինակային նոր հաղորդաշարը:

2009-2010 թվականներին պատրաստվել և հեռարձակվել են գիտալուսավորչական, հայոց լեզվին և պատմությանը վերաբերող հաղորդումներ և հաղորդաշարեր, որոնց շարքում էր մեծ հետաքրքրություն և հեղինակություն վայելող «Ինչու է աղմկում անցյալը» ֆիլմաշարը:

Հեռուստահաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 2,348.1 և 2,471.3 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 2,455.7 մլն դրամ :

2009-2010 թվականներին Հանրային ռադիոընկերության կողմից պատրաստվել և հեռարձակվել են օրական 50 ժամից ավելի հաղորդումներ, այդ թվում՝ օրական 5 ժամ հաղորդումներ արտասահմանում հեռարձակման համար:

Նախապատվություն տալով սեփական արտադրության հաղորդումներին, Հանրային ռադիոընկերությունը ընդլայնել է իր ունկնդիրների շրջանակը՝ ձգտելով բավարարել լայն շերտերի, տարբեր տարիքային խմբերի և ազգային փոքրամասնությունների նախասիրությունները:

Ռադիոհաղորդումները պատրաստվել են տասներկու թեմատիկ ուղղություններով, որոնց ծավալները ներկայացված են **10.4 աղյուսակում**:

Աղյուսակ 10.4. 2009-2010 թվականներին պատրաստված ռադիոհաղորդումների ծավալները ըստ թեմատիկ ուղղությունների (հաշվի են առնված նաև պրոֆիլակտիկ ժամերի ծավալները)

Հանրային ռադիոընկերության հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդումների պատրաստման ծավալները (ժամ)	
	2009 թվական	2010 թվական
Լրատվական, լրատվական-վերլուծական	1670.8	1587.5
Քաղաքական, տնտեսական, հասարակական	116.9	88.7
Մշակութային	866.0	693.6
Երիտասարդական	808.3	940.6
Մանկապատանեկան	569.0	601.9
Կրթական և հայոց լեզվի		93.7
Ժամանցային	926.6	568.9
Հոգևոր	243.1	246.5
Երաժշտական	3559.3	3938.6
Երկրորդ ծրագիր (Ջազ ռադիո)	8760.0	8760.0
Արտասահմանի համար տրվող հաղորդումներ	1102.8	1095.0
Ինտերնետային էջի համար պատրաստվող հաղորդումներ	547.5	547.5

Ռադիո «Երևան»	6339.5	
Ընդամենը	25509.8	19162.5

Ռադիոհաղորդումների մեջ լրատվական և տեղեկատվական հաղորդումները կազմել են ռադիոթերի զգալի մասը, որոնք անդրադարձել են քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական-քաղաքական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին:

Ընդգրկում է նաև լրատվության աշխարհագրությունը՝ Լեռնային Ղարաբաղ, Ջավախք, Սփյուռքի գաղթօջախներ, ՀՀ մարզեր, միջազգային անցուղարձ և այլն:

Հանրային ռադիոընկերության եթերում իրենց ուրույն տեղն են ունեցել երաժշտական հաղորդումները: Երաժշտական հաղորդումների խմբագրությունը ռադիոունկնդրին մատուցել է հայկական, ժողովրդական, գուսանական, ժամանակակից և դասական, բազմաժանր ու բազմաճյուղ երաժշտական ստեղծագործություններ, ներկայացրել հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործությունները: Հաղորդացանցի ամբողջական նկարագիրն առավել հայեցի դարձնելու համար այլ թեմաներով հաղորդումների ձևավորումներում ևս նախապատվությունը տրվել է հայկական մեղեդիներին: Երաժշտական ծրագրերում իրենց մասնակցությունն են ունեցել Հայաստանի հանրային ռադիոընկերության էստրադային սիմֆոնիկ նվագախումբը, Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների և «Արևիկ» մանկապատանեկան անսամբլները:

2009-2010 թվականներին ռադիոընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել նաև ինտերնետային կապի միջոցով, որտեղ տեղադրվել է ամենժամյա լուրերի էլեկտրոնային տարբերակը հայերենով և անգլերենով:

Ռադիոհաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 651.7 և 639.7 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 653.5 մլն դրամ :

Հանրային հեռուստաընկերությունն ու հանրային ռադիոընկերությունն իրենց գործունեությունն սկսել են Ազգային հեռուստատեսությունից և Ազգային ռադիոյից փոխանցված տեխնիկական միջոցներով:

Հետագա տարիների ընթացքում տեխնիկական վերազինման միջոցով Հանրային հեռուստաընկերության տեխնիկական միջոցների զգալի մասն աստիճանաբար փոխարինվել է նոր, ժամանակակից հեռուստատեսային տեխնիկայով: Ներկայումս Հանրային հեռուստաընկերությունն ունի իր գործունեության ապահովման համար բավարար տեխնիկական բազա, սակայն ժամանակակից հեռուստատեսային տեխնիկական արագ սերնդափոխվում է, և նոր տեխնոլոգիաների և նորամուծությունների ներդրումը պահանջում է շարունակական տեխնիկական վերազինման գործընթաց:

Նկատի ունենալով վերոհիշյալը, Հանրային հեռուստաընկերությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է տեխնիկական վերազինման ծրագիր՝ ելնելով այդ նպատակով առկա ֆինան-

սական միջոցներից ու առաջնահերթություններից:

2009 թվականին Հանրային հեռուստաընկերությունն ավարտին հասցրեց եթերի ավտոմատացման գործընթացը: Տարվա կեսին շահագործման հանձնվեց նոր կենտրոնական սարքարահը, որը հնարավորություն ընձեռեց անալոգային համակարգը փոխարինել թվանշային համակարգով:

«Հայլուր» լրատվականի ծրագրի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին ձեռք է բերվել չորս մարդաստար ավտոմեքենա:

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակման բնագավառում լուրջ ներդրում էր սեփական արբանյակային կայանի կառուցումը: Սեփական կայանի կառուցումը հնարավորություն տվեց Հանրային հեռուստաընկերությանը միջազգային ծրագրին զուգահեռ արբանյակային կապով հեռարձակել նաև «Հ1» առաջին ավիքի հաղորդումները ՀՀ տարածքում (կողմավորված): Արբանյակային կապով հեռարձակումն էականորեն բարձրացրել է «Հ1» ծրագրի հաղորդումների հեռարձակման որակը ՀՀ ամբողջ տարածքում՝ ընդգրկելով նաև այն բնակավայրերը, որոնք, իրենց ռելիեֆային դիրքով պայմանավորված, մինչ այդ դիտում էին միայն Հանրայինի միջազգային ծրագրի հաղորդումները:

Արբանյակային կայանի շահագործումը հնարավորություն տվեց նաև հրաժարվել ծախսատար ռադիոռելեային կապուղիների շահագործումից՝ էապես նվազեցնելով ՀՀ տարածքում հեռարձակման ծախսերը:

Հանրային հեռուստառադիոընկերությունը 2006 թվականից հանդիսանում է EBU-ի (Եվրոպական հեռարձակողների միության) լիիրավ անդամ, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնել փոխադարձ համագործակցության շրջանակները կազմակերպության անդամ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ, ինչպես նաև Հայաստանը ներկայացնել միջազգային միջոցառումներում (Եվրոտեսիլ, Մանկական Եվրոտեսիլ և այլն):

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2009-2010 թվականներին պատրաստվել և հեռարձակվել են օրական 8-9 ժամ հեռուստահաղորդումներ և 24 ժամ ռադիոհաղորդումներ:

Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստառադիոհաղորդումները պատրաստել է վեց թեմատիկ ուղղություններով՝ լրատվական (լրատվական-վերլուծական), քաղաքական (տնտեսական, հասարակական), մշակութային, մարզական, երաժշտական (ժամանցային) և այլն: Նշված ուղղություններից գերակշռող են եղել ծավալով երաժշտական (ժամանցային) հաղորդումները:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռուստառադիոհաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից

հատկացվել է յուրաքանչյուր տարի՝ 23.0 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 24.6 մլն դրամ:

«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի չափը, սկսած 2007 թվականից, յուրաքանչյուր տարի աճել է 10 տոկոսով (բացառությամբ 2010 թվականի), ինչը պայմանավորված է ամենամյա միջպետական համաձայնագրերով, հեռուստաթերային ժամերի ավելացմամբ:

«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժնի չափը 2009-2010 թվականներին յուրաքանչյուր տարի կազմել է 81.9 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել՝ 90.1 մլն դրամ:

2010 թվականին «Տնտեսական վերլուծությունների ծառայություններ» ծրագրի շրջանակներում հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման ծախսերի աճը 2009 թվականի նկատմամբ՝ 48 տոկոսով, պայմանավորված է հեռուստահաղորդումների ծավալի կրկնակի ավելացմամբ (48-ի փոխարեն 96 հաղորդում) և հեռուստահաղորդումների պատրաստման բարդությամբ (ներստուդիական հարցազրույցների փոխարեն արտաստուդիական նկարահանումներ, լրագրողական մեկնաբանություն և հետաքննություն):

2010 թվականին՝ 2009 թվականի նկատմամբ, աճել է նաև ԶԼՄ-ներում տպագրվող հրապարակումների թիվը՝ 96-ի փոխարեն 120 միավոր հրապարակումներ:

«Տնտեսական վերլուծությունների ծառայություններ» ծրագրի իրականացման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 41.5 և 61.5 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել միջոցներ 2010 թվականի մակարդակի չափով:

Հրատարակչություններ, խմբագրություններ

2009-2010 թվականներին «Գրականության հրատարակում» ծրագիրն ընդլայնվել է նոր ենթա-ծրագրերով («Մշակութային ժառանգությունը ներկայացնող գրականություն», «Գիտական գրականություն», «Ազգային փոքրամասնությունների գրականություն», «Երաժշտական գրականություն», «Պետական խորհրդանիշների հանրահռչակմանը և քաղաքականության դաստիարակությանը վերաբերող գրականություն», «Սփյուռքահայ գրականություն» և այլն), իսկ 2011 թվականին՝ գոյություն ունեցող ծրագրերին ավելացել են ևս երկու ենթա-ծրագրեր՝ «Գրական ժառանգություն» ենթա-ծրագիրը, որով առաջին անգամ հրատարակվելու են հայ մեծանուն գրողների (Ե. Զարենց, Հ. Շիրազ, Ռ. Զարյան, Վ. Սարոյան) անտիպ ստեղծագործությունները և «Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված գրականություն» ենթա-ծրագիրը, որտեղ տեղ են գտել 4 կարևոր հրատարակություն՝ արտացոլելով անկախության տարիներին մշակույթի տարբեր բնագավառների ձեռքբերումները:

2009-2010 թվականներին ընդլայնվել են հայ գրքին և ընթերցանության խթանմանը նպաստող հանրապետական միջոցառումները: Համագործակցելով ոլորտի մասնավոր (ՍՊԸ-ներ, ՓԲԸ-ներ), հասարակական կազմակերպությունների («Հրատարակչների ազգային ասոցիացիա», «Գրավաճառների ազգային ասոցիացիա»), ստեղծագործական միությունների (<ԳՄ) հետ՝ աջակցություն է ցուցաբերվել Հայաստանի մարզերում գրքի ցուցահանդես-տոնավաճառներին, գրքի վարկի բարձրացմանը և ընթերցանության խթանմանը նպաստող միջոցառումների և փառատոների կազմակերպմանը («Դարձ առ գիրքը», «Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օր», «Գիրք նվիրելու օր», «Գրախանութ անիվների վրա», «Թարգմանչաց տոն», «Գրքարվեստ» հանրապետական մրցույթ և այլն):

Միջազգային համագործակցության ծրագրերով վերջին երկու տարիներին Հայաստանը մասնակցել է արդեն ավանդական դարձած միջազգային ցուցահանդեսներին (Մինսկ, Փարիզ, Թեհրան, Հալեպ, Սալոնիկ, Մոսկվա, Մայնի-Ֆրանկֆուրտ և այլն), իսկ 2011 թվականին առաջին անգամ մասնակցել է Ժնևի (պատվո հյուրի կարգավիճակով), Լոս Անջելեսի, Սանկտ Պետերբուրգի, Վարշավայի, Պերմի ցուցահանդեսներին և փառատոններին՝ ամենուր արժանանալով բարձր գնահատականի: 2011 թվականի ընթացքում նախատեսվում է հայ գիրքը ներկայացնել նաև Չինաստանում, Ալեքսանդրիայում, Կիևում, Ամստերդամում, Հելսինկիում, Վենետիկում:

Վերջին տարիներին կարևորվել է Հայաստանի մասնակցությունը ԱՊՀ երկրների «Գրքարվեստ» միջազգային մրցանակաբաշխությանը, որին ներկայացվում է Հայաստանի մշակութային ժառանգությունն արտացոլող այլոմային գրականություն, ինչը նպաստում է մշակութային արժեքների հանրահռչակմանը: 2011 թվականին Հայաստանն արժանացել է 4 հեղինակավոր մրցանակի:

2009-2010 թվականներին ավելի լայն ընդգրկում և հեղինակություն են ձեռք բերել ԱՊՀ և բալթյան երկրների գրողների, թարգմանիչների և հրատարակիչների միջազգային ֆորումի շրջանակում կազմակերպվող քննարկումները և գրքի միջազգային ամենամյա ցուցահանդեսը, որը նպաստում է նաև երկկողմ հրատարակչական ծրագրերի իրականացմանը տարբեր երկրների հետ (Ռուսաստան, Տաջիկստան, Վրաստան, Հունգարիա, Ուկրաինա, Եգիպտոս):

2009-2010 թվականներին գրականության հրատարակման համար (պետպատվեր և աջակցություն) հատկացվել է, համապատասխանաբար 129.7 և 129.8 մլն դրամ՝ 139 և 144 անուն գրքերի հրատարակման համար:

2011 թվականին նախատեսվում է հատկացնել 132.4 մլն դրամ, որը կուղղվի հանրագիտարանային, մշակութային ժառանգությունը ներկայացնող, հոբելյանական, թարգմանական, մանկական, երաժշտական, գիտական, սփյուռքահայ, ազգային փոքրամասնությունների, պետական խոհրդանիշների հանրահռչակմանը և քաղաքացիական դաստիարակությանը նվիրված, գիտահանրամատ-

չելի, գեղարվեստական և այլ գրականության հրատարակմանը, ինչպես նաև էլեկտրոնային գրքերի թողարկմանը:

«Պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվում են 2 անուն թերթերի հրատարակմանը՝ «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա»:

2009-2011 թվականներին պետական մամուլի հրատարակման նպատակով հատկացումները յուրաքանչյուր տարի կազմում են 68.9 մլն դրամ: «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակվող համարների թիվը՝ 264 -է, իսկ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթինը՝ 100:

«Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով 2009 թվականին հրատարակվել է 69 անուն, իսկ 2010 թվականին՝ 70 անուն թերթ և ամսագիր (ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող, գրական-մշակութային և գիտական, մարզային մամուլ): 2011 թվականին աջակցություն կստանան 69 անուն պարբերական:

2009-2010 թվականներին ոչ պետական մամուլի հրատարակման նպատակով հատկացվել է համապատասխանաբար՝ 47.4 և 47.3 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել միջոցներ 2010 թվականի մակարդակի չափով:

2009-2010 թվականներին «Հրատարակչական, տեղեկատվական, տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսված հատկացումների շրջանակներում հրատարակվել են՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր՝ 903.4 և 1185.7 հազ. մամուլով, Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրեր՝ 292.6 և 657.3 հազ. մամուլով, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր (ռուսերեն)՝ 45.0 և 26.0 հազ. մամուլով, Երևանի իրավական ակտերի տեղեկագրեր՝ 4.9 և 64.6 հազ. մամուլով, քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու 251.8 և 178.8 հազ. մամուլով:

Նշված ծրագրի հատկացումների շրջանակներում ձեռք է բերվել նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանք (պետական գրանցումների վկայականներ, գրանցամատյաններ, ձևեր), ինչպես նաև հրատարակվել են միջազգային պայմանագրեր և մուտքի վիզաներ: 2011 թվականին կշարունակվեն նշված աշխատանքները:

2009-2010 թվականներին «Հրատարակչական, տեղեկատվական, տպագրական ծառայություններ» ծրագրով հատկացվել է, համապատասխանաբար՝ 256.9 և 258.2 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 399.6 մլն դրամ:

«Թարգմանչական ծառայություններ» ծրագրով նախատեսված հատկացումների շրջանակներում թարգմանված էջերի ծավալը 2009 թվականին կազմել է՝ 8512 էջ, 2010 թվականին՝ 8516 էջ, 2011 թվականին նախատեսվում է թարգմանվող էջերի քանակը հասցնել 10000-ի, կամ՝ թարգման-

վող էջերի քանակը նախորդ տարվա նկատմամբ կաճի 1484-ով, իսկ ֆինանսավորման աճը կկազմի՝ 17.6 տոկոս:

2009-2010 թվականներին թարգմանչական ծառայությունների իրականացման համար հատկացվել է յուրաքանչյուր տարի՝ 102.0 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 120.0 մլն դրամ:

2009-2010 թվականներին իրականացվել են նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգից բխող ծրագրեր՝ «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ», «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» և «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում:

«Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2009 և 2010 թվականներին իրականացվել են համացանցում արևելահայերենից՝ արևմտահայերեն և հակառակը փոխարկչի տեղադրման և սպասարկման, էլեկտրոնային գրադարանի համալրման և սպասարկման աշխատանքները, «Հայերն այսօր» էլեկտրոնային օրաթերթի հրատարակումը: Այդ նպատակով 2009-2010 թվականներին հատկացվել է, համապատասխանաբար՝ 25.0 և 20.6 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 30.3 մլն դրամ:

«Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» ծրագրի շրջանակներում 2010 թվականին հավաքագրվել և սփյուռքի հայկական կազմակերպություններին, կրթօջախներին, մշակութային հաստատություններին, գրադարաններին առաքվել են ուսումնական և հանրամատչելի գրականություն, տեղեկատվական, վերլուծական նյութեր, տեսահոլովակներ, ձայնասկավառակներ: Այդ նպատակով 2010 թվականին հատկացվել է 7.3 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 11.0 մլն դրամ:

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում» ծրագրով 2009-2010 թվականներին հրատարակվել է երկլեզու տարեգիրք 4000 օրինակ տպաքանակով:

Տարեգիրքը յուրօրինակ հաշվետվություն և պատմագրություն է հայկական սփյուռքի մասին, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում ծանոթանալ Հայաստանում և Սփյուռքում համահայկական կազմակերպությունների, հոգևոր կառույցների, հայ համայնքների, ՀՀ պետական մարմինների կողմից իրականացված հիշարժան ծրագրերին և միջոցառումներին:

2009-2010 թվականներին այդ նպատակով հատկացվել է, համապատասխանաբար՝ 5.9 և 7.4 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել միջոցներ 2010 թվականի մակարդակի չափով:

10.2.1.3. Հիմնական խնդիրները

Հեռուստառադիոհաղորդումների ոլորտում հիմնական խնդիրներն են.

✧ ապահովել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանությունը, ավելացնել սոցիալ-տնտեսական ուղղվածության հաղորդումներում աղքատության հաղթահարման ծրագրերի և դրանց ընթացքի վերաբերյալ հաղորդումների տեսակարար կշիռը,

✧ առաջնորդվելով հանրայինի առաքելությամբ՝ միջոցներ ձեռնարկել հնարավորինս պահպանել Հանրային հեռուստաընկերության ու Հանրային ռադիոընկերության առաջատար դիրքերը հայաստանյան հեռուստառադիոշուկայում՝ ապահովելով հավասարակշռություն Հանրային հեռուստառադիոընկերության որդեգրած քաղաքականության և շուկայում մրցակցության կանոնների միջև,

✧ հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի շահերը, ինչպես նաև մեծ սփյուռքի առկայությունը՝ հեռարձակել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության բազմազան հաղորդումներ ամբողջ տարածքում և արտերկրում, ապահովել մեր հանրապետության բնակչության ու սփյուռքահայության համար անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվություն,

✧ ապահովել հոգևոր և մշակութային պահանջմունքների բավարարմանն ուղղված հեռուստահաղորդումների պատրաստումը և հեռարձակումը հանրապետության ամբողջ տարածքում,

✧ իրազեկել հասարակությանը ՀՀ կառավարության գործունեության, իրականացվող ծրագրերի և առկա խնդիրների մասին և դարձնել մասնակից իրականացվող բարեփոխումներին:

Հրատարակչությունների, խմբագրությունների ոլորտում հիմնական խնդիրներն են.

- ✧ գրահրատարակչական արտադրանքի պոլիգրաֆիական մակարդակի բարձրացում,
- ✧ գրավաճառ ցանցի ընդլայնում,
- ✧ իրավական դաշտի կատարելագործում,
- ✧ Հայաստանի Հանրապետության և Եվրոմիության իրավական ակտերի թարգմանությունների կատարում և ժամանակին ներկայացում շահառու մարմիններին,
- ✧ Սփյուռքում և Հայաստանում գործող կազմակերպությունների համագործակցության ակտիվացում:

10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.2.2.1. Նպատակները

Հեռուստառադիոհաղորդումների ոլորտի նպատակներն են.

- ♦ Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց

լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանության ապահովում:

- ♦ Հեռուստադիտողներին և ռադիոունկնդիրներին այնպիսի հաղորդաշարերի և հաղորդումների մատուցում, որոնցում հաշվի են առնվում հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների ու սոցիալական խմբերի առանձնահատկություններն ու նախասիրությունները:

- ♦ Բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումների և լրատվության ապահովում:

- ♦ Բնակչությանն անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ ապահովում:

- ♦ Բնակչության լայն խավերի շրջանում հեռուստատեսության և ռադիոյի դերը և նշանակությունը խրախուսող գործունեության իրականացում, հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ ունկնդրի վստահության ավելացում:

- ♦ Հասարակության հոգևոր և մշակութային պահանջմունքների բավարարմանն ուղղված հեռուստահաղորդումների պատրաստում ու հեռարձակում:

Հրատարակչությունների, խմբագրությունների ոլորտի հիմնական նպատակներն են.

- ♦ Գրքային արտադրանքի միջոցով հայ ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում, տարածում ն հանրահռչակում,

- ♦ Բարեկիրթ քաղաքացիական հասարակության ձևավորում, բնակչության տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում,

- ♦ Գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության զարգացում,

- ♦ Իրավական ակտերի թարգմանությունների մատչելիության ապահովում, երկրի միջազգային պարտավորությունների պատշաճ կատարում,

- ♦ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև կապերի հաստատում և ամրապնդում, սփյուռքահայության ազգային, լեզվամշակութային ինքնության պահպանում :

10.2.2.2. Գերակայությունները

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2012-2014 թվականներին գերակա ուղղությունները բխում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված դրույթներից:

2012-2014 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

- Հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայալեզու, սեփական և հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացում:

- Հեռուստաընկերության տեխնիկական բազայի վերազինման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում հեռարձակվող հաղորդումների բարձր որակի ապահովում:

- Տեխնիկական վերազինման միջոցով Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության արտադրական ծախսերի կրճատում և աշխատակիցների սոցիալական վիճակի բարելավում:

- Հեռարձակվող հաղորդումների արբանյակային հեռարձակման աստիճանական ավելացում, որը հնարավորություն կընձեռի սփյուռքի մեր հայրենակիցներին ամենօրյա տեղեկատվություն ստանալ հայրենիքում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

- Արտերկրի հայկական համայնքներ ունեցող բնակավայրերում վերգետնյա կապուղիներով և կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումների վերահեռարձակման ծավալների ընդլայնում:

- Հանրային հեռուստաընկերության, որպես լիիրավ անդամ, EBU (Եվրոպական հեռարձակողների միություն) հետ ավելի սերտ համագործակցության ապահովում:

- Նոր տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական վերազինման միջոցով EBU-ի կողմից սահմանված ստանդարտներին համապատասխան տեխնիկական մակարդակի ապահովում:

- Եվրոպական և այլ երկրների հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ փոխադարձ համագործակցության շրջանակների ընդլայնում:

- Հասարակության հոգևոր և մշակութային պահանջմունքների բավարարմանն ուղղված հեռուստահաղորդումների պատրաստում ու հեռարձակում:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2012-2014 թվականներին գերակա ուղղությունների համար հիմք են հանդիսանում «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Ձանգվածային լրատվամիջոցների մասին», «Փաստաթղթերի պարտադիր օրինակի մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև Կայուն զարգացման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրերը:

Գերակա ուղղություններն են.

- Իրավական ակտերի պաշտոնական տեղեկագրերի հրատարակում և թարգմանությունների իրականացում:

- Հոբելյանական, հանրագիտարանային և մշակութային ժառանգությունը ներկայացնող գրականության հրատարակում:

- Հայ տպագրության 500-ամյա պատմությունը ներկայացնող բարձրարժեք գրականության հրատարակում, տարածում և հանրահռչակում:

- Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված փաստավավերագրական հրատարակությունների տպագրություն՝ մասնավորապես օտար լեզուներով:

- Պետականության ամրապնդմանը, պետական խորհրդանիշների և քաղաքացիական դաստիարակության մասին գիտելիքների խորացմանն ու դրանց կիրառմանը նվիրված ուսուցողական գրականության հրատարակում:

- Հայաստանում և Սփյուռքում իրականացված ծրագրերի, միջոցառումների և հիշարժան իրադարձությունների իրազեկում:

10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին (առանց կառավարման ապարատի ծախսերի) նախատեսվում է ուղղել 2012 թվականին՝ 4,636.2 մլն դրամ, 2013 թվականին՝ 4,852.5 մլն դրամ և 2014 թվականին՝ 4,805.1 մլն դրամ (<< 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 4,393.2 մլն դրամ, 2013 թվականին՝ 4,614.7 մլն դրամ):

Ծախսերը 2012 թվականին 2011 թվականի նկատմամբ կաճեն՝ 1.2 %-ով, 2013 թվականին՝ 2012 թվականի նկատմամբ՝ 4.7 %-ով, իսկ 2014 թվականին 2013 թվականի նկատմամբ ծախսերը կնվազեն՝ 1.0 %-ով:

2012-2014 թվականներին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի միջնաժամկետ ծրագրով ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2012 -2014 թվականներին կկազմի, յուրաքանչյուր տարի՝ 0.1%:

2012-2014 թվականներին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի բյուջետային հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է.

- 2013 թվականին աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 10 տոկոսով (բացառությամբ Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության աշխատողների, որոնց աշխատավարձերի բարձրացումը կազմել է, համապատասխանաբար՝ 7.5 և 9.5 տոկոս, վերջիններիս գծով հաշվի առնելով 2011 թվականին արդեն իսկ այլ հոդվածների հաշվին կատարված աշխատավարձի աճը),

- 2014 թվականին նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամ սահմանմամբ,

- «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում << մասնաբաժնի աճով, յուրաքանչյուր տարի 10 տոկոսով:

2012-2014 թվականներին նախատեսվել են նաև հատկացումներ «Գրական ժառանգության պահպանում և տարածում» ծրագրի իրականացման համար, վերջինս իրականացվում է՝ սկսած 2011 թվականի 2-րդ կիսամյակից:

Ծրագրի նպատակն է՝ «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով (ստեղծվել է ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 5-ի N 1055-Ն որոշմամբ) գրականության ժառանգության պահպանման, տարածման ու գրավոր մշակույթի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ազգային և համաշխարհային դասական և ժամանակակից լավագույն գրական ստեղծագործություններին ու մշակույթին հանրությանը հաղորդակից դարձնելը:


Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի 2010-2014 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների ներկայացված են **10.5. աղյուսակում**:

Աղյուսակ 10.5. Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի 2010-2014 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

բաժին	խումբ	դաս	Ոլորտի ուղղությունները	2010 թ. փաստացի	2011 թ. պետական բյուջե	2012-2014 թթ. Մ ԺԾԾ		
						2012թ.	2013թ.	2014թ.
			ԸՆԴԱՄԵՆԸ	4,354.3	4,583.4	4,636.2	4,852.5	4,805.1
08	03	01	Հեռուստառադիոհաղորդումներ	3,385.1	3,413.9	3,403.4	3,539.9	3,550.8
08	03	02	Հրատարակչություններ, խմբագրություններ	796.4	992.6	938.0	1,012.3	954.0
08	03	03	Տեղեկատվության ձեռքբերում	144.4	149.6	264.6	270.3	270.3
01	01	03	Արտաքին հարաբերություններ	28.4	27.2	30.1	30.1	30.1

Ըստ ուղղությունների 2012 թվականին ծախսերի տեսակարար կշիռը ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին ուղղված հատկացումներում կունենա հետևյալ պատկերը.

Գծանկար 10.2. 2012 թվականին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին ուղղված հատկացումների տեսակարար կշիռը ըստ ուղղությունների



10.2.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Բացի պետական բյուջեից ստացվող եկամուտներից, ոլորտի կազմակերպություններն եկամուտներ են ստանում նաև վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից (հովանավորչական հաղորդումների պատրաստման և հեռարձակման, առևտրային գովազդի հեռարձակման, հրատարակչական և այլ աշխատանքներ):

Վճարովի ծառայություններից ստացված եկամուտներն ուղղվում են կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը, աշխատողների աշխատավարձերի վճարմանը, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը, հրատարակչական և այլ ծախսերի իրականացմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2010-2014 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են ըստ տարիների, համապատասխանաբար՝ 1,439.4, 1,300.3, 1,366.0, 1,300.3 և 1,318.0 մլն դրամ:

Հայաստանյան հեռուստաշուկայում առկա ուժեղ մրցակցության պայմաններում Հանրային հեռուստառադիոընկերությունը միջոցներ կձեռնարկի 2012-2014 թվականների ընթացքում պահպանել և ավելացնել գովազդային եկամուտների մակարդակը 2011 թվականի նկատմամբ :

Ինչ վերաբերում է այլ եկամուտներին, որոնց գերակշիռ մասը կազմում են խոշոր սպորտային և այլ միջազգային միջոցառումների հովանավորչությունից ստացվող եկամուտները, ապա, պայմանավորված այդ միջոցառումների պարբերականությամբ, նշված եկամուտների չափերը որոշակիորեն կփոփոխվեն:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2010-2014 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են 2010 թվականին՝ 115.8 մլն դրամ, 2011-2014 թվականներին, յուրաքանչյուր տարի՝ 161.5 մլն դրամ:

Տեղեկատվության ձեռքբերման գծով 2010-2014 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են 2010 թվականին՝ 15.2 մլն դրամ, 2011-2014 թվականներին, յուրաքանչյուր տարի՝ 16.8 մլն դրամ:

Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը ներկայացված են **10.6 աղյուսակում**:

Աղյուսակ 10.6. Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս, ծրագրի համարը	Կազմակերպությունների անվանումները	2010թ. փաստացի		2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.	
		ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին
08.03 .01.	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ՀԱՂՈՂՊՈՒՄՆԵՐ	3030.8	1439.4	3122.3	1300.3	3122.3	1366.0	3244.9	1300.3	3244.9	1318.0
	<i>Կրթական համակարգի կազմակերպությունների կողմից իրականացված և կանխատեսվող ծախսերում %</i>	67.8	32.2	70.6	29.4	69.6	30.4	71.4	28.6	71.1	28.9
08.03 .01.02	<<Հայաստանի հանրային հեռուստաընկերություն>> ՓԲԸ	2348.1	1379.0	2455.7	1241.7	2455.7	1307.4	2542.4	1241.7	2542.4	1259.4
	<i>Կրթական համակարգի կազմակերպությունների կողմից իրականացված և կանխատեսվող ծախսերում %</i>	63.0	37.0	66.4	33.6	65.3	34.7	67.2	32.8	66.9	33.1
08.03 .01.03	<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն >> ՓԲԸ	651.7	42.9	634.0	40.7	634.0	40.7	667.6	40.7	667.6	40.7
	<i>Կրթական համակարգի կազմակերպությունների կողմից իրականացված և կանխատեսվող ծախսերում %</i>	93.8	6.2	94.0	6.0	94.0	6.0	94.3	5.7	94.3	5.7
08.03 .01.04	<<Շիրակի հանրային հեռուստառադիո>> ՓԲԸ	23.0	10.7	24.6	11.2	24.6	11.2	26.3	11.2	26.3	11.2

	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	68.2	11.2	68.7	12.0	68.7	12.0	70.1	12.0	70.1	12.0
08.03 .01.05	<<Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն>> ՓԲԸ	8.0	6.8	8.0	6.7	8.0	6.7	8.6	6.7	8.6	6.7
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	54.1	45.9	54.4	45.6	54.4	45.6	56.2	43.8	56.2	43.8
08.03 .02.	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	209.4	115.8	227.4	161.5	227.4	161.5	235.7	161.5	235.7	161.5
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	64.4	35.6	58.5	41.5	58.5	41.5	59.3	40.7	59.3	40.7
08.03 .02.01	<<Հանրապետություն>> ՓԲԸ	44.8	76.5	44.8	107.0	44.8	107.0	48.0	107.0	48.0	107.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	36.9	63.1	29.5	70.5	29.5	70.5	31.0	69.0	31.0	69.0
08.03 .02.01	«Հայաստանի Հանրապետություն - Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ	24.0	14.2	24.0	22.5	24.0	22.5	26.2	22.5	26.2	22.5
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	62.8	37.2	51.6	48.4	51.6	48.4	53.8	46.2	53.8	46.2
08.03 .02.04.	«Էկոնոմիկա հանդես» ՓԲԸ	38.6	24.0	38.6	30.0	38.6	30.0	41.5	30.0	41.5	30.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	61.7	38.3	56.3	43.7	56.3	43.7	58.0	42.0	58.0	42.0
08.03 .02.09.	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ	102.0	1.1	120.0	2.0	120.0	2.0	120.0	2.0	120.0	2.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	98.9	1.1	98.4	1.6	98.4	1.6	98.4	1.6	98.4	1.6
08.03 .03.01	ԸՆԴԱՄԵՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, «Արմենպրես» ՓԲԸ	68.6	15.2	73.9	16.8	73.9	16.8	79.6	16.8	79.6	16.8
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	81.9	18.2	81.5	16.6	81.5	16.6	82.6	16.6	82.6	16.6

10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.3.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Հանգստի և սպորտի ոլորտի 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 23 ծրագրերի իրականացմանը՝ երեք պետական կառավարման մարմինների միջոցով:

Հանգստի և սպորտի ոլորտում քաղաքականությունը մշակվում է պետական լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից և իրականացվում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նախարարությունը սպորտի ոլորտում մշակում է իր ռազմավարությունը՝ նպատակ ունենալով զարգացնելու հետևյալ ուղղությունները՝

մեծ նվաճումների սպորտ

մասսայական և մանկապատանեկան սպորտ

Մեծ նվաճումների սպորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումներն ուղղվում են օլիմպիական խաղերին, Աշխարհի, Եվրոպայի, Հայաստանի Հանրապետության առաջնություններին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը, ինչպես նաև համահայկական խաղերի անցկացմանը:

Մեծ նվաճումների սպորտի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հավաքական թիմերի անդամները, ինչպես նաև այլ երկրների մարզիկները:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոների, «Լավագույն մարզական ընտանիք. մրցույթի անցկացմանը, մանկապատանեկան սպորտի մասսայականացմանը, հաշմանդամային սպորտին աջակցմանը, շախմատիստների պատրաստմանը:

Մասսայական և մանկապատանեկան սպորտի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, հաշմանդամ մարզիկները:

10.3.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

Մեծ նվաճումների սպորտ

ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման նպատակով վերջին հինգ տարիների ընթացքում (2006-2010 թվականներին) ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցներն աճել են 32.8 տոկոսով, ինչը նպաստել է Աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, ՀՀ

առաջնությունների ուսումնամարզական հավաքների քանակի և դրանց մասնակիցների թվի ավելացմանը :

2006-2010 թվականներին Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին մասնակցության, ՀՀ առաջնությունների, մասնակիցների, ինչպես նաև ուսումնամարզական հավաքների թիվը ներկայացված է **10.7 աղյուսակում**:

Աղյուսակ N 10.7. 2006-2010 թվականներին Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին մասնակցության, ՀՀ առաջնությունների, մասնակիցների, ինչպես նաև ուսումնամարզական հավաքների թիվը

միջոցառումների և մասնակիցների թիվը	2006	2007	2008	2009	2010
Աշխարհի և Եվրոպայի առաջնությունների թիվը	75	75	85	135	159
մասնակիցների թիվը	1250	1760	2060	1729	1955
ՀՀ առաջնությունների քանակը	75	78	78	84	90
մասնակիցների թիվը	5748	5104	5504	6700	7600
Ուսումնամարզական հավաքների թիվը	79	113	85	126	83

Միաժամանակ, նշված ժամանակաշրջանում աճել է Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում ազգային հավաքական թիմերի մարզիկների կողմից նվաճած մրցանակների քանակը, որը ներկայացված է **10.8 աղյուսակում**:

Աղյուսակ 10.8. Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում ազգային հավաքական թիմերի մարզիկների կողմից 2006-2010 թվականներին նվաճած մրցանակների քանակը

մեդալների տեսակները	2006	2007	2008	2009	2010
Ոսկե մեդալ	13	27	27	32	43
Արծաթե մեդալ	34	41	40	47	51
Բրոնզե մեդալ	35	36	41	56	63
Ընդամենը	82	104	108	135	157

«ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագիրն իրականացվում է մարզական ֆեդերացիաների միջոցով, որոնց թիվը 2010 թվականին կազմել է 31՝ 2006 թվականի 24-ի դիմաց, պետական աջակցություն են ստացել ևս 7 մարզաձևերի ֆեդերացիաներ՝ ավանդական ուշուի, խոտի հոկեյի, բադմինթոնի, սինխրոն լողի, քիքբոքսինգի, մեծ թենիսի, ռեգբիի: Պետական աջակցության ընդլայնումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում տվյալ մարզաձևերի զարգացմանը:

Մեծ նվաճումների սպորտում 2006-2010 թվականներին կարևոր են իրականացված հետևյալ միջոցառումները և ձեռքբերված նվաճումները.

2006 թվական

2006 թվականի ձմեռային օլիմպիական խաղերի (Թուրին) մասնակցության վարկանիշ են ձեռք բերել 5 մարզիկներ:

Առանձնահատուկ և աննախադեպ հաղթանակ է գրանցվել Հայաստանի շախմատի հավաքական թիմի կողմից: Հայկական սպորտի պատմության մեջ առաջին անգամ շախմատային Օլիմպոսը և համաշխարհային շախմատային հաղթողի տիտղոսը նվաճեց Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականը՝ արժանանալով ոսկե մեդալների:

2008 թվական

Ոչ օլիմպիական մարզաձևերից շախմատի 38-րդ օլիմպիադայում Հայաստանի հավաքականը դարձել է չեմպիոն:

2008 թվականի Պեկինի օլիմպիական խաղերին մասնակցել են Հայաստանի Հանրապետության 25 մարզիկներ, որոնցից 6-ը նվաճել են բրոնզե մեդալներ:

2009 թվական

2009 թվականին Երևանում անց են կացվել բռնցքամարտի աշխարհի պատանեկան, ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունները, համահայկական խաղեր՝ բասկետբոլ և ֆուտբոլ մարզաձևերից:

Յոթ տարվա ընդմիջումից հետո ծանրորդ Նազիկ Ավդալյանը նվաճել է աշխարհի չեմպիոնի կոչումը:

2010 թվական

2010 թվականին Սինգապուրում առաջին պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցել են 14 մարզիկներ, որոնք նվաճել են 1 արծաթե (ծանրամարտ) և 3 բրոնզե (ծանրամարտ, ձյուդո և ըմբշամարտ) մեդալներ:

2009-2010 թվականներին «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 994.5 և 884.4 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 885.0 մլն դրամ:

Մասսայական և մանկապատանեկան սպորտ

«ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում»

2008 թվականին մարզերում միջոցառման մասնակիցների թիվը կազմել է շուրջ 3.000 մարդ, միջոցառումն անց է կացվել միայն մարզկենտրոններում: 2009 թվականին մասնակիցների թիվը կազմել է շուրջ 10.000 մարդ, միջոցառումն անց է կացվել 37 քաղաքներում:

Մասնակիցների թվաքանակի աճը պայմանավորված է աշխարհագրության ընդլայնմամբ:

«ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում» ծրագրի իրականացման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, ինչպես նաև 2011 թվականին նախատեսվում է հատկացնել, յուրաքանչյուր տարի՝ 7.0 մլն դրամ:

«Մանկապատանեկան սպորտի մասսայականացում» ծրագրով (Ֆուտբոլ) պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին անց են կացվել սեմինարներ, որոնց ՀՀ տարբեր մարզերից 2008 թվականին մասնակցել են 2880 երեխաներ, 2009 թվականին՝ 2900 երեխաներ:

«Մանկապատանեկան սպորտի մասսայականացում» ծրագրի իրականացման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, ինչպես նաև 2011 թվականին նախատեսվում է հատկացնել, յուրաքանչյուր տարի՝ 8.0 մլն դրամ:

«Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ մասսայական միջոցառմանը մասնակցած ընտանիքների թիվը 2008 թվականին կազմել է 126 ընտանիք՝ 2007 թվականին մասնակցած 106 ընտանիքի դիմաց: 2009 թվականին մասնակից ընտանիքների թիվը կազմել է 171, կամ 2008 թվականի նկատմամբ 45 –ով ավելի:

Մասնակից ընտանիքների քանակի աճը պայմանավորված է միջոցառման աշխարհագրության ընդլայնմամբ և միջոցառման մասսայականությամբ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 17.5 և 23.0 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 69.0 մլն դրամ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով 2010 թվականին նախատեսված հատկացումները նախորդ տարվա նկատմամբ աճել են 31.4 տոկոսով, 2011 թվականին՝ շուրջ 2 անգամ, ինչը պայմանավորված է մրցույթին ավելի շատ թվով ընտանիքների մասնակցությամբ:

Հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպությունների կողմից 2008 թվականին հանրապետական և միջազգային առաջնություններին մասնակցել են 428 մարզիկներ, 2009 թվականին հաշմանդամային սպորտի տարբեր միջոցառումներում ընդգրկվածների թիվը կազմել է 578 մարզիկ: 2008 թվականի նկատմամբ աճը՝ 150 ընտանիքով, պայմանավորված է հաշմանդամ հատվածի նկատմամբ հասարակության առավել ուշադիր վերաբերմունքով, հասարակական մարզական կազմակերպություններում նրանց ընդգրկվածությամբ:

Հաշմանդամային մարզական միջոցառումների իրականացման համար 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, ինչպես նաև 2011 թվականին նախատեսվում է հատկացնել, յուրաքանչյուր տարի՝ 9.0 մլն դրամ:

Շախմատիստների պատրաստման ծառայությունների գծով «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամի կողմից կազմակերպվել են մի շարք շախմատային մրցաշարեր և հավաքներ:

Մրցաշարերից առավել աչքի է ընկել Տիգրան Պետրոսյանի 75-ամյակին նվիրված «Ղարաբաղ 2004» միջազգային հուշամրցաշարը և աշխարհում նախադեպը չունեցող ինտերնետային թիմային միջազգային մրցաշարը, որի կազմակերպման արդյունքում միջազգային հանրությանը ներկայացվեց Հայաստանի շախմատային աշխարհը մի նոր, առավել բարենպաստ տեսանկյունից: Մրցաշարերի շարքը լրացրեցին «Ղարաբաղ 2005», «Կապուտակ Սևան» (2005, 2006, 2007, 2008) և մանկապատանեկան «Ջերմուկ 2006», «Ջերմուկ 2007», «Ջերմուկ 2008» միջազգային մրցաշարերը, ինչպես նաև «ՄԱԿ-ի գավաթ» մանկապատանեկան ամենամյա մրցաշարը, որն անց է կացվել 2005-2008 թվականներին:

Բացի վերը նշվածից, հիմնադրամի ջանքերի շնորհիվ Եվրոպայի առաջնություններում ակադեմիայի սաներից երեքը դարձել են չեմպիոն (մինչև 10, 12 և 16 տարեկանների խմբերում), չորսը՝ փոխչեմպիոն (մինչև 12 և 16 տարեկանների խմբերում), մեկը՝ բրոնզե մեդալակիր, ինչպես նաև աշխարհի առաջնություններում ակադեմիան տվել է երկու չեմպիոն, երկու փոխչեմպիոն և երկու բրոնզե մեդալակիր: Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից պատրաստվել են ութ միջազգային գրոսմայստերներ և հինգ միջազգային վարպետներ:

2010 թվականին 16 տարեկանների Համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի թիմը, որի անդամներից երեքը ակադեմիայի սաներն էին, դարձել է չեմպիոն: Միջազգային այլ մրցաշարերում ակադեմիայի սաները նվաճել են ավելի քան 30 մրցանակային տեղեր:

Շախմատիստների պատրաստման նպատակով 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, յուրաքանչյուր տարի՝ 52.0 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 55.5 մլն դրամ:

10.3.1.3. Հիմնական խնդիրները

Մեծ նվաճումների սպորտում հիմնական խնդիրներն են.

- ✦ սպորտի բարձրագույն նվաճումների ապահովում,
- ✦ սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակում և իրագործում,
- ✦ օլիմպիական շարժման զարգացում, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցում,
- ✦ միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդում,
- ✦ միջպետական մարզական հարաբերությունների զարգացում,

Մասսայական և մանկապատանեկան սպորտում հիմնական խնդիրներն են.

- ✦ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների ակտիվացում սպորտի ոլորտում,
- ✦ մարզական ներուժի օգտագործում, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավում,

✧ սպորտով զբաղվելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծում հասարակության հաշմանդամ մարզիկների համար,

✧ առողջ ապրելակերպը կենցաղ ներմուծելու նպատակով ՋԼՄ-ների հնարավորինս լայն օգտագործում, հատկապես՝ հեռուստաընկերությունների:

✧ հանրապետությունում ձևավորված շախմատային ավանդույթների սերնդեսերունդ փոխանցման և շախմատային ներուժն ի շահ երկրի օգտագործման ապահովում:

10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.3.2.1. Նպատակները

Հանգստի և սպորտի ոլորտի հիմնական նպատակներն են.

- Բարձրակարգ մարզիկների պատրաստումը, Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում և այլ միջազգային մրցասպարեզներում երկրի վարկանիշի բարձրացման նպատակով ՀՀ հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

- Բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը:

- Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը:

- Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

10.3.2.2. Գերակայությունները

ՀՀ 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով հանգստի և սպորտի ոլորտի հիմնական գերակայությունների համար հիմք են հանդիսանում՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը: Հիմնական գերակայություններն են.

Մեծ նվաճումների սպորտ

- Օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների նպատակային նախապատրաստության և մասնակցության ապահովում: Տարբեր մարզաձևերի հանրապետական ֆեդերացիաների մարզական միջոցառումների օրացուցային պլաններով նախատեսված բոլոր միջոցառումների անցկացման ապահովում:

- Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող համահայկական և միջազգային պաշտոնական մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում:

- Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված՝ պետության կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստելու նպատակով իրավական ակտերի ստեղծում:

- Միջպետական մարզական հարաբերությունների զարգացում:

2012-2014 թվականներին մեծ նվաճումների սպորտում ակնկալվող արդյունքը՝ 2012 թ. Լոնդոնում կայանալիք օլիմպիական խաղերի, վարկանիշային միջազգային մրցումներին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին լավագույն ձևով մասնակցությունն է:

Մասսայական և մանկապատանեկան սպորտ

- Բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում:

- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում :

- Հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպություններին պետական աջակցության ապահովում:

- Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում:

10.3.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանգստի և սպորտի ոլորտին (առանց կառավարման ապարատի ծախսերի) նախատեսվում է ուղղել՝ 2012 թվականին՝ 1,439.7 մլն դրամ, 2013 թվականին՝ 1,463.7 մլն դրամ, 2014 թվականին՝ 1,424.4 մլն դրամ (ՀՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 1,400.9 մլն դրամ, 2013 թվականին՝ 1,426.6 մլն դրամ):

Ծախսերը 2012 թվականին՝ 2011 թվականի հաստատվածի նկատմամբ, կնվազեն 4.1 % -ով, 2013 թվականին՝ 2012 թվականի նկատմամբ, կաճեն 1.7 %-ով, 2014 թվականին՝ 2013 թվականի նկատմամբ, կնվազեն՝ 2.7 %-ով:

Ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է միջոցառումների անցկացման ժամանակացույցով պայմանավորված ծրագրերի ավարտմամբ:

ՀՀ 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանգստի և սպորտի ոլորտի պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի՝ յուրաքանչյուր տարի 0.03%:

ՀՀ 2012-2014 թվականներին հանգստի և սպորտի ոլորտին ուղղվող հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է.

- 2013 թվականին «Չեսս» շախմատային ակադեմիա» հիմնադրամի աշխատողների

աշխատավարձերի բարձրացմամբ՝ 10 տոկոսով,

- 2014 թվականին նոր նախաձեռնությունների նախատեսմամբ (Սոչիում՝ ձմեռային օլիմպիական և Նան Ջինգում՝ ամառային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մասնակցության ապահովում) :

Հանգստի և սպորտի ոլորտի պետական ծախսերը 2012-2014 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող ծախսային ծրագրերի և նոր նախաձեռնությունների բերված են **10.9. աղյուսակում**։

Աղյուսակ 10.9. Հանգստի և սպորտի ոլորտի պետական ծախսերը 2012-2014 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող ծախսային ծրագրերի և նոր նախաձեռնությունների (մլն դրամ)

Ցուցանիշը	2012	2013	2014
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1439.7	1463.7	1424.4
Գոյություն ունեցող ծախսային ծրագրեր	1439.7	1463.7	1316.6
<i>Կրեակարար կշիռը ոլորտի ընդհանուր ծախսերի մեջ</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>92.4</i>
Նոր նախաձեռնություններ			107.8
<i>Կրեակարար կշիռը ոլորտի ընդհանուր ծախսերի մեջ</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>7.6</i>

10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

10.4.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.4.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ երիտասարդների (18-30 տարեկան) թիվը առ 01.01.2011 թվականը կազմել է 797311 մարդ, որն ընդհանուր բնակչության 24.4 %-ն է։

Երիտասարդական ոլորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են Երևանում և մարզերում երիտասարդական ծրագրերի իրականացմանը, երիտասարդ ընտանիքներին աջակցմանը, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը։

Երիտասարդական ոլորտի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդները և երիտասարդ ընտանիքները, Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունները, Լեռնային Ղարաբաղի և սփյուռքահայ երիտասարդները։

10.4.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

2009-2010 թվականներին իրականացված երիտասարդական ծրագրերն ուղղված էին ոլորտի կառավարման ապակենտրոնացմանը դեպի հասարակական սեկտոր, երիտասարդական քաղաքականության ինստիտուցիոնալ զարգացմանը, կառավարման համակարգի աշխատանքների թափանցիկության ապահովմանը և երիտասարդության համար իրականացվող ծրագրերում երիտա-

սարդության մասնակցության գործընթացի բարձրացմանը, ինչպես նաև ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Անհրաժեշտ է շեշտել նաև երիտասարդական քաղաքականություն իրականացնող սուբյեկտների համագործակցության ակտիվացումը տարբեր մակարդակներում, ՀԿ-ների, նախարարությունների, մարզպետարանների և միջազգային կառույցների հետ:

Իրականացված, հատկապես ռազմավարական նշանակության ծրագրերում, ընդգրկված են եղել թե տարբեր պետական կառավարման մարմինների, թե հասարակական կազմակերպությունների և թե միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2009-2010 թվականներին երիտասարդական ծրագրերի շրջանակներում իրականացվել է ՀՀ մարզերում մարզային երիտասարդական կենտրոնների աշխատանքների ապահովումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային հասարակական և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ: Նշված աշխատանքների նպատակն է՝ բարձրացնել մարզերում երիտասարդական պետական քաղաքականության արդյունավետությունը, այն հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը:

2009 թվական

Գործել է 2006 թվականին ստեղծված՝ Երիտասարդ առաջնորդների դպրոցը: Երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման առումով մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության իրազեկման և տեղեկատվության տրամադրման խնդիրներին: Հրատարակվել է երիտասարդական պետական քաղաքականության և երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող «Մենք, դուք, նրանք» երկշաբաթաթերթը: Հայերենով, ռուսերենով, անգլերենով գործել և պարբերաբար թարմացվել է Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության էլեկտրոնային կայքէջը, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ տեղական հեռուստաընկերությունների միջոցով, Արցախում երկու շաբաթը մեկ հեռարձակվել է «Անկախության սերունդ» երիտասարդական հեռուստահաղորդաշարը: Աջակցություն է ցուցաբերվել 40 երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, տաղանդավոր և շնորհալի երիտասարդ ստեղծագործողների, գիտնականների մասնակցությանը միջազգային տարբեր գիտաժողովներին, սեմինարներին, համաժողովներին:

Երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման և նրանց գործունեությանը պետական աջակցության ուղղությամբ 2009 թվականի ընթացքում քննարկվել են հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրերի հայտերը և փորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա ցուցաբերվել է համապատասխան աջակցություն շուրջ 19 կազմակերպությունների:

2010 թվական

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշմամբ հաստատված՝ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի թափանցիկությունն ապահովելու և հանրամատչելի դարձնելու նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ մշակել է և 30000 տպաքանակով հրատարակել է համապատասխան «Ուղեցույց», որտեղ շահառուները մանրամասն տեղեկացվում են ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներին, իրենց իրավունքներին և պարտականություններին: «Ուղեցույցը» բաժանվել է ծրագրի շրջանակներում ներգրավված բոլոր բանկային և վարկային կազմակերպություններին՝ ծրագրի շահառուներին տրամադրելու նպատակով:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը տեղադրվել է նաև համացանցում, մասնավորապես՝ **www.youth.am**, **www.abcfinance.am** կայքերում:

Դրամաշնորհային քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների իրականացման արդյունավետության, նոր կարող ուժերի ներգրավման, ծրագրերի թափանցիկության և իրականացման պետական և հասարակական վերահսկման մակարդակը բարձրացնելու նպատակով երիտասարդական քաղաքականության ոլորտի համագործակից հասարակական կազմակերպությունների և փորձագետների հետ 2009 թվականի ընթացքում քննարկումների արդյունքում որոշում կայացվեց դադարեցնել ծրագրային դրամաշնորհների տրամադրումը և 2010 թվականին ներդնել հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օնլայն) ռեժիմով ներկայացման, մրցութային ընտրության և դրամաշնորհների տրամադրման նոր՝ առավել հրապարակային, թափանցիկ և արդիական համակարգ, որը գործում է 2010 թվականի հուլիսի 1-ից:

2010 թվականի ընթացքում ֆինանսավորվել են երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված թվով 17 ծրագրեր՝ 20.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության երիտասարդական դաշտի զարգացման հեռանկարները, ինչպես նաև 2006-2009 թվականների «Երիտասարդ առաջնորդների դպրոցի» փորձը՝ 2010 թվականին կազմակերպվեց ծրագրի վերակազմակերպում: Ծրագրում սահմանվել են թիրախային խումբը, ընտրության գնահատման համակարգի չափանիշները և ուսուցման մեթոդաբանությունը, արդյունավետության գնահատման չափելի ցուցանիշները, գնահատվել են ռիսկերը, ըստ ուսուցման ուղղությունների բովանդակային փոփոխություն է կրել և նորացվել դասախոսական կազմը: Դպրոցի դասախոսական կազմում, մասնագետ դասախոսներից բացի, նախապես ձեռք

բերված համաձայնությամբ ընդգրկվել են նաև հասարակական ու քաղաքական գործիչներ, հանրային կառավարման ոլորտի ներկայացուցիչներ, գիտնականներ, մշակութային գործիչներ, լրագրողներ, հոգևոր հայրեր:

2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի է ունեցել «Եվրոպական երիտասարդական քարտ» ասոցիացիայի (ԵԵՔԱ) 26-րդ տարեկան համաժողովը: Ուշագրավ է այն փաստը, որ ԵԵՔԱ համաժողովը ԱՊՀ տարածքում առաջին անգամ տեղի է ունեցել Հայաստանում: Համաժողովին ներկա էին Եվրոպայի 38 երկրների ավելի քան 100 մասնակիցներ: «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդների տեղաշարժի վերաբերյալ մասնակի համաձայնագրին» Հայաստանի Հանրապետության միանալը կնպաստի երիտասարդների շարժունակության բարձրացմանը, կաջակցի երիտասարդական դաշտի եվրոպական ինտեգրացիային և միջազգային երիտասարդական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

2010 թվականին Ֆինանսական և կազմակերպչական աջակցություն է ցուցաբերվել միջազգային տարբեր գիտաժողովներին, սեմինարներին, համաժողովներին, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից երկրների երիտասարդության հարցերով խորհրդի 2010 թվականի աշխատանքային ծրագրով հաստատված՝ մասնակից երկրներում իրականացված միջոցառումներում ընդհանուր առմամբ ավելի քան 60 երիտասարդների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, տաղանդավոր և շնորհալի երիտասարդ ստեղծագործողների, գիտնականների մասնակցությանը:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության նախարարության հետ համագործակցությամբ կազմակերպվել և իրականացվել է մայիսյան հաղթանակներին նվիրված «Հաղթանակի հեծանվավազք ԼՂՀ ազատագրված տարածքներով» և «Քարվաճառի ամառային դպրոց» կրթաճանաչողական ծրագրերը:

Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների համագործակցությամբ մարզային երիտասարդական կենտրոններում իրականացվել են համատեղ ծրագրեր՝ ուղղված երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրների լուծմանը:

Երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման առումով մեծ ուշադրություն է դարձվել երիտասարդության իրազեկման և տեղեկատվության տրամադրման խնդիրներին: Հայաստանի հանրային հեռուստաալիքով «Ստորակետ» անվանումով հեռարձակվել է երիտասարդական հեռուստահաղորդաշարը, համացանցով հրապարակվել է երիտասարդության հիմնահարցերը լուսաբանող պարբերականը (eritasard.am)՝ դրանով ապահովելով լրատվության առավել

ժամանակակից և հասանելի ձևաչափ, հայերենով և անգլերենով գործել և պարբերաբար թարմացվել է ՀՀ երիտասարդական պետական քաղաքականությունը լուսաբանող համացանցային կայքը:

2010 թվականին իրականացվել է «Երիտասարդների գիտատեխնիկական և գիտահետազոտական նախագծերի ամենամյա մրցույթ» ծրագիրը, որը միտված է կիրառական և տեսական գիտության բնագավառներում երիտասարդների մտավոր ներուժի բացահայտմանը, նրանց կողմից կատարված աշխատանքների առաջընթացին և գործնական կիրառմանն ուղղված օժանդակությանը: Մրցույթի ամփոփման արդյունքում 12 լավագույն աշխատանքների հեղինակներ ստացել են դրամական պարգևներ 150.0 հազ. դրամի չափով:

Միջազգային համագործակցության ոլորտում ապահովվել է մասնակցությունը՝ Եվրախորհրդի Երիտասարդության ոլորտում միջկառավարական համագործակցության Եվրոպական համակարգող կոմիտեի (CDEJ) և «ԱՊՀ մասնակից-երկրների երիտասարդության հարցերով խորհրդի» նիստերին, Եվրամիության նոր հարևաններ ծրագրում, աշխատանքներ են տարվել մի շարք երկրների հետ երիտասարդական քաղաքականության բնագավառում երկկողմանի համաձայնագրերի կնքման ուղղությամբ:

Երիտասարդական ծրագրերի իրականացման նպատակով 2009-2010 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 231.7 և 181.4 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 280.7 մլն դրամ :

2009-2010 թվականներին իրականացվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ, այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, համապատասխանաբար՝ 7.7 և 3.8 մլն դրամ, 2011 թվականին նախատեսվում է հատկացնել 8.0 մլն դրամ:

2009 թվականից սկսած իրականացվում է Սփյուռքի երիտասարդության Հայաստան այցելություններ «Արի տուն» ծրագիրը, որին մասնակցել են Սփյուռքի տարբեր տարածաշրջաններից 14-25 տարեկան 313 երիտասարդներ: 2010 թվականին ծրագրի շրջանակներում մասնակիցների թիվը կազմել է 553 երիտասարդ:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության պարբերական այցելություններ Հայաստան» ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից 2009-2010 թվականներին հատկացվել է, համապատասխանաբար՝ 24.8 և 35.0 մլն դրամ: 2011 թվականին ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 75.0 մլն դրամ, մասնակիցների թիվը՝ 800 երիտասարդ:

10.4.1.3. Հիմնական խնդիրները

ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ»-ի և ՀՀ Կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած

«Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության» դրույթներում ամրագրված երիտասարդության ոլորտի առաջնահերթ խնդիրներն են՝

✧ երիտասարդական ոլորտի իրավական դաշտի ապահովում՝ ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի ստեղծման միջոցով,

✧ երիտասարդական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում և նրանց գործունեությանը պետական աջակցություն,

✧ երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացում, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպում, առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում,

✧ երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

✧ մարզերում երիտասարդական պետական քաղաքականության զարգացում (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում), նրանց լիակատար ինքնադրսևորման համար պայմանների ստեղծում,

✧ արտակարգ ընդունակություններ դրսևորած երիտասարդներին պետական աջակցության տրամադրում, երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում,

✧ այլ երկրների և հատկապես Արցախի և Սփյուռքի երիտասարդության հետ համագործակցության ապահովում :

10.4.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.4.2.1.Նպատակները

Երիտասարդության ոլորտում քաղաքականությունը ուղղված է հիմնական նպատակի իրականացմանը՝ ստեղծել սոցիալ-տնտեսական, իրավական-քաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպչական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության լիարժեք օգտագործելու համար:

Վերը նշված նպատակը ենթադրում է երիտասարդության ոլորտում հետևյալ գործողությունների իրականացումը.

◆ Խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում):

◆ Զարգացնել երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները:

♦ Նպաստել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը և երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ և կրթված երիտասարդություն:

- ♦ Աջակցել սփյուռքահայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանը:
- ♦ Աջակցել երիտասարդ ընտանիքներին :

10.4.2.2. Գերակայությունները

Հայաստանի Հանրապետության երիտասարդության ոլորտի 2012-2014 թվականների գերակայությունները բխում են Կայուն զարգացման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագրերից: Ոլորտի գերակա ուղղություններն են.

- Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցություն:
- Երիտասարդության զբաղվածության հնարավորությունների մեծացում:
- Երիտասարդության առողջ ապրելակերպի խթանում:
- Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն խթանում:
- Համահայկական և միջազգային նշանակության երիտասարդական միջոցառումների կազմակերպում, Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացում:
- Բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում աջակցություն երիտասարդ ընտանիքներին:
- Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացում:

10.4.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով երիտասարդության ոլորտին նախատեսվում է ուղղել 2012 թվականին՝ 450.8 մլն դրամ, 2013 թվականին՝ 453.2 մլն դրամ և 2014 թվականին՝ 441.2 մլն դրամ (<< 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 397.2 մլն դրամ, 2013 թվականին՝ 403.7 մլն դրամ):

Ծախսերը 2012 թվականին՝ 2011 թվականի հաստատվածի նկատմամբ, կաճեն 20%-ով, 2013 թվականին՝ 2012 թվականի նկատմամբ, 0.5 %-ով, իսկ 2014 թվականին՝ 2013 թվականի նկատմամբ, ծախսերը կնվազեն՝ 2.7 %-ով:

Միջնաժամկետ հատվածում երիտասարդության ոլորտի հատկացումների աճը պայմանավորված է.

- 2013 թվականին մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովման ծախսերի աճով,
- 2012-2014 թվականներին «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսագումարների համաֆինանսավորման իրականացմամբ:

2014 թվականին ծախսերի նվազումը պայմանավորված է «Աջակցություն Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը» ծրագրի ավարտմամբ:

ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

11.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ ագրոպարենային համակարգը 2005-2010 թվականների միջին տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 23,1%-ը, իսկ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է 17.6%: Ներկայում ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը՝ 96.8%-ը բաժին է ընկնում գյուղացիական տնտեսություններին, իսկ 3.2%-ը՝ գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններին:

Հաշվի առնելով, որ սննդամթերքի անվտանգությունը կարևորագույն խնդիրներից է, ՀՀ կառավարության 30.12.2010թ. թիվ 1730-Ն որոշման համաձայն սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարական գործառույթները վերապահվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության և համապատասխանության գնահատման, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների պետական վերահսկողական գործառույթներ:

11.1.1. Գյուղատնտեսության զարգացման միտումները

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից 2010թ. շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, սննդամթերքի անվտանգության համակարգի ու անտառային տնտեսության զարգացմանը:

Հանրապետության գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության և վարվող քաղաքականության արդյունքում մինչև 2009թ. գյուղատնտեսությունում ապահովվել է տնտեսական աճ: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ նաև գյուղատնտեսության վրա, չնայած նրան, որ ճյուղն ի տարբերություն տնտեսության մյուս ոլորտների դրսևորեց հարաբերական կայունություն: 2009թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 0.1%-ով: 2010թ. գյուղատնտեսությունում տնտեսական անկումը կազմել է

13.5%, ընդ որում բուսաբուծության ճյուղում՝ 20.3%, իսկ անասնապահության ճյուղում ապահովվել է տնտեսական աճ 0.3% -ով:

2010թ. տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 637.6 մլրդ դրամ, որի 61.6%-ը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 38.4%-ը՝ անասնապահությանը:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսվարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի (հացահատիկ, կարտոֆիլ), տնկիների, հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության և անասնաբուժական միջոցների մատակարարման, բարձրադիր գոտիներում հացահատիկային մշակաբույսերի տարածքների ընդլայնման և ագրոտեխնիկայի բարելավման ուղղությամբ:

11.1.2. Գյուղատնտեսության հիմնական խնդիրները

Գյուղատնտեսության առջև ծառայած են հետևյալ հիմնական խնդիրները.

- հանրապետությունում ցորենի ցանքատարածությունների տարեցտարի կրճատումը, բարձր վերարտադրության սերմացուների պակասը,

- ապօրինի գործողություններից անտառների պահպանությունը և պետությանը պատճառված վնասների նվազեցումը,

- գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացումը,

- կենդանիների վարակիչ հիվանդությունների ախտորոշումը, սննդամթերքի անվտանգության լաբորատոր փորձաքննության իրականացումը,

- գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բուսասանիտարական վիճակի բարելավումը, վնասակար օրգանիզմների քանակի նվազեցումը, առողջ և բարձր բերքի ստացումը,

- ՀՀ տարածքում վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելումը, դրանց օջախների վերացումը, կայուն համաճարակային վիճակի ապահովումը, ՀՀ տարածքը կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանումը և կենդանական ծագման հումքի ու սննդամթերքի արտադրության, վերամշակման, պահպանման, իրացման, ինչպես նաև ներմուծվող և արտահանվող բեռների անվտանգության ապահովումը,

- գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բուսասանիտարական մոնիտորինգի իրականացումը, կարանտին և առավել վնասակար օրգանիզմների տարածման արեալների ճշտումը, փորձանմուշների փորձաքննությունների միջոցով թաքնված ու նոր օջախների հայտնաբերումը, թունանյութերի լաբորատոր փորձաքննությունների կատարումը,

- հանրապետությունում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի արտադրության, վերամշակման, պահման, իրացման, դրանց ներկրման և արտահանման դեպքերում անվտանգության ապահովումը:

11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ

ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

11.2.1. Նպատակները

Գյուղատնտեսության բնագավառում 2012-2014թթ. վարվող քաղաքականությունը կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Գյուղատնտեսության ոլորտի նպատակները բխում են ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ընդհանուր նպատակներից, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության 04.11.2010թ. «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1476-Ն և 21.07.2005թ. «ՀՀ անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1232-Ն որոշումներով հաստատված ռազմավարական փաստաթղթերով:

Գյուղատնտեսության ոլորտում 2012-2014թթ. միջնաժամկետ ծրագիրը կապահովի հետևյալ կոնկրետ նպատակների իրականացումը.

- օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի բարեփոխումներ և կառավարման բարելավում,

- հողերի բերրիության պահպանում և բարձրացում,

- Հայաստանի Հանրապետության անտառային տարածքների պահպանությունն ապօրինի հատումներից,

- ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարում, գյուղացիական տնտեսություններին համապատասխան խորհրդատվական ծառայությունների մատուցման ապահովում,

- գյուղատնտեսության բնագավառում հողօգտագործողների պետական աջակցության տրամադրման համակարգի ներդրում և արմատավորում՝ գյուղատնտեսության ոլորտում 2009թ. ԱԱՀ-ի արտոնության դադարեցման հետևանքով գյուղատնտեսական արտադրանք արտադրողների տնտեսական գործունեության վրա հարկման ազդեցության մեղմում և գյուղացիական տնտեսություններին բարձր վերարտադրության սերմացուներով ապահովում,

- գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում, բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպում, դրանց տարածման շրջանակների նվազեցում,

- կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումներ, ներմուծվող և արտադրվող անվտանգ կենդանական ծագման մթերքներով բնակչության ապահովում, կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափացման կանխարգելում և պարենային ապահովության ու պարենային անվտանգության մակարդակի բարձրացում:

11.2.2. Գերակայությունները

Գյուղատնտեսությունում 2012-2014թթ. վարվող քաղաքականությունը կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության մակարդակի կրճատման համար:

Նշված քաղաքականության իրականացման համար նախատեսվում է 2012-2014թթ. պետական բյուջեով նախատեսվող ծախսերը նպատակաուղղել հետևյալ գերակա ուղղություններին.

- գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության իրականացում,
- անտառային տնտեսության պահպանման միջոցառումների իրականացում,
- անտառային պետական մոնիտորինգի իրականացում,
- գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ խորհրդատվությամբ ապահովում,
- հողերի բերրիության պահպանման և բարձրացման նպատակով հողերի ագրոքիմիական կազմի գնահատում,
- սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման աշխատանքների իրականացում,
- կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշում, կանխարգելում, վերացում, մարդկանց և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պաշտպանության աշխատանքների իրականացում,
- օտարերկրյա պետություններից կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխարգելելու ուղղությամբ վերահսկողության իրականացում,
- անասնաբուժության և սննդամթերքի անվտանգության ոլորտներին վերաբերվող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերի նույնականացում Եվրոմիության պահանջների չափանիշներին,
- «Անասնաբուժության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում,

- սննդամթերքի անվտանգությանն ուղղված լաբորատոր փորձաքննության իրականացում,
- անասնաբուժական միջոցառումների արդյունավետ կազմակերպում,
- տոհմային գործի արդյունավետ կազմակերպում,
- սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի արտադրության, վերամշակման, պահման, իրացման բոլոր փուլերում, ինչպես նաև ներմուծման և արտահանման դեպքերում անասնաբուժասանիտարական պահանջների նկատմամբ անվտանգության վերահսկողության իրականացում,
- հողատարածությունների վրա բուսասանիտարական վիճակի բարելավում, հողատարածություններում առավել վնասակար օրգանիզմների քանակությունների և պատճառած վնասների նվազեցում 70-85 %-ով և բարձր բերքի ապահովում,
- դաշտային հետազոտությունների միջոցով հանրապետությունում գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում, բույսերի առավել վնասակար օրգանիզմների հայտնաբերում:

11.3. ՈԼՈՐՏԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսության ոլորտում 2012-2014թթ. միջնաժամկետ ծրագիրը կապահովի հետևյալ ծրագրերի իրականացումը.

Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում.

Բուսաբուծության կայուն զարգացման տեսակետից կարևորագույն միջոցառումներից մեկը բույսերի նոր սորտերի փորձարկումների և դրանց արդյունքների հիման վրա արտադրության մեջ լավագույն սորտերի ներդրման կազմակերպումն է: Այդ աշխատանքներն ունեն շարունակական բնույթ և համապետական մասշտաբով ապահովում են հայրենական և արտերկրների սելեկցիոն կենտրոնների կողմից բուծված արդյունավետ սորտերի օգտագործման և այդ նվաճումների իրավական պաշտպանության խնդիրների լուծումը:

Այս ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռում կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործումը և ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրություն:

Նախատեսվող միջոցառումներն են՝

- սորտային նույնականացման աշխատանքների իրականացում,
- սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն,
- սերմնմուշների լաբորատոր փորձարկումների կազմակերպում.
- սորտային սերմադաշտերի ապրոբացիա:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 51.1 մլն դրամ, 54.3 մլն դրամ, 55.0 մլն դրամ:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ.

Ծրագրի իրականացումն ուղղված է գյուղատնտեսության ոլորտի հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով:

Ծրագրի իրականացման արդյունքում միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում ակնկալվում է ստանալ Հանրապետության 141 համայնքների հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող և պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ, մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված և կազմված երաշխավորագրեր:

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ՝ հողանմուշների նմուշառում,
- հողանմուշների և պարարտանյութերի լաբորատոր փորձաքննություններ և գնահատում,
- ագրոքիմիական քարտեզների կազմում և համայնքներին հանձնում,
- մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում և համայնքներին հանձնում:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը կրում է շարունակական բնույթ և յուրաքանչյուր համայնքի համար այն պետք է կատարվի 5 տարին մեկ անգամ՝ հաշվի առնելով, որ հողի բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող սննդատարրերի պարունակությունը էական փոփոխություն է կրում այդ ժամանակահատվածում:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 48.1 մլն դրամ, 51.7 մլն դրամ, 52.0 մլն դրամ:

Գյուղական խորհրդատվական ծառայություններ.

Ծրագրով նախատեսվում է 2012-2014թթ. շարունակել ագրարային տեխնոլոգիաների գնահատման և ցուցադրական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև գյուղական վայրերի բնակչությանը մատուցել գյուղատնտեսության ոլորտին վերաբերող խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է գյուղատնտեսության ոլորտում ձևավորել կայուն խորհրդատվական համակարգ, որը ֆերմերներին հնարավորություն կտա բարձրացնել գյուղմթերքների արտադրության ծավալները, որակը և կազմակերպվածությունը, ինչն էլ կհանգեցնի գյուղատնտեսական արտադրանքի իրացվելիության մակարդակի բարձրացմանը և նրանց եկամուտ-

ների ավելացմանը: Ծրագրի համար նախատեսված ծախսերն ուղղվելու են տեղական խորհրդատուների աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովության համար նախատեսված ծախսերի, Գյուղական խորհրդատվական մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-երի) և Գյուղական խորհրդատվական հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ-ի) աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովության համար նախատեսված ծախսերի և այլ ընթացիկ ծախսերի վճարմանը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 2012թ.՝ 293.1 մլն դրամ, իսկ 2013թ. և 2014թ.՝ 313.8 մլն դրամ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն.

Ծրագրի նպատակն է հանրապետության ագրարային ոլորտի առաջնահերթ կարևորություն ունեցող ենթաճյուղերից մեկում՝ բուսաբուծության ոլորտի սերմնաբուծության բնագավառում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմամբ նպաստել ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, հացահատիկային մշակաբույսերի տեղական արտադրության ավելացմանը, ներմուծման փոխարինմանը և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Ծրագրով նախատեսվում է 2012 և 2013 թվականներին արտերկրից և տեղական սերմարտադրողներից, իսկ 2014թ. միայն տեղական սերմարտադրողներից ձեռք բերել ցորենի բարձր վերարտադրության սերմացու և 1:2 փոխհարաբերությամբ հետ վերադարձնելու պայմանով տրամադրել տնտեսավարող սուբյեկտներին:

Ծրագրի իրականացումը կապահովի լրացուցիչ բերքի ստացում, որը կնպաստի հանրապետություն ներկրվող ցորենի ծավալների նվազեցմանը և կբարձրացնի հողօգտագործողների իրական եկամուտները:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 550.0 մլն դրամ:

Անտառապահպանական ծառայություններ.

Ծրագիրն իրականացվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջոցով, որի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառպետֆոնդի տարածքը կազմում է ավելի քան 345.8 հազ. հա (ընդհանուրի 80%-ը), որտեղ անտառտնտեսվարում իրականացնելու համար գործում են 19 անտառտնտեսության մասնաճյուղեր:

Անտառային տարածքները պահպանելու համար անտառշինական նախագծերի համաձայն ստեղծված են 84 անտառպետություններ և 516 պահաբաժիններ, որոնք ի պահ են տրված նույնքան անտառապետերի և անտառապահների: Միջին հաշվով յուրաքանչյուր անտառապահի ի պահ է տրված շուրջ 670.0 հա անտառային տարածք: Սույն բաղադրիչով նախատեսված ծախսերն

ուղղվելու են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովության համար նախատեսված ծախսերի վճարմանը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 2012թ.՝ 708.7 մլն դրամ, իսկ 2013թ. և 2014թ.՝ 779.6 մլն դրամ:

Անտառային պետական մոնիթորինգի իրականացում.

Ծրագիրն իրականացվում է «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և ուղղված է ՀՀ անտառային տարածքների պահպանության, վերարադրության, պաշտպանության ընդհանուր նպատակի կատարմանը՝ անտառային պետական մոնիտորինգի միջոցով:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 2012թ.՝ 54.0 մլն դրամ, իսկ 2013թ. և 2014թ.՝ 58.2 մլն դրամ:

Բույսերի պաշտպանության միջոցառումներ.

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք բաղադրիչով.

1. Պայքար մկնանման կրծողների դեմ - Այս բաղադրիչով նախատեսվում է գյուղական համայնքներին անհատույց տրամադրել մկնասպան քիմիական միջոց՝ գյուղացիական տնտեսությունների միջոցներով մկնանման կրծողների դեմ պայքար կազմակերպելու նպատակով, ինչպես նաև կենտրոնացված կարգով պայքար իրականացնել տրակտորային ցրիչներով:

2. Պայքար մորեխների դեմ - Ծառայությունը կիրականացվի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններում, խոտհարքներում, արոտներում և այլ հողատեսքերում: Միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում նախատեսվում է իրականացնել պայքար ինչպես կենտրոնացված կարգով, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների միջոցով՝ նրանց անհատույց հատկացնելով համապատասխան բույսերի պաշտպանության միջոց:

3. Պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ - Այս բաղադրիչով նախատեսվում է հանրապետության անտառային տարածքներում ավիացիայի միջոցով իրականացնել պայքարի կենտրոնացված ծառայություններ:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 150.0 մլն դրամ:

Արհեստական սերմնավորման միջոցառումներ.

Հաշվի առնելով տոհմաբուծության զարգացման գործընթացում արհեստական սերմնավորման միջոցառումների կարևորությունը, ծրագրի շրջանակներում նախատեսվում է պահպանել տավարի տարբեր ցեղերի բարձրարժեք ցուլերից ստացված և խորը սառեցված սերմնահեղուկի բանկը:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա, օգտագործելով բարձր մթերատու ցեղերի գենետիկական ներուժը, բարելավել հանրապետությունում բուծվող գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշները և բարձրացնել կովերի կաթնատվությունը:

Ծրագրի իրականացումը միաժամանակ հնարավորություն կտա սերմնավորվող կենդանիների մոտ կրճատել բնական զուգավորման ժամանակ փոխանցվող մի շարք վարակիչ հիվանդությունների տարածումը և նվազեցնել ստերջությունը:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 5.7 մլն դրամ, 5.1 մլն դրամ, 4.5 մլն դրամ:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում.

Ղեկավարվելով «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով և կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի հրահանգներով հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացվում են ամենամյա հակաանասնաճարակային կանխարգելիչ պարտադիր միջոցառումներ:

Ծրագրով նախատեսվում է միջնաժամկետ ժամանակահատվածում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, պաստերելյոզ, խոզերի դասական ժանտախտ, մեղունների վարուստոզ) դեմ պայքարի հակաանասնաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

Ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն հակաանասնաճարակային վիճակի պահպանմանը և ամրապնդմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովմանը, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությանը, օտարերկրյա պետություններից կենդանիների հատուկ վտանգավոր հիվանդությունների ներթափանցումից ՀՀ տարածքի պաշտպանությանը, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատմանը:

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 2012թ.՝ 1,000.0 մլն դրամ, իսկ 2013թ. և 2014թ.՝ 1,051.0 մլն դրամ:

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացում.

Ծրագրով նախատեսվում է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ՀԿԱ վարչության անասնահամաճարակային միջոցառումների և կարանտինային սահմանափակումների իրականացմանն աջակցող դասակի միջոցով անասնահամաճարակի բռնկումների դեպքերում կարանտինային-ոստիկանական կետերում իրականացնել կարանտինային սահմանափակման ծառայու-

թյուններ (գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունները օջախներում լուրջազգացնելու, հետագա տարածումը կանխելու միջոցառումներ):

ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 2012թ.՝ 40.2 մլն դրամ, իսկ 2013թ. և 2014թ.՝ 44.2 մլն դրամ:

Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում.

Ծրագրի նպատակն է հանրապետությունում բույսերի առավել վնասակար և կարանտին օրգանիզմների արեալի ճշտում, նրանց զարգացման ու բազմացման կանխատեսում, կարանտին օրգանիզմներով վարակված նոր օջախների հայտնաբերում, ներթափանցման կանխարգելում, հանրապետությունում վաճառվող ստուգված, ախտորոշված ու որակյալ թունանյութերի ապահովում:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ ծառայությունները.

1. Բուսասանիտարական մոնիտորինգ - Այս բաղադրիչով նախատեսվում է դաշտային հետազոտությունների միջոցով հանրապետությունում բույսերի առավել վնասակար և գրանցված սահմանափակ տարածում ունեցող կարանտին օրգանիզմների տարածման արեալի ճշտում և նոր օջախների հայտնաբերում, կանխարգելիչ ու ախտորոշիչ ծառայությունների մատուցում, մասնագիտական աջակցություն:

2. Փորձանմուշների փորձաքննություն - Այս բաղադրիչով կիրականացվեն փորձանմուշների փորձաքննություններ կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով:

3. Թունանյութերի լաբորատոր փորձաքննություն – Հանրապետության վաճառքի կետերում կատարված նմուշառումների հիման վրա կիրականացվեն թունանյութերի ազդող նյութի որոշման լաբորատոր փորձաքննություններ և կտրամադրվեն որակի վերաբերյալ արձանագրություններ:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 72.1 մլն դրամ, 78.0 մլն դրամ, 78.2 մլն դրամ:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում.

Ծրագրի իրականացման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը:

Ծրագրի իրականացման արդյունքում կբացահայտվի հակահամաճարակային միջոցառումների արդյունքում պատվաստված կենդանիների վարակամերժության (իմունայնության) մակարդակը և կկատարվի գյուղատնտեսական կենդանիների ախտորոշումը լաբորատոր մեթոդներով:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 190.9 մլն դրամ, 209.0 մլն դրամ, 221.1 մլն դրամ:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն.

Սույն ծրագրի նպատակն է ազգային և տարածաշրջանային մակարդակներով բուսասանիտարական կայուն վիճակի և բնակչությանն առողջ սննդամթերքով ապահովելու գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Հանրապետության պաշտոնական անվանացանկում ընդգրկված են 81 պոտենցիալ կարանտին վնասակար օրգանիզմներ: Սույն ծրագրով նախատեսվում է միջնաժամկետ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում իրականացնել 20 վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցերի մշակում և 500 օրինակից տպագրում: Միաժամանակ ծրագրով նախատեսվել է իրականացնել նաև բուսասանիտարիայի տեսչության աշխատակիցների (42 հաստիքային միավոր) վերապատրաստման գործընթացը:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 5.8 մլն դրամ:

Սննդամթերքի անվտանգությանն ուղղված ծառայություններ.

Ծրագրով նախատեսվում է համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքների հանրապետությունում կենդանական և բուսական ծագմամբ սննդամթերքի պարտադիր փորձաքննության և բուսասանիտարական ստուգման իրականացում: Նշված գործառույթն իրականացվելու է սննդամթերքի արտադրության և իրացման կետերից փորձանմուշներ վերցնելու և դրանք լաբորատոր փորձաքննության ենթարկելու միջոցով:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 10.0 մլն դրամ:

ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

12.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1. Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը

Բնապահպանության ոլորտի խնդիրն է հնարավորինս առավելագույն չափով նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները: Կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն, արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունքն են, և դրանք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են:

Ուշադրության արժանի են նաև վտանգավոր քիմիական նյութերը, կայուն օրգանական աղտոտիչները, արտադրության պրոցեսում առաջացող վտանգավոր արտադրական թափոնները, ինչպես նաև մարդու կենսագործունեության հետևանքով առաջացած կենցաղային թափոնները, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը և որոնց գործածությունը պահանջում է կառավարման լուրջ մոտեցում:

Հասարակության կայուն զարգացումը, ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության ներդաշնակ երկմիասնական գործունեությունը պարտադիր կերպով ենթադրում է համապատասխան կառավարման համակարգի առկայություն, որը հասարակական գիտակցության բարձր աստիճանի, օրենսդրական կատարյալ դաշտի, օրենքների ու օրինականության գերակայության պայմաններում կոչված է ապահովելու երկրի ներսում բնօգտագործման և բնապահպանության նկատմամբ պետական-հասարակական վերահսկողության ու կարգավորման հակակշիռների գործուն մեխանիզմների արդյունավետ աշխատանքը:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման արդյունքների շահառուները՝ Հայաստանի Հանրապետության բնակչությունն ու միջազգային հանրությունն է, որոնց համար երկրում և տարածաշրջանում ստեղծվում է /ապահովվում է բարենպաստ/ անվտանգ շրջակա միջավայր:

Բնապահպանության ոլորտում պետության կողմից իրականացվում են հետևյալ ծառայությունները.

- Սևանա լճի համալիր ծրագիր,
- Կենսաբազմազանության պահպանություն,
- Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի աշխատանքներ,

- Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում,
- Շրջակա միջավայրի մոնիտորինգ,
- Զրային ռեսուրսների պահպանություն:

	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Բնապահպանության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
2.	Զրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և պահպանման համակարգում, այդ ոլորտի քաղաքականության մշակում և իրականացում	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
3.	Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
4.	Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայություններ	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
5.	Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովող պայմանների սահմանում	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
6.	ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում	ՀՀ համապատասխան համայնքների բնակչություն	Ամբողջությամբ

Նշված ծառայությունները մատուցվում են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների և նախարարության ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների կողմից, որոնք են.

1. «Սևան» ազգային պարկ
2. «Դիլիջան» ազգային պարկ»,
3. «Արգելոցապարկային համալիր»
4. «Շիկահող» պետական արգելոց»,
5. «Խոսրովի անտառ» պետական արգելոց»,
6. «Արփի լիճ» ազգային պարկ»,
7. «Արևիկ» ազգային պարկ»,
8. «Տեղեկատվական վերլուծական կենտրոն»,
9. «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն»,
10. «Թափոնների ուսումնասիրության կենտրոն»,
11. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն»:

12.2. Վերջին երկու տարիներին ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանության ոլորտի զարգացումն ընթացել է բյուջետային հատկացումների և միջազգային ֆինանսական/բնապահպանական կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների ընձեռած հնարավորությունների շրջանակներում, նպատակաուղղված լինելով՝

- կանխարգելել կամ նվազեցնել շրջակա միջավայրի հետագա աղտոտումը,
- պահպանել կենսաբազմազանությունը,
- ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռությունն ապահովող պայմանները,
- չվերականգնվող բնական ռեսուրսների գծով ապահովել դրանց բնական և արդյունավետ օգտագործումը:

Բնագավառի զարգացումն ընթացել է համապատասխան հաստատված ծրագրերի, տնտեսության զարգացմանը զուգընթաց և համահունչ այն բարեփոխումներին, որոնք կատարվել են ՀՀ-ում տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում և բնագավառներում:

Վերջին տարիներին, ելնելով սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունից, իրականացվել են բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի կատարելագործման և արդիականացման (թարմացման) աշխատանքներ՝ այդ թվում ընդունվել են մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող օրենսդրական նախագծեր և ծրագրեր, ապահովվել է դրանց կիրարկման գործընթացը՝ համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակման և իրականացման միջոցով: Այդ ամենը երկրում բարձրացրել է վարվող բնապահպանական քաղաքականության արդյունավետությունը՝ այն դարձնելով ավելի հասցեական և գործուն:

Օրինաստեղծ աշխատանքների արդյունքում՝

ա. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և համապատասխան իրավական ակտերում կատարված փոփոխությունների հիման վրա գործում է մթնոլորտի պահպանության, մասնավորապես արտանետումների նորմավորման էլեկտրոնային համակարգը, որը ինտերնետի միջոցով հնարավորություն տվեց պարզեցնել նախագծերի ներկայացման և արտանետումների թույլտվություններ ստանալու ընթացակարգը, պակասեցնել վարչարարությունը և թափանցիկ դարձնել ինչպես տնտեսվարող սուբյեկտների բնապահպանական գործունեությունը, այնպես էլ այդ գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունն, արդյունքում՝ 2010թ. ընթացքում նախարարություն է ներկայացվել 210 ՍԹԱ նախագիծ, որից 90-ը կամ 42.8 տոկոսը էլեկտրոնային տարբերակով:

բ. ՀՀ կառավարության կողմից 20.01.2010թ հաստատվել են «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N71-Ն և N72-Ն որոշումները: Խորհրդային ժամանակահատվածից հետո առաջին անգամ իրականացվել է ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքերի հրատարակումը 500 տպաքանակով,

գ. ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիան (27.10.2010թ. ԱԺՈ-246-Ն որոշում),

դ. իրավական դաշտի արդիականացման և կատարելագործման արդյունքում պարզեցվել է կենդանիների արտահանման ընթացակարգերը, որի արդյունքում զգալի աճել են արտահանման ծավալները:

Հաշվետու տարիները հիշարժան են նաև կենսաբազմազանության պահպանության և հատուկ պահպանվող տարածքների զարգացման տեսանկյունից:

ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումների արդյունքում ընդլայնվել են բնության հատուկ պահպանվող տարածքները, այդ թվում ստեղծվել են «Արփի լիճ» և «Արևիկ» ազգային պարկերը, «Ջերմուկի ջրաբանական», «Հանքավանի ջրաբանական», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրերը: Դրա շնորհիվ Հայաստանի պահպանվող տարածքների (ԲՀՏՊ) ընդհանուր մակերեսն ավելացել է 76.250 հա-ով: Ներկայում Հայաստանի ԲՀՏՊ-ների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 374 հազ. հա, որը հանրապետության տարածքի շուրջ 12%-ն է, ինչը մոտ է միջազգայնորեն ընդունված ստանդարտներին:

Վերջին տարիների բյուջետային բավարար ծավալների հատկացումները նպաստել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով պետական պատվերով նախատեսված միջոցառումների ծրագրավորված ծավալներով և որակյալ կատարմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացված գերակա ծրագրերն են՝

Ա.1. Հարավային Կովկասի տարածաշրջանում էկոտարածաշրջանային բնապահպանական ծրագիր. Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) տարածաշրջանում պահպանվող տարածքների ստեղծում ծրագրի իրականացումը՝

1. ավարտվել են «Արփի լիճ» ազգային պարկի քարտեզագրման, արտաքին սահմանների և ներքին գործառնական գոտիների սահմանների նկարագրման աշխատանքները, որոնք սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը.

2. ավարտվել են «Արփի լիճ» ազգային պարկի գրասենյակի, այցելուների կենտրոնի, հյուրատան, ավտոտնակների և պահակատան շինարարական աշխատանքները և ներկա փուլում իրականացվում են ներքին հարդարման աշխատանքները.

3. ՀՀ բնապահպանության նախարարության և Գերմանիայի KfW բանկի կողմից հաստատվել են «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու համայնքների զարգացման առաջնահերթ փոքր ծրագրերը:

Ա.2. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրի տակ մնացող անտառածածկ տարածքների ծառաթփային բույսերի մաքրումը՝

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրով նախատեսված մաքրման աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման նպատակով 2010 թվականի 3-րդ եռամսյակում գնվել է «Վոթերմաստեր կլասիկ III» տիպի ֆիննական արտադրության ջրածածկ և ճահճացած տարածքներում աշխատելու համար նախատեսված հատուկ հողահան բազմաֆունկցիոնալ էքսկավատոր: Նոյեմբեր ամսվա սկզբին Սևանա լճում իրականացվել է մասնագետների վերապատրաստում և տեխնիկայի փորձարկում: Նոր տեխնիկայով և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա ընդհանուր առմամբ 2010 թվականին մաքրվել է 174 հեկտար ջրածածկ տարածք:

Ա.3. Կիոտոյի արձանագրության մաքուր զարգացման մեխանիզմով (ՄՁՄ) ծրագրի իրականացումը՝

Մեքսիկայի Կանկուն քաղաքում կայացած Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակալին կոնվենցիայի Կողմ երկրների 16-րդ համաժողովում կազմակերպված ՄՁՄ Լիազորված ազգային մարմինների (ԼԱՄ) տասներորդ Ֆորումի ժամանակ Հայաստանին Կոնվենցիայի քարտուղարության կողմից շնորհվել է «Տարվա լավագույն Լիազորված ազգային մարմին» տիտղոսը՝ ի ճանաչում երկրի ԼԱՄ-ի կողմից իրականացված աշխատանքների՝ իրազեկության բարձրացման և Մաքուր զարգացման մեխանիզմում արդյունավետ մասնակցության համար:

Ա.4. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիր

Լճի ջրի մակարդակի բարձրացման դինամիկայի ուսումնասիրություն

Շարունակվել է Սևանա լճի մակարդակի բարձրացման կայուն միտումը (2008թ.՝ 6 սմ, 2009թ.՝ 38 սմ, 2010թ.՝ 47 սմ):

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	Ցուցանիշների փաստացի ծավալները			
			2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
1	2	3	4	5	6	7
1	Արփա-Սևան թունելով լիճ տեղափոխվող ջրաքանակ	մլն.խմ	178.4	192.4	203.8	237.0

2	Ոռոգման նպատակով լճից բաց թողնված ջրի չափաքանակ	մլն.խմ	152.2	303	126.1	157.2
3	Լճի մակարդակը 31.12.2010թ. դրությամբ	մ	1898.79	1898.85	1899.23	1899.70

Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում

Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրման գծով 2010թ. «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվել է Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների վերականգնում: Վարդենիկ գետի գետաբերանի մոտակայքում նոյեմբեր ամսին բաց է թողնվել ամառային իշխան ենթատեսակի ընդհանուր թվով 192 հազ. հատ 3 գրամից ավելի քաշով մանրածուկ: 2007-2010թթ. ժամանակահատվածում Սևանա լիճ է բաց թողնվել շուրջ 1 մլն. հատ գեղարքունի և ամառային իշխանի մանրածուկ:

Սևանա լճի ձկան պաշարների համալրման 2006 -2010թթ. դինամիկան

	Սևանա լիճ մանրածուկ բացթողնման ծավալները (հազ.հատ)					
	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2010թ. ցուցանիշը 2009թ. ցուցանիշի նկատմամբ (%)
ԸՆԴԱՄԵՆԸ						
ՄԱՆՐԱԶՈՒԿ այդ թվում՝	134.9	174.0	248.7	307.0	192.0	62.5
ամառային իշխանի	15.5	57.5	146.0	150.0	192.0	128.0
գեղարքունի ձկան	119.4	116.5	102.7	157.0	0	0

Ա.5. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական վերազինում.

Ծրագրի շրջանակներում ներդրված ավտոմատ դիտակետերի գործարկման արդյունքում 3.4 անգամ ավելացել են օդային ավազանի աղտոտման մոնիտորինգային դիտարկումների ծավալը:


Մակերևութային ջրերի մոնիտորինգային աշխատանքներ իրականացվել են հանրապետության 39 գետերի, Ախուրյանի, Արփի լճի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան լճի և Սևանա լճի 130 դիտակետում, որտեղ պետական պատվերով ընդհանուր առմամբ կատարվել են ավելի քան 52.0 հազ.հատ անալիզ:

Ա. 6. Տեսչական – վերահսկողական աշխատանքներ

«Ք բնապահպանության նախարարության ամենօրյա ուշադրության կենտրոնում է եղել վճարների և ոչ հարկային եկամուտների գծով բյուջետային մուտքերի կատարման, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերի ապահովմանը նպատա-

կաուղղված այդ վճարների վճարման օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառման և վերահսկման գործընթացը:

Բնապահպանական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի դինամիկան 2004-2010թթ. /մլն.դրամ/



Արդյունավետ իրականացվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերի ապահովմանը նպատակաուղղված այդ վճարների վճարման օբյեկտ համարվող փաստացի ծավալների հաշվառման և վերահսկման գործընթացը: Ըստ 2010թ. տվյալների կանխատեսված գանձման ենթակա գումարների 2520.9 մլն. դրամ ցուցանիշը գերակատարվել է 183.2 տոկոսով և փաստացի մուտքերը կազմել են ավելի քան 4618.2 մլն. դրամ՝ 2009թ. 2316.8 մլն. դրամի դիմաց:

Ա 7. Միջազգային համագործակցություն

Շարունակվել է բնապահպանական ոլորտում համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների /ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր - UNEP, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր - UNDP, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով - UNECE, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն - ՏՀԶԿ/OECD, ԵԱՀԿ, Եվրամիություն, Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն, նաև Գլոբալ բնապահպանական հիմնադրամ, և այլն/, օտարերկրյա պետությունների հետ, ինչպես նաև միջազգային կոնվենցիաների և նախաձեռնությունների շրջանակներում:

12.3. Հիմնական խնդիրները

1. Միջնաժամկետ ժամանակահատվածում ոլորտի գծով հիմնական խնդիրներն ամրագրված են ՀՀ կառավարության կողմից հաստատված բնապահպանության ոլորտի ռազմավարական (հայեցակարգային) նշանակություն ունեցող ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների

երկրորդ ազգային ծրագրերում (2008թ.) և դրանք համահունչ են Կայուն Զարգացման ծրագրում ներառված հրատապ այնպիսի հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են՝

- Սևանա լճի հիմնախնդիր,
- կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանություն,
- անտառային ռեսուրսների դեգրադացիա,
- հողերի պահպանության խնդիր,
- պայքար անապատացման գործընթացների դեմ,
- ջրային ռեսուրսների պահպանություն,
- արդյունաբերական և կենցաղային թափոնների կառավարում,
- մարդու առողջության վրա բացասական ներգործության նվազեցում:

2. Հանրապետության տնտեսական աճի կայուն միտումների պայմաններում շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության խնդիրները ներկա փուլում պետք է դիտարկվեն նաև հետագա զարգացման համար բնական պաշարների մատչելիության, հավասարակշռված օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման կանխման երաշխիքների տեսակետից:

Հանրապետության ինտեգրումը տարածաշրջանային և միջազգային համագործակցության համակարգերում նոր պահանջներ է առաջադրում շրջակա միջավայրի կառավարմանը, ինչպես անդրսահմանային ներգործության վերահսկման հստակ մեխանիզմների ստեղծումը, այնպես էլ վտանգավոր և թունավոր թափոնների, գենետիկական մոդիֆիկացված օրգանիզմների տեղափոխումը: Շրջակա միջավայրի կառավարման արդի ժամանակաշրջանի խնդիրները պահանջում են ոլորտի կառավարման մեխանիզմների, ինստիտուցիոնալ կառույցների, միջճյուղային համագործակցության, բնապահպանական իրավիճակի գնահատման և ռիսկի գործոնների կանխարգելման գործուն մեխանիզմների մշակում տարածաշրջանային և միջազգային համագործակցության ամրապնդման ճանապարհով:

12.4. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ Ժամանակահատվածում

12.4.1. Նպատակները

2012-2014 թթ. զարգացման կարևորագույն նպատակներն են՝

- ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած բնապահպանական ծրագրերի իրագործումը,

- բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման ծավալների աստիճանական ավելացումը,

- զարգացման բնապահպանական խոչընդոտների կանխարգելումը,

- բնական ռեսուրսների հաշվառման բարելավումը,
- շրջակա միջավայրի մոնիտորինգի բարելավումը,
- տեսչական վերահսկողության բարելավումը:

12.4.2. Գերակայությունները

Ծրագրվող ժամանակահատվածում բնագավառի զարգացման հիմնական գերակայություններն ամրագրված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրի «4.3.10. Բնապահպանություն» բաժնում՝ այն է ելնելով երկրի անվտանգության ու կայուն զարգացման շահերից, ինչպես նաև առաջնորդվելով միջազգային ինտեգրման ու ներքին բարեփոխումների ռազմավարությունից՝

- շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,

- բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

- շրջակա միջավայրի վիճակի դիտարկումների, ուսումնասիրությունների, կանխատեսումների, դրանց ազդարարման և արձագանքման ժամանակակից համակարգի ստեղծումը:

Առանձնահատուկ կարևորություն է տրվելու Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը, Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրերի ամբողջական իրականացմանը, անտառապատման և անտառավերականգնման ծավալների աճի ապահովմանը, անտառների ապօրինի հատումների կանխմանը, բնության հատուկ պահպանվող տարածքների պետական պահպանությանը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանությանը:

12.4.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից ելնելով 2012-2014թթ. ՄԺԾԾ-ի ծախսերի մակարդակի վրա ազդող հիմնական գործոն է հանդիսանում 2012-2014թթ. պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման առանձին ծախսատեսակների ֆինանսանսավորման գծով ուղղվող բյուջետային հատկացումների աճը:

12.5. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում (համակարգում)

իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

12.5.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում շարունակվելու են ըստ բնագավառների ներքոհիշյալ ծրագրերի կատարումը.

Ա. «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի կատարմանը նպատակաուղղված Սևանա լճի համալիր ծրագրի շրջանակներում իրականացման ենթակա միջոցառումների և ենթածրագրերի կատարման ապահովում.

Ա1. Սևանա լճում արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության շրջանակներում «Ձկան պաշարների համալրման» ծրագրի իրականացումը նախատեսում է գեղարքունի և ամառային իշխան տեսակների մանրաձկան գնում և բացթողում Սևանա լիճ, այդ թվում՝ յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար՝ գեղարքունի (5 գրամից ավելի) 167.0 հազ. հատ և ամառային իշխանի /3 գրամից ավելի/ 200.0 հազ. հատ մանրաձկներ: Այդ նպատակով 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել 60.0 մլն դրամ:

Ա2. Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառման նպատակով շարունակվելու է «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառում» ծրագրի իրականացումը, այդ թվում՝

- Սևանա լճի ձկների (սիգի, կարպի, իշխանի) ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում՝ յուրաքանչյուր տարին 1 անգամ,

- Սևանա լճի խեցգետնի պաշարների ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում՝ յուրաքանչյուր տարին 1 անգամ:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել 7.53 մլն դրամ:

Ա3. Հայաստանի բնապահպանական խնդիրների շարքում առանձնակի կարևորվում է լճի ջրային պաշարի պահպանության և համալրման վերջին տարիների ջանքերը և եղանակային բարենպաստ պայմաններն ապահովել են ջրի մակարդակի բարձրացման կայուն միտումներ՝ 2001-2010թթ. այն կազմել է 338 սմ: Ջրի մակարդակի բարձրացումը միաժամանակ ավելի հրատապ է դարձրել ավիամերձ տարածքների կառավարման թերությունների վերացման անհրաժեշտությունը՝ ջրածածկման ենթակա տարածքներում բուսածածկի հեռացումը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է յուրաքանչյուր տարի՝ շուրջ 300 հա մաքրման աշխատանքների կատարում, որի իրականացման համար 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել 125.4 մլն դրամ:

Բ. Ջրային ռեսուրսների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի ծրագրի շրջանակներում նախատեսում է իրականացնել ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարում, այդ թվում՝

- ռեժիմային դիտարկումներ այդ թվում՝ ջրի մակարդակի չափում տարեկան 792 հատ, ջրի ծախսի չափում՝ տարեկան 4896 հատ, ջրի ջերմաստիճանի չափում՝ տարեկան 5040 հատ, ջրի նմուշառում և քիմիական անալիզ՝ տարեկան 46 հատ,

- հիդրոերկրաբանական մոնիտորինգի արդյունքների ամփոփ հաշվետվության կազմում՝ յուրաքանչյուր տարվա համար 1 հաշվետվություն:

Նշված աշխատանքների իրականացման համար 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 18.13 մլն. դրամ, 19.12 մլն. դրամ և 19.78 մլն. դրամ:

Գ. Կենսաբազմազանության պահպանության բնագավառում

Ծրագրավորվող ժամանակահատվածում բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունն ապահովող ծրագրերին 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 491.1 մլն. դրամ, 527.1 մլն. դրամ և 538.4 մլն. դրամ, այդ թվում երեք տարվա հանրագումարային ֆինանսավորման ծավալներն ըստ համապատասխան տարածքների կազմելու են՝

1) «Սևան» ազգային պարկի գծով՝	565.6 մլն. դրամ,
2) «Դիլիջան» ազգային պարկի գծով՝	244.6 մլն. դրամ,
3) Արգելոցապարկային համալիրի գծով՝	243.5 մլն. դրամ,
4) «Խոսրովի անտառ» պետական արգելոցի գծով՝	243.4 մլն. դրամ,
5) «Շիկահող» պետական արգելոցի գծով՝	156.5 մլն. դրամ,
6) «Արփի լիճ» ազգային պարկի գծով՝	31.1 մլն. դրամ,
7) «Արևիկ» ազգային պարկի գծով՝	71.9 մլն. դրամ:

Դ. Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի աշխատանքներ

Շրջակա միջավայրի վիճակի մոնիտորինգի ծրագիրն ուղղված է մթնոլորտային օդի և մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացմանը:

Նախատեսվում է իրականացնել՝

- ջրային օբյեկտների մոնիտորինգ 5-գոտում, 55 ջրային օբյեկտներում յուրաքանչյուր տարվա համար՝ շուրջ 40.0 հազ. ցուցանիշ /քիմիական որակը, բաղադրությունը որոշող արդյունքներ/,

- մթնոլորտային օդի մոնիտորինգ, պասիվ նմուշառում՝ յուրաքանչյուր տարվա համար՝ շուրջ 511.4 հազ. ցուցանիշ /քիմիական որակը, բաղադրությունը որոշող արդյունքներ/,

- Արաքս գետ աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգ՝ յուրաքանչյուր տարվա համար՝ 2376 ցուցանիշ /քիմիական որակը, բաղադրությունը որոշող արդյունքներ/,

- Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիտորինգ՝ յուրաքանչյուր տարվա համար՝ 143525 ցուցանիշ /քիմիական որակը, բաղադրությունը որոշող արդյունքներ/,

- «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման» համատեղ /EMEP/ ծրագրի շրջանակներում Հայաստանի օդի անդրսահմանային աղտոտման մոնիտորինգ՝ յուրաքանչյուր տարվա համար՝ 23932 ցուցանիշ /քիմիական որակը, բաղադրությունը որոշող արդյունքներ/:

Նշված աշխատանքների իրականացման համար 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 112.3 մլն. դրամ, 119.1 մլն. դրամ և 121.2 մլն. դրամ:

Ե. Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքներ

Ծրագրվող ժամանակահատվածում «Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայություններ» ծրագիրը կիրականացվի ելնելով Օրհուսի Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակներից, այդ թվում՝

- նախատեսվում է ՀՀ ԲՆ պաշտոնական կայքի սպասարկում, յուրաքանչյուր տարի համապատասխանաբար՝ 3-ական կայք,

- ՀՀ ԲՆ տվյալների շտեմարանների ձևավորում և դրանց միջև տեղեկատվության փոխանակում ապահովող համակարգչային համակարգերի թարմացում և սպասարկում՝ ըստ տարիների՝ 3-ական շտեմարան,

- ՀՀ ԲՆ բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի սպասարկում, տեղեկատվության ամփոփում և տրամադրում տարածքային (տեղական) կենտրոններին, ըստ տարիների՝ 13-ական կենտրոն:

Նշված աշխատանքների իրականացման համար 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 16.95 մլն. դրամ, 18.57 մլն. դրամ և 18.58 մլն. դրամ:

Զ. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման ոլորտ

Նախատեսվում է իրականացնել թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն ու անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակում և լուսաբանման աշխատանքներ, այդ թվում՝

- հաշվետվությունների կազմում, կազմակերպություններին տվյալների և խորհրդատվության տրամադրում՝ ըստ տարիների 700-ական կազմակերպության,

- թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների՝ ըստ տարիների 30-ական օբյեկտ,

- թափոնների հեռացման վայրերի՝ ըստ տարիների 30-ական վայր,

- թափոնների օգտահանման, վնասագերծման վերաբերյալ առաջարկվող տեխնոլոգիաների՝ ըստ տարիների՝ 50-ական հատ:

Նշված աշխատանքների իրականացման համար 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 10.3 մլն. դրամ, 11.2 մլն. դրամ և 11.2 մլն. դրամ:

Է. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն նախատեսված բնապահպանական համապատասխան ծրագրերի իրականացումն ապահովելու համար համապատասխան համայնքներին 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 291.1 մլն. դրամ, 200.2 մլն. դրամ և 156.0 մլն. դրամ:

Հիդրոոդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիտորինգի բնագավառում

Հիդրոոդերևութաբանության ոլորտում «Աջակցություն» Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ ծրագրով աշխատանքները նպատակաուղղվելու են.

- օդերևութաբանական, ագրոօդերևութաբանական, հիդրոլոգիական, ռադիոլոկացիոն, ակտինոմետրիական, օզոնամետրիական և աէրոլոգիական դիտարկումների կատարմանը,

- կլիմայի փոփոխության ուսումնասիրությանը և կլիմայի մոնիտորինգի իրականացմանը,

- հանրապետության տարածքում ռադիացիոն մոնիտորինգի կատարմանը,

- կլիմայի փոփոխության ուսումնասիրությունների կատարմանը,

- հիդրոոդերևութաբանական տվյալների հավաքագրմանը, կանխատեսումների և վտանգավոր աղետային երևույթների վերաբերյալ նախազգուշացումների կազմմանը,

- հանրապետության ղեկավար մարմիններին, զինված ուժերին, ավիացիային, տնտեսավարող սուբյեկտներին, գյուղատնտեսությանը, էներգետիկային, տրանսպորտին և այլ շահագրգիռ կազմակերպություններին հիդրոոդերևութաբանական, ռադիացիոն և հելիոերկրաֆիզիկական տարբեր տեղեկատվությամբ ապահովմանը:

Այս նպատակով 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվում է տրամադրել 533.64 մլն դրամ:

ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

13.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներին ճանապարհային բնագավառում զգալի աշխատանքներ են կատարվել: Տրանսպորտի և կապի ոլորտների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների գործունեության կառավարման և կորդինացման միջոցով ապահովվել է տնտեսության մյուս ճյուղերի (ոլորտների) կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկը՝ փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների), փոստային ծառայությունների մատուցման, ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների բնագավառներում:

Ավտոմոբիլային ճանապարհները ՀՀ տրանսպորտային համակարգի կարևորագույն բաղկացուցիչն են: Երկրի ներսում տարածաշրջանների և բնակավայրերի միջև, ինչպես նաև հարևան երկրների հետ կապ ստեղծող ավտոմոբիլային ցանցի տրանսպորտա-շահագործողական վիճակից և զարգացումից է կախված պետության կայուն տնտեսական աճը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը, ազգային անվտանգության բարելավումը, միջազգային տրանսպորտային համակարգին ճանապարհային ցանցի ինտեգրումը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 7743.8 կմ, որը, ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի N 112-N որոշման համաձայն դասակարգվում է ըստ նշանակության՝

1. Միջպետական նշանակության ճանապարհներ - 1686.5 կմ:

2. Հանրապետական նշանակության ճանապարհներ – 4040.0 կմ, այդ թվում՝ 1777.5 կմ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության, 1737.1 կմ՝ մարզային և 525.4 կմ համայնքային ենթակայության:

3. Մարզային (տեղական) նշանակության ճանապարհներ - 2017.3 կմ, այդ թվում՝ 1639.4 կմ մարզային և 377.9 կմ համայնքային ենթակայության:

ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն «Կայուն զարգացման ծրագրի» համապատասխան տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է, որն իրագործվում է ՀՀ պետական բյուջեից հատկացումների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի և դրամաշնորհների միջոցներով:

Հանրապետության ճանապարհային ցանցի բարելավման և պահպանման համար ՀՀ պետական բյուջեից հատկացումների հաշվին տրանսպորտի ոլորտում իրականացվում են հետևյալ ծրագրերը.

-Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում,

-Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանում և շահագործում:

Նշված ծրագրերի իրականացմամբ ՀՀ բնակչությանը, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին և անձանց համար ապահովվել է.

- տրանսպորտային ծախսերի կրճատումը, շարժման արագության բարձրացումը, տրանսպորտային միջոցների ավելորդ վազքի և ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների տևողության նվազեցումը,

- ողջ տարին բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, երթևեկության անվտանգության բարելավումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և կորուստների քանակի կրճատումը, շրջակա միջավայրի վրա ճանապարհատրանսպորտային համալիրի բացասական ազդեցության նվազեցումը:

Անցած տարիների ընթացքում կատարված ներդրումների արդյունքում տեղի է ունեցել հիմնական ճանապարհային ցանցի վիճակի բարելավման աճ: Նպատակային և արդյունավետ վերականգնողական միջոցառումների իրականացման արդյունքում հիմնական ճանապարհային ցանցի ծածկի անհարթության միջինացված գործակիցը 1998թ 7.8 մմ/մ արժեքից 2010թ նվազել է մինչև 4.0 մմ/մ արժեքը:

Մասնավորապես, 2009-2010թթ. ընթացքում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ֆինանսավորվող Գյուղական ճանապարհահատվածի ծրագրով վերականգնված 229կմ ընդհանուր երկարությամբ 25 ճանապարհահատվածների ուսումնասիրությունից և համապատասխան վերլուծություններից պարզվել է, որ այդ ճանապարհահատվածներով երթևեկության գումարային տևողությունը 2007թ. համեմատությամբ 2010թ. 5.34 ժամից նվազել է մինչև 3.78 ժամ (29.2%), տարեկան կտրվածքով երթևեկության միջին օրական ինտենսիվությունը 2007թ. համեմատությամբ 2010թ. 16845 մեք/օր-ից աճել է մինչև 17802 մեք/օր (5.7%), ծածկի անհարթության միջինացված գործակիցը 2007թ. համեմատությամբ 2010թ. 13մմ/մ-ից նվազել է մինչև 3.03մմ/մ (77%),

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

N	<u>Ծառայությունների շրջանակի նկարագրություն</u>	<u>Շահառուների շրջանակի նկարագրություն</u>	<u>Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը</u>
1.	Տրանսպորտի, կապի, տեղեկատվայնացման բնագավառների գործունեության պետական կառավարում, կարգավորում, պետական քաղաքականության մշակում ու իրականացում. մոնիտորինգ	Հասարակություն, պետական կառավարման այլ մարմիններ	Ամբողջությամբ
2.	Նախարարության իրավասության տակ գտնվող պետական	6 բաժնետիրական ընկերություններ, այդ թվում՝ կապի և տեղեկատվայնացման ոլորտում՝ 3,	Ամբողջությամբ

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
	միավորների նկատմամբ լիազոր մարմնի գործառույթների իրականացում	ավտոտրանսպորտային ոլորտում՝ 1 և 2 տարբեր բնույթի այլ ընկերություններ և 4 ՊՈԱԿ-ներ:	
3.	Լիցենզավորման գործառույթներ	<p>«Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում» գործունեության տեսակի լիցենզավորում:</p> <p>«Փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրումների մատուցում» գործունեության տեսակի լիցենզավորում:</p> <p>«Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում» գործունեության տեսակի լիցենզավորում:</p> <p>«Հայաստանի Հանրապետությունում մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում» գործունեության տեսակի լիցենզավորում:</p> <p>«Անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրում» գործունեության տեսակի լիցենզավորում:</p> <p>«Տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման գործունեության իրականացման համար՝ օգտագործվող յուրաքանչյուր հոսքագծի համար» լիցենզավորում:</p>	Ամբողջությամբ
4.	Արտոնություն ունեցող քաղաքացիներին անվճար երթևեկության վկայականների տրամադրում	« քաղաքացիներ	Չի փոխհատուցվում
5.	« Կառավարման և ուղևորափոխադրումներ իրականացնելու համար թույլտվության հատկացում	« Կառավարում գործող բեռնափոխադրող և ուղևորափոխադրող կազմակերպություններ, « քնակչություն	Չի փոխհատուցվում
6.	Հայաստանի Հանրապետության հաճախությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիտորինգի, ՌԷՄ-ի և ԲՀՄ-ի տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման ծառայություններ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 1807-Ն որոշում, « քնակչություն	« պետական բյուջեից ֆինանսավորվում է ամբողջությամբ, 2011 թվականին հատկացվելու է 400.8 մլն դրամ
7.	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծառայությունների մատուցում	Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներ	Տվյալ տարվա ծրագրերի իրականացման համար՝ ամբողջությամբ

N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
8.	<p>«Ա տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության տակ գտնվող ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման առաջնահերթ միջոցառումների ապահովման ծառայությունների մատուցում</p>	<p>Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներ</p>	<p>Տվյալ տարվա ծրագրերի իրականացման համար՝ ամբողջությամբ</p>
9.	<p>Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման և առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման ծառայությունների մատուցում</p>	<p>Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներ</p>	<p>Տվյալ տարվա ծրագրերի իրականացման համար՝ ամբողջությամբ</p>

13.1.1 ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2009-2010թթ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացված ներդրումների շնորհիվ զգալիորեն բարելավվել և անվտանգ են դարձել միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները:

Ճանապարհային տնտեսություն

Ճանապարհային տնտեսության բնագավառում 2010թ. վերանորոգվել են շուրջ 350 կմ երկաթուղայամբ ճանապարհահատվածներ, այդ թվում՝ 126 կմ պետական բյուջեի, իսկ 224 կմ՝ ներգրավված վարկային միջոցների հաշվին:

Պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից 2010թ. հատկացվել է 6,993.0 մլն դրամ՝ 2009թ. հատկացված 11,535.9 մլն. դրամի դիմաց (նվազել է 39.4 %-ով):

2010թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել են 14 կամուրջներ, որոնց համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 500.0 մլն դրամ՝ 2009թ. հատկացված 414.7 մլն. դրամի դիմաց (աճել է 20.6 %-ով): Աճը պայմանավորված է հիմնանորոգման ենթակա տրանսպորտային օբյեկտների քանակի ավելացմամբ:

Պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար ՀՀ պետական բյուջեից 2010թ. հատկացվել է 5520.5 մլն դրամ՝ 2009թ. հատկացված 5004.9 մլն. դրամի

դիմաց (աճել է մոտ 10.3%-ով): 2009-2010թթ. յուրաքանչյուր տարի իրականացվել են երեք թունելների և հինգ կամուրջների պահպանություն ու շահագործում, շուրջ 3330 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ, ձմեռային պահպանության և շահագործման, ճանապարհների կահավորման աշխատանքներ, ինչպես նաև «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ» ՊՈԱԿ-ի կողմից պետական պատվերի ծրագրերի իրականացում:

Տրանսպորտ

Պետական ավտոտրանսպորտային կազմակերպությունների մասնավորեցման և այս ոլորտում մանր ու միջին բիզնեսով զբաղվող ընկերությունների թվաքանակի աճի պայմաններում ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում 2009-2010թթ. զգալի աշխատանքներ են տարվել ոլորտում քաղաքականության մշակման և դրա իրագործման նկատմամբ վերահսկողության ուղղությամբ:

ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 3-ի N 756-Ն որոշմամբ ստեղծվել է «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ը, որի հիմնական գործառույթն է համարվում ՀՀ-ում մեկ ընդհանուր միասնական երթուղային ցանցի ձևավորումը, ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների և չվացուցակների սխեմաների մշակումը, որը կհանգեցնի երթուղիների օպտիմալ աշխատանքին, ինչպես նաև կապահովի տրանսպորտի առանձին տեսակների փոխհամագործակցումը:

Հայաստանի Հանրապետությունում մինչև 2011 թվականի առաջին եռամսյակի ավարտը կներդրվի հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) համակարգը, որը ՀՀ փոխադրողներին հնարավորություն կտա համակարգը ներդրած պետություններում իրականացնել միջազգային բեռնափոխադրումներ:

ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի N994-Ա որոշման համաձայն փոփոխություն է կատարվել «Հայկական երկաթուղու համակարգը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագրում: Փոփոխությամբ նախատեսվել է երկաթուղու ենթակառուցվածքներում և շարժակազմում ըստ օբյեկտների ներդրումային եռամյա միջինաժամկետ ծրագրի դրույթը:

Կապ

2010 թվականի ընթացքում նկատվում է ոլորտում արդի տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրում այդ թվում ընդլայնվում են 3G ստանդարտով գործող համակարգերը հանրապետության ողջ տարածքում ապահովելով 100% ծածկույթ և միաժամանակ նկատվում է ճկուն սակագնային քաղաքականության կիրառում՝ գործնականում ապահովելով նվազագույն սակագներ և համընդհանուր հասանելիություն առաջարկվող ծառայություններից օգտվողների համար:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ցանցի գործող թվով 152 հեռուստակայաններում իրականացվել է տեխնիկական վերազինում՝ տեղադրվել են DVW-S2/MPEG-

4 ստանդարտի ժամանակակից թվային ընդունիչներ և 1.8մ տրամագծով արբանյակային ընդունիչ ակեհավաքներ: Թվով 45 վերահաղորդիչ կայաններում տեղադրվել են արբանյակային ընդունիչների էլեկտրասնուցման ավտոնոմ համակարգեր (UPS) հեռուստակայաններում տեղադրվել են բարձր ուժեղացման գործակցով, արդյունավետ հաղորդիչ անտենաներ: Հայաստանի Հանրապետությունում ինտերնետ կապի միջազգային ելքուղիներն ավելացել է ևս մեկով՝ դեպի հարավային ուղղությամբ, ինտերնետ թրաֆիկի թողունակությունը վերջին երկու տարիների ընթացքում եռապատկվել է:

2010 թվականին շուկայում ձևավորված ազատ մրցակցության պայմաններում ինտերնետ ծառայությունների մատուցման սակագինը զգալիորեն նվազել է, բարձրացել է ծառայությունների մատուցման որակը՝ ԱՊՀ երկրներում գրավելով առաջնային դիրք և քայլեր են ձեռնարկվում ինտերնետ ծառայությունների մատուցման որակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Փոստ

ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի 24-ի N1233-Ն որոշմամբ «Հայփոստ» ՓԲԸ-ի ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը:

Հավատարմագրային կառավարչի ծրագրի միջոցով 2010թ. վերանորոգվել են 30 փոստային բաժանմունքներ: 3 փոստային բաժանմունքներում իրականացվում են նաև փոստ-բանկային ծառայությունների մատուցում, որից 1-ը գործում է Երևանում, 2-ը՝ Կապանում:

2010թ. ընթացքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի համապատասխան հրամաններով գործողության մեջ են դրվել թվով 26 նամականիշ, 3 գեղաթերթիկ և 2 նամականիշով միակողմանի բացիկ, իսկ 2009 թվականին՝ 24 նամականիշ, 3 նամականիշով միակողմանի բացիկ և 4 գեղաթերթիկ:

13.1.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ավտոճանապարհները սարքին վիճակում պահելու համար անհրաժեշտ է մշտապես իրականացնել նորոգման և պահպանման համակարգված շարունակական աշխատանքներ: 90-ական թվականների ընթացքում այդ աշխատանքները գրեթե չէին կատարվել և հանրապետության ամբողջ ճանապարհային ցանցը հայտնվել էր զանգվածային քայքայման վիճակում:

Կատարված ներդրումների արդյունքում տեղի է ունեցել հիմնական (միջպետական) ճանապարհային ցանցի վիճակի բարելավման կտրուկ աճ: Շարունակվում են իրականացվել հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

«Կ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն «Կայուն զարգացման ծրագրի» համապատասխան բնագավառում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- միջպետական նշանակության ավտոճանապարհների ցանցի երթևեկամասի ընդհանուր վիճակի պահպանումը նախանշված ցուցանիշների մակարդակի համապատասխան,
- հանրապետական նշանակության վերականգնված ճանապարհները բարվոք վիճակում պահելը և ցանցի պլանային վերականգնում,
- բնակավայրերի միջև կայուն տրանսպորտային հաղորդակցության վերականգնում:

13.2.ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

13.2.1 Նպատակները

Տրանսպորտի և կապի բնագավառում տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու և երկաթուղու շինարարությամբ ու կապի համակարգերի կատարելագործմամբ: Տրանսպորտի և կապի ոլորտների կայուն և արդյունավետ զարգացումն անհրաժեշտ պայման է երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ռացիոնալ ինտեգրումն ապահովելու գործընթացների տեսանկյունից:

Ճանապարհային տնտեսության բնագավառում

«Կ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն Կայուն զարգացման ծրագրին համապատասխան, տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է, որը հնարավոր է իրագործել պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ու շահագործման ծրագրերի շրջանակներում, ինչը կապահովի հետևյալ նպատակների ձեռք բերումը.

- պետական ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի զարգացումը՝ «Կ բնակչության պահանջմունքների, հանրապետության տնտեսության և տրանսպորտային ենթակառուցվածքին համապատասխան, ինչպես նաև պահանջվող տեխնիկական վիճակի, ճանապարհային ցանցի անցողունակության և խտության, երթևեկության անվտանգության բարելավման և տնտեսական

ակտիվության խթանման ապահովումը, և Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը,

- տրանսպորտային ծախսերի կրճատումը, շարժման արագության բարձրացումը, տրանսպորտային միջոցների ավելորդ վազքի և ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների տևողության նվազեցումը,

- բնակավայրերի հետ ողջ տարին տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, երթևեկության անվտանգության բարելավումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և կորուստների քանակի կրճատումը, շրջակա միջավայրի վրա ճանապարհատրանսպորտային համալիրի բացասական ազդեցության նվազեցումը,

- գիտատեխնիկական նվաճումների ներդրումը և հայրենական ճանապարհաշինական ոլորտի զարգացումը:

Ճանապարհաշինության բնագավառի նպատակները և կատարման նախատեսված չափորոշիչները 2012-2014 թթ. համար

Ռազմավարական նպատակները	Արդյունքները	Կատարման չափորոշիչները	2012-2014թթ.
ՀՀ հիմնական ավտոճանապարհային ցանցի տրանսպորտաշահագործողական վիճակի պահպանում և բարելավում, ուղղված հայրենական ապրանքների մրցունակության բարձրացմանը՝ տրանսպորտային ծախսերի նվազեցման հաշվին, միջպետական տարանցիկ բեռնաշրջանառության փոխադրումների ավելացմանը, երկրի պաշտպանունակության և տնտեսական աճի ապահովմանը	Պահպանման արդյունավետ համակարգի ստեղծում, որը կապահովի ճանապարհների մշտական խնամքը և ծառայության ժամկետի երկարատևությունը	Բավարար պահպանության մակարդակով ճանապարհների երկարության տոկոսային հարաբերությունը այդ կարգի ճանապարհների ողջ երկարությանը	Միջպետական ճանապարհներ 90 % Հանրապետական ճանապարհներ 80, 85, 90, % Տեղական ճանապարհներ 30, 35, 40, %
	Միջպետական Ավտոճանապարհների երթևեկելի մասի բարելավում	Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը	3.5, 3.4, 3.3
	Հանրապետական Ավտոճանապարհների վերականգնում	Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը	6.0, 5.8, 5.5
Տարածաշրջանների բնակչության սոցիալ-տնտեսական կենսամակարդակի բարելավում ՀՀ տեղական նշանակության ավտոճանապարհների ցանցի վերականգնման միջոցով, որպես աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մաս	Բնակավայրերի միջև տրանսպորտային կապի բարելավում	Մարզկենտրոնների հետ բավարար տրանսպորտային կապ ունեցող բնակավայրերի տոկոսային հարաբերությունը բնակավայրերի ընդհանուր թվին	5, 8,9 %
	Տեղական Ավտոճանապարհների վերականգնում	Անհարթության IRI գործակցի միջին թվաբանականը	9.7, 9.0, 8
Ընդհանուր օգտագործման	Վտանգավոր	Տուժածներով	2, 3, 5 %

Ռազմավարական նպատակները	Արդյունքները	Կատարման չափորոշիչները	2012-2014թթ.
ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգության բարելավում	ճանապարհային հատվածների հայտնաբերում, պատճառների վերացում, ճանապարհային նշանների տեղադրում և նշագծում	Ճանապարհատրանսպորտային պատահարների ընդհանուր թվի նվազումը	
		Տեղադրված ճանապարհային նշանների տոկոսային հարաբերությունը պահանջվող ընդհանուր քանակին	60, 70, 75%
	Կատարված նշագծման տոկոսային հարաբերությունը պահանջվող ընդհանուր երկարությանը	50, 60 ,70%	

13.2.2. Գերակայությունները

2012-2014թթ քաղաքականությունը հիմնականում նպատակամղվելու է գոյություն ունեցող ճանապարհների (ավտոմոբիլային, երկաթուղային) արդյունավետ օգտագործման միջոցով հանրապետության տարածքում փոխադրումների ամբողջ ծավալով ապահովմանը: 2012-2014թթ. պետական բյուջեի հաշվին կշարունակվեն ռազմավարական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման և պահպանման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն այն ճանապարհահատվածներում և ճանապարհային կառույցների օբյեկտներում, որոնք տարիներ շարունակ շարքից դուրս են եկել, տրանսպորտային միջոցների համար դարձել դժվար անցանելի և վտանգավոր: Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ նորոգումների և ձմեռային պահպանության իրականացման արդյունքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդառնա անվտանգ, արագ և դյուրին: Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքի բարելավումը կապահովի բնականոն տրանսպորտային կապը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հանրապետության հեռավոր և սահմանամերձ շրջանների ու բնակավայրերի հետ, կնպաստի դրանց զարգացմանը, կիջեցնի փոխադրումների ինքնարժեքը և կնպաստի աղքատության կրճատմանը:

Երթևեկության ինտենսիվության աճի, ծանր բեռնատար ավտոմեքենաների քանակի ավելացման և, դրա հետ կապված, ընդհանուր օգտագործման պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ծածկի արագ քայքայման պայմաններում ճանապարհային ցանցի պատշաճ տրանսպորտա-շահագործողական վիճակի ապահովման նպատակով 2012-2014թթ. ժամանակա-

հատվածի ՄԺԾԾ-ով նախատեսվում է իրականացնել պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման, հիմնանորոգման հիմնական ծրագրերն՝ իրենց ենթածրագրերով:

2012-2014 թվականներին տրանսպորտի և կապի ոլորտում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են.

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2012թ.	2013թ.	2014թ.	
1	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ			<p>«Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն «Կայուն զարգացման ծրագրի» համապատասխան, տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը՝ հանրապետության ճանապարհային ցանցի բարելավում ու պահպանում</p>
2	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ			
3	«ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության տակ գտնվող ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման առաջնահերթ միջոցառումների աշխատանքներ			
4	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ			
5	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների և կամուրջների պահպանման աշխատանքներ			
6	Համաձայնեցված ծավալներով և ուղղություններով «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի իրականացված ուղևորափոխադրումների տարեկան վնասի սուբսիդավորում (մասնակի փոխհատուցում)			<p>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության և «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի փետրվարի 13-ին կնքված «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը:</p>
8	Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախտոգրաֆի) ներդրման աշխատանքների իրականացում			<p>«Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» 1970 թվականի հուլիսի 1-ին Ժնևում կատարված համաձայնագրի պահանջների</p>

		ապահովում:
9	Հայաստանի Հանրապետությունում շահագործվող գազաբալոնային համակարգերով սարքավորված ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների համար հաջորդ վկայագրման ժամկետը նշող կտրոնի ներդրման աշխատանքների իրականացում:	Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգն և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» № 2388-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 3-րդ կետի պահանջը

Բացի այդ, տրանսպորտի ոլորտում 2012-2014 թվականներին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. Կենսական նշանակության ճանապարհների բարելավման լրացուցիչ ծրագիր (Համաշխարհային բանկ)

Ծրագիրը հանդիսանում է Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի շարունակությունը, որի նպատակը ևս կենսական նշանակության ավտոճոնապարհային ցանցի վերականգնման ուղղությամբ աշխատանքների իրականացումն է և խորհրդատվական ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև տեխնիկական աջակցության տրամադրումը:

2011 թվականին նախատեսվում է շուրջ 82 կմ շինարարական աշխատանքների պահված ետավարտական երաշխիքային գումարների վճարումներ, ինչպես նաև վճարումներ ետավարտական պատասխանատվության ժամկետի ընթացքում իրականացվելիք տեխնիկական վերահսկողության համար, ծրագրի իրականացման ծախսեր, ներառյալ ծրագրի աուդիտը և ճանապարհների երկրաբանատեղեկատվական համակարգի գնում:

2. Կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ծրագիր (Համաշխարհային բանկ)

Ծրագրի նպատակն է բարելավել կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածները և ստեղծել ճանապարհաշինարարության ոլորտում ժամականավոր զբաղվածություն:

2011 թվականին նախատեսվում է իրականացնել շուրջ 140 կմ երկարությամբ ճանապարհների վերականգնման աշխատանքներ, 2010 թվականին իրականացվելիք շուրջ 50 կմ շինարարական աշխատանքների պահված ետավարտական երաշխիքային գումարների վճարումներ (1-ին բաղադրիչ):

Ծրագրի 1-ին բաղադրիչով նախատեսվում է ճանապարհների վերանորոգման տեխնիկական հսկողության, ճանապարհների հեղինակային հսկողության, անկախ տեխնիկական աուդիտ, ինչպես նաև ծրագրի իրականացման ծախսեր, ներառյալ ծրագրի աուդիտը:

Ծրագրի 2-րդ բաղադրիչով նախատեսվում է

- հետագա ծրագրի ճանապարհների նախագծում և ԲԿՊ (բնապահպանական կառավարման պլան) մշակում
- ճանապարհների նոր երկրաչափական ստանդարտների մշակում
- թունելների վերականգնման տեխնիկատնտեսական հիմնավորում և նախագծում
- վերապատրաստման և ուսուցման ծախսեր
- ճանապարհների տվյալների հավաքագրման համակարգի գնում:

3. Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Ասիական զարգացման բանկ)

Ծրագրի նպատակն է Երևան-Աշտարակ չորս շերտանի ճանապարհի մոտ 18.4 կմ հատվածի վերակառուցումը և անվտանգության բարձրացումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը, ինչպես նաև տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տարամադրումը: Ավարտին են հասցվում Հյուսիս հարավ ծրագրի շրջանակներում Երևան-Թալին ճանապարհահատվածի նախագծման աշխատանքները, հստակեցվում են բնապահպանական և իրացման պլանները: Նշված ծրագրով առաջին անգամ հիմք դրվեց ճանապարհների նախագծման աուդիտի իրականացման համար:

4. “Երևանի մետրոպոլիտենի վերականգնման” ծրագիր (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ) (2-րդ փուլ).

Ծրագրերի նպատակն է վերականգնել Երևանի մետրոպոլիտենի վթարային վիճակը:

2012 թվականին նշված վսարկային ծրագրերի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1. Շարժակազմի սայլակների նորացում,
2. Մաշված երկաթուղագծի և էլեկտրամատակարարման համակարգերի բաղադրատարրերի վերանորոգում,
3. Տեխնիկական սպասարկման գնացքի ձեռքբերում և պոմպակայանների փոխարինում, որը ուղղված է ջրի ներթափանցման խնդիրը մեղմացնելուն:
4. Դրենաժանային համակարգերի բարելավում.

Այս ներդրումների շնորհիվ կբարելավվեն մետրոյի ուղեգծի անվտանգ շահագործումը:

5. Քաղաքային ենթակառուցվածքների և կայուն զարգացման ներդրումային ծրագիր

Ծրագրի նպատակն է ապահովել Ծրագիրը կբարելավի քաղաքային համայնքների համար տնտեսական հնարավորությունն

երի և հանրային ու սոցիալական ծառայությունների մատչելիությունը, կմեծացնի

տնտեսական աճի ներուժը և կընդլայնի մասնավոր հատվածի ներգրավվածությունը:

Ծրագիրը կբարելավի Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները հետևյալ ուղղություններով

ա/ Արգավանդի խճուղի – Շիրակի փողոց ճանապարհ (Արևմուտք);

բ/ Արտաշատի խճուղի – Շիրակի փողոց ճանապարհ և Թամանցիների

փողոցի հատվածը (Հարավ-Արևմուտք);

13.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տրանսպորտի ոլորտում 2012-2014 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում: Ծրագրի նպատակն է հիմնանորոգել ՀՀ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների ցանցը: Արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցից օգտվողների անխափան երթևեկությունը, որն իր հերթին կնպաստի երկրի տնտեսության զարգացմանը:

2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով առաջնահերթ ճանապարհահատվածների հիմնանորոգման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 4,0 մլրդ դրամ:

«Ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ու «Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրերով իրականացման համար նախատեսվում է 2012թ.՝ 6270.4 մլն դրամ, 2013թ.՝ 6278.8 մլն դրամ և 2014թ.՝ 6278.8 մլն դրամ: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել.

- շուրջ 7743.4 կմ պետական ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման ու շահագործման աշխատանքներ,

- արհեստական կառույցների պահպանության ու շահագործման աշխատանքներ, այդ թվում երեք թունելների և հինգ կամուրջների պահպանություն ու շահագործում,

- պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կահավորում,

- «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից պետական պատվերի ծրագրերի իրականացում:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից իրականացված ուղևորափոխադրումների տարեկան վնասի սուբսիդավորում (մասնակի փոխհատուցում) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 83-Ա որոշմամբ հաստատված կոնցեսիոն պայմանագրի 2-3 հոդվածով նախատեսված է, որ Կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոնների տարեկան վնասը կոնցեսիոնների կողմից անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է 2009-2010 թվականներին՝ 10 տոկոս, 2011-2012 թվականներին՝ 15 տոկոս, 2013 թվականին՝ 20 տոկոս, 2014-2015 թվականներին՝ 25 տոկոս:

2012 թվականին անհրաժեշտ կլինի 155.0 մլն դրամ 2013թ՝ 147.7 մլն դրամ և 2014 թվականին՝ 173.4 մլն դրամ:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության տրամադրում. «Տրանսպորտային փոխադրումներ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակն ու խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակումը և զարգացումը, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրությունը, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակումը և կատարելագործումը և այլն: 2012թ. նախատեսվում է հատկացնել 40.2 մլն դրամ, 2013թ. և 2014թ.՝ 41.8 մլն դրամ:

«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ» ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 2012թ.՝ 400.9 մլն դրամ, 2013թ.՝ 400.9 մլն դրամ և 2014թ.՝ 402.8 մլն դրամ՝ որպես պետական աջակցություն «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Ծրագրի իրականացման հիմնական արդյունքը եթերի որակի բարելավումն է, ինչպես նաև ՀՀ տարածքում չարտոնված ռադիոճառագայթման աղբյուրների, շեղումների և հատկացված ռադիոհաճախականությունների ոչ նպատակային օգտագործման հայտնաբերումը:

«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրի իրականացման համար նախատեսվում է 2012թ. հատկացնել 1845.0 մլն դրամ, 2013թ.՝ 1954.2 մլն դրամ և 2014թ.՝ 2063.3 մլն դրամ:

Միջնաժամկետ ժամանակահատվածում մետրոպոլիտենին տրամադրվող միջոցները կուղղվեն վերջինիս գործունեությունից առաջացող վնասի փոխհատուցմանը, ինչպես նաև ՎԶԵԲ-ի նկատ-

մամբ Ընկերության ստանձնված վարկային պարտավորությունների կատարմանը: Հաշվի առնելով մետրոպոլիտենի հատուկ նշանակությունը, չի ակնկալվում, որ միջին ժամկետ հեռանկարում վերջինիս գործունեությունը շահութաբեր կլինի, որով էլ պայմանավորված է մետրոպոլիտենի ֆինանսավորման անհրաժեշտությունը:

Ծրագրի շրջանակներում աշխատանքների կատարումն ուղղված է լինելու մետրոպոլիտենով երթևեկող ուղևորների անվտանգ փոխադրմանը, ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավմանը, համապատասխան սարքավորումների ընթացիկ սպասարկմանն ու պահպանմանը:

Ակնկալվում է, որ ուղևորափոխադրումները 2012-2014թթ. կկազմեն համապատասխանաբար՝ 20.4, 20.4 և 21.0 մլն ուղևոր:

«Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի իրականացման համար 2012-2013թթ. համար նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 5256.0 մլն դրամ (2014թ. համար գումարներ չեն նախատեսվել՝ հիմք «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110 հոդվածի 3-րդ կետը), այդ թվում՝

1. «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի գործունեությունից առաջացող վնասի փոխհատուցում» յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 276.0 մլն դրամ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտը հանդիսանալով քաղաքային տրանսպորտ, հաստատագրվել է քաղաքի բնակչության որոշակի մասի համար, որպես փոխադրման հիմնական միջոց, սակայն չի ակնկալվում, որ միջին ժամկետ հեռանկարում վերջինիս գործունեությունը շահութաբեր կլինի, որով էլ պայմանավորված է վերջինիս ֆինանսավորման անհրաժեշտությունը:

2. «Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացում» յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 1696.0 մլն դրամ: Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնման, շահագործման և պահպանման աշխատանքներ:

3. «Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճարպցման աշխատանքներ» յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 3284.0 մլն դրամ: Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի փողոցների և բակերի ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

ԳԼՈՒԽ 14. ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

14.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե) իրավասություններից են խմելու և ոռոգման ջուր մատակարարող, ջրահեռացում իրականացնող, բնական և արհեստական ջրային ավազաններում առևտրային գործունեություն ծավալող ընկերություններում պետական բաժնեմասերի (ինչպես նաև արտաքին ֆինանսական աղբյուրների հաշվին ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակների) կառավարումը, հիդրոտեխնիկական կառույցների շինարարության ու շահագործման ապահովումը և այլն:

Ոլորտի խմելու ջրի մատակարարումն ու կեղտաջրերի հեռացումն իրականացվում է «Երևան-ջուր» (ՀՀ կառավարության 10.09.2010թ. №1042-Ն որոշմամբ վարձակալության պայմանագրի կողմ է ճանաչվել ՀՀ Երևանի քաղաքապետը), «Հայջրմուկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուկոյուղի» և «Շիրակ-ջրմուկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, իսկ ոռոգման համակարգի պահպանումն ու շահագործումը՝ «Զրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով ստեղծված 44 ջրօգտագործողների ընկերությունների և «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստե-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով: Վարկային որոշ ծրագրերի իրականացման նպատակով համակարգում գործում է «Զրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, իսկ Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի պահպանման և տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման նպատակով ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայությամբ գործում է «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկը, որին վերապահված է նաև Արու-Դաբիի Զարգացման Հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող Արփա-Սևան թունելների հիմնանորոգման վարկային ծրագրի իրականացման գրասենյակի գործառույթները: ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայությամբ գործում է նաև «Մելիորացիա» ՓԲԸ-ն, որն իրականացնում է կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների վերահսկման, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման գործառույթներ:

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում գործում է նաև Զրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը, որը ստեղծվել է և իր գործունեությունն իրականացնում է ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության

2003 թվականի մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N686-Ն որոշման համաձայն:

ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն իրականացնում է «Հայջրմուղկոյուղի», «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Դեբետ-Աղստև-ջրառ» և «Մելիորացիա» ՓԲԸ-ների 100% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի, իսկ «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների մասով՝ 51 տոկոսի կառավարումը: Միաժամանակ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն (ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության) հանդիսանում է նախկին Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գործող ջրային համակարգերի «Երևան Ջուր» ՓԲԸ-ին վարձակալության տրված և ջրօգտագործողների ընկերություններին անհատույց օգտագործման տրամադրված գույքի սեփականատերը:

Անցած տարիների ընթացքում ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները (այդ թվում՝ Կայուն զարգացման և պետական միջնաժամկետ ծրագրերը), գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները: Այդ նպատակով շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, հաշվառման համակարգի ներդրման ու կատարելագործման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման, բյուջետային, վարկային ու դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային համակարգերի կառավարման ոլորտում իրականացվող մեծածավալ աշխատանքների բնականոն ընթացքը և հետագա զարգացումն ապահովելու գործընթացում կարևորվեց ՀՀ կառավարության կողմից ընդունված ծրագրերի հստակ և հետևողական իրականացումը: Շարունակվել է համակարգին առնչվող օրենսդրական դաշտի առավելագույնս զարգացումը և հստակեցումը:

Ջրային տնտեսության ոլորտում 2010 թվականի ընթացքում ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում մեծ կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Կնքված պայմանագրերի (կառավարման պայմանագրեր՝ ֆրանսիական Սաուր կազմակերպության, ինչպես նաև գերմանական «Էմ Վի Վի Դեկոն Ջի Էմ քի Էյջ» (MVV decon GmbH), «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի» (MVV Energe AG) և հայկական «Էյ-ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ների կոնսորցիումի

հետ) շրջանակներում ապահովվել է «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների բնականոն գործունեությունը: Նշված ընկերությունների մասով ապահովվել է նաև Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, KfW բանկի վարկային ներդրումային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը:


2. Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) ֆինանսավորմամբ Սևան, Զերմուկ, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում ծրագրով նախատեսված կոյուղագծերի կառուցման աշխատանքները հիմնականում ավարտվել են և կառուցվել են շուրջ 23 կմ կոյուղագծեր: Հանրապետությունում առաջին անգամ Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանների կառուցման մասով մշակվել և կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր:

3. Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրով Արփա-Սևան թունելի վթարային հատվածներում շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով մրցութային կարգով ընտրվել է կապալառու կազմակերպություն և սկսվել է Արփա-Սևան թունելի վթարավտանգ հատվածների շինարարական աշխատանքների իրականացումը: Ընդ որում 2010թ. ընթացքում Արփա-Սևան թունելի վերականգնման նպատակով կատարվել են 1,1 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ:

4. Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 44 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում և ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

5. Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժեր:


Գրաֆիկ 14.1. 2000-2010թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)



Էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգում իրականացված ներդրումային և կազմակերպչական միջոցառումների արդյունքում հնարավոր

րություն է ստեղծվել ավելի քիչ էլեկտրաէներգիա ծախսել՝ անցած տարիների համեմատությամբ (գրաֆիկ 14.2):


Գրաֆիկ 14.2. 2000-2010թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ(մլն դրամ)



6. 2010թ. ընթացքում ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 5.5 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ, որը 2009 թվականի համեմատությամբ ավել է շուրջ 30 մլն դրամի չափով:


7. «Երևան Զուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ (գրաֆիկ 14.3):

Գրաֆիկ 14.3. 2007-2010թթ. խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների ջրամատակարարման միջին տևողության վերաբերյալ




8. 2010թ. Սևանա լճից (առանց Մարտունու տարածաշրջանի պոմպակայաններով իրականացված ջրառը հաշվի առնելու) բաց է թողնվել 156.44 մլն մ³ ջուր (գրաֆիկ 14.4):

Գրաֆիկ 14.4. 1991-2010թթ. Սևանա լճից ջրի բացթողումների վերաբերյալ (մ³)



9. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը, կատարվել է ջրամատակարար կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների և պարտավորությունների ճշգրտումներ, ինչպես նաև իրականացվել են կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ ապահովվել է ջրաչափական սարքերի տեղադրման գործընթացը, որը 2009 թվականի համեմատությամբ ավել է 19.4 հազարով (գրաֆիկ 14.5):

Գրաֆիկ 14.5. 2006թ. հունվարի 1-ի դրությամբ առկա և 2006-2010թթ. խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված ջրաչափերի վերաբերյալ



10. Աջակցություն է ցուցաբերվել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի ոռոգման ոլորտին ուղղված աշխատանքների իրականացմանը:

11. 2010 թվականի ընթացքում կառուցվել են 901 կմ խողովակաշարեր և ջրատարներ, այդ թվում՝ խմելու ջրագծեր՝ 697 կմ, կոյուղու կոլեկտորներ՝ 23 կմ, ոռոգման ջրանցքներ և ջրատարներ՝ 181 կմ:

12. Կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են 29 օրվա կարգավորիչ ջրամբարներ, 26 պոմպակայաններ և 36 խորքային հորեր:

13. Բերդ քաղաքում կառուցվել է 55 լ/վրկ հզորությամբ խմելու ջրի մաքրման կայան:

14. Իրականացվել են դրենաժների մաքրման և խորացման աշխատանքներ՝ 346 կմ-ի չափով, այդ թվում մայր կոլեկտորների երկրորդային և երրորդային չորացուցիչների մաքրում և խորացում՝ 168 կմ-ի չափով, երրորդ կարգի դրենաժային համակարգերի մաքրում՝ 178 կմ-ի չափով: Միաժամանակ աշխատանքներ են իրականացվել գրունտային ջրերի մակարդակների որոշման աշխատանքների կատարման ուղղություններով:

15. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ սկսվել են Հրազդան քաղաքի ջրամատակարարման բարելավման աշխատանքները:

Ոլորտի հիմնական խնդիրները

Ջրային տնտեսության ոլորտում էապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, դրված նոր գաղափարների իրացումն ու նոր հիմնախնդիրների լուծումը:

«Հ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում կարևորվում են՝

1. «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Դեբետ-Աղստև-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքները,

2. Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի, Աբու Դաբիի Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովումը,

3. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների նախագծումը և շինարարական աշխատանքները,

4. «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններում մասնավոր կառավարիչների հետ կնքված պայմանագրերով նախատեսված ցուցանիշների կատարման ապահովումը, Համաշխարհային բանկի և Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի (EBRD) հետ նոր վարկային ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը, ինչպես նաև «ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում» վարկային և դրամաշնորհային ծրագրի երկրորդ փուլի իրականացումը,

5. հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավումը, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովումը, կայուն և հուսալի

ջրամատակարարումը, ջրի կորուստների կրճատումը, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացումը, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը, նոր ներդրումային ծրագրերի համար դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարումը, ինչպես նաև խմելու և ոռոգման ոլորտներում ջրագծերի և ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքները,

6. ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների և ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների շարունակությունը,

7. ջրամատակարար ընկերությունների սպասարկման դաշտից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացումը,

8. ջրի և էլեկտրաէներգիայի խնայողության խրախուսումը, ջրամատակարարման տևողության ավելացումը և ջրի որակի բարելավումը, ինչպես նաև հաշվառման համակարգի կատարելագործումը,

9. ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելմանն ուղղությամբ վերահսկողությունը,

10. Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու Դաբիի վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, բարձրացնել համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը (այդ թվում՝ մասնավոր կառավարման միջոցով), ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

14.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

14.2.1. Նպատակները

«Ջրային տնտեսության պետական կոմիտեի գործունեության հիմնական նպատակներն են՝

- ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպումը.

- մասնավոր կառավարման, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված կառավարման համակցված և խորացված ձևերի կիրառումը.

- համակարգի կազմակերպությունների կառավարման համակարգի բարելավումը, ինչպես նաև ֆինանսական կենսունակության բարձրացումը՝ ի հաշիվ շահագործման և պահպանման ծախսերի կրճատման, կորուստների նվազեցման և հավաքագրման մակարդակի բարձրացման:

14.2.2. Գերակայությունները

Ոլորտի գերակայությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2012	2013	2014	
1	Ջրամատակարարման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացում, կորուստների կրճատում և ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում:			Կայուն զարգացման ծրագիր, կետ 363: Վարկային համաձայնագրեր:
2	Ջրամատակարարման ծառայությունների որակի բարելավման նպատակով ջրային համակարգերի հիմնանորոգմանը, տեխնիկական վերազինմանը, ինչպես նաև ներտնտեսային ցանցերի վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացում:			Կայուն զարգացման ծրագիր, կետ 364: Վարկային համաձայնագրեր:
3	Համակարգի կազմակերպությունների ֆինանսական կենսունակության բարելավում՝ կառավարման համակարգի բարելավման և մասնավորի հետ համագործակցության խորացման միջոցով:			Կայուն զարգացման ծրագիր, կետ 362: Վարկային համաձայնագրեր:

14.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում շարունակվելու են ըստ բնագավառների ներքոհիշյալ ծրագրերի կատարումը.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորում

«Հայքրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 577.028 մլն դրամ սուբսիդիա, որից ֆինանսական ճեղքվածքի սուբսիդավորում՝ 340.0 մլն դրամ, ՎՋԵԲ-ի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրի ենթավարկի մայր գումարի սպասարկում՝ 237.028 մլն դրամ:

«Նոր Ակունք» ՓԲԸ սուբսիդավորում

Չնայած ընթացիկ գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ 2010թ. ապրիլի 1-ից ընկերության կողմից մատուցվող ծառայությունները 150.2 դրամի փոխարեն սահմանվել է 202.63 դրամ, այդուհանդերձ ընկերության ֆինանսական կենսունակությունը դեռևս բավարար չէ ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում 2000թ. հունիսի 21-ին և 2001թ. սեպտեմբերի 12-ին կնքված վարկային պայմանագրերի շրջանակներում տրամադրված վարկային միջոցների հետվերադարձի ապահովման համար: Այդ առումով վարկի հիմնական գումարի մարումն ապահովելու նպատակով 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է ընկերությանը տրամադրել 233.387 մլն դրամ սուբսիդիա:

Ոռոգման համակարգերի սուբսիդավորում

Հայաստանի Հանրապետության ոռոգման ոլորտում ներկայում գործում են երկու կազմակերպատիրական տեսակի կազմակերպություններ՝ ոռոգում-ջրառ իրականացնող 3 փակ բաժնետիրական ընկերությունները և 44 ջրօգտագործողների ընկերությունները: ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի «Ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությանը հավանություն տալու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասին» N¹291-Ն որոշմամբ 2012-2014թթ. համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 3934.4 մլն դրամ, 3224.3 մլն դրամ և 2784.2 մլն դրամ:

Բացի այդ ոռոգում-ջրառ իրականացնող 3 փակ բաժնետիրական ընկերություններում առաջացող ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը մեղմելու նպատակով 2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նշված ընկերությունների գծով նախատեսվել է տրամադրել 583.7 մլն դրամ:

Կոլեկտորադրենաժայն ցանցերի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման գծով աշխատանքներ.

ա) Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ

Ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար նախատեսվում է իրականացնել.

- գրունտային ջրերի մակարդակների ստացիոնար, տասնօրյա, միաժամանակ դիտումներ Արարատյան հարթավայրի 450 դիտողական հորատանցքերում,

- ջրի քիմիական անալիզ և մշակում - 1107 անալիզ/մշակում,

- դիտման հորատանցքերի վերականգնման նպատակով շնեկով հորատում - 650 գծմ,

- դիտման հորատանցքերի ամրակապում և ֆիլտրի տեղադրում – 650 գծմ,

- դիտման հորատանցքերի մաքրման նպատակով էռլիֆտով ջրի արտամղում - 400 ժամ,

- ինժեներա-հիդրոերկրաբանական տեղագնումներ – 125 կմ,

- գրունտային ջրերի մակարդակների թվայնացված քարտեզների կազմում – 15 քարտեզ:

բ) Կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հանրապետության բաց կոլեկտորադրենաժային ցանցի շահագործումը շուրջ 1051.828 կմ վրա, կատարել ընթացիկ և վթարային վերանորոգումներ, շահագործողական ջրաչափություն 40 հիդրոմետրական կետերում և կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակի հսկման աշխատանքներ՝ 34.0 հազ. հա-ի վրա:

գ) ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման, նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն

Ծրագրի իրականացման նպատակն է հսկողություն իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և նորոգման աշխատանքների կատարման որակի նկատմամբ:

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 94.2 մլն դրամ, 98.7 մլն դրամ և 98.7 մլն դրամ: 2012թ. համեմատ 2013-2014թթ. 4.5 մլն դրամի չափով ավելացումը պայմանավորված է միջին աշխատավարձի 10% ավելացմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում

Ծրագրի իրականացման արդյունքում ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարում կմաքրվեն ու կվերանորոգվեն շուրջ 184.9 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցեր, որը հնարավորություն կտա Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի գրունտային ջրերի մակարդակների պահպանումը թույլատրելի խորությունների վրա (19.0 հազ. հեկտարից ոչ ավելին):

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է 225.0 մլն դրամ:

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանման ծախսեր

Տեխնիկական հանձնաժողովը կատարում է ջրային համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների զննում, դիտարկումներ և չափումներ, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրություն, ինչպես նաև ջրային համակարգերում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տալիս է մասնագիտական եզրակացություններ:

Հանձնաժողովի հետագա արդյունավետ գործունեություն իրականացնելու, ինչպես նաև օրենքով պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով 2012-2014թթ. ՄԺԾԾ յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 11.0 մլն դրամ, 11.77 մլն դրամ և 11.77 մլն դրամ: 2012թ. համեմատ 2013-2014թթ. 0.77 մլն դրամի չափով ավելացումը պայմանավորված է միջին աշխատավարձի 10% ավելացմամբ:

Այս ոլորտում նախատեսվում և շարունակվելու են իրականացվել հետևյալ վարկային ծրագրերը.

1. Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիր՝ II փուլ

II-րդ փուլում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում ամբողջությամբ կավարտվի Գյումրի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները, որի շնորհիվ քաղաքում կապահովվի 24 ժամյա ջրամատակարարման ռեժիմ: Գյուղերում կկառուցվի 3 և կվերանորոգվեն 7 ջրամբարներ, կիրականացվի Զույգաղբյուր կապտածների վերանորոգում:

2. Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիր՝ II փուլ

Նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում ամբողջովին կավարտվի Վանաձոր քաղաքի մնացած 70% ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները և քաղաքում ամբողջովին կապահովվի 24 ժամյա ջրամատակարարում: Կկառուցվեն ջրամբարներ Ամրակից, Ձորագետավան, Անտառամուտ գյուղերում, կիրականացվի Նովոսելցովայի կապտածների վերանորոգում և այլն :

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր:

Ծրագրի նպատակն է համայնքային ջրամատակարարման ենթակառուցվածքների վերանորոգումը, ջրահեռացման համակարգերի և շրջակա միջավայրի բարելավումը, որի շրջանակներում նախատեսվում է մի շարք մարզերում շարունակել իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման գծով շինարարական աշխատանքներ, ինչպես

նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը:

4. Աբու-Դաբիի Ջարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով, Սևանա լիճ ջուր տեղափոխող 48.8 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրո համակարգային թունելի որոշ հատվածների վերականգնում, վերանորոգում և շինարարություն :

Ծրագիրն իրականացնում է՝

- Արփա-Սևան թունելով ջրի տեղափոխումը դեպի Սևանա լիճ
- «ՈԱՍԹՇՎ» պետական հիմնարկի պահպանում
- Որոտան-Արփա-Սևան թունելների պահպանում և շահագործում
- Արփա-Սևան թունելի հիմնանորոգման աշխատանքներ

5. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է

- բարելավել կեղտաջրերի մաքրման կայանը՝ հատկապես առաջնային մաքրումը և տիղմի մշակումը,
- բարելավել խմելու ջրի օբյեկտների մատակարարման արդյունավետությունը և անվտանգությունը Երևան քաղաքի հյուսիսային շրջաններում
- բարելավել խմելու ջրի ցանցի և հիմնական կեղտաջրերի կոլեկտորները:

6. Հայաստանի Փոքր համայնքների ջրային ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 17 համայնքներում ջրամատակարարման ապահովման և բարելավման նպատակով աշխատանքների իրականացում, այդ թվում՝ համայնքային ջրամատակարարման ցանցի վերանորոգում, Տավուշ, Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձորի մարզերում, ջրի մաքրման կայանների և ջրահեռացման կոլեկտորների վերանորոգում Դիլիջան և Ջերմուկ քաղաքներում:

ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

15.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15.1.1. Համակարգի ընդհանուր նկարագիրը

Էներգետիկան ունի ռազմավարական նշանակություն երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկ համակարգը դիտվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկը: Այդ իսկ պատճառով Էներգետիկայի զարգացումը կարևորվում է ինչպես Հայաստանի Հանրապետության արդյունաբերության, տրանսպորտի և սոցիալ-տնտեսական զարգացման, այնպես էլ ՀՀ կառավարության որդեգրած Կայուն զարգացան ծրագրի իրականացման համար:

Էներգետիկայի բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկը հանդիսանում է ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ ապահովել ցածր գներով հուսալի էներգամատակարարում՝ բոլոր սպառողների արմատական կարիքները բավարարելու համար, միևնույն ժամանակ խթանելով երկրում էներգախնայողությունը:

Վերջին տարիների տնտեսական ճգնաժամից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է մի փուլ, երբ նրա էներգահամակարգը դարձյալ կրում է պետության սոցիալական քաղաքականությունն իրականացնող անմիջական գործիքի դերը և սահմանափակում է մասնավոր սեփականատերերին պատկանող ընկերությունների ջանքերը՝ շահույթ ստանալու և զարգացման համար ներդրումներ գրավելու ուղղությամբ:

Էներգահամակարգն իր մեջ ներառում է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը: Այն ընդգրկում է շուրջ 3200 ՄՎտ ընդհանուր հզորությամբ էլեկտրակայաններ, շուրջ 35000 կմ ընդհանուր երկարությամբ տարբեր լարման էլեկտրահաղորդման գծեր, ավելի քան 9000 էլեկտրական ենթակայաններ, շուրջ 140 մլն մ³ տարողությամբ գազի ստորգետնյա պահեստարան, 1740 կմ մայրուղային և ավելի քան 11007 կմ բաշխիչ գազատար ցանցեր, 2227 գազակարգավորիչ կետեր ու բազում այլ հանգույցներ, սարքեր ու սարքավորումներ, որոնց զգալի մասը սպառել են իրենց ծառայության ժամկետները կամ գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում:

Վերջին տարիներին արտադրող հզորությունների, էլեկտրական էներգիայի տեղափոխող, բաշխող ցանցերի սերնդափոխության և արդիականացման համար պետական բյուջեի խողովակներով ներգրավվել են Գերմանական KfW բանկի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ), Համաշխարհային բանկի (ՀԲ) միջոցները:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված լինելով երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, մեծ ուշադրու-

թյուն է ցուցաբերում ՀԱԷԿ-ի անվտանգության բարձրացման միջոցառումներին, նոր ատոմային էներգաբլոկի կառուցմանը և վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված ծրագրերին:

Բնական պաշարների ոլորտում քաղաքականության հիմնական ուղղվածությունը հանդիսանում է ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը և երկրաբանական վերահսկողության իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների պաշարներով, որոնք նպաստում են հանրապետության տնտեսական զարգացմանը: Հանքավայրերի արդյունավետ շահագործումը սերտորեն կապակցված է ընդերքի շահավետ և նպատակային օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հետ:

Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Սակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ շահագործման համար հաստատված տեխնոլոգիական նախագծման նորմեր, հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններ և նորմատիվներ: Դրանց բացակայությունը գործնականում անհնար է դարձնում տվյալ բնագավառում պետությանն ամրագրված խնդիրների իրականացումը, մասնավորապես՝ հանքային հումքի նկատմամբ տնտեսության պահանջների բավարարման նպատակով ընդերքի արդյունավետ, համալիր օգտագործման ու պահպանության, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, ինչպես նաև աշխատանքների կատարման անվտանգության ապահովումը:

Ուստի բնական պաշարների ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկն էլ ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական հիմքերի ապահովումն է:

Ստորև ներկայացված է էներգետիկայի և բնական պաշարների ոլորտում բյուջետային ծրագրերի գծով իրականացվող ծառայությունների շրջանակը.

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

N	<u>Ծառայությունների շրջանակի նկարագրություն</u>	<u>Շահառուների շրջանակի նկարագրություն</u>	<u>Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը</u>
1.	Էներգետիկայի և բնական պաշարների բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր	<< բոլոր քաղաքացիներ	100%
2.	Էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցման, վերականգնման և վերանորոգման ծրագիր	<< բոլոր քաղաքացիներ	24.5%
3.	Էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության ծրագիր	<< բոլոր քաղաքացիներ	16.7%
4.	Վերականգնվող էներգետիկայի ծրագիր	<< բոլոր քաղաքացիներ	17%

N	<u>Ծառայությունների շրջանակի նկարագրություն</u>	<u>Շահառուների շրջանակի նկարագրություն</u>	<u>Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը</u>
5.	Ռեգիոնակտիվ թափոնների վնասագերծման ծառայություններ	<< բոլոր քաղաքացիներ	100%
6.	Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	<< բոլոր քաղաքացիներ	100%
7.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	<< բոլոր քաղաքացիներ	100%
8.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագիր	Քոլեջի դասախոսական և ուսանողական կազմ	100%

15.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Վերջին տարիներին էներգետիկայի ոլորտում ներդրումային քաղաքականության առումով իրականացվում է պետության մասնակցության կրճատում, ինչը պայմանավորված է որոշ ենթակառուցների մասնավորեցմամբ և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների, ինչպես նաև սեփական միջոցների ներգրավմամբ:

Օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ներգրավումը հիմնականում ուղղված է էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցմանը, վերականգնմանը և վերանորոգմանը:

էներգետիկայի ոլորտում իրականացվող ծրագրերի գծով 2008-2010թթ. ֆինանսավորումը 2005-2007թթ. համեմատ աճել է մի քանի անգամ: Վերջին տարիներին ֆինանսավորման կտրուկ աճը պայմանավորված է այդ տարիներին ծրագրերի հիմնական աշխատանքների իրականացմամբ, որոնց արդյունքում էլ զգալի առաջընթաց է արձանագրվել: Այսպես.

- **Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր (ՃՄՀԳ)**

2008-2010թթ. կատարվել են բոլոր հիմնական սարքավորումների տեղափոխման, մոնտաժման և տեղակայման աշխատանքները, ավարտվել են էներգաբլոկի շինարարական, կարգաբերման և փորձարկման աշխատանքները: Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանը շահագործման է հանձնվել 2010թ. ապրիլի 21-ին, տեխնիկական հետևյալ ցուցանիշներով՝ 271,7 ՄՎտ ընդհանուր դրվածքային, 241,9 դրվածքային էլեկտրական և 434,9 ԳՋ/ժ ջերմային հզորությամբ: Էներգահամակարգում շահագործվող մյուս ջերմային էներգաբլոկների համեմատ, նշված էներգաբլոկում վառելիքի տեսակարար ծախսը շուրջ 2-2,5 անգամ ցածր է, որի շնորհիվ ապահովվում է արտադրանքի ցածր ինքնարժեք: 2010թ. ապրիլից «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի նոր էներգաբլոկի շահագործումը տարեկան կտրվածքով էլեկտրաէներգետիկ համակարգում ստեղծում է

շուրջ 12,0 մլրդ դրամ հաշվարկային դրական արդյունք, որն էլ հնարավորություն է տվել ծածկել 2010թ. ապրիլի 1-ից գազի սակագների բարձրացման հետևանքով առաջացող տարբերությունը: Արդյունքում էլեկտրական էներգիայի վաճառքի վերջնական սակագները թողնվեցին անփոփոխ:

2010թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի նոր էներգաբլոկում արտադրվել է 1028,2 մլն կՎտժ էլեկտրական էներգիա, որից՝ 336,0 մլն կՎտժ էլեկտրական էներգիա առաքվել է ներքին ցանց («Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ), իսկ 692,2 մլն կՎտժ էլեկտրական էներգիա առաքվել է Իրան՝ ներկրված բնական գազի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա նկատմամբ համակարգում արտադրվել է 15 % ավելի էլեկտրական էներգիա:

• Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (ՃՄՀԳ)

ՃՄՀԳ-ի փոխառության ներքո «էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են 110 կՎ ենթակայանների վերականգնման և SCADA/կապի համակարգի առաջին փուլի ներդրման աշխատանքները:

110 կՎ ենթակայանների վերականգնման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2010թ. սեպտեմբերին, որի արդյունքում Հայաստանի էներգահամակարգի 17 առավել խնդրահարույց ենթակայաններում փոխարինվել են հիմնական սարքավորումները:

SCADA/կապի համակարգի առաջին փուլի ներդրման աշխատանքներն ավարտվել են 2010թ. սեպտեմբերին, որի արդյունքում ստեղծվել է Հայաստանի էներգահամակարգի կառավարման մեկ ամբողջական համակարգ, այդ թվում՝ համապատասխան կապի, տվյալների և տեղեկատվության հավաքագրման, հաղորդման և պահպանման, էլեկտրաէներգիայի և էներգետիկ ռեսուրսների կառավարման, ինչպես նաև վերահսկման համակարգեր, որը հնարավորություն կստեղծի էներգահամակարգի ավելի հուսալի, արդյունավետ և կայուն աշխատանքի համար:

SCADA/կապի համակարգի առաջին փուլի իրականացման աշխատանքներն ընդգրկել են 220 կՎ լարման 14 ենթակայան և 12 արտադրող կայան: Բոլոր ենթակայանները և կայանները Կենտրոնական Կարգավարական Կենտրոնի (ԿԿԿ) հետ կապվել են բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի ամպրոպապաշտպան ճոպանի մեջ ներկառուցված 450 կմ ընդհանուր երկարությամբ օպտիկամանրաթելային OPGW մալուխով, 22 կմ ստորգետնյա օպտիկամանրաթելային մալուխով, ինչպես նաև բարձր հաճախականային կապուղիներով, որոնց միջոցով ենթակայաններից և կայաններից տվյալները մեծ արագությամբ և բարձր ճշտությամբ տեղափոխվում են ԿԿԿ:

SCADA/կապի ներդրումից հետո ԿԿԿ-ում սարքավորումների ազդանշանների քանակն ավելացել է 4,1 անգամ կազմելով 1622, չափման ազդանշանների քանակը՝ 18,5 անգամ կազմելով 3589, իսկ ռելեական պաշտպանության և հեռահար կառավարման ազդանշանները ընդհանրապես

բացակայում էին և SCADA/կապի ներդրումից հետո դրանք կազմել են համապատասխանաբար՝ 1265 և 194:

• Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր (KfW)

Գերմանական KfW բանկի վարկային միջոցների հաշվին ավարտվել են «Վանաձոր-2», «Կամո» և «Ալավերդի-2» ենթակայանների վերականգնման աշխատանքները: Գրեթե բոլոր էլեկտրական սարքավորումները, բացի ուժային տրանսֆորմատորներից, փոխարինվել են նոր արևմտաեվրոպական արտադրության սարքավորումներով: Վերակառուցումից հետո նշված ենթակայանները տարածաշրջանում համարվում են ամենաժամանակակից և տեխնիկապես հագեցված բարձրավոլտ ենթակայաններ:

«Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման արդյունքում տնտեսված շուրջ 1,3 մլն եվրո գումարը KfW բանկի և ՀՀ կառավարության համաձայնությամբ նպատակաուղղվել է «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի բաց բաշխիչ սարքավորման մասնակի վերակառուցմանը, ինչպես նաև «Գյումրի», «Լոռի», «Գուգարք 1, 2», «Նորադուզ», «Լիճք» օդային գծերի վրա տեղադրված արգելակիչները և զտիչները նորով փոխարինմանը: Ենթակայանի վերականգնման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 2010թ. սեպտեմբերին:

Վերականգնումը նպաստել է էներգամատակարարման հուսալիության և անվտանգության բարձրացմանը՝ նվազեցնելով վթարային անջատումները և չմատակարարվող էլեկտրաէներգիայի քանակները:

• Համաշխարհային բանկի միջոցների հաշվին ավարտվել է «Սիփան» և «Մուսալեռ» 220 կՎ օդային գծերի հիմնական պաշտպանության փոխարինումը նոր միկրոպրոցեսորային դիստանցիոն պաշտպանություններով:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող ներդրումներն առավելագույնս նպաստում են էներգամատակարարման հուսալիության և անվտանգության բարձրացմանը, ինչպես նաև տեխնիկական և առևտրային կորուստների նվազեցմանը, էլեկտրաէներգիայի մատակարարման անջատումների քանակի կրճատմանը, շահագործման ծախսերի իջեցմանը:

Այսպես, 2009-2010թթ. ընթացքում նախորդ երկու տարիների համեմատ էներգահամակարգում բավականաչափ նվազել են վթարները՝ մոտ 3,8 անգամ կամ 74.2%-ով և խախտումները՝ մոտ 1.09 անգամ կամ 8.4%-ով:

Իսկ բարձրավոլտ էլեկտրացանցերում տեխնոլոգիական կորուստները 2008թ-ի համեմատ 2009թ. նվազել են 0,24 %- ով:

• Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Վերականգնվող Էներգետիկայի Ծրագրի (ՎԷԾ) շրջանակներում նախատեսված էր 2008-2009 թթ. հանրապետության համար

ապահովել համապատասխանաբար՝ 80 և 105 ՄՎտ վերականգնվող էներգետիկ տեղակայված արտադրող հզորություններ՝ համապատասխանաբար՝ 208 և 256 մլն. կՎտժ տարեկան արտադրանքով: ՎԷԾ իրագործման արդյունքում գերակատարվել են նշված նպատակային ցուցանիշները: Այսպես, 2008 և 2009 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում արձանագրվել է 88 և 106 ՄՎտ վերականգնվող էներգետիկ տեղակայված արտադրող հզորություն համապատասխանաբար՝ 232 և 304.2 մլն. կՎտժ տարեկան արտադրանքով:

2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՎԷԾ իրագործման արդյունքում 3 738 869.32 ԱՄՆ դոլարի չափով վարկավորվել է 23 նոր ՓՀԷԿ-ների շինարարություն: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախատեսված էր վարկավորել 3 250 000 ԱՄՆ դոլարի չափով, շեղումը պայմանավորված է այդ շուկայի էական աշխուժացմամբ: 2009 թվականին ՎԷԾ իրագործման արդյունքում 1 248 202 ԱՄՆ դոլարի չափով վարկավորվել է 3 նոր ՓՀԷԿ-ների շինարարություն: 2009 թվականին նախատեսված էր վարկավորել 1 991 800 ԱՄՆ դոլարի չափով, շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պլանավորումը իրականացվել էր՝ հաշվի առնելով նախորդ տարիների ցուցանիշները, սակայն 2009 թվականից այդ ոլորտում ՓՀԷԿ-ների վարկավորման պահանջարկը նվազեց, և 2010 թվականին իրականացվել է ընդամենը 12 500 ԱՄՆ դոլարի վարկավորում, որը համապատասխանում է այդ տարի պլանավորված ցուցանիշին:

Այսպիսով ՎԷԾ իրագործման արդյունքում վարկավորվել է շուրջ 26 նոր ՓՀԷԿ-ների շինարարություն՝ շուրջ 42 ՄՎտ տեղակայված նոր հզորություններով:

• Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2009թ. ստորագրվել են հետևյալ երեք պայմանագրերը՝ «Երկրաբանական դաշտային հետախուզական աշխատանքներ, Գրիծոր և Քարքար երկրաջերմային տեղանքների մագնիսաթելուրային զոնդավորում», «ՄԹ արդյունքների մեկնաբանում», «Երկրաջերմային փորձագետ»:

«Երկրաբանական դաշտային հետախուզական աշխատանքներ, Գրիծոր և Քարքար երկրաջերմային տեղանքների մագնիսաթելուրային զոնդավորում»

Ըստ նախագծի տեխնիկական առաջադրանքի նախատեսված էր Քարքար և Գրիծոր երկու պոտենցիալ տեղամասերում անցկացնել երեք հիմնական տիպի հետազոտություններ.

1. Իրականացվել է երկրաբանական դաշտային նախնական հետախուզություն:

2. Իրականացվել է նմուշառում բոլոր աղբյուրներից և մակերևութային ջրերից:

3. Իրականացվել է մագնիսա-թելուրային հետազոտություններ Գրիծոր, Քարքար պոտենցիալ երկրաջերմային տեղանքների համար:

«ՄԹ արդյունքների մեկնաբանում»

Ելնելով խորքային ջերմության հեռանկարայնության վերաբերյալ Գրիծոր և Քարքար տեղամասերում և նրանց հարակից տեղամասերում նախկինում, ինչպես նաև «ԳԵՈՌԻՍԿ» գիտահետազոտական ընկերության կողմից 2009թ. կատարած երկրաբանական, երկրաքիմիական, երկրաֆիզիկական (ՄԹ և ԱԷՄ) ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը հանգեցրել է այն եզրակացության, որ նշված ուսումնասիրությունների պայմանական գնահատականների գումարային արդյունքում, որպես 3D սեսյամիկ աշխատանքների իրականացման հեռանկարային տարածք առաջարկվում է Քարքար տեղամասը:

Եռաչափ մագնիսաթելուրային - ՄԹ ուսումնասիրություն, գրավիմետրական հետազոտություն և հողից արտազատված գազերի (CO₂) ուսումնասիրություն Քարքարի տեղանքում և հարակից տարածքներում, առաջադրանքի մրցության գործընթացն ընթացքի մեջ է:

Բնական պաշարների ոլորտի զարգացումը ընթացել է հիմնականում բյուջետային և արտաբյուջետային հատկացումների հաշվին ապահովելու՝

- վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները,
- չվերականգնվող բնական ռեսուրսների գծով դրանց բանական և արդյունավետ օգտագործումը:

Բնագավառի զարգացումն ընթացել է համապատասխան հաստատված ծրագրերի իրագործման միջոցով:

2007-2009թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների մոտ 3 անգամ ֆինանսավորման աճի շնորհիվ համակարգում իրականացվել են.

1. «ՀՀ 1:50000 մասշտաբի երկրաբանապահպանական հետազոտություններ և քարտեզագրություն Երևան քաղաքի և նրա մերձակա տարածքներում (K-38-137-Ե, Դ; K -38-138-Ա, Բ) թերթերի տարածքում» ենթածրագիրը, որի արդյունքների հիման վրա ներկայացվել է ամփոփ հաշվետվություն: Ներկայացվել են նշված տարածքների երկրաբանապահպանական վիճակը, առաջարկություններ են արվել վիճակի բարելավման և նոր ծրագրեր կազմելու համար: Այս ծրագրի արդյունքներից ենթադրվում է, որ նույն ծրագրով հետազոտություններ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրապետության մյուս մարզերում: Ենթածրագիրը իրականացվել է 2007-2009թթ. ընթացքում, պետական բյուջեի կողմից ֆինանսավորումը կազմել է 15.0 մլն.դրամ:

2. «Կովկասի և հարակից տարածքների 1:1 000 000 մասշտաբի երկրաբանական ատլասի կազմման և «Կովկաս-Ղրիմ-Կարպատյան մարզերի երկրաբանական կառուցվածքը» միջազգային նախագծի իրականացման աշխատանքները: Արդյունքում ներկայացվել են ստեղծվել են ՀՀ տարածքի 1:1 000 000 մասշտաբի երկրաբանական, տեկտոնական, երկրաֆիզիկական,

հիդրոերկրաբանական, հանքային և բուժիչ ջրերի, երկրաբանապահպանական, հանքահումքային համալիրի ենթակառուցվածքների, հանքածագումնաբանական ոչ մետաղական օգտակար հանածոների շերտերով և այլն թվով 12 քարտեզներ: Ծրագիրն իրականացվել է 2008- 2009թթ. ընթացքում, պետական բյուջեի կողմից ֆինանսավորմամբ կազմել է 22.0 մլն.դրամ:

3. «Գեղամա լեռների հյուսիսային և արևմտյան ստորոտների 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթ (K-38-126-B,Գ; K-38-138-A,Ե,B,Դ) թերթեր»-ի տարածքում աշխատանքների կատարման համար պետական բյուջեի ֆինանսավորմամբ կազմել է 44.8 մլն.դրամ: Կատարված աշխատանքների արդյունքում ստացվել են այնպիսի արդյունքներ, ինչպիսինք են երկրաբանական կառուցվածքի փոփոխությունները, ինչպես նաև նոր հանքերակումների հայտնաբերումը:

4. «ՀՀ տարածքի էկզոգեն (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիթորինգի վարում» ծրագրի պետական բյուջեից ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմել է 31.0 մլն.դրամ: Կատարված աշխատանքների արդյունքում կազմվել են ՀՀ տարածքի սողանքների կադաստրը և 1:200000 մասշտաբի ՀՀ տարածքի սողանքային քարտեզը, նշվել են առավել վտանգավոր սողանքային գոտիները և արվել է առաջարկություն ավելի մանրամասն ուսումնասիրել ոհակային գոտիները՝ համապատասխան առաջարկություններ կատարելով:

Վերոնշյալ չորս ծրագրերով իրականացված աշխատանքների արդյունքները շատ կարևոր տեղեկատվության աղբյուրներ են: Գործող օրենքների համաձայն այդ աշխատանքների հաշվետվությունները հանձնվել և գրանցվել են «Հանրապետական երկրաբանական Ֆոնդ» ՊՈԱԿ-ում:

Ներկայացվել է «ՀՀ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների վերաբերյալ համակարգչային տեղեկատվական համակարգի ստեղծում <Arc GIS միջավայրում>» ենթածրագրով միջանկյալ հաշվետվություն՝ Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Վայքի և Սյունիքի մարզերի հանքային երևակումների վերաբերյալ, իսկ 2011թ-ին կներկայացվի Արարատի և Արագածոտնի մարզերի մասին: Ծրագիրը նպաստում է ՀՀ տարածքում բազմամյա երկրաբանահետախուզակական աշխատանքների (ԵՀԱ) արդյունքում հայտնաբերված պինդ օգտակար հանածոների և երևակումների հետ կապված բազմաթիվ փաստաթղթերի, քարտեզների, գծագրական նյութերի, եզրակացությունների, առաջարկությունների, տեղեկանքների լիարժեք օգտագործումը ապագայում ԵՀԱ պլանավորման, ԵՀ ուսումնասիրությունների հետագա ուղղությունների մշակման, անհրաժեշտության դեպքում համապատասխան տեղեկանքների տրամադրման համար:

Չնայած դրան, որ «Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսված աշխատանքները վերջին տարիներին կատարվել են ժամանակին և 100%-ով, 2009թ.-ին այս ծրագրի գծով աշխատանքները կատարվել են մասամբ: 2009թ

«Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություններ» ծրագրի գծով ֆինանսավորումը եղել է 152,2 մլն դրամ, որից «Ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքի տեղամասերի քարտեզագրման աշխատանքների իրականացում» ծրագրի ֆինանսավորման չափը կազմել է 120,2 մլն դրամ: Սակայն ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են 22.8%-ով՝ 27,3 մլն դրամի՝ Արարատի մարզի բնակչության կողմից խոչընդոտներ ստեղծվելու պատճառով: Չօգտագործված՝ 92,4 մլն դրամ գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Իսկ այդ գումարի սահմաններում իրականացվել են միայն հանույթային աշխատանքները, պարզաբանվել են և հիմնավորվել են մի շարք երկրաբանական շերտախմբերի հասակները՝ առանձնացնելով նոր ֆաունիստական հորիզոններ: Իրականացված աշխատանքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը հանձնվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ֆինանսական ցուցանիշները (2004-2010թթ.) ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակում (հազ. դրամ) .

	Կատարված աշխատանքներ													
	2004		2005		2006		2007		2008		2009		2010	
	Հաստատված	Փաստացի	Հաստատված	Փաստացի	Հաստատված	Փաստացի	Հաստատված	Փաստացի	Հաստատված	Փաստացի	Հաստատված	Փաստացի	Հաստատված	Փաստացի
2	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երկրաբանահետախուզական աշխատանքներ	15 500.0	15 500.0	20 000.0	20 000.0	19 000.0	19 000.0	69 000.0	68 394.0	41 000.0	39 324.0	152 200.	59 113.0	15 000.0	15 000.0

Աղյուսակում ներկայացված տվյալներից երևում է, որ երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման նպատակով առավելագույն հատկացում կատարվել է 2009 թ., իսկ վերջին երկու տարիներին՝ 2010-2011թթ ընթացքում ֆինանսական ճգնաժամի պատճառով բնական պաշարների ոլորտում ֆինանսավորումը կրճատվել է մոտ 3,5 անգամ:

15.2. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էներգետիկ համակարգի հիմնական խնդիրները շարունակվելու են կապված լինել բնագավառի զարգացման՝ ներդրումային, ֆինանսական և այլ ծրագրերի մշակմամբ, բարոյապես ու ֆիզիկապես մաշված առանձին օբյեկտների ու կառույցների հրատապ վերակառուցման ու

արդիականացման գործում առկա վարկերի արդյունավետ օգտագործման և հնարավոր նոր վարկերի ձեռքբերման, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և արտադրական հզորությունների ողջամիտ օգտագործման, ինստիտուցիոնալ բարեփոխումների հետագա կատարելագործման, էլեկտրաէներգետիկական շուկայի շարունակական ազատականացման և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրացման գործընթացի ակտիվացման հետ (տես Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարություն, էջ 13-14):

Այս խնդիրների լուծումը կապահովի հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի մատակարարում, որն էլ իր հերթին կխթանի երկրի տնտեսական կայուն զարգացմանը:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից են նաև հանրապետությունում գազամատակարարման շահագործման անվտանգության ապահովումը:

էներգետիկ համակարգի խնդիրների շարքում կարևորվում է ջերմամատակարարման համակարգի վերականգնումը, որն անմիջականորեն կհանդիսանա երկրում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների ներդրման արդյունքը, ինչպես նաև կնպաստի երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Միջնաժամկետ հատվածում էներգետիկայի ոլորտի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում դասվում են.

- «Գյումրի-2» ենթակայանի վերականգնումը,
- Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնումը,
- Երկրաջերմային ուսումնասիրության իրականացումը և արդյունքների մեկնաբանությունը,
- Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների իրականացումը,
- Համայնքների գազաֆիկացումը:

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1. Նպատակները

էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, որոնք իրենց հերթին կազմում են տնտեսության կայուն զարգացման հիմնական գործոնների զգալի մասը:

Միջնաժամկետ հատվածում էներգետիկայի ոլորտի հիմնական նպատակներն են.

- Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացմանը նպաստելը,
- էներգետիկայի բնագավառի անվտանգության ողջամիտ մակարդակի ապահովումը, այդ թվում.

- ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների տարատեսականացման և արտադրական հզորությունների առավելագույն օգտագործման ապահովումը,

- տեղական էներգետիկ պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ և ողջամիտ օգտագործումը և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառումը:

• Հանրապետությունում գազամատակարարման ցանցի վերազինումը, ինչպես նաև կենցաղային նպատակներով օգտագործվող գազի սարքավորումների շահագործման անվտանգության ապահովումը:

Միջնաժամկետ հատվածում բնական պաշարների ոլորտի կարևորագույն նպատակներն են.

• բնական պաշարների ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,

• ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը և երկրաբանական վերահսկողության իրականացումը:

• շրջակա միջավայրի աղտոտման (ներառյալ՝ ռադիոակտիվ աղտոտման) կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը:

Բնական պաշարների ոլորտի նպատակներն անմիջականորեն բխում են ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 26-ի N 380-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության ծրագրի դրույթներից:

2.2. Գերակայությունները

Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտի 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում գերակայություններն ամփոփված են հետևյալ աղյուսակում:

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2012	2013	2014	
1	Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում			1. Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 26-ի N 380-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.3.11.1 կետի 2. Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրի 8.4. «Էներգետիկա» բաժնի
2	Սեփական վերականգնվող էներգառեսուրսների ողջամիտ յուրացման խթանում			
3	Հանրապետությունում գազամատակարարման ցանցի վերազինում			
4	Ընդերքի պահպանության վերարտադրության արդյունավետ և			

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2012	2013	2014	
	համալիր օգտագործման ապահովում			
5,	Շրջակա միջավայրի աղտոտման (ներառյալ՝ ռադիոակտիվ աղտոտման) կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը			Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 26-ի N 380-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության ծրագրի 4.3.10.1 կետի

3. ՄԺԾԾ Ժամանակահատվածում ոլորտում (համակարգում) իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Միջնաժամկետ հատվածում էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում գոյություն ունեցող ծրագրերն անմիջականորեն նպաստում են ոլորտների ընդհանուր նպատակների ու գերակայությունների իրականացմանը, որոնք էլ ուղղակիորեն բխում են կառավարության որոշեցրած քաղաքականությունից:

1. Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր (ՃՄՀԳ)

ՃՄՀԳ-ի աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի նախագծի շրջանակներում «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ում կառուցվել է նոր էներգաբլոկ՝ 271,7 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ, 245,9 ՄՎտ դրվածքային էլեկտրական հզորությամբ:

Հանրապետությունում գործող ՋԷԿ-երի համեմատ նոր էլեկտրակայանը ունի բարձր բնապահպանական ցուցանիշներ, նույն դրվածքային հզորությունների դեպքում նոր էլեկտրակայանն ավելի քիչ արտանետումներ ունի գործող կայանների համեմատ, մասնավորապես՝ ազոտի օքսիդներ՝ (NO₂) շուրջ 9 անգամ, ածխաթթու գազ՝ (CO₂) մոտ 2 անգամ, ածխածնի օքսիդ՝ (CO) մոտ 3,8 անգամ, ինչպես նաև ջրի օգտագործման կրճատումը 3,6 անգամ:

Գոյություն ունեցող Երևանի ՋԷԿ-ը լրիվ կոնդենսացիոն (առանց ջերմային էներգիայի առաքման) ռեժիմներում 1 կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար ծախսում է 450-500 գ/կՎտժ վառելիք, իսկ նույն ռեժիմներում նոր կայանը ծախսում է 219,9 գ/կՎտժ, իսկ ջերմաֆիկացիոն (առավելագույն ջերմային սպառում) ռեժիմներում համապատասխանաբար՝ 374 գ/կՎտժ և 177,9 գ/կՎտժ:

Ծրագիրն իրականացվել է «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից:

2. Գերմանիայի գարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման ծրագիր (KfW)

KfW բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրի նպատակն է վերականգնել «Գյումրի-2» ենթակայանը:

«Գյումրի-2» ենթակայանն ունի տեղական և տարածաշրջանային ռազմավարական կարևորություն: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը, կնվազի վթարային անջատումների և չմատակարարվող էլեկտրաէներգիայի քանակները:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից:

3. Գերմանիայի գարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր (KfW)

KfW բանկի մասով «Տարածաշրջանային հզորության փոխանակում-1, Ալավերդի-Գարդաբանի էլեկտրահաղորդման վերականգնում» վարկային ծրագրի շրջանակներում «Ալավերդի-2» ենթակայանի վերակառուցման արդյունքում տնտեսված շուրջ 1,3 մլն եվրո գումարը KfW բանկի և ՀՀ կառավարության համաձայնությամբ նպատակաուղղվել է «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի բաց բաշխիչ սարքավորման ամբողջական վերակառուցմանն, ինչպես նաև «Գյումրի», «Լոռի», «Գուգարք 1, 2», «Նորադուզ», «Լիճք» օդային գծերի վրա տեղադրված արգելափակիչները և զտիչները նորով փոխարինմանը: Վերակառուցման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը, կվերանա վթարային անջատումները և չմատակարարվող էլեկտրաէներգիայի քանակները:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից:

4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագիր

«Երկրաջերմային էներգիայի ծրագրի» դրամաշնորհի համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրվել է 2009թ. փետրվարի 26-ին:

Ծրագրի իրականացման նպատակով Գլոբալ բնապահպանական միջոցառումների Գեոֆոնդ 2 միջոցներից Հայաստանին տրամադրվել է 1.5 մլն. ԱՄՆ դոլար դրամաշնորհ:

Երկրաջերմային էներգիայի ծրագրի նպատակն է գնահատել առավելագույն մեծ երկրաջերմային ներուժ ունեցող երկրաջերմային տեղամասի հետազոտական հորատման կենսունակությունը: Ծրագրի արդյունավետության հիմնական ցուցանիշը հետախուզական հորատանցք հորատելու կամ չհորատելու որոշումն է՝ կախված հետախուզական աշխատանքների արդյունքներից: Ծրագրի շրջանակներում իրականացվելիք հետախուզական աշխատանքները կհանդիսանան միջազգային լավագույն պրակտիկային համահունչ իրականացվող հետախուզական աշխատանքների փորձ: Հետևաբար, այդ փորձը կարող է կիրառվել Հայաստանում կամ նմանատիպ երկրաբանական կառուցվածք ունեցող այլ երկրներում երկրաջերմային հետախուզությունների համար:

Ծրագիրն իրականացվում է «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»-ի կողմից:

5. Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ (ՀՀ պետություն)

Ծրագրի շրջանակներում իրականացվում է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում և թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իրենցնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

Ծրագիրն իրականացվում է «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի կողմից:

6. Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն (ՀՀ պետություն)

Ծրագրի շրջանակներում կշարունակվի երկրաբանական ֆոնդի գործունեության արդյունավետության բարձրացումը՝ նպատակաուղղված նրա հիմնական գործառույթների իրականացման ապահովմանը:

Ծառայությունը մատուցվում է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից:

3.2. Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

Միջնաժամկետ հատվածում նոր նախաձեռնությունների գծով Էներգետիկայի ոլորտում ծրագրվում է իրականացնել՝

1. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագիր (KfW)

KfW բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրի նպատակն է վերականգնել Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրը, մասնավորապես Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի Տաթև, Շամբ և Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների հիմնական սարքավորումների ու սարքերի նախագծային հզորությունների ու պայմանների վերականգնումն է, ըստ որի կբարձրանա կայանների շահագործման հուսալիությունը, ինչպես նաև հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրաէներգիայի քանակը և որակը:

Տաթև ՀԷԿ-ը, որը նախագծված է որպես պիկային կայան, ներկայումս միակ կայանն է, որ աշխատում է որպես ռեակտիվ հոսանքի կոմպենսատոր և կարգավորում է Հայաստանի և Իրանի սեզոնային փոխհոսքերը:

Ծրագիրն իրականացվում է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի կողմից:

ԳԼՈՒԽ 16. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

16.1. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ընդհանուր նկարագիրը.

ՓՄՁ-ի ոլորտն իր առանձնահատկություններով և զարգացմամբ նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

ՓՄՁ-ի պետական աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայում Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է:

1.2. Վերջին երկու տարիների Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման միտումները

2002 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնց ֆինանսավորումը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների համաձայն ապահովվում է ՀՀ պետական բյուջեից՝ առանձին տողով: ՓՄՁ-ի ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները պայմանավորված են ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության ծրագրերի (գործարար ծրագրերի ու նախաձեռնությունների) արդյունավետ և նպատակային իրականացմամբ, ինչպես նաև ՓՄՁ-ի ոլորտի զարգացմանը նպատակաուղղված համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմամբ և կայացմամբ:

Ընդհանուր առմամբ 2002-2009 թվականներն ընկած ժամանակահատվածում ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 2.5 մլրդ դրամ, աջակցություն է ցուցաբերվել շուրջ 25.000 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների:

ՓՄՁ պետական աջակցության 2009թ. ծրագրի իրականացման համար ՀՀ 2009թ. պետական բյուջեից նախատեսվել և հատկացվել է 573.5 մլն դրամ, իսկ 2010թ.՝ 150.0 մլն դրամ: 2009թ. աջակցություն է ցուցաբերվել ավելի քան 4700 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների, 2010թ.՝ 3766: Բացի այդ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է 2009թ. շուրջ 135.3 մլն դրամ, իսկ 2010թ.՝ 122.0 մլն դրամ:

2009թ. ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 57 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 296.2 մլն դրամի վարկային երաշխավորություն՝ ապահովելով 506.6 մլն դրամի վարկային փաթեթ, իսկ 2010թ. տրամադրվել է 63.5 մլն դրամի երաշխավորություն 13 ՓՄՁ-ի սուբյեկտների՝ ապահովելով 136.3 մլն դրամի վարկային փաթեթ:

Ընդհանուր առմամբ ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 2004-2010 թվականներին 370 ՓՄՁ-ի սուբյեկտների տրամադրվել է 1,51 մլրդ դրամի վարկային երաշխավորություն՝ ապահովելով շուրջ 2,8 մլրդ դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 370 ՓՄՁ-ի սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է շուրջ 3.5 մլրդ դրամ:

Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ուղղությամբ 2009թ. իրականացվել է 11, 2010թ.՝ 9 ծրագիր Հայաստանի Հանրապետության մարզերում՝ «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագրի շրջանակներում:

ՀՀ մարզերում հյուրատնային գործունեության զարգացման նպատակով ՀՀ Լոռու և ՀՀ Սյունիքի մարզերում իրականացվել է հյուրատների կլաստերի զարգացման ծրագիրը: Սույն ծրագրի շրջանակներում մշակվել է կլաստերի զարգացման ռազմավարությունը, հիմնադրվել են հյուրատների մարքեթինգային կենտրոններ:

1.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ընդհանուր խնդիրները.

Չնայած նրան, որ վերջին տարիներին Հայաստանում հիմնականում լուծվել են ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ հիմնախնդիրներ ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության ուղղություններով, սակայն երկրում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ.

- ձեռնարկատիրական գործունեության խթանման համապատասխան ենթակառուցվածքների և մեխանիզմների անբավարարությունը,
- ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությունը՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ,
- սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակասը,
- գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունները,

- ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացման, վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի արտահանման հնարավորությունների պակասը:

2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի նպատակները և գերակայությունները

ՄԺԾԾ Ժամանակահատվածում

2.1. Նպատակները

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության ռազմավարական նպատակներն են՝

1. գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, մասնավորապես, կանանց, ինչպես նաև աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, հատկապես սահմանափակ կարողություններով անձանց համար՝ նախապատվություն տալով Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին,

2. աջակցության նոր մեխանիզմների (նոր մոտեցումների) կիրակմամբ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության գործող համակարգից աջակցության նոր համակարգին անցման նախապատրաստումը և իրականացումը, ինչը կնպաստի ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցության արդյունավետության բարձրացմանը:

Վերոհիշյալ նպատակները համահունչ և փոխկապակցված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրային միջոցառումների ցանկում ընդգրկված ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրի նպատակային ուղղությունների հետ:

2.2. Գերակայությունները

Առաջիկա 3 տարիների ռազմավարական նպատակներով պայմանավորված ՓՄՁ-ի ոլորտի գերակայություն է նորարարություններ և ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնող ու կիրառող («ագրեսիվ» նորարարական նախաձեռնություններ ունեցող), ինչպես նաև հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերումը՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծման և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով երկրում գործազրկության մակարդակի կրճատմանը:

3. ՄԺԾԾ Ժամանակահատվածում Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրակա-նացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսված ծրագրային ուղղություններն (ծրագրային միջոցառումները) ուղղված են ՀՀ մարզերում նոր ՓՄՁ-ի սուբյեկտների և նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող ՓՄՁ-ի սուբյեկտների մրցունակության

բարձրացմանը, ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող տարածաշրջաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, երկրի ՀՆԱ-ում, ինչպես նաև այլ մակրոտնտեսական ցուցանիշներում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացմանը:

Ըստ առանձին ծրագրային ուղղությունների (ծրագրային միջոցառումների) ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրի իրականացումից ակնկալվում է.

1. Մշակել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի մարզային մասնաճյուղի գործունեության նոր մոդելը և այն փորձնական ներդնել նախապես ընտրված 2 մասնաճյուղերում: Նոր մոդելի փորձարկումից հետո այն հաջորդ տարվա ընթացքում կներդրվի նաև մնացած մարզային մասնաճյուղերում.

2. Աջակցություն ցուցաբերել առնվազն 150 սկսնակ գործարարի՝ ապահովելով շուրջ 30 նոր գրանցված կազմակերպություններ, շուրջ 50 նոր ստեղծված աշխատատեղեր Հայաստանի Հանրապետության մարզերում.

3. Տեղական արտադրանքի խթանման և տեղական ապրանքանիշերի ձևավորման ծրագրի շրջանակներում իրականացնել տեղական արտադրանքի խթանման և տեղական ապրանքանիշերի ձևավորման 2 ծրագիր նախապես ընտրված 2 տեսակի արտադրանքի ուղղությամբ՝ ծրագրում ներգրավելով 20-30 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտների.

4. ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանմանն աջակցության ծրագրով նախատեսված առանձին ուղղություններով աջակցություն ցուցաբերել 30-40 ՓՄՁ-ի սուբյեկտների.

5. ՓՄՁ-ի սուբյեկտներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագրով նախատեսված առանձին ուղղություններով աջակցություն ցուցաբերել 40-50 ՓՄՁ-ի սուբյեկտների.

6. ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության մարզերում գործող 10-15 ՓՄՁ-ի սուբյեկտների.

7. ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի շրջանակներում վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում ապահովել Հայաստանի Հանրապետության մարզերում գործող 2-3 ՓՄՁ-ի սուբյեկտների.

8. ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնդման ծրագրով նախատեսված առանձին ուղղություններով աջակցություն ցուցաբերել 80-100 ՓՄՁ-ի սուբյեկտների.

9. Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերել ընդհանուր առմամբ 3000-4000 ՓՄՁ-ի սուբյեկտներին (ներքին մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցություն կցուցաբերվի 80-100 ՓՄՁ-ի սուբյեկտներին)։

10. ՓՄՁ-ի սուբյեկտների կադրային ներուժի ձևավորման և զարգացման ծրագրի շրջանակներում ուսուցողական աջակցություն ցուցաբերել 150-200 ՓՄՁ-ի սուբյեկտներին։

11. Հայաստանում Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում նորարարական և միջազգայնացման աջակցություն ցուցաբերել շուրջ 70 ՓՄՁ-ի սուբյեկտների (գործարար համագործակցության հաստատման միջոցառումների կազմակերպում և (կամ) Հայաստանի գործարարների մասնակցության ապահովում գործընկերների կողմից կազմակերպվող միջոցառումներին)։

12. Աշխատանքներ իրականացնել Հայաստանում ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված համապատասխան ծրագրեր (միջոցառումներ) իրականացնող միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, մասնավորապես ՓՄՁ-ի զարգացման (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի, ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանն ուղղությամբ։

ՓՄՁ-ի ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերի համար պետական բյուջեից 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է հատկացնել յուրաքանչյուր տարվա համար 150 – ական մլն դրամ, որի սահմաններում կապահովվի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատողների) վարձատրությունը (100-ական մլն դրամ) և «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում» ծրագրային միջոցառումը (50-ական մլն դրամ)։

Տեխնիկական աջակցության բնույթի ծրագրային միջոցառումները նախատեսվում է իրականացնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, ազատ դրամական միջոցների, խնայողությունների, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջոցների հաշվին։

Ծրագրով նախատեսված «ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրային միջոցառումը (ծրագրային ուղղությունը) վարկային երաշխավորությունների տրամադրման մասով կիրականացվի ձևավորված դրամագլխի ամորտիզացումների հաշվին, իսկ կապիտալի ֆինանսավորումը և ուղղակի վարկավորումը՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության շրջանակներում։

16.1.2. Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.2. Զբոսաշրջության ոլորտի նկարագիրը.

Վերջին տարիներին, շնորհիվ զբոսաշրջության ոլորտում վարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, զբոսաշրջությունը Հայաստանում արձանագրում է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: 2001թ-ից ի վեր Հայաստան կատարված միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է 25%:

Զբոսավարների և ուղեկցորդների գործունեության լիցենզավորման գործընթացի շրջանակներում 2009 թ-ին զբոսավարի գործունեության լիցենզիա են ստացել 17 զբոսավար, և այսօր զբոսաշրջիկներին զբոսավարի ծառայություն են մատուցում 140 զբոսավար և 2 ուղեկցորդ, իսկ 2010 թ-ին զբոսավարի գործունեության լիցենզիա են ստացել 22 զբոսավար, և այսօր զբոսաշրջիկներին զբոսավարի ծառայություն են մատուցում մոտ 180 զբոսավար և 2 ուղեկցորդ:

Շարունակելով հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը որակավորման 2009թ. վկայականներ են ստացել 7 հյուրանոց և 4 զբոսաշրջային տուն, այնուհետև՝ 14 հյուրանոց և 11 զբոսաշրջային տուն՝ 2010թ.:

1.2.2. Զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները.

2000 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են զբոսաշրջության զարգացման պետական տարեկան ծրագրեր, որոնք հիմնականում ուղղված են եղել մարքեթինգային քաղաքականության իրականացմանը, մասնավորապես Հայաստանի, որպես զբոսաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի ձևավորմանը և շարունակական կատարելագործմանը:

2002-2009 թվականներին ընկած ժամանակահատվածում Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացվել են 40-ից ավելի միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին, գովազդային նյութերի հազարավոր տպագրական և տեսանյութեր են տարածվել պահանջարկի շուկաներում, հարյուրավոր մասնագիտացած լրագրողների և տուրօպերատորների համար Հայաստան ճանաչողական այցեր են կազմակերպվել, ինչի արդյունքում 2000թվականին 45 հազար միջազգային այցելուների թիվը դինամիկ աճ է գրանցել հասնելով 680 հազարի 2010 թվականին, միաժամանակ 2009 թվականի համեմատ աճը կազմել է մոտ 19%:

2008 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 558440՝ 2007թ. համեմատ աճելով 9.4%-ով: Չնայած 2009թ. ընթացքում համաշխարհային զբոսաշրջային այցելությունների անկմանը, Հայաստանում միջազգային զբոսաշրջային այցելությունների անկում չի արձանագրվել: 2009թ. Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 575 281՝ 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատ (558443) աճելով 3%-ով: Պաշտոնական վիճակագրական տվյալները փաստում են, որ 2010թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին միջազգային այցելությունների թիվը կազմել է 487902, 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 15.6%-ով:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության իրականացման շրջանակներում 2005թ. Հայաստանում գործողության մեջ են դրվել «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» (10.06.2004թ. N 946-Ն) և «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» (10.06.2004թ. N 945-Ն) ՀՀ կառավարության որոշումները, որոնց համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանալով ՀՀ կառավարության լիազորած մարմինը իրականացնում է Հայաստանում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում:

2009 թվականին Հայաստան են այցելել մոտ 575 281 միջազգային զբոսաշրջիկ՝ 2008 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ ապահովելով 3% աճ:

2010 թվականին Հայաստան են այցելել մոտ 684 000 միջազգային զբոսաշրջիկ՝ 2009 թվականի նույն ժամանակաշրջանի 575281 դիմաց ապահովելով մոտ 19% աճ:

1.3.2. Զբոսաշրջության ոլորտի խնդիրները.

Զբոսաշրջության ոլորտի կարևոր խնդիրներից է զբոսաշրջային գործունեության ապակենտրոնացումը մայրաքաղաքից դեպի Հայաստանի մարզեր նպաստելով տնտեսության տարածքային զարգացմանը: Նոր զբոսաշրջային կենտրոնների հայտարարումը և զարգացումը, նոր զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծումը, զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացումը հանդիսանում են այն խնդիրները, որոնց լուծմանը ուղղված են լինելու առաջարկվող ծրագրային միջոցառումները:

2.1.2. Նպատակները.

Զբոսաշրջության ոլորտի 2012-2014 թթ. պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել զբոսաշրջության նեղրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված.

- 1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով՝ տարեկան շուրջ 20 տոկոսով,
- 2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,
- 3) աշխատատեղերի ստեղծմամբ:

2.2.2. Զբոսաշրջության ոլորտի գերակայությունները.

2012-2014 թվականներին զբոսաշրջության ոլորտի գերակայություններն են.

1. Միջազգային զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովում և Հայաստանի շարունակական ինտեգրում միջազգային զբոսաշրջային շուկա,
2. Զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործումը և շահագործում,
3. Հայաստանի ամբողջ տարածքում մշակութային և բնական ժառանգության պահպանում և վերականգնում, Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների ձևավորում,
4. Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում՝ ուղղված զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանն ու զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների գնահատմանը և գույքագրմանը, նոր զբոսաշրջային ռեսուրսների և գրավչությունների բացահայտմանը և ձևավորմանը, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանն ու ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացման ապահովմանը:

Զբոսաշրջության ոլորտի ծախսային ծրագրերը.

Զբոսաշրջության ոլորտի ծախսային ծրագրերի իրականացման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության կայուն զարգացումը՝ զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացման, ժամանակակից բարձրարդյունավետ ու մրցունակ զբոսաշրջային արդյունքի ձևավորմանն ու միջազգային զբոսաշրջային շուկա արտահանման միջոցով: Մասնավորապես, Հայաստանը դարձնել միջազգային շուկայում հաճախելի երկրներից մեկը, Հայաստանի, որպես ներդրումների համար ապահով, զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի շարունակական ձևավորումն ու ամրապնդումը համաշխարհային զբոսաշրջային շուկայում:

«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» ծրագրի ներքո 2012-2014 թվականներին ծրագրային միջոցառումները ուղղված կլինեն.

- հայկական զբոսաշրջային արդյունքի որակի կայուն ապահովմանը,
- Հայաստանի ինտեգրմանը համաշխարհային զբոսաշրջային շուկա,
- միջազգային ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճի ապահովմանը:

1. Զբոսաշրջության բնագավառում մարքեթինգային քաղաքականության իրականացում, գովազդատեղեկատվական ապահովման համակարգի շարունակական զարգացում և կատարելագործում

• 2012-2014 թթ. Հայաստանի զբոսաշրջային արդյունքը կներկայացվի մոտ 15-ից ավել համաշխարհային ճանաչում ունեցող զբոսաշրջային ցուցահանդեսներում:

2. Ավանդական տոնակատարությունների կազմակերպում և անցկացում

2012-2014թթ. կապահովվի պետական մասնակցությունը կազմակերպվող ամենամյա ազգային, մշակութային բնույթ ունեցող փառատոններին:

3. Զբոսաշրջային ենթակառուցվածքների հիմնախնդիրների բացահայտում և զարգացման ուղիների մշակում

2012-2014թթ. կկազմակերպվեն սեմինարներ, ինչի արդյունքում կմշակվեն համաշխարհային համապատասխան ցանցերին Հայաստանի հյուրանոցային տնտեսության օբյեկտների ինտեգրման ճանապարհները, ինչպես նաև կկատարվեն մատուցվող հյուրանոցային ծառայությունների որակական չափանիշների բարելավում: Մասնավորապես զբոսաշրջային տների ցանցի ստեղծումը կնպաստի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, զբոսաշրջության կայուն աճի ապահովմանը, միաժամանակ ապահովելով մատուցվող ծառայությունների անհրաժեշտ որակ:

2012-2014թթ. ֆինանսական ծախսերը կուղղվեն.

• զբոսաշրջային քարտեզների, բրոշյուրների, գովազդային թերթիկների և գովազդային այլ նյութերի թարմացմանը և նորերի ստեղծմանը, տպագրմանը և տարածմանը:

• ամենամյա միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցությանը՝ Հոլանդիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Ռուսաստանում, Ճապոնիայում և այլն: Նշված ենթակետում 2012-2014թթ. ծախսերի մակարդակը կաճի՝ կապված ցուցահանդեսներին մասնակցության քանակի աճից և աշխարհագրության ընդլայնումից:

2012-2014 թվականներին, համաձայն ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների ցանկի (հոկտեմբերի 16-ի 2008 թ-ի N1322-Ն), կիրականացվեն զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանն ու զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների գնահատմանը և գույքագրմանը, նոր զբոսաշրջային ռեսուրսների և գրավչությունների բացահայտմանը և ձևավորմանը, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանն ու ոլորտում որակյալ հետազոտությունների ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Հայեցակարգից բխող միջոցառումների հիմնական ուղղություններից է զբոսաշրջության

ուղրտի մարքեթինգային քաղաքականության իրականացումը:

Ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր տարվա համար 50.0 –ական մլն դրամ:

16.1.3 Ստանդարտացման ուղրտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1.3. Ստանդարտացման ուղրտի նկարագիրը.

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով նշված ծրագրերի կատարման պատասխանատու են հանդիսանում ստանդարտացման ազգային մարմինը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և նրա համակարգում գործող Ստանդարտների ազգային ինստիտուտը: Իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ ծառայությունները՝

- ընդունում է ազգային ստանդարտները.
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը.
- կազմակերպում է միջազգային, միջպետական, ազգային ստանդարտների նախագծերի փորձաքննությունը.
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպություններում.
- մասնակցում է միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտացման աշխատանքներին.
- հրատարակում է ազգային ստանդարտները.
- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և համակարգում է նրանց գործունեությունը.
- ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը.
- իրականացնում է ազգային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և հանձնարարականների, ինչպես նաև դասակարգիչների, տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը):

1.2.3 Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ուղրտի միտումները

Ներկայումս տնտեսության ճյուղերի համար ՀՀ ազգային ստանդարտների գործող ֆոնդում առկա են 18 հազ. միավորից ավելի ստանդարտներ, որոնց մեծ մասը (90%-ից ավելի) նախկին ԽՍՀՄ-ի պետական ստանդարտներն են: Ֆոնդի հիմնական մասը ստեղծվել է 70-80-ական թվականներին, որոնց միջին տարիքը ավելի քան 20-25 տարի է: Այդ ստանդարտները ներկայումս չեն արտացոլում ՀՀ-ում վերջին տարիներին ձևավորված շուկայական տնտեսության պահանջները

և կառուցվածքը: Ազգային ֆոնդի ստանդարտները հիմնականում չեն համապատասխանում միջազգային և եվրոպական ստանդարտների պահանջներին: 1993 թվականից գործողության մեջ դրված 3500 ազգային ստանդարտներից միայն 1135-ը ներդաշնակեցված միջազգային (ԻՍՕ/ԻԷԿ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտներին: Ներդաշնակեցման մակարդակը ներկայումս կազմում է ընդամենը 32%, որն ըստ փորձագետների գնահատականի 2-2,5 անգամ ավելի ցածր է, քան եվրոպական զարգացած երկրներում:

1.3.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի խնդիրները.

Հայաստանի Հանրապետության ստանդարտացման բնագավառում հրատապ են հետևյալ հիմնախնդիրները՝

- մարդու կյանքի և առողջության, նրա գույքի, շրջակա միջավայրի անվտանգության ապահովման աջակցումը տեխնիկական օրենսդրության բարեփոխմանը՝ միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակման և ընդունման, ինչպես նաև գործող տեխնիկական կանոնակարգերի և ազգային ստանդարտների կատարելագործման միջոցով.
- ներքին և արտաքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը և միջազգային առևտրում մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
- տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության, արտադրանքի համափոխարինելիության և ռեսուրսախնայողության ապահովումը.
- արտադրանքի և ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության ապահովումը և նրանց թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելումը,
- ներդնել ստանդարտների պլանավորման, մշակման, ընդունման և տարածման տեղեկատվական ժամանակակից մեթոդներ,
- ներդնել հանրապետությունում գործող ազգային ստանդարտների մատենագիտական նկարագրի տվյալների հիման վրա, Ստանդարտե տեղեկատվական որոնման ավտոմատացված համակարգը,
- ավարտել հանրապետության տարածքում գործող ստանդարտների ամբողջ տեքստի թվային տվյալների բազայի (էլեկտրոնային գրադարան) ստեղծման, հաշվառման և պահման աշխատանքները,
- ներդնել ստանդարտների տվյալների հիմնապաշարից սպառողների (օգտագործողների) օգտվելու հնարավորության և ինտերնետի միջոցով ստանդարտների էլեկտրոնային վաճառքի մեխանիզմները,
- զարգացնել Ստանդարտացման Միջազգային կազմակերպության, Ստանդարտացման Եվրոպական կոմիտեի և ԱՊՀ ՍՉՍ միջպետական խորհրդի շրջանակներում գործող

տեղեկատվական համակարգերի ինտեգրման աշխատանքները (ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստացում, շահագրգիռ կողմերին ապահովում, էլեկտրոնային քվեարկություն և այլն),

- ակտիվացնել Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների հարցման կետի աշխատանքները,
- ընդլայնել ստանդարտացման բնագավառի հրատարակչական աշխատանքները (ստանդարտների կատալոգ, եռամսյակային տեղեկատուներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ և այլն),
- ավարտել հանրապետությունում արտադրվող ապրանքների գրացուցակավորման համակարգի ստեղծումը,
- հրավիրել միջազգային փորձագետներին դասընթացներ անցկացնելու՝ ստանդարտացման բնագավառի մասնագետների որակավորման բարձրացման նպատակով,
- ձևավորել ստանդարտացման բնագավառի փորձագետների ուսուցման և որակավորման համակարգ՝ ներդաշնակեցված միջազգային և տարածաշրջանային համակարգերին,
- բարելավել որակի կառավարման (ISO 9000), շրջակա միջավայրի կառավարման (ISO14000), սննդամթերքի անվտանգության կառավարման (ISO 22000), աշխատանքի անվտանգության (OHSAS 18000) համակարգերի գծով կազմակերպվող ուսուցման ծրագրերը և կազմակերպման որակը,
- ապահովել դասախոսների վերապատրաստման շարունակական գործընթացը՝ կիրառելով այս բնագավառի միջազգային փորձագետների մասնակցությամբ թրեյնինգների անցկացում,
- կիրառել պիլոտային ծրագրեր հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ստանդարտացման մասնագիտությամբ ուսանողների ուսուցման գործընթացներում՝ ակտիվացնելով ինստիտուտի մասնագետների մասնակցությունը ուսանողների արտադրական և նախադիպլոմային աշխատանքներում:

Թվարկված հիմնախնդիրները զգալի ազդեցություն են գործում Հայաստանի տնտեսական զարգացման ներկայիս մակարդակի վրա, քանի որ ստանդարտացումը նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծման ու զարգացման ամենահիմնական գործոնն է:

ՀՀ ԱՀՌԾ 61 կետի վերջին երկու պարբերությունները երկրի տնտեսական ինստիտուտների և օրենսդրության ինտենսիվ համապատասխանեցումը ԵՄ պահանջներին և ստանդարտներին, ինչպես նաև նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծումն ու զարգացումը դասում են ԱՀՌԾ-2-ի տնտեսական քաղաքականության գերակայությունների շարքին: ՀՀ ԱՀՌԾ 166, 264, 727, 729 և այլ կետերը վկայում են ստանդարտների կարևորությունը ՀՀ տնտեսության

կայուն զարգացման համար: Այդուհանդերձ, ներկայումս դժվար է թվային արտահայտությամբ գնահատել ստանդարտացման աշխատանքների ազդեցությունը և օգուտը տնտեսական զարգացման համար: Այդ ուղղությամբ ներկայումս Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից աշխատանքներ են տարվում համապատասխան մեթոդաբանության մշակման նպատակով:

2.1.3. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի նպատակները.

Ելնելով վերը նշվածից և համաձայն Առևտրի համաշխարհային կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման» համաձայնագրի պահանջների՝ ազգային ստանդարտների ներդաշնակեցումը միջազգային և եվրոպական ստանդարտների հետ, Ստանդարտների ազգային ինստիտուտը նախատեսում է.

2012 թվականին՝ ազգային ստանդարտների մշակում՝ թվով 80 հատ՝ 16412.0 հազ. դրամի, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում (այդ թվում միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն)՝ թվով 200 հատ՝ 9865.0 հազ. դրամի, ստանդարտացման ազգային ֆոնդի համալրում նոր ստանդարտներով՝ թվով 300 հատ և տեղեկատվական սպասարկման աշխատանքների իրականացում՝ պարբերաբար՝ 13722.0 հազ. դրամի:

2013 թվականին՝ ազգային ստանդարտների մշակում՝ թվով 85 հատ՝ 17406.0 հազ. դրամի, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում (այդ թվում միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն)՝ թվով 214 հատ՝ 10462.0 հազ. դրամի, ստանդարտացման ազգային ֆոնդի համալրում նոր ստանդարտներով՝ թվով 286 հատ և տեղեկատվական սպասարկման աշխատանքների իրականացում՝ պարբերաբար՝ 13165.0 հազ. դրամի:

2014 թվականին՝ ազգային ստանդարտների մշակում՝ թվով 90 հատ՝ 18144.0 հազ. դրամի, ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում (այդ թվում միջազգային ստանդարտների նախագծերի էլեկտրոնային քվեարկություն)՝ թվով 300 հատ՝ 10868.0 հազ. դրամի, ստանդարտացման ազգային ֆոնդի համալրում նոր ստանդարտներով՝ թվով 296 հատ և տեղեկատվական սպասարկման աշխատանքների իրականացում՝ պարբերաբար՝ 13655.0 հազ. դրամի:

2.2.3. Ստանդարտացման ոլորտի գերակայությունները.

Առաջիկա 3 տարիների ոլորտի գերակայություններն են.

1. Ազգային ստանդարտների մշակումը,
2. Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպություններին անդամակցություն և նրանց աշխատանքներին մասնակցությունը,
3. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարումը:

Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ոլորտի ծախսային ծրագրերը.

Ազգային ստանդարտների ծրագրի միջոցով մշակվում են միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ստանդարտներ, որոնք կոչված են ապահովելու Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ու մրցունակության բարձրացման նախադրյալները: Կիրառելով այդ ստանդարտները հայրենական արտադրողները հնարավորություն են ունենում ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները և արտադրել միջազգային շուկայում մրցունակ արտադրանք:

Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում.

Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցությունը և աշխատանքների կազմակերպման ծրագիրը հնարավորություն է տալիս մասնակցել Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման Եվրոպական Կոմիտեի (ՍԵՆ) և (ԱՊՀ) Ստանդարտացման միջպետական խորհրդի և դրանց ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին, կիրառել այդ կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտները, ներկայացնել նրանց կողմից մշակված ստանդարտների նախագծերի վերաբեյալ ՀՀ շահագրգիռ մարմինների և ստանդարտների ազգային ինստիտուտի առաջարկությունները՝ դրանով նպաստելով հայրենական արտադրողների կողմից արտադրված և մատուցված ծառայությունների արտահանմանը ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային (եվրամիության և ԱՊՀ երկրներ) շուկաներ: Բացի այդ, հանդիսանալով միջազգային ստանդարտացման վերը նշված կազմակերպությունների անդամ, Ստանդարտների ազգային ինստիտուտը պարտավոր է անմասն չմնալ այդ կազմակերպությունների աշխատանքից և ակտիվորեն մասնակցել հրավիրվող խորհրդակցություններին և տարեկան վեհաժողովներին: Այդպիսի մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում և ամեն անգամ թույլ է տալիս հիմք դնել տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ նոր շահավետ համագործակցությանը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ի դեմս Ստանդարտների ազգային ինստիտուտի անդամակցում է ԻՍՕ-ի 38 և ՍԵՆ-ի 3 տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ որպես այդ հանձնաժողովների անդամ:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում.

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագիրը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետությանը ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ֆոնդ, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, պե-

տական ու մասնավոր ընկերություններին, անհատ ձեռնարկատերերին, քաղաքացիներին և բոլոր այլ շահագրգիռ անձանց ապահովել անհրաժեշտ և պահանջված ստանդարտներով, խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ:

Ստանդարտացման հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունի արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և հրատարակչական կարողությունների զարգացումը: Ցանկացած երկրի ստանդարտացման մարմնի եկամուտների ձևավորման կարևորագույն աղբյուր է ստանդարտների վաճառքը: Այդ առումով նոր SS-ները, այսինքն էլեկտրոնային գրադարանի և ստանդարտների որոնման էլեկտրոնային կատալոգի ստեղծումը մեծապես կազդեն ստանդարտների վաճառքի ծավալների ավելացման վրա:

Միաժամանակ, ստանդարտացմանը վերաբերող նյութերի (ստանդարտներ, ամենամյա և եռամսյակային կատալոգներ, տեղեկատուներ և այլն) վաճառքն անհնար է կազմակերպել առանց դրանց հրատարակման, ինչի համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր պատճենահանման սարք:

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով նշված ծրագրերի կատարման պատասխանատու են հանդիսանում ստանդարտացման ազգային մարմինը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և նրա համակարգում գործող Ստանդարտների ազգային ինստիտուտը:

Ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2012թ.-ին՝ 14.0 մլն.դրամ, 2013.-ին՝15.3 մլն.դրամ և 2014թ.-ին 15.3 մլն. դրամ:

4. Ոլորտի (համակարգի) պետական հատվածի եկամուտները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից 2012-2014թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստանդարտացման ոլորտում ստացվող եկամուտների աղբյուրներն են՝

- ➔ տեխնիկական պայմանների մշակման համար խորհրդակցության տրամադրումը, փորձաքննությունը,
- ➔ ստանդարտների վաճառքը,
- ➔ կազմակերպությունների բաժանորդագրությունը՝ ստանդարտների ազգային ֆոնդից օգտվելու համար:

Ոլորտի պետական հատվածի 2012-2014թթ. ստացվելիք եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի կտրվածքով

(հազ դրամ)

Բաժին/խումբ/դաս	Եկամուտների ստացման աղբյուրների անվանումները	Փաստացի ըստ 2010 թվականի տարեկան հաշվետվության	2011 թվականի սպասողական	Կանխատեսում*		
				2012թ.	2013թ.	2014թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ					
	այդ թվում՝					
04/01/01	1. Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից	368,500.0	271,000.0	286,000.0	287,000.0	288,000.0

16.1.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր նկարագիրը.

Վերջին տասնամյակում Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) արդյունաբերության զարգացումն ու Տեղեկատվական հասարակության կայացումը կարևորագույն խթան են հանդիսացել աշխարհի բոլոր զարգացած երկրների տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացման, կառավարման, ինովացիոն և գիտակրթական համակարգերի, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար և ճանաչվել է գերակա ուղղություն՝ որպես գիտելիքահենք տնտեսության կառուցման հիմնաքար:

Հայաստանի Հանրապետության SS ոլորտը միջազգային չափանիշներին հասցնելու համար նախապայմաններ ստեղծելու նպատակով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 27-ի N1165 որոշմամբ՝ Համաշխարհային Բանկի հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում հիմնվեց «Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամը: 2001թ. գործում է «ՎիսաՖեր տեխնոպարկ» ՓԲԸ-ն, որի տարածքում գործում են ոլորտի 30-ից ավել ընկերություններ:

Ընդունվել են ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝ 2004թ.-ի դեկտեմբերի 14-ի՝ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» N<O-40 և 2005թ.-ի հուլիսի 8-ի՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» N<O-176 ՀՀ օրենքները:

Կնքվել են համագործակցության մի շարք պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ինչպես այլ պետությունների՝ Հնդկաստանի Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և այլն, այնպես էլ համաշխարհային ճանաչում ունեցող այնպիսի ընկերությունների հետ, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «Ալկատելը», «Հյուլթ Փակարդը», «Սան Մայքրոսիսթեմսը», «Նեյշնլ Ինսթրումենթսը» և այլն:

Ավանդական են դարձել ամենամյա «Դիջիթեք» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված միջազգային ցուցահանդեսի և «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրի ներքո անցկացվող բազմաթիվ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև «Արմթեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների միջազգային համաժողովը:

1.2.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման միտումները.

«SS ոլորտի հետազոտություն, ոլորտի ներկա իրավիճակի վերլուծություն, ոլորտի ցուցանիշների և ձեռնարկությունների վերաբերյալ ուղեցույցի պատրաստում» միջոցառման շրջանակում իրականացվել է SS ոլորտի կազմակերպությունների վիճակագրական տվյալների հավաքագրման պիլոտային ծրագրի մեկնարկ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) այլ գործառույթների հետ մեկտեղ իրականացրել է նաև իրավաբանական անձանցից որոշակի տվյալների հավաքագրում և դրանց հիման վրա բազմաբնույթ վերլուծությունների կատարման գործառույթ: Այս գործառույթի իրականացմանը, ինչպես նաև ձեռնարկություններին և կազմակերպություններին աջակցելու համար ստեղծվել է «ICT STAT» վիճակագրական համակարգը, որը հնարավորություն է տալիս, օգտագործելով վեբ տեխնոլոգիաները, անհրաժեշտ տեղեկատվությունը կուտակել էլեկտրոնային տարբերակով: Միջոցառման շրջանակում նաև իրականացվել է ոլորտի հետազոտություն և վերլուծություն, կատարվել են SS ոլորտի ցուցանիշների թարմացման աշխատանքները: Պատրաստվել է SS ընկերությունների ուղեցույցի առցանց տարբերակ:

1.3.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խնդիրները.

SS ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ, ոլորտի մասնավոր հետազոտությունների, փորձագիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում բացահայտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: Դրանք են, մասնավորապես, տեղեկատվական հասարակության և դրա տարբեր բաղադրիչների ձևավորման, ներդրման և զարգացման խնդիրները, SS ոլորտում ներդրումների խթանման և ձեռնարկությունների ապրանքների և ծառայությունների տեղական և միջազգային շուկաներ առաջնդման հետ կապված խնդիրները, գործարար և տեխնիկական խորհրդատվության ստացման և կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման առկա դժվարությունները, SS մասնավոր հատվածի և կրթական համակարգի միջև կապերի թերի զարգացումը, սկսնակ

գործարարների համար ձեռնարկատիրական գործունեության խթանման մեխանիզմների անբավարարությունը և/կամ համապատասխան հմտությունների պակասը:

Նշված հիմնախնդիրների հաղթահարմանն են ուղղված 2012-14թ. ընթացքում նախատեսվող ծրագրային միջոցառումները՝ կարևոր նախապայման հանդիսանալով ոլորտի զարգացման նոր ռազմավարության և երկրի ընդհանուր տնտեսական աճի ապահովման համար:

2.1.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընդհանուր նպատակները.

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման և պետական աջակցման հիմնական նպատակներն են.

- ստեղծել Տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակություն՝ ՏՀՏ կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համակարգչային հազեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, ինչպես նաև համատարած կիրառվող էլ-ծառայությունների համակարգերի և մեծածավալ տեղական ՏՏ շուկայի առկայությամբ

- ապահովել զարգացած և համաշխարհային ճանաչում ունեցող Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ՝ մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ և ծառայություններ մատուցող ընկերություններով, միջազգային շուկաներում մրցունակ տեղական ՏՏ արտադրանքով

- ապահովել մրցունակ «Հայկական ՏՏ ապրանքային նշանի» ստեղծումը, դրա ներթափանցումն ու ներկայությունը համաշխարհային շուկայում և, հատկապես, աճի բարձր պոտենցիալով շուկայական թիրախային սեգմենտներում: Նպաստել ՏՀՏ ենթակառուցվածքների և տեղեկատվական հասարակության խթանման միջոցով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների աճի և եկամուտների բարձրացմանը և գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը

- ապահովել ոլորտի արդյունավետության աճի պահպանում և զարգացում (մինչև տարեկան 10-12% չափով)

- ապահովել որակյալ աշխատուժի աճի պահպանում և առավել զարգացում (մինչև տարեկան 18-20% չափով):

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- 1) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետազոտության, ներկա իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում հիմնական խնդիրների և մարտահրավերների, ռազմավարական զարգացման հեռանկարների և վերջին տարիներին գրանցած նվաճումների բացահայտում և ներկայացում,

- 2) հայաստանյան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռքբերումները միջազգային ցուցահանդեսներում, համաժողովներում և այլ միջոցառումներում ներկայացման միջոցով Հայաս-

տանի՝ որպես զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ ունեցող երկրի վարկանիշի բարձրացում, համաշխարհային տեղեկատվական տնտեսության մեջ ինտեգրում, գործարար կապերի ստեղծում, ներդրումների ներգրավում և դրանց ծավալների ավելացում առնվազն տարեկան 10%-ի չափով,

3) տնային տնտեսություններում համակարգչային հագեցվածությունը մինչև 40%-ի բարձրացում՝ բնակչության համար համակարգիչների ձեռքբերման մատչելիություն և հասանելիություն՝ տարեկան մինչև 5000 համակարգչի վաճառքի միջոցով:

2.2.4. Տեղեկատվական Տեխնոլոգիաների ոլորտի գերակայությունները.

Առաջիկա 3 տարիների ոլորտի գերակայությունն է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արտադրողականության աճը և տեղեկատվական հասարակության կայացումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

2012-2014թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվող միջոցառումները կհանդիսանան ՀՀ 2011թ. պետական բյուջեով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ծրագրով» նախատեսված ֆինանսավորման շարունակությունը և մեծապես կնպաստեն ՏՏ ոլորտի գերակայությունների և ոլորտի զարգացման պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացմանը, ինչպես նաև ուղղված են ՀՀ կառավարության կողմից 28.08.2008թ.-ին հավանության արժանացած «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգի» դրույթների իրականացմանը:

Ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր տարվա համար 80.0 –ական մլն դրամ:

16.1.5 Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1.5 Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի ընդհանուր նկարագիրը.

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը կարևոր դեր է խաղում Հայաստանի Հանրապետության տնտեսության գլոբալ զարգացման գործընթացում՝ հատկապես զբոսաշրջության, առողջապահության, կրթության ոլորտներում առաջանցիկ ծրագրերի իրականացման միջոցով:

1.1.5 Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի զարգացման միտումները.

2009-2010 թվականներին Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները պայմանավորվել են հիմնադրամի և Հայաստանի կառավարության զբոսաշրջության զարգացման հայեցակարգին համապատասխան:

Հայաստանի զբոսաշրջության զարգացման և խթանման իր ռազմավարության շրջանակներում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը մշակել է զբոսաշրջության զարգացման միջանցքների հայեցակարգը, որը ներառում է Կենտրոնական, Սևանա լճի, Հյուսիսային և Հարավային միջանցքները: Ներկայումս մշակվում են զբոսաշրջային արդյունքի զարգացման փաթեթներ և ներդրումային նախագծեր երկու միջանցքների՝ Սևանա լճի տարածքի և Հարավային միջանցքի համար:

2010թ. միջուկային բժշկության ներդրման և ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ստեղծման ուղղությամբ իրականացվեցին հիմնարար աշխատանքներ: Նշված առաջընթացի արդյունքում ձևավորվեց միջուկային բժշկության և ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի կարևորագույն բաղադրիչներից հանդիսացող ռադիոիզոտոպների արտադրությունը կազմակերպելու իրավական ու ֆունկցիոնալ հիմքերը:

1.1.6. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի խնդիրները.

Զբոսաշրջության ոլորտում հրատապ է մնում երկրի խթանման և մարքեթինգային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավումը տարբեր աղբյուրներից՝ հիմնականում բյուջետային և միջազգային դոնոր կազմակերպություններից: Հանդիսանալով տնտեսության գերակա ճյուղերից մեկը մարքեթինգային քաղաքականության արդյունավետ իրականացումը առանցքային է երկիրը որպես մրցունակ զբոսաշրջավայր ներկայացնելու համար:

Նոր զբոսաշրջային արդյունքների, ենթակառուցվածքների և զբոսաշրջության այլընտրանքային ուղղությունների ստեղծումն ու զարգացումը հանդիսանում են այն խնդիրները, որոնց լուծմանը ուղղված են լինելու Մրցունակության հիմնադրամի 2012-2014 թվականների միջոցառումներն ու ծրագրերը:

Առողջապահության ծրագրային աշխատանքների ուղղությամբ առանցքային խնդիրները պայմանավորված են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների առկայությամբ, դրանում ֆինանսական միջոցների ներգրավումը տարաբնույթ աղբյուրներից (վարկեր՝ հիմնականում բյուջետային, ներդրումներ, դրամաշնորհներ, նվիրաբերություններ): Առանձնապես կարևորվում է հնարավոր ներդրողների հետ կապի հաստատումը և նախընտրելի ներդրումային ծրագրերի շուրջ բանակցությունների իրականացումը: Արդիական է մրցունակության բարձրացման նպատակով և պետական

մասնավոր գործընկերության մոդելով առողջապահության բնագավառում առանձին ուղղությունների զարգացման ծրագրերի մշակումը և իրականացումը:

Կրթության ոլորտում առանցքային խնդիրներից է շարունակում մնալ բարձրագույն կրթության համակարգի նպատակների շուրջ համընդհանուր հանրային փոխհամաձայնության բացակայությունը, առաջանցիկ ծրագրերի բացակայությունը և կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացի խիստ կենտրոնացված լինելը: Արդյունքում տուժում են թե ուսումնական ծրագրերը, թե ոեսությունների տեղաբաշխումը և թե որոշումների կայացման գործընթացը:

Բուհական համակարգի խնդիրներից է աշխատաշուկայի պահանջարկը և կոնկրետ հմտությունների տիրապետող շրջանավարտների անհմապատասխանությունը, ժամանակին համահունչ որակավորումներ ունեցող դասախոսների անբավարար քանակը մասնագիտական տպագրությունների անհասանելիությունը և այլն:

Արագագործ հեռահաղորդակցության ենթակառուցվածքների ներդրման ոլորտում տեղեկատվության հասանելիության բարձրացման և էլեկտրոնային հասարակության ձևավորման ճանապարհին հրատապ է մնում հեռահաղորդակցության արագագործ ենթակառուցվածքների առկայության պահանջը: Երկրում ազգային լայնաշերտ հիմնացանցի ներդրումը հնարավոր կլինի միայն շոշափելի ֆինանսական միջոցների ներգրավման արդյունքում՝ հաշվի առնելով նաև պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերության հնարավոր տարբերակները ենթակառուցվածքների կառուցման, հետագա շահագործման և տնօրինման ընթացքում: Անհրաժեշտ է մասնավոր հատվածի ակտիվ ներդրումային մասնակցություն՝ կառավարության կողմից համապատասխան իրավական և տնտեսական խթանների ապահովման դեպքում:

Հայաստանի Հանրապետությունում ինտերնետ հասանելիության ապահովվածության ցածր մակարդակը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բարձր գին, ինչպես նաև բնակչության ընդհանուր գնողունակության ցածր մակարդակ,
- Համակարգչային սարքավորումների բարձր գին, հատկապես ներքին շուկայում,
- Ինտերնետ ծառայությունների հասանելիության և մատչելիության ցածր մակարդակ, հատկապես գյուղական տարածքներում,
- Հայալեզու վեբ կայքերի (առցանց բովանդակության) անբավարար քանակ:

Բնականաբար, լայնաշերտ հեռահաղորդակցության ազգային ցանցի և կառավարության ներքին ցանցի (ինտրանետի) ստեղծումը կարող է շարժիչ ուժ հանդիսանալ նաև էլեկտրոնային կառավարության ծառայությունների զարգացման համար:

Ծրագրի այս բաղադրիչի հիմնական հայեցակետը մասնավոր հատվածի ներդրումների համախմբման մեխանիզմի մշակումն է՝ նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի լայնաշերտ հեռա-

հաղորդակցության կապի ենթակառուցվածքները հանրային և մասնավոր հատվածների միջև գործընկերության մոդելի միջոցով:

Ըստ Համաշխարհային բանկի կողմից մշակված Ծրագրի գնահատման փաստաթղթի՝ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը հանդիսանում է վերոնշյալ բաղադրիչի Լայնաշերտ հեռահաղորդակցության ցանցի և կառավարության ներքին ցանցի (ինտրանետի) ենթաբաղադրիչն իրականացնող գործակալություն:

2012–2014 թվականների ընթացքում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործունեության վերաբերյալ կիրականացվի տեղեկատվական ապահովումը՝ ներառյալ տեղական և արտասահմանյան լրատվամիջոցների հետ հարաբերությունները, կերպարի ստեղծմանն ուղղված ռազմավարական ծրագրերի մշակումը, լրատվամիջոցների համար միջոցառումների կազմակերպումը և Հիմնադրամի ներկայության ապահովումը մի քանի հանրահայտ սոցիալական կայքերում: Ակնկալվող արդյունքներն են Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի մասին տեղեկացվածության բարձրացում ոչ միայն Հայաստանում, այլ նաև ոլորտների համար թիրախային համարվող շուկաներում, վստահության բարձրացում հավանական ներդրողների և նվիրատուների շրջանում, լրատվամիջոցներում դրական հրապարակումների ավելացում, բացասական հրապարակումների բացառում/նվազեցում:

Ազգային մրցունակության հիմնադրամի գործունեության բազմաոլորտ լինելու պատճառով, միջոցների հայթայթման հաջողությունը մեծապես կախված է այդ ուղղությամբ ընդհանուր, ընդգրկուն և համահունչ ծրագիր մշակելուց: Այդ պատճառով անհրաժեշտ է դիմել միջազգային հեղինակավոր խորհրդատվական կազմակերպությունների օգնությանը՝ այդպիսի ծրագիր մշակելու նպատակով:

Ներդրումների և նվիրատվությունների գրավման գործընթացի հիմնական խնդիրները ներառում են պոտենցիալ ներդրողների՝ Հայաստանի վերաբերյալ ցածր իրազեկվածության մակարդակը: Այդ իսկ պատճառով Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը նախատեսում է կազմակերպել մի շարք հանդիպումներ և միջոցառումներ՝ Հայաստանում ներդրողների հնարավորությունների և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից մշակված ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

2.1.5. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի նպատակները.

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանն ուղղված պետական աջակցության ծրագրի նպատակն է խթանել զարգացման համար թիրախային ընտրված ոլորտների զարգացումը և կայունացումը, խթանել ներդրումների հոսքը, իրագործել տվյալ ոլորտների զարգացման համար անհրաժեշտ միջոցառումները: Արդյունքում

ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացմանը նպաստելը և վերջինիս բարեփոխումներին աջակցելը, ինչպես նաև որոշ ոլորտների մրցունակության բարձրացմանը խթանելը և ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերը երկարաժամկետ մրցունակության առավելագույն աստիճանի հասցնելը:

2.2.5. Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի գերակայությունները.

Առաջիկա 3 տարիների առաջնահերթ նպատակներով պայմանավորված ոլորտի զարգացման գերակայություններն են ՀՀ կրթության, առողջապահության, զբոսաշրջության և դրանց հատող ոլորտների մրցունակության աստիճանի բարձրացումը:

3.1.5. Ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող ծախսային ծրագրի նկարագիրը (պարտավորությունները)

«Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» ծրագրի նպատակն է խթանել զարգացման համար թիրախային ընտրված ոլորտների զարգացումը և կայունացումը, Արդյունքում ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացմանը նպաստելը և վերջինիս բարեփոխումներին աջակցելը, ինչպես նաև գլոբալ մրցունակության բարձրացմանը խթանելը և ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերը երկարաժամկետ մրցունակության առավելագույն աստիճանի հասցնելը: Նախորդ տարիներին ծրագրի իրականացումը արդեն իսկ ապահովել է զգալի արդյունքներ, ինչն նաև շարունակական բնույթ է կրելու 2012-2014թթ. ընթացքում:

2012-2014թթ. ընթացքում տարեկան ծրագրերի իրականացման արդյունքում ակնկալվում է.

1. Ստեղծել առնվազն 4-5 ավարտուն և համապարփակ ներդրումային ծրագրեր կոորդինացնել համագործակցությունը պետական և մասնավոր հատվածի միջև,

2. Բարձրացնել իրազեկվածությունը առողջապահության, զբոսաշրջության, կրթության և այլ ոլորտների զարգացման վերաբերյալ:

3. Բարձրացնել տնտեսության որոշ ոլորտների մրցունակության ներուժը:

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից վերոնշյալ ոլորտներում ծրագրային միջոցառումների իրականացումը կապահովի տնտեսության զարգացման զգալի առաջընթաց: Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող մարքեթինգային քաղաքականության իրականացման արդյունքում կբարձրանա իրազեկվածության աստիճանը անցկացված և անկացվող ծրագրերի վերաբերյալ: Կընդլայնվեն պոտենցյալ ներդրողների և

բարերարների խմբերը և կամրապնդվի վերջիններիս վստահությունը ներդրումային ծրագրերի առնչությամբ:

Ծրագրի իրականացման արդյունքում կխթանի տնտեսության կայուն աճը, կբացահայտվեն ոլորտային խնդիրները և կիրականացվեն տվյալ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ՝ ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածի աջակցությամբ:

Ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր տարվա համար 264.0 –ական մլն դրամ:

16.1.6 Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծրագրի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1.6 Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծրագրի ընդհանուր նկարագիրը.

Ծրագիրն իրականացվում է «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ էկոնոմիկայի նախարարության «ԳՎԻԿ» ՊՈԱԿ-ը ուսումնասիրում է ՀՀ տնտեսությունը և տալիս է ամենամսյա տեղեկատվություն պետական պատվերի շրջանակներում գործող գներով տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գների և աշխատանքների միջինացված գները՝ ինֆորմացիոն տեղեկագրի՝ տեսքով, որը հրատարակվում է համաձայն շահառուների հետ ունեցած պայմանագրերի:

2009-2010թթ. լիազորված պետական մարմինը համարվել է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, իսկ 2010թ-ի նոյեմբեր ամսից ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: 2009-2010թ-ին «ԳՎԻԿ» ՊՈԱԿ-ը իրականացրել է ՀՀ շինանյութերի շուկայի մոնիտորինգը և դրա հիման վրա ինֆորմացիոն տեղեկագրերի հրապարակումը, իսկ 2010թ. նոյեմբեր ամսից նաև պետական կարիքների համար ապրանքների շուկայական գների ամենամսյա տեղեկագրերի հրապարակումը: Մասնակցել է ՀՀ տարածքում քաղաքաշինության, ինչպես նաև տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գնագոյացման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով պետական քաղաքականության մշակման աշխատանքներին:

1.2.6 Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների զարգացման միտումները.

2009թ. «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ին ՀՀ պետական բյուջեից նախատեսվել և հատկացվել է 52129.0 հազ. դրամ, 2010թ-ին՝ 50000.0 հազ. դրամ, ծառայությունների գծով կանխատեսվել է յուրաքանչյուր տարվա համար 11000.0 ական հազ. դրամ: 2009թ.-ին «ԳՎԻԿ» ՊՈԱԿ-ը ունեցել է 103 բաժանորդ և տարվա տնթացքում առաքվել է 1236 հատ տեղեկագիր, 2010թ.-ին ունեցել է 82 բաժանորդ և տարվա տնթացքում առաքվել է 984 հատ տեղեկագիր :

2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1.6 Նպատակները

Այսօր էլ «ԳՎԻԿ» ՊՈԱԿ-ի կարևոր և անհրաժեշտ նպատակը համարվում է ՀՀ մարզերում մոնիտորինգի ձևավորումը և ընդլայնումը, ինչը հնարավորություն կտա ՀՀ կառավարությանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հստակ պատկերացում ստանալ տվյալ ժամանակահատվածում ՀՀ շուկայում գործող՝ ընդհանուր ապրանքների գների, աշխատանքների արժեքների միջինացված գների վերաբերյալ: Ուստի 2012-2014թթ-ին պլանավորվում է ընդլայնել մոնիտորինգի ծավալները ՀՀ մարզերում, ինչի հետևանքով պետք է ավելացնել համապատասխան մասնագետների քանակը:

2.2.6 Գերակայությունները

2012-2014թթ գերակայություններն են.

1. մոնիտորինգի ծավալների ընդլայնումը Հայաստանի Հանրապետության մարզերում,
2. համապատասխան մասնագետների ավելացումը,
3. միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների աջակցությամբ կազմակերպել միջազգային փորձի փոխանակում գնագոյացման ոլորտում:

3.1.6. Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսային ծրագրի նկարագիրը (պարտավորությունները)

2012-2014թթ. համար միջնաժամկետ ծախսային ծրագիրը իրենից ներկայացնում է.

ա) մոնիտորինգի լիարժեք իրականացում, ինչը կտա ՀՀ տարածքում լիարժեք ինֆորմացիա տնտեսության գնագոյացման ոլորտում ապրանքատեսակների շուկայական գների վերաբերյալ (պետական պատվերի սահմաններում):

գ) միջազգային փորձի փոխանակում:

Ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է 2012թ.-ին՝ 50.0 մլն. դրամ, 2013.-ին՝ 53.6 մլն. դրամ և 2014թ.-ին 53.7 մլն. դրամ:

16.2. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.2.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), որպես հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմին, պատասխանատու է տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների, գործընթացների և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպման, պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային և հասարակական կազմակերպություններին, զանգվածային լրատվամիջոցներին, ինչպես նաև հանրությանը վիճակագրական ամփոփ տեղեկատվությամբ ապահովման համար:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ ՀՀ տարածքում պետական վիճակագրության մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար օրենսդրական հիմք են հանդիսանում ՀՀ օրենքով հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» և պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը:

Վիճակագրության ոլորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են.

սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանակման և տրամադրման ծառայությունների իրականացմանը,

վիճակագրական տարեգրքի, ժողովածուների, տեղեկագրերի, մամուլի հաղորդագրությունների և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների տպագրմանը:

Ոլորտի շահառուներն են՝ վիճակագրական տեղեկատվության սպառողները՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, միջազգային և հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվամիջոցները, հանրությունը և այլն:

16.2.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

ա) ՀՀ ԱՎԾ 2010 թվականի գործունեությունն ըստ «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի»

«2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված 443 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1911) վիճակագրական աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2010 թվականին ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով, ներառյալ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն), ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 150 անուն՝ ընդհանուր առմամբ 10576 տպաքանակով և մոտ 1.5 մլն էջ ընդհանուր ծավալով վիճակագրական նյութեր: Ծրագրով նախատեսված և հրապարակված 19 անուն վիճակագրական ժողովածուները հրապարակվել են ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Միաժամանակ, համաձայն ծրագրի, հրապարակվել են 17 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ թվով 67 տեղեկագրեր), ինչպես նաև «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

Համաձայն ծրագրի, հրապարակվել են 35 մամուլի հաղորդագրություններ և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 10 մարզային և Երևանի քաղաքի գործակալությունների կողմից պատրաստվել են 6 անուն վիճակագրական զեկույցներ (թվով 57 զեկույց):

2010 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 2 հրապարակում, 3 մամուլի հաղորդագրություն և էլեկտրոնային փոստով պատասխանվել է 229 հարցումների:

բ) ՀՀ ԱՎԾ 2011 թվականի զարգացման միտումներն ըստ «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի»

«2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված են 425 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1868) վիճակագրական աշխատանքներ:

Նախատեսված է իրականացնել 2 վիճակագրական հետազոտություն, որոնցից 1-ը ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իսկ մյուսը՝ Հայաստանի կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (տնային տնտեսությունների)՝ ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության համաֆինանսավորմամբ:

Ծրագրով նախատեսված է հրապարակել 21 վիճակագրական ժողովածու՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Միաժամանակ, համաձայն Ծրագրի, կիրառվեն 17 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ թվով 67 տեղեկագրեր), 10 մամուլի հաղորդագրություններ (պարբերականությունը հաշվի առած՝ 35) և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը՝ (պարբերականությունը հաշվի առած՝ 24):

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, և ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի N 301-Ն որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում հերթական մարդահամարն անցկացվելու է 2011թվականի հոկտեմբերի 12-21-ը :

16.2.1.3. Հիմնական խնդիրները

«Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 4-ի դրույթներով սահմանված և «Կայուն զարգացման ծրագրով» նախատեսված՝ ՀՀ ԱՎԾ խնդիրներն իրագործելու նպատակով 2012-2014 թվականների միջնաժամկետ հատվածում անհրաժեշտ է լուծել հետևյալ հիմնախնդիրները.

- ✧ հազարամյակի զարգացման հռչակագրով սահմանված նպատակները բնութագրող ցուցանիշների մոնիտորինգին օժանդակություն,

- ✧ կայուն զարգացման ծրագրի ցուցանիշների մոնիտորինգին օժանդակություն,

- ✧ ազգային հաշիվների համակարգի բարելավում,

- ✧ 2011 թվականին հերթական մարդահամարի հավաքագրված տվյալների մշակում՝ կողավորման, մուտքագրման, մեքենայական մշակման գործառույթների իրականացում և ելքային աղյուսակների ստացում,

- ✧ չհաշվառված տնտեսության գնահատման մեթոդաբանության կատարելագործում,

- ✧ բնապահպանության ոլորտի վիճակագրության բարելավում, ինչպես նաև ամբողջականացում, արդիականացում,

- ✧ վարչական ռեգիստրների ստեղծում և կատարելագործում,

- ✧ վիճակագրական տեղեկատվության մատչելիության, թափանցիկության մակարդակի էլ ավելի բարձրացում:

16.2.2.ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

16.2.2.1.Նպատակները

Վիճակագրության ոլորտի հիմնական նպատակն է. **հանրապետության սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, մշակումը, կուտակումը, ամփոփումը, պահպանումը, ինչպես նաև փոխանակումը և վիճակագրական տեղեկատվության տարածումը:**

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթների՝ ՀՀ ԱՎԾ-ն, պետական վիճակագրության իրագործման բնագավառում իր գործունեությունն իրականացնում է, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանված հիմնական ուղղությունները և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված միջոցառումները:

Տարեկան Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության ցանկը (հավաքագրման աղբյուրները, ներկայացման և աշխատանքի կատարման (ցուցանիշի

մշակման) ժամկետները և հրապարակումները, որտեղ պետք է տեղադրվեն վերջիններս)՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հասկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ ՀՀ ԱՎԾ-ի համար սահմանված վերոհիշյալ հիմնական նպատակներն ու խնդիրները, Կայուն զարգացման ծրագրով, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ, Հազարամյակի զարգացման հռչակագրով սահմանված նպատակները, «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքը, և դրանց հիման վրա մշակվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերը, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը», 2012-2014 թվականներին ՀՀ ԱՎԾ ռազմավարական նպատակներ են համարվում.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացների շարունակում՝ վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրաներդաշնակեցման ու միասնականացման միջոցով,

- վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկում,

- տարածքային (համայնքների, խոշոր քաղաքների) վիճակագրության համակարգի ձևավորման օժանդակություն և կատարելագործում,

- վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարում,

- 2011 թվականին հերթական մարդահամարի հավաքագրված տվյալների մշակում՝ կողավորման, մուտքագրման, մեքենայական մշակման գործառույթների իրականացում և ելքային աղյուսակների ստացում:

16.2.2.2. Գերակայությունները

ՀՀ 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ վիճակագրության ոլորտի հիմնական գերակայություններն են.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում՝ շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները՝ հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

- տեղական (համայնքային) վարչական ռեգիստրների (այդ թվում՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

- ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման նպատակով՝ աշխատանքներ իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,

- համալրել, արդիանականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեգիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

- անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը, հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

- վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով՝ շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրմանն ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի»), ինչը ենթադրում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

- շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

- վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով՝ ընդլայնել վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը, ընդլայնելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տարածման հնարավորությունները,

- վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

- շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողավորման միասնական համակարգի մասը կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (այդ թվում՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգիչը, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգիչը, վիճակագրական միավորների դասակարգիչը և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները (այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

- կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

16.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ 2012-2014 թվականներին ոլորտին ուղղված հատկացումները (առանց կառավարման ապարատի ծախսերի) ըստ տարիների կկազմեն՝ 2012 թվականին՝ 368.5 մլն դրամ, 2013 թվականին՝ 356.0 մլն դրամ, 2014 թվականին՝ 362.9 մլն դրամ (ՀՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 348.8 մլն դրամ, 2013 թվականին՝ 366.3 մլն դրամ):

2012 թվականին՝ 2011 թվականի նկատմամբ, ծախսերը կնվազեն 38.3 % -ով, 2013 թվականին՝ 2012 թվականի նկատմամբ, 3.4 % -ով, իսկ 2014 թվականին՝ 2013 թվականի նկատմամբ, ծախսերը կաճեն՝ 1.9 % -ով:

Պետական վիճակագրության ոլորտում 2012-2014 թվականներին ծախսերի նվազումը պայմանավորված է մարդահամարի նախապատրաստական և անցկացման աշխատանքների ավարտմամբ:

2012-2014 թվականներին, միաժամանակ, «Պետական վիճակագրության տեղեկատվության հավաքագրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ՝ պայմանավորված.

- 2013 թվականին՝ աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճով՝ 10 % -ով,
- 2014 թվականին՝ նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամ սահմանմամբ:

Մարդահամարի նախապատրաստման աշխատանքների կազմակերպման շրջանակներում 2012-2013 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- √ մարդահամարի նախնական ամփոփ ցուցանիշների ստացում և հրապարակում,
- √ հետմարդահամարային ընտրանքային հետազոտության նախապատրաստում և անցկացում,
- √ մարդահամարի հարցաթերթերի կողավորման գործընթացի իրականացում,
- √ մուտքագրման գործընթացի իրականացման համար կադրերի հավաքագրում և ուսուցում,
- √ մարդահամարի հարցաթերթերի մուտքագրման գործընթացի և վերահսկման մեխանիզմների կազմակերպում և իրականացում,
- √ մարդահամարի ծրագրով նախատեսված և սահմանված ելքային աղյուսակների տեխնիկական առաջադրանքների նախապատրաստում և ստացում,
- √ մարդահամարի ամփոփ, մարզային, քաղաքային/գյուղական բաշխումով ցուցանիշների ստացում,
- √ հետմարդահամարային ընտրանքային անկախ հետազոտության կազմակերպում և անցկացում,
- √ մարդահամարի հրապարակումների պատրաստում (թղթային և էլեկտրոնային) և հրապարակում,
- √ մարդահամարի արդյունքներով տնային տնտեսությունների հասցեների բազայի ձևավորման համար աշխատանքների կազմակերպում:

16.2.5. ԱՐՏԱՔԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո 2010-2012 թվականներին ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվում է «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում» խորագրով ծրագիրը:

ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ

17.1. Ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

17.1.1. Պետական գույքի կառավարման ոլորտի ընդհանուր նկարագիրը.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) շարունակում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 24.12.2009 թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N1523-Ն որոշմամբ հաստատված ծրագրով, ինչպես նաև պետական գույքի կառավարման հայեցակարգով և այլ իրավական ակտերով պետական գույքի կառավարման, մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման բնագավառներում ոլորտի համար որդեգրած քաղաքականության իրականացումը:

1. Պետական գույքի կառավարում

Պետական բաժնետոմսերի տնօրինում և ընկերությունների գործունեության մոնիտորինգ

01.01.2011 թ. դրությամբ, Վարչությունը տնօրինում է պետական մասնակցությամբ 41 առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը: Նշված կազմակերպություններից 39-ն ընդգրկված են «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ. ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնավորեցման ենթակա ընկերությունների ցանկում:

Վարչության 41 կազմակերպություններից 23-ում անց են կացվել տարեկան ընդհանուր ժողովներ, որոնց ընթացքում քննարկվել են ընկերություններում առկա հիմնախնդիրները և մշակվել դրանց լուծման ուղիները, որոնցից 5 կազմակերպության պետական բաժնեմասը 50 տոկոսից պակաս է: Ի կատարումն ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 474-Ն որոշման 10-րդ կետի, 13 կազմակերպությունների բաժնետոմսերի հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացվել են 2010 թ. երրորդ եռամսյակում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ. սեպտեմբերի 3-ի թիվ 1013-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և ՀՀ սեփականատերերի ռեեստրի վարում իրականացնող կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել և ավարտվել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ցանկի ճշգրտման աշխատանքները, որի արդյունքում պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված 1547 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից՝

- 447-ը գործող կազմակերպություններ են,
- 466-ը լուծարված իրավաբանական անձինք են,
- 140-ը ճանաչվել են սնանկ,
- 213-ը գտնվում են լուծարման գործընթացում,
- 112-ը մասնավորեցված են:

Բացի այդ պարզվել է, որ 115-առևտրային կազմակերպություններ չունեն պետական մասնակցություն և առաջարկվել է դրանք հանել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ցանկերից: Մնացած 54 կազմակազմակերպությունից 16-ն ընդգրկվել են լուծարման առաջարկվող կազմակերպությունների ցանկում, 10-ը գտնվում են հիմնադիրների կողմից իրականացվող լուծարման գործընթացում, 1-ը սնանկ է ճանաչված, իսկ 27-ի վերաբերյալ նախատեսվում է ներկայացնել լրացուցիչ առաջարկություն:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.12.2004թ. N 1844-Ն որոշումը՝ 2010թ. ընթացքում իրականացվել են 34 պետական կառավարման մարմինների ենթակայության շուրջ 400 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2009թ. 4-րդ եռամսյակի և 2010թ. 1-ին կիսամյակի ֆինանսատնտեսական արդյունքների դիտարկումներն ու վերլուծությունները: Կազմվել է մոնիտորինգի ենթարկված՝ 2007-2009թթ. ընթացքում վնասի ցուցանիշներ արձանագրած, ինչպես նաև գործունեություն չձավալած ընկերությունների ցանկը: Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացվել պետական կառավարչական մարմիններից ստացված և նշված ցանկերում ընդգրկված տարեկան վնասի ցուցանիշներ արձանագրած և առաջիկա տարիների ընթացքում գործունեության բարելավման ծրագրեր ունեցող ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ այդ գործընթացում առկա խնդիրների լուծման վերաբերյալ համապատասխան առաջարկություններով:

Հաշվառման համակարգի ներդրում ու կատարելագործում

Պետական գույքի հաշվառման նոր համակարգի ներդրման շնորհիվ որակական փոփոխության է ենթարկվել պետական գույքի հաշվառման բազան, որը հնարավորություն է տալիս հստակ պատկեր ստանալ պետական սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման վիճակի վերաբերյալ: Օգտագործելով ձևավորված բազայում առկա տեղեկատվությունը Վարչության կողմից աշխատանքներ են տարվում պետական գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների գրանցումն ավարտին հասցնելու ուղղությամբ:

2010թ. ընթացքում Վարչության կողմից պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառվել է 4220 միավոր անշարժ գույք՝ 9278608.56 քառ. մետր ընդհանուր մակերեսով, որից 703-ը չունի սեփականության իրավունքի պետական գրանցում: Հաշվառվել է նաև այլ երկրներում գտնվող 14 միավոր ՀՀ սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ 6544.17 քառ. մետր

ընդհանուր մակերեսով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող 4 միավոր անշարժ գույքը՝ 1922.04 քառ. մետր մակերեսով:

Բացի այդ հաշվառվել է նաև պետական մասնակցությամբ 438 առևտրային կազմակերպությունների գույքի կազմում ընդգրկված թվով 937 միավոր անշարժ գույք՝ 987123.77 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

Թվով 5 պետական կառավարման մարմինների կողմից ներկայացվել է 20991.65 քառ. մետր ընդհանուր մակերեսով 33 միավոր անշարժ գույքի (տարածքի) պահանջարկ:

Վարչության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի թիվ 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ կընդլայնվի պետական գույքի հաշվառման բազան և հնարավորություն կստեղծվի իրականացնել նաև պետական ճանապարհների և կամուրջների, ջրատարների ու ջրամբարների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների հաշվառումը:

Առևտրային կազմակերպությունների լուծարում

2010թ. Վարչությունն իրականացրել է նաև 4 կազմակերպության լուծարումից հետո մնացած, իսկ լուծարման գործընթացում գտնվող 6 ընկերության գույքի գույքագրման աշխատանքներ:

2010թ. Վարչության տնօրինությանն է ընդունվել 336769.26 քառ. մետր մակերեսով և 12236641 հազ. դրամ արժեքով 298 միավոր անշարժ գույք, այդ թվում 236 միավորը «Հանրակրթական դպրոցներ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքն է՝ 233069.37 քառ. մետր մակերեսով և 4697734.2 հազ. դրամ արժեքով, իսկ հաշվառումից հանվել է 894720.086 հազ. դրամ ընդհանուր արժեքով 66 անվանում անշարժ գույք:

Վարչության կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում 2010թ. ընթացքում ավարտվել են 106 միավոր անշարժ գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքների պետական գրանցման աշխատանքները (ստացվել են սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներ), իսկ պետական սեփականություն հանդիսացող 228 միավոր անշարժ գույքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնելու համար:

Վարչության կարևոր գործառույթներից է պետական (կամ պետական մասնակցությամբ) ընկերությունների լուծարման գործընթացի արդյունավետ կազմակերպումը: Լուծարվող ընկերությունների մի մասը երկու անգամ ներկայացվել է մասնավորեցման, սակայն դրանք գնորդների մոտ հետաքրքրություն չեն առաջացրել: Մյուս մասը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով չնախատեսված

իրավական կարգավիճակ ունեցող, չաշխատող կամ ֆինանսատնտեսական վատ ցուցանիշներ ունեցող ու գործունեության հեռանկարներ չունեցող առևտրային կազմակերպություններն են:

2010թ. ընթացքում լուծարման գործընթացում է գտնվել 253 կազմակերպություն, որոնցից 3 կազմակերպության լուծարման մասին ընդունվել են ՀՀ կառավարության որոշումներ:

Նշված կազմակերպություններից՝

ա) 86-ի լուծարման գործընթացն ավարտվել է (այդ թվում՝ ՀՀ կառավարության 21.01.10թ. թիվ 41-Ա որոշմամբ 10 կազմակերպություն համարվել են լուծարված),

բ) 4-ը դատարանի կողմից ճանաչվել են սնանկ,

գ) 4-ի լուծարման հանձնաժողովների գործունեությունը դադարեցվել է,

դ) 1-ի գործունեության դադարեցման մասին կատարվել է համապատասխան գրառում:

ՀՀ կառավարության 21.01.2010թ. թիվ 41-Ա որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 30.07.2009թ. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կազմակերպական-իրավական ձևեր չունեցող մի շարք իրավաբանական անձանց լուծարված համարելու և դրանց գույքի հեղափոխ տնօրինման մասին» թիվ 891-Ա որոշման մեջ, համաձայն որի ևս 15 դուստր ձեռնարկություն համարվել է լուծարված:

2010թ. ընթացքում կազմակերպությունների լուծարման հանձնաժողովների կողմից մարվել է շուրջ 57650,0 հազ. դրամ կրեդիտորական պարտք, այդ թվում.

- ՀՀ պետական բյուջեի գծով՝ 11278,0 հազ. դրամ,
- ՀՀ սոցիալական ապահովագրության գծով՝ 3481,0 հազ. դրամ,
- աշխատավարձի պարտքերի գծով՝ 32319,0 հազ. դրամ,
- այլ կրեդիտորական պարտքերի գծով՝ 10572,0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 29.04.2010թ. «Պետական գույքի կառավարումը համակարգելու մասին» թիվ 474-Ն որոշման 12-րդ կետի համաձայն պետական կառավարման մարմինները Վարչություն են ներկայացրել իրենց կողմից լուծարվող թվով 57 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների լուծարման ընթացքի մասին տեղեկատվություն, իսկ նույն որոշման 13-րդ կետի համաձայն Վարչության կողմից ՀՀ վարչապետին է ներկայացվել այդ կազմակերպությունների լուծարման գործընթացն ավարտելու ժամանակացույցը, ինչպես նաև առաջարկություններ այդ գործընթացում առկա խնդիրների լուծման վերաբերյալ:

II. Պետական գույքի մասնավորեցում և օտարում

Պետական գույքի մասնավորեցման գծով վարվող քաղաքականության հիմնական նպատակներն են՝

➔ առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի մասնավորեցման միջոցով դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և երկրում մրցակցային միջավայրի բարելավմանը նպաստելը,

➔ պետական գույքի մասնավորեցման գծով միջազգային չափանիշներին համապատասխան այնպիսի գործիքների լայնորեն կիրառումը, որոնք կնպաստեն մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ներգրավմանն ու աշխատատեղերի պահպանմանը կամ ավելացմանը:

Մասնավորեցման ներկա փուլում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

⇒ աշխատատեղերի պահպանում,

⇒ աշխատողների բարեկեցության մակարդակի բարձրացում՝ ի հաշիվ մատուցվող ծառայությունների որակի և դրանց ծավալների ավելացման:

2010թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված 15 որոշումներով մասնավորեցման է ներկայացվել 5 ընկերության բաժնետոմսեր, 5 գույքային միավոր և 5 առևտրային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույք, որոնցից մասնավորեցվել է 3 ընկերության բաժնետոմսեր՝ ուղղակի վաճառքով և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքի կազմից առանձնացված 1 գույքային միավոր՝ աճուրդով (գործարքների կայացման աստիճանը կազմել է 26%):

Որպես մասնավորեցման գործընթացի դանդաղման հիմնական պատճառ կարելի է արձանագրել մասնավորեցման ենթակա ընկերությունների մեծ մասի գրավչության ցածր աստիճանը:

2010թ. Վարչության կողմից մշակվել և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել պետական գույքի մասնավորեցման և օտարման մասին ՀՀ կառավարության որոշման 60 նախագիծ, այդ թվում 42-ից 15-ի մասնավորեցման, 27-ի օտարման վերաբերյալ առաջարկություններն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, իսկ 18-ի գծով ներկայացված առաջարկությունները գտնվում է ընթացքում:

Գնային ճկուն քաղաքականության գործիքի կիրառման շնորհիվ նախօրոք հայտնի գնորդներին ուղղակի վաճառքով մասնավորեցվել են պետական մասնակցությամբ 3 առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը, իսկ մրցույթով մասնավորեցման է ներկայացվել 1 գույքային միավոր, որը չի կայացել:

Աճուրդով մասնավորեցման են ներկայացվել պետական մասնակցությամբ 2 առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը, 5 գույքային միավոր և 5 առևտրային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույք: Այս ձևով մասնավորեցվել է 1 գույքային միավոր:

Օտարում.

«Կառավարության կողմից ոլորտի գծով ընդունված 27 որոշումներով օտարման է ներկայացվել 199 միավոր գույք, այդ թվում 3-ը՝ անշարժ գույք, 193 տրանսպորտային միջոց (որոնցից՝ 1 օդանավ):

Օտարման ներկայացված վերոնշյալ 3 միավոր անշարժ գույքից 1-ը ներկայացվել է օտարման ուղղակի վաճառքի ձևով, իսկ մնացած 2-ը՝ հրապարակային սակարկություններով (2-ը՝ աճուրդով, որից 1-ը վաճառվել է):

2010թ. ընթացքում հայտարարվել է 280 աճուրդ, որով վաճառքի է ներկայացվել 830 լոտ, այդ թվում՝ 16-ը լուծարման ընթացքում գտնվող գույք, 117-ը՝ լուծարումից հետո մնացած գույք, 690 տրանսպորտային միջոց և այլ շարժական գույք, 2-ը՝ անշարժ գույք, 2-ը՝ ընկերության մասնավորեցման ենթակա բաժնետոմսեր, 3-ը՝ մասնավորեցվող այլ գույք: Նշված աճուրդներից կայացել է 37-ը, իսկ վաճառքի ներկայացված լոտերից վաճառվել է 242-ը, որից 7-ը՝ լուծարման ընթացքում գտնվող գույք, 1-ը՝ լուծարումից հետո մնացած գույք, 232 տրանսպորտային միջոց և այլ շարժական գույք, 1-ը՝ անշարժ գույք, 1-ը՝ մասնավորեցվող այլ գույք:

2010թ. ընթացքում Վարչությունը կնքել է 37 պայմանագիր, որից 7-ը՝ մասնավորեցման (ուղղակի վաճառք՝ 5, 1-ը՝ «փոքր» օբյեկտ, 1-ը՝ լուծարումից հետո մնացած գույք՝ աճուրդ), 6-ը՝ օտարման, 2-ը՝ նվիրաբերության, 19-ը՝ նվիրատվության, 5-ը՝ անհատույց սեփականաշնորհման, փոփոխություն է կատարվել մասնավորեցման և օտարման 6 պայմանագրերում:

Ընդհանուր առմամբ 2010թ. կատարվել է պետական գույքի մասնավորեցման ծրագրի ցանկերում ընդգրկված 13 ընկերության գույքի, 41 միավոր անշարժ գույքի, 8 իրավաբանական անձանց լուծարումից հետո մնացած գույքի, լուծարվող 3 կազմակերպության գույքի, 234 հատ տրանսպորտային միջոցի և թվով 5 կազմակերպության շարժական գույքի գնահատման աշխատանքներ:

01.01.2011թ. դրությամբ «Կ պետական բյուջեի սեփականաշնորհման հաշվին փաստացի մուտքագրվել է 433336252 դրամ, իսկ համապատասխան համայնքային բյուջեներ է փոխանցվել 152387910 դրամ:

2010թ. գույքի օտարումից ստացված մուտքերը կազմել են 130267986 դրամ, որից համայնքային բյուջեներ է փոխանցվել 31125006 դրամը:

Վարչության կողմից կնքված ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերի կնքման հիման վրա 2010թ. «Կ պետական բյուջե է մուտքագրվել 204966046 դրամ վարձավճար՝ նախատեսված 179279000 դրամի փոխարեն:

Վարչության գործառույթների շարքում կարևորվում է մասնավորեցման և օտարման պայմանագրերով գնորդների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը: 2010թ. ընթացքում մասնավորեցման պայմանագրերով վերահսկողու-

թյան ներքո է գտնվել թվով 38 գնորդի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, որոնց կողմից ստանձնած ներդրումային պարտավորությունները 2010թ. կազմել են 1332733.3 հազ. դրամ, իսկ սոցիալական երաշխիքների մասով նախատեսված է եղել ստեղծել 1150 աշխատատեղ:

Վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պայմանագրային պարտավորությունները կատարել են թվով 30 գնորդ, որոնց կողմից կատարված ներդրումները կազմել են 828019.2 հազ. դրամ, իսկ սոցիալական երաշխիքների մասով գնորդների կողմից ստեղծվել է 1124 աշխատատեղ:

2010թ. պայմանագրային պարտավորությունները չեն կատարել 5 ընկերության (կամ գույքի) գնորդ, որոնց կողմից ստանձնած, բայց չկատարված ներդրումների պարտավորությունների գումարը կազմել է 635200 հազ. դրամ, իսկ սոցիալական երաշխիքների մասով նշված գնորդների կողմից չի ստեղծվել 36 աշխատատեղ:

Հարկ է նշել, որ 24 գնորդի կողմից՝ պայմանագրերով նախատեսված պարտավորությունները գերակատարվել են շուրջ 131485.9 հազ. դրամով և լրացուցիչ ստեղծվել 156 աշխատատեղ:

2010թ. 3 գնորդի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը չի լրացել, որոնք կազմում են ներդրումների մասով՝ 1 000.0 հազ. դրամ, իսկ սոցիալական երաշխիքների ապահովման մասով՝ 146 աշխատատեղ:

Գնորդների կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմնական պատճառներից կարելի է առանձնացնել ինչպես տնտեսական ճգնաժամը, այնպես էլ գնորդների կողմից ներկայացված գործարար ծրագրերի ոչ իրատեսական լինելը և որոշ դեպքերում Վարչությունը ստիպված եղել դիմել ՀՀ կառավարություն՝ գնորդների կողմից ստանձնած պարտավորությունները վերանայելու (մեղմելու) առաջարկով:

17. 2. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները

2.1. Ռազմավարական նպատակներ

Հայաստանի Հանրապետությունում պետական գույքի մասնավորեցման գործընթացի իրականացումն ապահովվում է օրենսդրի կողմից ընդունված մասնավորեցման ծրագրերին համապատասխան, սկզբից ամենամյա, այնուհետև եռամյա կտրվածքով: Ներկայում գործողության մեջ է «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը, որը թվով 6-րդն է:

2012-2014 թթ. համար, որպես պետական գույքի կառավարման և մասնավորեցման նպատակներ, կանխորոշվել են.

- առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի կառավարման և մասնավորեցման բարելավման արդյունքում բարձրացնել ընկերությունների գործունեության արդյունավետությունը և գրավչությունը տեղական և օտարերկրյա ներդրողների համար,

- շարունակաբար զարգացնել պետական գույքի հաշվառման ու գույքագրման համակարգը՝ ապահովելով պետական գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքների գրանցման աշխատանքների ավարտը,

- ապահովել պետական գույքի մասնավորեցման ծրագրային միջոցառումների իրականացումը, որպես առաջնայնություն ընդունելով մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ընդգրկման և սոցիալական երաշխիքների ընդլայնումը,

- ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակականությունը և նոր ծրագրի գործողության ժամկետում ավարտել պետական գույքի մասնավորեցման հիմնական գործընթացը,

- նպաստել տնտեսությունում ոչ պետական առևտրային կազմակերպությունների թվի, ինչպես նաև պետական գույքի կառավարումից ու մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին պետական բյուջեի եկամուտների ավելացմանը: Պետական գույքի կառավարման քաղաքականության իրականացումն ավելի արդյունավետ կազմակերպելու համար նախատեսվում է պետական գույքից շենք շինությունների վերանորոգման աշխատանքների իրականացում, որն ավելի գրավիչ կդարձնի պետական գույքի վարձակալությունը:

2.2. Գերակայությունները

Կանխատեսվող ժամանակահատվածի համար ոլորտում գերակայություններ են՝

1. պետական գույքի հաշվառման համակարգի կատարելագործումը,
2. պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման աշխատանքների ավարտը,
3. մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ծրագրային, այդ թվում ներդրումների և սոցիալական երաշխիքների ընդգրկմամբ մասնավորեցման գործընթացի ապահովումը, ինչը կնպաստի հանրապետությունում տնտեսական աճի խթանմանը,
4. պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը,
5. պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում կառավարիչների (աշխատակազմի ղեկավար, գործադիր տնօրեն, լիազոր ներկայացուցիչ) աշխատանքների վերահսկողության և գնահատման համակարգի հստակ սահմանումը,
6. կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովումը,
7. առաջնային նշանակության պետական գույքի կառավարման հատուկ գերակայություն համարվող սահմանադրական և օրենսդրական գործառույթների, վարչական և ռազմավարական

նպատակների կատարման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ հիմնական պահանջներին բավարարող տարբերակներից առավել մատչելի և ռեսուրսային ընտրությունը,

8. «Պետական աջակցություն ՀՀ մանկատան խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրով նախատեսված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցելով բնակարանների օգտագործման պայմանագրերի կնքումը,

9. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների բնակարանային խնդիրների դիմում բողոքների ուսումնասիրում և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով բնակարանների ապահովումը:

17.3. Կանխատեսվող վերջնական արդյունքներ

Վերոհիշյալ առաջնային ռազմավարական նպատակներին համահունչ 2012-2014 թ.թ. Վարչությունը նախատեսում է հասնել հետևյալ գերակա վերջնական արդյունքներին.

1. «ՀՀ պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ ծրագրի մասին» ՀՀ օրենքում ընդգրկված օբյեկտների մասնավորեցման արդյունավետ իրականացման ապահովում, որը կնպաստի.

➤ տնտեսական աճին,

➤ մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը,

➤ շուկայական մրցակցության և արտահանման խթանմանը,

➤ աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը,

➤ պետական բյուջեի եկամուտների ավելացմանը,

➤ աշխատաշուկայի ստեղծմանը, մարդկային կապիտալի զարգացմանը և ոլորտում պետության այլ գործառույթների կատարմանը:

2. Կատարելագործել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական մոնիտորինգի համակարգը և բարձրացնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման որակը, ինչպես նաև բարելավել հսկողությունը դրանց կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրագործման ուղղությամբ:

3. Պետական անշարժ գույքի կառավարման գործընթացում առկա բազմաթիվ խնդիրների լուծման միջոցառումների մշակում և իրականացում, մասնավորապես.

➤ կանոնակարգված չէ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման սկզբունքները և չափորոշիչները (օրինակ՝ ՀՀ կառավարության 26.12.2001թ. թիվ 1322 որոշմամբ մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների կողմից

զբաղեցրած տարածքները տրամադրվել են անհատույց օգտագործման առանց որևէ չափորոշիչ հաշվի առնելու),

➤ լուծված չէ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման հանձնելիս դրանց սպասարկման խնդիրները, որոնք բացի կազմակերպչական լուծումներից, պահանջում են նաև ֆինանսական միջոցներ: Կարգավորման կարիք ունի նաև նույն գույքը տարբեր անձանց կողմից կարճ ժամկետով օգտագործման տրամադրման հարցը(օրինակ՝ ժամավճարով):

Նշված խնդիրներին լուծում տալու նպատակով 17.02.2011թ. ընդունվել է ՀՀ կառավարության «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 304-Ն որոշումը:

Բացի այդ նախատեսվում է նաև բարձրացնել պետական անշարժ գույքի օգտագործման արդյունավետությունը, դրանից ստացվող եկամուտները, (մասնավորապես՝ 2011 թ. ընթացքում պետական սեփականություն հանդիսացող մոտ 58 300 քառ. մետր անշարժ գույքի թվով 165 վարձակալներից նախատեսվում է ՀՀ պետական բյուջե մուտքագրել շուրջ 239200 հազ. դրամ):

Պետական գույքի հաշվառման և պետական անշարժ գույքի պահանջարկի հստակեցման նպատակով ՀՀ կառավարության 28.04.2005 թ. թիվ 562-Ն որոշման մեջ կատարված վերջին փոփոխությամբ, կհաշվարկվեն նաև միջպետական, հանրապետական նշանակության ճանապարհներն ու կամուրջները, սահմանվել են պետական մարմինների կողմից ներկայացվող տեղեկանքների նոր ձևեր, համաձայն որոնց լրացվում են նաև պետական մարմիններին անհրաժեշտ անշարժ գույքի մասին տեղեկանքը, ինչը հնարավորություն կընձեռնի հստակ բարելավելու պետական անշարժ գույքի պահանջարկի հարցը:

3.1 ՄԺԾԾ Ժամանակահատվածում բյուջետային ֆինանսավորման են ընդգրկվել ոլորտում իրականացվելիք ծախսային հետևյալ ծրագրերը (պարտավորությունները).

1. «Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ» ծախսային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել պետական գույքի մասնավորեցման և օտարման (աճուրդ, մրցույթ, ուղղակի վաճառք) կազմակերպում և անցկացում:

Նշված ծախսային ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծրագրով կանխատեսվել է բյուջետային ֆինանսավորման հետևյալ չափաքանակները. 2012թ.՝ 21138.0 հազ. դրամ, 2013թ.՝ 22952,0 հազ. դրամ, 2014թ.՝ 23872,8 հազ. դրամ:

2. «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում» ծախսային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման, ուսումնասիրման (տեղազննման

միջոցով), գնահատման, հաշվառման, գրանցամատյանի վարմանն աջակցող գործառույթների իրականացման աշխատանքներ:

Նշված ծախսային ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծրագրով կանխատեսվել է բյուջետային ֆինանսավորման հետևյալ չափաքանակները. 2012թ.՝ 35000,0 հազ. դրամ, 2013թ.՝ 38057,5 հազ. դրամ, 2014թ՝ 38833,7 հազ. դրամ:

3. Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակում- ծախսային ծրագրի իրականացման համար 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով յուրաքանչյուր տարվա կտրվածքով կանխատեսվել է համապատասխանաբար՝ 15320,0-ական հազ. դրամ:

ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ

18.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

18.1.1 Ռազմական կարիքների բավարարում (ԳԱՂՏՆԻ)

18.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ

Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն գոյություն ունեցող 8 ծրագրերի իրականացմանը: Նշված ծրագրերը մշակվել են 2012-2014 թվականների ՄԺԾԾ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից սահմանված կողմնորոշիչ չափաքանակների ու աշխատանքները համակարգող մշտապես գործող խմբի կողմից արված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա և կիրականացվեն պետական կառավարման 4 մարմինների միջոցով (տես Աղյուսակ 18.2.1.):

18.2.1 Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում իրավիճակի նկարագրություն

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, գործելով ՀՀ օրենդրական դաշտի պահանջների սահմաններում, ինչպես նաև 2001 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով, կատարում է բազմաբնույթ ծառայություններ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավասության սահմաններում, մասնավորապես, ՀՀ ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների, ազատության և օրինական շահերի ապահովումը, հանրապետության պաշտպա-

նունակության ամրապնդումը, անվտանգության ապահովման և ամրապնդման, պետական պահպանության, տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման նպատակով համապատասխան տեղեկատվությունների հավաքումը, ռազմարդյունաբերական, տնտեսական, ատոմային էներգետիկայի, տրանսպորտի, կապի, էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերական, ռազմավարական օբյեկտների, առաջնային գիտական մշակումների ոլորտներում անվտանգության ապահովումը, ահաբեկչության, կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեության բացահայտումը, կանխումն ու խափանումը:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով ստեղծվել և առաջին անգամ 2005 թվականից պետական բյուջե է ընդգրկվել «Պետական պահպանության ապահովում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է պետական պահպանություն՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, որն իրականացվում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պետավտոհամարանիշների ձեռքբերում

ՀՀ ոստիկանության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության զորքերի մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով: ՀՀ ոստիկանության առաջիկա երեք տարվա ծախսային ռազմավարությունը՝ բխում է գործունեության տվյալ բնագավառում տարվող պետական քաղաքականության և դրա հիմնական ուղղություններին համահունչ մշակված բարեփոխումների ծրագրային պահանջներից: ՀՀ ոստիկանության առջև դրված կանոնադրական խնդիրների կատարումն ապահովվում է ՀՀ ոստիկանության 11 մարզային և 56 ստորաբաժանումների, ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 1008-Ն որոշմամբ պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով ծառայություն իրականացնող 26 ստորաբաժանումների միջոցով:

Առկա խնդիր է դիտարկվում, սույն ոլորտին ուղղվող պետական ծախսերի շարունակական պայմաններում, առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը:

Սույն ոլորտում պետական ծախսերը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը:

Օրենքներով և ազգային զարգացման ռազմավարություններով սահմանված ոստիկանության հիմնախնդիրների և միջոցառումների համակարգված իրագործումն ապահովվում է ոստիկանության հետևյալ հիմնական ոլորտային ծրագրերի շրջանակներում.

1. Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն,

2. հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար,

3. պետական պահպանություն,

4. ճանապարհային անվտանգության ապահովում,

5. անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի կազմակերպում և վարում,

6. կրթական ծառայություններ,

7. ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների թվաքանակի շարունակական աճը, դրանով պայմանավորված նաև երթևեկության ինտենսիվության զգալի բարձրացումն, ինչպես նաև զանգվածային միջոցառումների նկատելի ավելացումը՝ անհրաժեշտություն է առաջացել ճանապարհային երթևեկության անվտանգության, հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանման աշխատանքներում լայնորեն կիրառել տեխնիկական ժամանակակից միջոցներ: Այդ նպատակով իրականացվում են մի շարք միջոցառումներ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության նյութատեխնիկական միջոցների վերազինմանը, ճանապարհային երթևեկության անվտանգության հսկողության տեխնիկական ապահովմանը և տրանսպորտային միջոցների պետական հաշվառման, համարանիշների հատկացման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ոստիկանության պետական պահպանության վարչության և ենթակա ստորաբաժանումների կողմից 2010 թվականին իրականացվել է, ընդհանուր առմամբ, 4169 օբյեկտի, որից՝ 1227 բնակարանների պահպանություն: Օբյեկտների պահպանության մասով 2010թ. ցուցանիշը 2009 թվականի նույն ցուցանիշի նկատմամբ գերազանցում է 70-ով կամ 1.7% -ով, իսկ բնակարանների պահպանության մասով՝ նվազել է 6-ով կամ 0.5%-ով: Նշված ժամանակահատվածում 87 օբյեկտով կամ 2.7%-ով ավելացել է երթուղիներով պահպանվող օբյեկտների քանակը (2010 թվականին՝ 3278, իսկ 2009

թվականին՝ 3191 օբյեկտ) և 85-ով՝ կենտրոնացված դիտակայանների միջոցով պահպանվող օբյեկտների թիվը (2010 թվականին 2978 օբյեկտ, 2009 թվականին՝ 2893):

Արդյունքում պետական պահպանության ծառայության պայմանագրային հիմունքներով իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող օբյեկտների (գույքի) պահպանության և անվտանգության ապահովման գծով 2010 թվականի եկամուտները 5.7%-ով գերազանցեց 2009 թվականի նույն ցուցանիշը և կազմեց 4,673.9 մլն դրամ:

«Նոստիկանության մարմիններն ու ստորաբաժանումները, համագործակցելով այլ իրավապահ մարմինների հետ, ձեռնարկել են անհրաժեշտ բոլոր միջոցները հանցագործությունների նախականիման, բացահայտման, ինչպես նաև հասարակական կարգն ու անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Որակական նոր հարթության վրա է բարձրացվել փոխհամագործակցությունը «Նոստիկանության և անչափահասների հիմնախնդիրներով զբաղվող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային տարբեր կազմակերպությունների միջև, մշակվել և համատեղ իրագործվում են սոցիալական ուղղվածություն ունեցող մի շարք ծրագրեր: Կատարված աշխատանքների արդյունքում՝ հաջողվել է ոչ միայն կասեցնել անչափահասների շրջանում հանցավորության շարունակական աճը, այլև վերջին տասը տարիների ընթացքում առաջին անգամ արձանագրվել է անչափահասների շրջանում հանցավորությունը բնութագրող հիմնական ցուցանիշների նվազման միտում:

Նախորդ երկու տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման, ճանապարհային երթևեկության բոլոր մասնակիցների կարգապահության հետագա ամրապնդման ուղղությամբ:

Սկսվել է հանրապետության խոշոր քաղաքների խաչմերուկներում և մայրուղիներում տեսադիտման և արագաչափ ավտոմատ սարքերի տեղադրման, ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնի գործարկման աշխատանքները:

Էական առաջընթաց է արձանագրվել պարեկային ծառայության, ինչպես նաև հաշվառման քննական բոլոր 15 ստորաբաժանումների հիմնովին տեխնիկական վերազինման ծրագրի իրագործման առումով:

Արդյունքների բարելավում է արձանագրվել նաև քննությունից և դատից խուսափող անձանց հետախուզման ուղղությամբ, բացի այդ, հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ձերբակալվել են այլ պետությունների կողմից հետախուզվող զգալի թվով հանցագործներ:

Քրեակատարողական համակարգ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թվով 13 քրեակատարողական հիմնարկներից:

Ծառայությունը կազմակերպում է քրեական պատիժների կատարման կապակցությամբ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների կատարումը, կալանավորվածներին կալանքի տակ պահելը, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումներին աջակցելը, քրեակատարողական հիմնարկներում օրինականության, այնտեղ պահվող անձանց, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող անձնակազմի և քաղաքացիների անվտանգությունն ապահովելը, դատապարտյալների և կալանավորվածների կյանքի և առողջության պահպանման, անհատական, կրթական և մշակութային զարգացման պայմանների ապահովումը, դատապարտյալների և կալանավորվածների սոցիալիզացիայի վերականգնումը, աջակցությունն իրավապահ մարմիններին՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքներում, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության համակարգումը:

2009 թվականին ընդունված քրեակատարողական ծառայության 2009-2016թ.թ. զարգացման հայեցակարգի շրջանակներում քրեակատարողական ծառայությունում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար Արմավիրի մարզում 2006-2009թ.թ. ընթացքում իրականացվել են 2,476.1 մլն դրամի շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նշված շինարարական աշխատանքերը շարունակել նաև 2011-2012թ.թ. և արդյունքում 2012թ. նախատեսվել է 1,000.0 մլն դրամ:

Ծառայության պահպանման նպատակով ոչ առաջնահերթ ծախսային ուղղությունները մատնանշվում են, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ուղղություններով կատարվող ծախսերն ավելացնելու անհրաժեշտությամբ հանդերձ՝ դրանք, այնուամենայնիվ, մյուս ուղղությունների համեմատ փոքր կարևորություն ունեն: Ոչ առաջնահերթ ծախսային ուղղություններն են.

1. գրասենյակային պարագաներ և նյութեր,
2. գույք և սարքավորումներ,
3. գործուղումներ և ծառայողական շրջագայություններ:

«Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն»

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունը (այսուհետ՝ Հայաստանի փրկարար ծառայություն) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ոլորտում գործող պետական մարմին է, իր 11 տարածքային փրկարարական վարչություններով, մշակում և իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Նրա լիազորությունները սահմանվում են «Հայաստանի փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Վերջին տարիներին կառուցվածքային բարեփոխումները թերևս առավել չափով իրենց ազդեցություններն ունեցան փրկարար ծառայության վրա: Նախ 2002 թվականին, այն ժամանակվա ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կազմում վերակազմավորվեց հրշեջ ծառայությունը, այնուհետև ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը վերակազմավորվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության կազմում, հետագայում վերանվանվեց Հայաստանի փրկարար ծառայության, իսկ ներկայումս վերակազմավորվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում՝ Հայաստանի փրկարար ծառայության:

Համակարգի ստեղծումը համընկել է անկախ պետականության ձեռքբերման հետ, հետևաբար անցումային շրջանի բոլոր դժվարություններն ուղղակիորեն ազդել են փրկարար ծառայության ձևավորման և զարգացման վրա: 2005 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքն՝ առավել հստակեցնելով նրա դերը և տեղը պետական գործառույթների բնագավառում:

Վերջին տարիների ընթացքում մեծածավալ ներդրումներ են կատարվել Հայաստանի փրկարար ծառայության համակարգի զարգացման ուղղությամբ՝ ձեռք են բերվել ստացիոնար գերկարճալիք ռադիոկայաններ, շարժական գերկարճալիք ռադիոկայաններ, դյուրակիր գերկարճալիք ռադիոկայաններ, ստացիոնար կարճալիք ռադիոկայաններ, սնման սարքեր, նոր հաճախականություն, մոտորանավակ, օպերատիվ ծառայության և հրշեջ փրկարարական մեքենաներ: «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներին համապատասխան՝ համակարգի փրկարարական ստորաբաժանումների կողմից իրականացվում են միջին հաշվով՝

12 հրամանատարաշտաբային ուսումնավարժություն,

174 շտաբային ուսումնավարժություն,

4 շտաբային վարժանք,

28 հատուկ տակտիկական ուսումնավարժություն,

11-ից ավելի համայնքային և օբյեկտային համալիր ուսումնասիրություն, որոնցում ընդգրկվել են 10-ից ավելի քաղաքային համայնքներ:

Վերջին երկու տարիներին համակարգի զարգացման միտումները:

Որպես փրկարար ծառայություն, համակարգի հիմնական բնորոշիչը պետք է լինի փրկարարական կազմավորումների մշտական մարտական պատրաստակամությունը, որոնց և ուղղվում են զարգացման հիմնական ուղղությունները: Տարիներ շարունակ համակարգի զարգացման ուղղությամբ պետական հոգաձությունը աննշան էր: Դրա վկայությունը բյուջետային հատկացումներն են:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն

ՀՀ Նախագահի 2009 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության հայեցակարգի» N ՆԿ-161-Ն կարգադրությամբ հաստատված հիմնադրույթներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1253-Ն և 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 1520-Ն որոշումներով ընդգծված վերաբերմունք է դրսևորվում հանրապետության տարածքում մթնոլորտի և մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու և միասնական քաղաքականության իրականացման ուղղությամբ: Այս բնագավառում, որպես լիազորված մարմին, հանդես է գալիս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ իր «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ) միջոցով, որը հանդիսանում է հանրապետության մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության միակ մասնագիտացված կառույցը:

Վերջին երկու տարիներին «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի զարգացման միտումներն են.

Սկսած 2005 թվականից մեծ աշխատանք է տարվել հանրապետությունում կարևորագույն նշանակություն ունեցող հակակարկտային համակարգի վերագործարկման ուղղությամբ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջոցների հաշվին ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի 10 գյուղերում արգենտինացի մասնագետների կողմից կառուցվել և տեղադրվել են 15 հակակարկտային ացետիլենային կայաններ, որոնք պաշտպանության տակ են վերցրել 1200 հա տարածք: 2006 թվականին նշված կայանները շահագործվել են «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի և արգենտինացի մասնագետների հետ համատեղ: 2007 թվականին Արմավիրի մարզի 6

գյուղերում արդեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կառուցվել, մոնտաժվել ու գործարկվել են ևս 15 հակակարկտային համակարգեր, որոնցով 2007 թվականի հոկտեմբերի 15-ից պաշտպանության տակ է վերցվել ևս 1200 հա գյուղատնտեսական մշակաբույսեր: 2006թ. վերջերից և 2007թ. սկզբից «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից հակակարկտային համակարգերում կատարվել են արմատական տեխնոլոգիական փոփոխություններ, արդիականացվել են հանգույցները և ղեկավարման համակարգի ծրագրերը: Հաշվի առնելով այն, որ ացետիլեն գազը թունավոր և խիստ պայթուցանավտանգ գազ է, ինչպես նաև համակարգի գործունեության համար անհրաժեշտ ացետիլենային գլանանոթների լիցքավորումը հանրապետությունում մոտակա տարիներին հնարավոր չէ իրականացնել, իսկ արտերկրից ներկրումը կապված էր մեծ ծախսերի հետ, «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բազմաթիվ փորձարկումների արդյունքում, մշակվեց և աշխատանքի համար ընտրվեց լավագույն տարբերակը՝ հեղուկացված պրոպան-բութան գազախառնուրդը:

Ըստ «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի տեխնիկական բնութագրի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից Արարատի մարզում կառուցվեց և շահագործման հանձնվեց 2009 թվականին թվով 12 և 2010 թվականին թվով 28 հակակարկտային կայաններ, որով պաշտպանության տակ վերցվեց ևս 3400 հա ինտենսիվ գյուղատնտեսական մշակության տարածքներ: Դրա արդյունքում 2010 թվականի կարկտային սեզոնի ընթացքում Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերում գործող 70 կայաններով վնասազերծվել է 82 կարկտավտանգավոր պրոցես, կատարվել է 143380 կրակոց, դրանով իսկ պաշտպանվում է առնվազն 5600 հա տարածք: Պաշտպանվող տարածքներում կարկտահարության դեպքեր չեն արձանագրվել, իսկ դրան հարակից տարածքներում կարկուտը գյուղատնտեսական մշակաբույսերին պատճառել է որոշակի վնասներ:

2010 թվականի ընթացքում Արարատի և Արմավիրի սահմանամերձ տարածքներում կառուցվեց և շահագործման հանձնվեց ևս 48 հակակարկտային կայան: Այսպիսով, սկսած 2011 թվականից համակարգում գործում են թվով 118 հակակարկտային կայան (Արագածոտնի մարզում՝ 15, Արարատի մարզում՝ 48, Արմավիրի մարզում՝ 55), որոնցով պաշտպանվող տարածքները կազմում են 9440 հա:

2009 թվականին «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի բյուջետային ֆինանսավորումը կազմել է 143,586.8 հազար դրամ: Հակակարկտային կայանների թվաքանակի և պաշտպանվող տարածքների ավելացմանը զուգընթաց 2010 թվականին ֆինանսավորումն աճել և կազմել է 238,220.4 հազար դրամ:

Ոլորտի հիմնական խնդիրները նախատեսված են ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» N 1253-Ն որոշմամբ: 2008-2012 թվականներին, ըստ ժամանակացույցի, նախատեսված է հանրապետության Արագածոտնի,

Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Լոռու մարզերում տեղադրել ընդհանուր թվով 250 գազագենե-րատորային և ռեազենտով գործող հակակարկտային կայանքներ:

Նկատի ունենալով, որ մթնոլորտային վտանգավոր երևույթները, մասնավորապես, կարկտա-հարությունը մեծ վնասներ են պատճառում հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերին և տնտեսությանը (ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների միջին տարեկան վնասը կազմում է 15.0-20.0 մլրդ դրամ) ՀՀ ղեկավարությունը լուրջ ուշադրություն է դրսևորում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու և այն շեշտակի զարգացնելու ուղղությանը:

Նույն ծրագրով նախատեսված է նաև Արարատի մարզում կառուցել հակակարկտային կենտրոն, ձեռք բերել և կենտրոնում տեղադրել ռադիոլոկացիոն կայան, կառուցել երկու տարա-ծաշրջանային հակակարկտային հանգույցների բազաներ, ինչպես նաև կապիտալ նորոգել Արագա-ծոտնի հակակարկտային կենտրոնի բազան, Արմավիրի մարզում կառուցել հակակարկտային կենտ-րոն, ձեռք բերել և կենտրոնում տեղադրել ռադիոլոկացիոն կայան և այլն:

Ներկայումս, համակարգի արդյունավետ գործունեության ապահովման տեսանկյունից հիմնական խնդիրներն են՝

- նոր ռադիոլոկացիոն հակակարկտային կենտրոնների կառուցումն Արարատի և Արմավիրի մարզերում, քանի որ այս մարզերում նոր կառուցված հակակարկտային կայանների աշխատանքը հնարավոր է արդյունավետ իրականացնել միմիայն նշված մարզերից յուրաքանչյուրում համապա-տասխան կենտրոնների և ռադիոլոկացիոն կայանների առկայության դեպքում,

- ռադիոլոկացիոն կայանի խափանման կամ նրա բացակայության դեպքում հակակարկ-տային կայանների նույնիսկ նորմալ աշխատանքի պարագայում հնարավոր չէ առանց ռադիոլո-կացիոն կայանի կատարել կարկտավտանգավոր պրոցեսների վրա ակտիվ ներգործության աշխա-տանքներ, որը կբերի գյուղատնտեսական մշակաբույսերի կարկտահարության: Մինչև նոր կայանների ձեռքբերումը և տեղադրումն անհրաժեշտություն է առաջանում առկա ռադիոլոկացիոն կայանների հաճախակի նորոգման խնդիրը, որը կապված է մեծ ծախսերի հետ,

- շարժական կայանները, որոնք բացի հակակարկտային աշխատանքներից կօգտագործվեն օդանավակայաններում մառախուղների ցրման, ինչպես նաև մթնոլորտային երևույթների կառա-վարման աշխատանքների կատարման համար, որը կնպաստի նաև գիտափորձարարական աշխատանքների իրականացմանը,

- հակակարկտային ռադիոլոկացիոն կենտրոնների և հակակարկտային կայանների աշխա-տանքների անխափան ու արդյունավետ իրականացման համար 2012-2014 թվականների ժամանա-կահատվածքում անհրաժեշտ է ձեռք բերել 9 հատուկ տիպի ավտոտրանսպորտային միջոց,

- Լոռու մարզի հակակարկտային ռադիոլոկացիոն կենտրոնի շենք-շինությունների և ենթակառուցվածքների կապիտալ նորոգում:

18.2.2 Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում նպատակները, գերակայությունները

Նպատակները

Հասարակական կարգ և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը միտում ունի ապահովելու նշված ոլորտների տարբեր բնագավառներում հետևյալ նպատակների իրականացումը:

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի ապահովումը,
- պետական սահմանների պահպանությունը, սահմանային գոտու անձեռնմխելիությունը,
- օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության կանխումը,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաների անվտանգության ապահովումը,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաներին հատուկ կապով ապահովումը,
- պահպանվող օբյեկտների սպառնացող վտանգի կանխատեսում և բացահայտում,
- պահպանվող օբյեկտների սպառնացող վտանգի կանխարգելման համար համալիր միջոցառումների իրականացում,
- պահպանման ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում,
 - ահաբեկչության դեմ պայքարին մասնակցություն,
 - սահմանված անցագրային ռեժիմի պահպանում,
 - համակարգի անձնակազմի հետ տարվող աշխատանքները և ծառայողների մասնագիտական պատրաստականությունը կատարելագործելը, նրանց իրավական և սոցիալական պաշտպանվածությունն ապահովելը:

Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պետավտոհամարանիշների ձեռքբերում

- անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ գործողություններից,
- հասարակության և պետության շահերի պաշտպանությունը,
- հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականիումը, կանխումը և խափանումը,
- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը
- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործերի պարտադիր ժամկետային զինծառայողների և պայմանագրային զինծառայողների տեսակարար կշռի փոփոխման միջոցով արդյունավետության բարձրացումը,
- Քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի անցման խորացումը և կատարելագործումը,
- Պետավտոհամարանիշներով ապահովումը:

Քրեակատարողական համակարգ

- կալանավորված և դատապարտված անձանց քրեակատարողական հիմնարկներում պահելու պայմանները մարդու իրավունքների ասպարեզում գոյություն ունեցող և համընդհանուր ընդունելության արժանացած միջազգային փաստաթղթերի դրույթներին և չափանիշներին համապատասխան ապահովումը:

- կալանավորված և դատապարտված անձանց նյութական, ներառյալ սննդամթերքով և կենցաղային իրերով, ապահովումը,
- կալանավորված և դատապարտված անձանց բուժսպասարկման ապահովումը,

Հայաստանի փրկարար ծառայություն

Համակարգի գերագույն նպատակը մարդկանց և տարածքների պաշտպանությունն է արտակարգ իրավիճակներում: Դրան հասնելու առաջնահերթ պայմաններից մեկը փրկարար ծառայության ստորաբաժանումների կառավարելիության ապահովումն է: Նշված ուղղությամբ ՄԺԾԾ ժամանակահատվածում շեշտը դրվել է կապի և ազդարարման համակարգի վերականգնմանը Հանրապետության տարածքում:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն

Հակակարկտային կայանների թիվը հասցնելով 250-ի՝ ապահովել ավելի քան 25000 հա գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը:

Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում առանձին զարգացման հիմնական գերակայություններն են.

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

- սննդամթերքի, հանդերձանքի, նորագույն հատուկ տեխնիկայի, սարքավորումների, զենքի և զինամթերքի ձեռքբերման շարունակական գործընթացի ապահովումը:
- տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացումը,
 - օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացումը,
 - պետական սահմանի շուրջօրյա հսկում և պահպանում, այդ թվում նաև էլեկտրոնային համակարգերով և ծառայողական կենդանիներով (շներ, ձիեր և այլն),
 - հետախուզական միջոցառումների անցկացում,
 - հակահետախուզության ոլորտի ընդլայնում, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից օգտագործվող գործակալական ցանցի բացահայտում,
 - ռազմական հակահետախուզական աշխատանքների իրականացում, հավանական հակառակորդի կողմից ռազմական ուսնձգությունների կանխում,

- ռադիո-հակահետախուզության անցկացում,
- գաղտնի տեղեկատվության հրապարակման կասեցում,
- միջուկային անվտանգության ապահովման աշխատանքների իրականացում,
- մաքսանենգության դեմ պայքարի ապահովում,
- ահաբեկչության դեմ պայքարի գործընթացի կազմակերպում և անցկացում,
- նյութատեխնիկական բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովում,
- օրենքով վերապահված այլ գործողությունների իրականացում:

Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն և պեղավորոհամարանիշների ձեռքբերում

- անձի կյանքի և առողջության դեմ ուղղված, ծանր, առավելագույն ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացումը,
- թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թմրամոլության դեպքերի կանխարգելումը,
- տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացումը,
- օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացումը,
- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- անօրինական շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև բնակչության մոտ պահվող զենքի և զինամթերքի հայտնաբերման, առգրավման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը,
- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ-դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաքաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,

- ՀՀ ոստիկանության զորքերի ժամկետային պարտադիր զինծառայողների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը,

- նյութատեխնիկական բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովումը:

Քրեակատարողական համակարգ

- քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության մեղմացման անհրաժեշտությունը,

- կալանավորվածների և դատապարտյալների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ շարունակական միջոցառումների ձեռնարկումը:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգ

Համակարգը երկրորդական խնդիրներ չունի, քանի որ գործունեությունը կապված մարդու կյանքի և առողջության պաշտպանության հետ: Համակարգի առաջ դրված գերակա խնդիրներից կարևորագույնը Հանրապետության ողջ տարածքում փրկարարական աշխատանքների կազմակերպման հնարավորության ներդրումն է: Այս ուղղությամբ կարևորվում է Ծաղկածորում արդի ժամանակի բոլոր պահանջներին համապատասխանող փրկարարական ծառայության ստեղծումը:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն

«ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի գերակայությունները հանրապետությունում կարկտի դեմ պայքարի աշխատանքների իրականացումն է:

Ինչպես արդեն նշվել է, առաջնահերթ հարկավոր է ձեռք բերել ռադիոլոկացիոն կայաններ, ստեղծել ու կառուցել մարզային հակակարկտային կենտրոնների բազաները, դրանք ապահովելով շենքեր-շինություններով, ենթակառուցվածքներով, անհրաժեշտ սարքեր սարքավորումներով, գույքով, համապատասխան մասնագիտական կադրերով և այլն:

Մարզերի ծրագրով ընտրված տարածքներում հարկավոր է տեղադրել պահանջվող քանակի ու տիպի հակակարկտային համակարգեր: Անհրաժեշտ է կարկտի դեմ պայքարի աշխատանքներն իրականացնել հանրապետությունում ընդունված և կիրառվող տեխնոլոգիայով:

18.2.3 Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում ծրագրերի 2012-2014թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 2012թ. 613.0 մլն դրամ կամ 1.1%, իսկ 2013-2014թթ. 503.4 մլն դրամ կամ 1.0%, պայմանավորված Ազգային անվտանգության ծառայողների փաստացի թվաքանակի փոխարեն ընդհանուր թվակազմի գծով աշխատավարձի ֆոնդի հաշվարկմամբ, ինչպես նաև 2013-2014 թվականներին Ազգային անվտանգության համակարգի ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ:

Հասարակական կարգի պահպանության ապահովում ծրագրով 2012-2014թթ. ծախսերը 2012թ. համար պահպանել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսվածի մակարդակը, իսկ 2013-2014թթ. համար կանխատեսվող աճը կազմել է 1,816.3 մլն դրամ, որը պայմանավորված է ՀՀ ոստիկանության ծառայողների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի եւ քաղաքացիական հատուկ ծառայողների աշխատավարձերի 10%-ի բարձրացմամբ:

ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն ծրագրով ծախսերը պահպանել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված մակարդակը: 2012-2014թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի ըստ կանխատեսումների ձեռքբերվող քանակը կկազմի շուրջ 154312 հատ անձնագրի բլանկ:

Պետավտոհամարանիշների ձեռքբերում ծրագրով ծախսերը պահպանել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված մակարդակը: 2012-2014թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի ըստ կանխատեսումների ձեռքբերվող քանակը կկազմի 66544 զույգ պետավտոհամարանիշ:

Քրեակատարողական համակարգի պահպանում ծրագրով 2012-2014թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) կազմում է՝ 2012թ. 105.5 մլն դրամ կամ 1.1%, պայմանավորված կալանավորված և դատապարտված անձանց թվակազմի ավելացման գծով վերջինների պահպանման ծախսերի նախատեսմամբ: 2013-2014 թվականներին նախատեսվում է նաև քրեակատարողական ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատավարձերի 10%-ով բարձրացում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում ծրագրի 2012-2014թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 2012թ. 151.9 մլն դրամ կամ 1.0%, 2013թ. 308.3 մլն դրամ կամ 1.1%, իսկ 2014թ. 318.5 մլն դրամ կամ 1.0%՝ պայմանավորված Հայաստանի փրկարար ծառայողների փաստացի թվաքանակի փոխարեն ընդհանուր թվակազմի գծով աշխատավարձի ֆոնդի հաշվարկմամբ, ինչպես նաև 2013-2014 թվականին Հայաստանի Փրկարար ծառայության համակարգի աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ:


Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ծրագրով 2012-2014թթ. ծախսերի աճը (նախորդ տարվա նկատմամբ) համապատասխանաբար կազմում է՝ 2013-2014 թվականին 11.0 մլն դրամ կամ 1.0%, պայմանավորված աշխատողների աշխատավարձերի 10%-ով բարձրացմամբ: :

18.2.4 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

2012-2014թթ. հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր ծախսերում կկազմի համապատասխանաբար՝ 4.7%, 4.6% և 4.2%:


2012-2014թթ. հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի մեջ ունի հետևյալ պատկերը.

Գծանկար 18.2.1. Պետական բյուջեի ծախսերն ազգային անվտանգության և հասարակարգի կարգի պահպանության ոլորտներում (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)




2012-2014թթ. ՄԺԾԾ-ով հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներին նախատեսվում է ուղղել 2012 թվականին՝ 48,465.2 մլն դրամ, 2013 թվականին՝ 50,563.8 մլն դրամ, 2014 թվականին՝ 50,624.7 մլն դրամ:

Գծանկար 18.2.2. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում ըստ ծրագրերի ծախսերի բաշխումը 2012-2014թթ.



Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում ծախսերի տարանջատումն, ըստ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, ունի հետևյալ պատկերը.

Գծանկար 18.2.3. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում պետական ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական նշանակության (%՝ ոլորտի պետական ընդհանուր ծախսերի նկատմամբ)



2012-2014թթ. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում բյուջետային հատկացումներն, ըստ առանձին խմբերի, ծրագրերի և ընթացիկ ու ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, ներկայացված են Աղյուսակ 18.2.2.-ում:

Աղյուսակ 18.2.2. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում բյուջետային հատկացումները 2010-2014թթ՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ըստ ծրագրերի, կատարող պետական մարմինների և ընթացիկ ու ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (մլն դրամ)

Բաժին, Խումբ, Դաս	Ծախսերի գործառական դասակարգման խմբերի ծրագրերի անվանումները	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
		փաստ	ծրագիր	Կանխադրեսում		
	ԸՆԴԱՄԵՆԸ այդ թվում	43,853.4	47,686.7	48,465.2	50,563.8	50,624.7
	- ընթացիկ ծախսեր	43,130.8	46,255.5	47,170.4	50,378.0	50,438.9
	- կապիտալ ծախսեր	722.6	1,431.2	1,294.8	185.8	185.8
03.01.01	ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն, այդ թվում	170.9	173.6	173.6	173.6	173.6
	- ընթացիկ ծախսեր	170.9	173.6	173.6	173.6	173.6
	- կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	170.9	173.6	173.6	173.6	173.6
03.01.01	Հասարակական կարգի պահպանության ապահովում, այդ թվում	22,545.6	23,665.3	23,665.3	25,481.6	25,481.6
	- ընթացիկ ծախսեր	22,322.5	23,665.3	23,665.3	25,481.6	25,481.6
	- կապիտալ ծախսեր	223.1	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	22,545.6	23,665.3	23,665.3	25,481.6	25,481.6
03.05.01	Քրեակատարողական համակարգի պահպանում, այդ թվում	5,226.4	6,990.8	7,096.3	6,444.5	6,482.0
	- ընթացիկ ծախսեր	5,204.8	5,986.4	6,087.3	6,444.5	6,482.0
	- կապիտալ ծախսեր	21.6	1,004.4	1,009.0	0.0	0.0
	ՀՀ արդարադատության նախարարություն	5,226.4	6,990.8	7,096.3	6,444.5	6,482.0
03.01.01	Պետավտոհամարանիշների ձեռքբերում, այդ թվում	235.7	236.2	236.2	236.2	236.2
	- ընթացիկ ծախսեր	235.7	236.2	236.2	236.2	236.2
	- կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	235.7	236.2	236.2	236.2	236.2
03.02.01	Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում, այդ թվում	4,018.2	3,922.4	4,074.3	4,382.6	4,406.0
	- ընթացիկ ծախսեր	4,018.2	3,922.4	4,074.3	4,382.6	4,406.0
	- կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն	4,018.2	3,922.4	4,074.3	4,382.6	4,406.0
04.09.01	Պետական աջակցություն ՀՀ Միջուկային Երկույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին, այդ թվում	178.2	298.4	296.5	307.5	307.5
	- ընթացիկ ծախսեր	178.2	298.4	296.5	307.5	307.5

	- կապիտալ ծախսեր	0.0	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	178.2	298.4	296.5	307.5	307.5
03.01.02	Ազգային անվտանգության ապահովում, այդ թվում	9,735.8	10,608.4	11,221.4	11,724.8	11,724.8
	- ընթացիկ ծախսեր	9,380.6	10,286.6	10,950.6	11,554.0	11,554.0
	- կապիտալ ծախսեր	355.2	321.8	270.8	170.8	170.8
	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	9,735.8	10,608.4	11,221.4	11,724.8	11,724.8
03.01.02	Պետական պահպանության ապահովում, այդ թվում	1,758.2	1,791.6	1,701.6	1,813.0	1,813.0
	- ընթացիկ ծախսեր	1,635.5	1,686.6	1,686.6	1,798.0	1,798.0
	- կապիտալ ծախսեր	122.7	105.0	15.0	15.0	15.0
	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայություն	1,758.2	1,791.6	1,701.6	1,813.0	1,813.0

ԳԼՈՒԽ 19. 2012-2014ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ

19.1. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման հիմնադրույթները

Տնտեսությունում պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտության հիմնավորման կենտրոնական տարրն է հանդիսանում պետության միջամտությունը՝ պահանջող ոլորտների սահմանումը և դրանով պայմանավորված մասնավոր ու պետական ներդրումների միջև ընտրությունը, որը և հիմք է հանդիսանում պետական ներդրումային ծրագրերի ծավալների և գերակա ուղղությունների որոշման համար:

Հայաստանում տեղի ունեցած տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում պետության դերը և մասնակցության աստիճանը տնտեսության մեջ զգալիորեն կրճատվել են: Նշված կրճատումը պայմանավորում է նաև պետական ներդրումային քաղաքականության գերակայությունների և հիմնական ուղղությունների սահմանման և դրանց պետության փոփոխվող տնտեսական դերին համապատասխանեցման անհրաժեշտությունը: Դրա հիմքն է կազմում կառավարության հստակ պատկերացումը տնտեսական զարգացման ներկա փուլում պետության տնտեսական դերակատարության մասին, որը իր արտահայտությունն է գտնում պետության տնտեսական զարգացման ռազմավարական հիմնարար փաստաթղթերում:

Այդ առումով պետական երկարաժամկետ և միջնաժամկետ ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները, գերակայությունները և ծավալային սահմանափակումները պետք է որոշվեն ելնելով ծրագրման գործողությունների հետևյալ հաջորդականությունից՝

- տնտեսությունում պետության դերի վերաբերյալ հասարակությունում ձևավորված քաղաքական կոնսենսուսի բացահայտում և հստակեցում.

- այդ կոնսենսուսի հիման վրա ձևավորված պետական ներդրումային ծրագրերի հիմնական ուղղությունների, գերակա ոլորտների, ֆինանսավորման ցանկալի ծավալների (ներառյալ ներքին և փոխառու ու գրանտային բնույթի արտաքին ռեսուրսներից ֆինանսավորումը)՝ երկարաժամկետ բնույթի սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարական պետական փաստաթղթերում արտահայտում,

- երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի հիման վրա որոշակի պարբերությամբ ձևավորված և դրանց դրույթները ըստ ծավալների և ժամկետների մանրամասնող և հստակեցնող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակում:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում առաջին բյուջետային տարվա համար

նախատեսված պետական ծախսերի շրջանակը, ներառյալ ներդրումային ծրագրերը հիմք են հանդիսանում տարեկան պետական բյուջեների կազման համար, ներառյալ ներդրումային ծրագրերի մանրամասնումը, այսպիսով՝ ապահովելով պետական ծախսերի երկարաժամկետ գերակայությունների, միջնաժամկետ կանխատեսումների և կարճաժամկետ իրականացման սկզբունքների համակցումը, ինչպես նաև զարգացման ծրագրերի վրա հիմնված ծախսային քաղաքականության ապահովումը:

Ժամանակակից պետության դերը ներդրումային քաղաքականության ոլորտում պայմանավորված է և ուղղակի բխում է դրա ընդհանուր տնտեսական դերի գնահատականից: Բարեփոխումների ընթացքում հայկական հասարակության մեջ արդեն ձևավորվել է այն պատկերացումը, որ պետությունը կայուն սոցիալական և տնտեսական զարգացման ապահովման նպատակով պետք է իրականացնի գործառույթների երկու լայն շրջանակ՝

- սոցիալական և տնտեսական զարգացմանը նպաստող հանրային բարիքների մատակարարում,

- տնտեսական և սոցիալական արդարության ապահովում, որը նպատակաուղղված է բնակչության սոցիալապես անապահով և աղքատ խավերին հիմնարար բարիքներից օգտվելու հնարավորություններ ընձեռելուն՝ համապատասխան ֆինանսական օժանդակություն տրամադրելով և/կամ համապատասխան ապրանքների և ծառայությունների մատչելիությունն ապահովելով:

Ելնելով պետության մասնակցության վերը նշված հիմնական շրջանակներից, ներդրումային ծրագրերի միջոցով պետական մասնակցության նպատակահարմարության պարզաբանման առումով շրջանակներից յուրաքանչյուրի մասով անհրաժեշտ է պատասխաններ ձևավորել հետևյալ հարցադրումներին.

- Ո՞րն է պետության ներկայիս և նախատեսվող դերը նշված ոլորտում (կարգավորում, հասարակական ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքների պահպանում և զարգացում, ծառայությունների մատչելիության ապահովում, աղքատների և անապահով խավերի պաշտպանություն և այլն):

- Ի՞նչպես է իրագործվում պետության մասնակցությունը նշված ոլորտում և մասնակցության ինչպիսի՞ փոփոխություններ են նախատեսվում միջնաժամկետ հեռանկարում (հանրային ծառայությունների ուղղակի մատուցում պետական սեփականության հիման վրա և պետական հատվածի կողմից, ոչ պետական կառույցների հետ համագործակցելով, մատուցվող ծառայությունների դիմաց ոչ պետական կազմակերպությունների պետական ֆինանսավորմամբ, բնակչության որոշակի խավերի միջև ֆինանսական ռեսուրսների ուղղակի բախշմամբ և այլն): Պետության ոլորտային մասնակցության ձևերի և բնույթի փոփոխությունը պայմանավորված է սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթերով, որոնց դրույթները հետագայում մանրամասնվում

և հստակեցվում են պետական ծախսային միջնաժամկետ ծրագրերում:

- Անհրաժեշտ են արդյո՞ք պետական ներդրումային ծրագրերը և պետական սեփականությունը տվյալ ոլորտում պետության արդյունավետ մասնակցության համար: Այս հարցադրման պատասխանը պայմանավորված է սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարությամբ, որը սահմանում է այն ոլորտները, որտեղ պետական մասնակցության ձևերը ենթակա են փոփոխման և սահմանում է նշված փոփոխությունների իրականացման ռազմավարությունը:

Անհրաժեշտության մասին որոշումները զարգացման ռազմավարությամբ սահմանված ոլորտներում պետական ներդրումների և պետական սեփականության վերաբերյալ կարող են չհամընկնել, այսինքն՝ պետական ներդրումային ծրագրերը, ելնելով տվյալ ոլորտում միջամտության անհրաժեշտությունից, կարող են ուղղվել նաև ոչ պետական հատված:

Պետական մասնակցության և պետական ներդրումային ծրագրերի կարիք ունեցող ոլորտների բացահայտման և մակրոտնտեսական, ներառյալ բյուջետային շրջանակի երկարաժամկետ կանխատեսման հիման վրա, սահմանվում են պետական ներդրումային ծրագրերի գծով ծախսերի չափերը և միջոլորտային գերակայությունները:

Միջոլորտային գերակայությունների սահմանումից հետո պետական ներդրումային ծրագրերի մեջ ընդգրկված ամեն մի ոլորտի համար ընտրվում են պետական ներդրումային ծրագրերի իրականացման տարբերակները, որոնք ընդհանուր առմամբ կարող են ունենալ հետևյալ դրսևորումները՝

- Պետական ներդրումային ծրագրերը ուղղված են տվյալ ոլորտում պետական սեփականության պահպանմանը կամ զարգացմանը: Այդ դեպքում խնդիր է դրվում պահպանել կամ ավելացնել պետական սեփականության հաշվեկշռային արժեքը և/կամ հասնել այդ սեփականությունը բնութագրող որոշակի որակական ցուցանիշների նախատեսված արժեքների: Նմանօրինակ ծրագրերը նաև պետք է համապատասխան որոշումներ պարունակեն ներդրումների օբյեկտ հանդիսացող պետական սեփականության հետագա ճակատագրի, ինչպես նաև ներդրումային ծրագրերի արդյունքում առաջացած նոր պետական գույքի շահագործման համար անհրաժեշտ ընթացիկ և հետագա կապիտալ ծախսերի մասին:

- Նշված ծրագրերի հաջող իրականացման կարևոր պայման է հանդիսանում տվյալ ոլորտի պետական սեփականության գույքագրումը և պահպանման ու զարգացման ներոլորտային գերակայությունների սահմանումը, որը պետք է իրականացվի ելնելով տվյալ ոլորտում պետական սեփականության առկայության անհրաժեշտության մասին կայացրած որոշումներից, ինչպես նաև ներոլորտային պետական ներդրումների ընդհանուր ծավալային սահմանափակումներից, որոնք մանրամասնեցվում են պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրերում և տարեկան բյուջեներում: Պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների նկատմամբ, որոնք չեն ընդգրկվել ներոլորտային

գերակայությունների ցանկերի մեջ, պետք է կայացվեն համապատասխան որոշումներ (օրինակ՝ վերապրոֆիլավորում, մասնավորեցում, փոխանցում համայնքային սեփականության և այլն):

- Պետական ներդրումային ծրագրերը ուղղված են ոչ պետական սեփականություն պահպանմանը: Նշված ծրագրերի անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել կենսական կարևորություն ունեցող և կոլեկտիվ օգտագործման առարկա հանդիսացող ոչ պետական միջոցների պահպանմանը կամ վերականգնմանը, եթե կանխավ հայտնի է ներդրումային մասնավոր ռեսուրսների բացակայության կամ խիստ սահմանափակ լինելու մասին (ներհամայնքային ոռոգման ցանցեր, համայնքային նշանակության ճանապարհներ և այլն):

- Եթե գոյություն ունի այլընտրանք նոր պետական սեփականության ձեռք բերման կամ կառուցման ու եղած շուկայի հնարավորությունների օգտագործման միջև, ապա ընտրությունը պետք է կատարվի ելնելով տնտեսական արդյունավետության հայտանիշներից: Մասնավորապես, բնակարանային շինարարության ոլորտում այլընտրանք կարող է լինել բնակարանային շինարարությունը և բնակարանային հավաստագրերը, որոնց օգնությամբ պետությունը ֆինանսավորում է պետության հաշվին բնակարանային պայմանները բարելավման ենթակա անձանց: Պետական կառավարման բնագավառի ներդրումային ծրագրերի շրջանակներում այդպիսի այլընտրանք կարող են լինել շենքերի շինարարությունը կամ վերականգնումը և վարձակալությունը, ավտոտրանսպորտի ձեռքբերումը և պահպանումը և դրա վարձակալությունը և այլն:

- Նշված փուլի արդյունքում պետական ներդրումային ծրագրերի մեջ ընդգրկված ոլորտների համար պետք է որոշվեն պետական ներդրումային ծրագրերի հնարավոր տեսակները, նշելով այն ենթաօլորտները, որտեղ դրանք կարող են կիրառվել և համապատասխան ենթաօլորտային սահմանակումները:

19.2. 2008-2011 թթ հիմնական զարգացումները

2008-2011 թթ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը տատանվել են ՀՆԱ նկատմամբ 4-7%-ի սահմաններում: Միևնույն ժամանակ, բյուջեի ծախսերի ընդհանուր կառուցվածքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մասնաբաժինը տատանվել է 16-24 %-ի շրջանակներում:

Աղյուսակ 19.1 ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2008-2011թթ

	2008	2009	2010	2011
	Փաստացի			Բյուջե
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր				
մլն դրամ	181,689.7	221,408.8	191,750.9	162,112.2
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	22.4	23.8	20.1	16.2
%՝ ՀՆԱ նկատմամբ	5.1	7.1	5.5	4.3

	2008	2009	2010	2011
	Փաստացի			Բյուջե
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր				
մլն դրամ	137,526.0	87,890.7	69,310.6	47,760.9
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	75.7	39.7	36.1	29.5
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	17.0	9.5	7.3	4.8
%՝ ՀՆԱ նկատմամբ	3.9	2.8	2.0	1.3
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր				
մլն դրամ	44,163.7	133,518.1	122,440.3	114,351.3
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	24.3	60.3	63.9	70.5
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	5.4	14.4	12.8	11.4
%՝ ՀՆԱ նկատմամբ	1.2	4.3	3.5	3.0

2009-2010 թթ-ի ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերակցության ցուցանիշները գերազանցում են 2008թ-ի համապատասխան ցուցանիշը: Սակայն ֆինանսավորման աղբյուրների առումով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքում 2008թ-ին գերակշռել են ներքին աղբյուրների հաշվին իրականացված ծրագրերի գծով ծախսերը՝ կազմելով 75.7%, իսկ 2009-2011 թթ-ին այդ ցուցանիշը կազմել են համապատասխանաբար 39.7%, 36.1 % և 29.5%: Այս ցուցանիշի նվազումը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ և այդ ազդեցությունը մեղմելու ՀՀ կառավարության հակաճգնաժամային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմամբ, ինչպես նաև ծախսերի փոխլրացնելիության ապահովման նպատակով արտաքին աղբյուրների ներգրավմամբ:

Ոլորտների միջև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի բաշխման և ծրագրերի առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ՀՀ կառավարությունը առաջնորդվել է պետական քաղաքականության գերակայություններով՝ դրանք արտացոլելով պետական ծախսերի, մասնավորապես ներդրումային ծրագրերում:

Աղյուսակ 19.2 ՀՀ 2008-2011 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը, ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, մլն դրամ

	2008	2009	2010	2011
	Փաստացի			Բյուջե
Տնտեսական հարաբերություններ, բնակարանային շինարարություն, կոմունալ ծառայություններ և շրջակա միջավայրի պաշտպանություն	76,024.8	148,774.2	122,563.5	110,845.7
Սոցիալական ծառայություններ	37,962.3	25,059.1	15,334.9	17,003.5
Այլ ծառայություններ	67,702.6	47,575.5	53,852.3	34,263.1
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	181,689.7	221,408.8	191,750.7	162,112.3

Աղյուսակ 19.3 ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքը՝ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի 2008 - 2011թթ

	2008	2009	2010	2011
	փաստացի			բյուջե
	տոկոսը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ			
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	100.0	100.0	100.0	100.0
Տնտեսական հարաբերություններ, բնակարանային շինարարություն, կոմունալ ծառայություններ և շրջակա միջավայրի պաշտպանություն	41.8	67.2	63.9	68.4
Սոցիալական ծառայություններ	20.9	11.3	8.0	10.5
Այլ ծառայություններ	37.3	21.5	28.1	21.1

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից գործառական դասակարգման կառուցվածքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի զգալի մասն ուղղված է տնտեսական հարաբերությունների, բնակարանային շինարարության, կոմունալ և շրջակա միջավայրի պաշտպանության ծառայություններին գծով ծրագրերի իրականացմանը, որոնց հանրագումարը ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ 2009-2011 թթ-ին կազմում են համապատասխանաբար 67.2%, 63.9% և 68.4%՝ 2008 թվականի 41.8%-ի դիմաց :

19.3. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման փուլում առանցքային դեր է վերագրվել ծախսերի անհրաժեշտությունը պայմանավորող գործոնների տարանջատմանը, որոնք, ըստ էության, ազդել են ինչպես առանձին ծրագրերի՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի միջնաժամկետ ծրագրում ընդգրկելու վերաբերյալ որոշումների կայացման, այնպես էլ, որոշ դեպքերում, միջծրագրային առաջնահերթությունների սահմանման պարագայում:

Ծրագիրը մշակելիս ՀՀ կառավարությունը առանձին ուղղություններով ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում տարանջատել է հետևյալ գործոնները, որոնք պայմանավորում են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը՝

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնց չկատարումը հանգեցրել է (և/կամ հանգեցնելու է) հետաձգված ծախսերի կուտակմանը, ինչն, իր հերթին, ավելացնում է ընթացիկ ծախսերի վրա ճնշումը.
- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է

համապատասխան ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճով.

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնց նպատակը մատուցվող ծառայությունների որակի բարելավումն է.

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այն ոլորտներում, որտեղ մասնավոր ներդրումների ծավալներն անբավարար են (թեև այդ ոլորտների ծառայություններին ավելի շատ բնորոշ են 'մասնավոր' բարիքների հատկություններ).

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնք կրում են միանգամյա (ոչ պարբերական) բնույթ և պայմանավորված են պետության կողմից ստանձնած որոշակի պարտավորություններով (օրինակ, աղետի գոտում բնակարանային շինարարություն):

19.4 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները

2012-2014 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրելիս ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներից բխող ընդհանուր սահմանափակումները, առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- կառավարության քաղաքականության նպատակներին և գերակայություններին համապատասխանություն,

- հանրային ակտիվների չվերականգնման պարագայում՝ մատուցվող ծառայությունների ծավալների (և/կամ որակի) անկման վտանգի հաղթահարում,

- անվտանգության, ռազմավարական նշանակության և տարածաշրջանային մրցունակությանը նպաստող խդիրների լուծում,

- մասնավոր հատվածի զարգացմանը (ներդրումների ներգրավմանը) նպաստում և տնտեսական աճի խթանում,

- տարածքային կտրվածքով անհամամասնությունների մեղմում և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացում,

- պետության կողմից ստանձնած որոշակի (ներդրումային բնույթի) պարտավորությունների կատարում,

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի առանձին ծրագրերի նպատակների և արդյունքների որոշակիություն, հստակություն և հիմնավորվածություն:

19.5. 2012-2014 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

2012–2014 թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կանխատեսվում է 575.3 մլրդ դրամի չափով, որից 2012թ-ին՝ 179.4 մլրդ դրամ, 2013թ-ին՝ 201.5 մլրդ դրամ և 2014թ-ին՝ 194.4 մլրդ դրամ: 2012–2014 թթ ՄԺԾԾ-ով ծրագրված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ՀՆԱ-ի նկատմամբ միջին մակարդակով կազմելու են 4.2 տոկոս:

Աղյուսակ 19.4 ՀՀ 2010-2014 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների

	2010թ Փաստացի	2011թ Բյուջե	2012թ ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ	2013թ	2014թ	2012- 2014թթ
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր						
մլրդ դրամ	191.8	162.1	179.4	201.5	194.4	575.3
% պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	20.1	16.2	17.5	18.5	16.2	17.4
% ՀՆԱ նկատմամբ	5.5	4.3	4.3	4.4	3.9	4.2
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր						
մլրդ դրամ	69.3	47.8	41.7	44.6	47.2	133.5
% ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	36.1	29.5	23.3	22.1	24.3	22.2
% պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	7.3	4.8	4.1	4.1	3.9	4.0
% ՀՆԱ նկատմամբ	2.0	1.3	1.0	1.0	1.0	1.0
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր						
մլրդ դրամ	122.4	114.4	137.6	157.0	147.2	441.8
% ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	63.9	70.5	76.7	77.9	75.7	76.8
% պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	12.8	11.4	13.4	14.4	12.3	13.4
% ՀՆԱ նկատմամբ	3.5	3.0	3.3	3.4	3.0	3.2

Բերված ցուցանիշները վկայում են, որ 2012-2014թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի գերակշիռ մասը կազմելու է արտաքին աղբյուրների հաշվին իրականացվելիք ծրագրերը, որը ծրագրային ժամանակահատվածում տարեկան կտրվածքով կկազմի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի շուրջ 76.8 տոկոսը, որից 2012թ-ին 76.7 տոկոս, 2013թ-ին 77.9 տոկոս, 2014թ-ին 75.7 տոկոս:

Ծրագրելով նման մակարդակի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր արտաքին աղբյուրների ներգրավմամբ կառավարությունը նախ և առաջ հաշվի է առել այն հանգամանքը, որ մի շարք ոլորտներում մասնավոր հատվածի ներգրավումը դեռևս ցածր է և պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը պետք է հանդիսանան մասնավոր ներդրումներին փոխլրացնող ու խթան-

նող, որի նպատակն է ոչ միայն հաղթահարել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ նվազագույնի հասցնելով վերջինիս բացասական հետևանքները Հայաստանի տնտեսության վրա, այլ նաև ստեղծել հետագայում կայուն զարգացման և որակապես նոր տնտեսության ձևավորման բավարար հիմքեր:

Եռամյա կտրվածքով ոլորտային բաշխում ունեցող նախատեսված հատկացումներից՝ ըստ ծառայությունների խոշորացված խմբերի 58.8 տոկոսն ուղղվելու է տնտեսական հարաբերությունների, բնակարանային շինարարության, կոմունալ և շրջակա միջավայրի պաշտպանության ծառայություններին, որոնց գծով ծախսերի այսպիսի բարձր մակարդակը պայմանավորված է տրանսպորտի, էներգետիկայի և ջրամատակարարման ոլորտներում իրականացվելիք ծախսերով, իսկ 11.0 տոկոսն ուղղվելու է սոցիալական ծառայություններին, որի մեծ մասը կազմելու է առողջապահության և կրթության ոլորտներում իրականացվելիք ծախսերը:

Աղյուսակ 19.5 ՀՀ 2010-2014 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի

	2010	2011	2012	2013	2014	2012-2014
	Փաստացի	Բյուջե	ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ*			
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%
Տնտեսական հարաբերություններ, բնակարանային շինարարություն, կոմունալ ծառայություններ և շրջակա միջավայրի պաշտպանություն	63.9%	68.4%	57.4%	63.7%	54.5%	58.8%
Սոցիալական ծառայություններ	8.0%	10.5%	15.3%	8.3%	8.5%	11.0%
Այլ ծառայություններ	28.1%	21.1%	27.3%	28.0%	37.0%	30.2%

Միևնույն ժամանակ, կառավարությունը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի եռամյա ծրագրում առանձնացրել է չբաշխված (ըստ ոլորտների չբաշխված) բաղադրիչ: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Որոշ ոլորտներում պահանջվող ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծավալների ճշգրիտ գնահատականը պահանջում է լրացուցիչ ուսումնասիրություններ,
- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի չբաշխված բաղադրիչը որոշակիորեն մեծացնում է հարկաբյուջետային քաղաքականության դիսկրեցիոնության աստիճանը՝ հնարավորություն տալով ավելի ադեկվատ արձագանքել մակրոտնտեսական զարգացումներին:

ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սույնով ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, դրանց արդյունքում պետական պարտքի բեռի փոփոխման, ռիսկերի կառավարման ռազմավարությունը:

Ներածություն

Պարտքի խելամիտ կառավարումը կարևոր դեր է խաղում պետական հատվածի ֆինանսների կառավարման գործընթացում: Սա ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերում փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների համար, երբ ներքին տնտեսությունն ունի ռեսուրսների սահմանափակվածություն, իսկ տնտեսական աճին նպաստող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու համար կառավարությունը պարտադրված է պարտք ներգրավել¹⁹: Հետևաբար նման իրավիճակում կառավարությունը պետք է վստահ լինի, որ փոխառության քաղաքականությունը ապագայում չի բերի անկայուն դիրքի, չի մեծացնի ֆինանսավորման ծախսերը մինչև անընդունելի և ծայրահեղ մակարդակի կամ էլ երկիրը չի դարձնի խոցելի արտաքին աշխարհի զարգացումներից: Սա պահանջում է պարտքի կառավարման գործուն համակարգի կիրառում, որը անբարենպաստ պայմաններում կարող է նվազեցնել բացասական ազդեցությունները և մեղմել հավանական ռիսկերը:

Հստակ ռազմավարությունը կարող է օգնել նվազեցնել չափից ավելի փոխառությունների բեռը՝ (դրանց առնչվող ծախսերն ու ռիսկերը) հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին ընտրել ծախսերի և ռիսկերի մի շարք տարբերակներից օպտիմալը: Իսկ նշված օպտիմալ տարբերակի ընտրության հիմքում ընկած է կառավարության պարտքի կայունության գաղափարախոսությունը:

Պարտքի տնտեսական կայունությունը՝ վճարունակության և իրացվելիության հանրագումարն է կամ երկրի կարողությունը առանց պարտքի վերաձևակերպման, ժամկետների խախտման և տնտեսական աճը վտանգելու ամբողջությամբ կատարել իր ընթացիկ և ապագա պարտքային պարտավորությունները:

¹⁹ Այսպես, փորձը ցույց է տալիս, որ ռեսուրսներով հարուստ երկրները, օրինակ նավթ արդյունահանող երկրները՝ Ադրբեջան, Ղազախստան, Քուվեյթ և այլն, հնարավորություն ունեն բնական ռեսուրսների արտահանման հաշվին միջոցներ ներգրավել արտաքին աշխարհից և դրանց հաշվին իրականացնել պետական տնտեսության ենթակառուցվածքների զարգացմանն ջոհգցֆցհ (որն ազդում է տնտեսության ընդհանուր արտադրողականության վրա) ուղղված ծախսեր և հարկաբյուջետային քաղաքականություն:

Պետական պարտքի ծավալների և պարտք/ՀՆԱ հարաբերակցության աճի հիմնական պատճառներից են տարիների ընթացքում ձևավորվող բյուջեի բարձր պակասուրդները, որոնք կարող են հարկաբյուջետային հատվածում ստեղծել անկայունություն: Պարտքի կառավարման խելամիտ ռազմավարությունը հնարավորություն է տալիս ինչպես կանխարգելել, այնպես էլ մեղմել պետական պարտքի հետ կապված ռիսկերը: Այլ կերպ ասած պարտքի կառավարման ռազմավարությամբ նախանշվում են այն սկզբունքները, հենանիշերը և կառավարության կողմից իրականացվելիք քայլերի ուղղությունները, որոնց ներքո կառավարությունը չի վտանգի հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը՝ այսպիսով ապահովելով մակրոտնտեսական կայուն միջավայր:

Ֆինանսատնտեսական ճգնաժամին նախորդող տարիների ընթացքում Հայաստանում արձանագրվեց աննախադեպ բարձր տնտեսական աճ: Նշված զարգացումներին զուգահեռ Հայաստանի ներգրաված արտաքին պարտքի մակարդակը գնալով նվազում էր և արդյունքում Հայաստանի ընդհանուր պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 1999թ-ի 49.3 տոկոսից նվազեց մինչև 16.4 տոկոս 2008թ-ին, իսկ պարտքի կառուցվածքում գերակշռում էին արտոնյալ վարկերը:

Սակայն ճգնաժամային և հետճգնաժամային տարիների ընթացքում արտաքին պետական պարտքը կտրուկ աճեց՝ 2009 և 2010 թվականներին համապատասխանաբար կազմելով ՀՆԱ-ի 35.7 և 34.2 տոկոսը, այսինքն վերջին տարիներին պարտքն աճեց ավելի արագ, քան երկրում ստեղծված ավելացված արժեքը: Մյուս կողմից, առանց արտաքին պետական պարտքի մեծացման, դժվար կլիներ վերականգնել և խթանել տնտեսական աճը: Այս հանգամանքները հաշվի առնելով, կառավարությունը հատուկ կարևորություն տվեց պարտքի կայունության խնդիրների վերհանմանը և դրանց վերաբերյալ լուծումների առաջադրմանը, որոնց արդյունավետ իրականացումը չի հանգեցնի հարկաբյուջետային, արտաքին կամ ընդհանրապես մակրոմիջավայրի անկայունության: Նշված գերակա խնդրի լուծման նպատակով նախ 2010 թվականին ներդրվեց և պարբերական բնույթ ստացավ պարտքի կայունության վերլուծությունը, որը հնարավորություն տվեց գնահատել միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում պարտքի կայուն մակարդակը և դրա վրա ազդող մակրոտնտեսական գործոնները: Նշված վերլուծությունը առավել կենտրոնացված է միջնաժամկետ գնահատականներին, իսկ այդ ուղղությամբ կառավարության իրականացվելիք քաղաքականության հստակեցման համար արդեն 2011 թվականին «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մշակվեց և հաստատվեց ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը՝ որպես ՄԺԾՓ փաստաթղթի անբաժանելի մաս:

Պարտքի կայունության վերլուծության արդյունքները հիմնականում փաստում են, որ ՄԺԾՓ-ի հիմքում դրված մակրոտնտեսական կանխատեսումների և հարկաբյուջետային քաղաքականության նախատեսված վարքագծի ներքո, չեն լինի պարտքի կայունության լուրջ վտանգներ և պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները կգտնվեն կառավարելիության շրջանակներում:

Սակայն, պարտքի կայունության վերլուծության շրջանակներում կատարված ստրես-թեստերը բացահայտում են նաև, որ արտաքին պարտքի կայունությունը առավել զգայուն է փոխարժեքի կտրուկ արժեզրկման նկատմամբ, իսկ ֆիսկալ կայունության մասով՝ ցածր տնտեսական աճի նկատմամբ: Հետևաբար, ՄԺԾԾ-ի մակրոտնտեսական շրջանակի հիմքում պետք է դրվի այնպիսի պարտքի կառավարման ռազմավարություն, որը չի սահմանափակի տնտեսական աճը, վերջինս էլ կնվազեցնի փոխարժեքի արժեզրկման ռիսկերը:

2012-2014թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրի հիմնական նպատակադրումները սահմանված են վերը շարադրված հանգամանքների հաշվառմամբ:

ՀՀ պետական պարտքի կառավարման ոլորտում 2009-2011թթ. արձանագրվել են հետևյալ զարգացումները.

- Հստակեցվել է պարտքի կառավարման ստորաբաժանման գործառույթները և ընթացքի մեջ է միջազգային լավագույն փորձին համապատասխան պարտքի կառավարմամբ զբաղվող առաջնային, միջին և հետին գրասենյակների գործառույթներով ստորաբաժանման նոր կառուցվածքի ստեղծումը:
- Ձեռք է բերվել պարտքի գրանցման և հաշվառման DMFAS 6 էլեկտրոնային համակարգը, որի ներդրման աշխատանքներն ընթացքի մեջ են: Համակարգի ներդրումը հնարավորություն կտա առավել բարձր արդյունավետությամբ վարել պետական պարտքի գրանցման և հաշվառման միասնական բազան: Համակարգն օժտված է վերլուծական կարողություններով, ինչն էապես կբարելավի կառավարության կողմից իրականացվող պարտքի կայունության վերլուծությունների որակը: Հետագայում այն կթղթակցի պետական ֆինանսների կառավարման էլեկտրոնային այլ ծրագրերի հետ:
- Պետական պարտատոմսերի շուկայի թափանցիկության և կանխատեսելիության ամրապնդման նպատակով հստակեցվել և հրապարակվել է պետական պարտատոմսերի թողարկումների հիմնական սկզբունքները և թողարկումների տարեկան ծրագիրը: Պետական պարտատոմսերի թողարկումների հիմնական սկզբունքները պարունակում են տեղեկատվություն թողարկվող պարտատոմսերի ժամկետայնության, թողարկման օրերի, տեղաբաշխման մոտավոր ծավալների վերաբերյալ և այլ պայմաններ:
- 2011թ-ից թողարկվում են նաև 7 տարի մարման ժամկետ ունեցող ուղենշային պարտատոմսեր, որոնց թողարկումը նպաստելու է եկամտաբերության կորի ճիշտ կառուցմանը:
- Ապահովագրական բարեփոխումներով, հատկապես ԱՊՊԱ-ի ներդրմամբ պայմանավորված արձանագրվել է պետական միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի պահանջարկի էական աճ 2010թ չորրորդ եռամսյակում,

- Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կորդինացման առումով պահպանվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի պայմանավորվածությունը (վերջինս ձեռնպահ է մնում պետական պարտատոմսերի թողարկումներից և ՀՀ ֆինանսների նախարարությունը պատրաստակամություն է հայտնում աջակցելու դրամավարկային քաղաքականության իրականացմանը՝ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով պետական պարտատոմսեր թողարկելով) և ՀՀ ֆինանսների նախարարությունը թողարկումների ծրագիրը հրապարակելուց առաջ այն քննարկել է ՀՀ կենտրոնական բանկի հետ:
- ՀՀ կառավարության ջանքերով շարունակվում է արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությունը և Արժույթի Միջազգային Հիմնադրամի առջև Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել նոր ստացված վարկային միջոցների արտոնյալության միջին մակարդակը 30%-ի չափով պահպանելու վերաբերյալ (մինչև 2011թ. դեկտեմբեր ամիսը): 2010թ. ընթացքում դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ստացված արտաքին վարկերի կառուցվածքում առևտրային պայմաններով ներգրավված վարկերի տեսակարար կշիռը կազմել է մոտ 55%՝ 2009թ. 65%-ի համեմատ:
- Ելնելով Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 202.4 մլն SDR վարկի մարման ժամկետի կարճատև բնույթից (վարկը ամբողջությամբ ենթակա է մարման 2012-2015թթ.), ՀՀ կառավարության ջանքերով ԱՄՀ-ի գործադիր խորհուրդը 2010թ. վերանայել է նախորդ ծրագիրը և Հայաստանի համար հաստատել է երկու նոր եռամյա ծրագրեր՝ ավելի նպաստավոր պայմաններով:
- 2010թ. ներքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին պետբյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվել է 28.6 մլրդ դրամով (պետական պարտատոմսերի հաշվին պետբյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 30.2 մլրդ դրամ), արտաքին աղբյուրներից ներգրավված փոխառու միջոցների հաշվին՝ 98.1 մլրդ դրամով (տես աղյուսակ 4): Նախորդ տարիների համեմատությամբ դեռևս բարձր են պետական պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները (տես աղյուսակ 5,6,7,8), մասնավորապես պետական պարտք/ՆԱ ցուցանիշը 2010թ. կազմել է 39.4%: Պարտքային բեռի նման մակարդակը գտնվում է կառավարելիության շրջանակներում և չի կարող խաթարել երկրի պարտքային կայունությունը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակադրումները 2012-2014թթ.

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության մշակման սկզբնակետը 2008թ. ընդունված «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է, որը

կանոնակարգում է պետական պարտքին առնչվող փոխհարաբերությունները և նպատակ ունի ապահովել պետական պարտքի կառավարման արդյունավետ և հրապարակային կազմակերպումը:

Շարունակվում է պետական պարտքի կառավարման բարեփոխումների համակարգային ծրագրի իրականացումը և պարտքի արդյունավետ կառավարման ներդրման նպատակով ընթացքի մեջ է ՀՀ ֆինանսների նախարարի 03.03.2010թ. թիվ 150-Ա հրամանով հաստատված պետական պարտքի կառավարման բարեփոխումների գործողությունների ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

1. պարտքի գրանցման և հաշվառման համակարգի ներդրում,
2. պարտքի կառավարման ստորաբաժանման ներքին կառուցվածքի բարելավում և հզորացում,
3. պետական պարտքի մասին տարեկան և կիսամյակային հաշվետվությունների բարելավում,
4. առաջնային շուկայի զարգացմանն ուղղված քայլերի իրականացում,
5. պարտքի միջնաժամկետ ռազմավարության մշակում:

2012-2014թթ-ին ՀՀ կառավարությունը պետական պարտքի կառավարման գործընթացում շարունակելու է հետևել պարտքի թափանցիկության, գործողությունների հրապարակայնության, ներդրողների վստահության ամրապնդման և հաշվետվողականության սկզբունքներին:

- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից մեկը թափանցիկության ապահովումն է, ուստի կառավարությունը ոչ միայն պարբերաբար կներկայացնի հաշվետվություններ պարտքի վերաբերյալ կարևոր տեղեկատվությամբ, այլ նաև կթողարկի ամսական տեղեկագրեր և բաց ու հրապարակային կլինի ներդրողների հետ աշխատանքներում:
- Կառավարությունը կշարունակի իր նկատմամբ վստահության ամրապնդման քայլերը, որը կհանգեցնի պոտենցիալ ներդրողների բազայի ընդլայնմանը՝ հետևաբար դրական ազդեցություն կունենա պարտքը բնութագրող ցուցանիշների բարելավման վրա և կնպաստի ներքին պարտքի շուկայի կայունությանը (կթուլացնի արտաքին և ներքին շուկերի ազդեցությունը պարտքի շուկայի վրա):
- Երկարաժամկետ հատվածում պարտքի կառավարման նպատակներից է պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշռի մեծացումը (տես աղյուսակ 4), քանի որ վերջինս նվազեցնում է անվճարունակության (դեֆոլտի) հավանականությունը, փոխարժեքի հետ կապված ռիսկերը, հնարավորություն է ընձեռում ներգրավել և արդյունավետ օգտագործել համախառն ազգային խնայողությունները, հիմքեր է ստեղծում ֆինանսական շուկայում նոր գործիքների կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար:

- 2012-14թթ., հաշվի առնելով ֆինանսական շուկայի զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության ծրագրերը, կավելացվի 3-20 տարի մարման ժամկետայնությամբ ուղենշային պարտատոմսերի շրջանառության ծավալները: Այս ժամանակահատվածում շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախատեսվում է ավելացնել 90 մլրդ դրամով, ընդ որում՝ կարճաժամկետ պարտատոմսերը՝ 17 մլրդ դրամով, միջին ժամկետ պարտատոմսերը՝ 42 մլրդ. դրամով, երկարաժամկետ պարտատոմսերը՝ 31 մլրդ. դրամով: Մինևույն ժամանակ դրամավարկային քաղաքականության հետ պարտքի կառավարման քաղաքականության կորորդինացման շրջանակներում կարճաժամկետ հատվածում կլինեն 3-12 շաբաթ մարման ժամկետով պարտատոմսերի թողարկումներ, որոնք չեն ավելացնի պետական պարտքի սպասարկման բեռը, քանի որ դրանց տեղաբաշխումից ստացված հասույթը նույն տոկոսադրույքով կավանդադրվի ՀՀ կենտրոնական բանկում՝ դրանց մարումն ապահովելու նպատակով:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ ելնելով ինչպես ուղենշային պարտատոմսերի տեղաբաշխման տրամաբանությունից, այնպես էլ երկրորդային շուկայի զարգացման նկատառումներից:
- Կարևորելով պետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ քայլեր կձեռնարկվեն խնայողական պարտատոմսերի ներդրողների շրջանակը մեծացնելու ուղղությամբ: Այս առումով, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդմանը զուգահեռ, կակտիվացվեն գովազդային աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ կներդրվի պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի էլեկտրոնային համակարգ:
- Կառավարությունը սերտորեն կհամագործակցի ՀՀ կենտրոնական բանկի ու պարտատոմսերի շուկայի մասնակիցների հետ պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաները զարգացնելու նպատակով: Այս առումով առաջնային նշանակություն կստանան կենսաթոշակային բարեփոխումների նախատեսված ժամկետներում իրականացումն ու մեկնարկած ապահովագրական բարեփոխումների հետագա զարգացումը, որը կմեծացնի ինչպես գանձապետական պարտատոմսերում ներդրողների շրջանակը՝ թուլացնելով բանկային համակարգից կախվածությունը, այնպես էլ կբերի թողարկվող պարտատոմսերի ժամկետայնության աճի, որը ներքին պարտքի ծավալների մեծացման կարևոր նախադրյալ է և կնպաստի տոկոսադրույքների նվազմանը (տես աղյուսակ 8):
- Առավելագույն ուշադրություն կդարձվի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կորորդինացման հարցերին՝ այդպիսով փորձելով նվազեցնել երկու քաղաքա-

կանությունների նպատակներին հասնելու ծախսերը և միաժամանակ ավելի հասկանալի դարձնելով այդ քաղաքականությունները պոտենցիալ ներդրողների համար:

- Համագործակցությունը արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ կշարունակվի և կխորացվի: Հաշվի առնելով Արժույթի Միջազգային Հիմնադրամի առջև Հայաստանի Հանրապետության պարտավորությունը նոր ստացված վարկային միջոցների արտոնյալության միջին մակարդակը պահպանելու վերաբերյալ, նախապատվությունը կտրվի արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:
- Արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներ ներգրավելիս հիմնականում նախապատվություն կտրվի ազատ փոխարկելի արժույթով և ֆիքսված տոկոսադրույքով փոխառու միջոցներին:
- Հայաստանի համար ավելի նպաստավոր պայմաններով երկու նոր եռամյա ծրագրերի հաստատման և նախորդ ծրագրի (Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված 202.4 մլն վարկը ամբողջությամբ ենթակա էր մարման 2012-2015թթ.) վերանայման արդյունքում էականորեն կթեթևանա ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման բեռը, քանի որ նախատեսված 202.4 մլն SDR գումարի շուրջ 37%-ը կտրամադրվի անտոկոս և մարման ավելի երկար ժամկետով:
- Կառավարության արտաքին պարտքի զգալի հատվածը կազմում են ենթակառուցվածքների զարգացման (մասնավորապես էներգետիկ համակարգ, ջրամատակարարում) նպատակով ներգրավված վարկերը, որոնք ենթավարկավորվել են տնտեսվարող սուբյեկտներին և այդ վարկերի սպասարկման բեռը չի ծանրացնում պետական բյուջեի ծախսերը, քանի որ իրականում այն կրում են տնտեսվարող սուբյեկտները: 2010թ. տարեվերջի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտքի շուրջ մեկ երրորդը կազմել են տնտեսությանը ենթավարկավորած միջոցները:
- Պարտքի եռամյա ռազմավարության արդյունքում պետական պարտք /ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված սահմանային շեմը:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով և սույն ռազմավարությամբ սահմանված պետական պարտքի կառավարման նպատակադրումներին հասնելու համար կիրականացվեն մի շարք միջոցառումներ, որոնցից առավել կարևորներն են.

ա) ռիսկերի գնահատման համակարգի ներդրում.

Նպատակը՝ պարտքին բնորոշ ռիսկերի ճանաչումն ու գնահատումն է, ինչպես նաև անձնակազմի մոտ ռիսկերի կառավարման գիտելիքների և պրակտիկ կարողությունների զարգացումը:

բ) կառավարության պարտքի կառավարման մեջ ընդգրկված անձանց մասնագիտական ունակությունների բարելավում

Նպատակը՝ անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումն է: Պետական պարտքի կառավարման բարեփոխումների գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մարդկային գործոնով: Անհրաժեշտ է կազմակերպել հատուկ վերապատրաստման դասընթացներ, որի արդյունքում պարտքի կառավարման ստորաբաժանման մասնագետները ձեռք կբերեն կոնկրետ հմտություններ կոնկրետ գործառույթներ իրականացնելու համար: Կմշակվի և կներդրվի մասնագիտական կարողությունների գնահատման թեստավորման համակարգ, որի հիման վրա կկատարվի աշխատակիցների մասնագիտական կարողությունների գնահատումը: Ներդրվող մասնագիտական կարողությունների գնահատման թեստերը կներառվեն քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման առաջադրանքներում:

գ) դրամական հոսքերի կառավարման գործընթացի բարելավում

Նպատակը՝ բարձրացնել դրամական հոսքերի կառավարման արդյունավետությունը: Վերջինս ենթադրում է բարձրացնել ինչպես հոսքերի ծրագրավորման որակը, այնպես էլ ընդլայնել հոսքերի կառավարման գործիքակազմը:

դ) ներդրողների դիվերսիֆիկացման հնարավորությունների ուսումնասիրում

Նպատակը՝ պարտքի ներգրավման հնարավոր այլ աղբյուրների ստեղծում: Ներքին աղբյուրներից փոխառու միջոցների ներգրավման հիմնական աղբյուր կշարունակվեն դիտարկել պետական պարտատոմսերը: Ֆինանսական շուկայի ներկայումս իրականացվող բարեփոխումների հաջող ընթացքը կնպաստի պետական պարտատոմսերի շուկայի զարգացմանն ու ընդլայնմանը, որն էլ իր հերթին կավելացնի կառավարության ֆինանսական ճկունությունը, թույլ կտա պետական պարտքի ընդհանուր ծավալում զգալիորեն մեծացնել ներքին աղբյուրներից ներգրավված միջոցների տեսակարար կշիռը, դիվերսիֆիկացնել պետական պարտատոմսերի կառուցվածքում ներդրողների կառուցվածքը՝ հիմնական շեշտը դնելով կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական ընկերությունների վրա (ներկայումս հիմնական ներդրող է հանդիսանում բանկային հատվածը):

Պետական պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը լուծելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը:

ՀՀ պետական պարտքի էական աճը ստիպում են կառավարությանը խստացնել ռիսկերի կառավարման թույլատրելի սահմանային ցուցանիշները: Այս առումով առաջնային նշանակություն են ստանում հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական

ռիսկերի կառավարումը: Արտաքին պարտքի գծով կարևորում ենք հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և փոխարժեքի, իսկ ներքին պարտքի գծով՝ վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերը:

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է միջազգային և ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներով և առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի սպասարկման գծով վճարման ենթակա գումարների ծավալներով:


Աղյուսակ 1. ՀՀ կառավարության ընթացիկ պարտքը 2009-2014թթ. (մլրդ դրամ)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. ուղենշ.	2013թ. ուղենշ.	2014թ. ուղենշ.
ՀՀ կառավարության ընթացիկ պարտք	85.9	120.7	122.0	108.9	157.4	139.5
որից՝						
տոկոսավճար	16.3	30.4	42.6	46.7	47.8	50.7
մարում	69.6	90.3	79.4	62.2	109.5	88.8
ՀՀ կառավարության ընթացիկ արտաքին պարտք*	13.8	24.3	28.4	46.8	84.6	72.7
որից՝						
տոկոսավճար	7.5	14.6	18.2	20.4	20.3	20.0
մարում	6.3	9.7	10.2	26.4	64.2	52.7
ՀՀ կառավարության ընթացիկ ներքին պարտք	72.1	96.4	93.6	62.1	72.8	66.8
որից՝						
տոկոսավճար	8.8	15.8	24.4	26.3	27.5	30.7
մարում	63.3	80.6	69.2	35.8	45.3	36.1

* 2012-14թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով վճարումների փոխարկումը կատարվել է հիմք ընդունելով 01.04.2011թ. դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները, աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Վերաֆինանսավորման ռիսկի գնահատման տեսանկյունից կարևոր է նաև կառավարության պարտքում ընթացիկ պարտքի տեսակարար կշիռը:


Գծապատկեր 1. Կառավարության ընթացիկ պարտքի և կառավարության պարտքի հարաբերակցությունը 2009-2014թթ.



Գծապատկեր 1-ից հստակ տեսանելի է, որ ներքին պարտքի վերաֆինանսավորման ռիսկերն ավելի մեծ են, ինչը պայմանավորված է կարճաժամկետ պարտքի ավելի մեծ տեսակարար կշռով: Այստեղ նպատակ է դրված միջնաժամկետ հատվածում նվազեցնել կառավարության ներքին պարտքում ընթացիկ ներքին պարտքի տեսակարար կշիռը: Մյուս կողմից, սակայն, կառավարության արտաքին պարտքի հետ համեմատած, ներքին պարտքի ծավալը զգալիորեն փոքր է: Ինչ վերաբերում է կառավարության ընթացիկ արտաքին պարտք/արտաքին պարտք ցուցանիշին, ապա միջազգային չափանիշներով այն գտնվում է բարենպաստ միջակայքում:

2010թ. տարեվերջի դրությամբ ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումները սփռված են մինչև 2049թ., իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2028թ.:

Գծապատկեր 2. 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձևավորված Կառավարության պարտքի մարման ժամանակացույցը



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, առաջիկա տարիներին << կառավարության արտաքին պարտքի գծով մարումներն աճում են, որը պայմանավորված է գործող վարկերից շատերի արտոնյալ ժամկետի ավարտով, վարկային պայմանագրերի համաձայն տոկոսային արտահայտությամբ մարման ենթակա գումարների աճով:

Վերաֆինանսավորման ռիսկը բնութագրող ցուցանիշներից են նաև մարման միջին ժամկետի և մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշռի ցուցանիշները: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձևավորված Կառավարության պարտքի համար մարման միջին ժամկետը կազմել է 11.4 տարի, որից ներքին պարտքի համար այն կազմել է 3.9 տարի, իսկ արտաքին պարտքի համար՝ 12.6 տարի, ինչը մատնանշում է ներքին պարտքի ռիսկայնության ավելի բարձր աստիճանը արտաքինի համեմատ: Մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը Կառավարության պարտքի համար կազմել է 5.87%, որի 0.82 տոկոսային կետը բաժին է ընկնում արտաքին պարտքին, իսկ 5.05 տոկոսային կետը՝ ներքինին: Եթե այս ցուցանիշը հաշվարկում ենք արտաքին և ներքին պարտքերի համար առանձին, ապա մեկ տարվա ընթացքում մարվող Կառավարության արտաքին պարտքի կշիռը

Կառավարության արտաքին պարտքի մեջ կազմել է ընդամենը 0.96%, իսկ մեկ տարվա ընթացքում մարվող Կառավարության ներքին պարտքի կշիռը Կառավարության ներքին պարտքի մեջ կազմել է 34.6%, ինչը հիմնականում պայմանավորված է պետական պարտատոմսերի կառուցվածքում ՊԿՊ-երի մեծ տեսակարար կշռով՝ 29.7%:

«Կառավարության պարտքի մարումների, տոկոսավճարների, ինչպես նաև պարտքի բեռը բնութագրող ցուցանիշների էական աճը կարող են դժվարեցնել «Կարտք ներգրավելու հնարավորությունները:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ արտոնյալ պայմաններով համագործակցության սահմանափակումը Հայաստանի Հանրապետության համար մեծացնում է այլընտրանքային ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աղբյուրների նշանակությունը:

Ներկայումս արտաքին աղբյուրներից Հայաստանին վարկավորող վարկատուների կողմից արտոնյալ պայմաններով վարկավորման հնարավորությունների սահմանափակումը պարտադրում է կառավարությանը ներգրավել առևտրային պայմաններով փոխառու միջոցներ: Այս առումով ավելի են կարևորվում տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը, մանավանդ որ «Կառավարության պարտքի կառուցվածքում էականորեն աճել է արտաքին աղբյուրներից լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տեսակարար կշիռը:

Աղյուսակ 2. «Կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2009-2014թթ. (%)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. ուղենշ.	2013թ. ուղենշ.	2014թ. ուղենշ.
«Կառավարության պարտք, այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ֆիքսված տոկոսադրույքով	75.2	75.5	73.8	71.4	69.6	67.4
Լողացող տոկոսադրույքով	24.8	24.5	26.2	28.6	30.4	32.6
«Կառավարության արտաքին պարտք այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ֆիքսված տոկոսադրույքով	72.2	71.8	69.5	66.3	63.7	60.5
Լողացող տոկոսադրույքով	27.8	28.2	30.5	33.7	36.3	39.5
«Կառավարության ներքին պարտք այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ֆիքսված տոկոսադրույքով	93.9	96.0	97.2	98.1	98.9	99.5
Լողացող տոկոսադրույքով	6.1	4.0	2.8	1.9	1.1	0.5

Միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների աճի պարագայում համապատասխանաբար կաճեն նաև լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի «Կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը: Այսպես լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում 2012-2014թթ. «Կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կաճեն մոտ 10 մլն ԱՄՆ դոլարով:


Վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերը արդյունավետ կառավարելու նպատակով կառավարությունը կիրականացնի հետևյալ քայլերը.

- կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների ընթացքով պայմանավորված պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափի ճշգրտում,
- ֆինանսական միջոցների որոշակի կուտակում, որը պարտատոմսերի շուկայում անցանկալի գործընթացների դեպքում թույլ կտա նվազեցնել պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափը,
- հետզնումների ու փոխանակումների ակտիվ կիրառում,
- արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ համագործակցության խորացում,
- արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներ ներգրավելիս անհրաժեշտ է նախապատվությունը տալ առավելագույն արտոնյալ ժամկետ ունեցող (առնվազն 5 տարի) և ֆիքսված տոկոսադրույքով վարկերին,
- արտաքին դոնորների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Գործառնական ռիսկը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է պարտքի կառավարման ստորաբաժանման նոր կառուցվածքի շրջանակներում հստակ սահմանել ինչպես բաժինների, այնպես էլ աշխատակիցների գործառույթները և աշխատակիցների փոխադարձ փոխարինման կարգը: Անհրաժեշտ է ապահովել պարտքի գրանցման և հաշվառման տվյալների բազայի այլընտրանքային պահպանումը՝ ֆորս մաժորային իրավիճակներում ամբողջական տեղեկատվության պահպանման և աշխատանքների ընթացքը չխաթարելու, պարտքային պարտավորությունները ժամանակին և ճիշտ իրականացնելու համար:

Փոխարժեքի ռիսկը էական է, քանի որ պետական պարտքի գերակշիռ մասը արտարժույթով է:

Գծապատկեր 3. ՀՀ կառավարության արտարժույթային և դրամով արտահայտված պարտքերի հարաբերակցությունը 2009-2014թթ.



Այս դիսկը որոշ չափով մեղմվում է պայմանավորված այն հանգամանքով, որ կառավարության արտաքին պարտքի մեծ մասը արտահայտված է SDR-ով (2010թ. տարեվերջի դրությամբ կազմել է մոտ 59%), որն իրենից չորս ազատ փոխարկելի արժույթների զամբյուղ է ներկայացնում, հետևաբար՝ ավելի քիչ տատանողական է:

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության արտարժույթային պարտքի կառուցվածքը 2009-2011թթ.*

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.
USD	24.6	23.8	22.8
SDR	60.6	58.9	57.9
EUR	4.0	3.7	7.3
JPY	10.9	13.6	11.8
Այլ	0.001	0.03	0.09

*ներառված է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ի կողմից տրամադրված արտարժույթային պարտքը:

Կանխատեսումային փոխարժեքների համեմատությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի, EUR-ի, JPY-ի փոխարժեքների 1% շեղումը միջին հաշվով կփոփոխի ՀՀ կառավարության արտաքին պարտքը 23 մլն ԱՄՆ դոլարով:

Փոխարժեքի դիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից ապագայում չի բացառվում, որ պարտքի կառավարիչները կօգտագործեն աշխարհում տարածված հեջավորման տարբեր մոտեցումներ:

ՀՀ պետական պարտքը բնութագրող 2009-2010թթ. փաստացի և 2011-2014թթ. ուղենշային ցուցանիշները

Ճգնաժամի պայմաններում հարկերի կրճատման պարագայում կառավարությունը ստիպված եղավ գնալ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշի բարձրացմանը, սակայն առաջիկա տարիներին (սկսած 2011թ.-ից) կառավարության հստակ քաղաքականությունն է կրճատել պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշը:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին 2009-2014թթ. (մլրդ դրամ)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. ուղենշ.	2013թ. ուղենշ.	2014թ. ուղենշ.
Դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին որից՝	433.6	126.7	132.4	125.5	113.0	126.1
Ներքին փոխառու միջոցներ	44.2	28.6	30.0	28.5	28.5	35.5
կշիռը, %	10.2	22.6	22.6	22.7	25.2	28.2
Արտաքին փոխառու միջոցներ	389.3	98.1	102.4	97.0	84.4	90.5
կշիռը, %	89.8	77.4	77.4	77.3	74.8	71.8

Աղյուսակ 5. ՀՀ պետական պարտքը 2009-2014թթ. (մլրդ դրամ)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. ուղենշ.	2013թ. ուղենշ.	2014թ. ուղենշ.
Պետական պարտք	1,270.7	1,379.3	1,597.9	1,731.9	1,804.3	1,892.5
% ՀՆԱ-ի նկատմամբ	40.4	39.4	41.3	41.1	39.5	38.1
Արտաքին պարտք	1,121.1	1,199.0	1,388.9	1,494.4	1,538.3	1,591.0
որից՝ ՀՀ ԿԲ պարտք	189.2	204.5	239.7	248.2	207.7	169.8
Ներքին պարտք	149.6	180.3	208.9	237.4	266.0	301.5
Կառավարության պարտք	1,081.5	1,174.8	1,358.2	1,483.7	1,596.6	1,722.7
% ՀՆԱ-ի նկատմամբ	34.4	33.5	35.1	35.2	34.9	34.7
Կառավարության ընթացիկ պարտք	85.9	120.7	122.0	108.9	157.4	139.5
Ընթացիկ ԿՊ/պետական բյուջեի ծախսեր (%)	9.2	12.6	12.2	10.6	14.5	11.7
Ընթացիկ ԿՊ/պետական բյուջեի սեփական եկամուտներ (%)	12.9	16.1	15.3	12.4	16.2	13.0
Կառավարության պարտքի տոկոսավճար	16.3	30.4	42.6	46.7	47.8	50.7
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	1.8	3.2	4.3	4.6	4.4	4.2

Աղյուսակ 6. ՀՀ արտաքին պետական պարտքի հիմնական ցուցանիշները 2009-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. նույնը.	2013թ. նույնը.	2014թ. նույնը.
Արտաքին պետական պարտք*	2,966.7	3,299.0	3,754.6	4,039.8	4,158.4	4,300.9
% ՀՆԱ-ի նկատմամբ	35.7	34.2	35.9	35.4	33.6	32.0
% արտահանման նկատմամբ	221.7	177.1	173.8	166.7	156.1	149.1
Պարտքի ներկա արժեք	2,259.6	2,596.5	3,002.7	3,228.1	3,336.9	3,461.1
% ՀՆԱ-ի նկատմամբ	27.2	26.9	28.7	28.3	27.0	25.8
% արտահանման նկատմամբ	168.8	139.4	139.0	133.2	125.3	120.0
% ԿԲ արտաքին ակտիվների նկատմամբ**	144.0	186.4	236.5	279.1	272.6	266.6
Տոկոսավճար/արտահանում (%)	2.0	2.4	2.8	2.8	2.5	2.1
Մարում/արտահանում (%)	3.3	2.5	2.4	7.9	13.9	8.5

*ՀՀ արտաքին պետական պարտքի կանխատեսումները կատարվել են այն ենթադրությամբ, որ ՀՀ կենտրոնական բանկը նոր վարկեր չի ներգրավի:

** ՀՀ կենտրոնական բանկի արտաքին ակտիվների կանխատեսումների համար օգտագործվել են ՀՀ ՖՆ կանխատեսումները:

Աղյուսակ 7. ՀՀ կառավարության արտաքին պետական պարտքի հիմնական ցուցանիշները 2009-2014թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. նույնը.	2013թ. նույնը.	2014թ. նույնը.
Կառավարության արտաքին պարտք (ԿԱՊ)	2,465.9	2,736.4	3,106.7	3,368.8	3,597.1	3,841.8
% ՀՆԱ-ի նկատմամբ	29.7	28.4	29.7	29.5	29.1	28.6
Պարտքի ներկա արժեք	1,833.9	2,092.6	2,414.7	2,628.7	2,848.3	3,062.9
% ՀՆԱ-ի նկատմամբ	22.1	21.7	23.1	23.1	23.0	22.8
Ընթացիկ ԿԱՊ	45.0	63.2	79.4	126.5	228.6	196.6
Ընթացիկ ԿԱՊ/պետական բյուջեի ծախսեր (%)	1.5	2.5	2.8	4.6	7.8	6.1
Ընթացիկ ԿԱՊ/պետական բյուջեի սեփական եկամուտներ (%)	2.1	3.2	3.6	5.3	8.7	6.8
Տոկոսավճար	24.1	38.2	50.8	55.2	55.0	54.1
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	0.8	1.5	1.8	2.0	1.9	1.7
Միջին տոկոսադրույք (%)	1.0	1.5	1.9	1.8	1.6	1.5
Միջին ժամկետայնություն (տարի)	14	13	12	12	12	11
Լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռ (%)	27.8	28.2	30.5	33.7	36.3	39.5

Աղյուսակ 8. ՀՀ ներքին պետական պարտքի հիմնական ցուցանիշները 2009-2014թթ. (մլրդ դրամ)

	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. ծրագր.	2012թ. նույնը.	2013թ. նույնը.	2014թ. նույնը.
Ներքին պետական պարտք	149.6	180.3	208.9	237.4	266.0	301.5
% ՀՆԱ-ի նկատմամբ	4.8	5.1	5.4	5.6	5.8	6.1
Պետական պարտատոմս	140.6	173.0	203.0	233.0	263.0	300.0
Կարճաժամկետ	41.4	51.4	37.2	42.7	48.2	53.7
Միջնաժամկետ	71.4	86.4	94.7	108.6	122.6	138.6
Երկարաժամկետ	27.5	34.5	70.3	80.7	91.1	106.5
Խնայողական	0.2	0.6	0.8	0.9	1.1	1.2
Ուղղակի վարկ ՀՀ ռեզիդենտից	9.1	7.3	5.9	4.4	3.0	1.5
Միջին տոկոսադրույք (%)	10.4	11.7	12.1	12.0	11.0	11.0
Միջին ժամկետայնություն (օր)	1,391.0	1,353.0	1,591.0	1,678.0	1,688.0	1,714.0
Ընթացիկ ԿՆՊ	72.1	96.4	93.6	62.1	72.8	66.8

Ընթացիկ ԿՆՊ/պետական բյուջեի ծախսեր (%)	7.8	10.1	9.3	6.1	6.7	5.6
Ընթացիկ ԿՆՊ/պետական բյուջեի սեփական եկամուտներ (%)	10.8	12.9	11.7	7.1	7.5	6.2
Տոկոսավճար	8.8	15.8	24.4	26.3	27.5	30.7
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	0.9	1.7	2.4	2.6	2.5	2.6

2012-2014թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով կանխատեսումները կատարվել են հետևյալ ենթադրությունների հիման վրա.

- 1 SDR=1.582 USD, 1 EURO=1.417 USD, 1 JPY = 0.012 USD,
- ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR՝ 1.8%, 6-ամսյա EURIBOR՝ 2.5%, SDR-ի տոկոսադրույք՝ 1.7%:

Հավելված N 1

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՀՀ 2012-2014 ԹԹ ՄԺԾԾ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ներկայացվում է ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ կանխատեսումներում, մասնավորապես, մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներում, ինչպես նաև պետական պարտքի կառավարման բնագավառում առկա ռիսկերի համառոտագիրը: Առավել մանրամասն տեսքով նյութը ներկայացված է սույն ծրագրի 2-րդ, 4-րդ և 20-րդ գլուխների համապատասխան մասերում:

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ

Տնտեսական կանխատեսումներ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են ուղղված լինել ինչպես տնտեսական աճի բարձրացմանը, այնպես էլ՝ անկմանը: Միաժամանակ, Հայաստանը ունենալով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: Այդ կապակցությամբ հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես պայմանավորված կլինեն համաշխարհային տնտեսության մակրոտնտեսական փոփոխություններով:

ա) ՀՆԱ-ի աճի կանխատեսմանը նպաստող ռիսկեր

Արտաքին միջավայր

- Եթե համաշխարհային տնտեսության վերականգնումը լինի ավելի արագ, քան կանխատեսումներում դրված ենթադրություններն են, ապա կանխատեսված աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, եթե Ռուսաստանի տնտեսությունը վերականգնվի ավելի արագ տեմպերով, քան ակնկալվում է:

- Աճի ուղղությամբ հաջորդ ռիսկը կապված է միջազգային գների՝ ակնկալվածից ավելի արագ աճի հետ, որի դրսևորման պարագայում այն մեր երկրի ՀՆԱ-ի աճի՝ կանխատեսվածից ավելի բարձր ցուցանիշի գրանցմանը կնպաստի 2 ճանապարհով, դրանք են ուղղակի՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով (մետաղների գների աճի դեպքում), և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով (վառելիքի գների աճի դեպքում):

Ներքին միջավայր.

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարությունը իրականացնելու է տնտեսական բարեփոխումներ՝ հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ, սակայն, եթե կառավարության բարեփոխումների ազդեցու-

թյունը լինի ավելի արագ, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

բ) ՀՆԱ-ի աճի կանխատեսումը նվազեցնող ռիսկեր

Արտաքին միջավայր

- Եթե իրականանա առաջարկի գործոններով պայմանավորված նավթի միջազգային գների աճի նախանշված միտումը²⁰ և արդարացվի դրա հետ կապված միջազգային կառույցների գլոբալ տնտեսական աճի նվազման ուղղությամբ կանխատեսումների հնարավոր սցենարի զարգացման անհանգստությունը, ապա գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:

- Եթե Եվրոպական որոշ երկրներում ցածր տնտեսական աճի, բյուջետային դժվարությունների և ֆինանսական ճնշումների հետ կապված խնդիրները խորանան, այն կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության եվրոպական շուկաներում, ինչը կարող է նորից վարակի էֆֆեկտով անդրադառնալ այլ տարածաշրջանների շուկաների վրա, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի արտաքին պահանջարկի վրա:

- Միջազգային կառույցներում տնտեսագետներին անհանգստացնում են նաև համաշխարհային տնտեսության առկա խնդիրները կապված գործազրկության բարձր մակարդակի հետ: Միջնաժամկետում եթե գործազրկության բարձր մակարդակի հետագա նվազեցում տեղի չունենա, կապված վերոնշյալ ռիսկերի դրսևորման հետ, ապա վերականգնման համար անհրաժեշտ տնտեսական աճի տեմպի պակասը բացասաբար կանդրադառնա գլոբալ տնտեսության հետագա աշխուժացման վրա: Արդյունքում, գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:

- Արտաքին ցնցումներով պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների բարձր գնային միջավայրի պահպանումը կարող է խոչընդոտել տեղական արտադրության աճին՝ արտադրության բարձր ծախսերի առաջացման պատճառով: Բացի դրանից, բարձր գնաճային միջավայրը կարող է էականորեն կլանել սպառմանն ուղղված մասնավոր հատվածի դրամական եկամուտները, կրճատելով ներդրումային ծախսերը, ինչը բազմարկիչ արդյունք կունենա հետագա տնտեսական աճի դանդաղեցման ուղղությամբ:

Ներքին միջավայր.

- Կանխատեսումների սցենարում ենթադրություն է դրված, որ կառավարության կողմից գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված միջոցառումները դրական ազդեցություն են ունենալու 2011 թվականի գյուղատնտեսության վերականգնման վրա, սակայն եթե բնակլիմայական անբարենպաստ պայմանների դրսևորումները շարունակական լինեն, ինչը կդանդաղեցնի կա-

²⁰ ԱՄՀ-ի գնահատականներով հնարավոր է, որ նավթի միջազգային շուկան մուտք է գործել բարձր դեֆիցիտի փուլ:

նավարության բարեփոխումները²¹, քան ակնկալվում է, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի ցածր:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ

2010 թվականի արդյունքներով ձևավորված մակրոմիջավայրը, ինչպես նաև մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են ընձեռում ենթադրել, որ 2009-2010թթ ժամանակահատվածի համեմատությամբ բյուջետային մուտքերի, հատկապես բյուջետային եկամուտների ստացման բնագավառում 2012 թվականին ռիսկերի մակարդակը էականորեն նվազել է: Այնուամենայնիվ, ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ իրատեսության տեսանկյունից հարկ է առանձնացնել այն գործոնները, որոնք հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարի վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այդուհանդերձ, առավել կարևոր են այն գործոնները, որոնք կարող են հանգեցնել ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ կատարելուն: Այդ իմաստով ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր:

Ռիսկերի աղբյուրները

ՀՀ 2012-2014թթ ՄԺԾԾ շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից շեղումների.

- (i) ներքին ռեսուրսների գծով,
- (ii) արտաքին օժանդակության գծով:

Ներքին ռեսուրսների մասով. 2012-2014թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի հիմնականում համալրվելու է հարկային եկամուտների և պետական տուրքերի (2012 թվականին՝ նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների) հաշվին, որոնց գծով ծրագրային մուտքերը 2012-2014թթ կկազմեն ընդհանուր մուտքերի միջինում 97.0%-ը: Նշված եկամտատեսակների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ դրանց հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր ունի նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները:

Վերը նշված մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանության ռիսկեր՝

²¹ Սա հիմնականում աշխատում է այն տրամաբանությամբ, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում սոցիալական և տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար, կառավարությունը պարտադրված է լինելու ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում այլ ծրագրից միջոցները վերաուղղել վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում կարտամղվեն բարեփոխումների ծրագրերի համար հատկացված միջոցները:

Վարչարարական միջոցառումների իրականացում. 2012-2014թթ, երբ բյուջետային միջոցների սղությունը դեռևս լուծում պահանջող խնդիրներից մեկն է լինելու, առաջադրելով հարկային եկամուտների և պետական տուրքերի հնարավոր հասանելի մակարդակի ապահովում, ՀՀ կառավարությունը սկզբունքայնորեն շարունակելու է իրականացնել իր կողմից որդեգրված՝ սովետային տնտեսության ծավալների կրճատմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականությունը, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս դեպքում տնտեսության սովետային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է:

Արտաքին գործոնների ազդեցություններ. Ռիսկը հնարավոր է արտաքին գործոնների (արտաքին տնտեսական շուկաներում, ինչպես նաև ՀՀ արտաքին սահմաններում իրավիճակի սրում) ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և այն գնահատել հնարավոր չէ:

Արտաքին օժանդակության մասով 2012-2014թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ վարկերի հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհների մասով. Այդ միջոցների հատկացման հարցը կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու ՀՀ կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների բնագավառում որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով:

Վարկերի մասով ռիսկերը հիմնականում պայմանավորված են ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով:

Արտաքին օժանդակության մասով 2012-2014թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրման վրա կարող է ազդեցություն ունենալ նաև տարադրամի փոխարժեքի փոփոխությունը:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը ենթադրում է ծախսերի վերանայում կրճատմանն ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եկամուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, այս դեպքում ծախսերի վերանայումն իրականացվելու է հիմք ընդունելով դրանց գերակայությունները. առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված ծախսերը (ծախսերի մնացորդը), որոնք կրճատման պահին կունենան գերակայության ավելի ցածր աստիճան (հաշվի առնելով նաև ծախսերի կրճատման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների առաջացումը):

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Այս առումով կարևոր հանգամանքներից է սպասվելիք արտաքին օժանդակության կառուցվածքն ըստ նշանակության: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը:

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը որպես կանոն հանգեցնելու է այն ծրագրերի գծով մասհանումների կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրների հետ, թեև առանձին դեպքերում հնարավոր է այդ ծրագրերի գծով արտաքին աղբյուրներից թերստացվող միջոցների փոխարինումը ներքին ռեսուրսներով:

Փոխհատուցման հնարավորությունները

2012-2014թթ ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի վրա դրական հետևանքներ կարելի է ակնկալել բարենպաստ մակրոտնտեսական զարգացումներից, որոնք կարող են որոշ չափով փոխհատուցել արտաքին օժանդակության և հարկային վարչարարության գծով հնարավոր «կորուստները»: Նախատեսվածի դիմաց մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ հարկային եկամուտների (2012 թվականին նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների) հավաքագրման համար: Այս դեպքում ՀՀ կառավարությունը քննության առարկա կդարձնի լրացուցիչ եկամուտները՝ ծախսային գերակայությունների լրացուցիչ ֆինանսավորմանը և (կամ) պետական բյուջեի դեֆիցիտի չափի կրճատմանն ուղղելու հարցը:

3. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՀՀ պետական պարտքի էական աճը ստիպում են կառավարությանը խստացնել ռիսկերի կառավարման թույլատրելի սահմանային ցուցանիշները: Այս առումով առաջնային նշանակություն են ստանում հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական ռիսկերի կառավարումը: Արտաքին պարտքի գծով կարևորում ենք հատկապես վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և փոխարժեքի, իսկ ներքին պարտքի գծով՝ վերաֆինանսավորման, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերը:

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է միջազգային և ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներով և առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի սպասարկման գծով վճարման ենթակա գումարների ծավալներով:

Վերաֆինանսավորման ռիսկի գնահատման տեսանկյունից կարևոր է նաև կառավարության պարտքում ընթացիկ պարտքի տեսակարար կշիռը:

Ներկայումս ավելի մեծ են ներքին պարտքի վերաֆինանսավորման ռիսկերը, որը պայմանավորված է կարճաժամկետ պարտքի ավելի մեծ տեսակարար կշռով: Մյուս կողմից, սակայն, կառավարության արտաքին պարտքի հետ համեմատած, ներքին պարտքի ծավալը զգալիորեն փոքր է:

Ինչևէ, 2010թ. տարեվերջի դրությամբ ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումները սփռված են մինչև 2049թ., իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2028թ.:

Առաջիկա տարիներին ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով մարումներն աճում են, որը պայմանավորված է գործող վարկերից շատերի արտոնյալ ժամկետի ավարտով, վարկային պայմանագրերի համաձայն տոկոսային արտահայտությամբ մարման ենթակա գումարների աճով: ՀՀ կառավարության պարտքի մարումների, տոկոսավճարների, ինչպես նաև պարտքի բեռը բնութագրող ցուցանիշների էական աճը կարող են դժվարացնել պետական պարտք ներգրավելու հնարավորությունները:

ՀՀ կառավարության պարտքի մարումների, տոկոսավճարների, ինչպես նաև պարտքի բեռը բնութագրող ցուցանիշների էական աճը կարող են դժվարացնել ՀՀ պարտք ներգրավելու հնարավորությունները:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ արտոնյալ պայմաններով համագործակցության սահմանափակումը Հայաստանի Հանրապետության համար մեծացնում է այլընտրանքային ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աղբյուրների նշանակությունը:

Ներկայումս արտաքին աղբյուրներից Հայաստանին վարկավորող վարկատուների կողմից արտոնյալ պայմաններով վարկավորման հնարավորությունների սահմանափակումը պարտադրում է կառավարությանը ներգրավել առևտրային պայմաններով փոխառու միջոցներ: Այս առումով ավելի են կարևորվում տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը, մանավանդ որ ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում էականորեն աճել է արտաքին աղբյուրներից լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տեսակարար կշիռը:

Միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների աճի պարագայում համապատասխանաբար կաճեն նաև լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը: Այսպես լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում 2012-2014թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կաճեն մոտ 10 մլն ԱՄՆ դոլարով:

Վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերը արդյունավետ կառավարելու նպատակով կառավարությունը կիրականացնի հետևյալ քայլերը.

- կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների ընթացքով պայմանավորված պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափի ճշգրտում,
- ֆինանսական միջոցների որոշակի կուտակում, որը պարտատոմսերի շուկայում անցանկալի գործընթացների դեպքում թույլ կտա նվազեցնել պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափը,
- հետգնումների ու փոխանակումների ակտիվ կիրառում,
- արտաքին բազմակողմ և երկկողմ գործընկերների հետ համագործակցության խորացում,
- արտաքին աղբյուրներից փոխառու միջոցներ ներգրավելիս անհրաժեշտ է նախապատվությունը տալ առավելագույն արտոնյալ ժամկետ ունեցող (առնվազն 5 տարի) և ֆիքսված տոկոսադրույքով վարկերին,
- արտաքին դոնորների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրաված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Գործառնական ռիսկը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է պարտքի կառավարման ստորաբաժանման նոր կառուցվածքի շրջանակներում հստակ սահմանել ինչպես բաժինների, այնպես էլ աշխատակիցների գործառույթները և աշխատակիցների փոխադարձ փոխարինման կարգը: Անհրաժեշտ է ապահովել պարտքի գրանցման և հաշվառման տվյալների բազայի այլընտրանքային պահպանումը՝ ֆորս մաժորային իրավիճակներում ամբողջական տեղեկատվության պահպանման և աշխատանքների ընթացքը չխաթարելու, պարտքային պարտավորությունները ժամանակին և ճիշտ իրականացնելու համար:

Փոխարժեքի ռիսկը էական է, քանի որ պետական պարտքի գերակշիռ մասը արտարժույթով է:

Այս ռիսկը որոշ չափով մեղմանում է պայմանավորված այն հանգամանքով, որ կառավարության արտաքին պարտքի մեծ մասը արտահայտված է SDR-ով (2010թ. տարեվերջի դրությամբ կազմել է մոտ 59%), որն իրենից չորս ազատ փոխարկելի արժույթների զամբյուղ է ներկայացնում, հետևաբար՝ ավելի քիչ տատանողական է: Կանխատեսումային փոխարժեքների համեմատությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի, EUR-ի, JPY-ի փոխարժեքների 1% շեղումը միջին հաշվով կփոփոխի ՀՀ կառավարության արտաքին պարտքը 23 մլն ԱՄՆ դոլարով:

Փոխարժեքի ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից ապագայում չի բացառվում, որ պարտքի կառավարիչները կօգտագործեն աշխարհում տարածված հեջավորման տարբեր մոտեցումներ:

Պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում առկա ռիսկը

Անկախ 2012-2014թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների առկայության հանգամանքից, պետական բյուջեի դեֆիցիտի մեծության (որը կանխատեսվել է այդ տարիների անվանական ՀՆԱ-ի 2.4.-3.1% միջակայքում) վրա կարող է բացասական

ազդեցություն ունենալ 2011-2013թթ ժամանակահատվածում փաստացի ձևավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծությունը: Խոսքը գնում է մակրոկանխատեսումներում պարունակված ռիսկերով պայմանավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծության 2011-2013թթ ժամանակահատվածում 50% սահմանաչափը անցնելու ռիսկի մասին, որի առկայությամբ գործողության մեջ է դրվում «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ այն է.

«Եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3%-ը:»: